Բագրատ Այվազյան

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա

Կապույտ1 բերդը պաշարված էր ...

Դեռ նոր էր բացվել գարունը, նոր հալվել ձյունն ու սառույցը և թավշյա կանաչով պատել բերդի շրջակայքը, երբ Յուսուֆ սպարապետը յուր հրոսակներով կանգ առավԿապույտ բերդի պատերի տակ և բազմաթիվ սպիտակ վրաններով շրշապատեց բերդը, ուր ամրացել էր հայոց թագավոր Սմբատը յուր հավատարիմ խմբով:

Արեգակը նոր էր թաքնվել լեռների քամակին՝ յուր ետևից թողնելով ծիրանագույն շերտեր, որոնք հետզհետե անհետանում էին, մեկ գույն մյուսի հետ խառնվում, ոչնչանում և ապա թողնում ամպերի գորշ կույտեր: Կամաց-կամաց հեռավոր լեռներն ընկղմվում էին խավարի մեջ և անհետանում, այնինչ Կապույտ բերդի շրջակաբլուրները և դաշտերը ծածկվում էին խարույկներով:

Մեկը մյուսի ետևից աճում էին խարույկները և գիշերային խավարի մեջ տարածում իրենց կարմրած ծիրանագույն ցոլքերը, որոնց թույլ փայլի տակ, ինչպես միվիթխարի, մեջտեղը կանգնել էր Կապույտ բերդը և դառն արհամարհանքով նայում էր խարույկներին...

Բայց խարույկների առաջ վխտում էին Յուսուֆի զինվորները դաժան և ահարկու տեսքով. սոցանից մի քանիսը թեք էին ընկած կրակի շուրջը և պատմում էին իրարիրենց սխրագործությունները. նրանք ծիծաղում էին, հռհռում: Մյուս խարույկի մոտ, ընդհակառակը, զինվորները խմբվել էին մի կրակի շուրջը, ուր փայտյա շամփրիվրա խորովվում էր մի ամբողջ ոչխար: Հայաստանի օդն ու ջուրը նրանց ախորժակը բաց էր արել. իսկ կերակուր ամեն կողմ կար, հարկավոր էր մի փոքրիկարշավանք գործել մոտակա գյուղերը, և ահա ոչխարների հոտերը պատրաստ էին նրանց անկուշտ որովայնը հագեցնելու:

Արաբական վրանից մի փոքր ցած, բաց երկնքի տակ, կանաչ խոտի վրա, համարյա իրար վրա թափված էր խառնիճաղանջ մի բազմություն՝ բաղկացած

կանանցից ներիտասարդներից, որոնց վզերից, իրարից շատ մոտիկ, անցկացրած էին շղթաներ: Նրանք ծանր կերպով հեծեծում էին, շղթաների ամուր կապերը ուռցրել էիններանց վզերը, իսկ պատառոտուն հանդերձների տակից, մերկ մարմիններից հոսում էր արյունը, որով ողողվում էին դաշտի
ծաղիկները: Սարսափելի, աղիողորմտեսարան էր ներկայացնում այդ վայրը, ուր խմբված էին հայ գերիները և որոնց շուրջը պտտվում էին արաբ զինվորներն իրենց արյունաթաթախ նիզակներով:

Դեռ անցյալ օրը այդ գերիները ազատ, իրենց հարկի տակ, իրենց սիրելիների գրկումն էին, երբ վրա հասան անգութ Յուսուֆի հրոսակները և ծերերին ուանկարներին սպանելով, իրենց աչքի առաջ մորթոտելով իրենց փայփայած զավակներին, ծանր շղթաներով շղթայեցին նրանց և քարերի ու մացառների միջով, նիզակներով և սրերով քշելով հոգնած, քաղցած ու ծարավի տարան մինչև Կապույտ բերդի պարիսպները: Ո՞ւր պիտի տանեն նրանց, ի՞նչ պետք է անեն նրանց հետ:

— Ո՜հ, պապակեցա, մի կաթիլ ջուր, — շշնջում էր մի նորատի գեղեցիկ աղջիկ և վայրենի հայացքը դարձնում շուրջը:

— Մեռա՜, շղթան մի՛ ձգիր, մոտեցի՛ր ինձ, — կրկնում էր մի ուրիշը, որ սարսափից ապշության մեջ ընկած՝ ուժով ձգում էր յուր ընկերոջ շղթան:

Բայց ողորմելիների հեծկլտանքի պատասխանը լինում էր պահապանների մտրակների և նիզակների հարվածները, որոնք մեկը մյուսի ետևից անխնա իջնում էինսրա ու նրա գլխին:

Ցավից նրանք մի փոքր լռում էին և ապա միաձայն, իբրև մի
մարմին, արսափելի կերպով հառաչում...

Թող հառաչեն, թող հեծկլտան որքան կուզեն, ո՞ւմ ինչ փույթ: Դրանք ընտրված գեղեցիկ կանայք ու պատանիներն էին, որոնք վաղ թե ուշ պիտի վաճառվեին և կամզինվորների կրքերին զոհ գնային:

Մի այլ բանակ բռնել էր Կապույտ բերդի աջակողմը:

Այդտեղ էլ շարված էին վրաններ, այդտեղ էլ վառվում էին խարույկներ, բայց այդտեղի զինվորները բոլորովին այլ տպավորություն էին թողնում: Սրանց դեմքնայնքան ահարկու և վայրենի չէր, ինչպես առաջիններինը և այնքան խիստ ու ահարկու տպավորություն չէր գործում: Թուխ դեմքերով էին, բայց կորովի և

քաջ, ևհայկական արյունը հոսում էր նրանց երակների մեջ: Այդ գունդը հայկական գունդն էր, որ բռնում էր Յուսուֆ ոստիկանի աջ կողմը և արաբական հրոսակների հետմիասին եկել պաշարել էր Կապույտ բերդը: Նա հայոց թագավորին բռնել էր ուզում: Նա ծարավի էր նրա արյան... Ինչո՞ւ, ի՞նչ էր պատահել, և ինչո՞ւ հայը հայի դեմ էրզինվել... Բայց այդ ինչ զինվորների գիտենալու բանն էր, նրանց հրամայված էր կռվել հայոց թագավորի դեմ, և նրանք պիտի կռվեին: Նրանցից շատերը թեև զգումէին իրենց արարքի վատությունը, բայց լռում էին: Նրանք վախենում էին իրենց իշխան Գագիկից, որի հրամանատարության տակ եկել, Ժողովվել էին այդտեղ: ԵվԱրծրունյաց իշխան Գագիկի գունդը վաղը առավոտյան պիտի կռվեր ու գերեր հայոց թագավորին և հանձներ արաբական Յուսուֆ սպարապետին: Իսկ թե ինչո՞վկվարձատրեր ամիրան հայի այդ դավաճանությունը Սմբատի քեռորդի Գագիկին, այդ կախված էր ամիրայի վեհանձնությունից:

Լուռ ընթրիք էին անում հայ զինվորները և սպասում վաղվա ճակատամարտին:

Այդ միջոցին հեռվում, լեռների քամակին մի լույս երևաց: Այդ լույսը հետզհետե աճում էր և գիշերային խավարի մեջ կազմում մի բոցավառ փունջ: Ի՞նչ է դա... հրդե՞հթե խարույկ: Եվ ինչո՞ւ գիշերը, հեռու լեռների մեջ վառել են այդ խարույկը, և ինչքան նա մեծ է ու ահավոր և րոպե առ րոպե աճում է ու ծավալվում: Նրա բոցերը մինչևերկինք են հասնում:

Նայում են հայկական գնդի զինվորները դեպի այդ բոցը, և նրանց երեսները կնճռոտվում են:

— Տեսնո՞ւմ ես այն բոցը, — հարցնում է մի հաղթանդամ, գեղեցկատեսիլ զինվոր յուր երիտասարդ ընկերակցին, որ խորին մտածմունքի մեջ ընկղմված, թիկն է տվելկրակի մոտ և լուռ նայում է հեռվում երևացող բոցին:

— Հա, տեսնում եմ: Ի՞նչ բան է:

— Մի՞թե չգիտես, որ այնտեղ գյուղ է այրվում:

— Ի՞նչ գյուղ:

— Հայոց գյուղ:

— Եվ, ո՞վ է այրել:

— Իհարկե Յուսուֆի հրոսակները: Այնտեղ հիմա մորթում են, կողոպտում, ոտնատակ տալիս ամեն սրբություն, իսկ նորատի կույսերին և հարսներին որին սպանումեն, որին առևանգում, իսկ ոմանց շղթայում և գերեվարում են: Վաղը եթե, տերը մի՛ արասցե, առնվի բերդը, սա էլ նույն օրին կհասնի:

— Իսկ հայոց թագավո՞րը...

— Հայոց թագավո՛րը... հը՛մ... նրա արյանը վաղուց է կարոտ Յուսուֆը:

— Իսկ մենք մի՞թե պետք է կռվենք Սմբատի դեմ:

— Այո՛, էլ ինչո՞ւ համար ենք եկել: Մենք եկել ենք, որ մեր արյունը թափենք և բռնելով Սմբատին՝ հանձնինք Յուսուֆին:

— Դավի՛թ, ի սեր աստծո, ասա՛, ինչո՞ւ մենք պետք է պատերազմենք հայոց թագավորի դեմ: Մի՞թե...

— Սսս՛... այդ քո գիտենալու բանը չէ, դու պարտավոր ես հնազանդվել մեծիդ և ինչ որ հրամայում են՝ առանց բացատրություն պահանջելու պիտի կատարես:

— Բայց մի՞թե դու պիտի վաղը կռվես...

— Ե՞ս, իհարկե: Իսկ թե ո՞ւմ դեմ և ինչո՞ւ համար, այդ էլ իմ գիտենալու բանն է:

Այդ միջոցին թմբուկները խփեցին, ընթրիքը վերջացավ, և բանակը խոր քուն մտավ: Պահակները միայն արթուն հսկում էին ամեն կողմը, իսկ հեռվում դեռ ծխում էրհայոց գյուղը և ավելի բոցավառվում, այնինչ բանակի խարույկները հետզհետե հանգչում էին:

Բ

Խոր գիշեր էր...

Անամպ երկնակամարի վրա փայլուն աստղերը լուռ կատարում էին իրենց գիշերային ճանապարհորդությունը: Փչում էր գարնանային ցուրտ զեփյուռը, որ շոյելովԿապույտ բերդի պարիսպները՝ կամացուկ համբուրում էր նրան, յուր կարոտն առնում և գնում կորչում հեռո՛ւ-հեռո՛ւ... Հայրենի քամին կարծես կարոտել էր հայրենիբերդի պարիսպներին, որ այսօր շրջապատված էր թշնամիներով:

Այդ միջոցին, երբ հայկական դավաճան զունդն էլ խոր քուն էր մտած, զինվորական մի վրանից զգուշությամբ մի գլուխ երևաց, որ աջ ու ձախ

նայելով, համարյադուրս սողաց վրանի տակից, կանգնեց, աչքերն ուղղեց դեպի Կապույտ բերդը և զգույշ քայլերով բլրից իջավ ցած: Հաղթանդամ, բայց գեղեցկատեսիլ զինվոր էր դա, նոր էր ծածկվել նրա երեսը աղվամազով, և երկու փայլուն աչքեր վառվում էին գիշերային խավարի մեջ, այնինչ նրա սիրտը արագ տրոփում էր: Վախ չուներ նամահից, բայց նրա մտքի մեջ պտտվում էր մի բան, որն աշխատում էր շտապ ի կատար ածել: Զգուշությամբ նա անցավ մի փոքր տարածություն և ապա հանկարծկանգ առավ ու թաքնվեց մի թփի տակ: Իրենից մի փոքր հեռու նա մի շշունջ լսեց, որ սառեցրեց նրա արյունը երակների մեջ: Ի՞նչ էր
այդ, խոսակցությո՞ւն, թե՞հառաչանք, նա պարզ չկարողացավ լսել: Հակառակ քամին թույլ չտվեց նրան իմանալու, և նա, մի քանի վայրկյան պահվելով թփի տակ, հենց ուզում էր վեր կենալ և շարունակել ճանապարհը, երբ ձայները նորից կրկնվեցին: Այժմ նա պարզ լսեց հառաչանքի և խոսակցության ձայներ: Ապա նայեց այն կողմը և տեսավ երկու ստվեր, որ զգուշությամբ առաջ էին գնում:

— Ո՜հ, կամաց գնա, ես չեմ կարող քայլել, ոտքերս ուռած և արյունլվա են, — ասում էր մեկը մյուսին:

— Կամաց գնալով բան չի լինի, Ավո՛, արշալույսը կբացվի և մենք կրկին կբռնվենք, հարկավոր է շտապել, փախչել դեպի լեռները, դեպի մեր գյուղը, — պատասխանեցմյուսը:

— Ա՜խ, եղբա՛յր, ես այս բոպեիս վայր կընկնեմ, աչքերս մթնում են և գլուխս պտտվում է: Բավական չէ շղթաներից առաջացած վերքերս, քաղցն էլ մի կողմից էնեղում ինձ: Մի ամբողջ օր է, որ ոչինչ չեմ կերել: Ես տանջվում եմ:

— Լռի՛ր, էլ ինչո՞ւ փախար, երբ չէիր կարող հետևել ինձ...

Երկու ստվերներն անցան թփի տակ պահված զինվորի մոտից, և վերջինս, լավ նայելով նրանց, տեսավ, որ բանակից փախչող երկու հայ տղաներ են:

Զինվորը խոր ախ քաշեց, մի փոքր կանգ առավ, մի միտք անցավ նրա գլխով, և նա սկսեց կամաց հետևել փախստականներին, որոնք հետզհետե արագացնում էինիրենց քայլերը, թեև փշերն ու քարերը արյունլվա էին անում նրանց բոբիկ ոտքերը:

Լուռ հետևում էր զինվորը, որի մեջքից միայն մի սուր էր կախված, երբ անզգուշաբար ոտքը քարին կպավ, և այդ քարը ցած գլորվելով՝ աղմուկ հանեց:Փախստականները սրտատրոփ կանգ առան և նայեցին: Նրանք տեսան իրենց

հետևը մի մարդ, որ լուռ իրենց էր նայում: Սարսափը պատեց, և սառը մահվան դողրանցավ նրանց մարմնով: Այդ ժամանակ զինվորը մոտեցավ:

— Ի սե՛ր աստծո, մեզ մի՛ սպանի, — ասացին նրանք միասին:

— Լռ՛ւռ, ձայն մի հանեք, թշվառականնե՛ր, թե չէ կորած ենք:

Փախստականները լռեցին և ուրախացան՝ լսելով հայ լեզուն:

— Ո՞վ եք և ո՞ւր եք գնում,— հարցրեց զինվորը:

— Մենք զարիշատցի ենք և գերի էինք Յուսուֆի բանակում ու, հաջող ժամանակ գտնելով, փախչում ենք, ի սե՛ր աստծո, մի՛ խանգարիր մեզ:

— Լավ, ես ինքս էլ փախուստ եմ տալիս այդ զզվելի բանակից, ուր հայը հայի դեմ պիտի կռվի: Քայլեցեք գնանք, քանի ժամանակ կա, թե չէ լույսը բացվեց՝ ուշ կլինի, մեզ մաս-մաս կկտրատեն արաբ զինվորները:

Ապա երեքն էլ լուռ սկսեցին առաջ քայլել: Զինվորն առաջ անցավ, իսկ երկու տղաները՝ նրա ետևից: Զգույշ, անխոս անցան նրանք բավական տարածություն և մտանմի փոքրիկ ձոր, ուր խոխոջում էր լեռնային պարզ ու վճիտ առվակը: Այդ ձորից այն կողմ, բարձրության վրա Կապույտ բերդն էր: Հանկարծ զինվորը կանգ առավ ննշան արավ տղաներին, որ թաքնվեն: Ձորի մյուս կողմից զինվորը ինչ-որ ձայն լսեց: Մի փոքր ժամանակ անցավ, և նա պարզ նկատեց մի խումբ զինվորների՝ թվովհինգ հոգի, որոնք դեպի իրենց կողմն էին գալիս: Զգուշությամբ տղաներին ծածկեց մացառի տակ և ինքն էլ կուչ գալով մերկացրեց սուրը, սպասելով նրանց: Նազգաց, որ թե՛ ինքը, թե՛ տղաները կորած են, գոնե կյանքը էժան չծախեր: Խումբը խոսակցելով՝ հետզհետե մոտենում էր: Խոսակցությունից հայ զինվորը ոչինչչհասկացավ, միայն այսքանն իմացավ, որ դրանք Յուսուֆի գիշերապահ զինվորներն են, որ գնացել էին Կապույտ բերդի շրջակայքը լրտեսելու:

— Է՛հ, հոգ չէ, որ հինգ հոգի են, դրանցից հեշտ է ազատվելը, բայց վախենում եմ, որ այդ անպիտանները աղմուկ բարձրացնեն և ամեն ինչ փչացնեն, թե չէ դրանցսատկացնելը հեշտ բան է, — մտածում էր զինվորը՝ աչքը չհեռացնելով նրանցից: Նրանք ավելի մոտեցան, մի քանի քայլ էլ և ահա նրանք ոտքի տակ կտայինթաքնված տղաներին, որ դողում էին հույսները աստծու վրա դնելով: Զինվորը լսում էր թշվառ տղայոց սրտի բաբախյունը, և այդ ավելի էր սիրտ տալիս նրան:

Հանկարծ խումբը կանգ առավ: Հայ զինվորը մտածում էր անակնկալ կերպով հարձակվել նրանց վրա և արդեն բարձրացրեց սուրը, երբ խումբը ծռվելով մի կողմ, անցավ առաջ: Փախստականները ազատ շունչ քաշեցին:

— Ի՞նչ եղավ Ահմադը, — ասում էր Յուսուֆի զինվորներից մեկը:

— Չգիտեմ, նա կարող է առաջ գնացած լինել, — պատասխանեց մյուսը: Եվ նրանք ավելի առաջ անցան՝ թողնելով մեր փախստականներին իրենց ետևում:

— Կորան անպիտանները, — կամաց ասաց զինվորը տղաներին, և նրանք, մի փոքր ժամանակ կրկին անշարժ մնալուց հետո, շարժվեցին առվակի ուղղությամբ:

— Մեր ազատիչն ես, ի՞նչ է քո անունը, — հարցրեց Ավոն, որ ավագն էր:

— Իմ անունը Դավիթ է, Գնունյաց ազգից, — ասաց փախստական զինվորը: Եվ այնուհետև նրանք գնում էին լուռ: Ոչ մեկը ոչինչ չէր խոսում:

Բավական ժամանակ այդպես գնում էին առվակի հակառակ կողմով, երբ կրկին կանգ առան՝ մի սև առարկա իրենց առաջը տեսնելով: Նրանցից մի քայլ առաջնստած էր մի տեսակ սև մարմին, որի երկու աչքերը երկու ճրագների նման փայլում էին գիշերային խավարի մեջ: Ապուշ կտրած, լայն բացած աչքերով դիտում էր նամեր փախստականներին, իսկ փախստականները՝ նրան:

Այս գիշեր, ինչպես երևում էր, շատ փորձանքների պիտի հանդիպեին մեր փախստականները: Մի վայրկյան Դավիթը նայեց այդ սև հրեշին, որ վիթխարի հասակուներ և ջրի ափին նստած լուռ նայում էր իրեն: Երկայն նիզակը դրված էր այդ արաբ զինվորի կողքին, իսկ կեռ սուրը մեջքից էր կախած, բայց արաբ զինվորը ըստերևույթին ոչ մի տրամադրություն չուներ զենքի դիմելու և ապուշի նման նայում էր իրեն:

Դավթի և արաբ զինվորի հայացքները մթության մեջ հանդիպեցին իրար, և Դավթի մարմնով մի սառը դող անցավ: Նա մտածեց. «Եթե ես սրան չսպանեմ, սա ինձկսպանի», հարմար վայրկյանից պետք է օգտվել, քանի որ ետ մնացած արաբ զինվորը, որ ջրի ափին նստած ոտքերն է լվանում, իրենց գիշերային վհուկներկարծելով, երկյուղից, սառել, կարկամել է: Նա հանկարծ վրա ընկավ և մի վայրկյանում յուր սուրը խրեց արաբ զինվորի կուրծքը: Մի վայրկյան ևս և ամեն ինչվերջացած էր:

Դավիթը հանեց արաբի կեռ թուրը և վերցրեց մոտը դրած նիզակը ու տալով տղաներին, որոնք 18 — 19 տարեկան կլինեին, ասաց.

— Առե՛ք, դուք անզեն եք, այս զենքով դրանք շատ հայի արյուն են թափել, այժմ իրենց զենքով իրենց արյունը պետք է թափենք: Պետք չէ մեր ժամանակներումառանց զենքի շրջել: Անիծվածները հայի արյունը քամեցին:

Տղաները իրենց ցավը մոռացան և առնելով զենքերը՝ առաջ անցան կրկին վեր:

— Բայց ո՞ւր ես տանում մեզ, մենք մոտենում ենք արդեն բերդի պարիսպներին, — ասաց Ավոն:

— Ուր եմ տանո՞ւմ: Մի՞թե կարծում եք Յուսուֆի բանակը:

— Ո՛չ, տերը մի արասցե: Եթե մենք մոտենանք պարսպին, մեզ թշնամու տեղ կարող են դնել և կոտորել:

— Մի՛ վախենաք, դրա ճարն էլ գիտեմ, վաղը առավոտ մենք Կապույտ բերդում կլինենք և այնտեղից կկռվենք Յուսուֆի դեմ: Գագիկ իշխանը մտածում էր, որ եսհայոց թագավորի դեմ կկռվեմ, բայց շատ սխալվեց: Դավթի երակների մեջ չի հոսում դավաճանության կեղտոտ արյունը. նա յուր արյունը կդնի օրինականթագավորի համար: — Եվ մի այնպիսի ոգևորությամբ կեցցե աղաղակեց, որ երկու տղաների սիրտը տրոփեց՝ երկյուղ կրելով, որ մոտերքում մարդիկ կլինեն և իրենցվրա հարձակում կգործեն:

Դավիթն արքայորդու՝ Աշոտ Երկաթի ծառաներից էր, որին Յուսուֆը գերի տանելով և նրա հասակն ու լայնապինդ թիկունքը տեսնելով, հանձնել էր Գագիկ իշխանին, որը յուր զինվորների շարքն էր անցկացրել խոստանալով շատ բարիքներ տալ նրան, եթե մոռանա Սմբատ թագավորին և իրեն հավատարմությամբ ծառայի:Կապույտ բերդը պաշարելով, նա Դավթին յուր տիրոջ դեմ էր զինել, յուր օրինական թագավորի դեմ: Դավիթը ամեն կերպ աշխատում էր փախուստ տալ Գագիկիշխանից, բայց հարմար ժամանակ չէր գտնում. իսկ այժմ, երբ կանգնած էին Կապույտ բերդի պարիսպների տակ, այդ հեշտ էր Դավթի համար: Նա ծանոթ էրԿապույտ բերդի ծակուծուկին և նրա համար բերդ մտնելը ամենահեշտ բանն էր:

Եվ երեք փախստականներն, առաջ էին անցնում բարձրանալով վե՛ր, միշտ վե՛ր, ուր ցցված էր անհաղթելի Կապույտ բերդը, ուր նստած էր յուր նախկին տերը՝ այնտերը, որին կարոտել էր վաղուց:

Անցնում էին նրանք առաջ՝ քարերի վրա մագլցելով, թփերի ու մացառների միջով, որոնք պատառոտում էին նրանց հանդերձները և արյունոտում երեսները, բայցնրանց հոգը չէր: Քանի մոտենում էին պարիսպներին, այնքան Դավթի սիրտը ավելի արագ էր տրոփում, այնքան ավելի սկսում էր նա հուզվել ու շփոթվել: Ի՞նչ էրմտածում նա, որ Գագիկ իշխանի խոստումները թողած, ազատ կյանքը մի կողմ ձգած, գալիս էր պաշարվելու և կյանքը զոհելու յուր տիրոջ համար: Չէ՞ որ նա կարողէր կռվել Գագիկի զորքի հետ միասին, քաջություններ անել, բարիքներ վայելել և ապա հանգիստ, Գագիկից և Յուսուֆից բարիքներ ստանալով, պատերազմի դաշտիցմի կողմ քաշվել և ապրել հանգիստ ու խաղաղ... Բայց արդարության և ազնվության դրոշակը, ինչպես արևի պայծառ ճառագայթ, ավելի վառ կերպով էր փայլում նրամտքում, քան այն հանգիստ կյանքը, որ պիտի դավաճանությամբ ձեռք բերեր...

Հոգնածությունից կանգ առավ Դավիթը մի սեպացած ժայռի տակ և նայեց ցած, ուր տարածվում էր Յուսուֆի բանակը, և դառը ժպտաց, ապա յուր ուշադրությունընդարձրեց դեպի հեռուն, այնտեղ ուր կորչում են լեռները իրար ետևում, և նրա սիրտը խիստ տրոփեց: Հեռվում, արևելյան հորիզոնի վրա, երևում էր մի տեսակ աղոտլուսավորություն, որտեղից կամաց-կամաց բացվում էր արշալույսը... Ի՜նչ հրաշալի էր դա, խավարը նահանջում էր, լեռների գագաթները հետզհետե բացվում էին, կարճ ժամանակից հետո պիտի դուրս գար արևը և ոսկեզօծեր լեռների կատարները ու Կապույտ բերդի անհաղթելի պարիսպների ժանիքները: Նա փեշով սրբեց յուրճակատի քրտինքը, և նրանք ժայռից ժայռ մագլցելով՝ մտան խիտ մացառների մեջ: Ժամանակը կարճ էր, հարկավոր էր շտապել, վաղ առավոտից Յուսուֆիհրոսակները, վայրենիների նման, կգրոհեն հինավուրց բերդի պարիսպների վրա:

Զգուշությամբ անցնում էին մացառների միջով և իրենց հետքերը ծածկում, ոչնչացնում: Ապա կանգ առան հենց պարսպի տակ, ուր մի ժայռի կտոր դուրս էր ցցել յուրահարկու ժանիքը: Մի վայրկյանում Դավիթը վեր մագլցեց ժայռի գլուխը և տղաներին էլ օգնեց բարձրանալու: Այդ ժայռի վրայով սկսեցին առաջ գնալ, մինչև որկրկին մտան մացառների մեջ: Նրանց ոտքերի տակ արդեն բացվում էր ահռելի անդունդը. մի փոքրիկ անզգուշություն և նրանք կգլորվեին անդունդ, որից կենդանիդուրս գալն անկարելի էր:

— Վերջապե՛ս, — ասաց Դավիթը և փորսող տալով՝ մտավ մի անցքի մեջ, ուր հետևեցին և տղաները:

Քառորդ ժամ մութ անցքի մեջ փորսող տալուց հետո նրանք կանգ առան և, չորս կողմը նայելով, տեսան հայկական զորքերին կազմ ու պատրաստ թշնամունդիմավորելու:

— Կեցցե՛ հայոց բանակը,— կանչեց նա և սուրը հանելով պատյանից՝ ճոճեց օդում:

Նրանք արդեն Կապույտ բերդումն էին:

Այդ միջոցին բարձր լեռների կատարներն արդեն ոսկեզօծվել էին արևի անդրանիկ ճառագայթներով... Իսկ հեռվից արդեն լսվում էին թմբուկների ձայներ: Յուսուֆիզորքերը կամաց-կամաց մոտենում էին…

Ինչպես մի սարսափելի փոթորիկ, որի առաջ ամեն ինչ դողում և տապալվում է, այնպես վրա վազեցին Յուսուֆի զինվորները Կապույտ բերդի պարիսպներին, կարծես նրան միանգամից կուլ տալու, ոչնչացնելու և երկրի երեսից ջնջելու համար... Սարսափելի գոռում-գոչյունով, անթիվ նետեր ձգելով դեպի պարիսպներընրանք ուզում էին մագլցել պարիսպների վրա և հիմնահատակ անել ամեն ինչ, կոտորել բոլորին, ով համարձակվում էր իրենց դեմ կանգնել, և այդպիսով հագուրդտալ իրենց արյունածարավ սրտերին, երբ մեկը մյուսի ետևից, բերդականների նետերից վիրավորված, ընկնում էին գետին և մահվան տագնապի մեջ տոչորվում:

Արհամարհանքով նայում էին Սմբատ արքայի մի բուռ քաջերը դեպի այդ բազմությունը և սառնասրտությամբ թշնամյաց դիակները մեկը մյուսի վրա կիտում:

Գոռում էր զայրացած Յուսուֆը, իր զորքերին խրախուսում, և նրա վայրենի աչքերից կատաղության կայծեր էին ցայտում, երբ տեսնում էր յուր զնդի նվազելը նդիակներից բլուրներ գոյանալը: Նա ուզում էր արյունլվա դիակները կոխկրտելով բերդը մտնել և բոլորին մաս-մաս կտրատել, բայց յուր կյանքը թանկ էր ծախում:Այնտեղից սլանում էին հայկական զնդի մահաբեր նետերը և իրենց հունձն անում:

Կատաղության փրփուրը բերանին նա գոռում էր յուր զինվորների վրա, խրախուսում նրանց, առաջ մղում, բայց ո՛չ մի բան չէր օգնում: Նրանց դիմաց անվեհերկանգնած էր Կապույտ բերդը յուր ընտիր քաջերով, որոնց ոգևորում էր հայոց Սմբատ օրինական թագավորը:

Երբ տեսավ Յուսուֆը յուր զորքերի կոտորածը, երբ նկատեց բերդականների քաջությունը, հրաման տվեց յուր զորքին ետ նահանջել և ապա առաջ կոչելով Գագիկիհայկական գունդը, սկսեց խրախուսել նրանց.

— Տեսնու՞մ եք ինչպես քաջ են հայերը, դուք էլ ցույց տվեք ձեր քաջությունը:

Ու հայկական գունդը նետաձգությամբ առաջ սլացավ դեպի բերդը, բայց բերդից արձակվող նետերը չխնայեցին և նրանց, որոնցից շատերն ընկան դաշտում, առանցբերդին մի փոքր անգամ վնաս տալու:

Երեկոյացավ: Արևը արդեն իր վերջին հանգիստն էր առնում, երբ փողը հնչեց, և զինվորները ետ դարձան:

Բայց Յուսուֆը կատաղած էր: Յուր զորքերի կոտորվելը նրան հուսահատության մեջ էր գցել, այնինչ յուր նպատակը՝ Սմբատին բռնելը, չէր հաջողվում: Թանկագինօթոցի վրա նստած, թիկունքը տված բարձին, ձեռքի համրիչը գցելով, երբեմն էլ յուր նոսր մորուքը շփելով՝ մտածում էր նա: Կատաղության և վրեժխնդրությանալիքները մերթ ընդ մերթ անցնում էին նրա դեմքի վրայով: Սոսկալի էր նա այդ ժամանակ: Մանր, բայց կատաղությամբ լցված աչքերը կարծես ուզում էին դուրսժայթքել ակնակապիճներից:

Այդ միջոցին վրան մտավ յուր ծառաներից մեկը և, խոնարհ գլուխ տալով նրան, կանգնեց վրանի դռան մոտ:

Յուսուֆը գլուխը բարձրացրեց և նայեց նրան: Ծառան չհամարձակվելով նայել Յուսուֆին, հայտնեց, որ Գագիկ Արծրունին ցանկանում է արժանանալ իր տեսության:

— Թող գա այդ շունը, — հրամայեց Յուսուֆը և կրկին յուր համրիչը սկսեց պտտեցնել:

Այդ միջոցին ներս եկավ Գագիկ հայոց իշխանը, խոր գլուխ տվեց Յուսուֆին և ծունկ չոքելով նրա առաջ, համբուրեց նրա փեշի ծայրը, ապա ետ գնալով, ձեռներըկրծքին դարսեց և կանգնեց դռան մոտ:

— Այս ի՞նչ է, Գագի՛կ իշխան, քո գունդը ամենևին քաջություն ցույց չտվեց և Կապույտ բերդը գրավելու մեր առաջին արշավանքը անհաջող անցավ: Ի՞նչ խաղ էուզում խաղալ Սմբատ թագավորը. մի՞թե նա կարծում է, որ ողջ ու առողջ կպրծնի իմ ձեռքից:

— Թող չվշտացնե քո սիրտը այդ օրվա անհաջողությունը, մեծ է ալլահի զորությունը, և Սմբատը վաղ թե ուշ կհանձնվի քեզ: Այսօր նրա քաջերը չէին պատերազմում, այլ Կապույտ բերդի պարիսպները, որոնք փլատակ կդառնան միմիայն քո ամենազոր զորության առաջ:

— Այո, ես կկործանեմ այդ պարիսպները, որ մյուս անգամ պատսպարան չլինեն վախկոտ և թույլ հայերին: Ի՞նչ է կարծում Սմբատը: Ես երկաթե օղերով կշղթայեմբերդը, և նա սովից անձնատուր կլինի ու իմ գթությունը կհայցի: Այն ժամանակ վա՛յ հայոց թագավորին, որ համարձակվել է իմ դեմ ապստամբել: Քա՛ջդ իշխան, դուկարգադրիր զորքերիդ, որ կազմ ու պատրաստ լինեն միշտ հարձակումներով նեղելու Սմբատին, իսկ երբ նա կնկնի ձեռքս, այն ժամանակ մեծամեծ պարգևներկնդունես ինձանից, և ես քեզ Հայաստանի տերը կդարձնեմ:

Գագիկը խոր գլուխ տվեց, նորից ծունկ չոքեց, համբուրեց նրա փեշի ծայրը և դուրս եկավ վրանից:

Տխուր ու տրտում հեռանում էր նա Յուսուֆի վրանից, և նրա միտքը ալեկոծվում էր: Նա մտածում էր յուր դրության մասին, թե ի՞նչ պիտի լինի ինքը, և թե ինչո՞վպիտի վարձատրի իրեն Յուսուֆը յուր դավաճանության համար:

— Չէ՛, Սմբատին փրկություն չկա, հասավ նրա վախճանը: Ի՞նչ պիտի անե նա միայնակ, առանց օգնականի, առանց զորքի և մինչև ե՞րբ պիտի փակված մնաԿապույտ բերդում: Ո՞վ կօգնե նրան, երբ նա սովից ստիպված հուսահատությամբ կորոշի անձնատուր լինել բռնակալ Յուսուֆին: Նախարարները հեռացել ենՆրանից, ամբողջ Այրարատը անտեր-անտիրական է, Յուսուֆի հրոսակները կրակ ու մոխիր են դարձնում ամեն ինչ, իսկ ես՝ ստոր դավաճանս, փոխանակթագավորին պաշտպանելու, ինքս նրա դեմ եմ զինվել: Ի՞նչ պիտի տա փոխարենը Յուսուֆը: Ոչի՛նչ: Ես համոզված եմ, որ նա վաղ թե ուշ ինձ էլ կշղթայի ամուրշղթաներով և ամենասոսկալի տանջանքներ տալով կսպանի: Չէ՛, պետք է շուտով ազատվել նրանից և դառնալ իմ աշխարհը, այդ է պահանջում իմապահովությունը...

Եվ նա աննկատելի կերպով մտավ յուր բանակը, ուր մի վրանի առաջ նստած էին զինվորները ու կամացուկ խոսում էին:

— Ո՞ւր է Դավիթը, մի՞թե նա սպանված է, — հարցնում էր մեկը:

— Չէ՛, նա առավոտից չկար, ինչպես երևում է նա փախել է բանակից:

— Շատ էլ լավ է արել: Ի՞նչ կվայելի մեզ հայոց թագավորի դեմ կռվել: Տեսա՞ր, թե որպիսի քաջությամբ էին կռվում նրանք և ինչպես կոտորեցին Յուսուֆիզինվորներին:

— Արդարադատ աստվածը միշտ ճշմարտի կողմը կլինի, բայց տեսա՞ր, Թեո՛ս, երբ մեր գունդը առաջ գնաց, նրանք պակասեցրին իրենց նետերի արձակումը, կարծեսմեզ խնայում էին:

— Հա՛, ես լսեցի ինչպես մեկը գոռում էր պարսպից փախեք, թե չէ ձեզ էլ կկոտորենք, և նա ահագին պարսաքարը ձեռքին կարծես խնայում էր ձգելու: Ես նայեցինրան, հեռվից այդ զինվորը շատ նման էր մեր զինակից Դավթին, կարծես հենց նա լիներ:

Այդ միջոցին նկատեցին զինվորները Գագիկին և, լռելով իսկույն, ոտքի կանգնեցին: Գագիկը, որ մինչ այդ լուռ լսում էր նրանց, շարժվեց տեղից և ավելի հուսահատդեպի իր վրանը գնաց:

Դ

Բոլորեցին ամառն ու աշունը և եկավ ցուրտ ձմեռը, այնինչ դեռ պաշարված էր Կապույտ բերդը Յուսուֆի հրոսակներից:

Ամեն անգամ, երբ հարձակում էին գործում, նրանք մեծ կորուստով էին ետ դառնում, և Յուսուֆը հուսահատված այնպիսի պինդ օղակով շղթայեց Կապույտ բերդը, որոչ մի մարդ չէր կարող անցնել այդ շղթայից, նա ցանկացավ սովով նեղել Սմբատին: Եվ հիրավի Սմբատի պաշարը հատել էր: Հուսահատված մտածում էր Սմբատըյուր դրության, յուր աշխարհի վրա և դառնորեն հառաչում: Նա տեսնում էր քրիստոնեից կոտորածը, նա տեսնում էր յուր քաջերի արիությունն ու վեհանձնությունը, որոնք սովից հալածված՝ դեռ առյուծների քաջություն էին ցույց տալիս, և նրա սիրտը կսկծում էր: Խորին վիշտը կեղեքում էր բարեպաշտ թագավորի սիրտը, և դառնմտատանջությունները մաշում էին նրան: Նա զգում էր, որ Յուսուֆը միայն յուր արյանն էր կարոտ, այնինչ այստեղ զուր թափվում էր հայոց արյունը, և զուր, բոլորովին զուր հալումաշ էին լինում յուր քաջերը, որոնք իրենց արյան վերջին կաթիլը կդնեին թագավորի համար:

Սմբատը արդեն վճռել էր անձնատուր լինել Յուսուֆին խնայելով յուր քաջերի և քրիստոնյաների արյունը, երբ նրան ներկայացավ Դավիթ զինվորը:

— Ես պատրաստ եմ, տե՛ր արքա, ճեղքել թշնամյաց բանակը և ուտեստ հասցնել բերդին:

Սմբատը վեր բարձրացրեց յուր հուսահատությամբ լի աչքերը և նայեց Դավթին. մի տեսակ ժպիտ երևաց նրա դալկացած դեմքին, որը և՛ ուրախություն էրնշանակում, և՛ տխրություն:

— Գնա, որդի՛ս, դու մխիթարեցիր ինձ:

Եվ Դավիթը, խոր գլուխ տալով, հեռացավ արքայից, որի աչքերի մեջ այժմ փայլատակում էին ուրախության արցունքներ:

Ձմեռային մի մութ գիշեր էր: Գորշ ամպերը ծածկել էին երկինքը, և խորին խավարը տիրում էր ամեն տեղ: Կապույտ բերդի շրջակայքը ծածկված էր թանձր ձյունով, ուր ամեն ինչ մեռած էր, և կենդանության ո՛չ մի նշույլ չէր երևում: Միայն երբեմն պարսպի շուրջը փչում էր ցուրտ քամին և սուլելով անցնում հեռո՛ւ, հեռո՛ւ: Այդմիջոցին տասնհինգ մարդ դուրս գալով բերդի դռներից՝ զգուշությամբ սկսեցին առաջ անցնել: Նրանք ամենքն էլ զինված էին նիզակներով, վահաններով ու սրերով:

Ցուրտ քամին սուլելով շոյեց և յուր դաժան սառնությամբ համբուրեց նրանց, բայց նրանք, բանի տեղ չդնելով այն, լուռ առաջ էին անցնում: Խմբի առջևից գնում էրմի մարդ՝ բարձրահասակ և վիթխարի տեսքով, որ ամենայն զգուշությամբ աջ ու ձախ էր նայում: Հեռվից հանկարծ ճրագների նման փայլուն կետեր երևացին, որոնքհետզհետե մոտենում էին: Առաջնորդը վաղուց նկատել էր այդ, բայց լուռ էր, այնինչ ընկերներից մեկն ասաց.

— Դավի՛թ, տեսնու՞մ ես հեռվում ճրագների փայլփլմունքը, դրանք մեզ վրա են գալիս:

— Հա՛, գիտեմ, վաղուց եմ նկատել, բայց ցավում եմ, որ մեր առաջին արշավանքը Յուսուֆի զինվորների վրա լինելու փոխարեն՝ գայլերի վրա է լինելու:

Այդ միջոցին գայլերի խումբը, թվով տասը-տասներկու հատ, յուր ոռնոցով շրջապատեց նրանց:

— Տղե՛րք, այդպես չի լինի, հանաք անելու ժամանակ չէ, սրանց պետք է վերջ տալ,— ասաց Դավիթը և հրամայեց հարձակվել գայլերի վրա: Մի վայրկյանում գայլերիհետքն էլ չմնաց...

Ապա առաջ անցան: Հեռվում երևաց Կապույտ բերդի մոտակա գյուղերից մեկը: Այս բերդի բոլոր մերձավոր գյուղերում տեղավորված էր Յուսուֆի զորքը:

Երբ մոտեցան գյուղին, Դավիթը հրամայեց յուր ընկերներին թաքնվել թփի տակ, իսկ ինքը միայնակ մտավ գյուղը լրտեսելու:

Զգուշությամբ նա առաջ անցավ և ապա կանգ առավ մի դռան առաջ, որտեղից լսվում էին երգի և ուրախության ձայներ: Կատվի ճարպկությամբ նա մագլցեցցանկապատը և մտավ բակը ու ապա նայելով դռան ճեղքից, տեսավ զինվորներ, որոնցից մի քանիսը կրակի շուրջը նստած խորովում էին մի ոչխար, իսկ մյուսները՝ կրակից հեռու, փափուկ բարձերի վրա նստած ծափ էին տալիս և խաղացնում մի քանի կիսամերկ կանանց: Վայրենի կիրքը փայլում էր նրանց դեմքերին, այնինչխեղճ կանայք հոգնածությունից հազիվ շարժում էին իրենց ոտքերը:

Դավիթը սոսկաց. նրա մազերը փշաքաղվեցին, և նա ձեռքը տանելով դեպի սուրը, ուզեցավ աքացի տալ դռանը և ներս մտնել, բայց խոհեմությամբ զսպեց իրեն: Նահամրեց զինվորներին, որոնց թիվը քսաննհինգ երևաց իրեն, իսկ կանայք և հարսները՝ վեց հոգի: Հայ հարսներ էին դրանք…

Զգուշությամբ ետ քաշվեց Դավիթը և հասնելով յուր ընկերներին, պատմեց տեսարանը ու նրանք երկուսի բաժանվելով՝ մի խումբը կանգ առավ դռների մոտ, իսկմյուս խումբը ուժգին աքացի տվեց սենյակի դռանը և ահագին աղմուկ հանելով՝ հանկարծակի վրա ընկավ արաբ զինվորների վրա և սկսեցին սրերով նրանց մեկըմյուսի ետևից կոտորել, և երբ վերջացրին կոտորածը, Դավիթը կանչեց.

— Փա՛ռք Աստծո, հետքն էլ չմնաց, այստեղ բավականին պաշար կա, որը շուտով պետք է տեղափոխել բերդը:

Եվ նրանք որքան հնարավոր էր, վերցնելով պաշարը, քաշվեցին բերդը:

Փոքրիկ արշավանքներն էլ ոչինչ չտվեցին բերդականներին, և Սմբատը հուսահատված անձնատուր եղավ Յուսուֆին՝ խոսք առնելով նրանից, որ յուր նբերդականների կյանքը կխնայի:

Յուսուֆը խոստացավ, և Կապույտ բերդը մի տարի պաշարում կրելուց հետո հանձնվեց Յուսուֆին: Սակայն Յուսուֆը դրժեց յուր խոսքը և կարճ ժամանակից հետոՍմբատին շղթայեց, իսկ բերդականներից շատերին գերի տարավ: Գերի չմնաց միմիայն Դավիթը յուր մի քանի ընկերներով, որ հայոց թագավորին կորցնելուց

հետոքաշվեց լեռները և օրավուր սպասում էր արաբաց ժանտախտին՝ քաջ Աշոտ Երկաթին...

Ե

Հինգ ձիավոր իրենց երեսները դեպի Վասպուրական դարձրած՝ սրարշավ առաջ էին գնում: Քափ ու քրտինքի մեջ կորած էին նրանց ձիերը, երևում էր, որ նրանք հեռուտեղից էին գալիս և ոչ մի տեղ դադար չէին տվել ձիերին, որոնք մտրակների հարվածներից ստիպված հազիվ-հազ փոխում էին իրենց
ոտքերը: Ձիավորներընկատում էին այդ, բայց կրկին անհամբերությամբ քշում էին ձիերը: Ձիավորներից երկուսը գնում էին կողք-կողքի, իսկ երեքը մի փոքր հեռավորությամբ հետևում էիննրանց՝ թթված ու տխուր դեմքով. դրանք առաջ գնացող երկու հայ նախարարների ծառաներն էին, որոնք երկար ճանապարհորդությունից հոգնած՝ ոչ մի խոսք չէինարտասանում: Լուռ էին նույնպես իշխանները, երկու եղբայր Գագիկ և Գուրգեն Արծրունիք, որոնք Յուսուֆից խուսափելով փախչում էին իրենց աշխարհը՝ Վասպուրական: Ոչ միայն չկարողացավ դավաճանության ամոթը տանել, այլև կտրեց Գագիկը Յուսուֆից օգնություն և բարիքներ ստանալու հույսը և յուր անձըշտապով կամեցավ ազատել այն բռնակալից, որի ձեռքով վաղ թե ուշ ինքն էլ պիտի մահանար հայոց մյուս իշխանների նման: Նրանք գոնե պատվով էին մեռնում, սրերը ձեռքներին նահատակվում, առանց իրենց տոհմին ու անունին արատ դնելու, իսկ ինքը ի՞նչ էր անում… դավաճանության և ստոր մատնության կնիքը դնումէր յուր վրա: Հարկավոր էր ուրի՛շ միջոցների դիմել, ուրի՛շ ճանապարհ ընտրել յուր նպատակին հասնելու համար, և նա Յուսուֆից հույսը կտրած, նրա որոգայթներիցվախեցած, յուր եղբայր Գուրգենի հետ միասին արագությամբ փախուստ էր տալիս Վասպուրական... Այնտեղ պետք է բույն դնել, կենտրոնանալ և այնտեղիցդավադրություններ լարել հայ իշխանների, հայոց թագավորի դեմ և յուր սեփական ուժով հարթել ճանապարհը...

Բայց քանի դեռ չէր մտել յուր երկրի սահմանները, նա դեռ երկյուղ էր կրում Յուսուֆից...

Գագիկի գլխում այդ միջոցին սարսափելի փոթորիկ էր, որը տակնուվրա էր անում նրա մտածմունքները: Հանկարծ նրա գլխի մեջ, վիթխարի լեռան նման, կանգ էրառնում մի միտք, որ սարսռեցնում էր մարմինը և փշաքաղում մազերը, նրա աչքերը դուրս էին գալիս, երեսը կարմրատակում էր, ատամները կրճտացնում, իսկ երբկորչում էր այդ միտքը, նրա ողջ գանգը բռնում էր մի ուրիշ միտք, որ այնպես քաղցր, այնպես դուրալի ազդեցություն էր գործում իր վրա, նրա ջղերը

հանդարտվումէին, մահվան դողն անցնում էր, բարկության և սարսափի ներկը անհայտանում երեսից և դեմքին երևում էր մի տեսակ դառն, հեգնական ժպիտ...

Ում դեմ էր այդ դառն ժպիտը, հայտնի չէր, միայն թե այդ մտածելիս նրա հոգին ցնծում էր, և նա ավելի էր շտապում շուտ հասնել Վասպուրական:

Ոչինչ նրան չէր տանջում, ո՛չ քաղցը, ո՛չ հոգնածությունը, նա ամենևին չէր էլ մտածում յուր եղբոր և ձիերի վրա, որոնք բավական տարածություն ետ էին մնացել, իսկ ինքը միայնակ առաջ էր անցել... Երեկոյացել էր արդեն. մութը հետզհետե սկսում էր պատել ամեն տեղ, երբ Գագիկը մտավ մի նեղ ձոր, ուր, քարերի վրաթռչկոտելով, վազում էր լեռնային վճիտ առվակը: Գագիկի ձին տեսնելով ջուրը՝ կանգ առավ, խեղճ նժույգը ծարավ էր և սոված, նա ուզեց գոնե յուր ծարավըհագեցնել, և ինչքան էլ որ Գագիկը քաշեց ձիու սանձը, որքան էլ մտրակեց նրան, տեղից չշարժվեց: Այդ ժամանակ Գագիկը ետ նայեց և յուր ձիավորներին փնտրեց, բայց նրանցից ոչ մեկը չկար: Նա ինչ-որ բան մրթմրթաց քթի տակ և իջավ ձիուց: Նա քաշեց ձին մի կողմ և սկսեց շոյել նրա ճակատը, բայց հոգնած երիվարը ուշք չէրդարձնում նրա շոյանքին և ագահությամբ պրճոտում էր թարմ խոտը:

— Խե՜ղճ ձիս, դու սովե՞լ ես: Իրավունք ունիս այս թարմ խոտը վայելելու, մինչև որ մոտակա գյուղից քեզ համար գարի բերեն: Ես էլ եմ սոված, վնաս չկա, պետք էհամբերել, ամեն նեղություն տանել, — ասում էր Գագիկը՝ յուր, ձիու հետ խոսելով և սպասելով յուր եղբորն ու ծառաներին, որոնք դեռ չկային, ինչպես երևում է շատէին ետ մնացել:

— Է՜ ... ի՞նչ եղան անպիտանները և ինչո՞ւ նրանք այսչափ ետ մնացին, ի՞նչ պատահեց նրանց հետ: Գուրգենն էլ չկա, այնինչ հետզհետե մութը պատում է նհարկավոր է վաղօրոք գյուղ հասնել, հանգստացնել մեր ձիերին:

Փոքր ժամանակից հետո նրան հասան և մնացած ձիավորները:

— Մենք մեռանք, իշխա՜ն, — ասաց Գուրգենը, — մեր ձիերի մեջ էլ ուժ չի մնացել, մի քանի քայլ անցնելուց հետո նրանք կընկնեն և էլ վեր չեն կենա:

— Հա՜, բավական տարածություն անցանք, մենք արդեն մոտենում ենք մեր երկրի սահմաններին, մի քանի քայլ և ահա առջևի թմբի տակ հայոց գյուղ կա, այդտեղգիշերս կմնանք, լավ ընթրիք կանենք և վաղ առավոտ կրկին ճանապարհ կընկնենք:

— Սովը սպանում է, ամբողջ օր է նշխարք չենք դրել բերաններս:

— Դե՛հ, քայլեցեք գնանք, ժամանակ մի՛ կորցնեք, — ասաց Գագիկը, և ամեն մարդ, իջնելով ձիուց, սանձը ձեռքն առավ ու սկսեց ոտքով քայլել: Եվ երբ բարձրացանձորից, նրանց երևաց մի գյուղ, որ ավելի ավերակի էր նման, քան բնակավայրի:

Երբ մտան գյուղը, մութը արդեն խտացել էր, և գիշերը յուր սևաթույր թևերը տարածել էր ամեն տեղ:

Ամայությունն ու մեռելությունը տիրում էր ամբողջ գյուղին, կարծես ո՛չ մի կենդանի արարած չկար այստեղ, և կարծես հենց նոր էր մահաբեր փոթորիկն անցել այդվայրի վրայով և ամեն ինչ խորտակելով, ոչնչացնելով մահացրել էր նրա բնակիչներին... Երբ մեր ձիավորները գյուղ մտան, սառն ամայության դողը պատեց նրանց, և նրանք չիմացան, թե ինչ անեն և որ ավերակի դռանը իջնեն: Ո՛չ մի կենդանի շունչ չդիմավորեց նրանց:

Անցան ավերակ և ամայի մի քանի տների մոտով, և հեռվում նրանց երևաց ճրագի աղոտ մի լույս: Անմիջապես դեպի լույսը դիմեցին: Գագիկը առաջինը ներս մտավ, ուր կանթեղի աղոտ լուսավորության տակ, հին չուլի վրա նստած էր մի ծերունի: Նա այնքան խորասուզված էր յուր մտքերի մեջ, որ չնկատեց անգամ Գագիկի ներսմտնելը:

— Բարի երեկո, հայրի՛կ, — ասաց Գագիկը խրոխտ ձայնով:

Ծերունին սթափվեց և իր մեռելային անշարժ աչքերը դարձնելով դեպի Գագիկը՝ տեսավ յուր առջև կանգնած զինված մի մարդ, որն ըստ երևույթին վատտպավորություն թողեց նրա վրա: Նա բարձրացրեց ձեռնափայտը, որի վրա հենված էր, և կարծես ուզում էր խփել Գագիկին, բայց դողդոջուն ու թուլացած ձեռքերըչպահեցին փայտը և այն ընկավ գետին, իսկ ինքը անշարժ ու սարսափահար աչքերով նայում էր Գագիկին և երկյուղից դողում: Խե՜ղճ ծերուկ, նա դողում էր յուրկյանքի համար, այն թշվառ կյանքի, որի ողորմելի մնացորդները մնացել էին նրա մաշված ու դալկացած մարմնի մեջ...

Գագիկը հասկացավ նրան:

— Մի՛ վախենա, ծերո՛ւկ, մենք թշնամիներ չենք:

Ծերուկը, թշնամի բառը լսելով, ավելի կուչ եկավ և ետ ետ գնալով կանգ առավ անկյունում, որտեղից յուր անշարժ հայացքով կրկին նայում էր Գագիկին և նրաուղեկիցներին, որոնք նոր էին ներս եկել:

— Մ՛ի վախիր, ծերո՛ւկ, մենք քեզ վնաս չենք տա, մենք միայն օթևան ենք ուզում, — կրկնեց Գագիկը՝ մոտենալով ծերուկին:

Բայց ծերուկն, ըստ երևույթին, ոչինչ չէր հասկանում և ոչ մի պատասխան չէր տալիս:

Երբ Գագիկը տեսավ, որ նրա բերանից ոչ մի բառ դուրս չի գալիս, դարձավ դեպի յուր ձիավորները.

— Ձիերը մի տեղ տեղավորեցեք և աշխատեցեք նրանց համար կեր գտնել, իսկ մենք կմնանք այս գիշեր այստեղ: Ինչպես երևում է ծերուկը երկյուղից սարսափահար էեղել և մեզ էլ թշնամիների տեղ է դնում, բայց մենք շուտով սրա լեզուն կբանանք:

Ծառան ձիերը կապեց, իսկ զինվորներն սկսեցին գյուղի մեջ պտտել ձիերի համար գարի կամ հարդ գտնելու, երկար որոնելուց հետո փլատակ ախոռի տակիցհանեցին մի փոքր գարի ու հարդ, և ապա վերադառնալով բաց արին իրենց խուրջինները, ուր ամեն տեսակ պաշարեղեն ու գինի կար:

Գագիկն ու Գուրգենը ագահաբար վրա ընկան պաշարին ու գինուն, իսկ ծերուկը ապուշի նման դեռ նայում էր նրանց՝ չհամարձակվելով տեղից շարժվել:

— Հարկավոր է գրավել ծերուկին և հարցուփորձ անել, — ասաց Գուրգենը:

— Անպատճառ պետք է իմանալ, թե ի՞նչ է պատահել այս գյուղի հետ, որը մի քանի ամիս առաջ այնքան շեն էր, — պատասխանեց Գագիկը և գավաթը գինի լցնելով՝ դիմեց ծերուկին:

— Ծերո՛ւկ, ա՛ռ մի բաժակ գինի խմիր, սա քեզ կզորացնի և քո փակ լեզուն կբանա:

Գինին տեսնելով՝ ծերուկի աչքերի մեջ մի փայլ երևաց, որը շատ շուտով հանգավ, ըստ երևույթին, նա կասկածում էր հյուրերի վրա, բայց երբ Գագիկը զոռով նրանբերեց իր մոտ նստեցրեց, նա խմեց գինին, որը ցնցեց նրա ջղերը:

— Հը՛, ի՞նչ է, դո՞ւր եկավ, լա՞վն էր, ա՛ռ էլի խմիր, — ասաց Գագիկը դարձյալ գինու գավաթը մեկնելով նրան: Ծերունին նորից դատարկեց և հետզհետե նրա լեզունբացվեց, որից Գագիկն իմացավ, որ մի շաբաթ առաջ Յուսուֆի հրոսակները ներս խուժելով գյուղ, ավերակ էին դարձրել այն, իսկ բնակիչներից շատերին գերի էինտարել և շատերին էլ կոտորել: Գյուղում մնացել էր միայն ինքը, այդ ծերուկը, որպես գյուղի միակ կենդանի վկան...

Ծերունին սկսեց մանրամասնություններ պատմել, այնինչ Գագիկն ու Գուրգենը հոգնածությունը չտանելով, տեղն ու տեղը մեկնվել էին և թունդ խռմփացնում էին:

Արշալույսը բացվելուն պես հինգ ձիավորները կրկին շարունակեցին ճանապարհը՝ թողնելով ծերունուն նույն անշարժ դրության մեջ, ինչպես առաջ...

Կապույտ բերդի հանձնվելուց հետո մի տարի էլ անցավ: Կրկին կանաչեցին դաշտերն ու ձորերը, կրկին կենդանություն ստացավ բնությունը, լսվեց թռչուններիանուշ ճռվողյունը, մեղմացավ օդը, հալվեցին ձյունն ու սառույցը, և առվակները ուրախ քչքչոցով վազեցին առաջ: Բայց ի՞նչ վիճակի մեջ էր Հայաստանը: Յուսուֆը, Սմբատին մի տարի Դվինի մութ ու խոնավ բանտում պահելուց հետո, դուրս եկավ Դվինից յուր հրոսակներով և կանգ առավ Երնջակի2 բերդի պարիսպների տակ՝ չորս կողմը սփռելով ամայություն ու կոտորած:

Գարնանային արևը ուրախ ժպտում էր, այնինչ Յուսուֆի վրանի առաջ, ճիշտ Երնջակի մեջ պաշարված կտրիճ հայերի ներկայությամբ հետևյալ տեսարանն էրկատարվում: Մի խումբ զինվորների, դահիճների և Յուսուֆի իշխանների առաջ կանգնած էր մի մարդ՝ դժգույն և մեռելային դեմքով: Գլխաբաց և ոտաբոբիկ, պատառոտուն, հին, մաշված շորերը հազիվ էին ծածկում նրա մերկ մարմինը, իսկ տեղ-տեղ բաց մնացած մարմինը կապտած և ուռած էր: Գլխի երկար մազերըալիքաձև ոլորված էին, իսկ թավ մորուքը անկարգ ծածկում էր նրա դեմքը: Հասակը բարձր էր և վիթխարի, այնինչ նիհարությունն այն աստիճանի էր հասել, որկարելի էր նրան կմախքի տեղ դնել, եթե չլինեին երկու փայլուն աչքերը, որ լցված էին անհուն երանությամբ: Ո՞վ էր նա, որի հաղթանդամ մարմինը ավերել էինտաժանելի վիշտն ու անտանելի հոգսերը և անփոփոխ թողել միմիայն աչքերը, որոնք փայլում էին այնպես սիրուն, այնպես անվրդով, որ կարծես մարմնական բոլորվշտերն ու հոգսերը, դառն կսկիծը և թշնամիների արհամարհանքը կապ չունեն իր հետ...

Ի՞նչ աչքեր էին դրանք, որոնք տեսնում էին թշնամիների նախատինքը, նրանց ծաղրուծանակը և այնպես անվրդով, այնպես անխռով ու հանգիստ տանում էին ամենինչ՝ արհամարհելով այն, ինչ որ աշխարհային էր ու անցավոր:

Յուսուֆի կալանավորներից էր այդ մարդը, որին նա ուզում էր չարաչար տանջանքներով սպանել ի տես այն համառ հայ պաշարվածների, որոնցից չկարողանալովվրեժ առնել յուր բարկությունը ուզում էր թափել այդ մեկի վրա, որն

անզեն ու անմռունչ կանգնած էր յուր առջև և բոլոր տանջանքները տանում էր գերմարդկայինդիմացկունությամբ:

Հայոց թագավոր Սմբատն էր այդ նահատակը... Դահիճները մեկ-մեկ մոտենում էին նրան, դնում գլխին մի հին, կոտրատված կասկարա, թքում երեսին և, ծաղրելով, ծունկ չոքում նրա առաջ ու կանչում.

— Ողջո՜ւյն քեզ, հայո՜ց թագավոր:

Ապա երկաթե գավազաններով և խարազաններով խփում էին նրան, որից հետո կապտած մարմնից դուրս էր ցայտում արյունը և կաթիլ-կաթիլ ընկնում հողին: Հողըկուլ էր տալիս արյան կաթիլները իբրև սուրբ ավանդ Սմբատ արքայից: Նահատակվողը լուռ էր ու անմռունչ, հառաչանքի և ո՛չ մի ձայն չէր լսվում նրա կրծքից, ևսոսկալի հարվածներից առաջացած ցավից չէր ցնցվում նրա դեմքի ո՛չ մի մկանը:

Տեսնում էին դա թշնամիները և տանջանք տանջանքի վրա ավելացնում, որպեսզի նա ուրանա Լուսավորչի հավատը և ընդունի Իսլամի կրոնը: Բայց անհունտոկունությամբ նա տանում էր ամեն տանջանք:

Նրանցից մեկը, առնելով թագավորի թաշկինակը, կոխեց նրա բերանը և ապա, վերցնելով ճիպոտներից մեկը, սկսեց նրանով թաշկինակը կոխել երանելու որկորը, որպեսզի կտրվի նրա շունչը, բայց Սմբատ թագավորը դեռ շնչում էր ծանր ու մահամերձ և յուր մտքում աղոթք մրմնջում: Դրանով էլ չբավականանալով՝ նրա վզովանցկացրին գելարանը3, ծանր բեռը դրին գլխին և տասը դահիճներ սկսեցին նրան ինչպես մի քար շարժել աջ ու ձախ: Ա՛յդ էլ արին, բայց նա դեռ շնչում էր, դեռապրում էր, կյանքի թելը դեռ չէր կտրվել և տանջանքների բոպեն դեռ չէր անցել:

Տեսան թշնամիները, որ կենդանության նշույլ կա նրա մեջ, գազանային վրեժխնդրությամբ լցված, շիկացած երկաթով սկսեցին ավելացնել նրա տանջանքները...4:

Խեղդող ճենճահոտը տարածվում էր ամեն կողմ, թանձրը ծխի գոլորշիները դուրս էին ժայթքում Սմբատի մարմնի այն տեղերից, ուր դիպչում էր շիկացած երկաթը...

Վերջին անգամ բացեց Սմբատ թագավորը յուր աստվածային լույսով լցված աչքերը, վերջին մնաս բարովն ասաց հայրենիքին և վերջին շունչը պիտի փչեր, երբդահիճը կտրեց նրա գլուխը...

Բարկության փրփուրը բերանին Յուսուֆը հրամայեց նրա դիակը Դվին տանել և ի նախատինք քրիստոնյաների՝ խաչել Քրիստոսի նման... Անկուշտ գազանը նրաարյունից չէր կշտացել, դիակն էլ էր ուզում անպատվել:

Է

Կես գիշեր էր...

Երկրի վրա տիրում էր խորին խավարը: Ո՛չ մի շշուկ, ո՛չ մի ձայն չէր խանգարում մեռելային լռությունը, երբ հեռվից Դվին5 տանող ճանապարհին երևացին երկուձիավոր:

Նետի արագությամբ նրանք սլանում էին դեպի Դվին, ուր նստած էր Յուսուֆը: Սառը գիշերային քամին փռփռացնում էր նրանց փեշերը, և ձիերի ոտքերի տակիցբարձրանում էր թանձր փոշի: Գիշերային խավարի մեջ երկու վիթխարի հսկաների էին նմանվում նրանք, որ արշավելով դեպի Դվին, կարծես ուզում էին միակնթարթում ոչնչացնել, լափել ու հիմնահատակ անել այն:

Վիթխարի հասակ ուներ ձիավորներից մեկը, որ մյուսից մի քանի քայլ առաջ էր սլանում. լայն թիկունքը, հաստ ու հուժկու բազուկները մի ամբողջ բանակ կարող էինոչնչացնել: Թավ, սև մորուքը պատել էր նրա դեմքը, իսկ հրացայտ աչքերը փայլում էին գիշերային խավարի մեջ, ինչպես երկու հրաբուխներ: Բարկության ուվրեժխնդրության կատաղի կրակով էին լցված այդ աչքերը, որոնք նայողին հալեցնում էին ինչպես մոմ:

Ահագին սուրը կախված էր նրա մեջքից, իսկ ծանր սաղավարտը փայլում էր գլխին՝ գիշերային խավարի մեջ: Պակաս չէր մարմնի կազմվածքով և մյուս ձիավորը, բայց նա չէր կարող յուր ուժով համեմատվել առաջինի հետ: Նա էլ սուր ուներ և ձեռքի երկայն նիզակով անդադար խփում էր ձիուն, որպեսզի ետ չմնա առաջինձիավորից՝ յուր տիրոջից: Կարճ ժամանակ անց նրանք մոտեցան Դվին քաղաքին, ուր նույնպես տիրում էր մեռելային անշարժությունը: Հեռվում երևում էինՅուսուֆի պալատը և հայոց կաթողիկոսարանը: Նրանք մոտեցան Դվինին: Այդ ժամանակ մի քանի շուն սկսեցին հաչել ձիավորների վրա, որոնք, մի փոքր էլ

առաջգնալով, իջան ձիերից և նրանց դեպի ձորը տանելով՝ կապեցին այնտեղ, իսկ իրենք մտան քաղաք:

— Դու լա՞վ ես հիշում տեղը, — հարցրեց առաջին ձիավորը մեզ ծանոթ Դավթին, երբ նրանք մտան լուռ փողոցները:

— Ինչպես ցերեկվա լույսը, — պատասխանեց Դավիթը:

— Իսկ համոզվա՞ծ ես, որ լույսն ամեն գիշեր իջնում էր նրա խաչված տեղը:

— Տե՛ր, ես ինքս աչքովս եմ տեսել: Ինչպե՞ս կարելի է չհավատալ:

— Դեհ, ուրեմն առաջ քայլիր և ցույց տուր տեղը:

Դավիթն առաջ անցավ, մի քանի լուռ փողոցներ անցնելուց հետո նրանք կանգ առան հայոց կաթողիկոսարանի առաջ, մի հրապարակի վրա:

— Ահա այստեղ էր խաչված հայոց թագավոր Սմբատը, այստեղ Էին անարգում նրա դիակը այդ անօրենները:

— Լավ ընտրություն է. ճիշտ հայոց կաթողիկոսարանի դիմաց,— ասաց Դավթի տերը և խոր հոգոց հանեց:

— Իսկ ու՞ր է լույսը6, ինչո՞ւ նա չկա:

— Կլինի, գուցե դեռ վաղ է. երկնքից լույսն իջնում է, առհասարակ, կես գիշերից անց:

— Լա՛վ, ուրեմն, սպասենք:

Բայց տես, տե՛ր իմ, ահա լույսն իջնում է երկնքից, տեսնում ես, ճիշտ մեր գլխին մի տեսակ աղոտ լուսավորություն է երևում, չի անցնի կարճ Ժամանակ և դուկտեսնես հրաշքը, — ասաց Դավիթը և նայեց վեր, դեպի աստեղազարդ երկինքը, ուր, հիրավի, իրենց գլխավերևում, այնտեղ, ուր բևեռել էր Յուսուֆը Սմբատին, երևում էր մի աղոտ լույս, որ հետզհետե ընդարձակվում և պսակի կերպարանք էր ստանում:

Դավթի տերը ծունկի չոքեց և ձեռքերը կրծքին դրեց, անթարթ աչքերով սկսեց նայել լույսին, նրա սիրտը սկսեց դողալ, այն սիրտը, որ չէր դողա, եթե Յուսուֆի ամբողջբանակը յուր վրա գար:

Պսակը հետզհետե իջնում էր ցած, գալարվում, թռիչքներ անում վերև ու ներքև և կրկին կանգ առնում:

Հանկարծ Դավթի տերը, այն հաղթանդամ հսկան, սարսռեց, նրա մարմնով անցավ մի այնպիսի դող, որ քիչ մնաց արյունը սառեցներ երակներում և ցնդեր ուղեղը:

Նա տեսավ յուր առաջ հայոց Սմբատ թագավորին, որ յուր գունատ և դալկացած աչքերով նայում էր նրան:

Աղաչանքի և աղերսանքի հայացք էր այդ, որ ուղղված էր դեպի իշխանը, որն ապուշ կտրած նայում էր նրան:

Այդ դալկացած և աղերսող աչքերում կարծես թաքնված լիներ վրեժխնդրության և ատելության սարսափելի բոցը, որ դեպի հուր ու մոխիր էր քաջալերում:

Այդ բոցը հալում էր իշխանին, նրա դեմքի մկանները ցնցվում էին, երեսին պատում էր մեռելային գունատություն, այնինչ նա յուր աչքերով կլանում էր Սմբատարքայի ստվերի յուրաքանչյուր շարժումը, դեմքի ամեն մի գիծը, աչքերի թափանցող հայացքը, որ վիշտ և զարհուրանք էր պարունակում յուր մեջ...

Ստվերի հոգեկան այդ բուռն զգացմունքը շատ խորն էր թափանցում իշխանի սիրտը և այնտեղ յուր ավերմունքն անում, յուր խոր, անջնջելի հետքերը թողնում:Սոսկալի էին այդ հետքերը, զարհուրելի նրա ավերմունքը:

Եռուն կյանքով լի, անհաղթելի ուժի տեր մարդու մարմնով կարծես բյուրավոր մրջյուններ էին վազում, որոնք փշաքաղում էին նրա մարմինը: Նա հետզհետե, կարծես, սառչում էր, դադարում էր կենդանության շարժումը, գիտակցությունը լռում էր, և դառնում որպես կենդանի արձան: Ի՞նչ դրության մեջ էր նրա հոգին, ո՞ւր նորտե՞ղ էր սավառնում՝ հայտնի չէր. միայն նա տանջվում էր, այդ երևում էր նրա դժգույն, մեռելային դեմքից, ուր շարվել էին արտասուքի խոշոր, բայց սառնկաթիլներ... Աշխարհը գոյություն չուներ նրա համար, և ինքը յուր ամբողջ էությամբ ամփոփված էր ստվերի աչքերի մեջ, այդ ոոպեին դա էր նրա աշխարհը, որ մեծէր, քան տիեզերքը, ահարկու և սոսկալի, քան դժոխքը: Նա հասկանում էր այդ աշխարհը, ճանաչում էր նրա հոգեկան վիշտը և սարսռում... Նայեց նա ստվերին, նայեցև հանկարծ խուլ, գերեզմանային ձայնով ասաց.

— Երդվում եմ, հա՛յր, որ ոչ մի բարբարոս չթողնեմ Հայաստանում և քո վրեժը տասնապատիկ առնեմ Յուսուֆի հրոսակներից:

Այդ միջոցին ստվերը ժպտաց, ուրախացավ, մի տեսակ անհուն երանություն անցավ նրա գունատ դեմքով. ապա երերաց, ցնցվեց, հետզհետե նոսրացավ, լուծվեց օդիմեջ և պսակի հետ չքացավ...

Տիրեց կրկին խորին խավարը:

Վեր կացավ իշխանը և վրեժխնդրությամբ լի աչքերը չորս կողմ դարձնելով՝ մի այնպիսի մռնչյուն արձակեց, որ սար ու ձոր դողացին:

Այդ ժամանակ Դավիթը մոտեցավ նրան և ասաց.

— Տե՛ր իմ, հինգ թե վեց հոգի Յուսուֆի զինվորներից գալիս են դեպի մեզ: Եթե մեզ ճանաչեն, կռիվն անխուսափելի է:

— Թո՛ղ գան: Այդ շներին բոլորին էլ պետք է կոտորել:

— Բայց, տե՛ր իմ, նրանք կարող են աղմուկ հանել...

Վեց հոգուց բաղկացած խումբը մոտեցավ նրանց: Եվ Դավթի տերը հանկարծակի մեկին այնպիսի աքացի տվեց, որ նա դիպչելով ընկերոջը, նրան էլ գետին գլորեց:Մյուսները այդ նկատելով, սրերը մերկացրին:

Հսկան ժպտաց և, աներկյուղ մոտենալով, երկուսին բռունցքով այնպիսի հարված տվեց, որ նրանց սրերը երեք գազ ու կես այն կողմ շպրտվեցին, իսկ իրենք անշունչվայր ընկան ընկերների մոտ:

Խմբից մի հոգու գլուխը Դավիթն էր կտրում, իսկ մեկը սարսափից փախուստ էր ուզում տալ, երբ հսկան, բռնելով նրան, տապալեց գետին և ապա հուպ տալովորկորին՝ գոռաց խրոխտաձայն.

— Անհավատ շուն, քեզ կենդանի եմ թողնում, որ լուր տանես Յուսուֆին, թե Աշոտ Երկաթ շահնշահը՝ Սմբատի անդրանիկը, սուրբ վրեժխնդրության ոգով զինված, պիտի հալածե Յուսուֆին և նրա հրոսակներին: Կարճ ժամանակ չի անցնի, և դրանց հետքը չի մնա Հայաստանում:

Այդ ժամանակ զինվորը Աշոտի մատների ճնշումից խռխռացնում էր և խեղդվելու մոտ էր:

— Հը՛, սատկու՞մ ես: Ո՞ւր գնաց ձեր քաջությունը, որ մի մատի ուժին էլ չեք դիմանում, — ասաց Աշոտը՝ Սմբատ նահատակի որդին, և մի աքացի տալով նրան, դիմեցԴավթին.

— Դե՛հ, Ժամանակն է գնալու, շուտով արշալույսը կբացվի, հասավ վրեժխնդրության ժամը, անօրենների հետքն անգամ չպետք է թողնել, — ասաց նա: Եվ ապա, հեծնելով ձիերը, նրանք երեսները շուռ տվին դեպի Բագրեվանդ և գիշերային մթության մեջ սլացան առաջ...

Ը

Այժմ մի փոքր կանգ առնենք և տեսնենք, թե ինչ դրության մեջ էր Հայաստանը Սմբատ արքայի նահատակվելուց հետո և ու՞ր էր Աշոտ Երկաթը:

Արաբաց տիրապետության ժամանակ Հայաստանի մեջ գտնվում էին բազմաթիվ մեծ և փոքր իշխանական ցեղեր, որոնցից չորսը ձգտում էին առաջնակարգ դերխաղալ Հայաստանի մեջ: Այդ մեծ իշխանական ցեղերն էին՝ Արծրունիք, Սյունիք, Մամիկոնյանք և Բագրատունիք: Սրանցից առաջին երկուսը արդեն վաղուց ձգտումէին հայոց թագավորության հասնելուն, բայց իրենց ներելի և աններելի միջոցներով գործն ավելի փչացրին ու իրենց ցանկացած նպատակին չհասան:Մամիկոնյանք, թեև նոր եկած նախարարություն էին կազմում, նպատակ ունեին լոկ ազգին ծառայել ամենից վեր դասելով ազգության շահերը, քան թե ձգտումըդեպի թագավորությունը, և այդ է պատճառը, որ սրանք թեև ընդհանուր սպարապետի պաշտոններ էին կատարում և ուժը իրենց ձեռքին էր, բայց չօգտվեցին այդուժից, և հետզհետե, իններորդ դարի կեսին, կտրվեց նրանց շառավիղը Գրիգոր Մամիկոնյանի մահվամբ:

Բագրատունյանց տոհմը, որ հանդես եկավ Պարթևաց օրով և թագադիր ասպետության պաշտոնն ուներ, հետզհետե առաջնակարգ դեր էր կատարում հայոց մեջ:Սրանց միջից դուրս եկան քաջ և իմաստուն զորավարներ, որոնք Բագրատունյաց անունը փառավորեցին, իսկ իններորդ դարի վերջերին արդեն հաջողվեցթագավորի տիտղոս առնել (885 թ.):

Հայոց բնավորության համեմատ, հենց որ Բագրատունիք ձեռք բերին թագավորական տիտղոսը, մյուս նախարարներն էլ՝ թե՛ մեծ, թե՛ փոքր սկսեցին գլուխբարձրացնել և ձգտել անկախության:

Արծրունիք առաջինն եղան, որ Գագիկ Արծրունու ջանքերով ձեռք բերին անկախություն և կազմեցին Վասպուրականի մեջ իրենց տերությունը (908թ.): Դրանիցվաթսուն տարի հետո քայքայվեց նաև Բագրատունյաց տերությունը, որ գտնվում էր Այրարատյան երկրում: Եվ Բագրատունիք Վանանդ երկրում կազմեցինառանձին թագավորություն՝ Կարս մայրաքաղաքով, այնինչ այդ ժամանակաշրջանում քայքայվեց նաև Վասպուրականի թագավորությունը, որից առաջացանՌշտունյաց և Անձևացյաց անկախ տերությունները և ապա հետզհետե Սյունյաց, Բագրատունյաց, Կյուրիկյան (Լոռվա մեջ) թագավորությունները և բազմաթիվմանրմունր իշխանություններ, որոնցից ամեն մեկը ուզում էր անկախ լինել: Անմիաբանության և խռովության ոգին բուռն կերպով տիրում էր հայերի մեջ: Հույներր նարաբները դրա որմները ցանել էին հայերի մեջ, որ այդպես առատ հունձ էր տալիս՝ քայքայելով իրենց ուժերը և մեկ իշխանին մյուսի դեմ հարուցանելով...

Բագրատունյաց առաջին թագավորը եղավ Աշոտ Ա., որի մահվանից հետո թագավորական գահը բարձրացավ Սմբատը, որը երեք որդի ուներ՝ Աշոտ, Մուշեղ և Աբաս:Սմբատի գլխավոր ջանքը եղավ անկախ մանր տերությունները միացնել իրար, բայց այդ չհաջողվեց նրան, որովհետև չարանենգ Յուսուֆը, կասկածելով Սմբատիհավատարմության վրա և նրա ուժեղանալու վախենալով, հետամուտ է լինում նրան բռնելու, բայց Սմբատը յուր որդիներով դիմադրում է Յուսուֆին: Սմբատիանդրանիկ որդի Աշոտը և մյուս որդի Մուշեղը Նիգ գավառում ճակատամարտում են Յուսուֆի զինվորների դեմ, ուր հաղթվելով Մուշեղը գերի է ընկնում և տարվելովԴվին՝ մահացու դեղով սպանվում է և ապա թաղվում Բագարանում7:

Այնուհետև Կապույտ բերդում Սմբատ արքայի անձնատուր լինելուց հետո, նրա երկու որդիները, Աշոտն ու Աբասը, փախչում են Հայաստանից Յուսուֆիվրեժխնդրությունից վախենալով, որոնցից առաջինը գնում է Կոնստանդնուպոլիս Հունաց Լևոն կայսեր մոտ, իսկ երկրորդը՝ Վրաստան և փեսայանում վրացթագավորին8:

Աշոտը, որ յուր քաջապինդ արիության համար Երկաթ մականունն ստացավ, որ յուր մատներով կարողանում էր երկաթը ոլորել և զարմացնել բոլորին, յուր հորմահից հետո Լևոն կայսեր հրամանով վերադառնում է Հայաստան, անվանում իրեն շահնշահ, այսինքն՝ թագավորաց թագավոր, և հալածում արաբներին9:

Ահա այս դրության մեջ էր Հայաստանը, երբ երևաց Աշոտ Երկաթը:

Թ

Բագրևանդ10 գավառում, այնտեղ, ուր սկիզբ է առնում Եփրատի մի վտակը և ուր Գրիգոր Լուսավորիչը մկրտեց Տրդատ թագավորին և հայերին, Նպատ լեռան լանջինբարձրանում էր մի մենաստան, որ իններորդ դարի վերջում ծաղկած և փարթամ դրության մեջ էր: Այդ մենաստանը, որի մեջ քառասունից ավելի կրոնավորներ էինգտնվում, կրում էր սուրբ Գրիգոր անունը, ուր հասնելով՝ ամեն մի ճանապարհորդ կանգ էր առնում և հայկական սովորության համեմատ ընդունում էրվանականների լիառատ հյուրընկալությունը:

Դեռ շատ հին դարերում, երբ հայերի մեջ չէր մտել քրիստոնեությունը, երբ պաշտում էին նրանք չաստվածներին, այդ մենաստանը կրկին գոյություն ուներ նծառայում էր իբրև հյուրընկալության կենտրոն, միայն թե այն ժամանակ չէր կրում այդ անունը, այլ կոչվում էր Բագավան, Բագնաց ավան և կամ Դից ավան:Բագավանը այդ ժամանակ մեծ դեր էր կատարում հայոց մեջ: Այդտեղ էին գտնվում քրմապետ Մաժանի և նրա եղբոր Տիգրանի գերեզմանները, ուր գտնվում էր նաևՎանատրի հյուրընկալության և ամանորաբեր նոր պտղոց չաստծու բագինը: Այդ բագինը, Խորենացու ասելով, շինել էր վերջին Տիգրան թագավորը, որ յուրքրմապետ եղբոր՝ Մաժանի գերեզմանի վրա հրամայեց բագին շինել, որ դրանց մատուցած զոհերից օգտվեն ամեն ճանապարհորդ ու հյուր, և ապա Վաղարշթագավորը նավասարդի առաջին օրը աշխարհախումբ տոն կարգեց այդ բագնին: Անցավ ժամանակ, քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստան և սուրբ ԳրիգորԼուսավորիչը, վերցնելով այդ կուռքը, դրա տեղ Քրիստոսի հաղթական խաչը տնկեց, բերելով այդտեղ սրբույն Հովհաննու և Աթանագինեի նշխարները:

Բայց որովհետև նավասարդի առաջին օրը մեծ հանդեսով տոնվում էր այդ տոնը և միևնույն ժամանակ տոնվում էր նոր պտուղների, բերրիության տոնը, այդպատճառով, նույն այդ օրը, Գրիգոր Լուսավորիչը նշանակեց սուրբ Հովհաննու Մկրտչի և Քրիստոսի վկայի՝ Աթանագինեի տոն. այդպիսով հետզհետե մոռացությանմատնվեցին հին կռապաշտական տոնախմբությունները, և նրանք տեղի տվեցին քրիստոնեական տոներին:

Այդ իսկ մենաստանում11, ինչպես ասացինք, իններորդ դարի վերջերին, ապրում էին քառասնից ավելի վանական, իսկ տասներորդ դարի սկզբներին հազիվ մնացելէին մի քանիսը, և նա զրկվել էր յուր զարդարանքներից, ոսկուց և արծաթից:

Յուսուֆի հրոսակները, մտնելով Բագրևանդա գավառը, ամեն ինչ տակնուվրա էին արել, չխնայելով անգամ այդ մենաստանը, ուր ամեն ինչ հափշտակելով, սրի էինանցկացրել քառասունից ավելի վանականներ, իսկ մնացածներին՝ փախուստի մատնել: Սակայն վանականներից մեկը, վերադառնալով վանք, ամայի պատերի մեջշարունակում էր յուր թշվառ գոյությունը՝ ամեն րոպե մահվան սպասելով այն արաբ իշխանից, որը նստած էր Բագավանում և չորս կողմ մահ էր սփռում:

Ծերունի վանականն էր այդ մենաստանի վանահայրը, քանի՛-քանի՛ թշվառություններ անցել էին նրա գլխով, քանի՛-քանի՛ փորձանքների էր հանդիպել նա, բայցնրա հոգու մեջ այնպիսի խոր վիշտ չէր ընկել, ինչպես հիմա: Երբ նայում էր վանքի մերկ, զարդարանքներից զուրկ պատերին, երբ մտնում էր վանքի ամայի ուդատարկ ամբարներն և մառանները, նրա սիրտը քաղվում էր, աչքերից ընկնում էին արտասուքի կաթիլներ:

Մարտիրոս էր այդ ծերունի վանահոր անունը, որ յուր ընկերակիցների կոտորածից հետո, դեռ մի քանի ամիս չկար ինչ վերադարձել էր վանքը յուր մի քանիծառաներով:

Երեկոյան դեմ էր: Արևը նոր էր հանգիստ առնում Սուկավ կամ Ջրաբաշխ լեռների կատարներին, երբ Մարտիրոսը լուռ շրջում էր վանքի գավթում և երբեմն նայումհորիզոնին, ուր մայր էր մտնում արևը՝ յուր ետևից թողնելով կարմրածիրանագույն շերտեր... Ծառաներից երկուսն էլ մտախոհ նստած էին մի քարի վրա և ինչ-որխոսում էին:

— Տղե՛րք, — դարձավ նրանց վանահայրը, — դռները պինդ փակեցեք և ոչ ոքի այլևս ներս չթողնեք, արևը արդեն մայր մտավ և շուտով խավարը կտիրի:

— Պարսպի բոլոր դռները պինդ փակված են, հա՛յր սուրբ, — ասաց ծառաներից մեկը՝ ոտքի կանգնելով:

— Իսկ նիգերն ամրացվա՞ծ են:

— Այո՛, այնքան ամուր են, որ եթե ինքը՝ Յուսուֆն էլ յուր բանակով այստեղ գա, կրկին չի կարող ներս մտնել,— հեգնելով ասաց ծառան:

— Հը՛մ, Յուսուֆը... հա՛, եթե հիմա գա, ի՞նչ պիտի տանի. ամեն բան տարավ, բոլորին կոտորեց, էլ ինչու՞ համար է գալիս, ի՞նչին են պետք վանքի սառը քարերը, — մռմռաց ինքն իրեն վանահայրը և սկսեց կրկին տերողորմյան ձգել:

Այդ միջոցին լսվեց վանքի պարիսպների դռան բախյունը. Ինչ-որ մեկը բախում էր դուռը ուժգին և շտապ հարվածներով:

Ծառաները ոտքի կանգնեցին և երկյուղից սկսեցին իրար երեսի նայել, իսկ վանահայրը, տեղից ելնելով դադարեցրեց տերողորմյայի համրելը և շփոթված դեպի դուռընայեց:

— Ո՞վ պիտի լինի, որ այդպես շտապ-շտապ ծեծում է դուռը, — մտածեց նա: Եվ նրա մտքովն անցավ Բագավան գյուղի արաբաց իշխանն ու յուր հրոսակները: Խեղճվարդապետի մարմնով սառը դող անցավ, երբ մտաբերեց նրանց առաջին արշավանքը և վանքի ավերմունքը:

Ով էլ որ լինի, լավ բանի համար չի լինի եկած, բայց և այնպես պետք է իմանալ և ընդունել: Ի՞նչից պետք է վախենալ, քանի որ ոչինչ չկա վանքում կողոպտելու, իսկյուր կյանքի վերջին մնացորդները իրեն այլևս պետք չեն:

— Տղե՛րք, գնացեք տեսեք ո՞վ է և ի՞նչ է ուզում, բայց առանց իմ հրամանի դուռը չբանաք:

Ծառաները վազեցին դեպի դուռը, որը քիչ էր մնում ջարդուփշուր լիներ: Ինչպես երևում էր, այցելուն շտապ գործ ուներ կամ համբերություն ամենևին չուներ:

Շփոթված վանահայրը դեռ կանգնած էր տեղում, երբ ծառաներից մեկը դառնալով հայտնեց.

— Հա՛յր սուրբ, վիթխարի տեսքով մի գյուղացի է, ստիպում է դուռը բանալ, նա կարևոր գործ ունի քեզ հետ:

— Միայնա՞կ է նա:

— Այո , միայնակ, ուրիշ ոչ ոքի չտեսանք հետը:

— Բայց լավ դիտեցի՞ք շուրջը:

— Այո՛, չորս կողմ լռություն է տիրում, և նա միայնակ ծեծում է դուռը: Եթե չբանաք, ասում է, դուռը կկոտրեմ:

— Զենք ունի՞, — հարցրեց վանահայրը:

— Ոչ մի զենք չտեսանք վրան, բայց այնպիսի ուժեղ բազուկներ ունի, որ հազար զենք արժեն:

— Լա՛վ, ներս թողեք, բայց դռները իսկույն փակեցեք և դուք էլ զգույշ մնացեք: Ո՞վ գիտե՝ ի՞նչ մարդ է, թշնամի՞ է, թե բարեկամ: Մեր ժամանակներում ամեն բանիվրա պետք է կասկածել, ամեն բանից պետք է վախենալ, — ասաց վանահայրը ինքն իրեն և լուռ նայեց դեպի դուռը, որը ճռճռալով բացվեց, և մի հաղթանդամ մարդ՝ գյուղական հագուստով, երկար փայտը ձեռքին ներս մտավ և ուղղակի դեպի հայր սուրբը գալով՝ խոնարհ գլուխ տվեց նրան:

Մարտիրոս հայրը յուր փոքրիկ, բայց փայլուն աչքերը դեպի նա սևեռելով՝ ոտքից գլուխ զննեց նրան և, ըստ երևույթին, լավ տպավորություն ստանալով, մեղմձայնով հարցրեց.

— Ի՞նչ կկամենայիր, որդյա՛կ, որ այս ժամին վանքի դուռն ես ծեծում, երբ ոչ ոքի այլևս չենք ընդունում:

— Քո օրհնությունը, Մարտիրոս հայր, — ասաց գյուղացին և մոտենալով՝ աջն ուզեց համբուրել:

Վանահայրը աջը տվեց նրան և հարցրեց.

— Դու որտեղի՞ց գիտես իմ անունը:

— Բարի մարդկանց անունը միշտ ամենքը կիմանան, բայց ես առանձին գործ ունեմ քեզ հետ, հա՛յր սուրբ: Հրամայիր ծառաներիդ հեռանալ կամ մտնենք խուցդ:

— Գնանք, որդյա՛կ, — ասաց վանահայրը, առաջնորդելով նրան դեպի յուր խուցը: Եվ երբ նրանք միայնակ մնացին, այցելուն սկսեց յուր հարցուփորձը:

— Հա՛յր սուրբ, դու լավ տեղեկություն կունենաս Բագավանից, թե այնտեղ որքան արաբաց զորք կա և ի՞նչ դրության մեջ են:

Հայր սուրբը աչքերը չռեց, երբ լսեց այդ հարցը:

— Ի՞նչ հարկավոր է քեզ, որդի՛, անօրեններն այնքան շատ են, որ համրել չի կարելի:

— Ինչքան էլ շատ լինեն, մոտավոր թիվը քեզ հայտնի կլինի, որովհետև նրանք քեզանից մոտիկ են և քո ծառաները միշտ երթևեկություն ունեն գյուղի հետ:

— Ի՞նչ ասեմ, մոտ հինգ հազարի չափ կլինեն, որոնց կեսը նստում է Բագավանում, կեսը՝ Վաղարշակերտում:

— Հը՛մ... հինգ հազար... երկու հազար և հինգ հայո՞ւր… է ... հոգ չէ, — ինքն իրեն մռմռաց այցելուն:

— Ի՞նչ է որ...

— Ոչի՛նչ, փոքր ժամանակից հետո դրանց հետքն էլ չի լինի Բագավանում:

— Ի՛նչպես, — ասաց վանահայրը և դողդողուն ձեռքերով բռնեց այցելուի ձեռքը, — դու ուզում ես միայնակ նրանց հետ կռի՞վ տալ, կոտորե՞լ նրանց:

— Չէ՛ ես չէ, այլ Աշոտ Երկաթ շահնշահը:

Մի սարսուռ անցավ ծերունու մարմնով, երբ լսեց Աշոտ Երկաթի անունը, և նրա աչքերում փայլեց ուրախություն:

— Իսկ դու ո՞վ ես, որ նրանից տեղեկություն ունես: Ո՛ւր է նա, նահատակ Սմբատի որդին:

— Ես ո՞վ եմ, ես նրա զինվոր Դավիթն եմ, որ առաջուց եկել եմ հայտնելու քեզ, որ այս երեկո պատրաստ լինես նրա վեց հարյուր քաջերին ընդունելու, որովհետև միփոքր ժամանակ այստեղ հանգստանալուց հետո գիշերս պիտի հարձակում գործենք Բագավանի վրա, ուր վաղը առավոտյան էլ ոչ մի արաբ զինվոր չի մնա: Դե՛հ, հա՛յր սուրբ, ծառաներիդ հրամայիր, որ իրենց խուցը մտնեն քնելու, իսկ դռան բանալիները ինձ հանձնեն: Ժամանակ չպետք է կորցնել, ես դուրս կերթամ շրջակայքը աչքի անցկացնելու և կարճ ժամանակից հետո կրկին կգամ, — ասաց Դավիթը և, վեր կենալով տեղից, դուրս եկավ խցից:

Շվարած վանահայրը չգիտեր երա՞զ է, թե իրողություն, բայց և այնպես հրամայեց բանալիները հանձնել Դավթին և պատրաստություն տեսնել դիմավորելու ԱշոտԵրկաթին:

Ժ

Դավիթը, վանքի բանալիները գրպանը դնելով, կամաց սկսեց կանաչով պատած բլրից ցած իջնել դեպի ձորը: Հուսահատ և տրտում էր նրա դեմքը: Այն մարդը, որայնպես աներկյուղ էր դեպի մահը, այն մարդը, որ յուր կյանքը դրել էր արդարության և վեհանձնության համար, նա, որ արհամարհեց Գագիկ Արծրունու

դափնիներըյուր տիրոջ մոտ գտնված փշի փոխարեն, այժմ սաստիկ հուսահատված էր և տխուր: Մի տեսակ ծանր միտք, մի տեսակ անորոշ ճնշում տակնուվրա էր անում նրասիրտը և խռովում հոգին: Ի՞նչը կրծեց նրա սիրտը, ի՞նչը վրդովեց հոգին, երբ առաջին անգամ ոտք դրեց Բագրևանդ գավառը, այնինչ մինչև այդտեղ ոտք դնելը նրահոգու մեջ տիրում էր լի հույսը դեպի ապագան... իսկ հիմա, երբ նա աչքի անցրեց այդ գավառը, ամեն ինչ ոչնչացավ, ամեն հույս ջարդուփշուր եղավ...

Նա իջավ բլրից, մտավ ձորը, նոր բլուր բարձրացավ և կրկին նոր ձոր մտավ, կանգ առավ այնտեղ և խոր ախ քաշեց, որից կարծես նրա թոքերը պատառոտվեցին և այդարի մարդու աչքերում երևացին արցունքներ... Նա նայեց յուր ոտքերի տակ, ուր փռվում էին մի խումբ քարակույտեր, որոնք ցույց էին տալիս, թե դրանք ավերակգյուղի հետքեր են, որտեղից ահռելի փոթորիկն անցնելով ամեն ինչ քանդել, ոչնչացրել էր՝ քարը-քարին չթողնելով... Ձորի վերևում երևում էին միայն մի քանիխաղողի որթեր, որ բախտի բերմամբ ազատ մնալով փոթորկի մահաբեր շնչից, նոր էին ծաղկել, արձակելով թարմ, քնքուշ տերևներ...

Բայց ու՞ր են դրա բնակիչները, ի՞նչ եղան, աշխարհի ո՞ր կողմը ցրվեցին, կենդանի՞ են, թե մեռած, — ահա հարցեր, որոնք պտտվում էին Դավթի գլխում, բայց ոչ միպատասխան չէին ստանում:

Դավիթն առաջ անցավ և կանգ առավ մի կիսավեր խրճիթի առաջ և երկար, երկար նայեց այդ գետնի մեջ տարածված, կիսաքանդ խրճիթին: Նա ճանաչում էր այդտունը, քանի-քանի անգամ սրտատրոփ մոտեցել էր այդ տանը և վայելել ուրախ ու երջանիկ ժամեր: Հիմա էլ եկավ վայելելու վաղուց սպասած ուրախ այդ ժամը, բայց ի՞նչ տեսավ... Այդ տան մեջ առաջ հնչում էր ուրախ խոսակցություն, եռում էր կյանքը, իսկ հիմա տիրում էր մեռելություն ու անշարժություն: Առաջ նրանդիմավորում էին յուր նշանածի՝ Աստղիկի փափուկ բազուկները, նրա ուրախ ժպիտը, իսկ այժմ անմռունչ և սառը քարերը, որոնք մահվան չափ սարսուռ էին բերումԴավթին...

Հինգ երկար և ձիգ տարիներ էին, որ չէր տեսել Աստղիկին, հինգ ամբողջ տարիներ, որ փափագում էր տեսնել նրան, և այժմ, երբ մոտ էր այդ րոպեն վայելելու, երբսրտատրոփ վազում էր դեպի գյուղ գրկելու յուր նազելիին և ավետելու Աշոտ Երկաթի երևալը, — ամեն ինչ ոչնչանում էր և խորտակվում... Ի՞նչ այլանդակփոփոխություն...

Ո՛վ գիտե, այժմ մեռա՞ծ է Աստղիկը, թե կենդանի, և եթե կենդանի է՝ ո՞ւր է նա: Ո՞ր անօրեն իշխանի հարեմումն է նստած կամ ի՞նչ տաժանելի տանջանքներ է

կրումմութ բանտի խոնավ հատակին: Այդ մտքերը տանջում էին նրան, և անիծում էր յուր բախտը, որ գոնե մի կենդանի արարած չկա, որից տեղեկանա:

Նա փեշով սրբեց արցունքները և լուռ քայլերն ուղղեց դեպի Բագավան գյուղը, ուր կար շարժում ու կենդանություն և ուր տեղավորվել էին Յուսուֆ իշխանն ուարաբաց մի գունդ:

Արդեն գիշեր էր: Նա դեռ շատ բան ուներ կատարելու մինչև Աշոտ Երկաթի վանք ժամանելը:

Շուտով նա մտավ գյուղ և, անցնելով մի քանի փողոց, կանգ առավ մի տան առաջ, որտեղից լսվում էին թմբուկի և երգի ձայներ:

Այդ տունը արաբաց գնդի իշխանի տունն էր, որն ինչպես երևում էր, անձնատուր էր եղել ուրախության և կերուխումի: Այդտեղ էին հավաքվել արաբաց բոլորմեծամեծները և անհոգ ժամանակ էին անցկացնում: Դավիթն առաջ անցավ և այժմ սկսեց լրտեսել զորքերին, որոնք իրենց իշխանի օրինակին հետևելով նույնպեսկերուխումի և անհոգության էին մատնված՝ ցրված լինելով զանազան տներում: Դավիթը դողաց, դրանից լավ հարձակում գործելու ժամանակ չէր լինի, պետք էրշտապել, հասնել վանք, սպասել Աշոտ Երկաթին: Եվ նա յուր ձեռնափայտը շարժելով՝ սկսեց շտապ քայլերով առաջ գնալ, երբ նրա առաջը կտրեց զինվորներից մեկը:

— Ո՞ւր ես վազում, ա՛յ շուն, — ասաց նա՝ բռնելով նրա օձիքից:

Դավիթը մեքենաբար ձեռքը դեպի սուրը տարավ, որ թաքնված էր յուր շորերի տակ, բայց իսկույն խելքը գլուխը ժողովեց, որ դրանով ամեն բան կփչացնի, ուստիդուրս պոկվելով զինվորի ձեռքից՝ ասաց.

— Թո՛ղ ինձ, ձեր իշխանը ուղարկեց գառ բերելու, մի՛ բռնիր ինձ, թե չէ վատ օրի կհասնես:

— Հա՛, եթե իշխանն է ղրկել, գնա՛, բայց մյուս անգամ այդպես մի՛ վազիր, թե չէ տեսնո՞ւմ ես այս կեռ սուրը, թափանդ վեր կածեմ:

— Հեռացավ զինվորի մոտից՝ ուրախանալով, որ այդպես հեշտ պրծավ:

Շուտով նա բարձրացավ վանքը և, նստելով դռների մոտ, սկսեց սպասել Աշոտ Երկաթին:

Մի փոքր անց մթության մեջ նկատեց, որ վեց հարյուրի չափ զինվորներ զգուշությամբ մոտենում են վանքին:

Աշոտ Երկաթը ճանաչեց Դավթին և, մոտենալով նրան կանչեց.

— Դավի՛թ:

— Այստեղ եմ, տե՛ր իմ:

— Իսկ ամեն բան պատրա՞ստ է:

— Պատրաստ է:

— Իսկ Բագավան գնացի՞ր: Ի՞նչ կա, որքան զորք տեսար:

— Զորքի թիվը երկու հազարից ավելի է և հարձակում գործելու ամենահարմար ժամանակը հիմա է, երբ նրանք անձնատուր են եղած կերուխումի և ոչ մի բանի վրաչեն մտածում:

— Լա՛վ, մի քիչ կանգ առնենք այստեղ և իսկույն կարշավենք Բագավանի վրա:

Նրանք ներս մտան պարիսպներից, և վանահայրը նկատելով Աշոտ Երկաթին և յուր եղբայր Աբասին՝ խաչ ու խաչվառով դուրս եկավ նրանց ընդառաջ, Աշոտ Երկաթըմտավ վանք, ծունկ չոքեց և ջերմ սրտով սկսեց աղոթել:

Մարտիրոս վանահայրը պահպանիչ ասաց նրանց գլխին: Մի փոքր հանգստանալուց հետո կտրիճների այդ խումբը զգույշ քայլերով մոտեցավ Բագավան գյուղին:

ԺԱ

Չքնաղ դեմքով նազելի կույսը տխուր ու տրտում կանգնած է սենյակի մեջտեղը և յուր արտասվախառն աչերով դարձրել է դեպի դուռը: Խորին թախիծը պատել է նրասիրուն դեմքը: Ի՞նչ մեգ է, որ սքողել է նրա դեմքի ուրախ ժպիտը: Ի՞նչ ցավ, որ ստիպում է նրան արցունքներ թափել, վշտանալ, տխրել, ցավել ու տանջվել, երբ այդհասակում պիտի միայն ժպտա և ուրախանա: Ո՞ր անգութ ձեռքը կաշկանդեց նրան այդ սենյակի մեջ, ուր ամբարված են թանկագին կերպասներն ու օթոցները, անգին զմրուխտներն ու ակները, ոսկին և արծաթը, բայց ուր չկա կապույտ երկինքը և ազատ, անուշ օդը... Օ՜հ, նեղ է, շատ նեղ է այնտեղ, ուր չի լսվում թռչուններիանուշ ճռվողյունը, առվակի ուրախ քչքչոցը, քամու շնկշնկոցը, ամպի խաղն ու պարը... Եվ նազելի կույսը տխուր ու տրտում էր՝ բանտարկված լինելով

Բազավանիարաբաց իշխան Ահմեդի սենյակներից մեկում, ուր շրջապատված էր աշխարհային ամեն տեսակ բարիքներով ու վայելչություններով, բայց որոնք մահու չափտխրեցնում Էին կույսին:

Նա հիշում էր իրենց գյուղը, որտեղից գերի էր վերցրել իրեն Ահմեդը, և խոր հառաչում: Նա մտաբերում էր յուր հորն ու մորը, փոքրիկ եղբորը և քույրիկին, և դառնարտասուքները խեղդում էին նրան... Նա հիշում էր փոքրիկ եղբոր ճիչն ու աղմուկը, մոր սրտնեղությունը, ապա գուրգուրանքը, և սիրտը տակնուվրա էր լինում: Ա՜խ, ինչպես այն քա՜ղցր էր, ինչպես անո՜ւշ, իսկ հիմա ինչպես տանջում են իրեն այս ոսկին ու արծաթը, թանկագին կերպասն ու օթոցը, որոնցով շրջապատել է իրենԱհմեդը... Ինչպես դառն, սոսկալի և ատելի է այն շքեղությունը, որի վրա չի կպչում մարդու սիրտը, և ինչքան քաղցր է այն տանջանքն ու չարչարանքը, որ կրում էինքը՝ չհանձնվելով իշխանի կրքին:

Բայց կույսը դողում է, և ամեն մի փոքրիկ շշունջ լսելիս փշաքաղվում է նրա մարմինը: Նա սպասում է յուր դաժան տիրոջը, ահա ուր որ է ներս կգա և կսկսվի սոսկալիչարչարանքը... Ռոպեներն անցնում են դանդաղ, ինչպես հավիտենականություն, աշխարհը պտտում է յուր անիվը, երկնքի աստղերը լուռ խոնարհվում են դեպիիրենց մուտքը, բայց դեռ Ահմեդը չկա: Ի՞նչ կա, ու՞ր է նա: Ա՞խ, երանի թե հավիտյան չգար, և շուտ բացվեր արշալույսը…

Բայց չէ, հեռվում ճրագ է երևում, այնտեղից լսվում է տիրոջ խրոխտ ձայնը, այնտեղ է նա, որ անձնատուր է եղել կերուխումի, չի անցնի կարճ ժամանակ և նա դաժանտեսքով կկանգնի յուր առաջ: Արդեն տեսնում է, թե ինչպես բացվում է այդ դուռը, և կույսը, նայելով նրա վայրենի դեմքին, մի ճիչ է արձակում ու փռվում հատակին...

Մոտենում է Ահմեդը, պիղծ ձեռքերով գրկում կույսին, համբուրում նրա մարմարիոնի նման սպիտակ շրթունքները և ուշքի բերում նրան:

— Զարթնի՛ր, նազելի՛ կույս, Եդեմի անմահ վարդ, — ասում է նա՝ ծունկ չոքած նրա ոտքերի տակ, և շփում է նրա երեսը մի ինչ-որ անուշահոտ ջրով:

Կույսը բաց է անում աչքերը և նայում չորս կողմ, դեռ չի հասկանում, թե ինչ է կատարվում շուրջը, բայց երբ խելքը գլուխն է գալիս, սառը մահվան դողը պատում էմարմինը ու նա հայացքը լուռ իջեցնում է ցած:

— Ի՛մ սիրելի, ի՛մ անուշ վարդ, սիրի՛ր ինձ և ապրիր ինձ հետ երջանիկ կյանքով, ես քեզ թագուհու նման կպահեմ, ադամանդներով կզարդարեմ ճակատդ, թանկագինբեհեզներ կհագցնեմ քեզ, — ասում է Ահմեդը՝ բռնելով կույսի ձեռքը, որը դողում է աշնան տերևի նման:

Կույսը ձայն չի հանում և միայն խոր ախ է քաշում:

— Թո՛ղ քո անօրեն հավատը և ընդունիր մեր ճշմարիտ կրոնը, այն ժամանակ մենք երջանիկ կլինենք, քան Բաղդադի ամիրան, և մեր երջանկությունը կօրհնե մեծմարգարեն՝ Մահմեդը: Ո՛վ կույս, չոքել եմ քո առջև և խնդրում եմ քեզ, կատարի՛ր խնդիրս, ուրացիր քո պիղծ հավատը ու սիրիր ինձ...

— Հեռացի՛ր ինձանից, պիղծը ձեր հավատն է, — ասում է կույսը, և աչքերը շանթեր են արձակում:

Ահմեդը նայում է նրան, նայում է ու մտածում, նրա հոգու մեջ կռվում են կույսի գեղեցկությունը և յուր կիրքը. ինչպե՞ս կտաներ պիղծ գյավուրի այդ խոսքերը, եթեկաշկանդված չլիներ նրա գեղեցկությամբ: Եվ նա կրկին ու կրկին աղերսում է սիրել իրեն և ուրանալ հավատը, այնինչ կույսը ավելի ու ավելի ատելություն նարհամարհանք է ցույց տալիս:

Հատնում է Ահմեդի համբերությունը և տեսնելով, որ աղերսանքն ու պաղատանքը չեն ազդում կամակոր աղջկա վրա, հանում է սուրը և շողացնելով այն կույսի հենցկրծքին, որտեղ արագ տրոփտրոփում է նրա կուսական անմեղ սիրտը, գոռում է.

— Կամակո՛ր աղջիկ, մինչև ե՞րբ ինձ պիտի տանջես, մինչև ե՞րբ ինձ պիտի չարչարես, ասա՛, ուրանո՞ւմ ես հավատդ և սիրու՞մ ինձ, թե ուզում ես, որ այս սուրը մխվիկրծքիդ մեջ, և լերդ ու թոքդ դուրս թափվի…

Տիրում է լռություն: Կույսը աղոթք է մրմնջում, իսկ Ահմեդը կատաղի աչքերով պատասխանի սպասում. այնինչ այդ նույն պահին դուրսը՝ փողոցում, վայնասուն ուաղմուկ է լսվում: Բայց Ահմեդը ոչինչ չի լսում: Սպասում է պատասխանի, որ կամ սուրը մխի նրա կուրծքը և կամ զգվի ու համբուրի նրան...

— Լսո՞ւ մ ես՝ ինչ եմ ասում, պատասխանի՛ր, քո կյանքը քեզանից է կախված, ընտրիր երկուսից մեկը, կամ մահը, կամ անուշ կյանքը:

— Մահն եմ ընտրում, անօրե՛ն գազան, շո՛ւն, վերջացրու տանջանքներս, էլ ինչո՞ւ ես ուշացնում, — գոռում է կույսը և առատ արցունքները գլորվում են աչքերից:

— Բայց ես քեզ չեմ կարող սպանել, ով աննման հրեշտակ, — սուրը մի կողմ է քաշում Ահմեդը, ապա ուզում է գրկել նրա նազելի մեջքը: Բայց կույսը հրում է նրանձեռքերով և դուրս պրծնում: Ահմեդը կատաղում է, բարկության փրփուրը պատում է բերանը, և կայծակի նման սուրն առնելով, վազում է կույսի վրա, այդ ժամանակդուռը ճարճատելով ընկնում է ցած, և երևում է Աշոտ երկաթը:

Կայծակնահարի նման կանգ է առնում Ահմեդը և նայում է յուր առջև կանգնած աժդահա մարդուն, որի ձեռքի սրից կաթկաթում է արյունը: Ո՞վ է նա և ինչպե՞սհամարձակվեցավ ներս մտնել, ո՞ւր են յուր զինվորներն ու պահապանները, — մտածում է նա և հանկարծակի թռիչք անում դեպի Աշոտ Երկաթը:

Աշոտ Երկաթը ժպտում է դառն ժպիտով, որից հալչում է Ահմեդի մարմինը, և դեռ յուր սուրը չբարձրացրած՝ արյունաթաթախ գլորվում է գետին:

Այդ ժամանակ ներս են մտնում նաև մի քանի հայ զինվորներ, որոնց դիմելով՝ Աշոտ Երկաթն ասում է.

— Բագավանում վերջին անօրենը սատկեց: Ջնջվեցին նրանք: Եվ լավ ժամանակ հասանք, մի անմեղ զոհ ազատեցինք, — ասաց նա և արյունաթաթախ սուրը դրեցպատյանը...

ԺԲ

Տխուր էր Դավթի հոգին…

Ուրախության ոչ մի ժպիտ չի փայլում նրա երեսին, հույսի ոչ մի նշան չի ուրախացնում նրան... Ամեն ինչ հուսահատ, ամեն ինչ տխուր է նրա համար: Չկա յուրԱստղիկը, չկա յուր հրեշտակը:

Գնում է Դավիթը մի երիվար նստած դեպի Վաղարշակերտ: Էլ ոչ մի բան նրա աչքին չի գալիս, էլ ոչնչի վրա չի մտածում: Նրա մտքերը կանգ են առել, կարծես նազրկվել է դատելու ընդունակությունից: Անգիտակցորեն իջնում է ձիուց, սանձը ձեռքն առնում և դանդաղ քայլերով առաջ գնում: Ապա շեղվում է ճանապարհից նսկսում է ծաղիկներով ծածկված դաշտի միջով քայլել: Նա պոկում է դաշտի ծաղիկները, մեկ-մեկ ուշադրությամբ դիտում, գլուխը շարժում և ապա մի փունջ

կազմում:Ո՞ւմ համար է կազմում երփներանգ ծաղիկների այդ փունջը, ու՞մ գլուխը պիտի պսակի դաշտի այդ ծաղիկներով, հայտնի չէ:

Պոկեց նա մի ծաղիկ, որ արյան գույն ուներ և խոր ախ քաշեց՝ այդ ծաղկի անունը մտաբերելով: «Յոթն եղբոր կռան արյուն» էր կոչվում այդ ծաղիկը, այդ ասել էրիրեն Աստղիկը, որն այժմ չկար: Յոթն եղբայր արյուն էին թափել, և այդ թափած արյունից գոյացել էր այդ ծաղիկը, որն այդպես սիրուն, այդպես քնքուշ ծաղկում էրդաշտում:

Իսկ ի՞նչ եղավ Աստղիկը, արդյոք նա էլ թողե՞լ է մի հիշատակ, մի ծաղիկ, և որն է այդ ծաղիկը. անշուշտ այն կարմիր գույն չի ունենա, այլ սպիտակ, որ անմեղությաննշան է: Անմեղությամբ, անարատությամբ նա երկինք կլինի գնացած, հիշատակ թողնելով մի սպիտակ ծաղիկ, որ ինքը քաղի, հոտոտի և կարոտն առնի...

Նա պրպտում է, պոկում է զանազան տեսակ սպիտակ ծաղիկներ, հոտոտում նրանց, բայց ոչ մեկը դուր չի գալիս և սրտնեղած դեն է շպրտում դրանք և հոնքերըկիտած շտապեցնում քայլերը:

Նա մինչև անգամ չի նկատում, թե ինչպես հետզհետե թանձրանում է խավարը, թե ինչպես հեռվում, լեռների քամակին, կամաց-կամաց ծածկվում է բարակ եղջերաձևլուսինը… օդը հետզհետե սկսում է ցրտել, լռում է թռչունների ուրախ ճռվողյունը, բզեզների և մրջյունների աղմուկն ու ժվոցը: Կենդանական թագավորությունը լռումէ, բուսականը՝ հանգիստ քուն մտնում, երկինքը վառում յուր ճրագները…

Հանկարծ Դավիթը կանգ առավ. յուր առջև խոխոջալով անցնում էր լեռնային մի վտակ, որ գոռում ու գոչում էր, ուժգնությամբ բախվում ժայռի կրծքին, փրփրում ուվազում առաջ: Դավիթը գլուխը վեր բարձրացրեց, և մի տեսակ դող անցավ նրա մարմնով, այդ ու՞ր էր հասել և ու՞ր էր Աշոտ Երկաթը յուր խմբով, որոնց հետ միասինգնում էր ինքը տակնուվրա անելու Վաղարշակերտը...

— Է՛... հէ՛... ա՛յ քեզ, թե ինչ է նշանակում մտքի հետ ընկնել, — մռմռաց ինքն իրեն, նորից ձի հեծավ և գետի հակառակ ուղղությամբ քշեց, առանց իմանալու, թե ուրպիտի դուրս գա:

— Է՛հ, հոգ չէ, որ ես ետ մնացի: Ի՞նչին եմ պետք Աշոտ Երկաթի: Աստված Հայաստանին մի այնպիսի առյուծ է շնորհել, որի առաջ ոչ մի արգելք չի

դիմանա: Խե՜ղճՅուսուֆ, Սմբատ արքային նահատակեց և կարծեց թե Հայաստանին տեր դարձավ, մոռանալով, որ նրա կորյունը կարող է իրենից վրեժ առնել: Այդպես էլ պետք է, մինչև ե՞րբ այդ անիծվածները մեր արյունը խմեն: Վերջապես մի օր մեզ հանգստություն է պետք: Այս ի՞նչ է մեր օրը՝ որդին հորը չի գտնում, մարդը՝ կնոջը, երեկվաշեն գյուղը՝ ավերակ, վանքերը քանդված, եկեղեցիները՝ պղծված, խաչերն անպատված... էլ Հայաստանում չմնացին սիրուն հարսներ ու կույսեր, ամենքին գերիտարան: Ամենքին տարա՜ն, ամենքի՜ն... Աստղիկին էլ... — Այդպես մտածում էր նա, երբ հեռվում, մացառների և թփերի միջից երևացող-ընդհատվող կրակի բոցը նրաուշքը գրավեց:

Կրակի բոցը երբեմն երևում, երբեմն հանգչում էր: Դավիթը կանգնեցրեց ձին. սկսեց ուշադրությամբ դեպի այդ լույսը նայել: Ի՞նչ լույս էր այդ, քաջքերն էին վառել, թեմարդիկ, և եթե մարդիկ, այդ գիշերվա պահին ի՞նչ էին շինում այստեղ և ովքե՞ր էին դրանք: Մի շարք հարցեր կայծակի արագությամբ անցան նրա մտքով: Նախ՝ վախեցավ քաջքերից և երեսը խաչ հանեց, բայց լույսը կրկին երևում էր, խաչ հանելը չօգնեց նրան, ուստի համոզվեց, որ այդ լույս առաջացնողը մարդիկ են և հետաքրքրվեց իմանալ, թե ովքեր են դրանք: Զգուշությամբ քշեց ձին և մի քանի րոպեում մոտեցավ լույսին: Նա տեսավ այստեղ կրակի շուրջը բոլորած մի ամբողջընտանիք՝ բաղկացած կանանցից, աղջիկներից և երեխաներից, որոնք տեսնելով իրենց առաջ զարհուրելի ձիավորին՝ սարսափահար ետ-ետ գնացին:

— Մի՛ վախենաք, — ասաց Դավիթը՝ ցած թռչելով ձիուց, — ես ձեր թշնամին չեմ, այլ բարեկամը:

Հասակավորները դեռ զարմանքով դիտում էին Դավթին, որ ձին թողնելով արածելու, ինքը մեկնվեց կրակի մոտ և նրանց դառնալով՝ ասաց.

— Ինչպես երևում է, դուք փախուստ եք տալիս Յուսուֆի զինվորներից, վնաս չկա, շուտով այդ Ժամանակը կանցնի և ամենքդ հանգիստ ձեր տեղերը կդառնաք:

— Հա՜, դուրբան լինենք քեզ, մեր գյուղը տակնուվրա արին այդ անօրենները, և մենք լեռներումն ենք ապաստանում, — ասաց ընտանիքի ամենահասակավորը, որմոտ վաթսուն տարեկան ժիր տղամարդ էր:

— Ո՞ր գյուղիցն եք դուք:

— Բերդկունք գյուղից:

— Բերդկու՞նք, — ասաց Դավիթը, և նրա սիրտը սկսեց սաստիկ տրոփել: Այդ գյուղը մոտ էր Աստղիկի գյուղին՝ Արծակին:

— Իսկ ի՞նչ տեղեկություն ունեք Արծակից: Ճանաչո՞ւմ եք դուք ծերունի Մաթոսին, նրա աղջկան՝ Աստղիկին, — շտապով հարցրեց Դավիթը, և անհանգստությունընտիրեց հոգուն:

— Է՛...բարեկա՛մ, ինչպես չեմ ճանաչում, երկու գյուղն էլ մի քանի ամիս առաջ կործանվեցին, խեղճ Մաթոսին իմ աչքերի առաջ արյունլվա արին, իսկ թե հետո ու՞րփախան նրանք, չգիտեմ: Մենք իրարից բաժանվեցինք լեռներում, և սա Աստղիկի հետ ուրիշ կողմ գնաց...

— Վա՛յ, անօրեննե՛ր, ուրեմն նա դեռ կենդանի է և այդ անօրենների ձեռքում, — խոսքը կտրեց Դավիթը ու վեր թռավ տեղից:

Խոսակիցը երկյուղից կուչ եկավ, չհասկանալով, թե ի՞նչ է կատարվում Դավթի հետ:

— Ո՞ր կողմը տարան, և ու՞ր է Աստղիկը, ի սեր աստծո, ասացեք ինձ: Ես նրա նշանածն եմ, Դավիթ Գնունին, Աշոտ Երկաթի զինվորը:

— Իմ քեռորդի՜ն, — գոչեց հանկարծ ծերունին և փաթաթվեց Դավթի վզով:

— Ինչպե՜ս, մի՞թե դո՛ւ ես, Կարո: Օ՜, ասա, Կարո ջան, ասա, ու՞ր է Աստղիկս:

— Ի՞նչ ասեմ, որդի՛ս, թե ուր տարան նրան անօրենները: Հավանական է, որ նա մի որևէ արաբ իշխանի ստրկուհին լինի դարձած և կամ սպանած լինեն նրան...

— Չէ՛, ես պիտի փնտրեմ, ես պիտի գտնեմ նրան, իսկ եթե չգտա, վա՛յ Յուսուֆին, վա՛յ նրա բանակին, — կատաղաբար գոչեց Դավիթը, նորից ձի հեծավ, մտրակեց ևանհետացավ խավարի մեջ…

ԺԳ

Սոված ու ծարավ ուրուրի նման սլանում է Աշոտ Երկաթը յուր խմբով և որս փնտրում... Նա ծարավի է արյան: Արյուն է ուզում, անօրեններ՛ արյուն, որ հագեցներ յուրծարավ սիրտը, հագեցներ վրեժն ու բարկությունը... Օ՜, սոսկալի է նա, զարհուրելի է նրա վրեժխնդրությունը: Ո՞վ կդիմանա սոսկալի մրրկին, ահեղ փոթորկին. նրաաչքերից կրակ ու հուր է ցայտում, նրա հայացքից սարեր ու քարեր են

հալչում... Գնում է նա առաջ, փոշին ամպի նման ձիու սմբակների տակից երկինք էբարձրանում:

Դողում է երկիրը, առուն լռում է, թռչունները երկյուղից պահվում են ու դյուցազնին նայում... Գոռում է Աշոտը, սուրը պատյանից հանում և սլանում առաջ: Այո՛, նրանմիշտ քաջալերում է հոր ստվերը, նա միշտ յուր հետն է, գիշեր թե ցերեկ: Եվ նա նայում է առաջ, օդի մեջ և տեսնում է նրան, հորը, Սմբատ արքայի դալկացած աչքերը, որոնք դեպի վրեժ են մղում իրեն: Նայում է նրան, և նրա մարմինը դողում է, ատամները կրճտում են, մազերը փշաքաղվում և ապա մի այնպիսի մռնչյուն է արձակում, որ սար ու ձոր դողում են, քարերը լեզու են առնում և գոռում՝ «Եկավ, հա՛, եկավ, Աշոտ Երկաթը եկավ»: Լսում են Յուսուֆի իշխաններն ու զինվորները և լեղապատառլինում, մահվան գունատությունը պատում է նրանց դեմքերը... Յուր քաջերով մտնում է նա Վաղարշակերտ, արաբները երկյուղից փախուստ են տալիս, իսկ միքանիսը՝ զենքի վազում: Աշոտը ժպտում է. դառն ու սոսկալի է այդ ժպիտը, որի ազդեցության տակ դողում են անօրենները և սրերը նետում քաջի ոտքերի տակ ուգթություն խնդրում: Բայց չկա գթություն, չկա թողություն, քաջի սիրտը լեռ քարի նման կարծր է և ամուր, այնտեղ չի շարժվում գութի ո՛չ մի թել, այնտեղ չի հասնումաղերսանքի և լացի ո՛չ մի ձայն: Անզգա է նա, արյուն, արյո՛ւն է ուզում: Նրա սիրտը կրակ է ընկած: Անհավատների արյունն է միայն սփոփում նրան ու ամոքումսիրտը…

Նա հրամայում է նույն տանջանքներով տանջել անհավատներին, ինչով նրանք տանջել են հայերին և, սրանով էլ չբավականանալով, հրամայում է տիկեր շինելնրանց կաշվից և պարսպի վրա կախել...

Մաքրվում է Բագրևանդի գավառը անհավատներից, և նա թռչում է Շիրակ: Այնտեղ էլ կոտորում, ջնջում է Յուսուֆի հրոսակներին... Ապա թռչում է յուր աշխարհիչորս կողմը, աջ ու ձախ մահ սփռում և հալածում թշնամիներին: Կարճ ժամանակ է անցնում, և երկրի բոլոր բերդերն ու քաղաքներն առնում է անօրենների ձեռքից՝ թշնամիների հետքն անգամ չթողնելով այնտեղ:

Ազատ շունչ են քաշում հայերը և օրհնում դյուցազնին: Եկեղեցիների և վանքերի մեջ սկսվում են ժամերգություններն ու պատարագը, սրբոց պատկերներիխնկարկությունն ու շարականների անուշ երգեցողությունը...

Բայց Աշոտը դեռ ծարավի է. վրեժխնդրության հուրը դեռ չի իջել: Նա սլանում է դեպի Գուգարաց աշխարհը, որտեղից հալածելով թշնամիներին, Գնթունյաց երկուեղբայրներին՝ Վասակին և Աշոտին կառավարիչ է կարգում: Ապա սլանում է

դեպի Տփխիս, ուր զինվորների մեծ բազմությունը նախարարների հետ միասինհանգիստ անց էին կացնում իբենց օրերը:

Նախարարներին երկաթե շղթաներով շղթայելով բանտարկում է, որպեսզի կարողանա փոխանակել հայոց գերիների հետ, ապա դիմում է Ուտիք՝ վերակացուկարգելով քաջ և վիթխարի Մովսեսին, ու դառնում է Տաշրաց գավառը:

ԺԴ

Տաշիր կամ Տաշրաց գավառը, որ այլապես կոչվում է Լոռի, ուր կանգ առավ Աշոտ Երկաթը, բնությունից հրաշապես վարձատրված երկիր է յուր կանաչապատլեռներով, ծաղկազարդ դաշտերով ու մարգագետիններով և անուշահամ աղբյուրներով:

Մի կողմից ձգվում են վիթխարի լեռների շարքերը, որոնց ստորոտներում տարածվում է ընդարձակ դաշտավայրը: Այդ ընդարձակ դաշտավայրում ձգվում է մի խորձոր, որի միջով անցնում է Լոռվա մի գետակը և դաշտավայրը երկու կես անում:

Այժմյան Ջալալօղլիից ցած, դեպի հյուսիս-արևելք, երեք թե չորս վերստ հեռու, խոր ձորի գլխին այժմ էլ երևում են կիսաքանդ պարիսպների բեկորները, որ հիշեցնումեն հին-հին, անցած-գնացած ժամանակները: Դաշտի կողմից ձգվում են բերդի հաստ ու պինդ պարիսպները, այնինչ երեք կողմից դրա սահմանը կազմում են խոր նահռելի ձորերը, որոնց միջով պտույտներ անելով՝ անցնում է գետակը և, փրփրելով ու քսվելով ցից-ցից ժայռերին, լիզում բերդի պարիսպների տակ գտնվածհավիտենական հիմքերը և, երեսը դարձնելով դրանից, գլուխն առնում է ու առանց մնաս բարով ասելու կորչում հեռո՛ւ, հեռո՛ւ...

Դարեր են անցել, նույն գետակը կրկին երկյուղով մոտենում է նրան, կրկին լիզում և կրկին վազում է առաջ, բայց առաջվա նման չի գոռում, կատաղի հորձանք չիտալիս դեպի բերդը, այլ ավելի հանդարտ, ավելի մեղմ է հոսում նրա տակով...

Ժամանակի ավերիչ հետքը դրան էլ է նիհարեցրել, դրա ձայնն էլ է կտրել, այնինչ առաջ, երբ շեն էին պարիսպները, երբ այնտեղ եռում էր կյանքը, ինքն էլ էր գեր ուվարար...

Ահա այդտեղ, այդ բերդի12 մեջ կանգ էր առել Աշոտ Երկաթը վեց հարյուր քաջերով, որպեսզի մի փոքր հանգիստ առնի և մտածի անելիքը:

Բայց ինչ հանգստություն. նրա համար չկա հանգստություն: Ամբողջ գիշեր նրա աչքին քունը մոտ չէր գալիս, նա դուրս եկավ օթևանից թարմ օդ շնչելու: Տխուրնստեց նա մի քարի, և մտածմունքները մեկը մյուսի ետևից պաշարեցին հոգին:

Մի ամբողջ տարի անցավ հոր մահվանից, և այդ կարճ ժամանակում որքա՜ն փոփոխություն կրեց յուր աշխարհը: Մի տարի առաջ բարբարոս Յուսուֆի զինվորներըկոխկրտում էին երկիրը, տակնուվրա անում, մոխիր դարձնում ամեն ինչ, իսկ հիմա, այդքան կարճ ժամանակից հետո, նրանց հետքն էլ չկա...

Սուգն ու շիվանը կրկին ուրախության փոխվեցին, երկիրը խաղաղվեց, լսվեց հոտաղի ուրախ երգը, երկրագործի օրհնանքը... Օ՜հ, ինչ բերկրանք, ինչ ուրախություն... բայց արդյոք երկա՞ր պիտի տևի այս, թե նորից սև սուգը պիտի տարածվի... Ահա հարցեր, որոնք շփոթեցնում էին Աշոտ Երկաթին, որոնք ստիպում էին նրանմտածության մեջ ընկներ:

Ի՞նչ պիտի աներ ինքը միայնակ, առանց օգնականի, Յուսուֆը ուր որ է պիտի նորից ողողի յուր երկիրը, և այն ժամանակ ինքը միայնակ անկարող պիտի լինիդիմադրելու նրա անթիվ հրոսակներին:

Իսկ ի՞նչ էին շինում հայ նախարարները, որոնք օգնության ձեռք կարող էին մեկնել իրեն, նրանցից ամեն մեկը, որ մինչև Աշոտ Երկաթի քաջագործությունները, փակված էր իր բերդում, կամաց-կամաց իջնում էր ցած, մանր հարձակումներով նեղում Յուսուֆի զինվորներին և միմիայն իր երկիրը մաքրում թշնամիներից, ապասիրտ առնելով իր բերդն ամրացնում և այդ սուրը Աշոտի դեմ դարձնում:

Լուռ հետևում էր Աշոտ Երկաթը դրանց և սպասում հետևանքին: Խորին թախիծը պատում էր նրա սիրտը, բայց դեռ չէր ուզում նրանց զենքով հնազանդեցնել և՛ճանաչել տալ յուր գերիշխանությունը: Նա մտածում էր միացնել հայ նախարարությունը իր հետ և այդպիսով վերջնական հարված տալ Յուսուֆին: Բայց այդանկարելի էր առժամանակ... Մտածում էր արի Աշոտը, և այդ մտածմունքների մեջ ընկղմվելով՝ նրա քունը տարավ: Վրդովալից էր նրա քունը, սոսկալի, և դառներազները շփոթեցնում էին նրան, այնինչ ձորերի մեջ վազող գետակը օրոր էր ասում... Նա տեսնում էր հեռու, շատ հեռու ապագան, որ պատած էր թանձր խավարով, ուր ճիչի, վայնասունի և աղիողորմ հեծկլտանքի ձայներ էին լսվում, ուր երբեմն երևում էին կմախքի նման մարդիկ, որոնք ուրվականների նման առաջ գալով, խավարի միջից ձեռքերը կարկառում էին, գթություն խնդրում, բայց այդ իսկ

վայրկյանին աներևույթ ձեռքը սուր մանգաղով հնձում էր նրանց, և նրանք ընկնում էինցած...

Բայց այն ի՞նչ է խավարի մեջ, հեռվում, երբեմն-երբեմն երևում են կրակի լեզուներ, որոնք լափում են շինություններ, որոնք կործանվում են մեկ-մեկ՝ իրար ետևից, մեծերը, փոքրերին հետևելով, վերջնական մի բռնկոց է լսվում, վայրկենական լույսով լուսավորվում է խավար հորիզոնը, որի միջից երևում են փլված աշտարակներին բուրգերի մնացորդները, և ապա խորին խավարը պատում է հորիզոնը:

Սարսափած վեր է թռչում Աշոտ Երկաթը և չորս կողմը դիտում:

Գիշերն անցել էր, և լույսը բացվել, հեռու հեռվից ծանրորեն բարձրանում էին սև կպրանման ամպեր և հետզհետե ծածկում հորիզոնը: Ամպերի միջից լսվում էինորոտի խուլ հառաչանքներ, և փայլակները շտապ-շտապ հաջորդում էին իրար:

Սպառնալից ամպերը հետզհետե բարձրանում էին, և փոթորիկ էր սպասվում: Վեր կացավ Աշոտ Երկաթը և դեպի յուր սենյակն էր ուզում գնալ, երբ տեսավ յուր առաջզրահավորված մի զինվոր: Աշոտ Երկաթը ժպտաց:

— Դու լավ պահպանություն ես անում ինձ, Դավի՛թ,— ասաց նա՝ դիմելով զինվորին:

— Ես իմ պարտքն եմ կատարում:

— Ապրե՛ս, այդպես էլ պետք է: Երանի թե քեզ նման պարտաճանաչ լինեին ամենքը:

ԺԵ

Կարճ ժամանակ անցնելուց հետո, Աշոտ Երկաթը յուր խմբով ճանապարհ է ընկնում դեպի Աղստեվի Խորաձոր ամրոցը, ուր կենտրոնացած էր թշնամու բանակը:Լռվա կապույտ երկինքը հետզհետե ծածկվում էր ամպերով, խուլ մռնչյուններն ավելի ու ավելի լսելի էին լինում, և մի տեսակ ծանր, բայց խաղաղ օդը տիրում էրչորս կողմը: Բնությունը լուռ էր. ամեն շարժում դադարել էր, դաշտի բույսերն ու ծաղիկներն էլ լուռ իջեցրել էին գլուխները և սպասում էին ինչ-որ երկյուղալի բանի, որ բերում էր փոթորիկը: Լռվա խաղաղ բնությունը լուռ ու անձայն սպասում էր փոթորկին:

Եվ Աշոտ Երկաթը սպասում էր Լոռվա ահեղ փոթորկին, բայց նրանից չէր վախենում, գիտեր նրա արհավիրքները, բայց կրկին առաջ էր սլանում: Նրա միտքըկաշկանդված էր ուրիշ բանով, նրա ամբողջ էությունը բռնված էր ուրիշ մտքերով: Փոթորիկը կգա և կանցնի, կապույտ երկինքը կծածկվի սև-սև ամպերով, այնտեղիցկլսվի գոռում-գոչյունը, շանթերը կփայլատակեն չորս կողմը, բայց չի անցնի կարճ ժամանակ, և նա ինքն իրեն կդադարի, արևը կժպտա, բնությունը կկենդանանա, մարդիկ դուրս կգան իրենց բնակարաններից, թռչունները կսկսեն անուշ ծլվլոցը, և բնությունը կրկին կկենդանանա: Հոգ չէ, երբ փոթորիկը ի վերուստ է գալիս, վա՛յ էմիայն, երբ փոթորիկը անհավատ Յուսուֆի հրոսակներն են առաջացնում:

Ու գնում էր Աշոտ Երկաթը՝ հայացքը հառած ճանապարհին, որ ոլոր-մոլոր պտույտներով ձգվում էր դեպի հեռուն:

Հանկարծ ճանապարհի հենց մեջտեղը փոշու մի ամպ բարձրացավ: Աշոտ Երկաթը աչքերը լայն բացեց և ուշադրությամբ նայեց դեպի փոշին, որ սկսեց պտույտներանել և այունաձև բարձրանալ վեր, միշտ վեր, դեպի սև ամպերը: Ճախարակի նման անդադար պտտվում էր այդ փոշին ճանապարհի ուղղությամբ, կարծես նա ուզումէր ծաղրել Աշոտ Երկաթին և նրա խմբին, որոնք բնության արհավիրքներից չվախենալով՝ այնպես առաջ էին գնում: Աշոտ Երկաթը հոնքերը կիտեց, նա չէր սիրումայդ տեսակ «քաջքաքամի», որ այնպես համառ կերպով շարունակում էր պտտվել. ձին քշեց և ուզեցավ կտոր-կտոր անել փոշու այդ այունը, երբ վերջինս թռավ հեռու-հեռո՜ւ, ո՞վ գիտե ուր, ո՞ր ձորի կամ ո՞ր լեռան գագաթին կրկին յուր պարը շարունակելու:

Վերացավ, պրծավ «քաջքաքամին», հետքն էլ չմնաց, և հանկարծ խորին լռության մեջ լսվեց որոտի ահռելի ձայնը, մի վայրկյան էլ, և ահա սկսվեց Լոռվա հեղեղը...

Ամբողջ բնությունը խառնվել էր, ոչինչ չէր երևում՝ ո՛չ ծառ, ո՛չ թուփ, ո՛չ լեռ և ոչ ձոր, ամեն ինչ խառնվել էր և դարձել ջրային մի զանգված:

— Տղե՛րք, կանգ առեք, մի քայլ անգամ անկարելի է առաջ գնալ, — կանչեց Աշոտ Երկաթը և իսկույն ձիուց ցած թռավ: Նրան հետևեցին ձիավորները, որոնք իջնելովձիերից մի շրջան կազմեցին և սկսեցին սպասել փոթորկի անցնելուն: Գո՜ւռ, գո՜ւռ, գո՜ւռ — ձայն էր հանում հեղեղը և ճանապարհորդների գլխին կժերով ջուրթափում, որոնք թրջվել էին մինչև ոսկորները և ցրտից դողացնում էին:

— Այ քեզ հեղեղ, — ասաց զինվորներից մեկը, որի մորուքից և գլխից առվի պես հոսում էր ջուրը:

— Այդպես էլ պետք է. մենք վաղուց է, որ չէինք լողացել և աստված մեզ լողացնում է, ի՞նչ կա որ, — պատասխանեց մի ուրիշը, որ յուր ահագին վահանի տակպատսպարվել էր հեղեղից:

Այդ միջոցին հեռվից լսվեց մի տեսակ խուլ և անորոշ ձայն, կարծես այնտեղ, ձորի միջից թռչում են հազարավոր թռչուններ կամ հեռու լեռան քամակին քանդվում ենաշտարակի պատեր:

Աշոտ Երկաթը, որ լրջորեն հետևում էր ամեն բանի, իսկույն գլխի ընկավ, թե ինչ վտանգ է սպառնում իրենց և դառնալով դեպի խումբը՝ գոռաց.

— Հեծնե՛լ ձիերը, բարձրանալ աջ, դեպի բլուրը:

Խումբն իսկույն կատարեց նրա հրամանը և քաշվեց վեր, դեպի բարձունքը: Այնուհետև նրանք տեսան, թե ինչպես հեղեղատը լեռան պես գլուխը բարձրացրած եկավողողեց այն տեղը, ուր քիչ առաջ կանգնած էին իրենք:

Անցավ մի փոքր ժամանակ. ամպի որոտմունքը հետզհետե կտրվեց, դադարեց հեղեղը, վերջացավ անձրևը, և կապույտ երկինքը ցույց տվեց յուր ուրախ դեմքը:Տղերքն ազատ շունչ քաշեցին, և ամեն մեկն սկսեց յուր թաց շորերը քամել: Քիչ հետո վառեցին մի ահագին, խարույկ, և ամեն մեկն սկսեց շորերը ցամաքեցնել: ԱշոտԵրկաթը նայեց յուր կտրիճներին, և նրա հոգին լցվեց գոհունակությամբ: Վեց հարյուր մարդուց ո՛չ մեկը տրտունջ չէր հայտնում, ո՛չ մեկի դեմքը մռայլ ու հոգնած չէր, ուրախության ժպիտն էր փայլում դեմքերին, երևում էր, որ ամենքը իրենց կյանքը Աշոտ Երկաթի համար էին դրել...

Երբ մի փոքր հանգստացան, կրկին ճանապարհը շարունակեցին և մութը դեռ նոր էր պատել, երբ զգուշությամբ կանգ առան Խորաձոր ամրոցի պարիսպների մոտ:

Աշոտ Երկաթը հրամայեց յուր քաջերին մի փոքր հանգիստ առնել և կես գիշերվա դեմ անակնկալ կերպով հարձակում գործել բերդի վրա…

ԺԶ

Թողնենք Աշոտ Երկաթին Խորաձոր ամրոցի պարիսպների տակ, թողնենք Դավթին Աստղիկին որոնելիս և գանք Վասպուրական երկիրը, Գագիկ դավաճանիաշխարհը, ուր ծփում են Վանա լճի կապույտ ալիքները:

Գագիկ Արծրունին խղճահարված յուր ստոր դավադրությունից, որ արել էր Սմբատ արքայի դեմ, բայց ավելի երկյուղ ունենալով Յուսուֆից յուր կյանքի համար, խույս տալով Յուսուֆից, մտավ յուր երկիրը և առաջին գործը եղավ քաշվել ամուր տեղերը և սպասել հանգամանքներին, մինչև որ կարողանար յուրմտադրությունները առաջ տանել:

Մինչև Աշոտ Երկաթի երևալը նա դեռ վախենում էր Յուսուֆից և չէր համարձակվում իջնել բերդերից, թեև տեսնում էր ժողովրդի հալածանքը, տառապանքը նթշվառությունը: Բայց հենց որ լսեց Աշոտ Երկաթի քաջագործությունները, հենց որ իմացավ Յուսուֆի զորքերի հաղթվելը, սիրտ առավ և ինքն էլ Աշոտ Երկաթիօրինակին հետևելով՝ սկսեց նեղել Յուսուֆի հրոսակներին և քշել նրանց յուր երկրի սահմաններից: Հեռատես և խելոք մարդ էր Գագիկը, նա հասկացավ, որ նախ յուրերկիրը պետք է մաքրի արտաքին թշնամիներից, երկրում պետք է մի ամուր հենարան պատրաստի և ապա միայն ձգտի իրագործելու յուր մտադրությունը: Նաարդեն Վասպուրականի տերն էր, նրա թագավորը, բայց դրանով չէր հագենում փառասիրությունը: Նա ուզում էր լինել թագավորաց թագավոր և օրինական գահըհափշտակելով միահեծան տեր դառնալ, այդ էր նրա ձգտումը, նրա մտածության միակ առարկան: Յուսուֆի օգնությամբ ուզում էր այդ միակ ձգտմանը հասնել, բայցշուտով հասկացավ սխալը և այժմ ինքը միայնակ սկսեց ձեռնարկել այն:

Չշփոթեցրին նրան Աշոտ Երկաթի քաջագործությունները, ընդհակառակը, նա ուրախացավ, որ առիթ տվեց Յուսուֆի ուժերը դուրս քշելու յուր երկրի սահմաններիցէլ: Եվ նա յուր եղբայր Գուրգենի հետ միասին հարձակվեց Յուսուֆի զինվորների վրա, հալածեց նրանց մինչև Ատրպատականի սահմանները և ապա իջնելով ամուրբերդերից սկսեց երկիրը կարգի գցել:

Մյուս հայ իշխաններն ու նախարարներն էլ այդ հաղթություններից ոգևորված սկսեցին իրենց երկրներից հալածել թշնամուն: Ամենքը հալածում էին Յուսուֆիհրոսակներին ինքնուրույն և ինքնակամ կերպով, չկար դրանց մեջ մի ընդհանուր կապ, չէին ճանաչում մի ընդհանուր ղեկավար, չունեին մի որոշ ծրագիր:

Եվ Յուսուֆը դեռ համբերում էր. նա ճանաչում էր հայերին, գիտեր նրանց անմիաբանությունը, հասկանում էր, որ վաղ թե ուշ այդ նախարարները սրերն իրար դեմկդարձնեն, և այն ժամանակ ինքը գիտե, թե ինչպես կողողի հայոց երկիրը արյունով, թե ինչպես վրեժը տասնապատիկ կառնի հայերից:

Բայց Գագիկի հոգը չէր, թե կկործանվեն փոքրիկ նախարարությունները, թե կտառապի ժողովուրդը, կթափվի հայոց արյունը, նա ամեն միջոց գործ էր դնում միայնյուր իղձը կատարելու համար:

Նստած էր նա Վան քաղաքում, Շամիրամի ձեռքով հիմքը գցած ամուր բերդում և նորոգում ու ամրացնում էր այն: Դեպի Բզնունյաց ծովը նայող կողմում շինեցգեղեցիկ պալատ գեղեցիկ ճեմելիքներով, որտեղից զբոսնողի առաջ տարածվում էր լճի անսահման կապույտը, ուր երբեմն-երբեմն լողում էին փոքրիկ մակույկներիրենց սպիտակ առագաստներով, որ մի-մի կարապի էին նմանվում:

Գագիկը գոհունակությամբ նայում էր հրաշալի տեսարանին և մտածում ավելի ճոխացնելու և նորանոր շինություններ13 ավելացնելու մասին, բայց հոգին խաղաղչէր, նա գոհ չէր աշխարհի այդ հրաշալի անկյունով…

Տխուր էր այսօր Գագիկը, նա մտածում էր շուտով բաժանվել ընտանիքից, յուր սիրուն աղջկանից, որին հոգու չափ սիրում էր:

Հայոց երկիրը խաղաղվել էր: Յուսուֆի հրոսակներից մի փոքր ազատ շունչ էր քաշել հայ ժողովուրդը: Եվ ահա այժմ ինքը մտածում էր այդ խաղաղությունըխանգարել, առաջին սուրը ինքը բարձրացնել հայոց դեմ:

Նախիջևան քաղաքը նրա մտքից դուրս չէր գալիս, որը Սմբատ արքան խլելով՝ հանձնել էր Սիսակյան իշխանին, և որն այնքա՜ն գժտությունների առիթ էր տվել: ԵվԳագիկը պատրաստություն էր տեսնում հարձակում գործել Նախիջևանի վրա և այն ետ վերցնել Սիսակյան իշխանից:

Դառն հիշողություններն անցնում էին նրա մտքով, և նա լուռ դիտում էր արևի մուտքը, որ թաքնվում էր հեռու հորիզոնում, իսկ երբ աննկատելի կերպով դուրս եկավնրա աղջիկը՝ Հեղինեն, յուր երկու նաժիշտների հետ և առանց նկատելու հոր ներկայությունը՝ հենվեց պարապին և հայացքն ուղղեց դեպի Բզնունյաց ծովի ջրերը, որոնք մեղմ ծփում էին և դիպչելով ժայռերին՝ փրփրում... Նազելի և քնքուշ օրիորդ էր Հեղինեն՝ դեռ տասնվեց տարին չլրացած: Սև սաթի հոնքերը բարակ աղեղինման կամար էին կապել նրա փայլուն, բայց թախիծով լի աչքերին: Նա լուռ դիտում էր փոքրիկ ալիքների խայտանքը, որոնք պար էին բռնում արևի վերջինճառագայթների ներքո... Ա՜խ, ինչքան շատ էին այդ ալիքները, մի ալիք ջարդվում, փշրվում և ոչնչանում էր, մյուսն էր գալիս, նա էլ էր ոչնչանում, և տեղը ծնվում էրնորը… ...Մտածում էր Հեղինեն և անթարթ աչքերով դիտում հեռուն, դեպի հորիզոնը, դեպի լեռները, որոնց ետևում գտնվում է Այրարատյան աշխարհը, ուր

այնպիսիհպարտությամբ երկինք է հասցրել յուր ալեհեր գագաթը հսկա Մասիսը և ուր շրջում է դյուցազն Աշոտ Երկաթը, հայոց օրինական թագավորը...

Մի փոքր ժամանակ Գագիկը լուռ դիտում էր յուր աղջկան և ապա մոտենալով նրան՝ քաղցր ձայնով ասաց.

— Աղջի՛կս:

Հեղինեի մարմնով մի տեսակ սարսուռ անցավ՝ լսելով հոր ձայնը, բայց երբ նայեց նրա գորովալից աչքերին, փաթաթվեց հորը:

Գագիկը մի համբույր դրոշմեց նրա մարմարիոնի նման սպիտակ ճակատին և նրա ձեռքերը յուր ափի մեջ առնելով՝ կանչեց.

— Դու տխուր ես, Հեղինե՛ : Ի՞նչն է արդյոք տխրեցնում քեզ: Մի՞թե գոհ չես այս սքանչելի տեղով և այն վայելչություններով, որով շրջապատված ես դու: Ասա, հոգի՛ս, ի՞նչն է վրդովեցնում քեզ, և ես իսկույն կկատարեմ քո ամեն մի ցանկությունը...

— Չէ, հայրի՛կ, ես երջանիկ և բախտավոր եմ: Իմ միակ ցանկությունն է, որ դու մնաս մեզ հետ անբաժան: Վասպուրականը ընդարձակ երկիր է, բավականացիրնրանով, և մենք երջանիկ կլինենք:

Մի տեսակ մռայլ քող անցավ Գագիկի դեմքով՝ լսելով այդ խոսքերը, և իսկույն գլխի ընկավ, թե ինչ է ուզում ասել Հեղինեն: Նույնը միշտ կրկնում էր նաև նրա մայրը:

— Չէ աղջի՛կս, ես շուտով պիտի արշավեմ դեպի Նախիջևան, տղամարդու գործը տանը նստելը չէ. իսկ կանանց գործը չէ մարդոց գործերի մեջ խառնվելը, իզուր եքդու և քո մայրը աշխատում ինձ ետ կանգնեցնել իմ նպատակից:

— Իսկ Աշոտ Երկաթը մի՞թե թույլ կտա գրավելու այդ քաղաքը:

— Աշոտ Երկա՞թը... հը՛մ... դա արդեն իմ գործն է, բայց դու գնա սենյակդ, փչում է արդեն երեկոյան սառը քամին և դու կարող ես մրսել, — ասաց Գագիկը նչսպասելով պատասխանի՝ ներս գնաց յուր պալատը՝ թողնելով Հեղինեին նաժիշտների հետ:

Հեղինեն նայեց հոր ետևից և ապա մի դառն ժպիտ խաղաց նրա երեսին:

— Ոչ, ամեն բան կզոհեմ, որդիական պարտավորությունս կմոռանամ և այն սև կնիքը, որ ուզում է դնել հայրս յուր անվան վրա, ես իմ թույլ տեղովս կքավեմ: Թույլչեմ տա, որ Աշոտ Երկաթից օրինական գահը հափշտակվի... Ես քեզ հետ եմ, ո՛վ քաջ

դյուցազն, քեզ համար եմ միայն աղոթում, քո հաջողության վրա եմ մտածում...Թույլ բազուկներով կխորտակեմ նույնիսկ հորս բոլոր ջանքերը և նրա բոլոր մտադրությունները ի դերև կհանեմ... Շուտով, շատ շուտով կիմանաս, որ մի աներևույթձեռք, ամեն դավադրություններից պահպանում է քեզ, — այդպես ասաց ինքն իրեն Հեղինեն և այն է ուզում էր ներս գնալ, երբ մի քահանա խոր գլուխ տվեց նրան: Միտեսակ հետաքրքրություն պատեց օրիորդին և իսկույն հեռացրեց նաժիշտներին:

— Հը՛, տե՛ր հայր, լուր ունե՞ս:

— Այո՛, իշխանուհի, ուղարկված մարդը վերադարձավ, և Աշոտ Երկաթը ողջ ու առողջ է: Ամբողջ երկիրը մաքրել է անօրեններից և արդեն ճակատած է Աղստև ամրոցիդեմ, որը, կասկած չկա, այժմ առած կլինի:

— Գոհություն աստծո, լավ լուրեր ես բերել, տե՛ր հայր, բայց հարկավոր է նրան մի բանից զգուշացնել: Այս իրիկուն նամակ կգրեմ և այդ թուղթը անհապաղ պիտիԱշոտին հասցնեք:

— Պատրաստ եմ քո հրամանը կատարելու, իշխանուհի, — ասաց տերտերը, որ Գագիկի ընտանիքի քահանան էր, և խոր գլուխ տալով հեռացավ:

Մյուս օրն առավոտյան մի ձիավոր սրարշավ գնում էր Աշոտ Երկաթի մոտ՝ հետը տանելով Հեղինեի նամակը:

ԺԷ

Մի մռայլ գիշեր էր...

Փչում էր ու ոռնում լեռների ցուրտ քամին և տարաբախտ մի խմբի հուսաբեկ սիրտը ավելի հուսահատեցնում:

Դեպի Վաղարշակերտ տանող ճանապարհին հայ գերիների խումբը, շրջապատված Յուսուֆի զինվորներով, դանդաղությամբ առաջ էր գնում:

Սրտաճմլիկ պատկեր էր ներկայացնում այն:

Կին, աղջիկ, ծեր ու երիտասարդ, ծանր շղթաներով և պարաններով կապկապած, ցավից տնքում էին ու ծանր հառաչում: Այդ հառաչանքները երբեմն ընդհատվումէին քամու ուժգին շառաչից և մտրակների հարվածներից որ հասցնում էին արաբ զինվորները այս ու այն հայի գլխին, որը դանդաղ էր քայլում:

Գերիների խումբը շարժվում էր առաջ…

Մութ խավարն էր նրան ուղեկցում, սև տանջանքը ընկերակցում և անհույս վիշտը կրծում նրա սիրտը:

Չոր ու խոպան գետնի վրայով բավական երկար անցնելուց հետո, գերիների առաջ բացվեց մի ձոր, ուր խոխոջելով վազում էր պարզ ու վճիտ առվակը:

Գերիների խումբը կանգ առավ:

Ինչպես երևում էր, պահապանները ևս հոգնած էին ու կարոտ հանգստի: Նրանք կանգ առան, և քիչ հետո խարույկների լույսը լուսավորեց գերիներին, որոնցից ովինչպես կարողացավ թեք ընկավ գետնի վրա և լուռ ընկղմվեց անծայր վշտերի մեջ:

Խմբից մի քանի քայլ հեռու, լեռ քարի վրա նստած էր մի ծերունի, իսկ դեռատի մի աղջիկ գլուխը դրած նրա ծնկներին լուռ արտասվում էր:

Հայր ու դուստր էին դրանք, որոնց երկուսին էլ տանում էին գերության: Ծերունի հոր կյանքը խնայել էին միմիայն աղջկա գեղեցկության համար: Մահաբեր սուրը պետք է կտրեր թշվառ ծերուկի վիզը, երբ դուստրը աղի արցունքով փրկեց նրա կյանքը:

Նրանք լուռ էին: Այդ լռությունը խզեց դուստրը և արտասվաթոր աչքերով դառնալով հորը՝ ասաց.

— Ա՜խ, հայրի՛կ, ինչքա՜ն ծանր է գերությունը… Աստված խղճա մեզ:

Հայրը շփեց մորուքը, հուսահատ մի ցնցում արավ, վեր նայեց դեպի անողոք երկինքը, ապա, շոյելով աղջկա գլուխը, դառնացած սրտով կանչեց.

— Հա՜,աստված խղճա մեզ... մեղա՜ քեզ Աստղիկ ջան, աստված մեզ չի խղճա, որովհետև մենք մեր ձեռքերով ենք մեր գերեզմանը փորում... Հայի աստվածն այստեղմեղք չունի, արաբի աստվածն է մեր երկրին տիրում: Մեր իշխանները, հայի աստծուն մոռացած, արաբի աստծուն են երկրպագում, նրա ամիրապետի փեշի տակմտնում ու մեզ անտեր ու անտիրական թողնում... Անտե՜ր ենք, աղջի՛կս, անտիրակա՜ն, որ՜բ և անօգնակա՜ն... — Կանչեց ծերուկը մի այնպիսի ցավոտ հնքով, որարաբ պահապանը կանգ առավ ու նիզակը ճոճելով կանչեց.

— Լռի՛ր, անհավատ, բավական է ինչքան խոսեցիր:

Ծերուկը մի րոպե լռեց, կատաղությամբ լի աչքերով մեկ արաբ զինվորին նայեց ու մեկ՝ նրա նիզակի ծայրին, ապա կուրծքը առաջ ցցեց ու խորին վշտով կանչեց.

— Լռեմ... Ինչու՞. ինչու՞ լռեմ... Եթե ես լռեմ, քարերը կխոսեն: Մեր իշխանները մեզ անտեր թողած ձեր փեշի տակն են մտել ու ձեզ են ծառայում:

— Նրանք խելոք են վարվում, դուք եք հիմարը, որ մեր սուրբ հավատը չեք ընդունում և մեր ամիրապետի դեմ եք ապստամբում, — ասաց զինվորը և կրկին սկսեց յուրչափավոր քայլվածքը:

— Այո՛, մենք հիմար ենք, ճիշտ է ասում արաբը, — դարձավ Աստղիկը հորը: — Հիմար ենք, որովհետև մեր կյանքի անդորրության մասին չենք մտածում ուհավատներս չենք ուրանում... Օ՜, եթե մենք էլ մեր հավատն ու ազգը մոռանայինք, իսլամին երկրպագություն անեինք, այն ժամանակ այս գերության մեջ չէինքլինի:

— Չէ՜, աղջի՛կս, մեղք մի՛ անի, մենք ենք, որ մեր ազգն ենք պահում: Մենք ենք, որ Լուսավորչի լուսաթաթախ հավատն ենք
պահպանում: Ժողովուրդը, հասարակամբոխը եթե չլիներ, հայ ազգն ու կրոնը վաղուց վերջացած կլիներ: Դառն օրերն ու տանջանքները աստված մեզ է տվել, ու մենք պիտի քաշենք: Լացն ու արցունքըմեզ է վիճակված կրելու, իսկ իշխանին՝ քեֆ ու անդորր կյանքը… Մենք պիտի տնքանք ու հառաչենք, իսկ իշխանը խնդա և ուրախանա...

— Բայց մինչև ե՞րբ, հայրի՛կ, խավարում է կյանքիս գարունը, դեռափթիթ արևս մթնում...

— Համբերի՜ր, զավա՛կս, համբերի՜ր... Համբերությունն է մեր բաժինը: Ա՜խ, իմ եղան:

Այդ ժամանակ պահապան զինվորը նորից կանգ առավ ու մտրակի հարվածը իջեցնելով խեղճ ծերուկի մեջքին ասաց.

— Լռի՛ր, շուն, թե չէ կաշիդ կքերթեմ:

Աստղիկի սիրտը մորմոքվեց և յուր մարմնով պատսպարելով հորը դիմեց պահապանին.

— Ի՛նձ զարկ, անօրե՜ն, բայց հորս ձեռք մի՛ տա: Սպանի՛ր ինձ, որ վերջ տրվի իմ թշվառ կյանքին:

Արաբ զինվորը ժպտաց ու դառն հեգնանքով Աստղիկին դիմելով՝ ասաց.

— Չէ՛, մահը քեզ համար չէ, այլ այս զառամյալ ծերունու համար: Դու չես մեռնի, խելա՛ռ աղջիկ: Դու սիրուն ես և գեղեցիկ, ու մեր ամիրապետը եթե գեղեցկությունդտեսնի, քեզ յուր հարեմը կտանի ու դու այնտեղ երջանիկ կապրես:

— Թշվա՛ռ անհավատ, մի՞թե կարծում ես, թե ես կենդանի նրա ձեռքը կընկնեմ:

— Օ՛...քեզ նման կամակոր աղջիկներ շատ են եղել որոնք այդպես են խոսել, բայց վերջը իրենց երջանկությունը մեր իշխանների գրկումն են գտել: Կգա ժամանակ, երբ դու էլ, մեր ճշմարիտ կրոնն ընդունելով, երջանիկ կապրես... Ա՛յ, եթե Յուսուֆը կամ մեր իշխանները քեզ չվերցնեն, ես քեզ ուրախությամբ իմ տունը կտանեմ:Բայց ի՞նչ անես, որ հենց վաղը դու մեր իշխանի գրկում կլինես, իսկ այս զառամյալ ծերուկի դիակը շները կլափեն...

— Հայրի՛կ, այս ի՞նչ է ասում... Ա՛խ, մահը լավ է ինձ համար, քան սրանց պիղծ ձեռքերը:

— Մահն է մեր բաժինը, աղջի՛կս, ավելին մի՛ սպասիր... Մենք պիտի մեռնենք, որ իշխանը ապրի: Սև ճակատագիրն է մեր բաժինը, — ասաց ծերունին, գրկեց աղջկանն լռեց:

Լուռ էին և մյուս գերիները, այնինչ արաբ զինվորները, կրակի շուրջը բոլորած, ուրախ քրքիջով ընթրիք էին անում ու լպիրշ հայացքով դեպի գերիները նայում...

ԺԸ

Գիշերը յուր սևաթույր թևերը տարածել էր ամեն կողմ և խորին խավարի մեջ ընկղմել Աղստև կամ Խորաձոր14 ամրոցը, որ աժդահա գազանի նման դուրս էր ցցվելժայռի գլխին և հպարտությամբ նայում էր ցած, յուր ոտքերի տակ, ուր ահռելի, խոր ձորի մեջ լռիկ-մնջիկ հոսում էր Աղստև գետակը...

Չորս կողմը տիրում էր խորին լռություն, միայն երբեմն սուլելով անց էր կենում քամին, խրոխտալով հարձակվում պարիսպների վրա և ապա, հաղթվելով, ետ էրնահանջում և ոռնալով ու հառաչելով՝ փախչում հեռո՛ւ, հեռու... Կես-գիշերից անց էր. բերդի մեջ ամեն ինչ լուռ էր. խոր քուն էին մտել ամենքը սկսած արաբ իշխանիցմինչև հետին զինվորը: Ամենքն արդեն գտնվում էին երազական այն աշխարհում, ուր գոյություն ունեն միայն դյութական սնոտի

պատկերներ... Պահապաններնանգամ, որոնք ձանձրացել էին քամու ոռնալուց ու սուլելուց, չկարողանալով տանել դրա միատեսակ ու անտանելի ողբը, կուչ էին եկել ամեն մեկը մի անկյունում կընկել մի տեսակ մրափի մեջ. երբեմն միայն, երբ հեռվում, ձորի միջից լսվում էր վայրենի բորենու և գայլերի ոռնոցը, նրանցից մի քանիսը բարձրացնում էինձանրացած գլուխները և անիծում այդ գազաններին, որ իրենց քունը խանգարեցին...

Բայց քամին յուր նվագն էր շարունակում և բուռն զորությամբ քշում երկնքի մոխրագույն ամպերը, որոնք արագությամբ հեռանում էին հորիզոնից, մեկը մյուսինհետևելով, մի ամպի կտոր մյուսի հետ խառնվելով ու ձուլվելով...

Հենց այդ միջոցին Աշոտ Երկաթը յուր երկու հարյուր կտրիճներով զգույշ մագլցում էր ժայռից ժայռ, քարից-քար և մոտենում էր բերդին: Ձորի կողմից մուտքը բաց էր, և այդ կողմից ապահով կարծելով միայն երկու պահապան էին նշանակված, որոնք հենց նոր քուն էին մտել և ընկել դյութական աշխարհը…

Հայ կտրիճները բարձրանում էին վեր. ո՛չ մի շշունջ, ո՛չ մի ձայն չէր լսվում, ո՛չ մի քար, ո՛չ մի խիճ չէր գլորվում նրանց ոտքերի տակից, այլ աներկյուղ դևերի նմաններանք բարձրանում էին վեր՝ իրենց ոտքերի տակ թողնելով ահռելի ձորը, ուր ընկնողը պատառ-պատառ կլիներ:

Խմբի առջևից գնում էր Աշոտ Երկաթը, ինչպես մի հասարակ զինվոր: Ահա նա բարձրացավ վեր և կանգ առնելով ազատ շունչ քաշեց ու սրբեց ճակատի քրտինքը, չնկատեց անգամ, որ հենց ոտքերի տակ տարածված է քնած պահապանի մարմինը: Հանկարծ նա լսեց մի տեսակ խուլ ձայն, որ ասում էր.

— Գալի՛ս են, գալի՛ս, Շահնշա՛հը...

Աշոտ Երկաթը սուրը մերկացրեց, բայց նայելով ոտքերի տակ փռված պահապանին, այն կրկին պատյանը դրեց և ինքն իրեն ասաց.

— Է՛հ, սրա համար չարժեր սուր հանել, — և նկատելով, որ ձորից բարձրանում են յուր կտրիճները, միայն ոտքը դրեց պահապանի կրծքին:

Այդ միջոցին բոլոր կտրիճները արդեն հավաքվել էին Աշոտ Երկաթի շուրջը և նրա հրամանին էին սպասում, երբ լսվեց մի տեսակ թրմփոց, կարծես ինչ-որ մեկըգլորվեց ձորը:

— Ո՞վ ընկավ, — հարցրեց Աշոտ Երկաթը, ցած ձայնով դիմելով յուր կտրիճներին:

— Ո՛չ ոք — պատասխանեց զինվորներից մեկը՝ առաջ գալով, — պահապաններից մեկին Մահմեդի գիրկն ուղարկեցինք:

— Շատ լավ արիք, այժմ հարկավոր է զգույշ առաջ գնալ և սկսել կոտորածը: Բայց հենց որ լսեք, թե իմացան մեր բերդ մտնելը, ամեն կողմից ահագին աղմուկբարձրացրեք և շփոթեցրեք բոլորին: Չխնայել ո՛չ ոքի, մինչև որ զենքերը վայր չդնեն: Դե՛, իմ կտրիճնե՛ր, սկսեցեք գործը, ժամանակ չպետք է կորցնել, — ասացԱշոտը, և նրանք մի քանի խմբերի բաժանվելով՝ սկսեցին կոտորածը:

Քնած զինվորները չգիտեին՝ մարդիկ են իրենց գլուխները կտրում, թե դևեր: Նրանք մինչև անգամ ժամանակ չունեցան զենքի դիմելու, մի քանիսը միայն խելքիեկան, բայց հայ կտրիճների սուրը նրանց էլ վերջ տվեց: Չանցավ կարճ ժամանակ, արշալույսը դեռ նոր էր բացվում, երբ ամբողջ բերդի մեջ գտնված արաբաց գնդիցկեսը կոտորված էր, իսկ մյուս մասը գերի բռնված:

Աշոտ Երկաթը ազատ շունչ քաշեց, երբ զգաց, որ վերջին հարվածը տվեց Յուսուֆի զինվորներին, որոնք այլևս չեն համարձակվի իրեն անհանգիստ անել…Ջախջախելով Յուսուֆի վերջին զորությունը՝ Աշոտ Երկաթը շտապեց վերադառնալ Արշարունյաց երկիրը:

915 թվականն էր, երբ հայ իշխանները, ակնածելով Աշոտ Երկաթի քաջագործություններից և կարճ ժամանակում ցույց տված հաղթություններից, ի մի ժողովվելով, Ափխազաց Գուրգենի և վրաց Ատրներսեհ արքայի հետ միասին թագավորեցրին նրան յուր հոր փոխարեն:

Այնուհետև նա սկսեց խնամել երկիրը իբրև հայր: Նա փառքի համար չէր մտածում, նրա միակ ցանկությունն էր տեսնել յուր ժողովրդի բարօրությունը: Սակայն այդհանգստությունը երկար չտևեց, և հայոց խաղաղ երկիրը նորից ալեկոծվեց, նորից արյան և կոտորածի ասպարեզ դարձավ, որ շփոթեց Աշոտ Երկաթի սիրտը: Այսանգամ վերքը շատ ծանր էր:

ԺԹ

Ինչպես հայը յուր ժողովրդին, ինչպես հասարակ մարդ, Աշոտ Երկաթը սուրը մի կողմ դրած, շրջում էր ժողովրդի մեջ և նրա երկարամյա վերքերը բուժում, նրակարիքներին դարման անում: Նա ման էր գալիս քաղաքից

քաղաք, գյուղից գյուղ, ծանոթանում էր ժողովրդի դրությանը, երբ անակնկալ դիպվածը ստիպեց նրանընդհատել այն և նորից զենքի դիմել, նորից մտնել արյան ասպարեզ:

Մի երեկո, երբ նոր էր վերադարձել ժողովրդի մեջ շրջագայելուց, նրան հանձնեցին մի փոքրիկ նամակ, որ գրված էր մանր, բայց գեղեցիկ գրերով:

— Ո՞վ բերեց այս նամակը, — հարցրեց Աշոտ Երկաթը ծառաներին՝ զարմացած շուռումուռ տալով այն:

— Մի գյուղացի, որ յուր անունը և որտեղից լինելը չուզեց հայտնել, — պատասխանեց ծառան:

Աշոտ Երկաթը շտապով բաց արավ նամակը և սկսեց կարդալ: Նա աչքերին չէր հավատում:

«Քաջ Աշոտ Շահնշահ, — գրած էր նամակի մեջ, — մի՛ կարծիր, թե միայն նրանք են քո բարեկամները, որոնք քեզ անձամբ ճանաչում են: Ես քեզ չեմ տեսել, բայցլսելով քո քաջագործությունները՝ սիրում եմ քեզ: Սիրում եմ իմ հարազատ ծնողներից ավելի, սիրում եմ ինչպես իմ հարազատ եղբորը: Իմ մտածության առարկանմիայն այն է, որ քեզ, թագավորա՛ց թագավոր, միշտ հաջողության մեջ տեսնեմ, և ես միշտ աղոթում եմ տիրոջը, որ քո կյանքը երկար պահի այն ժողովրդի համար, որմինչև քո երևալը տառապում էր: Ինձ դու չես տեսնի, չես ճանաչի, բայց ես միշտ քեզ վրա պիտի մտածեմ և քո բարիքները ցանկանամ: Ուրախացավ սիրտս, երբ լսեցիքո քաջագործությունները: Իսկ այժմ ցավում եմ, որ տխուր լուրեր պիտի հաղորդեմ և վրդովեմ քո խաղաղությունը: Գիտեմ դու չես վհատվի. վհատությունը դյուցազնի գործը չէ, այլ թույլերի և վախկոտների, իսկ դու դյուցազների դյուցազնն ես: Հայաստանը նորից պիտի ավերմունքի ասպարեզ դառնա և այդ ավերմունքիպատճառը լինելու է Գագիկ Արծրունին, որ մոտ օրերս պիտի արշավի՝ Նախիջևան քաղաքը Սիսակյան իշխանից գրավելու: Զգուշացնում եմ քեզ, որ նա իր սուրը նանքո դեմ է դարձնելու: Նա արդեն որոգայթներ է պատրաստում քեզ մեջը ձգելու, բայց նրա ամեն մի որոգայթը իզուր պիտի անցնի, քանի որ ես ամեն անգամ քեզ պիտիտեղեկություն տամ իր մտադրությունների մասին: Առայժմ այսքան: Քեզ պաշտող իշխանուհի»:

Աշոտ Երկաթը իրեն երազի մեջ էր կարծում. այնքան անակնկալ էր այդ նամակը: Ո՞վ պիտի լիներ այդ իշխանուհին, որ զգուշացնում է իրեն Գագիկ Արծրունուդավադրությունից, և ինչու՞ Գագիկը կրկին վրդովում է հայոց

խաղաղությունը: Նա երկար ժամանակ չկարողացավ ոչ մեկի վրա մատնանիշ անել: ԱրդյոքԳարդմանաց Սևադայի աղջի՞կն է, որի աչքերից շատ անգամ հափշտակվել էր ինքը: Եվ եթե նա է, ինչո՞ւ ստորագրություն չկա կամ ինչու՞ ինքը՝ Գարդմանացիշխանը անձամբ չի հաղորդում այդ մասին, եթե գիտե Գագիկի այդ ստոր մտադրությունները: Ինչևէ, պետք է սպասել և տեսնել, թե որքան ճիշտ են իշխանուհու այդցուցմունքները:

Եվ Աշոտ Երկաթը ծալեց նամակը ու մի կողմ դրեց: Չանցավ մի քանի օր, և ահա լուր ստացավ, որ Գագիկը հիրավի պաշարել է Նախիջևան քաղաքը: Բայց նա տեղիցչշարժվեց՝ սպասելով հետևանքին: Նախիջևանը առավ Գագիկը, և ահա Սիսակյանց իշխանը, որին պատկանում էր այդ քաղաքը, բարկությամբ լի հարձակվեցՎասպուրականի վրա, սկսեց այդ երկիրը հուր ու մոխիր դարձնել: Երկպառակության քարը գլորված էր, և սկսվեց Արծրունյաց ու Սիսակյանց արյունը թափվել: Այդախտը տարածվեց նաև մյուս հայ իշխանների մեջ, որոնք դուրս գալով իրենց երկրի սահմաններից, սկսեցին հարևան հայ երկրներն ու գավառները ավերել և սրիճարակ դարձնել:

Կատաղեց Աշոտ Երկաթը և սուրը կրկին պատյանից հանելով սկսեց հայ նախարարների վրա գնալ: Երկիրը նորից փոթորկվեց, նորից սուքն ու շիվանը տարածվեց, նորից գյուղերն ու քաղաքները ամայացան, և թշվառ ժողովուրդը նորից սկսեց հեծեծալ հայ նախարարների ըմբոստության և փառասիրության պատճառով:Արտաքին թշնամին չկար, բայց ներքին խռովությունները ավելի խորն էին խոցում խեղճ ժողովրդին:

Բայց արտաքին թշնամին էլ հեռու չէր: Յուսուֆը, որ միշտ ատամները կրճտացնում էր Աշոտ Երկաթի վրա և մտածում նրանից վրեժխնդիր լինել յուր զորքերինայնպես չարարչար հալածելու պատճառով, այժմ սիրտ առավ և կամաց-կամաց պատրաստություններ էր տեսնում Հայաստանի վրա հարձակվելու: Նա ուրախանումէր հայ նախարարների անմիաբանությունը տեսնելով և ազատ էր թողել նրանց իրար դեմ կռվելու, իրար ոչնչացնելու. նրան նպաստողը միայն այդ էր, ապա թե ոչնա վախենում էր Աշոտ Երկաթի վրա հարձակվելուց: Ժամանակն արդեն մոտեցել էր: Եվ Յուսուֆը հրամայեց յուր բոլոր զորքերին հավաքվել Ատրպատականում նայնտեղից մտնել հայոց երկիրը: Նրանք արդեն կամաց-կամաց մոտենում էին հայոց երկրին, այնինչ հայ իշխանները դեռ իրար արյունն էին թափում…

Ի

Ինչպես անձրևից առաջացած հեղեղատը, ներս խուժեցին Յուսուֆի հրոսակները հայոց երկիրը և սկսեցին քանդել, ավերել ու կոտորել: Ինչպես հեղեղատը ողողումու ավերում է առաջին հանդիպած տեղերը և ապա, զանազան ուղղությամբ ցրվելով, վազում է միշտ առաջ առանց հարցնելու տեղն ու դիրքը, այնպես էլ արաբացիրոսակները նախ սկսեցին ավերել մոտիկ գավառները և ապա մտնել ավելի խորը, երկրի ներսը, ուր ազատ ասպարեզ գտնելով իրենց համար, մոխրի կույտերդարձրին շեն գյուղերն ու քաղաքները... Իրենց ետևից նրանք թողնում էին միմիայն ավերակներ, սուք, լաց ու շիվան... Ամեն ինչ ոչնչանում էր նրանց բարբարոսաձեռքերից, ամեն ինչ կործանվում, և արյունով էր ողողվում մոխիր դարձած ավերակները... Ո՞վ էր խեղճ ժողովրդի պաշտպանը, նրանց մասին հոգացողը. ո՛չ ոք:Իշխաններից ոմանք իրար հետ էին կռվում, իսկ ոմանք ամրանում էին բերդերում՝ անպաշտպան թողնելով խեղճ ժողովրդին, որի քրտինքով էին ապրում իրենք...Այո, ծանր էր, խիստ ծանր էր ժողովրդի դրությունը, ամեն հալածանք, ամեն տանջանք նրա գլխին էր թափվում, և նա անօգնական, իշխաններից մոռացված, ձեռքերը երկինք էր բարձրացնում և տիրոջից օգնություն խնդրում:

Եվ նա, հույսը կտրած, ամենից մոռացված, սարսափով պատած, երկյուղից գլուխը կորցրած, թողնում էր յուր տուն ու տեղը, դաշտն ու արտը և փախչում լեռները. ամեն տեղ՝ սարում, դաշտում, տանը, մահ էր սպառնում նրան:

Շատ վշտացավ Աշոտ Երկաթը, երբ լսեց ժողովրդի հեծեծանքը: Նա ձայն տվեց իշխաններին, նախարարներին. նրա ձայնը տարածվեց լեռներում ու ձորերում, արձագանք տվեց, բայց ո՛չ մի իշխան, ո՛չ մի նախարար տեղից չշարժվեց, ո՛չ մեկը պատասխան չտվեց նրա կանչին, ամենքը կարծես խոց լինեին և չլսեցին քաջիձայնը:

Սպասեց Աշոտ Երկաթը, շա՜տ սպասեց, մի թույլ ձայն անգամ չլսեց, ու վրդովվեց քաջի սիրտը. նրա աչքերում երևացին արցունքներ, որոնք գլորվեցին և խառնվեցինյուր սիրած ժողովրդի արտասուքներին: Դյուցազնը լալիս էր, լալիս էր ո՛չ թե մահից վախենալով, այլ նրա համար, որ ինքը չի կարող բյուրի դեմ կենալ... Ապախոցված սրտով նայում է մի բուռ քաջերին, որոնք լուռ իր հրամանին են սպասում, ու նրա սիրտը լցվում է գոհունակությամբ, նրա աչքերից հուր է ցայտում, դեմքնընդունում է վեհ ու խրոխտ կերպարանք և դառնալով նրանց՝ ասում է.

— Տղե՛րք, մենք միայնակ ենք հազարավորների դեմ, մենք ամենքս պիտի մեռնենք, մահը միայն մի անգամ է գալիս: Ավելի լավ է քաջի պես մեռնենք, սրերըձեռքներիս, քան թե անօրեններից գերվենք և բանտի մեջ մաշվենք...

Ասում է նա, սուրը օդի մեջ ճոճում և թռչում առաջ:

— Ապրի՛ Աշոտը, կեցցե՛ Շահնշահը, — գոռում են կտրիճները և նրա ետևից սլանում...

Ու թռչում է Աշոտը, մեկ այստեղ է կոտորում թշնամիներին ու հանկարծ աներևութանում, մեկ հայտնվում երկրի այլ կողմում: Անակնկալ հարձակվում է նաթշնամիների վրա և հանկարծ չքանում...

Զարհուրանքը պատում է Յուսուֆի զինվորներին, և նրանք ամեն րոպե սպասում են նրան, ինչպես երկնքի պատուհասի, բայց կրկին առաջ են գալիս, կրկին ավերումու կոտորում, տանջանք տանջանքի վրա ավելացնում: Նրանք չեն հուսահատվում Աշոտ Երկաթի մանր հարձակումներից, նրանք գիտեն, որ իրենք շատ են, զորավոր, անթիվ, անհամար, ո՞ր մեկին կկոտորի Աշոտ Երկաթը...

Ու անօրենները տանջում էին անպաշտպան ժողովրդին, պառավներին և ծերերին կոտորում էին անխնա, ծծմայրների ձեռքերից դուրս էին կորզում նրանց սիրելիմանուկներին և գետնին խփելով՝ նրանց աչքի առաջ սպանում, հղի կանանց կոխկրտում էին ոտքերի տակ, որովայնը պատռելով դուրս էին կորզում պտուղը15 և դենշպրտում: Մեծամեծներին զանազան տանջանքներ էին տալիս, որ ցույց տան իրենց պահած գանձերը և երբ ստանում էին ամեն ինչ՝ կամ սպանում էին նրանց, կամգերության վարում և ստիպում հավատն ուրանալ: Գերիներին պահում էին ամենասոսկալի կերպով և երբ նրանք չէին ուրանում իրենց կրոնը, սարսափելիտանջանքներով մահացնում էին նրանց, մի քանիսին կենդանի էին թաղում, մի քանիսին ծանրության տակ ճխլում, իսկ ոմանց կրծքից սկսելով՝ սրով երկու կես էինանում կամ կենդանի մաս-մաս անում...

Անհնարին է մի առ մի հիշել այն սոսկալի տանջանքները, որ գործ էին դնում անօրենները...

ԻԱ

Մութը նոր էր պատել աշխարհը, երբ Աշոտ Երկաթը յուր հոգնած կտրիճներով դանդաղ առաջ էր շարժվում:

Հանկարծ նրա ձին ականջները ցցեց և գլուխը ճանապարհի մի կողմը թեքելով՝ նայեց:

Աշոտ Երկաթը հավատում էր ձիու ուշիմությանը, նրա գլուխը բարձրացնելուն պես, ինքն էլ այն կողմը նայեց, բայց մթության մեջ ոչինչ չնկատեց, ուստի շոյելովձիուն՝ ասաց.

— Ի՞նչ է, ի՛մ նժույգ, ի՞նչից վախեցար: Թե քաղցած ես և շտապում ես կեր գտնել, սպասիր մի փոքր էլ, աստված մեզ էլ, քեզ էլ կերակուր կտա:

Ձին կանգ առավ, նրա հետ՝ նաև խումբը: Հեռու լանջի վրա երևում էր մի շինություն, որ վանքի էր նման, որտեղից երևում էր ճրագի աղոտ լուսավորություն: Բայց այդչկանգնեցրեց ձիավորներին, ընդհակառակը, նրանք շատ ուրախացան, երբ տեսան ճրագի լույսը, քանի որ հանգստության էին կարոտ, իսկ թշնամի էր այդտեղ, թեբարեկամ՝ այդ միևնույն էր. եթե բարեկամ էր՝ հո լավ, իսկ եթե թշնամի, մի փոքր ջանք էր հարկավոր միայն, որ նրանց այդտեղից դուրս քշեին:

Ձիերը կանգնելուն պես, ճիշտ այդ ճրագի հակառակ կողմից նրանք լսեցին մի տեսակ խուլ, գերեզմանային ձայն. կարծես գետնի տակից ինչ-որ մեկը հառաչում էր:Նրանք սկսեցին ավելի ուշադրությամբ ունկնդրել. այո՛, հառաչում, տանջվում էր մի մարդ, որի ձայնը կարծես գերեզմանի միջից էր գալիս: Վանքի մոտ, անշուշտ, գերեզմաններ կան, և մեռելները հարություն են առել, մտածեցին մի քանիսը և ոմանք սարսափած սկսեցին լուռ աղոթք մրմնջալ ու երեսներին խաչ հանել:

Աշոտ Երկաթը ձին քշեց դեպի ձայնը: Նրան հետևեց խումբը:

Մի փոքր գնացին և հանկարծ սարսափահար կանգ առան: Մթության մեջ նրանց աչքին ներկայացավ մի սոսկալի պատկեր, որ ցնցեց բոլորի ուղեղը և փշաքաղեցնրանց մարմինը: Խմբի միջից մի քանիսը մինչև անգամ ուզեցան ետ դարձնել ձիերի գլուխը և փախչել այդ զարհուրելի տեսարանից, որը նրանց մտքի մեջ ծնեցրեցհազարավոր հրեշավոր երևույթներ, բայց Աշոտ Երկաթը ամեն բան հասկացավ և շուտով փարատեց յուր զինվորների սնոտիապաշտությունը:

— Տղե՛րք, տեսնու՞մ եք ինչպիսի տանջանքների են ենթարկում հայերին, — ասաց նա և ցած թռավ ձիուց:

Փայտերի վրա գլխիվայր ամուր կապված էին երկու մերկ կանայք, իսկ մի քանի գլուխ սարսափահար դուրս էին ցցվել հողի մակերևույթից:

— Տղե՛րք, ետ ածեցեք և ազատեցեք գոնե այս երկուսին, որ դատապարտված են կենդանի թաղվելու, բայց դեռ շունչը բերաններումն է, — ասաց Աշոտ Երկաթը նինքը, մի կողմ գնալով, նստեց կանաչ խոտի վրա և ընկավ խոր վշտի մեջ:

Դավիթը և մի քանիսը շտապով քանդեցին հողը և ազատեցին երկուսին, որոնք թուլացած ընկան գետին:

Ուշադրությամբ նայում էր Դավիթը թշվառների դեմքի գծագրությանը, երբ հանկարծ կանգ առավ և ապուշի նման սկսեց դիտել մեկին, ձեռքերը թուլացան և կարծեսարյունը սառեց երակների մեջ: Այդ դեմքը ծանոթ էր իրեն, բայց վախենում էր այդ նմանությունից, վախենում էր, որ նա լիներ, ում վրա կասկածում էր:

Նայեց, նայեց և ապա հանկարծ փաթաթվեց նրա վզով և սկսեց խելագարի նման համբուրել: Մյուս զինվորները երկյուղով նայում էին և կարծում, թե Դավիթըխելագարվեց: Լուրը հասավ Աշոտ Երկաթին, նա վեր կացավ տեղից և մոտեցավ Դավթին, որ դեռ համբույրներ էր տալիս, առանց խոսել կարենալու:

— Ի՞նչ ես անում, Դավի՛թ, — ասաց Աշոտ Երկաթը՝ բռնելով նրա ձեռքը:

Դավիթը դադարեց համբուրելուց և խեղդվող ձայնով ասաց.

— Ա՜խ, տե՛ր իմ, իմ աներն է, Մաթոսը: Իսկ ո՞ւր է Աստղիկս, իմ նշանածը:

Ազատվածը, որ դեռ չէր հասկանում, թե ի՞նչ է կատարվում շուրջը, երբ լսեց յուր և Աստղիկի անունը, լայն բաց արավ աչքերը, նայեց Դավթին և ուշաթափվեց: Խեղճմարդ, նա ճանաչեց կորած փեսային:

Երբ անցավ ուշաթափության պահը, երբ նրանք մի փոքր հանգստացան, սկսեցին իրար հարցուփորձ անել, իրար դրությունն իմանալ:

— Ասա, ո՞ւր է իմ Աստղիկը, — դողդողալով հարցրեց Դավիթը,

— Այնտե՛ղ, — ասաց Մաթոսը և ցույց տվեց դեպի երեվացող վանքը: Դավթի սիրտը տրոփեց, նա ուզում էր վեր կենալ և թռչել դեպի վանքը: Այդ նկատեց Մաթոսը նկանգնեցրեց նրան:

— Սպասի՛ր, ո՞ւր ես գնում, վանքը արաբաց զինվորներով լի է: Մենք մեր գյուղից փախուստ էինք տալիս, երբ հանդիպեցինք մի խումբ արաբների, որոնք անխնածեծելով մեզ, ամուր շղթաներով շղթայեցին ու բերին մինչև այստեղ: Անասելի տանջանքներ տվին մեզ: Շատերին սպանեցին, մի քանիսին ողջ-ողջ հողում թաղեցին, իսկ այս երկու կանանց, որոնց տեսնում եք գլխիվայր կապած, այնքա՜ն ծեծեցին, մինչև շունչները փչեցին: Խեղճերը ուզում էին փախչել, բայց չհաջողվեց...

— Իսկ Աստղի՞կը, — անհամբերությամբ խոսքը կտրեց Դավիթը:

— Աստղիկիդ և ուրիշ օրիորդների բռնեցին ու տարան վանքը: Նա կենդանի է, բայց թե ինչ վիճակի մեջ, այդ աստծուն է հայտնի:

— Քանի՞ մարդ են, — հարցրեց Աշոտ Երկաթը, որ մինչ այդ լուռ լսում էր:

— Չգիտեմ, պետք է որ մոտ երեք հարյուր լինեն:

— Լավ ուրեմն: Տղե՛րք, ձիերը թողեք իրենց տեղը և հետևեցեք ինձ, — ասաց Աշոտ Երկաթը և առաջ անցավ:

Դավիթը ուզում էր ամենքից առաջ անցնել, բայց զսպում էր իրեն, այնինչ նրա սիրտը պատառ-պատառ էր լինում:

ԻԲ

Վանքը, որին մոտենում էին մեր կտրիճները, գտնվում էր Մասյաց լեռան հարավային ստորոտներից մեկի վրա, մի խոր ձորում, որ ծածկված էր մացառներով ութփերով:

Այդ ժամին, երբ Աշոտ Երկաթը մոտենում էր պարսպին, վանքի ներսում, վանականների ընդարձակ սենյակներից մեկում, կատարվում էր հետևյալ տեսարանը:Բազմոցին, ուր սովորություն ուներ թիկն տալու վանահայրը, այժմ նստած էր արաբաց այդ փոքրիկ գնդի մեծավորը:

Նա խրոխտ, վայրենի դեմք ուներ, գլխին՝ սպիտակ չալմա, իսկ մեջքից կախված էր կեռ թուրը:

Նրա մոտ, մի փոքր ցած, նստած էին ուրիշ մարդիկ, որոնք ըստ երևույթին նրա ստորադրյալներն էին:

Դրանց առաջ կանգնած էին երեք հայ աղջիկներ, որոնք ամոթից և երկյուղից կախել էին գլուխները և լուռ հեկեկում էին: Սարսափը պատել էր խեղճերին, և նրանքդողում էին, այնինչ երեք գազան պետերը ամենայն ուշադրությամբ նրանց էին նայում և իրենց մտքում ընտրում գեղեցկին: Վայրենի կիրքը, անասնական ձգտումըրոպե առ ոոպե զրգռվում էր մեծավորների մեջ և նրանց աչքերը բորբոքում մոլության կրակով:

Բայց հայ աղջիկները ամոթից գետին էին մտնում և ամեն կերպ աշխատում էին երեսները թաքցնել:

— Մոտեցե՛ք ինձ, մի՛ վախենաք, ես ձեզ վնաս չեմ տա, — ասաց մեծավորը՝ նշան անելով աղջիկներին: Բայց նրանք տեղներից չշարժվեցին:

— Չե՞ք լսում, երեկ էլ երդվեցի, որ ձեզ ոչ մի վնաս չպիտի տամ, թեև դուք անհավատի աղջիկներ եք. բայց երդվում եմ ալլահով, որ եթե ձեր նզովյալ հավատը ուրանաք և ընդունեք ճշմարիտ կրոնը, դուք մեր ամիրապետի հարեմում ամենասիրուն աղջիկներից մեկը կլինեք:

— Գյավուրի՛ աղջիկներ, խո՞ւլ եք, ինչ է, որ տեղներիցդ չեք շարժվում. թե՞ ուզում եք, որ այս կեռ թրովս ձեզ մաս-մաս կտրատեմ, — գոչեց մեծավորը բարձրաձայն ևվեր թռչելով տեղից՝ բռնեց աղջիկներից մեկի ձեռքը, որ հազիվ տասնհինգ տարեկան լիներ: Նա քարշ տվեց նրան յուր մոտ և չնայած աղջկա ընդդիմության, գրկեցնրա նազելի իրանը, ամուր և ամուր սեղմեց կրծքին: Նույնը արեցին և մյուս երկու արաբները՝ հետևելով իրենց մեծավորի օրինակին:

Ապա մեծավորը զոռով բարձրացրեց կիսաուշաթափ օրիորդի գլուխը և հիացած սկսեց նայել նրա գեղեցիկ դեմքին և փոքր ժամանակից հետո, յուր զզվելիշրթունքները մոտեցնելով նազելի կույսին, մի համբույր դրոշմեց թշվառ աղջկա գունատ շրթունքներին:

— Ալլահը վկա, Ասկյա՛ր, — դարձավ նա յուր ընկերներից մեկին, — հայերի աղջիկների նման սիրունը աշխարհիս երեսին չկա, միայն ափսո՛ս, շա՛տ ափսոս, որսրանք մուսուլման չեն: — Ապա նա սկսեց վավաշոտ աչքերով նրան նայել, նրա գեղեցկությամբ զմայլվել... Անցան մի քանի րոպեներ, զարհուրանքի և տանջանքիրոպեներ, երբ հանկարծ դրսից լսվեցին սոսկալի աղաղակներ, վայնասունի ձայներ և սրերի հարվածներ... Երեքն էլ բաց թողին կույսերին և վեր թռչելով տեղերից՝ թրերը մերկացրին:

Այս իսկ միջոցին դուռը ճարճատյունով փշրվեց և այնտեղ երևացին Աշոտ Երկաթը և Դավիթը: Դավիթը նայեց աղջիկներին, նայեց մեծավորի ոտքերի տակ փռվածուշաթափ աղջկան և ճանաչեց յուր Աստղիկին: Սոսկալի ճիչ արձակեց և խելակորույս վրա ընկավ ու գրկեց նրան: Այդ միջոցին նրա գլխին շողաց արաբ մեծավորիկեռ թուրը, մի մազաչափ էլ և Դավթի գլուխը պիտի կես լիներ, երբ հասավ Աշոտ Երկաթը և տեղնուտեղը պառկեցրեց մեծավորին: Մյուս երկուսն էլ կատաղաբարվազեցին դեպի Աշոտ Երկաթը, բայց նրանք ևս արյունլվա գետին գլորվեցին, մինչդեռ դրսում՝ վանքի մեջ հայ կտրիճներն էին հունձ անում: Փոքր ժամանակ անցդադարեց կռիվը, թշնամիների մի մասը կոտորվել էր, իսկ մյուս մասը փախուստ էր տվել:

Աշոտ Երկաթը թողեց, որ Դավիթը նշանածից կարոտն առնի, իսկ ինքը մի կողմ քաշվեց, հրամայելով, որ բոլորը հանգստանան, որպեսզի կրկին ճանապարհ ընկնեն:Նա գիտեր, որ փախստականները կվերադառնան նոր ուժով, և այն ժամանակ ինքը ծուղակի մեջ կնկնի: Եվ չսխալվեց:

Դեռ Դավիթը կարոտը չէր առել Աստղիկից, դեռ նրա կտրիճները չէին հանգստացել և դեռ մութն ու խավարն իրարից նոր էին բաժանվում, արևելքում նոր էր մժժումարշալույսը, երբ արաբացոց մի ահագին խումբ շրջապատեց մեր կտրիճներին:

— Է՛, ամեն մեկիս տասից ավելի կընկնի, — ասաց Աշոտ Երկաթը, երբ տեսավ նրանց բազմությունը:

Եվ ժամանակ չտալով, որ յուր վրա հարձակվեն, հրամայեց առաջին հարձակումը գործել և շփոթեցնել արաբներին: Աղջիկներին հանձնեց հինգ զինվորի, որ զգույշպահեն և աշխատեն շուտով կռվատեղից հեռացնել: Եվ ապա նրանք ահագին դղրդյունով վազեցին արաբացոց վրա ու ճեղքելով նրանց շարքերը ճանապարհ բացինև սկսեցին խռնվելով ետ նահանջել: Արդեն բավական տեղ հեռացել էին, երբ Աշոտ Երկաթը նկատեց, որ զինվորներից մեկը ետ է մնացել և մի խումբ արաբներպաշարել են նրան, այնինչ ինքը հարվածում է աջ ու ձախ կոտորում և ուզում է հարթել յուր ճանապարհը: Բայց թշնամիները շատ-շատ են, զինվորը հոգնում է, հազիվ է կարողանում սուրը շարժել: Աշոտ Երկաթը ուզում է թռչել, օգնության հասնել նրան, բայց տեսնում է, թե ինչպես տաս-քսան մարդ, ետևից գրոհ տալով, բռնում են զինվորին, խլում սուրը և ամուր չվաններով կապկպում: Աշոտ Երկաթը աչքերը դարձնում է յուր խմբին, պտրում է մեկին, բայց չի գտնում: Նրա աչքըհետապնդում է աղջիկներին, Աստղիկին, ապա խոր հոգոց է հանում և ետ քաշվում:

Դավիթը չկար կտրիճների մեջ: Նա էր, որ գերի բռնվեց արաբներից, և խոր կսկիծ թողեց Աշոտ Երկաթի սրտում:

Այժմ ի՞նչ պիտի աներ խեղճ Աստղիկը առանց Դավթի:

ԻԳ

Աշոտ Երկաթը յուր կտրիճներով, խույս տալով Յուսուֆի անթիվ բազմությունից, կեսօրվա դեմ կանգ առավ Շիրակի դաշտավայրում, մի բլրի ստորոտում, որտեղիցերևում էր Արագած լեռան գագաթը, որ դեռևս ծածկված էր սպիտակ ձյունով:

Տղերքը սկսեցին ճաշի պատրաստություն տեսնել, այնինչ Աշոտ Երկաթը, թիկն տալով մի քարի, յուր պղտոր հայացքը զարկել էր դեպի Արագածի բարձունքները նլուռ մտորում էր: Ի՞նչ էր անցնում նրա մտքով, հայտնի չէր, միայն նա սաստիկ տխուր էր:

Նա նայում էր հեռուն, դեպի ձյունածածկ կատարը, դեպի Շիրակի ընդարձակ դաշտավայրը, ուր տիրում էր կատարյալ ամայություն, և նրա սիրտը հուզվում ուպղտորվում էր: Նա հիշում էր Շիրակի պտղավետությունը, նրա ցորենի փարթամ արտերը, այդ դաշտի շինականների ուրախ երգն ու պարը, նույն այդ դաշտը, որերբեմն Շարայի որկորն էր հագեցնում, այժմ ներկայացնում էր մի սրտաճմլիկ ամայություն...

Արդյոք ի՞նչ պիտի լիներ սրա վերջը...

Կարծես մահաբեր հուրը մի ակնթարթում կոտորել էր բոլոր բնակիչներին և ավերել այն բերրի ու պտղատու դաշտերը, որոնք ժիր ձեռքերի տակ պտղաբերում ուաճում էին...

Ապա նա փակում էր աչքերը, որպեսզի չտեսնի յուր երկրի ամայությունը, չվրդովվի սիրտը, բայց հենց այդ ժամանակ նրա հոգին պաշարում էին ավելի զարհուրելիմտքեր, որոնք փշաքաղում էին մարմինը:

Նա հայոց թագավոր էր, դյուցազն էր, հայր յուր ժողովրդին. նրա պարտքն էր խնամել, փայփայել և դարման անել այդ ժողովրդի բազմաթիվ վերքերին... բայց ի՞նչ էրանում ինքը, կարողանու՞մ էր արդյոք խնամել, գեթ ազատ պահել բազմաթիվ տառապանքներից: Ի՞նչ պիտի աներ մի դյուցազն, որի ձեռքն ու ոտքը շղթայել էին, որիկյանքի դեմ դավադրություններ և որոգայթներ էին լարում նույնիսկ հայ նախարարները, և դրանով չբավականանալով՝ միանալով թշնամու հետ՝ իրենց սուրը յուրդեմ էին դարձնում:

— Այո՛, — ասում էր ինքն իրեն Աշոտ Երկաթը, — վաղ թե ուշ ես կխորտակեմ հայ նախարարների եսամոլությունը, վաղ թե ուշ ես կհաստատեմ մի զորավորիշխանություն, որից կակնածեն մեր թշնամիները և այլևս չեն համարձակվի մեզ անհանգստացնել, բայց ինձ հարկավոր է մի կարճատև հանգստություն, որպեսզիկարողանամ այդ բանը հաջողեցնել, ապա թե ոչ ներկայիս անհնար է այդ:

Մի հոգևորականություն ունենք, որի գլուխ է կանգնած Հովհաննես կաթողիկոսը, որի միջոցով կարելի էր ահագին փոփոխություններ անել, ուժեղացնել օրինականթագավորությունը, բայց այդ գլուխն էլ միայն ողբով է անցնում յուր օրերը և յուր կյանքի ապահովության համար զանազան կողմեր թափառում... Ի՞նչ անեմ եսմիայնակ մի բուռ քաջերով: Ժողովուրդն է, հասարակ ժողովուրդն է, որ ուժ է կազմում. նրա մեջ է ազգի փրկությունը, բայց ներկայիս այդ ուժը այնքան տառապած է, այնքան խոցված, որ նախ պիտի դարմանել նրան և ապա միայն վստահ հենվել նրա վրա...

Վեր կացավ Աշոտ Երկաթը թիկն տված տեղից և շրջելով սկսեց ծրագրեր կազմել, թե ինչպե՞ս պիտի կարողանա յուր մտադրությունները ի կատար ածել և այդքանմանր իշխանություններից մի զորավոր մարմին կազմել:

Կերան, խմեցին, հանգստացան և փոքր ժամանակից հետո խումբը առաջ շարժվեց: Բայց Աշոտ Երկաթի մտքից դուրս չէր գալիս Դավիթը, նա մտածում էր միհնարքով ազատել նրան անհավատների ձեռքից: Աշոտ Երկաթը ափսոսում էր այդ մարդուն, որ հավատարմությամբ և քաջությամբ առաջինն է յուր կտրիճների մեջ:

Ազատած աղջիկներին և Աստղիկին Հռիփսիմեի վանքում տեղավորելով, մի քանի օրից հետո նա կրկին պտտում էր Մասյաց ստորոտներում, ուր կորցրեց Դավթին նամեն կերպ աշխատում էր նրա մասին տեղեկություններ հավաքել, բայց ոչ մի տեղից որոշակի ոչինչ չէր իմանում: Նա միայն լսում էր, որ գերիներից մի մասինանխնա կոտորում են, իսկ մյուսներին, որոնք քաջ և կորովի են, ուղարկում են Դվին՝ սպարապետի մոտ, ուր ամեն տանջանքներ են տալիս նրանց իրենց հավատիցխախտելու համար: Աշոտ Երկաթը մի փոքրիկ գումարտակ ջարդելուց հետո, բռնեց նրանցից մի քանի զինվոր և սկսեց հարցուփորձ անել:

— Ասա՛, անհավատ, դու տեղեկություն չունե՞ս Դավթի մասին, ու՞ր է նա, կենդանի է՞, թե մեռած՞:

Զինվորները լուռ էին, բայց խարազանի հարվածները նրանց խոսեցրին:

— Մի՛ վախեք, խոսեցեք, ես կընծայեմ ձեզ ձեր թշվառ կյանքը...

— Ո՞ր Դավիթը, այն որ գերվեց վանքի կռվի ժամանա՞կ:

— Այո՛, հենց նա:

— Նրան տարան Դվին, սպարապետի մոտ: Այնտեղ նրան մեր հավատի կբերեն: Այդպիսի քաշը ափսոս է, որ ձեր պիղծ հավատն ունենա:

— Լռի՛ր, անհավատ, նա այն մարդը չէ, որ յուր հավատն ուրանա:

— Տանջանքները նրան խելքի կբերեն:

— Ի՞նչ է, չե՞ս ուզում լռել: Ինչպես երևում է, կյանքը քեզ ձանձրացրել է, իմացիր ուրեմն, որ մենք էլ ենք ձեզանից տանջելու ձևերը սովորել: Տղե՛րք, — դարձավ նայուր զինվորներին, — սրանց գլխիվայր կախեցեք և մտրակների համը ցույց տվեք:

Զինվորները մերկացրին նրանց, ապա, գլխիվայր կախելով, պատրաստեցին ճիպոտները: Արաբ զինվորները դեռ լուռ էին և սարսափահար նայում էին ԱշոտԵրկաթին, արյունը կամաց-կամաց լցվում էր նրանց աչքերը, որոնք սկսում էին դուրս թափվել և սոսկալի կերպարանք ստանալ: Ճիպոտների հարվածներն իջաննրանց մերկ մարմնին, և արյունը սկսեց առատությամբ բխել վերքերից: Ցավը սոսկալի էր: Մինչ այդ նրանք լուռ էին, իսկ այժմ սկսեցին բառաչել և գթությունխնդրել: Ճիպոտների հարվածները դեռ շարունակվում էին:

— Գթությո՛ւն, խղճացե՛ք, — կանչում էին նրանք աղիողորմ ձայնով:

— Դադարեցրե՛ք, — ասաց Աշոտ Երկաթը, երբ լսեց նրանց աղիողորմ բառաչյունը և տանջանքը, քաջի սիրտը չդիմացավ տեսնելով յուր թշնամյաց սոսկալիտանջանքը:

ԻԴ

Արշալույսը նոր էր ուզում բացվել, արևելքում արդեն նկատելի էր լույսի թույլ շողշողմունքը, բոպե առ բոպե պարզվում, պայծառանում էր հորիզոնը, բայց խավարըդեռ տիրապետում էր երկրին: Բագրևանգի ս. Գրիգոր վանքի շրջակայքում տիրում էր խորին խավար, տեղ-տեղ միայն, թփերի ու մացառների մեջ լսվում էին միտեսակ թույլ ձայներ, արտույտները թափահարում էին թևերը և ապա նետի արագությամբ սլանում էին վեր և այնտեղ երգում իրենց տաղերը... Տխուր ու հուսահատէին այդ տաղերը:

Հենց այդ միջոցին ս. Գրիգոր վանքի բեմի առաջ, ինչպես մարմնացած արձան, ծունկ էր չոքել ծերունի վանահայր Տեր-Մարտիրոսը և ձեռքերը դեպի երկինք պարզածաղոթում էր… Անշքացած եկեղեցու բեմի վրա դրված էր Քրիստոսի

խաչելությունը, որի առաջ վառվում էր կանթեղը և թույլ լույսով լուսավորում խաչելությունն ուաղոթող ծերունուն:

Գերեզմանային լռությունը տիրում էր չորս կողմը:

Միայն երբեմն շարժվում էր ծերունի վանահոր ալեզարդ մորուքը, որի վրայով մերթընդմերթ գլորվում էին արտասուքի կաթիլները և թրջում քարե հատակը...

Ջերմ ու զգացված էր վանահոր աղոթքը, դա աղոթք չէր ձևի համար, ո՜չ. ծերունին մոռացած յուր գոյությունը, մոռացած աշխարհը, ուրախությունն ու տառապանքը, յուր ամբողջ էությամբ ամփոփվել էր այդ աղոթքի մեջ:

Հանկարծ նրա շրթունքները շարժվեցին, և մեռելային լռության մեջ լսվեց նրա ձայնը.

— Օ՜հ, տե՜ր, — ասում էր նա, — տուր ինձ, իմ տկար բազուկներին ուժ և իմ հոգուն՝ արիություն, որ ես կարողանամ ի կատար ածել իմ մտադրությունները... Անմեղժողովուրդը տառապում է, հալածվում անօրեններից քո սուրբ անվան համար, տուր ինձ կորով, որ ես կարողանամ մտնել ժողովրդի մեջ, ոգևորել նրան՝ քո խաչբձեռքիս, որ նա մի սիրտ, մի հոգի դարձած կռվի յուր հալածիչների դեմ... Տե՛ր, խնայիր քո ժողովրդին, խնայիր այդ տառապյալ ժողովրդին, միության և համերաշխության ոգի ներշնչիր նախարարներին, որ նրանք ձեռք մեկնեն օրինական թագավորին՝ Աշոտ Երկաթին և այդպիսով դուրս հալածեն թշնամիներին: Տե՛ր, խնայի՜ր մեզ... — Ապա նա նայում էր խաչելությանը, և հոգեկան բուռն ալիքները երևում էին նրա դեմքին:

Նրա աչքերը լցվում էին ոգևորությամբ, երակների մեջ կարծես վազում էր թարմ ու երիտասարդական արյուն, ծերության կնճիռները կարծես անհետանում էին նրադեմքից: Մի տեսակ գերբնական զորություն կամաց-կամաց մտնում էր նրա երակների մեջ:

Այդ իսկ միջոցին լուսո աղոտ լուսավորությունը տարածվել էր վանքի մեջ: Վանահայրը վերջին անգամ յուր «Հայր մերը» մրմնջաց, վերջին անգամ համբուրեցխաչելությունը և վեր թռավ տեղից կարծես 20 — 30 տարով ջահելացած:

Այդ միջոցին վանքի դուռը կամաց բացվեց և երևաց Տեր-Մարտիրոսի ծառան:

— Հա՜յր սուրբ, ձիերը պատրաստ են, — ասաց նա:

— Այս ռոպեիս, որդի, — ասաց վանահայրը և դուրս եկավ վանքից: Մի փոքր անց վանահայրը և յուր ծառան, հեծնելով ձիերը, թողին վանքը: Երկար ժամանակ նրանքառաջ էին գնում, մինչև որ կեսօրվա դեմ կանգ առան մի գյուղում, որ մի փոքր հանգստանան և ապա կրկին ճանապարհը շարունակեն:

Գյուղի մեռելությունը Տեր-Մարտիրոսի վրա սաստիկ վատ տպավորություն թողեց: Այստեղ-այնտեղ, գետնափոր խրճիթներից երբեմն երևում էին գլուխներ, որերկյուղով էին նայում ճանապարհորդներին:

Տեր-Մարտիրոսը կանգ առավ գյուղի մեջտեղը և իսկույն նրան շրջապատեցին գյուղացիները ու սկսեցին աջը համբուրել: Խեղճերը, նրա ալեզարդ մորուքիցխաբվելով, կարծում էին, թե եպիսկոպոս է շնորհ բերել իրենց գյուղը, ու նրանցից ամեն մեկը, ձիու սանձը բռնելով, խնդրում էր նրան իրենց տուն գնալհանգստանալու:

— Ո՞ւր է գյուղի քահանան, — հարցրեց Տեր-Մարտիրոսը:

— Հա՛յր սուրբ, գյուղի քահանային դեռ անցյալ տարի սպանեցին անօրենները, մենք այժմ քահանա չունենք:

Տեր-Մարտիրոսը ոչինչ չպատասխանեց, իջավ ձիուց և մտավ հանդիպակաց խրճիթը: Շինականները բոլորը տխուր և հուսահատ էին, խորին թախիծը պատել էրնրանց դեմքերը, նրանք և իրենց, երեխաները մերկ ու բոկոտն էին, մի քանի ցնցոտիներ միայն ծածկում էին նրանց մարմինը:

— Ինչպե՞ս եք, զավակնե՛րս, — հարցրեց Տեր-Մարտիրոսը, թեև համոզված էր, որ տրտունջից ավելի ոչինչ չպիտի լսի:

— Է՛հ, հա յր սուրբ, ինչպես տեսնում եք՝ սոված, քաղցած, մերկ և տանջված: Ամեն բան խլեցին մեզանից անօրենները, ամեն բան տարան, ամեն անգթությունգործեցին, մեր մեջ էլ չմնաց ուժ, զորություն տանելու այսչափ տառապանքները: Խոփը ժանգոտեց, դաշտերնիս մնաց առանց վարելու, առանց ցանելու. հացերնիսսկսում է պակասել: Մեր տերը դուք եք, եթե դուք օգնություն չանեք, մենք կորած ենք:

— Մի՛ հուսահատվեք, զավակնե՛րս, հույսներդ դրեք աստծո վրա: Նա է գթածը և ողորմածը, կարճ ժամանակ կանցնի և ամեն տառապանքներ կվերջանան, հնազանդեղեք միայն ձեր թագավորին, կաթողիկոսին, ահա ես գնում եմ

ընկնելու Աշոտ Երկաթի և կաթողիկոսի ոտքերը, որ մի ճար անեն ազգի փրկության համար:

— Օրհնյալ լինիք, հա՛յր սուրբ, որ կանգնած եք ժողովրդի համար և նրա մասին եք հոգում:

Այդ ժամանակ նրա համար բերեցին բոքոնի կտոր և մի քանի խաշած ձու:

— Ներողություն կանեք, հա՛յր սուրբ, գյուղի մեջ սրանից ավելի բան չգտանք ձեզ պատվելու, — ասաց տան տերը, որ մի պատկառելի ծերունի էր:

Հայր սուրբը ժպտաց:

— Ի՞նչ հարկավոր է ինձ համար շքեղ ճաշեր, քանի որ իմ ժողովուրդը տառապում է: Ժողովրդի թե՛ ցավը և թե՛ ուրախությունը մերն է, մենք ավելի՝ սոված պիտիմնանք, երբ տեսնում ենք, որ մեր ժողովուրդը սոված է:

Տեր-Մարտիրոսը վերջացրեց համեստ ճաշը, քաջալերեց, հույս տվեց շինականներին և ապա ճանապարհը շարունակեց:

ԻԵ

Դավթին Մասիս սարի ստորոտում ձերբակալելուց հետո շղթայեցին և ձգելով վանքի ախոռներից մեկը՝ պահապաններ կանգնեցրին: Անցավ մի ամբողջ օր, բայցԴավիթը դեռ մի պատառ հաց չէր դրել բերանը, թեև հոգեպես ամենևին ընկճված չէր. ի՞նչ փույթ, թե իրեն մաս-մաս կկտրատեն անօրենները, գոնե ազատեցԱստղիկին, վերջին անգամ տեսավ նրան: Յուր դրությունը մոռացած նա միայն Աստղիկի վրա էր մտածում, չնկատեց անգամ, թե ինչպես ախոռի դուռը բացվեց և միզինվոր նրա առաջ դրեց խեցե ամանով կեղտոտ ջուր ու հացի փշրանքներ:

Արաբ զինվորը մի փոքր կանգ առավ և տեսնելով նրա մտախոհ դեմքը՝ ասաց.

— Հը՛, անհավա՛տ շուն, ի՞նչ ես մտածում, ու՞ր գնաց քո քաջությունը, որ մահիցդ առաջ այդպես սարսափի մեջ ես ընկել:

Դավիթը ոչինչ չպատասխանեց, ապա տեսնելով հացի կտորտանքը և խեցիով ջուրը, ժպտաց:

— Հ՛ը, ի՞նչ ես ժպտում, գոհ չե՞ս դրանով. ձեզ նման շներին սոված պետք է սպանել, ո՛չ թե հաց ու ջուր տալ:

— Չե՞ս կորչի այստեղից, — ասաց Դավիթը, ցանկանալով վերջ դնել նրա վայրահաչությանը, և հրացայտ աչքերը ուղղեց զինվորի վրա:

— Սպասի՛ր, շուտով քո կաշին էլ կքերթենք, ափսոս միայն, որ մեր իշխանը թույլ չի տալիս քո դատաստանը այստեղ անել, բայց վնաս չկա, Դվինում էլ չես ազատվիմահից, — ասաց զինվորը և դուրս գնաց:

Չանցավ մի քանի ժամ, և ահա նա զգաց, որ ինչ-որ մեկը աքացի է տալիս իրեն: Շփոթված վեր թռավ տեղից, սուրը միտն ընկավ և ձեռքը անգիտակցորեն դեպի գոտինտարավ, բայց սուրը չկար. շղթաներն էին միայն զնգզնգում: Խելքի եկավ նա, յուր գերությունը մտաբերեց և հաղաղած աչքերը շուրջը դարձրեց: Կանթեղի թույլլուսավորության տակ նկատեց հինգ թե վեց զինվոր՝ սրերը և նիզակները ձեռքներին, որոնցից մի քանիսը իր վրա ընկնելով՝ սկսեցին իրեն չվաներով պինդկապկապել. շղթաներից զոհ չէին, պարաններով էլ էին կապում: Դավիթը լուռ էր և չէր դիմադրում:

Կապկապելուց հետո նրան ձի նստեցրին և հիսուն ձիավորներով տարան: Մթության մեջ Դավիթը ճանապարհներին էր նայում... հասկացավ, որ իրեն տանում ենԴվին, ուր նստած էր Յուսուֆը: Զգում էր նա, որ Դվին ընկնելուց հետո էլ փրկության հույս չկա, ուստի ուժ էր անում պարաններն ու շղթաները կտրատելու, բայցնրանք շատ էին ամուր: Ա՛խ, եթե ազատ լիներ և սուրբ ձեռքին, այն ժամանակ վա՛յ իրեն շրջապատողներին, հոգ չէր, թե դրանք հիսուն հոգի էին, իսկ ինքը՝ միայնակ:

Մյուս օրը, երեկոյան դեմ նրանք Դվին մտան: Դավիթը սպասում էր տաժանելի չարչարանքների և խոնավ ու մութ բանտի, բայց շատ զարմացավ, երբ ետ արինչվանները՝ թողնելով միայն երկաթե շղթաները և մի մաքուր սենյակ տանելով՝ պատվական ճաշ հրամցրին:

— Այս ճաշը դեռ ուտենք, հետո տեսնենք, թե ի՞նչ է դուրս գալիս: Բայց այս ընդունելությունը լավ նշան չէ, — մռմռաց ինքն իրեն Դավիթը: Այնքան դուր եկավ ճաշը, որքիչ մնաց ամաններն էլ հետը ուտեր:

Անցավ մի քանի օր, և ահա նրա սենյակի դուռը բացելով ներս մտավ մի մարդ՝ սպիտակ չալմայով: Այցելուն մոտեցավ Դավթին և նստելով նրա մոտ՝ ասաց.

— Ողջո՛ւյն քաջին. մեծ սպարապետ Յուսուֆը, լսելով քո քաջությունները, հիացած է մնացել: Թող ալլահը ավելի ուժ և կարողություն տա

բազուկներիդ: Բայց դութո՛ղ քո պիղծ հավատը և ընդունիր Մուհամմեդի սուրբ ու ճշմարիտ կրոնը, և այն ժամանակ Յուսուֆը աչքի լույսի պես կպահի քեզ ու մեծամեծ ընծաներ կտա:

— Հա՛, հա՛, հա՛ — մի քրքիջ արձակեց Դավիթը, — ա՛յ թե ինչի համար էր Յուսուֆն ինձ պատիվներ տալիս, իսկ ես այնքան հիմար էի, որ այդ չէի էլ մտածում:

Բարկության ներկը անցավ մոլլայի դեմքով, բայց նա զսպեց իրեն:

— Գյավուրնե՛ր, մինչև ե՞րբ պետք է մոլորված մնաք և չճանաչեք ճշմարիտ հավատը, մի՞թե չեք տեսնում ձեր երկրի ավերմունքը, ժողովրդի տառապանքը, որ կրկինայդպես համառում եք:

— Մոլլա՛, լավ կլինի այստեղից պոչդ հավաքես և գնաս, եթե չես ուզում, որ փորիդ աքացի տամ: Գնա, հայտնի Յուսուֆին՝ ինչ անելու է, թող անի, ես նրանցից չեմ, որմահից վախենամ և ընդունեմ ձեր պիղծ հավատը:

Մոլլան, նզովելով Դավթին, դուրս գնաց սենյակից: Նույն երեկոյան նրան ձգեցին մութ ու խոնավ բանտը՝ երկու օրը մի անգամ տալով ցամաք հաց ու ջուր: ԲայցԴավիթը չէր հուսահատվում: Նա պատրաստվում էր ընդունելու ամեն տեսակ չարչարանք, հիշում էր Սմբատ արքայի տանջանքները, երկնային պսակը և ավելիոգևորվում:

Անցավ մի քանի ամիս, և նա դեռ տանջվում էր բանտի մեջ: Եվ ամեն անգամ, երբ գալիս էին յուր մոտ Յուսուֆի ուղարկած մարդիկ, որոնք խոստանում էին մեծամեծպարգևներ՝ միայն թե հավատը ուրանա, կոպտությամբ ետ էր մղում նրանց: Բայց բանտի խոնավությունը և սննդի պակասությունը ազդում էին նրա առողջությանվրա, օր ավուր այդ աժդահա մարդը հալվում էր ու մաշվում:

Տարան մի անգամ էլ Յուսուֆ սպարապետի մոտ, որ գրկեց քաջին, ոսկի և իշխանություն խոստացավ նրան, եթե հավատը ուրանա, բայց Դավիթը կրկին անդրդվելիմնաց: Յուսուֆը բարկացավ և հրամայեց մյուս գերիների հետ գլխատել նաև նրան: Դավիթը վերադարձավ բանտ այն հույսով, որ վաղը առավոտյան կարժանանանահատակության պսակին:

Բայց գիշերը շատ երկար էր տևում, անցնում էր ժամանակը դանդաղ ինչպես հավիտենականություն: Դավիթն արթուն էր և սպասում էր արշալույսին, բայց բանտիմիակ լուսանցքը դեռ չէր լուսավորվում աղոտ լույսով, խավար էր

շուրջը, խավար էր նրա սրտի մեջ, կսկիծը, վիշտը, տառապանքը, դառն ու անմխիթարհիշողությունները մորմոքում էին նրա հոգին...

Եվ հանկարծ խորին լռության մեջ նա մի սուր ձայն է լսում, որ փշաքաղում է նրա մարմինը: Նա գլուխը վեր է բարձրացնում: Երկաթապատ բաց պատուհանից լսվումէ գորտի սուր կռկռոցը, որ մոտենալով պատուհանին, յուր վերջին ողբն է կարդում: Դավիթը սարսռում է և երանի տալիս գորտին, որ այնպես ուրախ կռկռում էր: Նասիրում էր այդ գորտին, որ այնպես հաճախ յուր նվագներն էր սարքում և յուր վերջին ժամերը մխիթարում: Բայց շուտով գորտն էլ լռեց, ու կրկին տիրեց լռությունը:Ա՛խ, ուր է թե շուտ լուսանար: Նա ծունկ չոքեց և աղոթել սկսեց: Ահա բանտի դռները բացվեցին, և երևաց դահիճը: Սառնասրտությամբ նայեց նա դահճին և հետևեցնրան: Երբ հասավ այն հրապարակին ուր պիտի կատարվեր յուր գլխատումը, սոսկալի պատկերը ցնցեց նրա ուղեղը: Քառասուն, թե հիսուն հոգի մարդ, կին, աղջիկ, ռամիկ թե իշխան, պինդ շղթաներով կապած բոլորաձև մի շրջան էին կազմել, որոնց գլխներին, վայրենի գազանների նման պտտվում էին դահիճները՝ մերկ սրերըձեռքներին:

Զարհուրանքը պատեց նրան, երբ տեսավ գերյալների գունատ և սոսկումով պատած դեմքերը, իսկ այդ գերիների մեջ յուր կրտսեր
եղբորը՝ Գուրգենին: Երկուեղբայրների հայացքները հանդիպեցին իրար, և նրանք վրա վազելով փորձեցին գրկել միմյանց: Դահիճները, Յուսուֆի հրամանով, սկսեցին իրենց գործը: Շրջանումկանգնողներից մեկի արյունաթաթախ գլուխը վայր գլորվեց, վերջին անգամ բաց ու խուփ եղան սպանվածի աչքերը և հետո հառվեցին դատապարտյալների վրա:

Սոսկումը և զարհուրանքը փշաքաղեցին խեղճ գերյալներին, որոնք մեկ-մեկ ընկնում էին ցած և օրհնելով աստծուն ավանդում հոգիները... Հերթը հասավ Դավթին:

— Ուրացիր քո պիղծ հավատը և ազատիր քեզ, — կրկնեց Յուսուֆը:

— Ո՛չ, չեմ ուրանա հավատս, ես քրիստոնյա եմ:

Յուսուֆը նշան տվեց, և դահիճը մոտեցավ Դավթին սա վերջին անգամ նայեց յուր եղբորը և նկատելով նրա մահվան գունատությունը, երկյուղ կրեց, թե նակթուլանա յուր հավատից, ուստի դիմելով նրան, ասաց.

— Եղբա՛յր իմ, զոհիր քեզ Քրիստոսի սիրույն, ինչպես նա զոհեց յուր կյանքը մեզ համար:

Գուրգենը առաջ ընկավ և ներկայացրեց վիզը դահճին:

Դահիճը կտրեց նրա վիզը և քիչ հետո Դավթին գլխատեց: Ընկավ քաջի գլուխը առանց մի ձայն, մի տրտունջ հանելու...16

ԻԶ

Ինչ էր անում այդ միջոցին հայոց Հովհաննես կաթողիկոսը, որ կարող էր մեծ դեր խաղալ յուր ահագին ազդեցությամբ:

Նա անդադար փոփոխում էր յուր տեղը և վերջին ժամանակները գտնվում էր վրաց երկրում, Ատրներսեհի հովանավորության ներքո և այնտեղից ողբում ազգիթշվառությունը: Մի երեկո նրան հայտնեցին, թե Բագրևանդի սուրբ Գրիգոր վանքի վանահայրը ցանկանում է տեսնել իրեն:

Կաթողիկոսը հրամայեց ընդունել նրան:

Ներս մտավ Մարտիրոս հայրը և ծունկ չոքելով կաթողիկոսի առաջ՝ համբուրեց աջը:

— Վեր կաց, ծերունի՛, և պատմիր, թե ի՞նչ լուր ունիս դու կարոտ հայրենիքից և թե ի՞նչը բերեց քեզ ինձ մոտ:

Մարտիրոս հայրը վեր կացավ և սկսեց պատմել այն թշվառությունները, որոնց ենթակա էր եղել ազգը, ապա համարձակ դիմելով կաթողիկոսին ասաց.

— Ազգը ձեզ, վեհափա՛ռ տեր, և Աշոտ Երկաթի՛ն է կարոտ: Աշոտ Երկաթը միայնակ է և ձեր օգնության է կարոտ, դուք միայն գլուխ պիտի կանգնեք, կոնդակներուղարկեք ամեն կողմ և ոգևորեք ազգը: Ձեր պարտքն է ազգի մեջ ցրիվ տված ուժերը միացնել. հոգևոր գլուխը դո՛ւք եք, դո՛ւք պիտի քարոզեք նրանց միություն նհամերաշխություն, ապա թե ոչ՝ ազգը կորած է. կկորչի ազգը, կկորչի և կաթողիկոսությունը: Մեր թշնամիները հողի համար չեն կռվում, այլ կրոնի, հավատի համար, այդ է արաբաց ջանքը: Մեր թշնամիները շատ լավ գիտեն, որ եթե մենք կրոնով միանանք արաբներին կամ հույներին, մեր երկիրն էլ նրանցը կդառնա:

Պետք է հիշենք հինգերորդ դարը, այդ կրոնական պատերազմը, որ Վարդան Մամիկոնյանը յուր քաջերով մղեց Հազկերտի դեմ: Հինգերորդ դարում պարսիկներն էինաշխատում մեր հավատը խախտել, իսկ այժմ՝ արաբներն ու հույները: Հինգերորդ դարում էլ ունեինք դավաճաններ՝ Վասակներ և Մերուժաններ, այժմ էլ

ունենքԳագիկներ և Աշոտներ... Հինգերորդ դարում էլ ունեինք քաջ զորապետ, ինչպիսին՝ երևելին Վարդանն էր, այժմ էլ ունենք Աշոտ Երկաթ, օրինական թագավոր, որշվարել մնացել է և երկնքից է օգնություն սպասում: Այժմ մեզ միայն մի բան է պակասում, որ նմանվենք ճիշտ հինգերորդ դարին, այդ Ղևոնդ երեցի պակասությունն է, որ չկա մեր մեջ: Ու՞ր է այժմ Ղևոնդը, որ յուր անուշաբույր քարոզներով ոգևորի մեզ — չկա նա: Դու՛ք վեհափա՛ռ տեր, որ գլուխ եք կանգնած հոգևորականության, ձեր անձնական օրինակով պիտի ոգևորեք ազգը, որ նա չկորչի, նա ձե՛զ է սպասում...

Կաթողիկոսը լուռ լսում էր նրան: Վերջացրեց վանահայրը, իսկ կաթողիկոսը դեռ լսում էր. նա կարծում էր, թե դեռ հայր Մարտիրոսը խոսում է և յուր հոգվո մեջթողնում մի-մի սուր սլաք: Հիրավի կաթողիկոսի հոգու մեջ բացվեցին հին-հին վերքեր և հուզեցին թշվառ ծերունուն... Այդ րոպեին նա ազգի ցավերով էր ցավում, նրատառապանքներով տառապում, բայց միևնույն ժամանակ զգում էր, որ բավական չէ միմիայն լալ, ողբալ, հարկավոր է նաև ցավերին դարման անել, վերքերը բուժել:Մարտիրոս հոր խոսքերը սուր սլաքի նման ցցվեցին իր սրտում և, դիմելով նրան, ասաց դողդոջուն ձայնով.

— Այո՛, ծերուկ, ես գլուխ եմ կանգնած ազգի, բայց մինչև օրս միայն ցավերով եմ անցկացրել օրերս: Գնա, որդի՛, դու էլ մտիր ժողովրդի մեջ և քարոզիր նրանց, ոգևորիր նրանց երկնային լույսով, իսկ ես, ինչքան թույլ կտան իմ տկար ուժերը, կընկնեմ նախարարների ոտքերը, կաղաչեմ, կպաղատեմ և կհաշտեցնեմ նրանցիրար հետ, որ պաշտպանեն օրինական թագավորին:

Մարտիրոս հայրը դուրս եկավ կաթողիկոսի սենյակից գոհ սրտով և համարյա վազելով դեպի յուր օթևանը, դարձավ ծառային և ասաց ուրախ-ուրախ.

— Ծառո՛ւկ, շտապով պատրաստիր ձիերը, մենք իսկույն պետք է ճանապարհ ընկնենք:

— Ի՞նչ կա, հա՛յր սուրբ, որ այդպես շտապում եք, հարկավոր է մի փոքր հանգստանալ, — պատասխանեց ծառան զարմացած նրա այլայլված և ոգևորված դեմքըդիտելով:

— Պետք է շտապել, որդի՛ս, պետք է շտապել, մենք շատ գործ ունենք կատարելու, ժամանակը շատ սուղ է:

Ծառուկը գլուխը քորեց և լուռ գնաց ձիերը պատրաստելու:

Կարճ ժամանակից հետո նրանք իրենց երեսները դեպի Արշարունիք դարձրած մտախոհ առաջ էին գնում:

Ի՞նչ էր մտածում Տեր-Մարտիրոսը, հայտնի չէ, միայն թե ամեն մի գյուղում երկար կանգ էր առնում, քարոզներ խոսում, ոգևորում և նրանց միջից զենք բանեցնողերիտասարդներից խմբեր կազմելով, կարգում էր նրանց վրա մի-մի մեծավոր և ապա շարունակում ճանապարհը...

ԻԷ

Ցուրտ ձմեռը վրա հասավ: Փչեցին սառը քամիներ, սար ու ձոր ձյունով ծածկեցին և սառցե հաստ կեղևով պատեցին Հայաստանը: Բուքը սկսեց ձյան հետ խաղալ՝ պար բռնելով և անախորժ ոռնալով... Վատ էր այդ ժամանակ խեղճ տառապյալ ժողովրդի դրությունը, որ հենց նոր էր շունչ քաշել սովի ձեռքից և այժմ ցուրտսառնամանիքի դեմ էր կռվում:

Առավոտ էր: Արևը նոր էր դուրս եկել և յուր ճառագայթները սփռել սպիտակ տարածության վրա:

Այդ միջոցին Արշարունիք գավառից դեպի Շիրակ տանող ճանապարհին երևացին մոտ երկու հարյուր հետիոտն ուղևորներ, որոնք չնայած ցրտի սաստկության, ուրախ զրույց անելով իրար հետ, առաջ էին գնում: Կորովի և քաջ տղամարդիկ էին դրանք, բայց ամենքն էլ գյուղական պարզ հագուստներով և մորթե ահագինգլխարկներով: Նրանք ամենքը զինված էին զանազան տեսակ զենքերով, նրանցից ոմանք սրեր, ոմանք էլ երկայն նիզակներ ունեին: Նրանց առջևից գնում էր ոտքիցգլուխ զինված մի հաղթանդամ երիտասարդ, որ շարունակ խոսում էր յուր հետ քայլող ծեր հոգևորականի հետ:

— Հա՛յր սուրբ, ի՞նչ ես կարծում, կարո՞ղ է արդյոք կաթողիկոսը հաշտեցնել մեր իշխաններին և նրանցից միացյալ ուժ կազմել, — հարցրեց խմբի առաջնորդը կողքիցգնացող հոգևորականին, որ մեզ ծանոթ վանահայր Մարտիրոսն էր:

— Ես հույս ունիմ, իշխա՛ն, — պատասխանեց Մարտիրոս հայրը, — մեծ է աստծո զորությունը, կգա ժամանակ, երբ նրանք կհասկանան իրենց բռնած կորստաբերդիրքը և կմիանան: Մեզ մի մարդ էր հարկավոր, որ այդ բանին գլուխ կանգներ, քարոզեր միություն, և այդ մարդը կաթողիկոսն է: Նա մեծ բան կարող է անել, եթեգործ դնի յուր բոլոր ճարտարությունը:

— Դժվա՛ր: Այն դիրքը, որ այժմ բռնել են, և այն լարված հարաբերությունը, որ նախարարներն ունեն իրար հետ, համարյա թե անկարելի են անում միությունը:

— Ինչո՞ւ չպիտի միանան, քանի որ այդ իրենց շահն է պահանջում: Մի՞թե նրանք չեն հասկանում, որ եթե չմիանան, այն ժամանակ արտաքին թշնամին մեկ-մեկկոչնչացնի նրանց:

— Եսականությունը և անձնասիրությունը այն աստիճան զարգացած է նրանց մեջ, որ նրանք այդ մասին ամենևին հոգս չեն անում: Նրանց միակ մտածմունքն այն է, որ իրենք հանգիստ լինեն, որսի գնան, քեֆ անեն և իրար ոտքի տակ փորելով՝ իրար ձեռքից հողերը հափշտակեն:

— Ո՞ր մեկ օրինակը ասեմ քեզ: Գագիկ Արծրունին, որ բռնությամբ թագավորությունը հափշտակեց, այժմ ո՞վ գիտե, թե ինչ է մտածում: Աշոտ սպարապետը՝ ԱշոտԵրկաթի հորեղբոր որդին, որ նստած է Դվին՝ Յուսուֆի մոտ, հարմար ժամանակի է սպասում, որ հափշտակի օրինական գահը: Եվ վերջապես Գուգարաց, Տայոց, Սյունաց և հազար ու մի մանր-մունր իշխաններ, որոնք չեն ուզում ճանաչել Աշոտ Երկաթին: Ի՞նչ պիտի լինի Աշոտ Երկաթի դրությունը, եթե դրանք կրկինշարունակեն իրար դեմ և Աշոտ Երկաթի դեմ զինվել:

— Ի՞նչ պիտի լինի — ոչի՛նչ. թող շարունակեն մինչև որ իրենց պատիժը կստանան: Թող Աշոտ Երկաթի կողմը ժողովուրդը լինի, ահա այս կտրիճները, որոնց մեջն էուժը,— ասաց Մարտիրոսը և ցույց տվեց իրենց հետևող խմբին:

— Շատ լավ ես ասում, հա՛յր սուրբ, իսկ եթե նրանք սկսեն և դրանց արգելք դնել, այն ժամանակ ի՞նչ դուրս կգա միայն Այրարատյան երկրի մի բուռ ժողովրդով, որառանց այն էլ հլու հպատակ է Աշոտ Երկաթին:

— Իսկ ի՞նչ ենք շինում մենք, կաթողիկոսը: Մենք մեր տերունական խաչով ոտքի կկանգնեցնենք ամբողջ ազգը և ճանաչել կտանք օրինական թագավորին, այնժամանակ վա՛յ իշխաններին, վա՛յ մատնիչներին, — պատասխանեց Մարտիրոս հայրը: Եվ երկուսն էլ լուռ կացան:

Օրն արդեն թեքվել էր, երբ նրանք հասան մի գյուղ, որի գետնափոր խրճիթները հազիվ էին երևում ձյան տակից: Նրանք կանգ առան: Հենց այդ միջոցին խրճիթներիցդուրս թափվեցին մարդիկ, որոնք լուռ կանգնեցին իշխանի և Մարտիրոս հոր շուրջը:

— Հը՛: Որդի՛ք ինչպե՞ս եք, — հարցրեց Մարտիրոս հայրը:

— Գոհություն աստծո, լավ ենք, հա՛յր սուրբ, և մեր տղաներն էլ պատրաստ են ձեր հրամանը կատարելու, — ասաց գյուղացիներից մեկը, որ ըստ երևույթին գյուղիմեծը պիտի լիներ:

— Շատ բարի, շատ լավ, հրամայիր թող գան, միանան այս կտրիճների հետ:

— Տղա՛յք, գնացեք, մի փոքր հանգստացեք և ապա պետք է ճանապարհներս շարունակենք, — ասաց իշխանը դիմելով յուր խմբին, իսկ ինքը հայր սուրբի հետուղղվեց դեպի գյուղի մեծավորի տունը: Դեռ մի քանի քայլ չարած նրանց հանդիպեց երեսուն մարդուց բաղկացած մի խումբ, որոնք տեսնելով հայր սուրբին, ակնածությամբ գլուխները մերկացրին:

— Ապրեք, զավակնե՛րս, այժմ գնացեք մի փոքր հանգստացեք մինչև որ ձեզ հրաման կտան մեզ հետ ճանապարհ ընկնելու, — ասաց Մարտիրոս հայրը այդ խմբին, որը եկել էր միանալու նրանց և ապա դառնալով դեպի գյուղի մեծավորը, ասաց.

— Ապրե՛ս, լավ խումբ ես պատրաստել:

Նրանք մտան խրճիթ և սկսեցին համեստ ճաշը վայելել: Խոսակցության նյութը Աշոտ Երկաթն էր, որին օգնության էին գնում նրանք: Հանկարծ գյուղացիներից մեկընները ընկավ և լեղապատառ կանչեց.

— Հա՛յր սուրբ, մենք կորանք, հեռու, գյուղի սահմանում երևում են ձիավոր մարդիկ, վախենում եմ, որ Յուսուֆի գունդը լինի:

— Մի՛ վախենաք, որդի՛ք, — ասաց հայր սուրբը, այժմ այստեղ երկու հարյուրից ավելի զինված մարդ ունենք, սրանք չորս հարյուր Յուսուֆի զինվորներ արժեն:

Ապա իշխանն ու Մարտիրոս հայրը դուրս եկան և սկսեցին դիտել:

Հեռու, գյուղի հորիզոնում, սպիտակ ձյան վրա մի քանի կետեր էին երևում, որոնք արագությամբ դեպի գյուղն էին շարժվում: Կասկած չկար, որ դրանք ձիավորներ են, որոնցից մի քանիսը առաջ էին ընկել, կարծես շուտ հասնելու գյուղը, իսկ մի մեծ սև կետ հետևիցն էր գալիս:

— Է՛, հոգ չէ, — ասաց իշխանը, երբ նրանց խմբի քանակությունն աչքով որոշեց, — հարկավոր է միայն մեր տղայոցը խումբ-խումբ տեղավորել խրճիթներում և

լուռսպասել, երբ նրանք միամիտ ներս կխուժեն իրենց ասպատակությունն սկսելու, այն ժամանակ մենք կկտրենք նրանց գլուխները:

Խմբին պատվերներ տվին, իսկ իշխանը քսան մարդով մի խրճիթում թաքնվեց, որ հանկարծակի հարձակվելով նրանց վրա՝ պակասն էլ ինքը լրացնի:

Գյուղը լուռ էր: Արաբաց խումբը մոտենում էր: Նրանց ձիերը քափ ու քրտինք էին կտրել: Մերկ սրերը հանած նրանք մտան գյուղ: Գյուղի մեռելությունը արաբացիրոսակներին զարմանք պատճառեց: Մի խումբ շներ միայն հալածում էին նրանց, ոչ մի մարդ չէր երևում:

— Անհավատները բոլորն էլ կոտորվել են, — ասաց մի վայրենի դեմքով մարդ, որ ըստ երևույթին խմբի մեծավորն էր:

— Տղե՛րք, իջեք ձիերից և դուրս քաշեցեք հայերին հավաբներից, — դարձավ նա խմբին և ինքը իջնելով ձիուց հանդիպակաց խրճիթը դիմեց, որի դուռը փակ գտավ:

Մի ակնթարթում խումբը ցրիվ եկավ գյուղի մեջ և ամեն մեկն աշխատում էր շուտ մտնել խրճիթները և ավարի լավ պատառները ինքը վերցնել:

Հանկարծ ամեն կողմից լսվեցին վայնասունի, ճիչի և հայհոյանքի ձայներ, և քիչ հետո արաբաց խումբը դեպի յուր ձիերն էր վազում: Բայց հենց այդ միջոցին վրահասավ Գևորգ իշխանը և յուր կտրիճներով սկսեց նրանց ճանապարհը կապել: Արաբները կռվում էին հերոսաբար, բայց նրանց փրկություն չկար: Դուրս թափվեցիննաև հայոց մնացած խմբերը: Չանցավ կարճ ժամանակ, և երեք հարյուրի չափ ընտիր ձիեր և այդչափ էլ զենք ու զրահ մնաց հայ կտրիճների ձեռքին, որոնքուրախությունից խելքներն էին կորցրել: Աստված ինքը հասցրեց նրանց ձիեր և զենք, որոնց այնքան կարոտ էին:

Արևն արդեն մայր էր մտնում, ուստի ուշ լինելու պատճառով խումբը որոշեց գիշերը գյուղում անցկացնել, լավ հանգստանալ, կազդուրվել և ապա առավոտյան կրկինճանապարհը շարունակել:

Բայց երբ լուսացավ, թանձր մշուշը պատել էր ամբողջ գյուղը, մի քանի քայլի վրա ոչինչ չէր երևում: Չնայած մառախուղին՝ խումբը ձիեր հեծած, կազմ և պատրաստէր ճանապարհ ընկնելու: Երբ դուրս եկան իշխանը և հայր սուրբը՝ խումբը վերցրեց գլխարկները:

Մարտիրոս հայրը նայեց այդ քաջերին և ժպտաց: Մառախուղի մեջ ծածանվում էր կարմիր դրոշը՝ Բագրատունյաց խաչանիշ նշանով: Ապա նա պահպանիչ ասաց, և խումբը շուտով անհետացավ թանձր մշուշի մեջ...

Գյուղի մեծ ու փոքրը, կանայք ու ծերերը երկար ժամանակ դեռ նայում էին նրանց ետևից և օրհնում նրանց ճանապարհը: Նրանք դեռ հեռվից, մառախուղի մեջ, տեսնում էին ծածանվող դրոշակը, որ այնպես սիրուն սազ էր գալիս այդ փոքրիկ խմբին:

— Աջն ու խաչը ձեզ պահապան, — կրկնեցին գյուղացիները, երբ անհետացան նրանց աչքից խումբն ու դրոշակը, և ապա ամեն մարդ յուր խրճիթը մտավ:

Այդ ժամանակ սկսեց ձյունը, Հայաստանի խոշոր և փաթիլ-փաթիլ եկող ձյունը:

ԻԸ

Գագիկ Արծրունին դժգոհ էր յուր վիճակից: Նախիջևան քաղաքը առնելով նրա սիրտը չէր գոհացել: Նա ուրիշ մտադրություններ ուներ յուր երկրի սահմաններըընդարձակելու և երկիրը ապահովելու համար, բայց այդ իրեն չէր հաջողվում: Յուսուֆի հրոսակները ողողում էին նաև Վասպուրականը և ոչ մի ռոպեհանգստություն չէին տալիս նրան, ու ստիպված նա էլ Աշոտ Երկաթի նման լեռներն ու ամրոցներն էր քաշվում և հանկարծակի հարձակվում թշնամու գնդերի վրա:

Այդ տեսակ երերուն դրության մեջ էր Գագիկ Արծրունին, երբ Հովհաննես կաթողիկոսից օրհնության կոնդակ ստացավ, ուր կաթողիկոսը հրավիրում էր նրան գնալՏարոն, նախարարների ժողովին ներկա գտնվելու և ազգի դրության մասին խորհրդակցելու:

Գագիկը մերժեց այդ հրավերը, քանի որ ինքը, Վասպուրականի թագավոր լինելով, նախ՝ ոչ ոքից կախում չուներ և երկրորդ այդ ժողովում իրեն համար ոչ մի շահ չէրտեսնում: Նա չէր սիրում Բագրատունյաց ցեղը, և կույր նախանձը խեղդում էր նրան: Ամեն կերպ նա ջանում էր նսեմացնել այդ ցեղը, հավատացած լինելով, որ եթերնկնեին Բագրատունիք, Արծրունյաց ցեղը պիտի գլուխ կանգներ և ձեռք գցեր Հայաստանի թագավորական գահը: Նա հավատացած էր, որ Բագրատունյաց ցեղն էյուր արգելքը, հետևապես Աշոտ Երկաթի դեմ պիտի դարձնե այդ հարվածը, բայց յուր այդ զայրույթն ու նախանձը ոչ մի կերպ չէր արտահայտում, որպեսզի աչքիչընկնի և այդպիսով գործը չփչացնի: Նա գործում էր Աշոտ Երկաթի դեմ, բայց շատ զգույշ և

շրջանկատ. արտաքուստ շատ լավ հարաբերություններ ուներ ԱշոտԵրկաթի հետ, թեև ո՛չ նրան էր թողնում յուր գործերին խառնվելու և ո՛չ ինքն էր նրան մի բանում օգնում, իսկ թե ի՞նչ էր գործում վարագույրի տակ, այդ ոչ ոքչգիտեր:

Մի գիշեր Գագիկ Արծրունին քաշվեց յուր շքեղ սենյակներից մեկը, երկար ժամանակ զրույց էր անում Ռշտունյաց և Անձևացյաց իշխանների հետ, որոնք ճրագի աղոտլուսավորության տակ մի խորհրդավոր տպավորություն էին թողնում:

— Լսո՞ւմ եք, իշխաննե՛ր, — ասում էր Գագիկ Արծրունին, համարյա շշնջյունով, — ես վախենում եմ Աշոտ Երկաթից, նրան պետք է մեջտեղից վերացնել. ամեն հնարք, ամեն միջոց պետք է գործ դնել, որ նա բռնվի և Յուսուֆի ձեռքն ընկնի:

— Ինչպե՞ս անենք, այդ մի փոքր դժվար է: Եթե նրա կյանքի դեմ դավադրություն լարեինք, հեշտ էր, բայց նրան Յուսուֆի ձեռքը գցելը մի փոքր դժվար է, — ասացՌշտունյաց իշխանը, որ մի քառասուն և հինգ տարեկան խորամանկ մարդ էր:

— Չէ՛, պետք չէ նրա կյանքին ձեռք տալ, այդ մեր գործը չէ, հարկավոր է զգույշ կենալ: Մեր գլխավոր ջանքն այն պիտի լինի, որ նա Յուսուֆի ձեռքն ընկնի: Իսկ թեՅուսուֆն ինչ կանի նրան, այդ ամենի համար պարզ է:

— Ես կարծում եմ, որ մեր արքան շատ լավ է ասում, — ասաց Անձևացյաց իշխանը, — եթե մեզանից մեկը ձեռք բարձրացնի, ազգը գլխի կրնկնի, և կասկածը այսպեսթե այնպես Արծրունյաց ցեղի վրա կընկնի: Միակ միջոցն այն է, որ մենք աշխատենք Աշոտ Երկաթին Յուսուֆի ձեռքը գցել...

— Բայց ինչպե՞ս, — ընդհատեց Ռշտունյաց իշխանը:

— Ինչպե՞ս, շատ պարզ: Հայտնի է, որ Յուսուֆն ընկած է նաև Վասպուրականի թագավորության հետ: Մենք պետք է ներկայանանք Յուսուֆին իբր Գագիկ արքայիցհալածվածներ և պաշտպանություն խնդրենք: Յուսուֆը, կասկած չկա, որ մեզ սիրով կընդունի, և այն ժամանակ հեշտ է նրանց խմբի գլուխ անցնելը և ԱշոտԵրկաթին հալածելը, — պատասխանեց Անձևացյաց իշխանը:

— Ապրե՛ս, — ասաց Գագիկը՝ ձեռքը Անձևացյաց իշխանի ուսին խփելով, — լավ միտք հղացրիր իմ մեջ, դրանից ավելի լավ ճանապարհ անկարելի է գտնել:

— Ճիշտ որ լավ է, — համաձայնեց նաև Ռշտունյաց իշխանը:

— Այո՛, շատ լավ է: Ուրեմն վճռված բան է, հենց վաղը առավոտյան դուք երկուսով ճանապարհ կընկնեք Դվին և կներկայանաք Յուսուֆին: Այնտեղ ձեր գլխավորջանքը պիտի լինի արաբաց գնդի գլուխն անցնել և արշավել Աշոտ Երկաթի վրա: Իսկ հետո, երբ լավ կապեր կհաստատեք սպարապետի հետ, ձեր գլխավոր ջանքըպիտի լինի ոչնչացնել Վասպուրականի լարված հարաբերությունը: Դուք Յուսուֆին կհայտնեք, որ ես ամենևին միտք չունեմ նրա դեմ ապստամբելու և թեպատրաստ եմ հարկը կանոնավորապես նրան հասցնելու, եթե ինձ հանգիստ թողնի:

Իշխանները ոտքի ելան:

— Հա՛, իմ քա՛ջ իշխաններ, իմացեք, որ սա միայն երեքիս մեջ խորին գաղտնիք է և այդ գաղտնիքը ոչ ոք չպիտի իմանա: Չվհատվեք, ամեն բանի դիմեցեք, ձեռք առեքամեն միջոց և հաջողեցրեք գործը:

— Միամիտ եղիր, արքա՛:

— Ուրեմն բարի ճանապարհ, — ասաց Գագիկը և գրկելով համբուրեց նրանց ու ճանապարհ դրեց մինչև պալատից դուրս: Նա ներս եկավ և սկսեց շրջել սենյակում:Ամբողջ պալատը խոր քուն էր մտել, ո՛չ մի ձայն չէր լսվում, բացի լճի ծփանքից, որ մեղմ, բայց հավասարաչափ ծեծում էր Վանի ժայռերը:

Միամիտ շրջում էր Գագիկը սենյակում և զանազան ծրագրեր կազմում, եզրակացություն հանում, ինքն իրեն տխրում, ուրախանում, հրճվում և սարսափում՝ առանցնկատելու, թե ինչպես երկու վառ աչքեր հետևում են իրեն և դիտում յուր հոգու այլայլությունը:

Գագիկ Արծրունու գաղտնիքը երեք անձնավորության մեջ չէր ամփոփված, այլ՝ չորս:

ԻԹ

Մարտիրոս հոր հեռանալուց հետո, Հովհաննես կաթողիկոսը մի փոքր ժամանակ անշարժ մնաց, կարծես դյութված լիներ, ապա ոտքի կանգնեց և սկսեց շրջելընդարձակ դահլիճում: Բուռն մտքերը նրան հանգստություն չէին տալիս: Նա մտքերի ծովն էր ընկել, որից չէր կարողանում դուրս գալ: Երկար, շատ երկար մտածումէր նա, իր անելիքը կշռում, ցածր ու բարձր անում, մինչև որ հասավ գիշերը, և նա խոնջացած մահիճ մտավ, որ գոնե փոքր-ինչ հանգստանա և ազատվի յուր հոգուվրդովմունքից: Բայց գիշերն էլ հանգիստ չտվեց նրան, զարհուրելի

պատկերները շփոթում էին կաթողիկոսի հոգին: Մտքերը բուռն ալիքների, վիշապների նմանբարձրացնում էին իրենց գլուխները, իրար վրա հարձակվում, ջարդում, փշրում և ապա նորից հարձակվում...

Տխուր էր կաթողիկոսի հոգին, և դառն էին նրա մտքերը, որոնք հետզհետե ավելի էին դառնանում: Նա ճանաչում էր հայ նախարարներին, գիտեր նրանց հոգին, նրանց անմիաբանությունն ու եսասիրությունը և ավելի էր հուսահատվում... Ի՞նչ պիտի աներ. միակ ելքը, միակ փրկությունը դա էր, յուր բոլոր ճիգը պիտի թափերնախարարներին Աշոտ Երկաթի հետ հաշտեցնելու ու միացնելու համար, ապա թե ոչ՝ ազգը կորած էր: Ուստի նա կանգ առավ այն մտքի վրա, որ նախ հաշտեցնիՎրաց, Աղվանաց և Ափխազաց իշխաններին և ապա Տարոնի մեջ, այնտեղ, ուր գտնվում է մուրազատու սուրբ Կարապետի վանքը, նախարարների ժողով հրավիրի:

Ու հոգևոր տերը քուն մտավ փայփայած այդ մտքով՝ հաջողությունը աստծո վրա դնելով:

Արևի անդրանիկ ճառագայթները նոր էին դուրս եկել, երբ զարթնեց ազգի հովիվը, աղոթեց աստծուն և հենց պատրաստվում էր ներկայանալ վրաց Ատրներսեհթագավորին, երբ հայտնեցին, թե հունաց կայսրից թուղթ է բերված իրեն: Ի՞նչ թուղթ էր դա, նոր թշվառությո՞ւն, թե՞ ուրախություն էր բերում, թե՞ հույներըՀայաստանի թշվառությունը տեսնելով՝ նորից արծարծում էին հին առակները՝ կրոնական միության խնդիրը: Դողդոջուն ձեռքերով բաց արավ թուղթը և կարդացիունաց Կոստանդին Պերփերուժեն կայսեր կողմից գրած պատրիարքի գրությունը.

«...Սրա հետ միասին թուղթ ուղարկեցինք Ատրներսեհին և Ափխազաց Գուրգենին, խրատելով նրանց, որ լսեն ձեր խրատները, մոռանան իրենց գժտությունները նմիմյանց հետ սիրով ու միաբան լինին: Ձեր պարտքն է բերանե-բերան, թղթով, պատգամավորներով, եպիսկոպոսներով և քահանաներով աշխատել, որ չարիակառակությունը վերանա ձեր միջից և այդպիսով, միաբան և միախորհուրդ լինելով, չարությունը այլևս չկարողանա ապականել ձեր աշխարհը: Եթե դուքայդպիսով միանաք, այն ժամանակ մեր ինքնակալ թագավորն էլ, անհրաժեշտության դեպքում, կուղարկե բազմաթիվ զորք, իբրև ձեզ օգնական...»:

Ուրախացավ կաթողիկոսը կարդալով այդ թուղթը և շտապով ներկայացավ Ատրներսեհին, որը խոսք տվեց նրան դադարեցնել յուր թշնամությունը հայոց հետ նօգնել նրանց Յուսուֆի դեմ:

Գոհ սրտով բաժանվեց կաթողիկոսը Ատրներսեհից և ինքը վերադարձավ Հայաստան, Տարոն գավառը, որտեղից պատգամներ ուղարկեց ամեն կողմ, որ գանհավաքվեն հայ իշխաններն ու նախարարները:

Քայց ի՞նչ շահեց կաթողիկոսը այդ ժողովից: Ոչի՛նչ: Նախարարներից ոմանք չներկայացան ժողովին, իսկ ոմանք, իրար դեմ կրկին հակաճառելով, բաժանվեցինմիմյանցից առանց մի ելքի գալու:

Վհատվեց կաթողիկոսը և դառնացած սրտով նամակ ուղարկեց Հունաց կայսեր՝ նկարագրելով ազգի տառապյալ դրությունը, նախարարների անմիաբանությունը ևօգնություն խնդրեց նրանից: Կարճ ժամանակ անցավ, և թղթի պատասխանն ստացվեց, որով Հունաց կայսրը իրեն և Աշոտ Երկաթին Կոստանդնուպոլիս էրհրավիրում՝ խոստանալով նրան շատ բարիքներ և օգնական զորք:

Կաթողիկոսը, հրավիրման այդ թուղթը ստանալով, յուր գնալը մերժեց զանազան պատրվակներով, վախենալով, որ եթե ինքը գնա Կ. Պոլիս, կրկին կրոնականմիության խնդիր կարծարծվի. ուստի ճանապարհ ընկավ Տարոնից դեպի Շիրակ՝ Աշոտ Երկաթի մոտ, որ խորհուրդ տա նրան ընդունելու հունաց հրավերը:

Լ

Հեղինեն հոր սարսափելի գաղտնիքը իմանալուց հետո սաստիկ անհանգիստ էր: Ի՞նչ էր անում հայրը՝ մի սոսկալի դավադրություն, որով իրենց ամբողջ ցեղը պիտիմատներ դարեդար անեծքի և դավաճանի կոչմանը: Եվ ինչո՞վ կարելի էր այդ արատը վերացնել իրենցից, կրկին ոչնչով: Հեղինեի զգայուն և փափուկ սիրտը կսկծումէր, երբ միտն էր բերում այն գիշերվա գաղտնի խորհուրդը, և նա միջոցներ էր որոնում հոր ծրագիրը խորտակելու: Օրավուր հայրը ատելի էր դառնում, որդիականպարտավորությունները լռում էին նրա մեջ, և տիրապետում էր հոգում ազնվության ու ճշմարտության զգացմունքը: Մի կողմում կանգնած էր հայրը, իր զգվողն ուսիրողը՝ յուր վատ և զազրելի արարքներով, բայց որին բնության օրենքի համաձայն պարտավոր էր սիրել և հարգել, մյուս կողմում Աշոտ Երկաթն էր, օրինականթագավորը, իսկ հանձին նրա և ամբողջ ազգը:

Այստեղ տուժում էր միայն մի անձ, որ կուրացած էր փառամոլությամբ, իսկ այնտեղ՝ ազգը... Ինքը կանգնած էր երկուսի մեջ. երկուսն էլ ուժեղ էին, երկուսն էլ սիրելի, ո՞րին ավելի գերակշռություն տա, հո՞րը, որին պարտավոր էր սիրել, թե՞ ազգին...

Ավելի լավ չէ՞ր լինի, եթե ինքը լռեր, հեռու քաշվեր այդ խարդավանքներից և յուր կանացի գործերին նայեր, քան թե տանը հոր դեմ լրտեսությամբ պարապեր...

Նրա ի՞նչ գործն էր, եթե կսպանվեր Աշոտ Երկաթը, կխորտակվեր ազգը, կոչնչանար ամբողջ Հայաստանը, հո ինքը հանգիստ կլիներ. գոհ յուր վիճակից, շքեղպալատներում ճեմելիս՝ շրջապատված հոր փաղաքշանքներով...

Օ՛, նա չէր ուզում անձնական հանգստություն, նրա երակներում կարծես չէր հոսում հոր արյունը, հոգու մեջ տիրապետում էր ազգի սերը, ճշմարտությունն ուարդարությունը... Նա ընտանիքը՝ հորը, մորը և ամեն հանգստություն զոհում էր ազգին, որի համար պատրաստ էր ամեն զոհողության: Ազգն էր նրա հայրն էլ, մայրնէլ, հանգստությունն էլ. երբ նա տառապում էր, ինքն էլ պիտի տառապեր, նրա հետ ուրախանար, նրա հետ տխրեր... Ահա թե ինչ էր մտածում նա, երբ մյուս օրն ևեթկանչել տվեց յուր մոտ Տեր-Սահակին, որի հավատարմության մասին կասկած անգամ չուներ:

Երբ Տեր-Սահակը ներս մտավ նրա առանձնասենյակը, Հեղինեի երեսին գույն չկար, ամբողջ գիշերներ անքուն էր մնացել:

— Ի՞նչ կա, աղջի՛կս, ինչո՞ւ այդպես այլայլված ես, — հարցրեց Տեր-Սահակը:

— Օ՛, տեր հայր, հոգիս մաշվում է. երբեմն այնպես եմ վրդովվում, որ քիչ է մնում ինձ ծովը գցեմ և վերջ դնեմ իմ տանջալից կյանքին:

— Ի՞նչ է պատահել, աղջի՛կս, ասա՛, հայտնի՛ր, ես պատրաստ եմ քո բոլոր վշտերն սփոփել:

— Ո՛չ, տե՛ր հայր, ո՛չ, իմ վշտերը չեն սփոփվի, մինչև որ հայրս ձեռք չվերցնի յուր ստոր արարքներից:

— Ի՞նչ կա, էլի՞ նոր բան:

— Եվ ինչպիսի՛... Երեկ իրիկուն մեր պալատումն էին Ռշտունյաց և Անձևացյաց իշխանները, որոնց հետ հայրս երկար խորհուրդ էր անում, թե ինչպես անեն, որ ԱշոտԵրկաթին Յուսուֆի ձեռքը գցեն և ապա սպանել տան...

— Օ՛հ, անգո՛ւթ... Ի՛նչ սոսկալի ոճիր... Եվ դու, աղջի՛կս, բոլորը ճի՞շտ լսեցիր:

— Այո, բոլորը լսեցի: Այսօր առավոտյան իշխանները արդեն ճանապարհ ընկան դեպի Դվին, որ ներկայանան Յուսուֆին և այնտեղից արաբաց գնդով բռնեն ԱշոտԵրկաթին:

Տեր-Սահակը մի րոպե լռեց և ապա, դառնալով դեպի Հեղինեն, ասաց.

— Ապրե՛ս, աղջի՛կս, որ ընդհանրության շահերը վեր դասելով ծնողական շահերից՝ այդ մասին հայտնում ես ինձ:

Ուշ չէ, կարելի է դրա առաջն առնել: Ես ինքս հենց այսօր եթե ճանապարհ կընկնեմ դեպի Արշարունիք, կգտնեմ Մարտիրոս հորը և ամեն ինչ կհայտնեմ. իսկՄարտիրոս հայրը գիտե թե ինչ կանի:

— Ա՛խ, այո՛, Հայաստանի այդ Ղևոնդը... Շտապի՛ր ուրեմն...

Փոքր ժամանակից հետո Տեր-Սահակը ձի հեծած արշավում էր, առանց նայելու ճանապարհի ձյունին ու ցրտին: Շատ նեղություններ կրեց, շատ հարցուփորձ արավ նվերջը գտավ ծերունի վանահայր Մարտիրոսին ու մանրամասն պատմեց գործի հանգամանքը: Երբ Տեր-Սահակը վերջացրեց յուր պատմությունը, Մարտիրոսվանահայրը ոչինչ չպատասխանեց: Լուռ սկսեց անցուդարձ անել և համրիչը ձգելով ինքն իրեն մտմտալ:

Տխուր էր Մարտիրոս վանահոր դեմքը, շա՛տ տխուր, և ինչպես երևում էր՝ ծանր մտածողությունը այդ պահին խիստ հալումաշ էր անում նրան: Հանկարծ նա կանգառավ, շեշտակի նայեց Տեր-Սահակին և կանչեց.

— Լսիր, Տե՛ր-Սահակ:

— Ի՞նչ է, հա՛յր սուրբ, ես պատրաստ եմ քո ամեն մի հրամանը կատարելու, — պատասխանեց Տեր-Սահակը և խոնարհ գլուխ տվեց Մարտիրոս հորը:

— Այս վայրկյանիս ես վճռեցի մի հանդուգն քայլ անել, եթե իմ գործողությունը կարելի է այդպես անվանել:

— Ինչպե՞ս, հա՛յր սուրբ:

— Ես վճռեցի անձամբ տեսնվել Վասպուրականի արքայի հետ և նրա առաջ դնելով յուր զազիր գործերի ընթացքը, խնդրել, աղերսել ետ կենալու այդ ընթացքից:

Տեր-Սահակը բերանը բաց, ապուշ կտրած նայում էր Մարտիրոսին, որը և ոչինչ չէր պատասխանում:

— Ի՞նչ, դու լռո՞ւմ ես, ոչինչ չե՞ս պատասխանում: Գիտեմ ինչն է քեզ վախեցնում: Մի՛ վախենար, իմ կյանքին նրա կողմից ոչ մի վտանգ չի կարող սպառնալ, և եսկկատարեմ իմ մտադրությունը: Օ՛, եթե նա չի կատարի իմ աղերսը, ետ չի կանգնի յուր զազիր ընթացքից, այն ժամանակ վա՛յ նրան...

— Քո կամքն է, հա՛յր սուրբ, բայց այդ կամակոր մարդուց ոչինչ դուրս չի գա,— պատասխանեց Տեր-Սահակը:

— Այդ կտեսնենք, — ասաց Մարտիրոս հայրը և հրամայեց պատրաստություն տեսնել ճանապարհ ընկնելու դեպի Վասպուրական:

ԼԱ

Բզնունյաց ծովը հուրհրատին էր տալիս վերջալույսին. արևի վերջին ճառագայթները խաղում էին վճիտ ալիքների հետ:

Ծովը հանդարտ ծփում էր, նրա ալիքները վազում էին առաջ ու մարդու սրտի մեջ ցանում մի տեսակ վշտի ու թախծի սերմեր: Այդ ժամանակ էր, որ Հեղինեն՝ Գագիկարքայի դուստրը, նուրբ շղարշը գցած ուսին, դուրս եկավ դստիկոն և նայեց դեպի ծովը, դեպի հեռվում կապույտին տվող լեռները:

Այդ պահին նրա սիրուն դեմքը մռայլ էր, և ծովի հրաշալի պատկերն ու Վասպուրականի աննման բնությունը չկարողացան նրա սրտի մռայլը ցրել ու հոգինխաղաղեցնել:

Մի փոքր կանգ առավ, նայեց ջրերի ալիքներին ու ինքն իրեն մտմտաց.

— Ա՛խ իմ թրթռուն հոգին էլ ծովի ալիքների նման վազում է առաջ, միշտ առաջ, դեպի անհայտ մթությունը ու սիրտս ցավեցնելու չափ կսկիծ առաջացնում նարցունքի կաթիլներ քամում աչքերիցս... Օ՛հ, ինչքան ճմլվում է սիրտս, հոգիս մռայլվում, երբ միտքս է գալիս այն չար, ոխակալ ոգին, որպիսին տիրապետում էաշխարհիս վրա: Ա՛խ, եթե մեր մեջ տիրապետեր այն սերը, այն խաղաղությունը, որ ավանդեց մեզ Հիսուսը, այն ժամանակ չէին լինի մեր մեջ այն եղբայրասպանկռիվները, որպիսին կատարում է հայրս...

Հեղինեի մտքի թելը կտրվեց, նա նայեց դեպի դստիկոն տանող ճանապարհը, ուր դանդաղ քայլերով բարձրանում էր մի ծերունի վանական:

— Տե՛ր աստված, ո՞վ է այս վանականը, որ գալիս է դեպի իմ կողմը, — ասաց Հեղինեն հետաքրքրությամբ և մի քայլ առաջ գնալով, մեխվածի նման կանգ առավ:

Վանականը, որ փոշու մեջ էր թաղված և ինչպես երևում էր ճանապարհորդությունից նոր էր վերադառնում, մոտեցավ Հեղինեին, բարև տվեց նրան, նստեց քարենստարանի վրա ու հենվելով երկար ձեռնափայտին, ասաց.

— Օրինյալ լինիս, աղջի՜կս, ես վաղուց փափագում էի քեզ տեսնել և աստված արժանացրեց ինձ:

— Աստված օգնական, հա՜յր սուրբ, բայց ասա՝ ո՞վ ես և ի՞նչ գործի համար ես շնորհ բերել ինձ մոտ:

Վանականը ժպտաց մի այնպիսի ժպիտով, որ Հեղինեի մարմնով մի տեսակ անուշ բերկրանք անցավ:

— Ես Մարտիրոս վանահայրն եմ, աղջի՜կս...

— Մարտիրոս վանահա՛յրը... Ա՛խ, հա՜յր սուրբ, օրհնի՜ր ինձ, քաջալերիր ու իմ լքված հոգին արիացրու, — ասաց Հեղինեն ու ծունկ չոքելով վանահոր առաջ՝ համբուրեց նրա աջը:

— Վե՛ր կաց, աղջի՜կս, թող աստված օրհնի քեզ: Կարևոր և ստիպողական գործերը ինձ Վասպուրական բերին, բայց չգիտեմ հաջողությա՞մբ կպսակվի, թե ոչ:

— Անշուշտ գործը վերաբերում է հորս:

— Այո՜, բայց նախքան նրա հետ խոսելս, ես կցանկանայի քեզ հետ զրույց անել Բզնունյաց ծովի այս հրաշագեղ ափին:

— Օ՛, ես պատրաստ եմ քեզ լսելու և քո մի հրամանով ծովը նետվելու: Ես գիտեմ, հա՛յր սուրբ, որ դու քո կյանքը նվիրել ես հայրենիքի բարօրությանն ուբարգավաճմանը, ուստի և ես, իբրև մի անփորձ օրիորդ, կարոտ եմ քո խրատներին ու խրախուսանքին:

— Գիտեմ, իշխանուհի՜ս, որ դու Հայաստանի համար մի լուսատու աստղ ես, սակայն հորդ բռնած ընթացքը ինձ խոր կսկիծ է պատճառում և աչքերիցս արցունքներքամում:

— Ա՛խ, հայր սուրբ, այդ ցավոտ վերքը կսկծեցնում է և իմ հոգին, բայց ես ոչ մի հնար չեմ գտնում այն բուժելու: Հայրս, ընդարձակ Վասպուրականովչբավականանալով, ավելի հեռուն է ձգտում: Նա ուզում է տեր

դառնալ և բովանդակ Հայաստանին, և այդպիսով հագուրդ տալ յուր փառասիրությանը:

— Բայց որքա՛ն զոհեր, սրածություն, ավեր կառաջանա դրանից: Մի՞թե մի ելք, մի դարման չկա ետ կանգնեցնելու հորդ այդ քայլից:

— Ես ոչ մի միջոց չգիտեմ, հա՛յր սուրբ, և չեմ էլ կարծում, որ նա ետ կանգնի յուր նպատակից:

— Դու հուսահատեցնում ես ինձ, Հեղինե՛: Իմացիր, որ ես, գիշեր-ցերեկ քայլելով, հոգնած ու տանջված, հասել եմ այստեղ, որպեսզի խոսեմ հորդ՝ Վասպուրականիարքայի հետ, որպեսզի նա բավական համարի Աշոտ Երկաթի դեմ թշնամական ցույցեր անելը և ձեռք-ձեռքի տալով նրա հետ ժողովրդի բարօրության համար մտածի:Մինչդեռ դու քո խոսքերով ինձ բոլորովին զինաթափ ես անում:

— Դժբախտաբար, ես ճշմարտությունն եմ ասում. բայց խոսիր ինքդ, գուցե հաջողվի քեզ կոտրել նրա համառությունը:

— Այո՛, ես կխոսեմ, կաղաչեմ նրան հանուն մեր տանջված և հյուծված ժողովրդի, հանուն մեր տառապած հայրենիքի: Օ՛, եթե նա մերժեց, ես...

— Բայց ահա նա ինքն է գալիս դեպի մեր կողմը, — ընդհատեց Հեղինեն Մարտիրոս վանահոր խոսքերը և ցույց տվեց Վասպուրականի արքային, որը, Աշոտսպարապետի հետ խոսակցելով, դեպի դստիկոնն էր գալիս:

Մարտիրոս հայրը ոտքի կանգնեց ու երբ մոտեցան նրանք՝ խոր գլուխ տվեց և ասաց.

— Ողջո՛ւյն Վասպուրականի արքային և հայոց սպարապետ Աշոտ իշխանին:

Գագիկ Արծրունին և Աշոտ սպարապետը սուր, թափանցող հայացք գցեցին Մարտիրոս հոր վրա, և մի տեսակ մռայլ ամպ անցավ նրանց դեմքերի վրայով:

Այդ տարօրինակ հանդիպումը, ինչպես երևում էր, խիստ տհաճ պավորություն գործեց երկուսի վրա էլ, որոնք ամենևին չէին սպասում նրան տեսնել իրենց մոտ:

— Բարի ես եկել, հա՛յր սուրբ, նստիր, պատմիր, թե ի՞նչն է քեզ ինձ մոտ բերել — ասաց Գագիկ արքան և ապա, դառնալով դեպի Հեղինեն, ավելացրեց.-

աղջի՛կս, ցուրտը հետզհետե սաստկանում է և օդը խոնավանում. դու կարող ես մրսել: Ներս գնա, իսկ մեզ թող այս վանականի հետ մի փոքր խոսելու:

— Ո՛չ, հայրի՛կ, ինձ համար այստեղ անուշ է, դուրեկան: Ես զվարճանում էի ծովի ալիքներով, երբ Մարտիրոս հայրը ներս եկավ: Նա քեզ հետ ուզում է խոսել և եսհույս ունեմ նրան չես վշտացնի և կկատարես խնդիրքը, — պատասխանեց Հեղինեն:

Գագիկը հոնքերը կիտեց: Ինչպես երևում էր, աղջկա խոսքերը նրան դուր չեկան, ուստի դառնալով աղջկան, ասաց.

— Լա՛վ: Թո՛ղ մեզ միայնակ: Ես պատրաստ եմ լսելու նրան:

Հեղինեն գլխիկոր հեռացավ, մինչդեռ Մարտիրոս վանահայրը դիմելով Գագիկին, ասաց.

— Այո՛, տեր արքա, կարևոր և անհետաձգելի գործերը ինձ ստիպեցին քեզ այցելության գալ, և ես ուրախ եմ, որ քեզ հետ միասին տեսնում եմ և Աշոտ սպարապետին:Գործը երկուսիդ էլ է վերաբերում, որովհետև դուք, երկուսդ էլ, ձեռքձեռքի տված մի ուղիով եք ընթանում...

— Այո՛, մի ուղիով, որովհետև այդ է խելացին և օգտակարը, բայց ի՞նչ ես ուզում դրանով ասել, հա՛յր սուրբ, — ընդհատեց Աշոտ սպարապետը:

— Նստիր և պատմիր գալուդ պատճառը, Մարտիրո՛ս հայր, — ավելացրեց Գագիկ Արծրունին:

— Հույս ունեմ, որ վեհափառը կամ Աշոտ Երկաթը, որոնց կողմից անշուշտ եկել ես դու, գործը ծայրահեղ աստիճանի չեն հասցնի:

— Օ՛, միամիտ մնա, Վասպուրականի քա՛ջ արքա: Ինձ ոչ Հովհաննես կաթողիկոսն է քեզ մոտ ուղարկել և ոչ մեր թագավոր Աշոտ Երկաթը:

— Ուրեմն Յուսուֆ ամիրա՞ն, — հեգնանքով ասաց Գագիկը:

— Հեգնանք պետք չէ, տե՛ր արքա, Յուսուֆի հետ հարաբերություն կունենան միայն ազգուրաց մատնիչները և վատ ու զազիր մարդիկ, որոնք իրենց սին փառքիհամար ամենավատ գործի են ընդունակ: Բայց լսիր ինձ, — կանչեց Մարտիրոս հայրը վրդովված, — ինձ այստեղ ուղարկողը ո՛չ վեհափառն է, ո՛չ թագավորը և ո՛չ էլամիրան: Դա տրորված և տանջված հայ ժողովուրդն է, որի

հեծեծանքի և հառաչանքի աղեկտուր ձայնը ինձ քեզ մոտ է ուղարկել քո դուռը բախելու համար:

Աշոտ սպարապետը, լսելով Մարտիրոս հոր խոսքերը, մի հեգնական քրքիջ արձակեց ու ասաց.

— Ժողովո՞ւրդը... Այդ ի՞նչ նոր բան ասացիր: Այդպիսի բան ես չէի սպասում քեզանից, Մարտիրո՜ս հայր:

— Այո՜, ժողովուրդը, հայ ժողովուրդը, որին տրորում, տանջում, ջարդում են իշխանները և նրանց ոսկորների վրա կանգնում իրենց փառքը, — բուռն կերպովպատասխանեց Մարտիրոս հայրը: — Այդ ժողովրդի աղեխարշ ձայնը երկինք է հասնում, իսկ դուք՝ հայ իշխաննե՜ր, ձեր անձնական կրքերը առաջ տանելու համարներքին երկպառակություն եք հարուցում, եղբայրասպան կռիվներ սարքում և ձեր օրինական թագավորի դեմ որոգայթներ լարում... Բայց մինչև ե՞րբ, ասացեք, հա՜յիշխաններ...

— Պարզ խոսիր, հա՜յր սուրբ, և ազատ պահիր մեզ քո քարոզներից, — ընդհատեց Գագիկը զայրացած: — Մենք ժամանակ չունենք այստեղ քո քարոզները լսելու:Դրանք դու կարող ես քո վանքում ասել և այնտեղ միայն աղոթել քո ժողովրդի համար, — ավելացրեց Գագիկը:

— Ես աղոթել եմ և կաղոթեմ իմ ժողովրդի համար, որին դու այստեղ արհամարհում և հեգնում ես, տե՜ր արքա: Բայց լավ իմացիր, որ ձեր ուժը, ձեր փառքը այդժողովրդի վրա է հիմնված: Չլինի այդ ժողովուրդը՝ ձեր փառքն էլ կանցնի, կանհետանա ինչպես մի երազ: Այդ ժողովուրդը, որին դուք ոտնատակ եք տալիս, այսօրքնած է ու թմրած, բայց վաղը կզարթնի, կշարժվի, և այն ժամանակ վա՛յ իշխաններին, վա՛յ հզորին... Օ՛, վա՛յ է, երբ թմրած գազանն է զարթնում, ուշքի գալիս նոսոխին առաջը տեսնում:

— Ես չեմ վախենում քո այդ թմրած գազանից: Ես կտրորեմ նրան իմ ոտքերի տակ, ինչպես մի թույլ, անզոր մրջյուն: Բայց դու քո ասելիքն ասա, խոսիր, պատմիր, թեին՞չ է ուզում ինձնից ատելի Աշոտ Երկաթը, այդ քո ասած ժողովրդի սիրելին,— դառն կերպով ասաց Գագիկը:

— Այո՜, Աշոտ Երկաթը մեր օրինավոր թագավորն է և ժողովրդի սիրելին, ճիշտ նկատեցիր: Ժողովուրդը, որին դուք արհամարհում եք, սիրում է նրան ու հարգում նպատրաստ է յուր կյանքը դնելու թագավորի համար: Եվ ահա ես, որպես ժողովրդի

իղձերի թարգման, Վասպուրականի տե՛ր և դո՛ւ՝ Աշոտ սպարապետ հայոց, ծունկչոքած ձեր առաջ խնդրում, աղաչում եմ, վերջ դնել եղբայրասպան կոտորածներին, ձեռք մեկնել մեր սիրեցյալ Աշոտ Երկաթին և հալածել արաբներին: Ահա այդ է իմայցելության բուն պատճառը, ահա այդ է խնդրում ձեզանից տանջված և հուսաբեկ հայ ժողովուրդը:

— Դու խենթ ես, հա՛յր սուրբ: Մի՞թե դու կարծում ես, թե Գագիկ արքան կմոռանա Աշոտ Երկաթի իրեն հասցրած վիրավորանքը: Օ՜, ո՛չ: Գիշերները ես բաց աչքով եմլուսացնում, բարկությանս հուրը քրքրում է սիրտս և ինձ դեպի վրեժ, դեպի հուր ու մոխիր մղում: Գնա, հայտնիր քո թագավորին, որ ես երբեք հաշտության ձեռք չեմմեկնի, մինչև որ նա չտապալվի իմ սրից և նրա արյունաթաթախ դիակը չթավալվի ոտքերիս տակ... Գնա, հայտնիր նույնպես քո սիրեցյալ ժողովրդին, որ ես նրան էլեմ ատում ու արհամարհում, որը, ինչպես մի թույլ մրջյուն, կարող է միայն ոտքերիս տակ սողալ և գթություն հայցել ինձնից...

— Բայց նա կզարթնի, տե՛ր արքա, և այն ժամանակ վա՛յ ձեզ, — կանչեց Մարտիրոս հայրը սպառնագին:

— Կզարթնի, բայց ոտքերի տակ գլորվելուց դենը չի անցնի: Ի՞նչ պիտի անի մրջյունը առյուծին: Այդ առակները քեզ համար պահիր, Մարտիրո՛ս հա՛յր, և ժողովրդովմեզ մի՛ վախեցնի,— ավելացրեց Աշոտ սպարապետը:

— Կույր նախանձը և փառամոլությունը կուրացնում է ձեզ, իշխաննե՛ր, և դուք ձեր հարազատ թագավորի դեմ զենք եք բարձրացնում: Պիղատոսի նման ես ձեռքերսլվանում եմ և ասում՝ արյուն ձեր ի գլուխ ձեր եղիցի... — ասաց Մարտիրոս հայրը և վեր կացավ տեղից:

— Բավական է, հա՛յր սուրբ, — ասաց Գագիկը կատաղած: — Գնա դու քո աղոթքները քո վանքում մրմնջա և մեր գործերին մի՛ խառնվի: Շուտով Աշոտ Երկաթըբախտ կունենա մեր ուժերի հետ չափվելու:

— Այո՛, կերթամ, կերթամ իմ աղոթքները մրմնջալու իմ սիրելի ժողովրդի համար և նրա հոգու մեջ ցանելու գիտակցության և ինքնաճանաչության սերմերը: Կերթամկասեմ նրան, որ ժամանակն է զարթնելու, խմբվելու մեր օրինական թագավորի շուրջը և, նրան թև ու թիկունք դառնալով, դուրս վանելու ազգուրաց իշխաններին...

— Լռի՛ր, բավական է ինչ խոսեցիր, թե չէ երկինքը վկա, որ քո դիակը դուրս շպրտել կտամ այստեղից, — ասաց Աշոտ սպարապետը և ձեռքը դեպի սուրը տարավ: Այդնկատեց Մարտիրոս հայրը:

— Պահիր սուրդ, իշխա՛ն, ես մահից չեմ վախենում, բայց մինչ այդ ես կխոսեմ և իմ հուժկու ձայնը կհնչեցնեմ իմ ժողովրդի մեջ և կասեմ նրան՝ զարթնի՛ր, հայժողովուրդ, որովհետև զարթնելու ժամ է արդեն, — ասաց Մարտիրոս հայրը, ձեռնափայտը ամուր զարկեց գետնին ու շտապ քայլերով դուրս եկավ անհյուրընկալպալատից...

ԼԲ

Արաբաց գնդերի գլուխ անցած երկու հայ իշխանները Դվինից արշավում են դեպի Այրարատյան երկիրը՝ նրան հուր ու մոխիր դարձնելու: Ռշտունյաց և Անձրևացյացիշխանները արդեն կատարել էին Գագիկ Արծրունուն տված խոսքը, թեև շատ ծանր գնով: Յուսուֆը չհավատալով նրանց խոսքին, պահանջեց, որ հավատներնուրանան, միայն այդ դեպքում նրանց խնդիրը կկատարե՝ տալով օգնական գունդ թե Գագիկ Արծրունու դեմ, որից նրանք իբր թե հալածված էին, և թե Աշոտ Երկաթիդեմ, որին շատ ուրախ կլիներ բռնելու: Իշխանները ուրացան իրենց եկեղեցին, մոռացան Լուսավորչի հավատը և երդվեցին, որ նրանք հաստատ կմնան Մուհամմեդիկրոնին և ամեն ճիգ կթափեն հայրենակիցներին էլ նույն ճշմարիտ կրոնը ընդունել տալու:

— Լավ խաղ ենք խաղում, իշխա՛ն, — ասաց Ռշտունյաց իշխանը՝ դառնալով ընկերոջը,— տեսնենք ինչո՞վ է վերջանալու:

— Ես կարծում եմ, որ ինչով էլ վերջանա, մենք հաղթող պիտի դուրս գանք: Կընկնի Գագիկը՝ մենք Յուսուֆին կհարենք, կընկնի Յուսուֆը՝ Գագիկիցպաշտպանություն կգտնենք: Մեր ի՞նչ հոգն է, թե երկուսը իրար միս կուտեն, մերն այն է, որ մենք հանգիստ լինենք:

— Այդ ճշմարիտ է, իշխան, բայց այն էլ պետք է ի նկատի ունենալ, որ մեր առաջ Աշոտ Երկաթ կա, որը կարող է մեզ արժանավոր պատիժ տալ:

— Է՛հ, ես ամենևին չեմ մտածում Աշոտ Երկաթի վրա, քանի որ վաղ թե ուշ նա մեր ձեռքը կընկնի:

Այնուհետև երկուսն էլ լռությամբ առաջ էին քայլում, երբ նրանց առաջ մի գյուղ երևաց:

Օրը արդեն մթնելու վրա էր, և ցուրտը հետզհետե սաստկանում էր. ուստի երկու հայ իշխանները վճռեցին այդ գիշեր գյուղում անցկացնել: Երբ նրանք մտան գյուղ, այնտեղ Մարտիրոս հոր կազմած հիսուն մարդուց բաղկացած մի խումբ կար միայն:

Ռշտունյաց և Անձևացյաց իշխանները ցած թռան ձիերից և դիմեցին գյուղի մեծավորի տունը, իսկ խումբը, ցրվելով գյուղի զանազան խրճիթները, ամենապատվաբերտեղերում հանգիստ նստեցին և տան տերերից ընթրիք պահանջեցին:

Գյուղացիները լուռ կատարում էին նրանց հրամանները և աղոթում աստծուն, որ շուտ հեռացնի իրենցից այդ փոթորիկը:

Արաբները կերան, կշտացան, բայց հայկական լիառատ հյուրասիրությունից գոհ չմնացին, ավելին պահանջեցին:

Բավական չէին գիշերվա տաք ու կակուղ անկողինները, աներես շների նման գյուղացոց հարսներին ու կույսերին էլ պահանջեցին:

Գյուղացիք խնդրեցին, որ չանեն այդ անամոթությունը: Բայց նրանք իրենց սրերը ցույց տվին, հայտնելով, որ եթե չկատարեն իրենց հրամանը, այդ սրերովկկտրատեն նրանց գլուխները:

Ճար չկար. արտասվաթոր ընկան հայ իշխանների ոտքը և խնդրեցին, որ գոհ մնան իրենց հյուրասիրությունից և չպղծեն իրենց ընտանիքները:

Երկու հայ իշխանները ուսերը թափահարեցին և կոպտաբար պատասխանեցին.

— Հա՛, ի՞նչ կպակասի որ, ինչո՞ւ չեք կատարում նրանց հրամանը:

Գյուղացոց կատաղությանը չափ չկար:

— Լա՛վ, — ասացին նրանք, — մենք կկատարենք ձեր հրամանը, միայն ոչ ինքնակամ, այլ զենքը ձեռքներիս:

Ասացին ու առյուծների նման հարձակվեցին արաբների վրա: Բայց ինչ կարող էին անել Մարտիրոս վանահոր պատրաստած հիսուն մարդը հինգ հարյուրից ավելիմարդու դեմ: Ոչի՜նչ: Նրանք բոլորը կոտորվեցին, սրի անցկացան նաև

մանուկներն ու ծերերը: Իսկ արաբները առավոտյան դեմ, իրենց բարբարոս կրքերին հագուրդտալուց հետո, ամբողջ գյուղը կրակ տվին ու հեռացան:

Փոքր-ինչ առաջ անցնելով, հայ իշխանները ետ նայեցին և տեսան թանձր ծուխ, որ բարձրանում էր գյուղից, բայց նրանց դեմքին խղճի և ո՛չ մի նշույլ չերևաց. նրանքսառն էին, ինչպես շրջապատող ձյունը:

Մի փոքր էլ առաջ անցան, և ահա նրանց առաջ, ճանապարհից մի քանի քայլ այն կողմ, մի սառույցով պատած այրի մեջ մի կին տեսան, որ պինդ գրկել էր յուրմանկանը և ապուշ կտրած նայում էր իրենց: Անձևացյաց իշխանը ձին առաջ քշեց և մոտենալով կնոջը՝ գոռաց.

— Ո՞վ ես դու:

Կինը ոչինչ չպատասխանեց, այլ ապուշ կտրած նայում էր նրան: Նայում էր և փոքրիկ մանուկը յուր սիրուն, բայց արհավիրքով լցված աչքերով:

— Չե՞ս լսում, — գոռաց իշխանը և մտրակով բոթեց: Կինն անխոս ցած գլորվեց, գլորելով յուր հետ նաև մանկանը: Իշխանը հեռացավ, հասկանալով, որ կինն ումանուկը սառած էին և ոչ մի կենդանության նշույլ չկար նրանց մեջ. այնինչ ինքը, կենդանի կարծելով, խոսում էր նրանց հետ:

Խեղճ կինը գիշերը փախուստ էր տվել գյուղից և ապաստանելով սառցե այդ այգում, յուր մանկան հետ սառել, փետացել էր...

Բայց նրանք չհետաքրքրվեցին անգամ նրա վիճակով, այլ կրկին առաջ անցան: Իրենց ի՞նչ փույթ, թե ետևից թողնում են ավերածություն և մահ, բավական էր, որ գոհէին իրենց վիճակից: Մի քանի օր այդպես շարունակեցին իրենց ճանապարհը և մի տեղ լուր ստացան, որ Աշոտ Երկաթը հեռու չէ և շրջում է շատ փոքրաթիվմարդկանցով:

Երկու իշխանների սրտերը թունդ առան, նրանք իրենց գունդը ստվարացրին արաբական գնդերի հաշվին և մոտ հազար հոգով արշավեցին Աշոտ Երկաթի վրա, որնընդամենը երեք հարյուր մարդ ուներ ձեռքի տակ: Ռշտունյաց և Անձևացյաց իշխանները վստահ էին, որ մի քանի օրից հետո Աշոտ Երկաթը կամ սպանված կլինի նկամ շղթայակապ Յուսուֆի մոտ Դվին կլինի տարվելիս...

ԼԳ

Երեկո էր: Աշոտ Երկաթը յուր խմբով դանդաղաքայլ առաջ էր գնում Բասյան գավառի մի նեղ կիրճով: Երկինքը պատած էր գորշ ամպերով, թափվում էր ձյունը նսպիտակ սավանով ծածկում երկիրը... Տխուր էր Աշոտ Երկաթի սիրտը: Ո՛չ մի բերկրանք, ո՛չ մի հուսո նշույլ չէր ուրախացնում նրա հոգին: Սև-սև մտքերը պաշարելէին նրան, որոնք կրծում էին սիրտը և ձգում նրան մի տեսակ տենդային դրության մեջ, որ ո՛չ հուսահատություն էր նշանակում և ո՛չ հոգու խաղաղտրամադրություն... Ի՞նչ էր յուր կյանքը և ի՞նչ էր յուր ժողովրդի դրությունը:

Ժողովուրդը տառապում էր սովի, նեղության, սրի և երկպառակությանց տակ, իսկ ինքը մի բուռ քաջերով ստիպված էր աստանդական կյանք վարել, զգալ ժողովրդիցավն ու դարդը, տեսնել նրա վիշտն ու տառապանքը և ոչնչով չկարողանալ օգնել նրան, ահա թե ինչն էր ցավեցնում նրա սիրտը, ինչն էր վրդովում քաջի հոգին: Ոչմի կողմից փրկության հույս չէր տեսնում նա, քանի որ նախարարների մեծամասնությունը կամ կղզիացած էր իրենից և կամ թշնամացած. իսկ ինքը փոքրաթիվհամերաշխ նախարարներով և փոքրիկ խմբով ի՞նչ պիտի աներ Յուսուֆի ահեղ զորության դեմ, որն օրավուր ոտնատակ էր տալիս Հայաստանը և հայ դավաճանիշխաններով շրջապատված՝ աշխատում էր յուր կյանքի դեմ էլ որոգայթներ լարել: Ծանր էր քաջի դրությունը, բայց նա չէր հուսահատվում, հավատում էրնախախնամությանը, որ չի թողնի իրեն և ժողովրդին անօգնական:

Ու գնում էր Աշոտ Երկաթը գլուխը կախ և խորին մտածմունքի մեջ ընկղմված. նրան լուռ հետևում էին երեք հարյուր քաջ տղամարդիկ, որոնք Աշոտ Երկաթի միակնարկին էին սպասում, որ իրենց դեպի կրակը նետեն:

Ձյունը տեղում էր շարունակ: Մութն ընկնում էր արդեն, բայց ձիավորները դեռ աշխուժով առաջ էին գնում, երբ նրանց առաջ բացվեց մի խոր կիրճ, որի երեք կողմիցէլ բարձրանում էին սեպացած բարձրաբերձ ժայռեր, որոնք զարդարված էին ձյունի և սառցի կեղևներով պատած ծառերի ոստերով, որոնց ճյուղերից կախված էինհաստ սառցե շիթեր:

Ահարկու կիրճ էր դա, որի մի կողմից հոսում էր լեռնային մի վտակ, որ սառցե կեղևի տակ տխուր ղողանջում էր ու գլորվում ցած. իսկ մյուս կողմից՝ սեպացած ժայռիվրայից թռչում էր մի ուրիշ վտակ և ետևից թողնելով սառցե ահագին շիթը՝ ուժգնությամբ ցած էր գլորվում և ձորում գրկախառնվելով վտակի հետ՝ հոսում էր ցած...Աշոտ Երկաթը գլուխը բարձրացրեց և նայեց բնության այդ խաղին, որ վատ տպավորություն թողեց յուր վրա: Մի տեսակ անհասկանալի թախիծ պատեց և

սիրտը, տհաճությամբ նա կրկին իջեցրեց գլուխը և մտրակեց ձիուն: Ձին մի թռիչք արավ և մեխվածի նման կանգ առավ, կարծես աներևույթ մի ձեռք հանկարծ սանձահարեցնրան: Աշոտ Երկաթը զարմացավ և շփոթված աջ ու ձախ նայեց, բայց կասկածավոր ոչինչ չնկատեց, որը կարողանար վախեցնել յուր ուշիմ ձիուն և ստիպել նրանայսպես հանկարծակի կանգ առնելու:

Նա նորից մտրակեց: Ձին մի թռիչք էլ արավ, և այնուհետև որքան մտրակեց՝ տեղից չշարժվեց: Խմբի մարդիկ շրջապատեցին Աշոտ Երկաթին և զարմանքով նայեցինձիուն, թե ինչո՞ւ նա առաջ չի գնում:

— Է՛ ինչպես երևում է՝ ձիս հոգնել է կամ մի բանից վախեցավ: Հոգնելը սրանից չեմ սպասում, որովհետև շատ երկար ժամանակ չէ, ինչ որ ճանապարհին ենք, բայցթե ի՞նչից վախեցավ, այդ է ինձ զարմացնում: Տղա՛յք, դուք ոչինչ կասկածավոր բան չտեսա՞ք ճանապարհին, — դարձավ Աշոտը դեպի խումբը:

— Ո՛չ, — պատասխանեցին մի քանիսը:

— Ուրեմն հարկավոր է մի փոքր հանգիստ տալ, — ասաց Աշոտ Երկաթը ու մի փոքր ժամանակ հանգիստ տվեց յուր ձիուն: Ձին ականջները ցցել էր և վայրենի կերպովնայում էր առաջ, ճանապարհի ուղղությամբ, որով պիտի անցներ խումբը:

Կասկածը պատեց Աշոտ Երկաթին, և նա էլ դեպի ձիու նայած կողմը նայեց: Ո՛չ մի կասկածելի բան չտեսավ: Ճանապարհը ոլորվում էր մի փոքր տարածությամբառաջ, որտեղ դուրս Էին ցցված ահարկու ժայռերը, որոնք լուռ իրենց էին նայում: Բարկացավ ձիու վրա և հենց ուզում էր մտրակել, երբ ականջին դիպավ մի տեսականորոշ ձայն, որը ստիպեց նրան զգաստանալ: Նա նորից ականջ դրեց, այո՛, ձայնը գալիս էր առջևից և հետզհետե մոտենում էր: Այդ ձայները խիստ նման Էին ձիերիդոփյունների և փռնչոցների: Աշոտ Երկաթը զգաց, որ առաջից մի խումբ ձիավորներ են գալիս, բայց թե ովքե՞ր են և ինչքա՞ն էր նրանց թիվը դեռ անհայտ էր: Նանշան արավ խմբին, որ պատրաստ լինեն, իսկ ինքը սուրը պատյանից հանեց ու սպասեց ձիավորների երևալուն:

— Ա՛յ թե ինչի՞ց էր վախենում իմ ձին, — մռմռաց ինքն իրեն Աշոտ Երկաթը:

Հանկարծ նույնպիսի դոփյուններ ետևից լսեց, կարծես երկուսն էլ իմաց էին արել իրար, որ միաժամանակ սկսեն:

Ի՞նչ էր նշանակում այդ, մտածեց նա և ժամանակ անգամ չունեցավ պարզելու այդ հանելուկը, երբ կիրճի երկու կողմերից էլ ահռելի ձայներ լսվեցին և սրերը

հանած, ճանճերի նման, բազմաթիվ ձիավորներ վրա տվին Աշոտ Երկաթի խմբին, որը թակարդի մեջ էր ընկել:

Վահանը առաջ քաշեց Աշոտ Երկաթը, սուրը բարձրացրեց, յուր խմբին ձայն տվեց, ահռելի մռնչյուն հանեց և վազեց թշնամիների վրա:

Արյուն էր կաթում նրա սրիցը, մեկը մյուսի ետևից ընկնում են թշնամիները, խորը հառաչում և շունչները փչում… Աշոտ Երկաթը առյուծ է դարձել, առյուծ են դարձելնաև յուր քաջերը, որոնցից ամեն մեկը տասը թշնամի է պառկեցնում և ապա ինքն էլ խողխողված շունչը փչում: Տեսնում է Աշոտը թշնամյաց հունձը, տեսնում է նանյուր քաջերի ընկնելը, սիրտը կսկծում է և կատաղած՝ երեք չորս գլուխ միասին թռցնում... Բայց ինչքա՛ն շատ են թշնամիները, նրանք կարծես անվերջ, անհամար են. կոտորում է, կոտորում, կրկին սրանք կան, չեն պակասում և պինդ օղակով երկու կողմից սեղմում են իրեն... Ընկնում են յուր քաջերը մեկը մյուսի ետևից, բայց ինքըհերոսաբար դեռ կռիվ է անում, գլուխներ թռցնում… Բայց ի՞նչ կա անսպառ աշխարհիս վրա, որ մի քաջի ֆիզիկական զորությունը անսպառ լինի: Աշխարհս էլ էսպառվում, նա էլ վերջ ունի, ո՞ւր մնաց թե Աշոտ Երկաթի զորությունը... Ռոպե առ ռոպե նրա ուժը սպառվում է, կամաց-կամաց թուլանում են նրա բազուկները, արդենյուր ահեղ զորության վերջին թելն է մնացել բազուկների մեջ, այնինչ հոգին, այն վեհ և արի հոգին չի թմրում, չի թուլանում, երկյուղի ո՛չ մի նշան չի արտահայտում:Նրա աչքերը փայլատակում են, բոց ու շանթ արձակում և սարսռեցնում թշնամուն. թշնամիները դեռ դիաթավալ ընկնում էին նրա սրից և մահվան տագնապի մեջտոչորվում... Բայց թշնամիները չեն պակասում, նրանք բուռն ուժով կրկին վրա են վազում:

Նայում է դրանց Աշոտ Երկաթը, նայում և սիրտը լցվում է դառնությամբ: Թախիծով լի աչքերը նա աջ ու ձախ է դարձնում, յուր քաջերին պտրում, նրանց ձայն տալիս, բայց նրանցից շատերը խոր քուն են մտած, նրա ձայնը չեն լսում, շատերը կոտորված են... միայն մի բուռ քաջեր դեռ կռվում են:

Հուզվում է Աշոտ Երկաթը, վերջին ճիգն է թափում, վերջին անգամ բարձրացնում է ահեղ սուրը և ջախջախում իրեն մոտեցող անօրենների գլուխները...

Բայց բազուկները էլ՛ չեն գործում, թուրը, արյունով ներկված թուրը, որից աղբյուրի նման ծլծլում է արյունը, էլ չի բարձրանում, նրանք ուժից ընկած են, անզոր, ինչպես մանկան ձեռքեր, իսկ յուր ձին տասը տեղից վիրավորված հազիվ ոտքի վրա է կանգնած:

Տեսնում են այդ անօրենները, և դիվական ժպիտը փայլում է նրանց դեմքերին, նրանք հրեշավոր քրքիջ են արձակում և համարձակ վազում դեպի Աշոտ Երկաթը...

Վերջին գերմարդկային ճիգն է թափում քաջը, սուրը բարձրացնում և հուսահատությամբ լի աչքերով վերջին անգամ շուրջը նայում: Հանկարծ նրա աչքին, հեռու ձորիմեջ, ժայռերի մոտ երևում է մի ծերունի՝ Քրիստոսի սուրբ խաչելությունը ձեռքին: Ոգի է ներշնչում այդ խաչը քաջին, և նա կրկին ջախջախում է թշնամյաց գլուխները:Այդ ժամանակ լսվում են աղաղակներ, թշնամին շփոթվում է, թողնում Աշոտ Երկաթին և փախուստի դիմում: Նայում է Աշոտ Երկաթը դեպի խաչը և յուրթշնամիներին: Այդ խմբի մեջ բարձր փայլում է խաչանիշ դրոշակը... Դա յուր խաչն է, յուր փրկիչը, որ ծածանվում է քաջերի մեջ:

Փախչում է թշնամին: Ինքը ազատված է: Խաչն ու դրոշակը մոտենում են: Մոտենում է նաև ծերունին:

Աշոտ Երկաթը ցած է թռչում ձիուց՝ չոքում ձյունի վրա և համբուրում խաչը:

— Կեցցե՛ Աշոտ Երկաթը, ապրի՛ Մարտիրոս հայրը,-գոռում է խումբը և կրկին հալածում թշնամուն:

Ամբողջ կիրճը խավարն է պատում: Մարտիրոս վանահոր խումբը ետ է դառնում հալածելուց և յուր հետ բերում է երկու հայ իշխաններին, որոնց գերել էին քաջերը:

— Դավաճաննե՛ր, — գոռում է Մարտիրոս վանահայրը և բարկությունից ատամները կրճտացնում: Քաջերը ուզում են պատառ-պատառ անել նրանց, բայց ԱշոտԵրկաթը նշան է անում, և նրանք ակնածությամբ լռում են և Անձևացյաց ու Ռշտունյաց իշխաններին շղթայակապ յ՛ուր առաջ բերում:

Արհամարհանքով նայում է Աշոտ Երկաթը դրանց և ապա դիմելով պահապաններին, ասում.

— Քանդեցեք շղթաները, ես չեմ ցանկանում, որ հայ իշխանները շղթայակապ իմ առաջ դուրս գան:

Պահապանները զարմացած քանդում են շղթաները և լուռ նայում Աշոտ Երկաթին:

— Մարտիրո՛ս հայր, սրանց ամոթալի արարքը հայտնի է քեզ. քո կտրիճները գերեցին, ուստի և քեզ եմ հանձնում սրանց դատաստանը:

— Ո՛չ, արքա, այդ մեր իրավասությունից դուրս է և մեր կյանքն էլ քո իշխանությանն է հանձնված, մենք չենք կարող սրանց դատաստանը անել, իսկ եթե իմկտրիճներին թողնես, այդ պատիժը սոսկալի կլինի, — ասաց Մարտիրոս հայրը և մի մոլի հայացք ձգեց դեպի դավաճանները:

— Գթությո՛ւն, մենք սխալված ենք, կին, որդիք ունենք,— ասացին դավաճանները և ընկան Աշոտ Երկաթի ոտքերը:

— Թշվառնե՛ր... — ասաց Աշոտ Երկաթը, — և ապա դարձավ պահապաններին. — զենքներն առեք, իշխանական զգեստը հանեցեք և արձակեցեք դրանց, թող ուրուզում են գնան:

Այնուհետև Մարտիրոս վանահայրը կրկին մտավ ժողովրդի մեջ խմբեր կազմելու, իսկ Աշոտ Երկաթը հույսը օտար ուժի վրա դրած՝ ուղևորվեց Կ. Պոլիս...

Ի՞նչ պիտի լիներ Հայաստանի դրությունը…

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա

Չորս կողմը ամայություն էր... Ո՛չ մի կենդանի արարած չէր երևում, ո՛չ մի շարժում չկար այն ճանապարհին, որով անցնում էր Մարտիրոս վանահայրը յուր ծառայիհետ: Շուրջը փռված էին ամայի լեռներ ու ձորեր, որոնք, ծածկված լինելով ձյան թանձր ծածկոցով, մի տեսակ վիատություն էին բերում ճանապարհորդների սրտին:Այդ դաշտերում և ձորերում շարժվում էր միայն սառը քամին, յուր երգը երգում և ապա թռչում հեռո՛ւ-հեռո՛ւ... Երկինքն էլ ծածկված էր գորշ ու մթին ամպերով, որըլացացնելու չափ թախիծ էր բերում ծերունի վանահոր սրտին: Ձյունի բյուրեղները երբեմն-երբեմն ընկնում էին նրա ալեզարդ մորուքին և խճճվելով այնտեղ՝ թաքնվում, կուչ գալիս և ապա կաթիլներ դառնալով ընկնում ցած...

Տխուր էր Մարտիրոս հայրը, տխուր էր նրա ծառա Ծառուկը, որ մորթե տաք մուշտակի մեջ կոլոլված, դողում էր ցրտի սաստկությունից: Երկուսի դեմքերն էլմթագնած էին. Ծառուկը տաք օթևան և հանգիստ էր երազում, այնինչ ծերունի վանահոր համար ցուրտն ու սառնամանիքը կարծես գոյություն չունեին: Նրա

միտքըբոլորովին ուրիշ բանով էր զբաղված, որ այլայլում էր նրա հոգին և վրդովում սիրտը:

Նա սաստիկ հուզված էր: Վերջին դեպքերը՝ Աշոտ Երկաթի Կ. Պոլիս գնալը, կաթողիկոսի անհոգությունը և դավաճանների արձակվելը նրա հոգու վրա խորտպավորություն էին թողել, որոնք ինչպես մի սուր սլաք ցցվել էին նրա սրտի մեջ՝

բանալով այնտեղ խոր ու անբուժելի վերք...

— Ի՞նչ պիտի լինի Հայաստանի դրությունը, — մտածում էր նա, — ո՞վ պիտի հոգա անպաշտպան ժողովրդի մասին, երբ նրա մարմնավոր և հոգևոր գլուխներըհեռացած են նրանից: Պարզ է, որ նա կրկին պիտի տնքա, չարչարվի, տանջվի, ոտնատակ լինի և հարստահարվի զանազան բախտախնդիր իշխաններից նարտաքին թշնամիներից: Հայաստանը մի այգի է անուշահամ պտուղներով և գեղեցիկ ծաղիկներով. նրա դռները թեև բաց էին, բայց ո՛չ ոք չէր համարձակվում մտնելու ոտնատակ տալ մարգերը և կոտրատել ծառերը, որովհետև վախենում էին այգեպանից: Այդ այգեպանին մենք գտել էինք, նա քաջ և արի էր, և ամենքը երկնչումէին նրանից: Բայց նա այլևս չկա. թողեց յուր այգին անտեր ու անօգնական և գնաց, որ ուրիշ երկրից ջուր բերի յուր այգին ջրելու, առանց հասկանալու, թե օտարջուրը յուր այգին չի ջրի, թույն կա այդ ջրի մեջ: Նա ականջ չդրեց մինչև անգամ իմ խոսքերին, թե մինչև յուր վերադառնալը եղած ծառերն էլ կկոտրատվեն և յուրսիրուն այգու հետքերը միայն կմնան, և այն ժամանակ օտարի ջրով թող ջրի յուր ամայի այգու սեպացած քարերը... Երկա՛թ, Երկա՛թ... զո՛ւր քո երկաթե բազուկներիդհամար օտարի փայտյա հենարանն ես խնդրում, այն շուտ կխորտակվի, կփշրվի, այնինչ քո երկաթե բազուկներդ կժանգոտվեն և պետք չեն գա գործածելու... Միքանի օր է, ինչ հեռացել է Աշոտ Երկաթը, այնինչ Հայաստանի զանազան անկյուններից արդեն լսվում են տրտունջներ: Օձերն իրենց գլուխներն են բարձրացնում նլավ պատառներ որոնում: Գագիկ Արծրունին դարաններ է պատրաստում, իսկ չարանենգ Յուսուֆը արքայական գահի համար փոխանորդ պտրում: Աշոտսպարապետը՝ Աշոտ Երկաթի հորեղբոր որդին, վաղուց է կարոտ այդ գահին, և Յուսուֆը վաղուց հարմար առիթի է ման գալիս հայերի դեմ հայ զենքով կռվելու: Երկութագավոր ունենք, երրորդն էլ է պակաս և այդ երրորդը Աշոտ սպարապետն է, Յուսուֆի ձեռքի կույր գործիքը... Աշո՜տ, Աշո՜տ, տեր և տիրական թշվառացածժողովրդի, դարձի՛ր, դարձի՛ր այդ ճանապարհից, ժողովուրդը քեզ է կանչում, Մարտիրոս վանահոր սիրտը քեզ է սպասում...

Մութն արդեն ընկնում էր: Հեռու լեռներն արդեն թաքնվում էին խավարի մեջ, և ցուրտը հետզհետե զգալի էր դառնում, այնինչ Մարտիրոս վանահայրը մտքերի մեջընկղմված այդ չէր նկատում և յուր ձիու ընթացքը չէր արագացնում:

Ծառուկը անհամբերությունից ճաքում էր: Նա մի անգամ առաջ եկավ, որպեսզի ասի Մարտիրոս հորը, որ ձիուն շտապեցնի, բայց նկատելով, որ նա ինչ-որփնթփնթում է քթի տակ, չհամարձակվեց խանգարել նրան: Վերջապես ծառայի համբերությունը հատավ: Վճռաբար նա առաջ քշեց ձին և նայեց վանահոր դեմքին:Այդ դեմքը այլայլված էր, բայց պատկառելի տպավորություն էր թողնում: Մի քանի վայրկյան լուռ մնաց ծառան և սկսեց դիտել նրա դեմքի այլայլությունը, ապա ցած, հազիվ լսելի ձայնով ասաց.

— Հա՛յր սուրբ:

Մարտիրոս հայրը չլսեց նրան: Նա դեռ ինքն իր հետ էր խոսում:

— Հա՛յր սուրբ, արդեն մթնում է, հարկավոր է շտապել, — ասաց ծառան նորից:

— Դավաճաննե՛ր... ահա թե ովքեր են մեր տունը քանդում և մնում են անպատիժ...

— Հա՛յր սուրբ, մթնում է...

— Ի՞նչ է, որդյա՛կ, — ասաց վանահայրը և սուր, թափանցող հայացքը ուղղեց դեպի ծառան, որը չդիմանալով նրան, իջեցրեց աչքերը:

— Ճանապարհ շատ ունենք, հա՛յր սուրբ, և ցուրտն էլ սաստկանում է: Պետք է մի փոքր շտապել:

— Հա՛ , Ծառո՛ւկ, ճշմարիտ է, պետք է շտապել, ապա թե ոչ գայլերի կերակուր կդառնանք:

Երկուսն էլ ձիերին մտրակելով առաջ անցան:

— Դու վախենո՞ւմ ես գայլերից, — դարձավ Մարտիրոս հայրը ծառային՝ մի փոքր լռությունից հետո:

— Ե՞ս, հա՛յր սուրբ... Ե՞րբ եք տեսել, որ ես մի բանից վախենամ:

— Իսկ եթե մի խումբ արաբներ վրա տան՝ կրկի՞ն չես վախենա:

— Ո՛չ: Ես մահից չեմ վախենում, բայց առաջ նրանցից մի հնգին կսպանեմ և հետո կմեռնեմ:

— Ապրես, Ծառո՛ւկ, ես վախկոտներին չեմ սիրում: Աստված էլ չի սիրում վախկոտներին: Վախկոտությունը մահու չափ հանցանք է: Նա, ով վախենում էթշնամիներից, ավելի լավ է չապրի: Ներկա, ժամանակում անզորներն ու վախկոտները ոտնատակ են լինում զորավորներից և հանդուգններից: Պետք է քաջ լինել նապա հանգիստ ապրել:

Նրանք կրկին լուռ առաջ անցան: Այդ ժամանակ հեռվում՝ լեռան քամակին, կիսախավարի մեջ երևաց մի վանքի պարիսպ:

— Հա՛յր սուրբ, վանքը երևում է:

— Հա՜, տեսնում եմ, վերջապես մի փոքր կհանգստանանք, թե՛ մենք, թե՛ մեր խեղճ ձիերը:

Մի փոքր հետո ճանապարհորդները վանք մտան, ուր Մարտիրոս վանահայրը առանձնացավ վանքի վանահոր խուցը, այնինչ Ծառուկը մեկնվեց վառած կրակի մոտ նսկսեց յուր զրույցը վանքի ծառաների հետ: Նա շատ էր սիրում տաք օջախը և քաղցր զրույցը: Մի փոքր առաջ կերած ցուրտը բոլորովին մոռացել էր Ծառուկը կրակիբարերար ազդեցության տակ:

— Ո՞վ է այդ ծերունի մարդը, — հարցնում էր Ծառուկին վանքի ծառաներից մեկը, շարունակ քորելով մեջքը և սրելով յուր քոսա բեղերը:

— Օ՜, մի՞թե չեք ճանաչում, դա ամբողջ Հայաստանի մեջ սուրբ և զորավոր մարդ է, — պատասխանեց Ծառուկը, առանձին նշանակություն տալով յուր խոսքերին:

— Ինչպե՞ս, ուրեմն մեր Սահակ սրբազանից էլ մե՞ծ է,— հարցրեց քոսա ծառան՝ սուր հայացք նետելով Ծառուկի վրա:

— Իհարկե, ձեր Սահակ սրբազանը ի՞նչ է դրա առաջ: Իմ հայր սուրբը կաթողիկոսից էլ բարձր է:

— Է՛, ի՜նչ մեծ մարդ է եղել...

— Իհարկե մեծ է: Ամբողջ արաբաց գունդը դողում է դրանից, մի՞թե լսած չեք Մարտիրոս վանահոր անունը:

— Չէ, որտեղի՞ց կլինեմ լսած:

— Դե՛, փայտ բեր, ցուրտ է, ես ճանապարհից նոր եմ եկել, մի՞թե չես տեսնում, որ օջախը հանգչում է, — ավելացրեց Ծառուկը հրամայաբար, երբ նկատեց յուրխոսքերի ազդեցությունը:

— Այս րոպեիս, ղուրբա՛ն, — ասաց ծառան և դուրս գնալով մի քանի փայտ բերեց և կրակը չաղացրեց: Ծառուկի քունը տանում էր, այնինչ վանքի ծառան պատճառ էրփնտրում նորից խոսակցություն բանալու:

— Երևի շա՞տ հեռու տեղից եք գալիս, — հարցրեց նա;

— Օ՛, էլ մի՛ ասա, ամբողջ երեք օր ճանապարհ ենք գալիս:

— Իսկ ի՞նչն է ստիպում ձեզ այդպես վռազ ճանապարհ գալու, մի՞թե Սահակ սրբազանի մոտ խիստ կարևոր գործ ունեիք:

Ծառուկը, ինչպես էլեկտրականությունից ցնցված, վեր թռավ տեղից և ուղղակի իրեն խոսակցի աչքերը դիտեց: Ըստ երևույթին վատ տպավորություն թողեց նրավրա, որ հոնքերը կիտելով կարճ կտրեց.

— Է՛ , բարեկա՛մ, դրանով մենք շատ հեռու կերթանք, ավելի լավ է ինձ համար ընթրիք բերես, ես հոգնած եմ և քնել եմ ուզում:

Քոսա ծառան նկատեց, որ էլ նրանից ոչինչ չի իմանա, ուստի ընթրիքը բերեց դրեց Ծառուկի առաջ և քայլերն ուղղեց դեպի վանահոր խուցը՝ մի գիրկ փայտ ներստանելով:

Կարճ ժամանակից հետո Ծառուկը, ընթրիքն անելով, մեկնվեց կրակի մոտ և անուշ քնի մեջ ընկղմվեց. եթե աշխարհն էլ տանեին, չէր իմանա:

Բ

Վանքը, ուր իջավ Մարտիրոս հայրը, գտնվում էր Բյուրական ամրոցում, որ շինել էր Հովհաննես կաթողիկոսը կոփածո քարերով և ուր փակակալ էր Լուսավորչի դռանՍահակ անունով մի եպիսկոպոս: Սահակը թխադեմ, բայց լիքը մարդ էր: Լայն թիկունքը և ուժեղ բազուկները տալիս էին նրան մի առանձին հաղթանդամ տեսք:Միջին հասակի էր նա, մոտ 40 — 45 տարեկան, միշտ ուրախ, զվարթ, իսկ բնավորությամբ՝ կատակասեր: Գեթ արտաքուստ իրեն ցույց էր տալիս շատ

զվարճասեր ևո՛չ մի բանի վրա չմտածող, այնպես որ շրջակա գյուղացիները նրան «հանաքչի սրբազան» անունն էին տվել և սաստիկ համակրում ու սիրում էին:

Արդարև, Սահակ սրբազանը յուր պարզ բնավորությամբ գրավել էր շրջակա գյուղացոց համակրությունը: Իսկ եթե թափանցեինք նրա հոգու խորքը, կտեսնեինք, որհոգին կատակ չէր անում, չէր ծիծաղում, չէր ժպտում, ինչպես արտաքուստ, այլ ընդհակառակը, հոգին պատած էր այն տեսակ տխուր և սրտամաշ մտքերով, որլացացնելու չափ կսկծացնում էր իրեն: Խաբուսիկ և կեղծ էին Սահակ սրբազանի կատակներն ու ժպիտները: Նա արտաքուստ այդ դիրքն էր ընդունել միմիայնգյուղացոց համակրությունն ու սերը վայելելու, որի մեջ և հաջողություն ունի՛ր: Իսկ իրեն հենց այդ էր պետք: Ուրիշ բանի նա կարոտ չէր:

Երբ Մարտիրոս վանահայրը մտավ նրա խուցը, նա մտազբաղ նստած էր և առաջը թափված էին զանազան թղթի կտորներ, որոնց մեկ-մեկ վերցնում էր, ջոկում, աչքիանցնում և ինքն իրեն մտածում: Ճրագի աղոտ լուսավորությունը ընկել էր նրա կլոր և լիքը երեսին, որ այդ ժամանակ խիստ դժգույն էր: Այդ միջոցին նրա լուրջդեմքից անհետացել էր ժպիտը, և հայացքը ներկայացնում էր խոր ու ծանրակշիռ գործերով զբաղվող մարդու հայացք:

— Վերջապե՛ս... — ասաց նա, տեսնելով Մարտիրոս հորը, — վերջապես եկար, իսկ ես քո մասին անհանգստանում էի:

— Ինձ համար ի՞նչ կարիք կար անհանգստանալու, սրբազա՛ն, ես ծեր եմ և ուժասպառ, իմ օրերը համարված են, և ես շատ շուտ գերեզման կմտնեմ:

— Վա՛հ, Մարտիրոս հայր, ի՞նչ ես ասում, մի՞թե գերեզմանը իրավունք ունի քեզ նման սուրբ մարդուն կլանելու:

— Կատարյալ իրավունք ունի, ինչպես և ամեն մարդու:

— Չէ՛, ես իրավունք չեմ տալիս, դեռ հարկավոր ես, շա՛տ հարկավոր, երբ որ ժամանակը կգա, ես քեզ կհայտնեմ:

— Վա՛հ, լավ է, մահվան իրավո՞ւնքն էլ ես ուզում ձեռքդ գցել, — պատասխանեց Մարտիրոս հայրը, և մի դառն ժպիտ անցավ նրա դեմքի վրայով:

— Իհարկե, իհարկե. աստված քեզ վրա իրավունք չունի, դու մերն ես և հարկավոր ես մեզ: Ես հոգեհան հրեշտակի թևերը կկտրատեմ, եթե քեզ մոտենա:

— Սրբազա՛ն, երևում է, որ դու հանաք անելով էլ պետք է մեռնես:

— Իհարկե, դրանից ավելի ի՞նչ պիտի տանենք այս փուչ աշխարհից: Բայց կատակները մի կողմ թողնենք, արի բարձրացիր նստիր ահա այս բարձի վրա, հոգնածկլինես:

Մարտիրոս վանահայրը յուր ձմեռվա քուրքը մի կողմ գցեց, ծալապատիկ նստեց թախտին և լուռ դեպի ճրագի աղոտ լուսավորությունը նայեց: Երկուսն էլ կարճժամանակով լուռ էին:

— Ի՞նչ տեղեկություններ ես ժողովել, սրբազա՛ն հայր,— լռությունն ընդհատելով հարցրեց Մարտիրոս հայրը:

— Տեղեկություններ շատ ունեմ, բայց, դժբախտաբար, ուրախ ոչինչ չկա, ամեն բան դեպի վատն է գնում:

— Ինչպե՞ս, մի՞թե մեր ծրագրերն էլ են քանդվում, — հարցրեց Մարտիրոս հայրը և կիսով չափ բարձրացավ տեղից:

— Չէ՛, խոսքս մեր ծրագրերի մասին չէ, ընդհակառակը, մեծ ծրագրերն առաջ են գնում խիստ լավ: Ամեն մի վանքում պատրաստություններ են տեսնում, խմբեր ենկազմում: Մեր գործակալները շատ լավ են գործում, բայց Աշոտ Երկաթի Կ. Պոլիս գնալով գործը կանգ է առել. զանազան բախտախնդիր իշխաններ արգելք են լինումդրան և ժողովրդին գրգռում Աշոտ Երկաթի դեմ:

— Որքան էլ ցավալի է, բայց այդպես է: Այդ իշխաններին պետք է վերջ դնել դրանք հայի տունը քանդեցին, բայց ի՞նչ ասես, որ Աշոտ Երկաթը արհամարհում է դրանցև դավաճան իշխաններին յուր ձեռքից բաց թողնում:

— Մի՞թե այդ քո ներկայությամբ էր:

— Ես ներկա էի, բայց խեղդեցի իմ մեջ բարկության բոցը: Ռշտունյաց և Անձևացյաց իշխաններին իմ ձեռքով հանձնեցի նրան, որոնք դավադրություններ էին լարելնրա կյանքի դեմ, բայց նա արձակեց նրանց: Ժողովուրդը ուզում էր պատառ-պատառ անել, բայց ես ազատեցի նրանց՝ բարձր պահելով թագավորի խոսքը ներողամտությունը:

— Սպասիր, հա՛յր Մարտիրոս, ահա կարդա այս նամակը և տես, թե ի՞նչ են գրում այդ ձեր ազատած իշխանների մասին, — ասաց Սահակ սրբազանը և վերցնելովսեղանի վրա փռված նամակներից մեկը, հանձնեց Մարտիրոս հորը: Վանահայրը ուշադրությամբ կարդաց նամակը և մահվան գունատությունը

պատեց նրա ճերմակդեմքը: Բարկությամբ դեն շպրտեց թուղթը, վեր կացավ տեղից և սկսեց արագ-արագ շրջել սենյակում:

— Դավաճաննե՛ր, անպիտաննե՛ր, լրբե՛ր… Ես գիտեի, ես ճանաչում էի դրանց… Ա՛խ, սխալվեց Աշոտ Երկաթը, պետք էր դրանց տեղն ու տեղը կախել և ոչ թեազատել:

— Տեսնո՞ւմ ես, ի՞նչ սոսկալի դավադրություն են կազմում Աշոտ Երկաթի դեմ և ո՞ւմ են իրենց ձեռքի գործիք դարձնում — նրանց, ովքեր երախտիք ունեն ԱշոտԵրկաթից, որոնք նրա աղն ու հացն են ուտում: Այժմ Գուգարաց իշխաններին՝ Վասակ և Աշոտ Գնթունիներին են ուզում ձեռք գցել և ապստամբեցնել օրինականթագավորի դեմ: Տեսնո՞ւմ եք, թե այդ ձեր ազատած իշխանները ի՞նչ են անում:

— Արծրունյաց Գագիկի բաներն են դրանք. նա է այս բոլոր դավադրությանց կենտրոնը և մեր ամբողջ ջանքը այդ դավադրությանց խորտակման մեջ պիտի լինի: Ի՞նչեղավ, ե՞րբ պիտի գա Սահակ քահանան:

— Վաղը, երեկոյան դեմ կհավաքվեն Սահակ Արծրունյաց քահանան, Գևորգ Մարզպետունին և Բասյանց գավառի իշխանը:

— Թող գա՛ն, պետք է սպասել դրանց, պետք է տեղեկություն ժողովել Տեր Սահակից, թե արդյոք էլ ինչե՞ր է ծրագրում ատելի Գագիկ Արծրունին:

— Անպատճա՛ռ: Մեր գլխավոր երկյուղը Վասպուրականից է: Դա զորավոր ախոյան է, որից պիտի զգույշ լինել:

— Բայց Տարոնից խիստ լավ տեղեկություններ են ստացված, այնտեղ արդեն պատրաստի մի գունդ ունենք, մոտ 400 մարդուց բաղկացած:

— Ապրի՛ Գևորգ իշխանը, այդ նրա շնորհքն է:

Այդ ժամանակ վանքի դուռը ծեծեցին: Նրանք երկուսն էլ լսեցին և հետաքրքրությամբ սպասում էին, թե ո՞վ պիտի լինի, որ այդպես կես-գիշերին դուռը ծեծում է:Սահակ սրբազանը շտապով դուրս գնաց և հրամայեց դուռը բանալ, երբ նկատեց մի ձիավոր՝ կանգնած վանքի դռանը:

Ձյունը քուլա-քուլա փրթում էր, և ձիավորը ամբողջապես կոլոլված էր ձյան մեջ: Նա շտապով ներս մտավ վանքի գավիթը և արագությամբ ցած թռչելով

ձիուց, ուղղակի դեպի սրբազանը դիմեց, որ դեռ ապուշ կտրած նայում է նրան, առանց ճանաչելու ուշացած ճանապարհորդին:

— Ողջո՛ւյն, սրբազա՛ն հայր, — ասաց ճանապարհորդը և սովոր մարդու նման ուղղակի դիմեց դեպի սրբազանի խուցը:

Սրբազանը մեքենաբար ներս մտավ և երբ ճրագի աղոտ լույսի տակ դիտեց նրա դեմքի գծագրությունը՝ քա՛հ-քա՛հ մի քրքիջ արձակեց:

— Վա՛հ, Տե՛ր-Սահակ, ես քեզ բոլորովին չճանաչեցի. ձյունից այնքան ես ճերմակել, որ հարյուր տարեկան զառամյալ ծեր կարծեցի: Բարո՛վ, հազա՛ր բարի ես եկել, բայց մենք քեզ այսօր չէինք սպասում, — ասաց սրբազանը:

Եկողը, որ Արծրունյաց տան քահանա Տեր-Սահակն էր, մոտենալով նախ Մարտիրոս վանահոր աջը համբուրեց, ապա սկսեց թափ տալ յուր վրայի ձյունը և շորերիցսառույցները պոկել:

— Մեռա՛, ամբողջ գիշեր ճանապարհ էի գալիս, — ասաց նա:

— Հը՛, երևի կարևոր լուր ունես, որ այդպես շտապով ճանապարհորդել ես:

— Առայժմ միայն մի ուրախալի լուր կասեմ, իսկ մնացածը կթողնեմ վաղվան: Ես հոգնած եմ, ննջել եմ ուզում: Յուսուֆը վերջապես հանգիստ թողեց Գագիկին և յուրզորքերով Ատրպատական քաշվեց: Այժմ Հայաստանը մի փոքր շունչ կառնի, եթե դավաճան և քսու իշխանները գլուխ չբարձրացնեն:

— Յուսուֆը այնքան վտանգավոր չէ, որքան դավաճանները, — նկատեց Մարտիրոս հայրը լուրջ կերպով, — բայց այժմ գնա հանգստացիր, վաղը կմտածենք այդմասին:

Սահակ սրբազանը և Տեր-Սահակը դուրս գնացին, թողնելով Մարտիրոս հորը միայնակ, որը դեռ երկար ժամանակ արթուն էր, մինչև որ հոգնածությունը հաղթեցնրան, և նա քուն մտավ: Ժողովրդի հայրը ննջում էր... բայց խիստ վրդովալից և անհանգիստ էր այդ քունը, որը կարճ ժամանակ, տևեց, և նա իսկույն վեր թռավ: Օրըբացվել էր, և արևի անդրանիկ ճառագայթներից պսպղում էր ձյունը:

Նույն օրը հասավ, և Գևորգ Մարզպետունի իշխանը յուր փոքրաթիվ ձիավորներով, որոնց սովորություն ուներ միշտ յուր հետը վերցնելու և հարկավոր դեպքերումնեղելու արաբներին: Շուտով այդ չորս անձինք՝ երեք հոգևորական և մի աշխարհական, խորհրդի նստեցին, որը շատ երկար տևեց: Չորսն էլ տխուր

էին, ուրախության ո՛չ մի նշույլ չէր երևում նրանց դեմքերին: Ապագան մութ ու անորոշ էր: Կատակասեր սրբազանն էլ մոռացել էր յուր կատակները և ընկել մտածությանծովը:

— Չէ՛, շատ անմխիթար է հայի ապագան, — լռությունը ընդհատեց Մարտիրոս վանահայրը՝ դառնալով խորհրդակիցներին, — բայց մենք ամենևին չպիտիընկճվենք, չպիտի հուսահատվենք: Ի՞նչ անենք, թե օր-օրի վրա խռովությունները ավելանում են և դավաճանների թիվը շատանում է: Մենք մեր պարտքը պիտիկատարենք, որպեսզի ամոթով չմնանք մեր խղճի առաջ: Էլ ի՞նչ հայ ենք, որ հայի նեղ ժամանակը պետք չգանք, մեր կյանքը չզոհենք նրան: Ի՞նչ անենք, որԱրծրունյաց Գագիկը, փառասիրական ձգտումներից դրդված, դիմում է ամեն միջոցի, ձգտում է իմ և Գևորգի կյանքն էլ վերացնելու: Թող մեռնենք, թող սպանել տամեզ, եթե պետք է մեր կյանքը նրան, ինչ վնաս, մեր տեղը ուրիշները դուրս կգան, իսկ դրանց տեղը դարձյալ ուրիշներ... Կրկնում եմ, մենք պիտի ճգնենք վերացնելարգելքները և ծառայել ժողովրդին ու օրինական թագավորին: Այդ պարտքը սուրբ է, և այն սրբությամբ էլ պիտի կատարենք: Թող Գևորգ իշխանը զենքով հալածեթշնամիներին, իսկ մենք խոսքով: Մեր պարտքը պիտի լինի խրախուսել ժողովրդին, դրանցից փոքրիկ գնդեր կազմել և այդ գնդերը հանձնել իշխանիհրամանատարությանը, որի պարտքն էլ պիտի լինի օգնել Աշոտ Երկաթին:

— Բայց, հա՛յր սուրբ, մեր հաջողությունը շատ դանդաղ է առաջ գնում, — ավելացրեց Տեր-Սահակը, — Վասպուրականում ո՛չ մի գործ առաջ չի գնում, այնտեղ լուրջկերպով հսկում է Գագիկը և հոտն էլ առել է, ես վախենում եմ Հեղինեի վիճակից:

— Ճիշտ, ի՞նչ է անում Հեղինեն, երկար ժամանակ է նրանից լուր չի ստացվել,— հարցրեց սրբազանը:

— Լսելով հոր տմարդի գործերը՝ ապրում է ախ ու
վախով: Ազնիվ, հայրենասեր աղջիկ է, բայց ցավում եմ, որ վերջը վատ է լինելու:

— Ինչո՞ւ:

— Շատ պարզ: Վաղ թե ուշ հայրը լսելու է նրա արարքները, և այն ժամանակ մութ բանտերը և տանջանքները նրա համար անխուսափելի են:

— Պետք է ազատել նրան հոր ճիրաններից,— ավելացրեց Գևորգ իշխանը, որ մինչ այդ լուռ էր:

— Հը՛, ի՞նչ է, հո դուր չի՞ գալիս քեզ Արծրունյաց օրիորդը, — հարցրեց սրբազանը, որի վրա ամենքը ծիծաղեցին:

— Է՛հ, սրբազա՛ն հայր, այսպիսի ժամանակ մեզ շատ բան է դուր գալիս, բայց ուշադրություն չենք դարձնում:

— Չէ՛, ի՞նչ կա որ, մի այնպիսի՛ հարսանիք կանենք, որ քեֆդ գա, դեռ հարսանիքումդ էլ պար կգամ:

— Բայց հանաքը մի կողմ, սրբազա՛ն, նա ամեն կերպ ուզում է փախուստ տալ Վասպուրականից, — ավելացրեց Տեր-Սահակը:

— Թող գա՛, այդ մի սոսկալի հարված կլինի դավաճանին: Բացի դրանից, թող այս գործում խառնվեն նաև օրիորդները: Դու, Սահա՛կ հայր, պատրաստվիր դրան, իսկես և Գևորգ իշխանը շուտով կազատենք նրան: Մենք չենք թողնի, որ անմեղ զոհը տանջվի Գագիկի ճիրաններում, — ասաց Մարտիրոս հայրը: Եվ ապա, զանազանծրագրեր կազմելուց և կարգադրություններ անելուց հետո, մյուս օրն նեթ ցրվեցին զանազան կողմեր՝ թողնելով Սահակ սրբազանին Բյուրական ամրոցում կրկինմիայնակ:

Գ

Ռշտունյաց և Անձևացյաց իշխանները, ազատվելով կապանքից, շտապով ներկայացան Գագիկ արքային և ամեն մանրամասնություն պատմեցին: Գագիկըզայրացավ, բարկության ներկն անցավ նրա դեմքի վրայով, և նա կատաղած կանչեց.

— Լա՜վ, Աշոտ Երկաթը կրկին չի պրծնի իմ ձեռքից, եթե նույնիսկ ամբողջ Բյուզանդիոնի բանակն էլ հետը բերի: Այժմ ես կդիմեմ այնպիսի միջոցի, որի դեմ չի կարողկանգնել ո՛չ մի զորություն:

— Ի՞նչ միջոցի, — հարցրեց Անձևացյաց իշխանը՝ խորամանկ աչքերը հառելով Գագիկ Արծրունուն:

— Այն տեսակ միջոցի, որով խռովություն կձգեմ հայոց բոլոր իշխանների մեջ: Ես կհարուցանեմ նրա դեմ յուր սիրելի իշխաններին, եղբորն անգամ կգրգռենք յուր դեմն նրա գահը հանձնել կտամ Աշոտ սպարապետին, որ վաղուց ձգտում է դրան. իսկ այն անզգամներին՝ զառամյալ ծերունուն և Գևորգ իշխանին կհրամայեմ մաս-մասկտրատել, որ համարձակվում են իմ դեմ գործել:

— Այո՛, լավ միտք է, դրանից լավ միջոց չի կարելի ձեռնարկել... Օ, եթե դա հաջողվի, այն ժամանակ սիրտս հանգստացած կլինի, ապա թե ոչ այն անպատվությունը, որ Աշոտ Երկաթը հասցրեց մեզ՝ մոռանալ չի կարելի:

— Բայց զարմանալի բան է, կարծես Մարտիրոս վանահայրը տեղեկություն ուներ մեր որոգայթի մասին, որ այնպես հանկարծակի օգնության հասավ: Ուրիշ կերպ չիկարելի բացատրել, թե չէ նա երբեք այդպիսի խմբով ման չի գալիս և բացի դրանից, չէր էլ համարձակվի մեզ վրա հարձակում գործել, — նկատեց Անձևացյացիշխանը փոքր լռությունից հետո:

— Ես էլ նույն կարծիքին եմ, արքա՛, — պատասխանեց Ռշտունյաց իշխանը՝ դիմելով Գագիկին, — որ մեր ամեն մի քայլափոխը լրտեսվում է ու հաղորդվում էՄարտիրոս հորը, և մեր հակառակորդները շատ լավ գիտեն, թե մենք ի՞նչ ենք անում և ի՞նչ մտածում: Եվ եթե Աշոտ Երկաթը արտաքուստ լավ հարաբերության մեջ էՎասպուրականի հետ, ապա դա պիտի վերագրել միայն նրան, որ բացահայտ կերպով չի ուզում թշնամանալ քեզ հետ:

— Ո՛չ, իշխաններ, դուք սխալվում եք, ո՛չ մի մարդկային արարած չի կարող լրտեսել մեր խոսակցությունը, իսկ եթե Գևորգ իշխանը և Մարտիրոս հայրը նրանօգնության հասան, դա մի դիպված պետք է համարել և ուրիշ ոչինչ:

— Ոչ, տեր իմ, մեզ լրտեսում են, գուցե և հենց այս րոպեիս: Պետք է գտնել այդ լրտեսին և պատմել: Շուտափույթ պետք է ոչնչացնել նրան, Գևորգ Իշխանին ևՄարտիրոս հորը, որոնք ինչ-որ բան են պատրաստում, որը պիտի տակնուվրա անի մեր բոլոր ծրագրերը:

Գագիկը ուսերը թոթափեց և ընկավ մտածության մեջ: Մի տեսակ կասկած անցավ նրա մտքով, որն ստիպեց նրա հոգին այլայլելու, բայց շուտով էլ զսպեց իրեն նապա դառնալով իշխաններին, ասաց.

— Թողնե՛նք այդ: Լրտեսները իրենց արժանավոր պատիժը կստանան, բայց հարկավոր է նաև մեր գործը առաջ տանել: Լուր է պտտվում, որ Աշոտ ԵրկաթըԲյուզանդիոնում մեծ ընդունելության է արժանացել և թագով ու ոսկեհուռ զգեստներով վարձատրվել: Վաղ թե ուշ նա հունական զորքերով դառնալու է Հայաստան, նայն ժամանակ ամեն ինչ կերպարանափոխվելու է: Պետք չէ այս ժամանակը կորցնել, քանի նա Հայրենիքում չի, ապա թե ոչ հետո շատ դժվարին կլինի առաջն առնել:Ես շատ անհանգիստ ես: Պետք է շտապել որոմն ցանելու, որ այն հասունանա այն ժամանակ, երբ Աշոտ Երկաթը Հայաստան կգա: Դու, Ատո՛մ

իշխան, վաղօրոքպետք է գլուխ բերես մի դժվարին գործ: Ես քեզ վրա մեծ հույս ունեմ, դու լեզվով ճարտար ես և հոգով արի: Դու պիտի մտնես Հայաստան և առատությամբ որոմնցանես: Պիտի ջանաս ապստամբեցնել Աշոտ Երկաթի դեմ Գուգարաց վերակացուներին՝ Վասակ և Աշոտ Գնթունիներին, Աբխազաց Գուրգենին և եթե կարող ես նաևԱշոտ Երկաթի եղբորը՝ Աբասին: Ճարտար լեզուն օձին բնից կհանի, և ես վսաահ եմ քեզ վրա: Իսկ գալով Ռշտունյաց իշխանին, սրա պարտքը պիտի լինի ներկայանալՅուսուֆին և ամեն ջանք թափել, որ Աշոտ սպարապետը գահ նստի Աշոտ Երկաթի տեղ, և այն ժամանակ խռովության քարը, գլորված կլինի, իսկ այդ պղտոր ջրի մեջմենք մեր որսը կանենք, մեր գործերը՝ առաջ կտանենք, — ասաց Գագիկը և ապա սկսեց շրջել սենյակում:

Այնուհետև երկար խորհրդակցում էին Հայաստանի այս երեք որոմն ցանողները: Եվ ապա Գագիկը, նամակներ պատրաստելով զանազան իշխանների անունով, դրանք հանձնեց Ռշտունյաց ու Անձևացյաց իշխաններին և ճանապարհ ձգեց պալատից:

Երբ իշխանները հեռացան, Գագիկը մի տեսակ ծանր մտատանջության մեջ ընկավ: Նրա հոգին սաստիկ խռովված ու այլայլված էր, և խորին թախիծը կրծում էրսիրտը: Այդ միջոցին բացվեց յուր առանձնարանի դուռը և շեմքում երևաց դուստրը՝ Հեղինեն:

Գագիկը վեր թռավ տեղից և վազեվազ դեպի աղջիկը գնաց: Նա ուզեց գրկել նրան, փայփայել, որպեսզի մոռանա յուր վիշտը, սրտի և հոգու այլայլությունը, բայցսառածի նման կանգ առավ, և հոգին ավելի այլայլվեց, ավելի վրդովվեց, երբ նկատեց աղջկա տխուր, դալկացած դեմքը: Հեղինեի աչքերում երևում էին դեռչցամաքած արցունքներ և միևնույն ժամանակ՝ մի տեսակ ոգևորության փայլ, որոնք վճռականություն էին արտահայտում:

— Ի՞նչ կա, աղջի՛կս, դու տխուր ես և աչքերդ արտասուքով լի են, ի՞նչ է պատահել քեզ, — ասաց Գագիկը և ուզեց գրկել Հեղինեին, փայփայել նրան, համբուրելսիրուն աչքերը: Գագիկի հոգին լի էր խարդավանքով, դավադրություններով և շփոթություններով և յուր այդ ալեծուփ հոգին ուզում էր խաղաղեցնել կուսականանմեղության առաջ: Հայրական սիրտը կարոտ էր դրան, կարոտ էր որդիական այն անարատ սիրույն, որի առաջ մոռացվում են աշխարհային զազրելի և գծուծգործերը:

— Հեռո՛ւ ինձանից, — կանչեց Հեղինեն հրելով հորը, երբ նա ուզում էր գրկել իրեն և մի այնպիսի մոլեգին հայացք ուղղեց Գագիկի վրա, որ նա՝ Վասպուրականիարքան, սարսռեցավ և մի տեսակ սառը դող անցավ մարմնով:

Մի քանի քայլ ետ-ետ գնաց Գագիկը և մեխվածի նման կանգ առավ, առանց հասկանալու, թե ի՞նչ է կատարվում շուրջը և որտե՞ղ է գտնվում:

— Ահա այն լրտեսը, որին դուք որոնում էիք, որին ուզում էիք պատժել, կախաղան բարձրացնել, այն ե՛ս եմ, Արծրունյաց Գագիկ թագավորի աղջիկը՝ Հեղինեն, բռնեցեք նրան և գործադրեք ձեր տանջանքները:

Գագիկը մի քանի րոպե ցնորվածի նման նայեց աղջկան, մի խորին ա՜խ քաշեց, սիրտը բռնեց, որը կարծես խոցվեց մահաբեր սրով և դառն կերպով ասաց.

— Աղջի՛կս, Հեղինե՛... վա՛յ ինձ, նա ցնորվել է... Է՛յ, ո՞վ կա այդտեղ, — ասաց Գագիկը և ծափ տվեց:

Ծափի վրա ներս վազեցին երկու սպասավոր:

— Չէ՛, հա՛յր, ես ցնորված չեմ, զուր դու իմ հոգու այլայլմունքը նկատելով ինձ ցնորվածի տեղ ես ընդունում: Ես կրկին հայտնում եմ, որ ե՛ս եմ այն լրտեսը, որտեղեկություններ է տալիս Բագրևանդի վանահորը և Աշոտ Երկաթին: Բռնեցե՛ք ինձ, հրամայեցեք սպանել, որ վերջ դրվեն իմ տանջանքներին. ապա թե ոչ ես այլևսչեմ կարող տանել իմ հոր ստոր դավաճանությունները…

Կատաղության փրփուրը անցավ Գագիկի դեմքին, աչքերը արյունով լցվեցան և զարհուրելի կերպով դուրս թռան ակնակապիճներից, մազերը փշաքաղվեցան, նբարկությունից դողացող ձեռքերը դեպի յուր սրի երախակալը տարավ:

— Լռի՛ր, լռի՛ր, Հեղինե՛, ապա թե ոչ՝ չգիտեմ ի՞նչ կանեմ քեզ: Է՛յ, դուրս տարեք սրան, — դիմեց Գագիկը սպասավորներին, որոնք շփոթված կանգնել էին դռներիմոտ:

— Չեմ լռի, և քանի շունչս բերանումս է, ես կբողոքեմ քո ստոր արարմունքի դեմ... Ամո՛թ մեր ցեղին, ամո՛թ Վասպուրականին, որ Մեհրուժանով չբավականանալով, այժմ Գագիկ էլ է ծնել...

— Չե՞ք լսում, — դարձավ կրկին Գագիկը դեպի սպասավորները՝ խեղդված ձայնով և հազիվ շունչ քաշելով, — հեռացրե՛ք սրան այստեղից այս րոպեիս:

Սպասավորները դուրս տարան Հեղինեին: Գագիկը սենյակում մնաց միայնակ: Վայրենի հայացքով նա չորս կողմն էր նայում. նրա կուրծքը արագ բարձրանում ուիջնում էր, իսկ դեմքը դարձել էր ահարկու: Մի տեսակ անորոշ և անհասկանալի բառեր էին երբեմն դուրս թռչում նրա բերանից: Մի փոքր հետո նա գլուխը բռնեց. կարծես փախչելիս լիներ յուր մարմնից, անջատվում, ջլատվում և սլանում էր հեռո՛ւ- հեռո՛ւ կամ կարծես թե հրդեհ լիներ յուր գլխում, որ լափվում էր բոցերով:Հիրավի, նրա գլուխը այրվում էր: Ժանտ բոցերը լափում էին նրա ուղեղը: Այնտեղ դադարել էր դատողությունը, հատել մտքերի պաշարը և տիրել ամայությունն ուչորությունը: Ոչի՛նչ, ոչի՛նչ կարծես չկար նրա գանգի մեջ, որը մի պահ առաջ որոգայթներ էր լարում, դավաճանության ծրագրեր կազմում... Ո՞ւր գնացին դրանք, ի՞նչեղան... Օ՜, մի հարված, և ամեն ինչ ոչնչացվեց, ամեն բան կերպարանափոխվեց. բայց մինչև ե՞րբ... Կանցնի փոթորիկը, գարշ մտքերը նորից տեղ կբռնեն նրամտքում, և ամեն բան առաջվա շավղով կընթանա... Այժմ նա շփոթված է, այլայլված, ինքն էլ չի իմանում, թե ո՞րտեղ է և ի՞նչ է անում: Գիտակցությունը հեռացել էնրանից՝ տեղի տալով հոգեկան բուռն վրդովմունքին... Հանկարծ Գագիկը գլուխը վեր բարձրացրեց, կրկին չորս կողմը նայեց, և դառն արցունքները երևացին նրաաչքերում... Այդ արցունքները սոսկալի կերպով կրծում էին նրա սիրտը: Նա ամենաթշվառ մարդն էր աշխարհիս երեսին... Մի փոքր ժամանակ անց նրա ջղերըհանդարտվեցին, գիտակցությունը տեղն եկավ և հրամայեց Հեղինեին ներս բերել: Խրոխտ և վայրենի էր նրա կերպարանքը այժմ: Առաջվա վրդովմունքը անցել էր՝ տեղի տալով անտարբեր սառնությանը:

Հեղինեն կանգնած էր այդ անտարբեր սառնության առաջ այնքա՜ն հանգիստ, այնքա՜ն խաղաղ, որ հոր սառնասրտությունը հաղթվելու վրա էր:

Երկուսն էլ լուռ էին, երկուսն էլ մտասույզ: Զորավորի դեմ կանգնած էր անզորը: Արդարության և վեհության դեմ՝ անարդարությունը և կեղտոտությունը... Արդյոք ո՞վպիտի հաղթեր...

Մի փոքր ժամանակ նայեց Գագիկը յուր աղջկան և ապա իջեցրեց յուր հայացքը գետին՝ չդիմացավ նրա քնքուշ, անմեղության տիպար հայացքին: Իջավ Գագիկիխրոխտ տեսքը, բարկության բոցը հանգավ նրա սրտում և աչքերում երևացին արտասուքի կաթիլներ... Ինչե՞ր անցան այդ վայրկյանին Վասպուրականի արքայիմտքով, հայտնի չէր, միայն թե նա չդիմացավ մի թույլ արարածի հայացքին և մոտենալով աղջկան՝ բռնեց նրա ձեռքերը:

Հեղինեի ձեռքերը սառն էին ինչպես սառույց և դողդողում էին աշնան տերևների նման: Հեղինեն էլ հուզված էր և մտազբաղ:

Մի տեսակ ծանր, խեղդող միտք ճնշում էր նրա հոգին, և նրան թվում էր, թե ոտքերի տակից փախչում է գետինը և ամբողջ աշխարհը արագ-արագ շրջան է կազմում նյուր հետ պտտեցնում թե՛ իրեն, թե՛ հորը և թե՛ այն սենյակը, ուր կանգնած էր ինքը... Ա՛խ, ինչքա՛ն արագ է պտտվում, բոպե առ բոպե արագացնում է յուր ընթացքը. ա՛խ, գոնե մի բոպե, մի վայրկյան դադարեր… Եվ Հեղինեն զգում է, որ ինքը չի կարողանում ոտքի վրա կանգնել, գլուխը շշմում է, աչքերն արդեն մթնել են, էլ ոչինչչի տեսնում, ամեն բան անհետանում է աչքերից, իսկ ինքը թռչում է անսահման տարածության վրա, հեռո՛ւ, հեռո՛ւ, դեպի անհայտություն, ո՞վ գիտե դեպի ուր... յուրաքաջ արդեն բացված են անհատակ անդունդներ, և նա զգում է, թե ինչպես անհուն բարձրությունից ընկնում է ցած, դիպչում մի ինչ-որ աներևույթ ժայռի, օրհասական մի ճիչ արձակում և ուշաթափվում...

Երբ բաց է անում աչքերը, տեսնում է, որ ինքը գտնվում է յուր ննջարանում, ուր մի կողմից նստած է հայրը և տխուր, վհատ աչքերը դարձրել է իրեն:

— Աղջի՛կս... Հեղինե՛, — ասում է Գագիկը, երբ տեսնում է աղջկա ուշքի գալը:

— Ա՛խ, — շշնջում է Հեղինեն և կրկին փակում աչքերը:

Նա զգում է ամբողջ իրողությունը, որ ինքը, չկարողանալով տանել յուր հոգեկան բուռն վրդովմունքը, ուշաթափվել էր հոր առանձնասենյակում, չդիմանալով հորայն ահարկու հայացքին, — որը սուր սլաքի նման ցցվում էր յուր սրտում, այն սրտում, որը նոր բացվող կոկոնի նման դեռ չգիտեր աշխարհային ո՛չ մի տառապանք ևլի հույսով հենց ուզում էր յուր քնքուշ թերթիկները բանալ, հագենալ թարմ օդով, երբ հանկարծ նրան դիմավորեց ահռելի, սարսռեցուցիչ փոթորիկը...

Ի՞նչ պիտի աներ թույլը հզորի առաջ…

Դ

Աշոտ Երկաթը, Հունաստանում փառավոր ընդունելություն գտնելուց հետո, հունական զորքերով վերադառնում էր Հայաստան... Ալեկոծյալ ծով էր ներկայացնումայդ ժամանակ Հայաստանը, և նա, իր հույսը օտար զորքերի վրա դնելով, գալիս էր խաղաղեցնելու այն ալիքները, որ ամեն բան ավերելով ո՛չ մի բան իր տեղը չէինթողել: Նա գալիս էր թագավորելու այնտեղ, ուր բացի իրենից թագավորում էին երկու հոգի՝ մինը Գագիկ Արծրունին Վասպուրականում, մյուսը հորեղբոր

որդին՝ Աշոտ սպարապետը Դվինում, չհաշված այն մանր իշխաններին, որոնք հայտնի կամ անհայտ կերպով թագավորում էին իրենց երկրներում:

Հունական զորքի գլուխ անցած՝ Աշոտ Երկաթը շտապում էր Հայաստան: Քանի դեռ չէր մտել յուր երկրի սահմանները, տխուր էր նա: Երբեմն նայելով յուր ետևիցսլացող հունական գնդին, նրա սիրտը ավելի էր կսկծում, ավելի էր ցավում: Նա զգում էր, որ ինքը միայնակ է օտար երկրում, անտեր, անօգնական և թե յուր ետևիցսլացող գունդը օտար է իրեն և վաղը կարող է այդ սուրը յուր դեմ դարձնել... Բայց հենց որ մտավ յուր երկրի սահմանները, հենց որ ոտքը դրեց հայրենի հողի վրա, նրա սիրտը թունդ առավ, երակների մեջ կարծես նոր արյուն վազեց: Մի տեսակ սարսուռ անցավ նրա մարմնով, որը ցնցեց նրա մկանները, և նա զգաց, որ ինքն է այդհողի տերն ու տիրականը, թագավորն ու իշխանը, ու նա սուրը պատյանից հանելով, մտրակեց նժույգին և փոթորկի նման սլացավ առաջ՝ դեպի վեհ Մասիսը, դեպիյուր երկրի սիրտն ու հոգին...

Գունդը սլանում էր նրա ետևից: Ամեն տեղ, ուր կային շեն գյուղորայք և քաղաքներ, ընդառաջ էին գալիս և ողջունում իրենց թագավորին, գյուղացի աղջիկներն ուտղաներն անգամ ծաղիկներ էին փռում Երկաթի ոտքերի տակ և ուրախաձայն աղաղակում.

Ապրի՛ Աշոտը շատ ու շատ օրեր,

Ապրի՛ Երկաթը բյուրավոր դարեր…

Աշոտ Երկաթը լսում էր անմեղ մանուկների բերանից այդ խոսքերը, ու նրա սիրտը հուզվում և տակնուվրա էր լինում: Իսկ երբ նա մոտեցավ Մասիս սարին, երբտեսավ նրա ալեզարդ գագաթը, նրա սիրտը փղձկաց և արտասուքներ ընկան աչքերից: Նա լուռ լալիս էր: Ո՞վ գիտե ինչի համար և կամ ի՞նչ մտքեր ալեկոծեցին նրասիրտը, ի՞նչ զգացմունքներ պատեցին հոգին… Նա տեսավ ալևոր Մասիսը և հուզվեց: Սիրուն էր Մասիսը: Վիթխարի հսկայի նման կուրծքը դեմ էր տվել հեպարտությամբ նայում էր չորս կողմ: Ամեն բան փոքր էր երևում նրա առաջ, այնինչ ինքը վե՛հ էր, բա՛րձր, և ի հաստատություն յուր կարծիքի, չորս կողմը արդենտիրում էր խավարը, այնինչ յուր գագաթը, սպիտակ ձյունային բարձրությունը, այնտե՛ղ, ուր տիրում է հավիտենական սառնամանիքը, բուքն ու մրրիկը դեռոսկեզօծված էր արևի թույլ, բայց հրաշալի ճառագայթներով... Ծիրանի քող էր ձգված այդ գագաթին: Ծիրանագույն քողով էր զարդարվել հսկա Մասիսը և այդպես էրընդունում տիրոջը, թագավորին, որ այսօր կրկին դառնում էր յուր գիրկը...

Բայց հետզհետե դա էլ նսեմացավ, նոսրացավ և հանկարծ չքացավ: Աներևույթ մի ձեռք հանկարծ վերցրեց այդ ծիրանի քողը հսկա Մասիսի գագաթից, և նա էլընկղմվեց խորին խավարի մեջ: Այժմ միայն նրա հսկա ստվերանկարն էր երևում:

Աշոտ Երկաթը սրտնեղեց: Նա ուզում էր երկա՛ր, շա՛տ երկար նայել այդ գագաթին, հագենալ նրանով, այնինչ խավարը շուտ կլանեց նրան և չթողեց յուր կարոտըհագեցնելու: Տխրեց Աշոտ Երկաթը և ձիու ընթացքը ավելի արագացրեց: Գիշերը հետզհետե պատում էր. հարկավոր էր շուտ տեղ հասնել, հանգստանալ և հանգիստտալ զորքերին: Հանկարծ խորին խավարի միջից լսվեցին ձիերի դոփյուններ: Ովքե՞ր էին դրանք, թշնամի՞, թե բարեկամ, նա չգիտեր, բայց որ դիմացի կողմից գունդէր գալիս — անկասկած էր: Աշոտ Երկաթը նշան արավ, և զորքը կանգնեց:

Բայց հանդիպակաց գունդը աներկյուղ առաջ էր գալիս, երևում էր, որ կամ նա ոչ մի բանից երկյուղ չունի, կամ էլ չի տեսնում իրենց: Երբ որ նրանք բավականինառաջ եկան, Աշոտ Երկաթը սուրը ճոճելով խրոխտ կանչեց.

— Ո՞վ է գալիս, բարեկա՞մ, թե թշնամի:

— Կեցցե՛ Աշոտ Երկաթը, ապրի՛ Մարտիրոս հայրը, — գոռաց գունդը և, մի փոքր առաջ գալով, կանգ առավ:

Աշոտ Երկաթը և Մարտիրոս վանահայրը գրկվեցին: Ծերունի վանահայրը ամուր սեղմեց նրան իր կրծքին և մրմնջաց.

— Կորածիս գտա, այժմ կապրի Հայաստանը:

Երկու խումբն էլ, որոնցից մեկին առաջնորդում էր մեզ ծանոթ Գևորգ Մարզպետունի իշխանը, միանալով իրար հետ՝ սրարշավ առաջ էին գնում: Հեռու էր Կողբգյուղաքաղաքը, ուր պիտի իջևանեին Երկաթը և զորքը:

Գյուղաքաղաքը արդեն երևում էր հեռվում, երբ հանկարծ մի քանի նետեր թռան, և ապա, հանկարծակի, մի խումբ խառնիճաղանճ ձայներ հանելով, սրերը հանած, հարձակվեց Աշոտ Երկաթի զորքի վրա:

— Դավաճանությո՛ւն, — կանչեց Աշոտ Երկաթը և նետվեց թշնամիների մեջ:

— Վա՜տ և անա՜րգ... — մռմռաց Մարտիրոս վանահայրը:

— Աշոտ սպարապետն է, նա դրժեց խոսքը և կրկին դավաճանեց, — պատասխանեց Գևորգ իշխանը և յուր խմբով հարձակվեց թշնամիների վրա:

Մթության մեջ լսվում էր միայն սրերի շխկոցը և ընկնողների վայնասունը: Կարճ ժամանակ անց թշնամին, որին ղեկավարում էր Աշոտ սպարապետը, չդիմանալովԱշոտ Երկաթի զորությանը, փախուստ տվեց դեպի Կողբ գյուղաքաղաքը: Բայց մեր խումբը ետ չկանգնեց: Նա հետևեց նրան, և քիչ ժամանակից հետո խավարերկիրը լուսավորվեց հրեղեն լեզուներով, որոնք հետզհետե ավելի ու ավելի էին բոցավառվում և մոխրակույտերի վերածում Կողբ գյուղաքաղաքը...

Բոցերի մեջ դեռ կռվում էին Աշոտ սպարապետի և Աշոտ Երկաթի զորքերը, այնինչ ժողովուրդը, փլատակների տակ թաղվելով՝ օգնություն էր կանչում:

Հանկարծ Աշոտ սպարապետը անհետացավ: Ինչպես երևվում է, նա փախուստ էր տվել գյուղից, այնինչ կոտորածը դեռ շարունակվում էր, և բոցերը ագահորենլափում էին շինությունները:

— Դադարեցրե՛ք կռիվը, — հրամայեց Աշոտ Երկաթը:

Բայց հանկարծ զորքերը, դադարեցնելով կոտորածը, թալանել սկսեցին հայերին, այն հայերին, որոնք իրենց թագավորին կռվով էին դիմավորում:

Ե

Մինչդեռ Աշոտ Երկաթը հունական զորքով վերադառնում էր Հայաստան, մինչդեռ ժողովուրդը ցնծության և ուրախության աղաղակներով էր ողջունում թագավորին, այդ միջոցին Վասպուրականի Գագիկ թագավորը միջոցներ էր որոնում ամեն կերպ նսեմացնելու Աշոտ Երկաթի փառքը և յուր իշխանությունը տարածելու ամենկողմ: Բայց նա այսօր շատ խռովված էր, մի խորին թախիծ տակնուվրա էր անում նրա սիրտը: Այն արի սիրտը, որ վախ անգամ չուներ կրակի մեջ նետվելու, այժմդողում էր և ամեն մի շշուկից վախենում: Հուսահատ մարդու նման նա կանգ առավ յուր շքեղ սենյակի պատուհանի մոտ և ապա բարձրացնելով թանձրվարագույրներից մեկը՝ դուրս նայեց: Դրսում փայլում էր գեղածիծաղ արևը և թռչունները ուրախ-ուրախ սավառնում էին օդում... Ցնծում էր բնությունը, ժպտում էրսիրուն արևը, բայց այդ տեսարանը ո՛չ մի տպավորություն չէր թողնում նրա վրա. նա ավելի էր տխրում, ավելի մռայվում:

— Օ՛, ինչ ծանր վերք հասցրեց ինձ աղջիկս: Ինչ որ չէի նախատեսել՝ կատարվում է: Եվ նա յուր արտասուքով ուզում է իմ իղձերը

ոչնչացնել, փափագներսխորտակել... Չէ՛, սիրում եմ աղջկաս, պաշտում եմ նրան, չեմ ուզում տեսնել նրա արցունքները, բայց միևնույն ժամանակ Գագիկ Արծրունու երկաթե կամքը կմնաանհողդողդ, կարծր և ամուր, այնպես, ինչպես այն ժայռերը, որոնց դարերից ի վեր ծեծում են Վանա ջրերը, բայց նրանք կան և կլինեն... Ինձ համար չկա ընտանիք, կին, դուստր, ժողովուրդ, քաղաք ու շեն. ամեն բան ոչինչ են Վասպուրականի թագավորի առաջ, և նա պիտի կոխկրտի ամեն բան յուր ոտքերի տակ, հուր ու մոխիրդարձնի ամբողջ Հայաստանը, միայն թե ոչնչացնի Բագրատունյաց տոհմը... Արծրունյաց արծվանիշ դրոշը պիտի տարածվի Հայաստանի մի ծայրից մինչև մյուսը, ահա այդ է ցանկանում Վասպուրականի Գագիկ թագավորը...

Գագիկը լռեց. նա չնկատեց անգամ, թե ինչպես կից սենյակում խշխշոց լսվեց և ինչպես մեկը զգույշ քայլերով մոտեցավ դռանը ու ծածկվեց թանձր վարագույրներիետևում:

— Պիտի մեռնի Աշոտ Երկաթը, ահա իմ դատավճիռը, — կանչեց Գագիկը մի տեսակ խուլ ձայնով, որ կարծես դուրս եկավ նրա թոքերի ամենամթին խոռոչներից:

Այդ խոսքերը լսելով վարագույրի մեջ պահվածի մարմնով մի ցնցում անցավ. նա ուզեց դուրս թռչել, փախչել այդ տեղից, բայց Գագիկը կրկին շարունակեց.

— Իսկ Հեղինեն... Է՛հ, մի ցնորք էր այդ բոլորը: Ես չեմ հավատում, որ նա լինի իմ տան լրտեսը, մատաղահաս սրտի թելադրանք էին նրա խոսքերը, քնքուշ, մեղմ սրտիարգասիք... Բայց նա չգիտե, որ քաղաքականությունը քնքշություն չի սիրում, որ նրա ասպարեզը հուր ու մոխիր… Արյո՛ւն է նրա ասպարեզը, և արյունով պիտիմաքրեմ իմ ճանապարհը. վա՛յ նրան, ով իմ առաջ կկանգնի...

Գագիկը կրկին լռեց: Այդ միջոցին լրտեսողը, որ Հեղինեն էր, դուրս թռավ թաքստի տեղից և անզգուշաբար աղմուկ հանեց: Գագիկը սարսռեց: Նա ետ նայեց և սկսեցդեպի կից սենյակի դուռը գնալ, որտեղ պահված էր օրիորդը, բայց հավաստիանալով, որ ոչ ոք չկա, նորից դեպի պատուհանը գնաց և սկսեց դիտել հեռվում ոլորվողճանապարհը: Նա կարծես սպասում էր մեկին: Այդ ժամանակ ճանապարհի վրա երևաց մի մարդ, որ երկայն նիզակը ձեռքին շտապ դեպի Գագիկ Արծրունու ամրոցնէր գալիս:

— Վերջապե՞ս, — ասաց Գագիկը ուրախացած: — Բավական ժամանակ է, որ ես լուր չունեմ, թե ի՞նչ են անում իմ մարդիկ:

Նա սկսեց անհանգստությամբ անցուդարձ անել սենյակում՝ մինչև ճանապարհորդը հասներ ամրոց:

Եվ ահա Գագիկի սենյակի դուռը կամաց բացվեց, և մի մարդ, աննկատելի ներս մտնելով, յուր նիզակը դռան մոտ դրեց, իսկ ինքը լուռ կանգնեց դռների մոտ: ԳագիկԱրծրունին մի քանի անգամ գնաց-եկավ սենյակում, բայց նրան չնկատեց: Նորեկ մարդը, որ կարճահասակ ու լիքն էր, անհամբերությամբ աչքերը Գագիկի վրա էրդարձրել և անթարթ աչքերով նրան էր նայում: Գագիկը կրկին մոտեցավ պատուհանին և նայեց դուրս: Իրեն հետաքրքրող ճանապարհորդը այլևս չէր երևում:

— Ինչո՞ւ ուշացավ... նա ամրոցի գաղտնի ճանապարհը գիտե, ի՞նչը զբաղեցրեց Քոսակին:

— Ես այստեղ եմ, տե՛ր, — կանչեց ուղևորը և խոր գլուխ տվեց:

— Ա , դու արդեն այստե՞ղ ես: Ես կարծեցի, թե դևերը քեզ կուլ տվին:

— Դևերը ինձ ձեռք չեն տա, տե՛ր, ես նրանց գլխավորն եմ, — պատասխանեց Քոսակը:

Գագիկի դեմքին մի դառն ժպիտ երևաց, որ ամենին չսազեց նրա տխուր տրամադրությանը: Նա նստեց բազմոցի վրա և, դիմելով Քոսակին, ասաց.

— Արի, Քոսա՛կ, նստիր, պատմիր տեսնենք ի՞նչ տեղեկություններ ունես:

— Ո՛չ, տե՛ր, ես հրաժարվում եմ մի բան ասելուց, մինչև չեմ հավաստիանա, թե մեզ լսող չկա:

Գագիկը կարմրեց: Նրա մտքով կայծակի նման անցավ Հեղինեն, դա ցնցեց յուր ամբողջ մարմինը, բայց հոգու ալեկոծությունը ծածկելով՝ վեր կացավ տեղից, դռներըպինդ փակեց, վարագույրները ցած թողեց և կրկին նստելով տեղը, հրավիրեց Քոսակին:

— Արի, Քոսա՛կ, այժմ կարող ես հանգիստ մնալ, մեզ ոչ ոք չի կարող լսել:

— Տե՛ր, այս անգամ մենք տարվեցինք:

— Ինչպե՞ս, — հարցրեց Գագիկը զարհուրելով:

— Չպետք է հուսահատվել՝ թեև այժմ ուժը նրանց կողմն է, բայց խորամանկության և հեռատեսության առաջ ամեն բան կոչնչանա: Աշոտ Երկաթը հունական զորքովարդեն մտավ Հայաստան: Ժողովուրդը ցնծության աղաղակներ է

արձակում, և նորատի կույսերը ծաղիկներ են փռում նրա ոտքերի տակ: Կողբ գյուղաքաղաքի մոտ, երբ նրա հոգնած զորքը հանգստության էր կարոտ և սպասում էրճոխ ընդունելության, մենք միայն մոխրակույտ քաղաքը հանձնեցինք:

— Ինչպե՞ս, մի՞թե Կողբը՝ Աշոտ սպարապետի կալվածքը ավերվեց:

— Քարը-քարի վրա չմնաց: Դեռ Կողբին չմոտեցած, Աշոտ սպարապետը Անձևացյաց և Ռշտունյաց իշխանների հետ միասին անակնկալ կերպով հարձակվեց ԱշոտԵրկաթի վրա և սկսեց կոտորել հունաց զորքը, բայց այդտեղ մենք տարվեցինք: Սպիտակ դևը կրկին օգնության հասավ և քշեց մեզ...

— Ո՞վ…

— Սպիտակ դևը: Մի՞թե չեք ճանաչում նրան, խոսքս Մարտիրոս վանահոր մասին է, որ անակնկալ կերպով հայտնվում է այնտեղ, ուր մենք չենք սպասում:

— Անիծվի՛ նա, — մռմռաց Գագիկը՝ ատամները կրճտացնելով:

— Մենք հաղթում էինք, երբ թշնամին մի կողմից հունաց զորքով, մյուս կողմից Մարտիրոս հոր և Գևորգ իշխանի կազմած հրոսակներով, գրոհ տվեց մեզ վրա և քշեցմեզ: Մենք մտանք Կողբ: Այնտեղ էլ կռիվը շարունակվեց, և քիչ հետո կրակե լեզուները սկսեցին լափել քաղաքը:

— Իսկ ինչ եղան իմ իշխանները:

— Փա՛ռք տիրոջը, ամենքը ազատվեցին: Ռշտունյաց և Անձևացյաց իշխանները ծպտյալ գնացին Ափխազաց Գուրգենի մոտ, նրան մեր կողմը հակեցնելու, իսկ Աշոտսպարապետը քաշվեց յուր կալվածքների ներսը նոր հարձակում գործելու համար: Նա մտադիր էր ավերել Աշոտ Երկաթի կալվածքները:

Երկուսն էլ առժամանակ լուռ մնացին:

— Տե՛ր, այդ մի հաղթությունը տանուլ տվինք ո՛չ թե մեր զորքի թուլության պատճառով, այլ այն պատճառով, որ նրանք սպասում էին, նրանք գիտեին, թե մենք ի՞նչենք անում և ի՞նչ մտածում

— Ինչպե՞ս:

— Շա՛տ պարզ: Մեր ամեն քայլափոխը լրտեսում են, և այդ լրտեսը գտնվում է քո պալատում, նա...

— Ի՞նչ նա... — գոռաց Գագիկը, հասկանալով, թե ում է ակնարկում Քոսակը:

— Իշխանուհի է և քեզանից սիրված, — հարվածեց Քոսակը առանց խնայելու:

— Ո՞վ է նա,

— Աղջիկդ:

— Հեղինե՞ն... Ոչ, անկարելի է:

— Այո՛, Հեղինեն, նա լրտեսում է մեզ և ես այդ մասին ամենևին կասկած չունեմ:

— Դու սխալվում ես, Քոսա՛կ, իմ աղջիկը չի կարող մեզ լրտեսել:

— Քոսակը երբեք չի կարող սխալվել. ինչ-որ նա ասում է՝ հաստատ գիտե: Հեղինեն լրտես է:

— Լռի՛ր, անզգա՛մ, — գոռաց Գագիկը և կատաղությամբ բռնեց նրա օձիքից: Քոսակը անտարբեր էր, ինչպես անշունչ առարկա: Միայն մի դառն ժպիտ երևաց նրաշրթունքներին, որից սարսուռ զգաց Գագիկը:

— Քոսա՛կ, մի ասա՛ այդպես, ասա՝ ես սխալվեցի:

— Կրկնում եմ, տե՛ր, Հեղինեն լրտես է:

Բարկությունը ներկեց Գագիկի դեմքը և նա, յուր սուրը պատյանից հանելով, խրոխտ ձայնով կանչեց.

— Ապացո՛ւյց, ապա թե ոչ կտոր-կտոր կանեմ քեզ:

Քոսակը յուր նոսր բեղերը սրեց և անտարբեր կերպով, ձեռքը դեպի ծոցը տանելով, մի նամակ հանեց և մեկնելով Գագիկին՝ ասաց.

— Ահաա՛ ապացույցը:

— Ի՞նչ է դա, — հարցրեց սարսափած Գագիկը:

— Քո աղջկա գրած նամակը Մարտիրոս հորը: Գագիկը դողդոջուն ձեռքով վերցրեց նամակը, կարդաց և գունատվեց: Սառը մահվան դող պատեց նրան. աչքերին

չէրհավատում: Այդ նամակը Հեղինեի ձեռքով գրված նամակ էր, որով զգուշացնում էր Մարտիրոս վանահորը հոր լարած որոգայթներից:

— Ո՞վ տվեց այս նամակը, — հարցրեց Գագիկը գերեզմանային ձայնով:

— Գողացա, — սառն կերպով պատասխանեց Քոսակը:

— Որտեղի՞ց գողացար, պատմիր:

— Բյուրականի վանքում, երբ Սահակ եպիսկոպոսը և Մարտիրոս հայրը իշխանների հետ խորհրդի էին նստել, ես դևի նման ներս սողացի և այս նամակը գողացա:Նրանք շատ խոսեցին քո աղջկա մասին, շատ գովեցին նրան և ամեն միջոց պիտի գործ դնեն Հեղինեին քեզնից հեռացնելու:

— Այդ չեն կարող անել, — ասաց Գագիկը և, բանալով կից սենյակի դուռը, երեք անգամ ծափ տվեց:

Երկու սպասավոր ներս վազեցին ու լուռ կանգնեցին դռան շեմքում:

— Կանչեցեք այստեղ Խորեն իշխանին, — ասաց նա՝ դառնալով դեպի սպասավորները:

Նրանք դուրս գնացին, և քիչ հետո ներս մտավ Խորեն իշխանը, որ ամրոցի գլխավոր էր կարգված:

— Խորե՛ն իշխան, իսկույն բանտարկիր Հեղինեին և մի աղախին թող նրա մոտ, և բացի հաց ու ջրից ոչինչ չտաս:

Խորեն իշխանը, որ 40 — 45 տարեկան մի մարդ էր և յուր աղջկա նման սիրում էր Հեղինեին, շանթահարի նման կանգ առավ, երբ լսեց Գագիկի հրամանը:

— Դու չլսեցի՞ր...

— Բայց, տե՛ր, նա առանց այն էլ հիվանդ է, ինչպե՞ս կդիմանա...

— Լուռ, կատարել այն, ինչ հրամայում եմ: Վա՛յ քեզ, Խորե՛ն իշխան, եթե լավ չես հսկի: Մի թռչուն անգամ չես թողնի նրա մոտով անցնի:

— Անգո՛ւթ հայր, — մռմռաց ինքն իրեն Խորեն իշխանը և դուրս գնաց հրամանը կատարելու:

Քոսակը լուռ լսում էր նրանց, և երբ Խորենը դուրս գնաց, նա մի դիվական ժպիտով ասաց.

— Արժանի էր...

Հեղինեն բանտարկված էր…

Զ

Ուր որ հեռու, անսահման տարածությունից այն կողմ, անհայտության մեջ լսելի էր լինում որոտման խուլ հառաչանքներ... Այնտեղ՝ հեռվում կատարվում էր ինչ-որխառնակություն, ինչ-որ շփոթ, ուր լացացնելու չափ հառաչում էին ամպերը և լսողի սրտում սերմանում վշտի ու տխրության սերմեր...

Եվ Հեղինեն, կանգնած բանտի պատուհանի առաջ, չուռ լսում էր այդ հառաչանքը, որ հետզհետե ավելի ու ավելի լսելի էր լինում և նրա սիրտը լցնում էր մի տեսականհասկանալի ու անբացատրելի դառնությամբ: Ի՞նչ էր կատարվում յուր հետ — ինքն էլ չգիտեր, բայց զգում էր, որ այդ րոպեին սիրտը պատրաստ էր դուրս թռչելու, ժայթքելու այնտեղից, ուր նա կաշկանդված էր, և յուր մեջ ամբարված դառնությունները չորս կողմը տարածելու... Եվ նա տխուր, հուսահատ ու անթարթ աչքերովդիտում էր հեռու հորիզոնը, որտեղից դանդաղությամբ բարձրանում էին ամպերը և կամաց-կամաց ծածկում հորիզոնը: Զով քամին ծածանում էր նրա ալիքանմանմազերը, իսկ խավարը աննկատելի կերպով տիրապետում էր երկրին... Խավարում էր աշխարհը, խավարում էր Հեղինեի սիրտը, բայց նա դեռ արձանի նմանկանգնած նայում էր ամպերի պարին ու փայլակների թռիչքներին, կարծես ինչ-որ բան էր սպասում ամպերից: Կարծես խավարի մեջ լույս էր փնտրում, այն լույսը, որին ինքը այնքա՛ն կարոտ էր… Խե՛ղճ, նա մոռանում էր, որ հոր պահապանները լուրջ հսկում են յուր վրա և դիտում յուր ամեն մի շարժումը...

Արդեն խավարը պատեց ամեն կողմ: Եվ Հեղինեն, հեռանալով պատուհանից, ուժասպառ ընկավ յուր համար պատրաստված չոր թախտին: Նա ձեռքերով բռնեցգլուխը և առատ արտասուքը հեղեղեց նրա աչքերը: Չնկատեց մինչև անգամ, թե ինչպես ներս մտավ աղախինը և վառած ճրագը դնելով մոտը, լուռ նայում էր իրեն:

Սառը քամին փչում էր բաց պատուհանից և օրորում ճրագի բոցը, աղախինը ուզեց փակել պատուհանը, բայց անվճռականությամբ կանգ առավ, ապա դառնալովդեպի Հեղինեն՝ ասաց.

— Իշխանուհի՛:

Պատասխան չկար: Հեղինեն մտքի մեջ այնքա՜ն էր խորասուզված, որ չլսեց աղախնի խոսքերը:

— Իշխանուհի՛, կցանկանա՞ս պատուհանը փակել, այնտեղից փչում է սառը քամի և կարող է ճրագը հանգցնել:

Հեղինեն բարձրացրեց գլուխը և ապուշ կտրած աչքերով նայում էր աղախնին: Երկուսն էլ լուռ իրար երեսին էին նայում, առանց համարձակվելու ընդհատել այդխորհրդավոր լռությունը:

Այդ միջոցին դրսից լսելի եղավ անձրևի խշխշոցը, և քամին ուժգնությամբ ներխուժելով սենյակ՝ քիչ մնաց ճրագը հանգցներ:

— Իշխանուհի՛, փակե՞մ պատուհանը, ճրագը կհանգչի, և դու կմնաս խավարի մեջ:

— Ո՛չ, թող բաց մնա այդ միակ պատուհանը, որտեղից ես շնչում եմ ազատ ու թարմ օդ, որտեղից գալիս է իմ լույսը և կյանքի հույսը: Ինչո՞ւ փակել այդ պատուհանը նհուսալ այս թշվառ ճրագի վրա, որի յուղը պակասելով՝ ինքն էլ պիտի հանգչի, այնինչ այդ պատուհանից գալիս է արևի անսպառ լույսը և հույս ու կյանք ներշնչումինձ նման կալանավորներին: Ա՛խ, Արուսյա՛կ, ես ինչքա՜ն եմ կարոտ լույսին, այն լույսին, որ հավիտենական է և անսպառ: Ինչո՞ւ իմ սրտի մեջ տիրում էհավիտենական խավարը: Մի՞թե դու, Արուսյա՛կ, չես կարող լուսավորել իմ սրտի խավարը: Ճրագ բեր, որ սիրտս լուսավորի, ճրագ, որի ճառագայթները կյանք սփռեն, թե չէ ինչի՞ է պետք այս ճրագը, որ բերել ես:

— Ա՛խ, իշխանուհի՛ս, աչքերս պիտի կուրանային, և քեզ այդպես չտեսնեի... բայց ահա քայլերի ձայներ եմ լսում, իմ ուշանալը կարող են նկատել, գիշե՛ր բարի, — ասաց աղախինը և դուրս գնաց: Հեղինեն նայեց նրա ետևից, մի փոքր ժամանակ անշարժ մնաց և ապա գլուխը օրորեց.

— Խե՛ղճ Արուսյակ... ինչքա՜ն էր ինձ սիրում, իսկ այժմ մի րոպե անգամ չի կարողանում մոտս մնալ, ինձ հուսադրել: Օ՜հ, ինչքան թանկ է կյանքը և ինչպես ամենմարդ դողում է յուր կաշվից: Այդպես են մարդիկ, կյանքի վտանգի առաջ ամեն բան մոռացվում է, ամե՛ն բան, և աստիճան, և՛ սեր, և՛ երախտագիտություն: Չլիներայդ անիծած կյանքի վտանգը մարդիկ այսպես չէին լինի, և աշխարհս բոլորովին այլ կլիներ:

Հեղինեն վեր կացավ և մի քանի անգամ անցավ բանտի մի ծայրից մյուսը: Հանկարծ ինչ-որ բան թրխկաց յուր առաջ: Նա սոսկալով նայեց և տեսավ մի քարի կտորիվրա կապած ինչ-որ բան: Երկար ժամանակ չէր համարձակվում ձեռք տալ, ապա կռացավ ու բարձրացրեց այն: Դողդոջուն ձեռքերով քանդեց կապոցը և մի փոքրիկծրար տեսավ, որի վրա մանր, բայց գեղեցիկ տառերով ինչ-որ բան էր գրած: Ի՞նչ էր նշանակում այդ և ո՞վ էր գրողը: Նա, վախենալով, աջ ու ձախ նայեց, որ չխլեն յուրձեռքից այդ թանկագին տոմսակը, ապա մոտենալով ճրագին կարդաց. «Հեղինե, մոտ է ազատության ժամը. պատրաստ եղիր այս գիշեր: Բոլոր պահապանները կաշառված են, հայր Մարտիրոսը քեզ է սպասում յուր կտրիճ խմբով: Խոստովանահայրդ՝ Սահակ քահանա»:

Սարսռեց խեղճ աղջիկը, երբ վերջացրեց տոմսակի ընթերցումը, և մի տեսակ անվճռականություն պատեց նրա սիրտը: Ի՞նչ անի, փախուստ տա հորից, թե՞ կրկինտանջվի այդ մթին բանտում...

Նա մնացել էր երկու կրակի մեջ...

Երկա՛ր, շա՛տ երկար մտածում էր նա, բայց ո՛չ մի ելք չէր գտնում: Մտքերը մինը մյուսից սև, մինը մյուսից սարսափեցնող՝ պաշարում էին և սարսափեցնում նրան:Երբեմն մտածում էր ուղղակի իրեն պատուհանից ցած գցե, ջախջախե իրեն, որպեսզի ամեն բանի վերջ տրվի, բայց զսպում էր իրեն, չէր ուզում մեռնել, չէր ուզումխավարեցնել մատաղ կյանքը:

— Օ՛, ծանր է իմ դրությունը, — կանչեց նա և ուժասպառ ընկավ փայտյա թախտին: — Ծա՛նր է, բայց այնտեղ է իմ հույսը, ուր կանչում է այս տոմսը: Նա ապրում էայն ոլորտում, ուր գործում է Աշոտ Երկաթը: Նա թագավորի հետ կռիվ է մղում դավաճանների դեմ, և ես էլ պիտի ատեմ այդ դավաճաններին՝ լինի դա ծնող, թե միուրիշը: Ես սիրում եմ նրան, նրա պատկերը միայն հիշում և նրա համար ապրում...

Բայց նա, օ՛հ տե՛ր իմ աստված, սիրո՞ւմ է ինձ, չի՞ մոռացել արդյոք այն, երբ ես դեռ փոքր էի և կատակներ անելով փաթաթվում էի յուր վզով, անմեղ մանկականհամբույրներ էի տալիս, չարաճճիի նման մի րոպե անգամ հանգստություն չէի տալիս, իսկ ինքը... նայում էր ուղղակի աչքերիս մեջ և լուռ մտածում... Ի՞նչ էրմտածում նա, չգիտեմ, բայց այն օրից ես սիրեցի նրան, սիրեցի իմ ամբողջ էությամբ, բայց հենց որ սերս հասավ կատարելության, նա թողեց ինձ, թողեց մեր տունը և հեռացավ: Նա սուրը հորս դեմ դարձրեց՝ միանալով Աշոտ Երկաթի հետ, և այնուհետև, ոտք չդրեց այստեղ: Բայց ինչքան ծանր և վշտալից են այդ

տարիները, ամենրոպե սերս աճում է, ես նրան չեմ մոռանում, իսկ ինքը արդյոք սիրո՞ւմ է ինձ, սիրո՞ւմ է յուր Հեղինեին, որի սրտի մեջ ցանեց սերմեր և հեռացավ... Գևո՛րգ, Գևո՛րգ, Մարզպետունյաց քաջ և ազնիվ իշխան, քեզ համար է բաբախում Հեղինեի սիրտը և քեզ համար է նա ապրում: Սուրբ էր այդ անունը ինձ համար և սրբությամբ էլ, ինչպես մի ավանդ, պահում էի այն սրտիս սրբազան խորքերում, բայց այլևս անհնար է պահել, սիրտս լիքն է, նա արդեն ժայթքում է... — ասաց Հեղինեն և թեքվեցմահճակալին: Նրա աչքերից անընդհատ զեղում էր արցունքը: Անցավ մի փոքր ժամանակ. նրա աչքերը կամաց-կամաց փակվեցին, և կուսական կուրծքը հանգիստցածր ու բարձր էր անում. նա արդեն նիրհում էր... Վրդովալից էր նրա նիրհը, իսկ բաժակը՝ շատ ծանր: Փշալից կյանքի օրհասը մոտ էր վախճանին և կարծես նանիրհում էր վերջին, օրհասական նիրհով: Սնոտի, խաբուսիկ երազներն էին նրան գուրգուրում այդ վայրկյանին, իսկ աշխարհս կարծես գոյություն չունենար նրահամար: Նա մոռացել էր ամեն ինչ՝ և՛ սեր, և՛ դավադրություն, և՛ ծնող... Նա չէր լսում մինչև անգամ որոտի գոռում-գոչյունը, փայլակների փայլփլելը և քամուշոնչյունը, որ վայրենի գազանի նման ոռնալով հարձակվում էր Հեղինեի բանտի պատերի վրա, ներս սողում, քնքուշ համբույրներ դրոշմում նրա բորբոքվածայտերին, շոյում նրա գանգուրները և ապա դուրս թռչելով սենյակից, խելագարի նման վազում առաջ...

Ո՞ւր էին տանում այդ համբույրները՝ հայտնի չէր...

Է

Որոտն անցնում էր...

Բայց Վանա ծովը կատաղի փրփրում էր, հորձանքներ տալիս և դիպչելով ծովափնյա ժայռերին՝ փշրվում, կտոր-կտոր էր լինում և ետ նահանջում: Վանա բերդի մոտ, ծովի մի փոքրիկ խորշի մեջ կապված էին մի քանի մակույկներ, իսկ նրանց մոտ, ծովափին, մի մեծ ժայռի տակ, երևում էին մոտ քսաննհինգ զրահավորված մարդիկ:Մեկը միայն զենք ու զրահ չուներ, բայց նրանից ամենքը ակնածում էին և պատրաստ էին նրա ձեռքով նշան տալուն պես ծովը նետվելու և կուլ գնալու կատաղիալիքներին:

Մութը հետզհետե խտանում էր, իսկ կայծակի վայրկենական փայլփլելը հետզհետե նվազում, որոտն արդեն անցել էր նրանց գլխով և այժմ հեռու՝ լեռների ետևիցն էրլսելի անում յուր խուլ, անորոշ գոռգոռոցը:

— Ծովը փոթորկվում է, հա՛յր սուրբ, ի՞նչպես կհրամայեք, այժմ ժամանա՞կ է արդեն գործ սկսելու, — ասաց զենքերի մեջ կորածներից մեկը՝ դիմելով վանականին:

— Ալիքները մեզ վախեցնել չեն կարող, ուր որ է կհանդարտվի, և մենք կփախցնենք Գագիկ Արծրունու զոհը... Բայց չդարձա՞վ Տեր-Սահակը, ինչո՞ւ նա ուշացավ:

— Չգիտեմ, Մարտիրո՛ս հայր, գուցե նա մի փորձանքի հանդիպեց կամ գուցե չկարողացավ նշան տալ Հեղինեին:

— Չեմ կարծում, Գևո՛րգ իշխան, Սահակ հայրը ամեն ծակուծուկ ճանաչում է. նա դժվար գործը արդեն վերջացրել է՝ կաշառելով պահապաններին, իսկ Հեղինեն չեմկարծում հակառակի:

— Այո՛, եթե պահապաններին փոխած չլինեն: Ո՞վ գիտե, Գագիկը գիշերներն էլ է հսկում յուր աղջկան, նա կարծես հոտ է քաշել մեր անելիքի մասին:

— Բայց բավական ուշացավ Սահակ հայրը, չլինի թե...

Մ՛ս... քայլերի ձայներ եմ լսում, կարծես նա լինի գալիս:

Հիրավի, հեռվից զգույշ քայլերի ձայներ լսվեցան: Մարտիրոս վանահայրը և Գևորգ Մարզպետունի իշխանը լռեցին և լայն բացած աչքերով առաջ էին նայում, բայցմութը այնքան սաստիկ էր, որ ոչինչ չէր երևում: Քայլերի ձայներն էլ երբեմն լսվում էին, երբեմն՝ ոչ: Ծովի հորձանքի ձայնը չէր թողնում պարզ լսել:

— Տղե՛րք, զենքներդ պատրաստ պահեցեք, ո՞վ գիտե ով է, ամեն բանից պետք է զգույշ կենալ, մենք կարող ենք թակարդի մեջ ընկնել, — դարձավ Գևորգն խմբին:

Այդ ժամանակ լսվեց գորտի կռկռոց, որի ձայնից իսկույն միամտեցին և այդ կռկռոցին իրենք էլ գորտի կռկռոցով պատասխանեցին:

— Սահակն է և Ծառուկը: Փուչը լավ է նմանեցնում գորտին, կարծես իսկը գորտ լինի, — ասաց Մարտիրոս վանահայրը և անհամբերությամբ դեպի ձայնի կողմընայեց:

Անցավ փոքր ժամանակ, և Սահակն ու Ծառուկը կանգնած էին այդ փոքրիկ խմբի մեջ:

— Հը՛, Սահա՛կ հայր, ի՞նչ եղար, ի՞նչ պատահեց քեզ, մենք կարծեցինք, թե Գագիկը քեզ էլ ու Ծառուկին էլ բանտ դրեց, — հարցրեց Մարտիրոս հայրը:

— Չէ՛, դեռ վաղ է ինձ բանտ դնելը, գործեր շատ ունիմ, մեղքերս շատ են. պետք է քավել և ապա բանտ նստել ու մեռնել:

— Ի՞նչ արիր, հայտենցի՞ր Հեղինեին, նա համաձա՞յն է փախչելու, — ասաց վրդովված Գևորգը և շունչը պահելով պատասխանի էր սպասում, կարծես այդ խոսքիցկախված լիներ նրա մահն ու կյանքը: Բայց Սահակն ուշացնում էր պատասխանը, նա չգիտեր, թե ինչ կա Գևորգի սրտում. նա չէր էլ տեսնում, թե ինչպես նրա դեմքըայլայլվում է:

— Հայտնեցի, բայց թե...

— Ի՞նչ բայց թե...

— Բայց թե պատասխան չստացա: Մեր լրտեսը համբավ բերեց, թե նա կարդաց նամակը և, ուժասպառ ընկնելով մահճակալին, քնեց:

— Քնե՜ց... Քնեց այն ժամանակ, երբ մենք ուզում ենք փրկել նրան... Այդ ի՞նչ է նշանակում, տե՛ր հայր, ուրեմն նա չի ուզում յուր փրկությունը, արհամարհում է մեզ, — ասաց Գևորգը և մի խոր ախ քաշեց:

Այդ «ախը» գաղտնի չմնաց Մարտիրոս վանահորից, որ ամեն բան տեսնում էր և նախագուշակում:

— Մի՛ հուսահատվիր, Գևորգ, ես գիտեմ, թե ինչ կա սրտումդ և ինչն է քեզ վրդովում: Երիտասարդական արյունդ բորբոքվում է, բայց համբերություն ունեցիր:Հեղինեն քեզ կպատկանի:

Գևորգը ծունկ չոքեց և համբուրեց Մարտիրոս հոր աջը:

— Դու ճանաչում ես ամեն սիրտ, հա՛յր սուրբ, ես քեզ եմ ապավինում:

— Իսկ դու չկարողացա՞ր անձամբ ներկայանալ Հեղինեին, — հարցրեց Մարտիրոս հայրը Սահակին:

— Ո՛չ, այդ անկարելի էր: Դուրսը շրջում են նրա պահապանները, ես վախեցա անտեղի կասկածի մեջ ձգել նրանց:

— Լավ, ի՞նչ ես կարծում, եթե մենք նրան փախցնելիս լինենք, նրանից ոչինչ ընդդիմություն չե՞նք գտնի:

— Վստահ եղեք ինձ վրա:

— Լա՛վ: Այժմ Գևորգ իշխանի և մի խումբ զինվորների հետ գնացեք Հեղինեին բերելու, բայց զգույշ, ամեն մի քայլը նախատեսեք և այնպես առաջ գնացեք: Ոչ միաղմուկ չլինի, իսկ մենք կսպասենք այստեղ: Ծովը հետզհետե խաղաղվում է և հաջող քամի է փչում: Դեհ, ժամանակ հարկավոր չէ կորցնել, ամեն մի րոպեն մեզհամար թանկ արժե:

Գևորգ իշխանը և Սահակ քահանան իրենց խմբով հենց ուզում էին առաջ գնալ, երբ ոտքի ձայն լսեցին և նրանից հետո՝ քարի գլորվելու ձայն, որը գլորվելով ծովնընկավ:

— Մեզ լրտեսում են, — շշնջաց Սահակը:

Նրանք սկսեցին ականջ դնել, բայց կասկածավոր ոչինչ չիմացան:

— Չէ՛, ո՛չ ոք չկա, քամին էր, որ քարը ծովը գցեց, թե չէ ո՞վ կհամարձակվի մեջ գիշերին այս ամայի տեղում թափառելու:

— Ո՛չ, ինձ այնպես երևաց, որ մարդու քայլեր են, քամին չէր կարող քարը ծովը ձգել, մենք պիտի շտապենք և լրտեսին բռնենք, թե չէ ամեն բան կորած է:

— Գնա՛նք ուրեմն, — ասացին նրանք և մի ակնթարթում առաջ անցան և զգուշությամբ ամեն մի քար, ամեն մի մացառ սկսեցին խուզարկել, բայց ոչինչ չգտան:Նրանց աչքից փախավ մի մեծ քար, որի տակ մեկնված էր մի մարդ և շունչը իրեն պահած, սպասում էր, որ այդ խումբը առաջ անցնի: Նա խմբից ուզում էր առաջանցնել, բայց տեսնելով, որ յուր հոտն առան, թաքնվեցավ քարի տակ:

Փոքրիկ խումբը զգույշ առաջ անցավ: Երբ որ նրանք բավականին հեռացան, քարի տակի մարդը ազատ շունչ քաշեց և վեր կենալով տեղից դեպի խումբը նայեց, որհազիվ էր երևում մթության մեջ:

Նա թափ տվեց յուր շորերը, որոնք շաղախվել էին ցեխի և հողի մեջ և ինքնիրեն մռմռաց.

— Հը՛մ... անպիտանները ինձանից առաջ անցան, պետք է շտապել, ապա թե ոչ ամեն ինչ կորած է, — ասաց նա և ինքն էլ մթության մեջ շուտով անհետացավ:

Այդ մարդը Քոսակն էր:

Ը

Հեղինեն խորհրդավոր տոմսակի ընթերցումից հետո մեկնվել էր մահճակալին և ամուր, շատ ամուր սեղմում էր ձեռքի մեջ այդ տոմսակը: Նա ո՛չ արթուն էր, ո՛չ քնած, այլ լայն բացած աչքերով նայում էր առաստաղին: Անթարթ էին նրա աչքերը և ապուշի նման միշտ վեր էին նայում առանց հասկանալու, թե ո՞ւր էր և ի՞նչ էրկատարվում իր հետ: Նա մոռացել էր յուր գոյությունը, մոռացել աշխարհը: Քրտնքի խոշոր կաթիլները միայն զարդարել էին նրա մարմարե ճակատը, որոնք թույլլուսավորության տակ ադամանդի նման էին պսպղում: Սիրուն էր նա, հրաշալի յուր այդ դիրքով, և նախանձի չաստվածները կարծես նրան դյութել էին, որ նաանշարժ մնա, իսկ ջրային ադամանդները նրա ճակատը զարդարեն: Ու նա անշարժ նայում էր վեր, միշտ վեր, ճիգ էր անում հասկանալու, թե ի՞նչ կա այնտեղ, ինչպե՞ս են կապված քարերը, ի՞նչ մի անհասկանալի զորություն պահում էր նրանց վերևում, օդի մեջ, բայց ոչինչ չէր հասկանում, չէր կարողանում լուծել այդհանելուկը:

Հանկարծ, այդ խորին լռության մեջ, լսվեցավ յուր բանտի դռան թեթև շռինդը, և մի քանի մարդ կանգնեցան նրա գլխի վերև: Նա երեսը դեպի նրանց դարձրեց և դեռապուշի նման նայում էր: Նա չէր հասկանում, թե ովքե՞ր են եկողները և ի՞նչ են ուզում իրենից:

— Հեղինե՛, — ասաց ցած ձայնով ներս եկողներից մեկը:

Հեղինեն ուշադրությամբ նայում էր նրանց և ուժ գործ դնում ճանաչելու, բայց նրա միտքը պղտորվում էր և դեռ ուշքի չէր կարողանում գալ:

— Հեղինե՛, մի՞թե ինձ չես ճանաչում, — կրկնեց նույն մարդը և կարեկցաբար գլուխը շարժեց:

— Ինչպես չէ, ա՜խ, հա՛յր, դու դարձյալ եկար, դարձյալ ուզում ես վրդովել ինձ... թույլ տուր ինձ հանգիստ այս բանտի մեջ մեռնելու: Ես լրտես եմ, ինձ կտոր-կտոր արա, սպանիր, վերջ դիր կյանքիս, — ասաց Հեղինեն և երեսը շուռ տվեց ներս եկողներից:

— Ի՞նչ ես ասում, աղջի՛կս, ճանաչիր ինձ, ես հայրդ չեմ, այլ խոստովանահայրդ՝ Սահակ քահանան, մի՞թե ինձ չես ճանաչում... ա՜խ, դու հիվանդ ես...

— Սահակ հա՞յրս... — ասաց Հեղինեն և վեր թռավ տեղից, մի տեսակ սարսուռ անցավ նրա մարմնով և նա ուշքի գալով ընկավ Տեր-Սահակի ոտքերը: — Աղոթիր ինձհամար, տե՛ր հայր, — ասաց նա, և հեկեկանքը խեղդեց նրան:

— Ամեն ժամ, ամեն բոպե, աղոթում եմ քեզ համար, աղջի՛կս, — ասաց Սահակ քահանան, ոտքի կանգնեցնելով նրան:

— Բաժակս դառն է, տե՛ր հայր, փրկիր ինձ այս տանջանքներից:

— Դու փրկված ես, աղջի՛կս, ազատությանդ ժամը հասել է և դու պիտի հետևես մեզ:

— Ո՞ւր, մի՞թե ես պիտի հեռանամ, փախչեմ, իսկ հայրս...

Պիտի փախչես, որովհետև այդ է քո փրկության ճանապարհը,

Իսկ հա՞յրս, տե՛ր հայր, մի՞թե թույլ կտա, նա մաս-մաս կկտրատի թե՛ քեզ և թե՛ ինձ:

— Այդ չի կարող անել, տեսնում ես ով է այստեղ կանգնած:

— Ո՞վ է:

— Գևորգ իշխանը:

— Ա՛հ, — մի ճիչ արձակեց և ուրախությունից թե ինչից նա ուշաթափվեց և տարածվեց Տեր-Սահակի ձեռքերի վրա:

Գևորգ իշխանը, որ մինչ այդ լուռ արձանի նման նայում էր օրիորդին, մոտ վազեց և գրկեց Հեղինեին:

— Հեղինե՛, լսիր ինձ, ես քո Գևորգն եմ, որի սիրտը վաղուց քեզ համար է բաբախում:

Հեղինեն ամուր սեղմում էր Գևորգի ձեռքը և մրմնջում.

— Տարե՛ք ինձ, ես ձեզ հետ եմ...

Նրանք առաջ անցան: Գևորգ իշխանը գրկած Հեղինեի նազուկ իրանը, ասում էր նրան.

— Մի փոքր էլ, իմ թանկագի՛ն Հեղինե, և մենք կհասնենք ծովափ: Գիտեմ, հասկանում եմ. փոթորիկն է տիրապետում հոգուդ մեջ, ահարկու մտքերը զբաղեցնում ենքեզ. բայց հավատացնում եմ քեզ, որ քո այդ վճռական քայլը սրբում է այն սև բիծը, որ հայրդ դնում է Արծրունիների անվան վրա:

— Գևո՛րգ իշխան, ինչպես երևում է դու դեռ ինձ չես ճանաչում, — պատասխանեց Հեղինեն: — Իմացիր, որ սրտիս մեջ վախկոտի արյուն չէ հոսում և ես իմ ամեն քայլը կշռել ու չափել եմ: Ռոպեի ազդեցության տակ չէ իմ փախուստը, այլ երկար գիշերների մտածության արգասիք: Գիտեմ, ծանր, մահացու հարված եմ հասցնում հորս, բայց թե ուրիշ ելք չեմ գտնում: Սիրում եմ ապրել ու մեռնել այնտեղ, ուր ազնվությունն ու հայրենասիրությունն է թագավորում: Եվ ես կերթամ մեռնելու իմ քույրերի եղբայրների հետ, որոնք իրենց կյանքը հայրենիքի սիրո համար են զոհում:

— Իմ թանկագի՛ն Հեղինե, չէ՛, դու չես մեռնի, — պատասխանեց Գևորգը և ծունկ չոքած նրա առաջ, համբույրներով ծածկեց օրիորդի ձեռքերը: — Դու կապրեսերջանիկ, անդորր կյանքով: Իմ կուրծքը պատնեշ կշինեմ, կյանքս ոտքերիդ տակ կզոհեմ և թույլ չեմ տա, որ դու վշտանաս: Այդ սիրուն աչքերից թախիծը կենսունակժպիտի կփոխարկեմ և թորշոմած այտերդ՝ կաս-կարմիր վարդի: Հեղինե՛, դու չգիտես, թե ինչ հուր է այրում ինձ: Սրտիս այդ հուրը ուզում էի հանգցնել, դուրս պոկելսրտիս խորքերից, բայց նա ավելի ու ավելի էր բորբոքվում ու ինձ զցում տանջանքի և արհավիրքի ծովը: Ես սիրում եմ քեզ, Հեղինե՛, սիրում անհուն, անարատ սիրով, ասա, խոսք տուր, որ դու իմը կլինես, որ մենք կապրենք երջանիկ, որ մենք կմեռնենք միասին:

— Իմ սիրելի՛ իշխան, վեր կաց: Հայրենիքին նվիրված իշխանը չպիտի ծունկ չոքի մի աղջկա առաջ, որը արժանի չէ նրան: Երկու սեր չի կարող լինել: Դու պիտի սիրեսհայրենքդ, ինչպես սիրել ես մինչև հիմա և կյանքդ նվիրես նրան:

Այդ միջոցին առաջ եկավ Գևորգ իշխանի զինվորներից մեկը և ասաց.

— Գևո՛րգ իշխան, մենք կորանք, Գագիկ Արծրունու պալատում ճրագ վառվեցավ, մի ինչ-որ սև ուրվական դեպի նա վազեց և այնտեղ խլրտմունքի մեջ ձգեց. շտապեցեք, ապա թե ոչ մենք ամենքս կորած ենք:

— Է՛յ, Ծառո՛ւկ, արի այստեղ, — ասաց խրոխտ ձայնով Տեր-Սահակը ժողովելով յուր հոգու ամբողջ արիությունը: — Չպետք է մեզ կորցնենք, երբ վտանգի մեջ ենք:Իշխա՛ն, պատսպարեցեք իշխանուհուն և շո՛ւտ դեպի մակույկները, շտապեցե՛ք, թե չէ, կորած ենք:

Գևորգը մի ակնթարթում ոտքի կանգնեց, և նրանք Հեղինեի հետ առաջ անցան:

Երբ նրանք անցան այնտեղից, որտեղից երևում էր Գագիկի պալատը, նայեցին դեպի այն կողմ, ու սարսռեցան: Այնտեղից լսվում էին խառն խոսակցության ձայներ նապա՝ քիչ հետո լսվեց թմբուկի ձայնը, որ դղրդոց գցեց ամբողջ ամրոցում: Թմբկահարը ուժգին թմբուկ էր զարկում և զարթեցնում պահապաններին:

Փախստականները շտապեցնում էին իրենց քայլերը, չնայած որ նրանց սրունքները դողում էին: Նրանք արդեն լսում էին, թե ինչպես իրարանցում ընկավ բերդի մեջ, թե ինչպես այնտեղ ճրագներով վազվզում Էին մարդիկ, հայհոյում և ապա դեպի Հեղինեի բանտը շարժվում: Պարզ էր, որ նրանք իմացել էին Հեղինեի փախուստը նուր որ է փախստականների հետևից պիտի ընկնեին:

Մի փոքր էլ առաջ անցան, և ահա նրանց առաջ դուրս եկավ մնացած՝խումբը,— որն առնելով Հեղինեին՝ շտապեց առաջ: Այդ միջոցին բերդի կողմից զենքերի ձայներլսվեցին, որոնք դեպի իրենց էին գալիս: Փախստականների դեմ մի ամբողջ գունդ էր դուրս եկել:

— Ո՞ր կողմն են նրանք, — գոռում էր նրանց առաջնորդը, որ նույն ինքը Գագիկ Արծրունին էր:

— Այս կողմը, տե՛ր, — պատասխանեց մի ուրիշ ձայն և դեպի փախստականների կողմը ցույց տվեց:

— Դե, շուտ, Քոսա՛կ, թե չէ մաս-մաս կկտրատեմ քեզ, — ասաց Գագիկը, և մթության մեջ նրանք առաջ անցան: Գագիկ Արծրունին արդեն մոտենում էրփախստականներին, բայց վերջինները դեռ չէին հասել ծովափ:

— Տե՛ր-Սահակ, իշխանուհուն տարեք դուք, նստեցեք մակույկները և ազատեցեք նրան, իսկ իմ մասին մի՛ մտածեք: Սրանց ճանապարհը հարկավոր է բռնել, ապա թեռչ, բոլորս կկոտորվենք:

— Լա՛վ, բայց զգույշ պահիր քեզ, — ասաց Տեր-Սահակը և մի քանի մարդով առաջ անցավ:

Գևորգ իշխանը և մոտ քսան հոգի կանգ առան տեղնուտեղը: Գագիկ Արծրունու գունդը առանց նկատելու դեպի իրենց էր գալիս, մի քանի րոպե և նրանքկընդհարվեին:

— Տղե՛րք, երկու մաս եղեք և աղեղներդ լարեցեք, նշան տալուն պես արձակեցեք և ապա սրերը պատրաստ պահեցեք: Նրանց պիտի շփոթեցնել մինչև

Մարտիրոսհայրը ծովափից հեռանա, իսկ հետո մեզ համար հեշտ է մակույկները թռչելը:

Գագիկ Արծրունու խումբը արագ մոտենում էր: Հանկարծ սարսափահար նա կանգ առավ: Մոտ քսան նետ դեպի այդ խումբը սլացավ և պառկեցրեց մի քանիսին:

— Վա՛յ, մեռա, — կանչեցին մի քանի կողմից:

— Քոսա՛կ, դու դավաճանեցիր, մենք որոգայթի մեջ ենք, — կանչեց Գագիկ՝ ատամները կրճտացնելով:

— Ո՛չ, տե՛ր, այդ ես չդավաճանեցի, այլ սպիտակ դևը, որ հեռու չէ այստեղից, — պատասխանեց Քոսակը:

— Առա՛ջ ուրեմն...

Նետերի նոր տարափը թափվեցավ դրանց վրա և դարձյալ մի քանի կյանք խլեց:

Բայց Գագիկի խումբը առաջ էր վազում, առանց ուշք դարձնելու նետերի տարափին և վիրավորների հառաչանքին: Գագիկը դեպի ծովն էր շտապում, արգելելու յուրաղջկա փախուստը: Նա արդեն մոտ էր ծովափին. այնտեղից լսում էր շտապ խոսակցություն և խելացնորի նման դեպի այնտեղ վազում:

Նրա հոգին գուշակում էր, որ այնտեղ է Հեղինեն, մի փոքրիկ ջանք էլ, և փախստականները յուր ձեռքերումը կլինեն:

Հանկարծ Գևորգ իշխանի խումբը գրոհ տվեց և, երկուսի բաժանված, խառնվեց Գագիկի խմբի մեջ: Մթության մեջ սկսվեց կռիվը, արյունալից կռիվը: Գագիկը միվայրկյան կանգ առավ, առյուծի նման մռնչաց և հարձակվեց յուր հակառակորդների վրա: Մթության մեջ նրանք ջարդում, կոտորում էին իրար առանց հասկանալու, թե ո՞վ ում է սպանում, թե ո՞րն է թշնամին, ո՞րն է բարեկամը, երբ մակույկների թիակների ձայներ լսվեցան և քիչ հետո ծովի միջից մի ձայն կանչեց.

— Գագի՛կ Արծրունի, դադարեցրու կռիվը, զուր իրար մի՛ կոտորեք, մենք արդեն տանում ենք քո զոհը՝ աղջկադ...

Ինչպես սառը ջուր թափես մարդու գլխին, այնպես այդ ձայնը սարսռեցրեց Գագիկին: Նա զգաց, որ յուր մարդիկ իրար էին կոտորում, այնինչ Գևորգ իշխանը միանգամ հարձակում գործելուց հետո ետ էր նահանջել և շտապով մակույկներ նստել:

— Է՛յ, դադարեցրե՛ք կռիվը, — գոռաց նա, — դեպի մակույկները վազեցեք, հասեք, բռնեցեք նրանց, աղջկաս տանում են...

— Տե՛ր, ոչ մի մակույկ չկա ծովի ափին, — հայտնեց մեկը:

— Լողորդնե՛ր, դեպի ծովը նետվեցեք, աղջկաս ազատեցեք, ես լիառատ կվարձատրեմ, ով Հեղինեին վերադարձնի, — ասում էր Գագիկը և հուսահատությամբ ձեռքերըկոտրատում: Բայց ոչ մի կողմից հույս չկար, ծովը ծփում էր և հորձանքները Ժայռերին խփում, այնինչ մակույկները հաջող քամուց շարժված՝ սլանում էին հեռու...

Թ

Ցնծում էր Հայաստանը, ցնծում էր Երազգավորս քաղաքը... Ուրախության աղաղակներ էին լսվում հայ սրտերից, ցնծության երգեր էին երգում հայ զինվորները: Թե՛մեծ, թե՛ փոքր տղա, թե՛ աղջիկ, թե՛ գեղջուկ և թե՛ քաղաքացի օրհնում էին թագավորին, երկար կյանք մաղթում Աշոտ Երկաթին և հազար բարիքներ ցանկանումնրան: Այսօր Աշոտ Երկաթը նոր կյանք էր մտնում, այսօր Հայաստանը նոր թագուհի էր գտնում: Անմայր էր Հայաստանը, թափուր էր թագուհու թախտը նԳարդմանաց հզոր իշխանի՝ Սևադայի աղջիկը այսօր պիտի բարձրանար այդ թափուր թախտի վրա և մայրություն աներ հայոց աշխարհին:

Ու հրճվում էր ժողովուրդը: Երազգավորս քաղաքը մի տեսակ կենդանություն էր ստացել, փողոցները մաքրվում էին և ճանապարհները ծաղիկներով ծածկվում:Իշխաններն ու իշխանազնուհիները երկրի բոլոր կողմերից դեպի պալատն էին շտապում, իսկ զորքերը գունդագունդ փողոցներում շարվում: Մորթվում էինբազմաթիվ երինջներ, ոչխարներ, մի կողմից ներս էին տանում վայրի կենդանիներ, թռչուններ, իսկ մյուս կողմից՝ հողում թաղած կարասների բերանները բանում:

Գինին և պաշարեղենը առատությամբ բաժանվում էին ժողովրդին, որ ուրախաձայն երգելով օրհնում էր թագավորի կյանքը: Փողոցներում շրջում Էին ժողովրդականներգիչներ՝ գուսաններ, ամեն տեղ կանգ առնում և Աշոտ Երկաթի քաջագործությունները գովաբանում: Մինչդեռ ժողովուրդը քեֆ էր անում, պալատից լսվում էրթմբուկների և տավիղների ձայներ, իսկ երբեմն՝ գուսանների երգը: Այնտեղ՝ պալատում, խրախճանք էին անում իշխանները, իսկ փողոցում՝ ժողովուրդը:Խարույկներ էին վառվում Երազգավորսում և շրջակա բլուրներին, որոնք հանդեսին ավելի շքեղություն, ավելի պերճություն էին

տալիս: Ուրախ էր Աշոտ Երկաթը: Նանստած էր ոսկե գահույքին, իսկ նրա կողքին՝ թագուհին յուր նաժիշտներով և շուրջը զանազան մեծ ու փոքր իշխաններ: Այդտեղ Էին Գարդմանաց Անադա իշխանը, Ափխազաց Գուրգենը, յուր եղբայր Աբասը, Գևորգ Մարզպետունի իշխանը, Հովհաննես կաթողիկոսը եպիսկոպոսներով և Մարտիրոս վանահայրը: Աշոտ Երկաթըգլխին դրած ուներ ոսկե թագ, զարդարված թանկագին քարերով, իսկ մեջքին կապած ուներ ոսկի, մարգարտաեռ և ակնակուռ գոտի: Վզին ձգած ուներ մանյակ, որվերջանում էր լայն ձվաձև ոսկով, որի վրա նկարված էր գառն, Քրիստոսի խաչափայտը ձեռքին և շրջապատված էր աղամանդներով, իսկ ուսին ձգած ուներ սամույրմուշտակ: Ձեռքին, ճկույթի վրա անց էր կացված մի թանկագին մատանի, իսկ գոտից կախված էր սուրը ոսկե պատյանով և զարդարված թանկագին քարերով:

Աշոտ Երկաթի մոտ, նույնպես ոսկի գահույքի վրա, նստած էր թագուհին՝ ոսկեթագը գլխին, իսկ ծիրանի քնքուշ ծածկոցը՝ ուսերին: Թագուհին շրջապատված էր շատիշխանազնուհիներով, որոնց մեջ գտնվում էին նաև երկու օրիորդ, մեկը Աստղիկը՝ Դավթի նշանածը, իսկ մյուսը՝ Գագիկ Արծրունու դուստր Հեղինեն: Դրանք էլ քեֆէին անում և ուրախանում: Մի խումբ օրիորդներ երգում էին երգեր, հնչեցնում տավիղներ և պարեր պարում:

Մինչդեռ ներսը՝ պալատում ուրախություններ էին անում, դուրսը, ուր շարված էին հայոց զորքերը և մի գունդ արաբական զորք, որոնց ուղարկել էր Յուսուֆը՝ թանկագին ընծաների հետ միասին, անհամբեր սպասում էին հրամանի, որ իրենք էլ սկսեն ուրախությունը, զվարճությունը: Այդ իսկ միջոցին երեք մարդզգուշությամբ մոտեցան պալատին: Նրանցից երկուսը կույր էին, կամ թե կույր էին ձևանում, և ձեռքերին մի-մի սազ ունեին, իսկ երրորդը դրանց առաջնորդն էր՝ ծաղկատար երեսով, քոսա մի մարդ: Կույր մարդիկ բռնել էին նրա փեշերից և հետևում Էին նրան:

Քանի դեռ չէին մոտեցել այնտեղ, ուր կանգնած էին զորքերն ու պահապանները, երկու կույրերը շատ գեղեցիկ քայլում էին և ամենևին ցույց չէին տալիս, թե իրենքկույր են, բայց հենց որ մոտեցան նրանց, սկսեցին ցույց տալ, թե դժվարանում են քայլել:

Շարված զորքերին շուտով գինի և խորտիկներ ուղարկվեցան, և նրանք խառնվելով, խումբ-խումբ սկսեցին քեֆը շարունակել: Այդ միջոցին ժողովրդի երեքերգիչները վստահ մոտեցան պալատին և ուզեցան ներս մտնել դահլիճ, բայց պահապանն արգելեց:

— Է՛յ, ո՞ւր եք գնում, չի կարելի ներս մտնել, — ասաց նա։

— Մենք երգիչներ ենք, ուզում ենք թագուհու կյանքը բարեմաղթել, նրան փառաբանել։

— Չէ, չի կարելի, մեր թագուհին կույր երգիչների կարոտ չէ, հեռացեք այստեղից։

— Թող մեզ, մենք մեր թագուհու լուսաթաթախ երեսը գովենք, մեր սրտի ուրախությունը հայտնենք, — ասաց երգիչների առաջնորդը և ուժով ուզում էր ներս մտնել։

— Ձեզ չե՞ն ասում՝ չի կարելի, — գոռաց պահապանը և նիզակը ճոճեց նրանց վրա։

— Վա՛յ, ի՞նչ ես անում, ուզում ես սպանե՞լ, — գոռաց աղիողորմ ձայնով չեչոտ մարդը և մի քանի քայլ առաջ անցավ։ Նրա ձայնը լսվեցավ դահլիճում, ուր իմանալովբանի էությունը, թագուհին հրամայեց ներս թողնել երգիչներին։

Երգիչները ներս մտան և սազերը լարեցին։

— Տեսնո՞ւմ ես, իշխա՛ն, — շշնջաց չեչոտ մարդը կույր երգչի ականջին, — տեսնո՞ւմ ես Արծրունյաց օրիորդին։

— Տեսնում եմ, Քոսա՛կ, ա՛յ թե ուր է հասել նա, — շշնջաց կույր երգիչը, որ Անձևացյաց իշխան Ատոմն էր։

Նրանք սկսեցին երգել։

Հեղինեն չէր լսում նրանց երգը։ Նա մտքով ամփոփվել էր քոսա մարդու վրա և խորին ուշադրությամբ նայում էր նրան։

Որքան նայում էր, այնքան գունատությունը պատում էր իրեն և երբեմն սարսռում էր նրա մարմինը։ Նա կարծես սկսում էր ճանաչել այդ մարդուն։ Տեսել էր դրանցերեքին էլ, բայց թե ո՞րտեղ՝ չէր կարողանում մտաբերել։

Բայց երգիչները երկար չմնացին. դուրս գնացին պալատից և երբ մտան Երազգավորսի նեղ փողոցները, շտապեցրին իրենց քայլերը։ Կույրերի աչքերը բացվեցան։

— Ապրի՛ս, Քոսակ, — ասաց երգիչներից մեկը՝ Ռշտունյաց իշխանը, — լավ բան հնարեցիր, թե չէ մեզ պալատ ո՞վ կթողներ:

— Իհարկե: Մեզ պետք էր իմանալ, թե ովքեր կան այնտեղ, և իմացանք: Հեղինեին էլ գտանք:

— Հա՛, գտանք, բայց այդտեղից դուրս կորզելն է դժվար: Այժմ Աշոտ Երկաթը մեծ ուժ ձեռք բերեց՝ փեսայանալով Գարդմանաց հզոր իշխանին և մի գունդ էլՅուսուֆից օգնական զորք ստանալով, — պատասխանեց Անձևացյաց իշխանը:

— Հը՛մ... Յուսուֆից օգնական զորք... — քթի տակ մռմռաց Քոսակը:

— Ի՞նչ հըմ... մի՞թե սուտ է:

— Չէ, սուտ չէ, նրանց արդեն մենք տեսանք պալատի առաջ շարված, բայց...

— Ի՞նչ բայց:

— Այն, որ դրանք «մերն են», — պատասխանեց Քոսակը առանձին հպարտությամբ:

— Ինչպե՞ս թե մերն են:

— Այնպես են մերը, որ դրանց այստեղ ուղարկողը Աշոտ սպարապետի դրդմամբ է ուղարկել, որ ժամանակին մեզ պետք գան: Իսկ Աշոտ սպարապետը հո գիտեք, որԱշոտ Երկաթի վրա աչքով աչք չունի:

— Լա՛վ է մտածել, ապրի՛ նա, — ասաց Անձևացյաց իշխանը, և նրանք, շուտով դուրս գալով քաղաքից, մտան ձորը, ուր նրանց սպասում էին երեք ձի: Կեղծ երգիչներըդեն շպրտեցին սազը, փոխեցին իրենց շորերը և ձիեր նստելով՝ մթության մեջ շտապեցին առաջ, այնինչ բլուրների վրա դեռ վառվում էին խարույկները, իսկԵրազգավորսն ավելի ու ավելի էր ընկղմվում ուրախության մեջ:

Մինչդեռ Երազգավորսում կատարվում էին հարսանյաց ուրախություններ, Դվին քաղաքում մի ուրիշ բան էր կատարվում: Այստեղ էլ երկրի զանազան կողմերիցիշխաններ էին հավաքվում, բայց սրանք շուքով և փայլով չէին մտնում, այլ ամեն մեկն աշխատում էր չեզոք մնալ, որ ժողովուրդը չճանաչի իրեն, այլ ինքըաննկատելի ներս մտնի Դվին և աննկատելի դուրս գա այնտեղից: Գիշերից բավական անցել էր: Լուսաստղը արդեն երերվում էր հորիզոնի վրա և շտապ բարձրանումվեր՝ հետը բերելով բարերար լույսը, երբ մի խումբ ձիավորներ շտապում

էին դեպի Դվին: Խմբի առաջ գնում էր մի մարդ գեղեցիկ արաբական նժույգ նստած, իսկետևից գնացողները նրա թիկնապահներն էին: Այդ մարդը, ինչպես երևում է, ամբողջ գիշեր ճանապարհ էր եկել, ձիերն արդեն հոգնել էին, բայց նա կրկին անխնամտրակում էր ձիուն և շտապում, որ դեռ լույսը չծագած Դվին մտնի: Հեռվից արդեն երևացին Դվինի պարիսպները: Խմբի գլխավորը նայեց և զոհունակության ժպիտերևաց նրա դեմքին:

— Վերջապե՛ս, — ասաց նա և ձիու ընթացքը դանդաղեցրեց: Մի փոքր անց նա ներս մտավ Դվինի լուռ փողոցները և, ձիուց իջնելով, ձին հանձնեց թիկնապահներիցմեկին, իսկ ինքը ոտքով դեպի Աշոտ սպարապետի պալատը դիմեց:

Ներս մտավ թե չէ, Աշոտ սպարապետը, որը ըստ երևույթին սպասում էր այդ հյուրին, գրկեց նրան: Եվ նրանք համբուրվեցին:

— Վերջապես եկար, արքա՛, — ասաց Աշոտ սպարապետը, — ես վաղուց սպասում էի քեզ:

— Ճշմարիտ է, ես մի փոքր ուշացա, թեև գիշերից վաղ պիտի լինեի այստեղ, բայց ասա, ո՞վ կա այստեղ, Քոսակը եկա՞վ, թե ոչ, ի՞նչ լուր ունի Երազգավորսից:

— Քոսակին սպասում եմ րոպե առ րոպե:

— Ես այստեղ եմ, տե՛ր, — լսվեց հանկարծ Քոսակի ձայնը:

Աշոտ սպարապետը և նոր հյուրը՝ Գագիկ Արծրունին, ետ նայեցին և տեսան, որ Քոսակը դռներում կանգնած յուր քոսոտ բեղերն էր սրում:

— Այդ ե՞րբ եկար, Քոսա՛կ, սատանա հո չե՞ս, — ասաց Աշոտ սպարապետը:

— Չէ, սատանա չեմ, բայց սատանայից շատ բան գիտեմ, հենց այս րոպեիս Երազգավորսից եմ գալիս:

— Իսկ Անձևացյաց և Ռշտունյաց իշխաններն ո՞ւր մնացին:

— Նրանք այս րոպեիս կլինեն այստեղ:

— Հը, ի՞նչ տեսար, աղջիկս այնտե՞ղ է, ի՞նչ է անում:

— Այնտեղ է, տե՛ր, այնտեղ, Աշոտ Երկաթի հարսանիքում քեֆ է անում ու պարում:

— Անիծվի՛ նա, — մռմռաց Գագիկը և աչքերը կատաղությամբ լցվեցին:

Շուտով ժողովվեցան այդտեղ և մյուս իշխանները՝ Անձևացյաց Ատոմ իշխանը, Ռշտունյաց իշխանը, Ուտիացվոց վրա Աշոտ Երկաթից վերակացու կարգված Մովսեսըև ուրիշները: Եվ երբ լրացավ ամբողջ դավադիր իշխանների թիվը, նրանք փակվելով մի սենյակում՝ խորհրդի նստան: Ի՞նչ էին ուզում դրանք, ինչո՞ւ էինդավադրություն սարքում իրենց օրինական թագավորի՝ Աշոտ Երկաթի դեմ: Նրանք չէին ուզում նրան թագավոր տեսնել. և նախանձը կուրացրել էր նրանց և ԱշոտԵրկաթի ոտի տակը փորելով, իրենք էլ պիտի ընկնեին նույն վիհի մեջ և օտարին ուրախացնեին: Եվ օտարը հեռու չէր: Յուսուֆը աչքը չէր հեռացնում Հայաստանից, այդ պատառը շատ քաղցր էր, բայց դեռ ժամանակ չուներ դրանով զբաղվելու, նա ուրիշ գործով էր զբաղված:

— Տյա՛ր, մի՛ մոռանաք, որ Աշոտ Երկաթը յուր անզոր զորքերի վրա վստահացած շուտով արշավելու է Դվինի վրա, որ սրան էլ Կողբի օրը գցի, — ասաց Ռշտունյացիշխանը:

— Թող գա, մենք պատրաստ ենք նրան ընդունելու, — պատասխանեց Աշոտ սպարապետը, — Բայց դու ճի՞շտը լսեցիր:

— Ինձ հաղորդեց Քոսակը, նա ինքը յուր ականջով էր լսել, թե ինչպես Աշոտ Երկաթը սպառնացել էր Դվինը հող ու մոխիր դարձնել:

— Ցանկալի է, — ասաց Աշոտ սպարապետը, — մեր նախապատրաստած Յուսուֆի ուղարկած գունդը նրա հետ կլինի, իսկ կռվի ամենաթունդ պահին յուր սուրը նրադեմ կդարձնի, այնուհետև մեզ մնում է մեր գնդերով ջարդել: Գագիկ Արծրունին Ռշտունյաց և Անձևացյաց իշխաններով թող դարան մտնեն Դվինից դուրս, իսկ մենքկմնանք Դվինում և որոշյալ ժամին, երկու կողմից էլ հարձակում գործելով, թշնամուն մեր մեջ կջարդենք: Նա չի կարող ազատվել, յուր բանակում իրեն հակառակորդկունենա արաբական գունդը, իսկ չորս կողմից մենք կլինենք շրջապատած:

— Ես պատրաստ եմ իմ գնդով ներկա գտնվել նշանակված տեղը, — պատասխանեց Գագիկը:

— Ե՛վ մենք, — կրկնեցին մյուսները:

— Ազատեցե՛ք աղջկանս, և ես պատրաստ եմ ամեն օգնություն անելու, — ասաց Գագիկը դարձյալ:

— Հա՛, ազատել ասելը հեշտ է, բայց կատարելը՝ դժվար: Նա այժմ առյուծի ճանկն է ընկել, իսկ առյուծի ճանկից ազատելը հեշտ չէ, — ասաց Ատոմը:

— Բայց մի՞թե պիտի թողնենք, որ Աշոտ Երկաթը ամբողջ Հայաստանը տակնուվրա անի, մեր իրավունքները խլի, մեր գրկից մեր որդոցը դուրս կորզի:

— Համբերություն և հեռատեսություն է պետք, արքա՛, — ասաց լուրջ դեմքով Աշոտ սպարապետը, — ներկա հանգամանքում շատ դժվար է երես առ երես նրա դեմդուրս գալ, քանի որ նրա ուժը կրկնապատկվեց: Դուք գիտեք Գարդմանաց Սահակ իշխանի զորությունը. նրա ամբողջ զորությունը շուտով մեր դեմ է գալու: Այդզորությունը դրված է Աշոտ Երկաթի ձեռքի տակ, և մենք պիտի աշխատենք կամ ջլատել այն և կամ ջախջախել: Երես առ երես ջախջախել չենք կարող, իսկ ջլատել՝ կարելի է:

— Ինչպե՞ս:

— Ահա թե ինչպես: Նախ և առաջ մենք պիտի մեր կողմը ձգենք Աշոտ Երկաթի եղբորը՝ Աբասին և Ափխազաց Գուրգենին. դրանց զորությունները մեզ անհրաժեշտ են, իսկ հետո փեսայի և աներոջ մեջ պետք է բաժանություն ձգել. վերջինիս գործը դեռ վաղ է, ժամանակ է պետք, իսկ առաջինների մասին չգիտեմ՝ ի՞նչ կասենԱնձևացյաց և Ռշտունյաց իշխանները:

— Կարող եք վստահ լինել մեզ վրա, մենք արդեն տեսնվեցանք նրանց հետ: Որոմն արդեն ցանված է, և նրանք շուտով մերը կլինեն, — պատասխանեց Ատոմը:

— Լավ բան է, եղբայրը եղբոր դեմ:

— Այդպես էլ պետք է, բոլորովին հիմնահատակ պիտի անել, որ կործանվի, փչանա աշխարհիս երեսից Բագրատունյաց ցեղը, — մռմռաց Գագիկը:

— Եվ կոչնչանա, արքա՛, որոշ ժամանակից հետո Աբասն ու Գուրգենը ինձ հետ կլինեն և այն ժամանակ վա՛յ Աշոտ Երկաթին, նրանց ձեռքով ես սպանել կտամ նրան ներբ թափվի Աշոտ Երկաթի արյունը, այն ժամանակ միայն ես կմոռանամ Կողբ գյուղաքաղաքիս ավերմունքը:

— Իսկ աղջի՞կս, — կրկնեց Գագիկը:

— Աղջիկդ քո ձեռքում կլինի, երբ Աշոտ Երկաթը այլևս չի լինի և նրա աթոռանիստ քաղաքը՝ Երազգավորսը մոխրի և ծխի մեջ կկործանվի, — ասաց

Աշոտսպարապետը: Նրանք շուտով ցրվեցան, որպեսզի ամենքը իրենց գնդերով շտապեն դեպի Դվին:

ԺԱ

Աշոտ սպարապետը ժողովը ցրվելուց հետո սկսեց Դվինը ամրացնել, զորքերը կարգի բերել: Նա ճանաչում էր Աշոտ Երկաթին, գիտեր, որ առաջին հարվածը իրենպիտի դիպչեր ու յուր ուժի վրա չվստահացած, ամբարները պաշարով էր լցնում, որպեսզի երկար ժամանակ կարողանա պաշարմանը դիմանալ, եթե իրեն դաշնակիցիշխանները իրենց օգնությունը չհասցնեն:

Երեկոյան դեմ էր, արևը արդեն թեքվել էր դեպի մուտքը, երբ Աշոտ սպարապետին հայտնեցին, որ հորիզոնում գնդեր են երևում:

Աշոտ սպարապետի սիրտը տրոփեց: Նա դուրս եկավ և նայեց հեռուն հորիզոնին, դեպի Երազգավորս տանող ճանապարհին: Այնտեղ ահագին փոշու ամպ էրբարձրանում, որ շտապով դեպի Դվին էր արշավում:

Երկա՛ր, շատ երկար նայեց Աշոտ սպարապետը փոշու այդ ամպին, և նրա սիրտը մթագնեց: Փոշու ամպը մոտենում էր, և նրա մեջ երևում էին սև, շարժուն կետեր, իսկնրանց գլխին՝ փայլուն սաղավարտներ: Բայց ինչքա՜ն շատ էին նրանք, ահավոր, որոնք մի ակնթարթում կարող էին կուլ տալ Դվինը և մոխրի կույտ դարձնել: Նանայում էր նրանց, և մի տեսակ անհասկանալի վրդովմունք պատում էր նրա սիրտը: Նա չափում էր յուր դեմ եկող զորությունը և սարսռում: Ահավոր և զարհուրելի էրայդ զորությունը:

— Մի անգամ էլ զարկվենք, մի անգամ էլ չափենք մեր զորությունները, ատելի՛ Երկաթ, կամ դո՛ւ, կամ ե՛ս... Մի խնձորին երկու տեր չի կարող լինել, այդ գահը ես էլ եմուզում, — ասաց նա և լուրջ ուշադրությամբ սկսեց դիտել մոտեցող գնդերին, որոնք այժմ պարզ կերպով նշմարվում էին:

Նրա դեմքի մութ մռայլը մի փոքր պարզվեցավ, երբ նկատեց առաջին գնդի դրոշակը, որ քրիստոնեական դրոշմ չէր կրում, այլ՝ մահմեդական: Դա Յուսուֆիցուղարկված գունդն էր, որ կանգ առավ արևմտյան դռների մոտ գտնվող բլրակի վրա և այնտեղ սկսեց վրաններ խփել: Աշոտ սպարապետը յուր հայացքը դարձրեցերկրորդ գնդին և նայեց դրոշակին: Այդ դրոշակը կրում էր Բագրատունյաց դրոշմը, որին առաջնորդում էր ինքը թագավորը՝ Աշոտ Երկաթը, որ մոտենալովարաբական գնդին, առանց կանգ առնելու, անցավ առաջ և բռնեց Դվինի

արևտմյան կողմը: Աշոտ սպարապետը վրեժխնդրության մի այնպիսի մոլի հայացք ձգեցդեպի այն կողմը, որ կարծես յուր հայացքով ուզում էր ոչնչացնել ջնջել աշխարհի երեսից ատելի այդ գունդը, և նա, բռունցքը բարձրացնելով, սպառնաց.

— Դու, Երկա՛թ, կխորտակվես իմ ձեռքից, գնդերդ կոչնչանան և երբ ընկնես ձեռքս, այն ժամանակ վա՛յ քեզ...

Բայց խոսքը կիսատ մնաց բերանում, նրա ուշադրությունը գրավեց մի ուրիշ գունդ, որ ավելի զորավոր էր, ավելի ահավոր. այդ գունդը Գարդմանաց Սահակի գունդնէր, իսկ նրանից հետո՝ դարձյալ գնդեր և ամենից վերջը՝ մի ուրիշ փոքրիկ գունդ, որն ավելի սարսռեցրեց ու շփոթեցրեց, քան առաջինները: Այդ գունդը տեղավորվեցԱշոտ Երկաթի և Սահակի գնդերի մեջտեղը, ավելի ապահով տեղ և այնտեղ շուտով ծածանվեցավ Արծրունյաց արծվագլուխ դրոշը, որը ցնցեց Աշոտ սպարապետին:

Նա աչքերը ճմռեց, յուր աչքերին չէր հավատում, մի՞թե ինքը խաբվում է և ուրիշի դրոշակը Արծրունյաց դրոշակի տեղ ընդունում: Բայց չէ, այնտեղ հեռվում՝ երեկոյան մեղմ քամուց ծածանվում է Արծրունյաց դրոշը: Նա լավ է ճանաչում այդ տոհմի նշանը, միմիայն այս դրոշակը սև գույն ունի, կարծես սուգ է պահում այդցեղը, ո՞ւմ համար, ինչի՞, ի՞նչ պատճառով այն ծածանվում է այդտեղ, քանի որ Գագիկ Արծրունին իրեն խոսք տվեց օգնելու...

Նա ընկավ մտածության մեջ և երկար ժամանակ աչքը չէր հեռացնում նրանից, մինչև որ կամաց-կամաց մութը յուր սև քողը տարածեց շուրջը և ամեն բան ծածկեցնրա աչքերից: Տեղ-տեղ սկսվում էին վառվել խարույկներ, որոնք քանի գնում շատանում էին և Դվին քաղաքի շուրջը խարույկների փունջ կազմում: Այդ ժամանակԱշոտ սպարապետը շարժվեց տեղից և սկսեց ստուգել հսկող պահապաններին, որ արթուն հսկում էին և իրենց դանդաղ քայլերով շրջում պատնեշների վրա:

— Տեսնո՞ւմ ես՝ ինչ շատ են, — ասում էր մի զինվոր մյուսին՝ ցույց տալով դեպի Աշոտ Երկաթի բանակը:

— Հա՛, շատ են, — պատասխանեց մյուսը:

— Վաղը կռիվը տաք կլինի, — շարունակեց առաջինը:

— Այո՛, տաք կլինի, մեկի դեմ տասը, եթե...

— Ի՞նչ եթե...

— Եթե մեզ օգնության չգան:

— Ովքե՞ր պիտի օգնության գան:

— Ասում են շատ իշխաններ, որոնք ետևից պիտի ծեծեն, իսկ մենք՝ առջևից:

— Իսկ մեզ ի՞նչ օգուտ...

— Ոչի՛նչ: Մենք կսպանվենք, իսկ մեր ընտանիքը որբ կմնա, սրանի՞ց էլ լավ օգուտ...

— Սս՛... սպարապետը գալիս է:

Նրանք լուռ կացան: Աշոտ սպարապետը անցավ նրանց մոտով և ուզում էր բարձրանալ պալատ, երբ մեկը առաջը կտրեց:

— Տե՛ր, — ասաց նա:

Աշոտ սպարապետը նայեց նրան, և ուրախ ժպիտ երևաց դեմքին: Սպարապետը բռնեց նրա ձեռքը, և նրանք ներս մտան:

— Ասա, Քոսա՛կ, ի՞նչ լուր ունես: Ես քեզ անհամբեր սպասում էի:

— Լավ լուրեր, տե՛ր, — պատասխանեց Քոսակը:

— Ինչպե՞ս, իսկ այն Արծրունյաց սև դրոշակն ի՞նչ է նշանակում:

Դատարկ բան: Որսն յուր ոտովն է եկել մեզ մոտ: Այդտեղ Հեղինեն է գտնվում և սպիտակ դևից կազմած մի փոքրիկ գունդ:

— Մի՞թե ինքդ տեսար այդ բոլորը:

— Ես բոլորը լրտեսեցի: Աշոտ Երկաթը այնպես վստահ է յուր հաղթության վրա, որ ամենևին նշանակություն չի տալիս ձեզ: Նա արդեն Դվինը յուր ձեռքումն էհամարում և մի տեսակ արհամարհանքով է վերաբերվում և այդ պատճառով էլ ամեն բան անփույթ է թողել:

— Այդ մեզ համար լավ է:

— Վաղը նա հարձակում չի գործի, ինչպես երևում է, նա մի քանի օր ուզում է հանգստանալ:

— Շատ լավ է անում. եթե վաղը նա հարձակում չի գործի, գիշերս մենք դուրս կգանք Դվինից և կհալածենք նրանց: Հայտնիր Գագիկ Արծրունուն, որ նա էլ պատրաստվինի, հենց որ բազուկը մեր գլխին կանգնած լինի, մենք կսկսենք կռիվը:

— Շատ լավ, ես այս րոպեին կչքանամ այստեղից և Գագիկի մոտ կերևամ:

— Իսկ արաբական գո՞ւնդը, — հարցրեց Աշոտ սպարապետը:

— Արաբական գունդը հաստատ է յուր խոսքին, կռվի տաք ժամանակ նա մեր կողմը կանցնի:

— Լա՛վ ուրեմն, դու գնա, ժամանակ մի՛ կորցնի:

Քոսակը գլուխ տվեց և անհետացավ:

ԺԲ

Ամպամած և տխուր օրին հետևեց անձրևային գիշերը… Մռայլ էր երկինքը, տխուր էին երկու բանակների սրտերը, որոնք աչալուրջ հսկում էին իրար: Լաց էր լինումերկինքը, լաց էին լինում զինվորներից շատերը և վերջին մնաս բարևն ասում աշխարհին: Նրանք գիտեին, որ իրենցից շատերը այդ գիշեր պիտի պառկեին այդտեղ, անշարժ, հավիտենական քնով, առանց տեսնելու վաղվա արևը, առանց արժանանալու իրենց սիրելիների տեսությանը: Ինչու՞ համար, ի՞նչ պատճառով: Այդ նրանքչէին հարցնում, այլ կուրորեն գնում էին իրենց կյանքը վայր դնելու այնտեղ՝ ուր իրենց յուրայինների արյունը պիտի թափվեր... Բայց մի՞թե մեր տերը՝ Հիսուսը ա՛յդքարոզեց, մի՞թե նա մեզ սովորեցրեց յուրայինների արյունը թափել, իրար ոտնատակ տալ, ոչնչացնել ամբողջ Հայաստանը և նրան ձգել ստրկության անարգ լծիտակ... այդ չէին հարցնում նրանք: Զինվորների սրտերը տրոփտրոփում էին, նրանք սրում էին նիզակները, որպեսզի ավելի հեշտ ծակեն մարդկանց մարմինները, սրում էին թրերը՝ ավելի շատ մարդ կոտորելու համար և լուռ սպասում էին հրամանի, որ սկսեն արյան հեղեղներ թափելը: Եվ այդ հրամանը հեռու չէր: Աշոտսպարապետը նստած յուր արաբական նժույգը զգուշությամբ մոտենում էր յուր գնդերին և հրաման տալիս պատրաստվել քաղաքից դուրս գալու և հարձակումգործելու համար: Զորքերը խումբ-խումբ կանգնում էին, գնդեր կազմում և լուռ սպասում: Մի վերջին նշան էր պետք, որ նրանք զգուշությամբ քաղաքի դռներից դուրսգային և անակնկալ կերպով թշնամու վրա հարձակվեին:

Բայց Աշոտ սպարապետը դեռ ուշացնում էր վերջին հրամանը: Նա պղտոր հայացքով նայում էր դեպի Աշոտ Երկաթի բանակը, ուր դեռ մեծ

քանակությամբխարույկներ էին վառվում և իրենց թույլ ցոլմունքները տարածում գիշերային խավարի մեջ: Աշոտ Երկաթի բանակում լուսավորություն էր տիրում. այնտեղ դեռարթուն էին, հարկավոր էր սպասել փոքր-ինչ, մինչև կհասներ խոր գիշերը և թշնամու բանակում կտիրեր խորին գերեզմանային լռություն...

Բայց երկինքը դեռ լալիս էր, և նոսր անձրևի կաթիլները քնքուշ շշնջյունով ընկնում էին գետին ու հողի մեջ ծծվում...

— Իշխա՛ն, տեսնո՞ւմ ես Աշոտ Երկաթի բանակում ինչպիսի լուսավորություն է տիրում. նա հանգիստ քեֆ է անում, — ասաց Աշոտ սպարապետը դիմելով իրեն մոտկանգնած իշխանին:

— Այդ քեֆը երկար չի քաշի, տե՛ր, մեր կտրիճները հարամ կանեն այն:

— Հա՛, մեր բախտից անձրևը մեզ օգնում է: Հողը կփափկանա և ձիերի ու մարդոց ոտների ձայնը հեռու չի տարածվի: Նրանք այն ժամանակ կիմանան, երբ արդենցրիվ կտանք նրանց բանակը:

— Այո՛, հաղթությունը մերն է, եթե նրանք մեր հոտը չառնեն:

— Նրանք դեռ զվարճանում են և մեզ վրա մտածելու ժամանակ չունեն:

— Բայց, տե՛ս, խարույկների թիվը հետզհետե պակասում է, բանակները կարծես քնած լինեն, միմիայն Աշոտ Երկաթի և Հեղինեի գնդերի մեջ է երևումլուսավորությունը: Պետք է շտապել, կես-գիշեր է, մինչև տեղ հասնենք, ամեն ինչ քուն մտած կլինի: Կհրամայե՞ս դուրս գնալու նշանը տալ, — հարցրեց իշխանը:

— Տո՛ւր, բայց զգույշ:

Իշխանը հեռացավ, իսկ Աշոտ սպարապետը դեռ անշարժ կանգնած էր յուր տեղում և դիտում էր հեռուն: Տիրում էր ահարկու, խորհրդավոր լռություն: Աշոտսպարապետը յուր փառքի վրա էր մտածում, նա արդեն երևակայում էր իրեն Բագրատունյաց գահին բազմած, երբ հանկարծ Արծրունյաց Գագիկը միտն ընկավ և ինքն իրեն հարցրեց. «Իսկ նա՞... նա՛ էլ կխորտակվի Երկաթի նման, և ե՛ս միայն տիրապետողը կլինեմ, մինչև այժմ երեք թագավոր էինք, այսուհետև միայն ե՛սկլինեմ!...

Այդ ժամանակ լսվեց թմբուկի խուլ, բայց սարսռեցնող ձայնը, որ սարսափի չափ ցնցեց Աշոտ սպարապետին և ընդհատեց նրա մտածության թելը:

— Պետք է շտապել, — ասաց նա և ցած իջավ բարձունքից:

Անցավ մի փոքր ժամանակ, և զորքերը գունդ-գունդ առաջ անցան ու կորան մթության մեջ…

ԺԳ

Կես գիշերից անց էր…

Անձրևը դեռ չէր դադարել, շարունակում էր յուր տաղտկալից ողբը, այնինչ Աշոտ Երկաթի բանակը հետզհետե խոր քնի մեջ էր ընկղմվում: Տեղ-տեղ միայն դեռվառվում էին խարույկներ, որոնց առկայծող լույսերը, չդիմանալով անձրևի տարափին, մոտ էին հանգչելուն: Նրանց շուրջը միայն երևում էին պահապաններիթթված դեմքերը, որոնք այլևս ուշք չդարձնելով խարույկների հանգչելուն, ամեն կերպ աշխատում էին քունը փախցնել, որ ամեն ուժով ընկճում էր նրանց և ստիպումքաղցր նիրհի մեջ ընկղմվելու: Նրանցից մի քանիսը շրջում էին դանդաղ ու հավասար քայլերով և ծանրացած աչքերով դեպի Դվին նայում: Բայց մթության մեջ ոչինչչէր երևում, ամեն ինչ խաղաղ էր և լուռ, անձրևի շփշփալու ձայնն էր միայն, որ խանգարում էր ընդհանուր մեռելային լռությանը…

Քնած էր քաղաքը, քնած էր թշնամին, էլ ինչո՞ւ զուր տեղը լարել ջղերը և զուր թշնամու բանակը դիտել: Եվ Աշոտ Երկաթի պահապանները մինը մյուսի ետևից դադարէին առնում շրջելուց և մի-մի անկյուն գտնելով՝ ընկղմվում էին քնի քաղցր գրկի մեջ և ապա, քիչ ժամանակից հետո, տարվում հեռու՛, հեռու՛, դեպի սիրելիներիգիրկը: Դրանց երեսին շաղում էր անձրևը, յուր մեղեդին նվագում, բայց նրանք ոչինչ չէին զգում և ոչինչ չէին իմանում: Քնած էր երկիրը, քնած էր Աշոտ Երկաթիբանակը, բայց քնած չէր Հեղինեն, որի վրանի գլխին ծածանվում էր Արծրունյաց սգավոր դրոշակը: Սուգ էր պահում նա յուր դավաճան հոր համար. սուգ էր պահումԱրծրունյաց ցեղի համար, որ այնպիսի ամոթապարտ դեր է կատարում պատմության մեջ:

Եվ թուլակազմ, քնքուշ օրիորդը այդ գիշեր կորած էր զենք ու զրահի մեջ և մի խումբ կտրիճ գնդի գլուխ անցած շտապել էր կռվի դաշտը մտնելու, կռվելու հարազատհոր դեմ և յուր արյան գնով սրբելու այն ամոթալից արատը, որ դնում էր Գագիկ Արծրունին իրենց ցեղի վրա:

Նա գիտեր, նրան տեղեկացրել էին, որ հայրն էլ միացած է Աշոտ սպարապետի հետ, նույն տեսակ դավաճանի, նույն տեսակ փառասերի հետ, ինչպես յուր

հայրը, բայցտեղեկություն չուներ, որ հայրը դարան է մտած յուր գնդի ետևը, այնինչ կարծում էր, թե նա փակված է Դվին քաղաքում:

— Վաղը, հենց որ արտույտները կերգեն իրենց մեղեդին, հենց որ ցայտի առավոտյան շողքը, մենք պիտի սկսենք հարձակումը, եթե անձնատուր չլինի Աշոտսպարապետը, — մտածում էր Հեղինեն: — Օ՛, ինչպե՞ս եմ սպասում այդ առավոտյան, ցանկալի այդ ժամին, այնինչ գիշերը երկար է տևում, շա՜տ երկար...Մերկացրած սրով, ես կմտնեմ թշնամու ամենախիտ շարքերի մեջ և կջախջախեմ նրանց: Դավաճանին փրկություն չկա, և վա՛յ նրան, ով իմ սրի բերանն ընկնի... իսկեթե հա՞յրս հանդիպի... Հա՞յրս... դեմ առ դե՞մ…, երես, առ երե՞ս..., փրկություն չկա՛ և նրան: Կամ ես, կամ հայրս: Կռվի ժամանակ չկա հայր ու դուստր, այնտեղ միայնմի սուրբ գործ կա, որ վեր է քան ծնողը, և այս սուրբ գործը հայրենիքին ծառայելն է: Օ՜ն, քաջացի՛ր, իմ սիրտ, թող կանացի երկչոտությունդ և առյուծի ուժ ստացիր...

Հեղինեի խոսքերն ընդհատվեցան: Նրա վրանը ներս մտավ մի ուրիշ օրիորդ, որ նույնպես զենք ու զրահի մեջ էր:

— Իշխանուհի՛, դու դեռ արթո՞ւն ես, չե՞ս քնել, արդեն կես գիշեր է, պետք է քնել, որ վաղը ուժ ունենանք, — ասաց ներս եկողը:

— Հա, Աստղի՛կ, ճիշտ է քո ասածը, բայց, ինչպես երևում է, դու էլ չես քնել, — պատասխանեց Հեղինեն և մի տեսակ կարեկցական հայացք ձգեց Աստղիկի վրա, որսևերի մեջ էր կորած: Նա դեռ պահում էր յուր նշանածի՝ Դավթի սուգը:

— Բայց, իշխանուհի՛, ինչքա՛ն աշխատեցի քնել, չկարողացա: Մի տեսակ անհասկանալի հույզ պատում է սիրտս, և ես սաստիկ շփոթված եմ:

— Չպետք է շփոթվել, քույրի՛կս, երբ վտանգի առաջ ենք: Մի՞թե մահը մեզ համար մեկ չէ: Վաղ թե ուշ մենք պիտի մեռնենք, ավելի լավ է պատվով մեռնել, քանանարգան քով:

— Ճիշտ է, իշխանուհի՛, բայց ինչքան մենք քաջասիրտ լինենք, երկյուղը դարձյալ տիրում է մեր սրտերին: Այս գիշեր մանավանդ անհասկանալի դող է անցնումմարմնովս և կարծում եմ, թե ահա՛ ուր որ է թշնամին վրա կտա և ամբողջ բանակը կցրվի:

— Խե՛ղճ Աստղիկ, զուր դու ինձ սիրելով կռվի դաշտ իջար: Երկյուղը, ինչպես երևում է, պաշարել է քեզ: Ինձ մի՛ նայիր, հոգիս, դու կռվի մեջ մի՛ մտնի, ես գնում եմդեպի վտանգը:

— Ո՛չ սխալվում ես, ուր դու, այնտեղ և ես: Ինչու՞ ես կարծում, թե ես վախենում եմ վտանգից: Վաղը կտեսնես, որ ես քեզանից ետ չեմ մնա և քեզ հետ միասին կռվիխիտ տեղը կմտնեմ: Ինչպես քեզ համար են ատելի դավաճաններս այնպես և ինձ համար: Ինչպես դու ես սիրում հայրենիքդ այնպես և ես: Կմեռնես դու, կմեռնեմ և ես:Բավական է ինչքան սուգ պահեցի, այժմ հարկավոր է կռվել:

Աստղիկը խոսում էր ոգևորությամբ, նրա աչքերը վառվում էին և երեսը բորբոքվում:

— Ապրի՛ս, իմ քույրիկ, քո սրտի մեջ նստած է վեհ և ազնիվ հոգի, եկ գրկվենք, համբուրվենք, գուցե թե վերջին անգամ:

Նրանք գրկվեցան և ջերմ, շատ ջերմ համբուրվեցան, կարծես այդ րոպեին հավիտյան բաժանվելիս լինեին իրարից:

Երկուսն էլ հուզված էին, և արտասուքի կաթիլները լուռ գլորվում էին նրանց աչքերից: Ինչո՞ւ էին լալիս նրանք, ի՞նչ վիշտ էր կեղեքում նրանց սիրտը, քանի որհաստատապես վճռել էին մեռնելու, հայտնի չէր: Բայց անհուն սիրով սիրելով միմյանց, ամեն մեկը նրանցից վախենում էր մյուսին կորցնելու, ահա այդ էր նրանցսրտի վիշտը, այդ էին ասում նրանց արտասվալից աչքերը և տխուր, սիրտ պատռող հայացքները: Հեղինեն սիրում էր Աստղիկին: Վանա բերդից փախուստ տալուցհետո Աստղիկը որոշ ժամանակ ապաստանել էր Հռիփսիմեի վանքում:

Այդտեղ նրանք ծանոթացան և սիրեցին իրար: Այդտեղ սրանք դաշն կապեցին չբաժանվել իրարից և միասին ապրել, միասին մեռնել: Հեղինեն հայտնեց Աստղիկինյուր սրտի գաղտնի խորհուրդը, այն է՝ վրեժ առնել դավաճաններից և յուր հորից, իսկ Աստղիկը առանց մի բառ անգամ արտասանելու հետևեց նրան:

Աշոտ Երկաթը թեև հակառակ էր նրանց կռվի դաշտ իջնելուն, բայց զիջանելով Հեղինեի թախանձանքներին, թույլ տվեց հետևելու իրեն:

— Բավական է ինչքան լաց եղանք, սիրելի՛ Աստղիկ, այժմ հարկավոր է մի փոքր հանգստանալ,— ընդհատեց Հեղինեն:

— Ես չեմ կարողանում քնել, իշխանուհի՛, ուզում եմ աչքս խուփ անել, բայց քունը մոտ չի գալիս: Դու քնիր, իսկ ես պահպանություն կանեմ քեզ, կնայեմ քո սիրունդեմքին և կհիանամ, այդ ինձ արդեն բավական է:

— Եթե այդպես է, ես էլ չեմ քնի: Վաղուց է, որ իմ քունն էլ կտրվել է: Նստիր ուրեմն և միասին լուսացնենք, թող պահապանները պահպանություն անեն մինչևառավոտ:

— Բայց նրանք կարծես բոլորը քնած լինեն, իշխանուհի՛, ո՛չ մի տեղ խարույկ չի վառվում, ո՛չ մի տեղից պահապանի քայլերի ձայն չի լսվում:

— Անձրևն է խանգարում, նրանք երևի մի տեղ կուչ են եկել և լուրջ հսկում են: Թշնամին չի համարձակվի այս մեջ գիշերին անհանգստացնել մեզ:

— Իսկ եթե նա այս րոպեիս հարձակվի՞, — հարցրեց Աստղիկը և բռնեց իր սիրտը, կարծես թե նրան ասելիս լինեին, թե ահա ուր որ է կլսվի նրանց գոռ ձայնը, և կսկսվիկոտորածը:

— Կհարձակվեն՝ մենք էլ կջարդենք նրանց: Ի՞նչ օգուտ կտանեն այս ահեղ բանակից: Մինչև մեզ հասնելը երեք զորավոր գունդ կա առաջները:

— Հա՛, բայց արաբական գունդը կարող է դավաճանել մեզ:

— Հոգ չէ: Ապրի Աշոտ Երկաթը, նա միայն յուր գնդով բավական է թշնամիներին, բացի դրանից, վաղը առավոտ այստեղ կլինին հայր Մարտիրոսը և Գևորգ իշխանըիրենց գնդերով:

— Ո՞ւր է Գևորգ իշխանը...

Խոսքը կիսատ մնաց Աստղիկի բերանում, երբ նրա ականջին հասան ձիերի և մարդոց ոտքերի ձայներ:

— Իշխանուհի՛, սմբակների դոփյուն եմ լսում, չլինի՞ թշնամին է գալիս:

Երկուսն էլ սկսեցին ականջ դնել: Հիրավի լսվում էր ձիերի զգույշ դոփյուններ և այդ ձայները քանի գնում ավելի և ավելի պարզ էին լսվում:

— Թշնամին է, — կանչեց Հեղինեն և, վեր թռչելով տեղից, Վահանն ու սուրը ձեռքն առավ: Նույնը արավ և Աստղիկը:

— Իսկ ո՞ւր են մեր պահապանները, մի՞թե ամենքը քնած են, պետք է աղմուկ ձգել բանակում, — ասաց Հեղինեն: Եվ նրանք գուրս գնացին վրանից:

— Ի զե՛ն, ի զե՛ն, — կանչեց Հեղինեն և զարթեցրեց պահապաններին, որոնք մի ակնթարթում վեր թռան տեղերից:

— Թմբուկը զարկիր, — հրամայեց Հեղինեն, — թշնամին մոտ է, հարկավոր է զարթեցնել բանակը:

Հեղինեն և Աստղիկը նորից ականջ դրին և սարսափով նկատեցին, որ դոփյունները երկու կողմից էին լսվում: Նրանք հասկացան, որ արդեն պաշարված ենթշնամիներով:

— Համբուրվենք, — շշնջաց Հեղինեն և նրանք դեռ չէին վերջացրել համբույրը, երբ իրենց բանակի զանազան կողմերից լսվեցան թմբուկների ահեղ ձայներ: Նրանքզենքի էին հրավիրում քնած զինվորներին:

Հեղինեն և Աստղիկը թռան իրենց նժույգների վրա, և նրանց գունդը արդեն պատրաստ էր կռիվ սկսելու, երբ բանակի ամեն կողմից լսվեցան թշնամու սոսկալիգոռում-գոչյունը և ապա սրերի ու վահանների չխկչխկոցը, իսկ քիչ հետո՝ վայնասունի ու հառաչանքի ձայները:

ԺԴ

Գիշերային մթության մեջ սկսվել էր կոտորածը…

Աշոտ Երկաթի գնդերը, քնից նոր զարթնած, շփոթված փախուստի էին դիմում, բայց ամեն կողմից մահն անխուսափելի էր: Թշնամին կոտորում էր առաջից, կոտորում էր ետնից և այդ բավական չէր, արաբական գունդն էլ մյուս կողմից էր կոտորում նրանց: Նրանք նմանվում էին ծուղակի մեջ բռնված գազանին, որըանօգուտ ծեծում է վանդակի ամեն կողմը, բայց ամեն տեղ երկաթե ձողերի հանդիպելով, բարկությունից ուզում է խորտակել, կրծել յուր առաջ եղած արգելքները, բայց ինքը ուժասպառ լինելով՝ արյունաթաթախ ընկնում է ցած:

Աշոտ Երկաթը մի ակնթարթում ամեն բան հասկացավ: Նա զգաց յուր անփութության սխալը, բայց ուշ էր, ժամանակը չէր երկար մտածելու, հարկավոր էր յուր և յուրգնդի կյանքը էժան չծախել, ու նա նժույգ հեծնելով, հարձակվեց թշնամիների վրա: Սոսկալի էր կոտորածը: Գազան էին կտրել Աշոտ սպարապետի գնդերը, գազանէին կտրել նաև Աշոտ Երկաթի զինվորները: Ձիեր ու

մարդիկ, կենդանին ու մեռածը իրար էին խառնվել և կազմել մի տեսակ անբացատրելի քաոս, որի միջից լսվումէին միայն դժոխային ձայներ և սիրտ կտրատող հառաչանքներ: Նրանք նիզակներով ծակում էին իրար, երկու կողմից էլ վայր ընկնում ձիերից և ապա միակնթարթում ոտքի կանգնելով, սրերը մերկացնում և հարձակվում իրար վրա: Նրանց սրերը փշրվում էին, և նրանք կատաղաբար իրար էին գրկում, մեկը մյուսինգլորում և ատամներով խածելով իրար, արյունը ծծում, մինչև որ երկուսն էլ ուժասպառ լինելով, բայց դեռ իրար ամուր գրկած, շունչները փչում...

Կռվում էր Աշոտ Երկաթը, բայց նրա հոգին հետզհետե վհատվում էր: Նա տեսնում էր ինչպես անխնա կոտորվում են յուր զինվորները, իսկ մի մեծ մասը ճղելովթշնամու գնդերը փախուստ է տալիս:

Անգիտակցորեն ինքն էլ դեպի այն կողմն է գնում և հանկարծ նկատում է Հեղինեին, որ մի խումբ թշնամիներով շրջապատված հերոսաբար պաշտպանվում է:Օրիորդի ձեռքերը հազիվ են շարժվում, մի քանի րոպե էլ և նա կընկնի նրանց ձեռքը: Եվ ահա Աշոտ Երկաթը գրոհ է տալիս ու մտնում թշնամիների մեջ: Հեղինեննկատում է այդ:

— Հեռո՛ւ, թագավո՛ր, հեռու կաց դավաճաններից, որոնք քո արյանն են կարոտ:

— Որսը յուր ոտքով է գալիս, այդ լավ է, — կանչում է մի ձայն և նիզակը շեշտակի դեպի Աշոտ Երկաթի կուրծքն ուղղում: Հեղինեն սարսափով նկատում է և սրիհարվածով այդ նիզակը երկու կես անում:

— Փախի՛ր, Հեղինե՛, փախի՛ր, իսկ ինձ թող սրա հետ հաշիվս վերջացնելու, — ասում է Աշոտ Երկաթը և վրա վազում յուր ախոյանին: Նրանց սրերը մխվում են իրար, նրանք ետ-ետ են գնում և դարձյալ հարձակվում:

— Պիտի մեռնես իմ ձեռքից, Շահնշա՛հ, — ասում է դառն ժպիտով Երկաթի ախոյանը և մերկացրած սրով կրկին հարձակվում, բայց նրա հարվածը դիպչում է ԱշոտԵրկաթի վահանին և կայծեր միայն արձակում:

— Շատ մի՛ շտապիր, Աշո՛տ սպարապետ, շատ մի պարծենա քո հաղթությամբ,— ասում է Աշոտ Երկաթը և յուր ահագին սուրը վրա բերելով ուզում է ջախջախելիակառակորդի գլուխը: Բայց հարվածը դիպչում է նրա ձիուն, որը վայր գլորվելով, վայր է ձգում նաև Աշոտ սպարապետին:

— Անպիտա՛ն Երկաթ, — մրմնջում է Աշոտ սպարապետը և ուզում է նոր ձի հեծնել:

Այդ ժամանակ Աշոտ Երկաթը տեսնում է յուր խմբի նվազելը և քայլ առ քայլ դեպի ետ է նահանջում:

Ետ էին նահանջում Հեղինեն ու Աստղիկը, երբ նիզակի սուր ծայրը ցցվեցավ ուղղակի Աստղիկի սրտի մեջ: Նրա աչքերում կարծես կայծակներ փայլեցին ու նաթեքվելով, անխոս, ձիուց ցած գլորվեց: Մահը վայրկենական էր:

Հեղինեն մի ճիչ արձակեց, ուզեցավ բռնել նրան, բայց արաբական գնդից մի քանի զինվորներ շրջապատեցին իրեն: Ինչպես երևում է, նրանց հրամայված չէրսպանել Արծրունյաց օրիորդին, որովհետև ուզում էին կենդանի բռնել նրան:

Վրեժխնդրության սոսկալի բոցով լցվեցին Հեղինեի աչքերը, և նա զգաց, որ այլևս իրեն փրկություն չկա, որ ինքը պիտի ընկնի թշնամու ձեռքը, ուստի լավ համարեցկենդանի նրանց ձեռքը չընկնել և յուր արյունաթաթախ սուրը վրա բերելով ջախջախեց իրեն մոտեցող զինվորի գլուխը: Նա ընկավ, բայց նրա տեղը ուրիշներըբուսան, այդ ժամանակ նա զգաց, որ մեկը յուր ուսին մտրակով խփեց, մի վայրկյան սոսկալի ցավ զգաց և ապա ամեն բան մոռացավ: Նա մտրակեց ձիուն: Ձինահագին թռիչք արավ, յուր ոտքերի տակ կոխկրտեց մի քանի մարդու և ապա սլացավ մթության մեջ, տանելով յուր հետ Հեղինեին, որը ամուր կպել էր ձիու թամբին նինքն էլ չէր հասկանում թե ուր է գնում... Ձին թռչում էր առաջ՝ ոչ մի արգելքի վրա ուշք չդարձնելով, երբ նրա ոտքը քարին դիպավ և նա յուր երկու ոտքի վրա չոքելով, վայր գլորեց Հեղիներն: Հեղինեն ցավից սոսկալի հառաչանք արձակեց և ձեռքը դեպի ուսը տարավ, ուսը կտրված էր սրով, և այնտեղից հոսում էր տաք արյունը:

— Ինչպե՞ս վերջացավ կռիվը, — մտածեց նա և առանց ուշք դարձնելու վերքից հոսող արյանը՝ պառկեց թաց խոտին և աչքերը դարձրեց դեպի անողորմ, մոխրագույներկինքը: — Ա՜խ, մերոնք ամենքը կոտորվեցան, ամենքը մեռան,— շարունակեց նա, — իսկ ինչ՞ եղավ Աշոտ Երկաթը... Ա՜խ, հայր, դավաճան և ստոր արարած... Բայցինչքա՜ն անուշ է այստեղ, կարծես շուրջս մանուշակներ լինին դուրս եկած, ես չեմ ուզում ուրիշ տեղ ընտրել, այստեղ շատ լավ է, հանգիստ, խաղաղ... թողե՛ք ինձ, — ասաց նա և ուժ արավ աչքերը փակելու, այնինչ նրա աչքերը բաց էին և անշարժ հայացքով դիտում էին երկինքը, կարծես ուզում էին թափանցել երկնքի գաղտնիքիմեջ:

Հեռվից լսվում էին ձիերի դոփյուններ, մարդկանց ոտքերի ձայներ, որոնք շտապ-շատպ հեռանում էին: Նրանք կարծես հալածված մի ինչ-որ աներևույթ զորությունից, փախուստ էին տալիս, առանց նկատելու Հեղինեին, որ ընկած էր մի

փոսի մեջ, իսկ մի քանի քայլ հեռու՝ նրա ձին, որը նույնպես կյանքի ու մահվան կռվի մեջ էր:

Հեղինեն հետզհետե նվաղում էր. արյունը դեռ բխում էր նրա վիրավոր ուսից:

— Է՛յ, նաժիշտնե՛ր, հագցրե՛ք ինձ ամենաքնքուշ կերպասներ, հյուսեցեք մազերս և օծեցեք անուշահոտ ջրերով, ես պիտի կաքավեմ իմ սիրելի պարը, այդ շատ է դուրգալիս հորս, և ես ուզում եմ նրա սիրտը շահել, նա առանց այն էլ վրդովված է... Բայց չէ՛, ես չեմ կարող, սիրտս հանգիստ չէ, հայտնեցեք հորս, որ ես այսօր հիվանդ եմ, չեմ կարող պարել: Դուք երգեցեք, նվագեցեք բարձր ու բարձր... Բայց չէ, սպասեցե՛ք, շատ բարձր պետք չէ, մի՞թե չեք խղճում ինձ, ականջներս ծակվում են... Այս ո՞ւրեն գնում, ինձ տանում են, ես բարձրանում եմ վեր, շուտով կգլորվեմ ցած… Հեռո՛ւ ինձանից, հեռո՛ւ... Հա՛, դավաճան է հայրս, ես չեմ ուզում նրա դուստրը լինել, նայուր փառքի համար ոտնատակ է տալիս ամեն սրբություն, բայց ես չեմ անի... Զարմանալի բան, ես կարծես կրկին բարձրանում եմ, ինձ կարծես տանում են վեր, ա՜խ, դեպի ո՞ւր... Ես վախենում եմ, վայր կընկնեմ...

Եվ Հեղինեն երևակայում էր իրեն անհուն բարձրությունից ցած գլորվելիս: Նա կծկվեց և ապա սկսեց թաց խոտերը պոկել և հողը ճանկռտել: Ձախ ձեռքը չէր շարժվում, նա արդեն ուժից ընկած էր՝ ձախ ուսը վիրավորված լինելու պատճառով:

Անցավ մի փոքր ժամանակ: Չորս կողմը տիրում էր արդեն խոր լռություն — ո՛չ մի ձայն, ո՛չ մի շշուկ այլևս չէր խանգարում լռությունը, երբ հեռվից լսվեցին ձիերիդոփյունների ձայներ:

Հեղինեն ուզեց գլուխը բարձրացնել և նայել այն կողմը, բայց ուժերը չներեցին, և նա կես թմրած, կես զգաստացած յուր լսելիքը սրեց: Ձայները մոտեցան և իսկույնհեռացան նրանից: Հեղինեն զգաց, որ հեծյալ մարդիկ են անցնում յուր մոտով, բայց թե ի՞նչ մարդիկ են և ինչու՞ այդպես շուտ են անցնում, չկարողացավ հասկանարնա կրկին սկսեց զառանցել:

— Զարմանալի բան, երկինքը հետզհետե սկսում է ցածրանալ, ես նրան ձեռքով կհասնեմ, ահա լուսինը, ինչքա՛ն նա մեծ և ահավոր է երևում, իսկ աստղե՛րը... տեսեք, ինչպես վազում են, փախչում երկնքից, կարծես մեկը հալածելիս լինի նրանց... Վա՛յ, ես այս տեսակ բան չեմ տեսել, մեր Վասպուրականում այդ տեսակ բաներ չենպատահում: Այստեղ գետինն էլ է շարժվում, տե՛ս, ինչպես օրորում է նա ինձ... Է՛հ, ավելի լավ է ուշադրություն չդարձնեմ, ես վախենում եմ այդ տեսակ բաներից: Եսկփակեմ աչքերս, ավելի լավ է քնեմ, քունը ինձ կխաղաղեցնի... — Եվ նա

երևակայելով, թե քնում է, ճիգ էր անում աչքերը փակելու, բայց նրանք կրկին բաց էին լայն, ապուշ կտրած, որոնց առաջ, երկնքում, սողում էին ամպերը…

— Ինչքա՛ն հանգիստ է այսպես, ինչպե՛ս հանգիստ են նյարդերս, ես խաղա՛ղ եմ, անվրդո՛վ, հանգի՛ստ:

Ու քաղցր նիրհը պատում էր նրան և յուր քնքուշ թևերով տանում հեռու՛, հեռու՛, ո՞վ գիտե ո՞ր աշխարհը, դյութական ո՞ր երկիրը…

ԺԵ

Կամաց-կամաց արշալույսը բացվում էր…

Երկնքից արագապես խույս էին տալիս մոխրագույն ամպերը և կորչում անհուն եթերի մեջ... Բացվում էր արշալույսը, սկսվում պայծառ առավոտը:

Բայց տխուր, սոսկալի էր այդ առավոտը Աշոտ Երկաթի համար: Նրա գնդերը սարսափահար փախչում էին որպես աներևույթ թշնամուց հալածված, խումբ-խումբ, հատ-հատ, ոմանք՝ ձիով, իսկ ոմանք՝ ոտքով: Իշխանավորը զինվորին չէր ճանաչում, իսկ զինվորը՝ իշխանավորին, ամեն մեկը յուր հոգսի մեջ էր, ամեն մեկը աշխատում էր շուտով խույս տալ Դվինի շրջակայքից և կորչել հեռու՛, հեռու՛...

Եվ սարսափահար մարդկանց այդ խումբը ուղղվում էր դեպի Երազգավորս ոչ թե ուղիղ ճանապարհով, այլ լեռների, ձորերի և մացառների միջով: Խելագարներինման նրանք վազում էին առաջ, առանց նկատելու, որ թշնամին այլևս իրենց չի հալածում, որ նրանք բավականացել էին իրենց գնդերը խորտակելով, և այնտեղ, ուրառաջ ծածանում էին Աշոտ Երկաթի և Արծրունյանց սևանիշ դրոշները, այժմ տնկված էին Աշոտ Բռնավորի և Գագիկ Արծրունու դրոշակները: Էլ չկային Աշոտ Երկաթիհաղթական գնդերը, նրանք ցաք ու ցրիվ էին եղել, իսկ ոմանք անշունչ փռված էին պատերազմի դաշտում:

Փախստական մի խմբի ճանապարհին պատահեց մի ուրիշ փոքրիկ խումբ: Փախստականները ուզում էին իրենց կիսաշունչ ձիերի գլուխները ետ դարձնել և փախչելայդ խմբից, որոնց թշնամու տեղ ընդունեցին, երբ մի խրոխտ ձայն կանգնեցրեց նրանց:

— Սպասեցե՛ք, դեպի ո՞ւր եք այդպես խելագարների նման վազում,— կանչեց ձայնը:

Փախստական խումբը մեխվածի նման կանգ առավ և գլխարկները վերցրեց:

— Ի՞նչ է պատահել, — կանչեց խեղդված ձայնով նոր խմբի մեջ գտնվող հոգևորականը, որ Մարտիրոս վանահայրն էր: Նրա աչքերում երևում էին հուսահատությանարցունքներ: Նա ամեն բան հասկացել էր:

— Հա՛յր սուրբ, մենք կորանք:

— Բոլո՞րդ...

— Ամենքս ոչնչացանք: Դավաճանությունը մեզ բոլորիս ոչնչացրեց:

— Իսկ Աշոտ Երկա՞թը..

— Նա էլ փախուստ տվեց: Ա՛խ, եթե Յուսուֆի զունդը չդավաճաներ, նրանք կրկին ոչինչ չէին կարող անել, թեև քնած ժամանակներս հարձակվեցան:

— Իսկ կոտորածը շա՞տ է:

— Խիստ շատ, հա՛յր սուրբ, թիվ ու համար չկա:

— Իսկ Արծրունյաց օրիորդը ի՞նչ եղավ:

— Ես տեսա նրան կռվի խիստ ժամանակ, երբ նա կռվում էր թշնամիների հետ. իսկ այնուհետև թե ի՞նչ եղավ՝ չգիտեմ: Կռիվը այնքան սոսկալի էր, որ մերոնցնրանցից ջոկել անհնար էր: Դա մի կատարյալ դժոխք էր, ուր մորթվում էին հարյուրավոր մարդիկ:

Մարտիրոս վանահայրը լուռ կացավ, նրա դեմքին մի այնպիսի մռայլ պատեց, որ նայողը կսարսափեր: Փախստական խումբը նկատելով, որ հայր սուրբը այլևս ոչինչչի խոսում, գլուխ տվեց Մարտիրոս հորը և կրկին սլացավ առաջ: Մարտիրոս հայրը մի փոքր կանգ առավ, մի խոր հոգոց քաշեց և ապա, դառնալով յուր խմբին, ասաց.

— Տղե՛րք, մենք պիտի գտնենք Արծրունյաց օրիորդին, կենդանի թե մեռած նա մեր ձեռքը պիտի հասնի պետք չէ օրիորդին թողնել թշնամիների ձեռքում կամ նրադիակը՝ գիշակեր թռչուններին: Շտապենք առաջ, պատերազմի դաշտը հեռու չէ մեզանից:

Եվ կտրիճների այդ խումբը սլացավ առաջ դեպի կռվի դաշտը: Շատ ժամանակ չանցավ, և Մարտիրոս հոր առաջ բացվեցավ այդ դաշտը, ուր դեռ փռված էինդիակների կույտեր:

Նրանք իջան ձիերից և նրանցից մի քանիսը զգույշ առաջ անցան:

Սոսկալի և սրտաճմլիկ տեսարան էր ներկայացնում այդ դաշտը, ուր հայը հայի կյանքն էր խավարեցրել:

Դիակներից մի քանիսը փռված էին երեսներով դեպի գետին, դեպի մայր հողը, իսկ մի քանիսը մեջքի վրա պառկած լինելով իրենց անշարժ, բայց սարսափով լցվածհայացքը դարձրել էին դեպի վեր, դեպի կապույտ եթերը, ուր ջինջ երկնակամարի վրա լողում էին թափանցիկ, սպիտակ ամպեր... Ամպերը թռչում հեռանում էին, նրանց տեղ բացվում էր կապույտ եթերը, բայց սառած, ապուշ կտրած հայացքները կրկին նայում էին վեր... Ի՞նչ էին ուզում նրանք վերևից, ինչու՞ նրանք միշտ վերէին նայում, առանց իրենց դեմքի մկանունքները շարժելու, մինչև անգամ այն ժամանակ, երբ հենց իրենց գլխի վրա պտտվում էին ագռավները և ապա, դրանցսառած հայացքի վրա սուր, թափանցող հայացք ձգելով, արձակում էին իրենց ուրախաձայն կռնչյունները և սլանում ցած: Մի րոպե էլ և այդ դիակների լայն բացվածաչքերի տեղ երևում էին խոր, փոս ընկած ակնակապիճները...

Միայն տեղ-տեղ, մացառների և թփերի տակ ընկածների մեջ շարժողություն կար, բայց շատ թույլ և հուսահատական: Նրանցից մի քանիսը ճանկռտում էին հողը, պոկոտում կանաչ խոտերը, մի վերջին ցնցում անում և մնում անշարժ:

Մարտիրոս հոր խմբից մի քանի մարդ փորսող տալով անցնում էին մի դիակից մյուսը, քննում նրանց դեմքերը և ապա, գլուխները շարժելով, առաջ գնում:

Նրանց աշխատանքը ապարդյուն էր անցնում գտնելու Հեղինեի և Աստղիկի դիակները, այնինչ շատ առաջ գնալ չէին կարողանում, քանի որ այնտեղ, ուր առաջ կանգէր առել Աշոտ Երկաթի գունդը, այժմ ծածանվում էր Արծրունյաց Գագիկի դրոշակը: Մի անզգույշ քայլ, և նրանք կնկատվեին, և այն ժամանակ նրանց փրկությունչկար:

— Նրանց դիակները ոչ մի տեղ չկա, իսկ մենք համարյա մոտեցել ենք Գագիկ Արծրունու բանակին, — շշնջաց մի զինվոր մյուսին:

— Չկա, պետք է ետ դառնալ և մտնել ձորը, թե չէ…

— Սս՛…չե՞ս լսում, որ մեկը դեպի մեզ է գալիս, պետք է մեռած ձևանալ, թե չէ էլ վեր չենք կենա:

Նրանք լռեցին և երկուսն էլ դիակների նման տարածվեցին:

Այդ ժամանակ, հիրավի, նրանք նկատեցին մի մարդ, որ դանդաղ քայլերով անցնում էր վիրավորների արանքով և տխուր հայացքով չորս կողմը դիտում: Կարծես նաէլ պտրում էր մեկի: Մարտիրոս հոր զինվորները նայեցին նրա դեմքին և սարսռեցան: Այդ մարդը, որ կանգ առավ հենց իրենց գլխին, ինքը Գագիկ Արծրունին էր:

— Ինչքա՜ն կոտորած, — շշնջաց նա, — ամեն կողմը դիաթավալ ընկած են զոհերը, իսկ նա չկա ու չկա: Հայը հային կոտորեց, հայը հայ ընտանիքի կորստյանպատճառ եղավ, ինչո՞ւ համար՝ փառքի, այն փառքի, որի ետևից ամենքս ենք վազում: Բայց ես արդեն, այս իսկ վայրկյանից, զզվեցի այդ փառքից, էլ չեմ ուզում եսգահ, տվեք միայն իմ դստերը՝ Հեղինեին... Ատե՛լի Աշոտ, դարձրու աղջկաս, դարձրու, թե չէ երկնքին վկա եմ կանչում, որ աշխարհիս թույնը քեզ վրա կթափեմ: Այսկռվում հաղթվեցիր դո՛ւ, բայց կրկին տարար իմ սիրտը, իմ հոգին...

Գագիկ Արծրունին լռեց, յուր պղտոր հայացքը շուրջը դարձրեց և ապա դանդաղ կրկին ետ դարձավ:

Գագիկ Արծրունու հեռանալուց հետո զինվորները ազատ շունչ քաշեցին:

— Պետք է ետ դառնալ, լավ էր, որ մեզ չնկատեց. թշվառականը չի իմանում, որ մենք էլ իր աղջկան ենք փնտրում:

— Լավ բան իմացանք, դրա խոսքերից երևում է, որ նա գիտի բռնված: Ուրեմն Հեղինեն և Աստղիկը կամ սպանված պիտի լինեն, կամ փախուստ տված: Եթեսպանված են, դիակները պիտի գտնենք, իսկ եթե չէ՝ հո ավելի լավ, վաղ թե ուշ նրանք կերևան:

— Գնանք դեպի ցած, այնտեղ էլ տեսնենք և ապա վերադառնանք մեր խմբի մոտ:

— Ճիշտ է, ցած պիտի գնալ, ես նկատում եմ, որ բանակի մոտերքը արդեն դիակները հավաքում են, չե՞ս տեսնում ինչ ահագին կույտեր են կազմել, — ասաց մեկը՝ բարձրացնելով գլուխը:

— Ճիշտ որ, նրանք շուտով մեզ էլ կհասնեն:

Նրանք շտապ թեքվեցան մի կողմ և հանկարծ կանգ առան:

— Գտանք, — կանչեցին երկուսը միասին և վրա վազեցին դեպի մի դիակ, որի կրծքից դուրս բխած արյունը լճացել էր շուրջը և թանձրացել:

Նրանք բարձրացրին դիակի գլուխը, և խորին կսկիծը անցավ երկու զինվորների սրտով:

— Սա Աստղիկի դիակն է, — ասաց մեկը:

— Խե՛ղճ, ինչքա՛ն սիրուն է, դեմքի քնքուշ գծագրությունը մեռած ժամանակ էլ է պահել:

— Բարձրացրու դիակը, պետք է տանել սրան, Մարտիրոս հոր հրամանը այդպես է: Այստեղ կարելի է ծունկ չոքած գնալ, մեզ չեն նկատի, վնաս չկա, թող մի փոքր մերծնկները քարերին քսվեն:

Նրանք առաջ անցան տանելով իրենց բեռը, երբ նրանց առաջը մի փոս բացվեցավ, իսկ փոսի մոտ՝ ձիու անշունչ դիակ:

— Սպասի՛ր, ցած դիր, այս ձին ես ճանաչում եմ, Հեղինեի ձին է, — ասաց մեկը և իսկույն ցած թռավ վիհի մեջ, բայց այնտեղ, բացի ձիու դիակից, ոչինչ չնկատեց:

— Է՛հ... կամ Հեղինեի դիակը տարել են, կամ նա այստեղ մոտերքումն է, ինչպես երևում է, հենց այստեղ էլ ընկել է:

— Ահա արյան հետքեր խոտերի վրա, պետք է հետևել արյանը, գուցե գտնվի:

Նրանք թողեցին Աստղիկի դիակը և մի քանի քայլ առաջ գնացին, երբ մի ահագին քարի տակ երևացավ Հեղինեի դժգույն, մեռելային դեմքը: Նրա սաղավարտը ընկածէր մի կողմ, իսկ ալիքանման մազերը թաթախվել էին արյան մեջ:

— Աստվա՛ծ իմ, կենդանի է, — ասաց զինվորներից մեկը և ձեռքը դրեց նրա սրտին: Սիրտը բաբախում էր թույլ, աննշան: Կյանքի վերջին թելն էր մնացել նրա մեջ:

Հեռու չէր Մարտիրոս հայրը և մնացած խումբը: Շուտով Հեղինեի կիսաշունչ մարմինը և Աստղիկի դիակը տեղափոխեցին այնտեղ, ուր Մարտիրոս հայրը կարճ աղոթքմրմնջաց: Հեղինեի վերքը յուր ձեռքով կապեց, և ապա, պատգարակ շինելով, Հեղինեին վրան դրին և Աստղիկի դիակն էլ հետները վերցնելով ետ քաշվեցանդիակների դաշտից:

Երբ հասան մոտակա վանքը, Աստղիկի մարմինը հողին հանձնեցին, ուր սգալից թաղման կարգը Մարտիրոս հայրը կատարեց, իսկ զինյալ խումբը իրենց նիզակներըցած իջեցրին ի պատիվ Աստղիկի: Երբ նրա մարմինը կլանեց սև հողը, մի

քար դրին նրա գերեզմանի վրա, իսկ իրենք շուտով հեռացան՝ տանելով իրենց հետ կիսամեռՀեղինեին…

ԺԶ

Աշոտ Երկաթը, մի փոքրիկ խմբով ետ քաշվելով պատերազմի դաշտից, կանգ էր առել մի լեռան լանջին, որպեսզի մի փոքր դադար տա հոգնած ձիերին և ապա կրկինճանապարհը շարունակի: Ձիերը արածում էին կանաչ, սիզավետ խոտերի մեջ, իսկ ինքը թիկն տված մի հաղթանդամ կաղնու բնին, լուռ նայում էր յուր առաջ վառվողխարույկին, որի թույլ ճառագայթները լուսավորում էին նրա դժգույն, մեռելային դեմքը:

Մոտ քսան թիկնապահ զինվորներ էլ մի փոքր հեռու նույնպես կրակ էին վառել և շտապով մի գառն էին խորովում և իրենց թագավորի համար ընթրիքպատրաստում: Բայց Աշոտ Երկաթը չէր էլ տեսնում, թե ի՞նչ է կատարվում շուրջը և թէ ու՞ր է գտնվում ինքը. նա յուր պղտոր հայացքը դարձրել էր դեպի այն կողմը, ուր տարածվում էր Դվին քաղաքը և ուր ընկան յուր գնդերը: Այնտեղ՝ հեռու, խորին մթության մեջ, երևում էին կրակե թույլ ցոլմունքներ, որոնք հայոց թագավորիսրտում թողնում էին խորին, անբուժելի կսկիծներ: Դեռ մի քանի ժամ առաջ ինքն էր այդ խարույկների մոտ հաղթական կերպով նստած և յուր անպարտելի դրոշակնէր ծածանվում, իսկ այժմ ովքե՞ր էին այնտեղ կրակ վառել և ո՞ւմ դրոշակն էր ծածանվում — յուր թշնամիներինը, դավաճան հայ գնդերինը, որոնց վրա մտածելիսսարսռում էր Աշոտ Երկաթը և բարկության ալիքները անցնում էին նրա դեմքի վրայով: Օ՛… ի՛նչ ամոթալի դրություն, խայտառակ վիճակ: Եվ քանի միտն էր բերումյուրայնոց կոտորածը, այնքան նրա սիրտը ճնշվում էր և խորին կսկծից արտասուքները պատրաստ էին դուրս ժայթքելու աչքերից:

Ու նա երկար ժամանակ անթարթ, ապուշ կտրած աչքերով նայում էր դեպի Դվին և ավելի ու ավելի հուզվում: Կամաց-կամաց մոռանում էր յուր ներկա դրությունը ևմի տեսակ անհասկանալի դրության մեջ ընկնում հին-հին, անցած գնացած մտքերը նորից պաշարում էին նրան և հոգնեցնում նրա՝ առանց այն էլ հոգնած ուղեղը, ևնա ընկնում էր մտքերի այն տեսակ քաոսի մեջ, որոնք ոչ մի բանի վրա կանգ չէին առնում, բայց մի տեսակ շվարման մեջ էին ձգում իրեն:

Նրա մտքով անցավ նաև հայրը. հիշեց յուր մանկությունը, հիշեց հոր՝ Սմբատ արքայի խանդաղատանքը և ուզեցավ փղձկալ, լալ երեխայի նման, որպեսզի ամոքիյուր վշտերը, թեթևանա կսկիծը, բայց այդ իսկ րոպեին մտաբերեց հոր նահատակությունը, երկնքից իջնող լույսը և նրա աղերսող ու դալկացած աչքերը:

— Հա՛յր, օգնիր որդուդ, դուրս բեր ինձ այս անելանելի դրությունից և խորհուրդ տուր ինձ,— մրմնջաց Աշոտ Երկաթը և թախիծով լի աչքերը դարձրեց դեպի երկինք, որտեղից իջել էր լույսը և հոր ստվերը:

Զարմանալի բան... գորշ, մթին ամպերի մեջ, այդ իսկ րոպեին, երևաց մի թույլ լուսավորություն, որը ցնցեց Աշոտ Երկաթի ուղեղը, և նրա սիրտը սկսեց արագ-արագտրոփել, կարծես թե նա ուզում էր դուրս թռչել այն նեղ կապանքներից, ուր նա չէր կարողանում ազատ ու հանգիստ տրոփել...

Աշոտ Երկաթը խելագարի նման ամպի այդ թույլ լույսին էր նայում և սպասում նրան՝ յուր հորը: Նա կարոտ էր Սմբատ արքայի խրախուսանքին, և նա սպասեցնել չէրտալիս: Աշոտ Երկաթը տեսնում էր, թե ինչպես այդ թույլ լույսը կամաց-կամաց իջնում էր ցած, թե ինչպես ամպերը քսվում էին մոտակա բլրի գագաթին և այնտեղառաջացնում մի անորոշ բոց: Անթարթ, անշարժ աչքերով Աշոտ Երկաթը նայում էր այդ բոցին, որ հետզհետե մոտենում էր իրեն և մարդկային կերպարանքի ձևստանում...

Անցան մի քանի տանջալից րոպեներ, և Աշոտ Երկաթը տեսավ հորը յուր առաջ կանգնած, որը թախիծով լի աչքերը դարձրել էր դեպի իրեն: Նա զենք ու զրահի մեջ էրկորած, ճիշտ այնպես, ինչպես երևեցավ Դվինում. նույն անշարժ, աղերսող հայացքը, ինչպես առաջ...

— Հա՛յր, գթա ինձ... — կանչեց Աշոտ Երկաթը և ձեռքերը տարածելով դեպի արքան, հեկեկաց երեխայի նման:

— Քաջացի՛ր, որդյակ, թող հեռու փախչի քեզանից հուսահատությունը: Կյանքը փորձանքների ու տանջանքների մի բով է, որի միջով անցնում է մարդկությունը:Առանց փորձանքի, առանց անհաջողությունների չկա կյանք և այդ փորձանքների ու տանջանքների վրա պիտի մարդս կանգնեցնի յուր անդորրությունը: Մի՛երկնչիր, այն, ինչ որ ասելու եմ քեզ, թող չկոտրե քո երկաթե կամքը: Դու հալածեցիր արաբներին, դու առար նրանցից իմ վրեժը և ես հանգիստ եմ. բայց ցավում էսիրտս, որ Հայաստանը քարուքանդ է լինում նույնիսկ հայերի ձեռքով, որոնք նախանձից և փառասիրությունից կուրացած՝ չեն տեսնում իրենց լավը և աշխատելովքեզ ոչնչացնել, իրենց կորստյան ճանապարհն են հարթում... Ա՜խ, Աշոտ, զգուշացիր, ավելի վատթար փորձանքը մոտենում է քեզ: Քո կյանքի դեմ որոգայթներ ենլարում և հարազատներդ պատրաստվում են շաղախել իրենց ձեռքերը քո արյան մեջ...

— Օ՜հ, սոսկալի ոճրագործություն, — մռնչաց Աշոտ Երկաթը, — ասա, հա՛յր իմ, մի՞թե ես արժանի եմ դրան, մի՞թե ես վատ եմ և անարգ, որ հարազատներս էլ իմ դեմեն զինվում:

— Ո՛չ, լսի՛ր ինձ: Քո ցանկությունը բարի է, հայր ես դու ժողովրդյան, բայց նենգավոր լեզուները թույն են պատրաստում քեզ համար: Զգուշացիր ամեն բանից, փոթորիկը մոտենում է քեզ... — ասաց Սմբատ արքան և երեսը շուռ տվեց, որ որդին չտեսնի յուր արտասուքները. ապա նա դանդաղ քայլերով սկսեց հեռանալ:

— Բայց, հա՛յր, սպասիր մի փոքր էլ, — կանչեց Աշոտը և հուսահատությունից սկսեց մատները կոտրատել:

— Ես ասացի ամեն բան, — կրկնեց ստվերը և հանկարծ հանգավ, չքացավ նա՝ թողնելով Աշոտ Երկաթին հուսահատ և բեկված սրտով:

Այդ միջոցին արևելյան հորիզոնը շառագունել էր, և լույսը կամաց-կամաց բացվում էր: Աշոտ Երկաթը վեր կացավ տեղից, նրա մարմինը կարծես ջարդված լիներ, իսկգլխին կարծես մի ծանրություն լիներ դրած: Նա թոթափեց իրենից թմրությունը և նշան տվեց թիկնապահներին, որոնք մի ակնթարթում ձի նստեցին և սլացան առաջ:

Այդ դեպքից մի ամիս հետո Աշոտ Երկաթը նույն տեղով գնում էր դեպի Դվին՝ մի ահավոր գնդի գլուխ անցած, որպեսզի տակնուվրա անի Դվինը, բայց քաղաքի առաջզիջանելով Հովհաննես կաթողիկոսի թախանձանքներին, թողեց Աշոտ սպարապետին և յուր զորքերով քաշվեց դեպի Ուտիք, ուր ապստամբել էր ուտիացվոց վրակարգված Մովսեսը:

Ուտիքում Աշոտ Երկաթը մեծ ջարդ տվեց ապստամբ Մովսեսին, ուր սպանվեց նաև Մովսեսը և ապա նրա տեղ կարգելով Ամրամ անունով մի ուժեղ մարդու, որ յուրուժեղության համար Ցլիկ էր կոչվում, շտապեց վերադառնալ Շիրակ:

ԺԷ

Չարաբաստիկ կոտորածից անցել էր մի քանի ամիս: Գևորգ Մարզպետունի իշխանը փոքրաթիվ թիկնապահներով դեպի Երազգավորս էր շտապում:

Գիշեր էր: Լիալուսինը յուր խորհրդավոր աղոտ լուսավորությունը տարածել էր շուրջը և մի տեսակ ինքնամոռացության մեջ ձգել իշխանին: Նա գնում էր

անհոգ, առանց երկյուղ կրելու թշնամիներից: Այդ գիշեր Գևորգ իշխանը շատ տխուր էր, և զանազան մտքեր ալեկոծում էին նրա հոգին:

— Է՛հ, ինչ որ լինի, ես պիտի բանամ սիրտս նրա առաջ և ամեն բան խոստովանեմ: Համբերել այլևս անկարելի է, սրտիս բոցը քանի գնում սաստկանում է և գիշեր-ցերեկ այլևս հանգստություն չունեմ: Հեղինե՛, գոռոզ Գագիկի դուստր, քո մի խոսքից է կախված իմ կյանքը, նա այլևս պետք չէ ինձ, հրամայիր կրակը նետվել և ԳևորգՄարզպետունյաց իշխանը առանց վարանման կկատարե այդ, միայն թե իմանա, որ դու քաղցր աչքով ես նայում նրան, — ասաց Գևորգ իշխանը ինքն իրեն նհանկարծ մտրակեց ձիուն ու սլացավ առաջ:

Կարծես մի ինչ-որ աներևույթ ուժ առաջ մղեց նրան, բայց իսկույն դանդաղեցրեց ձիու ընթացքը:

— Իսկ Արծրունի Գագիկը մի՞թե կհամաձայնի ինձ նման թափառականի յուր աղջկա ձեռքը տալու:

Նա թագավոր է Վասպուրականի, իսկ ես ի՞նչ եմ... մի աննշան իշխան, որը, աստանդական կյանք վարելով, ուզում է իրեն զոհել օրինական թագավորի համար:Գագիկ Արծրունին փառքի, շքեղության մեջ է և կրկին վազում է դրա ետևից, իսկ ինձ համար չկա փառք, չկա անդորրություն, և իմ թշվառ կյանքը պիտի վերջանակռվի դաշտում, իսկ իմ մարմինը պիտի լափեն գիշակեր թռչունները… Խելացնոր եմ ես, որ ձգտում եմ այդ բանին: Իսկ եթե Հեղինեն սիրո՞ւմ է ինձ... Մի՞թե սրտերըհարցնում են բարձր և ցածր աստիճան: Մի՞թե սիրո համար էլ կա խտրություն... Եվ, վերջապես, մի՞թե Գագիկ Արծրունին կարող է արգելք լինել, քանի որ Հեղինենատում է հորը՝ նրա վատ և անարգ արարքների համար... Օ՛... եթե Հեղինեն սիրում է ինձ, այն ժամանակ ոչ մի արգելք չի կարող մեզ միմյանցից բաժանել, եթեանգամ անտակ վիհեր բացվեն մեր առաջ: Նրա սերն է ինձ պետք, նրա մի բառն է ինձ համար թանկագին, քան աշխարհիս փառքն ու գանձերը...

Նրանք արդեն մտնում էին Երազգավորս քաղաքը, բայց Գևորգ իշխանը դեռ այդ չէր զգում:

— Տե՛ր, ո՞ւր կհրամայես իջնել, մենք արդեն մտանք Երազգավորս, — ասաց թիկնապահներից մեկը՝ մոտենալով Գևորգին:

— Ճիշտ որ, բայց շուտ հասանք, ուղղակի իջևանատանը պիտի իջնենք: Ես այս գիշեր ձեզ մոտ կանցկացնեմ և վաղը գործերս վերջանալուն պես կամ դեպի կորուստկերթանք, կամ դեպի փրկություն, — պատասխանեց Գևորգ իշխանը:

Թիկնապահը նրա վերջին միտքը չհասկացավ, բայց չհամարձակվեց հարցնել, միայն շատ զարմացավ, որ Գևորգ իշխանը, ըստ սովորականի, դեպի պալատ չէրշտապում, քանի որ պալատի դռները գիշեր-ցերեկ բաց էին յուր տիրոջ համար:

Նրանք մտան իջևանատուն, և շտապով խոր քունը պատեց թիկնապահներին, այնինչ Գևորգ իշխանը քնել չկարողացավ:

Երբ բացվեց առավոտվա կենարար լույսը, նա սրտատրոփ դեպի պալատ դիմեց, ուր ապրում էր Հեղինեն:

Հեղինեն, որին Մարտիրոս հայրը ազատել էր կռվի դաշտից, այժմ բոլորովին առողջ էր:

Վաղորդյան արևի ճառագայթների տակ, նստած պալատի պարտեզի կանաչ խոտի վրա, նա ձեռքին մի գիրք ուներ, որ ագահությամբ կարդում էր, երբ ներս մտավԳևորգ իշխանը և առանց նրա ընթերցմունքը խանգարելու կանգ առավ նրանից մի փոքր հեռու: Ի՞նչ հիանալի դիրք էր տվել օրիորդը իրեն: Նրա սևորակ, հրաշալիաչքերը հառած էին գրքի տողերին և այնտեղից ագահաբար քաղում էին մտքերը և յուր հոգվո մեջ սերմանում վեհ և աստվածային խոսքեր: Այդ երևում էր նրա դեմքիյուրաքանչյուր արտահայտությունից, ուր այնպես պարզ արտացոլվում էր հոգվո յուրաքանչյուր ելևէջը: Նրա մազերը խառնիխուռն թափթփվել էին ուսերին, և նանմանվում էր դյութական մի հավերժահարսի, որը կարող էր շարժել ամենաքարասիրտ մարդուն անգամ: Նա սուրբ գիրք էր կարդում և կուսական սիրտը զարդարումէր սրբազան իմաստներով: Այդ րոպեին գոյություն չուներ նրա համար մարդկությունը յուր ստոր արարքներով, այլ նա ամբողջովին ամփոփված էր աստվածայինբարձր և վսեմ գաղափարներով... Նայում էր Գևորգ իշխանը նրան, նայում և չէր կշտանում նրա աննման դեմքը դիտելով: Նա կարդում էր Հեղինեի հոգին նրա դեմքինուրբ գծագրության վրա և ինքն էլ ընկնում էր մի տեսակ հափշտակության մեջ, որ տանում էր իրեն դեպի ինքնամոռացություն:

— Օ՜հ, աննման հրեշտակ, անարատ հոգի, անբիծ էակ, — մրմնջում էր Գևորգ իշխանը և լուռ դիտում նրան:

Հանկարծ օրիորդը դադարեցրեց ընթերցումը և խոր, խոհուն աչքերով նայեց Գևորգ իշխանին:

Գևորգ իշխանը սարսռեց:

Մի քանի վայրկյան լուռ կացավ Հեղինեն, կարծես դեռ մտածում էր սրբազան խոսքերի վրա, ապա, դիմելով Գևորգ իշխանին, ձեռքը մեկնեց նրան և ասաց.

— Ա՛... Գևո՛րգ իշխան, բարի ես եկել:

Գևորգ իշխանը ծունկ չոքեց և համբուրեց նրա ձեռքը:

— Ի՞նչ լուր ունիս հայր Մարտիրոսից, — հարցրեց Հեղինեն և մի այնպիսի հայացք ձգեց Գևորգ իշխանի վրա, որ քիչ մնաց նա վայր ընկներ:

— Հայր Մարտիրոսը ողջ է և աղոթում է քեզ համար, — ասաց Գևորգ իշխանը:

— Ապրի նա, — ասաց Հեղինեն և, գիրքը ծալելով, ոտքի կանգնեց:

— Դու շտապո՞ւմ ես, օրիո՛րդ, բայց ես քեզ բան ունեի հայտնելու, — ասաց Գևորգ իշխանը և մի տեսակ շառագունումն անցավ նրա դեմքով:

— Ի՞նչ բան, հայտնիր, ես պատրաստ եմ ամեն բան լսելու, թե լավ, թե վատ: Այժմ իմ սիրտը ամեն բանի կդիմանա, նա արդեն սովորեց ամեն վիշտ տանել:

— Եթե թույլ կտաս միայն, որովհետև…

— Հայտնիր, բայց ինչո՞ւ ես դողում, ի՞նչ սոսկալի լուր ունիս հաղորդելու ինձ, որ շրթունքներդ չեն զորում ասելու:

— Չէ՛, օրիորդ, սոսկալի ոչինչ չկա, այն ինչ որ ուզում եմ հայտնել քեզ, իմ թշվառ կյանքին է վերաբերում:

— Թշվա՞ռ.., չե՛մ կարծում: Քո կյանքն ամենաերջանիկ կյանքն է, քանի որ ծառայում ես ազգին:

Վերջին խոսքերը սիրտ տվին Գևորգ իշխանին և առանց տատանվելու չոքեց օրիորդի առաջ ու ասաց.

— Օրիո՛րդ, թշվառ է այդ կյանքը, քանի որ լափվում է բոցերով: Այդ կյանքը առանց քեզ ոչինչ չարժե: Ես սիրում եմ քեզ...

Հեղինեն լուռ կացավ, բայց նրա կրծքի արագ բաբախելը ցույց էր տալիս, թե ինչ փոթորիկ բարձրացրին այնտեղ Գևորգ իշխանի խոսքերը:

— Դու լուռ ես. արհամարհում ե՞ս ինձ, այնպես չէ՞...

Շառագունումն անցնում էր Հեղինեի դեմքով և նրա աչքերը մի այնպիսի փայլ էին ստանում, որ նայողին հալեցնում էին: Բայց նա շուտով զսպեց վրդովմունքը, հոգումեջ խեղդեց արտավիժող զգացմունքը և բռնելով իշխանի ձեռքը՝ բարձրացրեց նրան:

— Վեր կաց, իշխա՛ն, դու չպետք է չոքես այն օրիորդի առաջ, որին կորստյան ճանապարհից ես փրկել:

— Բայց ասա, օրիո՛րդ, մի խոսք միայն, սիրո՞ւմ ես ինձ, թե արհամարհում և հանդուգն քայլ համարում իմ այս առաջարկությունը:

— Մի՛ վրդովվիր, իշխա՛ն, և լավ լսիր, թե ինչ եմ ասում: Դու արդյոք լավ հասկանո՞ւմ ես, թե ինչ ես առաջարկում ինձ: Կշռե՞լ ես քո ասածներդ, թե սիրո բորբոքմանտակ հայտնում ես քո սերը:

— Օրիո՛րդ, անքուն գիշերներ եմ անցրել և տեսել, որ առանց քո սիրո մի րոպե անգամ չպիտի ապրեմ աշխարհում:

— Իսկ ես այդպես չեմ մտածում: Քո կյանքը շատ է պետք մեզ: Այս ժամանակներում, երբ մենք ապրում ենք, քեզ նմանների կյանքը շատ թանկագին է: Սերը պիտի լռեայնտեղ, ուր սիրուց վսեմ գործեր կան կատարելու: Ի՞նչ նշանակություն ունի անհատական սերը հայրենիքի սիրո առաջ: Ինչո՞ւ չզոհել անհատական սերը վսեմգործերին, որին նվիրված ես:

— Բայց անհնարին է կռվել սիրո հետ:

— Եվ հենց դա է վսեմը, երբ հաղթում ես ամեն մի արգելք և հայրենիքի սիրուն զոհում: Մի՞թե ես էլ չէի կարող սիրել և սիրվել, բայց զոհեցի և զոհում եմ այդ, լսո՞ւմ ես, զոհում եմ, որովհետև սրտերի սիրուց ավելի բարձր սեր կա և այդ սերը հայրենիքին ծառայելն է: Գնա, իշխա՛ն, կրակը մտիր, կրկին ծառայիր հայրենիքիդ և այնժամանակ...

— Եվ այն ժամանակ ի՞նչ...

— Եվ այն ժամանակ, երբ հայրենիքդ խաղաղ կլինի, հանգստացիր քո սիրո անուշ գրկում:

— Բայց մի՞թե ես չեմ ծառայում հայրենիքիս:

— Այդ չեմ ասում: Դու արժանի ես ամեն գովասանքի, բայց թե ի՞նչ դրության մեջ է այժմ Հայաստանը: Դու ինքդ լավ գիտես, որ ներքին և արտաքին թշնամիներիցերկիրը ալեկոծ ծովի է նման: Խաղաղեցրու նրանց, և այն ժամանակ ես պատրաստ եմ քո հաղթական ճակատը համբուրելու:

— Լավ, ես պատրաստ եմ կրկին կրակի ու բոցերի մեջ մտնելու, միայն թե դու, Հեղինե՛, ինձ սիրես:

— Ես սիրում եմ քեզ հենց այս րոպեիս, իշխա՛ն, քեզ համար է միայն բաբախում սիրտս, բայց երդվում եմ ամենասուրբ կույսով, որ ես քո կինը չեմ դառնա, մինչևՀայաստանի մեջ խաղաղություն չտիրի: Կրկնում եմ, գնա դեպի կրակը և քո օրինակով ամաչեցրու Գագիկ Արծրունուն, այնուհետև իմ բազուկները պատրաստ ենքեզ, իմ սիրելույս գրկելու:

Գևորգ իշխանը հափշտակված Հեղինեի խոսքերից, էլ չհամբերեց, առավ Հեղինեին յուր բազուկների մեջ, և նրանց շրթունքները հպվեցան իրար:

— Ես մեղավոր եմ քո առաջ, օրիո՛րդ, բայց հույս ունեմ արդարացնելու քո խոսքերը: Եթե աստված իմ կյանքը բաշխեց, դու ինձանից բացի ոչ ոքի չես պատկանի, այժմ մնաս բարև, էլ երկար ժամանակ չենք տեսնվի, — ասաց Գևորգ իշխանը և, մի վերջին համբույր տալով, շտապ քայլերով հեռացավ:

Հեղինեն երկար ժամանակ նայեց նրա ետևից, մի խոր հոգոց քաշեց և ինքն իրեն մրմնջաց.

— Աստված տա, որ այդպես լինի:

Այդ ժամանակ արտասուքի առատ շիթեր դարս վիժեցին նրա աչքերից, և նա բռնեց սիրտը, կարծես այնտեղ բռնկեց մի այնպիսի բոց, որը կրակ տվեց նրան...

ԺԸ

Գևորգ իշխանը, բաժանվելով Հեղինեից, թեթևացած սրտով դառնում էր դեպի յուր թիկնապահները: Նրա սրտից կարծես ընկել էր մի ծանր բեռ, և Հեղինեին ավելիարժանի լինելու համար պատրաստվում էր յուր կյանքն անգամ զոհելու

հայրենիքի և թագավորի սիրույն: Բախտը կարծես մղում էր նրան շուտով այդ բանը ցույցտալու: Զանազան գործերի պատճառով Գևորգ իշխանը այդ օրը չկարողացավ դուրս գալ Երազգավորսից, ուստի հետաձգեց մինչև վաղը առավոտ:

Տաղտկալից օրը շուտով փոխվեցավ մութ գիշերի: Անամպ երկնակամարի վրա դեռ չէր երևացել լուսինը, մի քանի ժամից հետո նա պիտի սփռեր յուր աղոտլուսավորությունը:

Գևորգ իշխանի թիկնապահները, կանխապես գիտենալով, որ այդ գիշեր ոչ մի տեղ չեն գնալու, արդեն հանգիստ քուն էին մտել: Բայց Գևորգ իշխանը չէրկարողանում քնել, նա դուրս եկավ սենյակից և սկսեց աննպատակ շրջել Երազգավորսի փողոցներում: Յուր մտքի հետ ընկած, աննկատելի կերպով մոտեցավ ԱշոտԵրկաթի պալատին, որ նոր էր վերադարձել Ուտիքից: Երկու պահապան միայն հսկում էին պալատի դուռը, որոնք իրար հետ ցած ձայնով խոսում էին:

Գևորգ իշխանը ուշադրություն չէր դարձնի պահապանների խոսակցությանը, եթե նրանք հանկարծ չլռեին և սանդուղքների վրա չերևային երկու անձնավորություն, որոնք լուռ իջնում էին: Նրանց ճանապարհը լուսավորում էր մի ծառա՝ վառած ահագին ջահը ձեռքին: Գևորգ իշխանը ճանաչեց նրանց. ուստի մտավ պատի տակ, որպեսզի աննկատելի լինի: Նրանցից մեկը Աշոտ Երկաթի եղբայրն էր՝ Աբասը, իսկ մյուսը նրա աները՝ Ափխազաց Գուրգենը, որոնք Աշոտ Երկաթի հետ միասինԵրազգավորս գալով, այս երեկո վերջին հրաժեշտն էին տվել թագավորին և վաղը, իբր թե, պիտի դառնային իրենց երկիրը:

Նրանք շուտով անցան: Եվ Գևորգ իշխանը հենց ուզում էր թաքստից դուրս գալ, երբ չորս թե հինգ կասկածավոր մարդիկ նկատեց, որոնք կանգ առնելով իրենից միփոքր հեռու, սկսեցին իրար հետ խոսել խիստ զգուշավոր շշնջյունով: Մթության մեջ Գևորգ իշխանը նրանց դեմքերը լավ չկարողացավ դիտել, բայց նայելով շորերիննրանք խիստ կասկածավոր թվացին: Դրանք ո՛չ խաղաղ շինականներ էին երևում և ո՛չ գիշերապահ զինվորներ: Կասկածը մտավ իշխանի սիրտը, և նա առանց դուրսգալու թաքստի տեղից, ուզեց իմանալ բանի էությունը:

— Այստեղ մի բան կա, — մտածեց նա և ձեռքը դեպի սրի երախակալը տարավ:

Զգուշությամբ մի քանի քայլ առաջ գնաց, որպեսզի պարզ լսի այդ կասկածավոր խմբի խոսակցությունը, երբ մի ուրիշ խումբ էլ նկատեց, որ նույնպես կանգ առավպալատի մյուս պատի տակ և թաքնվեցավ մութ տեղում:

— Է՛ ... ինչպես երևում է, պալատը պաշարվում է սրիկաներով, մի սոսկալի եղեռնագործություն է պատրաստվում այստեղ, բայց թե ո՞ւմ դեմ, այդ պիտի իմանալ նազատել դրան, — մտածեց իշխանը, բայց սարսուռ զգաց, երբ լսեց այդ սրիկաների խոսակցությունը:

— Քոսակը չի երևում, — ասում էր մեկը մյուսներին:

— Մենք շատ վաղ եկանք, տեսնո՞ւմ ես, պահապանները դեռ արթուն են. այնպես պիտի Աշոտ Երկաթին սպանենք, որ ոչ մի աղմուկ չլինի և չիմանան էլ, թե ո՞վ ևինչպե՞ս սպանվեցավ:

— Դավաճանությո՛ւն... — ուզում էր մռնչալ Գևորգ իշխանը, բայց զսպեց իրեն, երբ լսեց, որ շարունակում են խոսակցությունը:

— Քանի՞ հոգով ենք սկսելու, — շարունակեց նույն ձայնը:

— Բոլորս քսան հոգի ենք վարձված, բայց դժվար գործը մենք պիտի կատարենք: Մի մասը դուրսը պիտի հսկի, մի երկուսը պահապաններին պիտի քնեցնեն, իսկ մենքՔոսակի հետ միասին պիտի ներս մտնենք և Աշոտ Երկաթին դեպի մյուս աշխարհը բարի ճանապարհ մաղթենք:

— Լա՛վ, բայց, ի՞նչ օգուտ ունին Աբաս և Գուրգեն իշխանները, որ Աշոտ Երկաթին սպանել են տալիս:

— Եղբայր եղբոր դեմ... Օ՛հ, աստված իմ, դու փրկես թագավորին այդ տարապարտ մահվանից, — մրմնջաց Գևորգը, և նրա աչքերում մի այնպիսի կատաղության բոցերևաց, որ քիչ մնաց ցնցեր յուր ուղեղը:

— Ի՞նչ մեր գիտենալու բանն է. մերն այն է, որ մեզ լավ վարձատրեն: Ահա մի ամբողջ շաբաթ է քարշ ենք գալիս այդ բանի ետևից, բայց չենք կարողանում գլուխբերել, մեզ այդ չհաջողվեց կատարել Որմանի գյուղում, ուր Աշոտ Երկաթը միամտաբար այնպիսի պատիվներ տվեց Աբասին և Գուրգենին, բայց հույս ունիմ այստեղկհաջողվի:

— Ասում են՝ Գագիկ Արծրունու սարքած բաներն են:

— Ես էլ եմ լսել: Մեր իշխաններն իրար միս են ուտում և միմյանց դեմ որոգայթներ լարում, տեսնենք վերջը ուր է հասնելու:

— Իսկ Հեղինեին ի՞նչ պիտի անենք, մի՞թե նրան էլ պիտի սպանենք:

— Չէ, հիմա՛ր, այդ հրամայված չէ, որքան հնարավոր է քիչ արյուն պիտի թափենք: Մեր գործը պիտի լինի Աշոտ Երկաթին սպանել, իսկ Հեղինեին ողջ նրանց ձեռքըհասցնել. այնուհետև մեր գործը ավարտված է, և մենք մեզ խոստացած ոսկիների տերն ենք:

— Իսկ եթե չհաջողվի՞...

— Հիմա՛ր... Ինչու՞ չի հաջողվի: Քաղաքումս թագավորը բացի յուր փոքրաթիվ թիկնապահներից ուրիշ զորք չունի, այնինչ Աբասն ու Գուրգենը ահագինթիկնապահներ ունին, որոնք մեզ օգնության կգան, հենց որ մեր գործը անհաջող գնա:

Նրանք լռեցին: Գևորգ իշխանը մի քանի վայրկյան սառած մնաց: Նա ամեն բան լսեց: Աշոտ Երկաթի կորուստը անխուսափելի էր, եթե նրան շուտով իմաց չտրվեր ննա փախուստ չտար քաղաքից: Աբասն ու Գուրգենը իրենց թիկնապահներով կարող էին հուր ու մոխիր դարձնել ամբողջ քաղաքը: Պետք էր շտապել, առանց միվայրկյան անգամ կորցնելու թագավորին իմաց տալ, թե չէ Աշոտ Երկաթը կկորչեր: Բայց ինչպե՞ս գնալ, ինչպե՞ս դուրս գալ թաքստից, որ աննկատելի լիներ, ահաայդ էր մտածում Գևորգ իշխանը, երբ սրիկաներից մեկն ասաց.

— Գնանք, դեռ վաղ է մինչև նշան տալը:

— Գնանք, մի փոքր էլ կոկորդներս գինով թրջենք, — պատասխանեց մյուսը, և նրանք շուտով հեռացան:

Գևորգ իշխանը ազատ շունչ քաշեց, աննկատելի կերպով իրեն դեպի պալատի պարտեզը ձգեց, այնտեղից շուտով մտավ պալատ և ներկայացավ Աշոտ Երկաթին:

Աշոտ Երկաթը զարմանքով նայեց Գևորգ իշխանի գունատ դեմքին:

— Թագավո՛ր, փախիր շուտով, քո կյանքի դեմ սոսկալի դավադրություն կա:

Աշոտ Երկաթը վեր թռավ տեղից և շփոթված նրա դեմքը դիտեց, որ տեսնի, թե նա ճի՞շտ է ասում, թե խելագարվել է:

— Բայց քո դեմքին գույն չկա, իշխա՛ն, հանգստացիր և այնպես պատմիր գործի դրությունը:

— Թագավո՛ր, հանգստանալու ժամանակ չէ, շուտով հեռացեք և թողեք ինձ այստեղ իմ փոքրաթիվ մարդկանցով պահպանել պալատը, մինչև

կհեռանաք:Շտապեցեք, ապա թե ոչ, մի քանի րոպեից հետո ուշ կլինի,— ասաց Գևորգ իշխանը և մանրամասն պատմեց յուր անակնկալ հանդիպումը սրիկաներին և նրանցխոսակցությունը: Աշոտ Երկաթը գլուխը շարժեց և խորին ցավակցությամբ հիշեց հոր ստվերի երևալը և նրա նախազգուշացումը:

— Արդարև, դժբախտ եմ ես, քանի որ իմ հարազատ եղբայրն էլ է իմ դեմ սուր բարձրացնում: Թող գան, սպանեն ինձ, եթե իմ կյանքը հարկավոր է դրանց, պատրաստեմ զոհվելու, միայն թե գիտենամ, որ այնուհետև Հայաստանը ազատ կլինի, և նախարարներն ու իշխանները կդադարեն իրար միս ուտելուց:

— Բայց, տե՛ր, շտապեցեք, ձեր կյանքը հարկավոր է թշվառ ժողովրդին: Նրանք դրանով էլ չեն բավականանա, ձեր արյան մեջ ընկնելուց հետո ոտնատակ կտանամբողջ Հայաստանը:

Աշոտ Երկաթը մի փոքր լուռ մնաց և ապա ասաց.

— Լա՛վ, թող քո խոսքը լինի, — ապա շտապ հավաքելով անհրաժեշտ պիտույքները, վերցրեց յուր ընտանիքը, Հեղինեին, Աբասի որդուն և գաղտնի ճանապարհովդուրս եկավ քաղաքից:

Երբ Գևորգ իշխանը տեսավ նրա հեռանալը, ազատ շունչ քաշեց և ապա յուր թիկնապահներով պալատում դարան մտավ սպասելով դավադիրներին: Շատ ժամանակչանցավ, և նա տեսավ, թե ինչպես մոտ քսան հոգի զգուշությամբ մոտենում են դեպի պալատի այն կողմը, ուր քիչ առաջ երկու պահապան էին կանգնած: Այժմ այդպահապանները չկային և մուտքը, ըստ երևույթին, ազատ էր սրիկաների համար: Սանդուղքների տակ շփոթված նրանք կանգ առան, երբ պահապաններից ոչ ոքիչտեսան: Անորոշ կասկած մտավ նրանց սիրտը:

— Այս ո՞ւր են պահապանները, ինչո՞ւ նրանք չկան,— շշնջաց մեկը ցած ձայնով:

— Ուր պիտի լինեն, մի անկյունում կուչ եկած, քնած կլինեն, այդ մեզ համար ավելի լավ է, մեր ճանապարհը ազատ կլինի, — պատասխանեց մի ձայն, որ մեզ ծանոթՔոսակն էր:

Նրանք զգուշությամբ սկսեցին վեր բարձրանալ, երբ քսան նետ միասին դեպի նրանց սլացան և շատերին պառկեցրին տեղն ու տեղը:

— Վա՜յ, մեռանք, — կանչեցին մի քանիսը, իսկ ոմանք սարսափահար ետ դարձան:

— Դավաճանությո՛ւն, — կանչեց Քոսակը և մի ակնթարթում կորավ մթության մեջ: Նետերի հենց առաջին տարափից ամեն ինչ խաղաղվեց: Լսվում էր միայնվիրավորների թույլ հառաչանքը:

— Տղե՛րք, սրանով դեռ սկսվում է մեր այս գիշերվա խաղը, տեսնենք ինչո՞վ կվերջանա,— ասաց Գևորգ իշխանը՝ դառնալով թիկնապահներին:

— Ինչով էլ վերջանա մենք քեզ հետ պիտի մեռնենք, իշխա՛ն, — պատասխանեցին թիկնապահները:

— Ապրի՛ք, տղերք, բայց տեսեք, ահա սկսվում է իսկական կռիվը: Աբասն ու Գուրգենը իրենց զորքերով են շտապում:

Ճիշտ որ՝ Աբասն ու Գուրգենը իրենց զորքերով շտապով կանգ առան պալատի առաջ և մտածում էին, թե ինչպես ներս մտնեն: Քիչ հետո զորքը երկու մասիբաժանվեցավ, մի մասը սկսեց բարձրանալ գլխավոր մուտքից, ուր պահված էին Գևորգ իշխանն ու յուր թիկնապահները, իսկ մյուս մասը շրջան տվեց և պատերիցսկսեց վեր բարձրանալ:

Գևորգ իշխանի և յուր թիկնապահների նետերի տարափը նորից թափվեցավ դրանց վրա, բայց մեծ վնաս չկարողացավ տալ, որովհետև նրանց նետերից շատերըդիպան թշնամիների վահաններին:

Գևորգ իշխանը նկատեց, որ երկար դիմադրել անհնար է դրանց զորությանը և թե ինքը ու յուր մարդիկ ամենքն էլ կկոտորվեն, եթե մնան իրենց տեղում, ուստիբարվոք համարեց ետ քաշվել: Գաղտնի դռան կողմը սպասում էին իրենց ձիերը, բայց նա դեռ ուզում էր պաշտպանվել, ո՛չ թե պալատը փրկելու, այլ ժամանակվաստակելու, որպեսզի Աշոտ Երկաթը յուր ընտանիքով ավելի հեռացած լինի:

Հանկարծ նա կրակի բոց նկատեց, որ ագահությամբ չափում էր Աշոտ Երկաթի սենյակներից մեկը: Ինչպես երևում է, թշնամին նպատակ ուներ Աշոտ Երկաթի հետմիասին ոչնչացնել նաև նրա պալատը: Բայց գլխավոր մուտքի առաջ կռիվը հետզհետե տաք կերպարանք էր ստանում: Երկու կողմից էլ արդեն սպանվածներ կային:

— Աշո՛տ Երկաթ, անձնատուր եղիր, քեզ այլևս փրկություն չկա, — կանչեց Գուրգենը՝ կարծելով, թե Աշոտ Երկաթի հետ է կռվում:

— Թշվառակա՛ն, ճանաչիր ում հետ ես կռվում: Նախախնամությունը փրկեց նրան, — ասաց Գևորգ իշխանը և կամաց-կամաց ետ գնաց, իսկ քիչ հետո քսան հոգուցտասնևհինգ հոգի միայն նստեցին իրենց ձիերը և աննկատելի կերպով դուրս եկան քաղաքից:

Աբասն ու Գուրգենը մտան դատարկ ապարանքը և, չգտնելով այնտեղ Աշոտ Երկաթին, բարկությունից սկսեցին քարուքանդ անել պալատը և կողոպտել այն: Որսըթռել էր նրանց ձեռքից, և նրանք սկսեցին կրակ տալ այդ ապարանքը: Գևորգ իշխանը բավականին տեղ հեռացել էր քաղաքից, երբ ետ նայեց և դառն ժպիտ անցավնրա դեմքի վրայով: Այնտեղ՝ Երազգավորս քաղաքում, ուր կառուցված էր Աշոտ Երկաթի պալատը, բարձրանում էր կարմրածիրանագույն բոց: Այդ բոցը հետզհետեաճում էր, և կրակի լեզուները ավելի և ավելի բարձր էին գնում ու իրենց շուրջը տարածում աղոտ լուսավորություն:

— Գոհությո՛ւն աստծո, — կանչեց Գևորգ իշխանը, — թագավորը փրկված է, իսկ պալատը որքան ուզում է թող այրվի: — Եվ ապա նրանք մտրակելով իրենց ձիերինշուտով անհետացան նոր ծագող լուսնի լուսավորության մեջ…

ԺԹ

Կայծակի արագությամբ տարածվեց Աշոտ Երկաթի կյանքի դեմ լարած դավադրության լուրը, և շարժվեց նա, ով ավելի հալածված և տանջված էր: Ժողովրդի ստորինխավերն սկսան ալեկոծվել, և արդար բարկությունը նրանց ոտքի կանգնեցրեց: Հուզվեց նրանց սիրտը, և նրանք, որոնք իբրև մի մեռած, անշարժ ու թմրած տարր էինկազմում, այժմ մի այնպիսի զարկ ստացան, որ արդեն դժվար էր նրան ետ կանգնեցնել: Նրանց առաջնորդ էր պետք և այդ առաջնորդը կար, դա հայր Մարտիրոսն էր, որի քարոզները, կենդանի խոսքը չէին մեռել նրանց մեջ, այլ դեռ պահվում էին նրանց սրտում:

Ժողովուրդը, հասարակ ամբոխը, որ չուներ իշխանների ու նախարարների եսասիրությունն ու փառամոլությունը, սիրում էր թագավորին, սիրում էր Աշոտ Երկաթինանկեղծ, անարատ սիրով, բայց այդ սերը խեղդվում էր իշխանների ու նախարարների ճնշման տակ և ոչ մի բանով չէր արտահայտվում: Բայց բաժակը արդեն լցվածէր: Այժմ մի ձայն էր պետք նրանց ի մի գումարելու և այդ ձայնը լսվեց:

Մարտիրոս հոր ձայնը լսվեց Հայաստանի մի անկյունից մյուսը, և նրա կազմած փոքրիկ խմբերը ստվարանալով գունդագունդ դեպի իրենց «սուրբը» դիմեցին:

Ծերունին հուզվեց. մի կողմից նրա սիրտը լցվեց, կսկիծը տոչորեց նրան՝ լսելով Աբասի արարմունքը յուր եղբոր՝ թագավորի դեմ, իսկ մյուս կողմից, նկատելովիշխաններից արհամարհված այդ շինականներին, որոնք զենքը ձեռքերն առած եկել էին պահպանելու իրենց սիրելի թագավորին, նրա սիրտը լցվեցգոհունակությամբ և աչքերը վեր ուղղելով աղոթում էր աստծուն, որ հաստատ և անխախտ պահի այդ ժողովուրդը, որի վրա է միայն հենված եկեղեցին ուպետությունը:

— Իշխա՛ն, — դարձավ Մարտիրոս հայրը դեպի յուր մոտ կանգնած Գևորգ Մարզպետունին, — հրամայիր թմբուկ զարկել, որ ժողովվեն բոլոր գնդերը նպատրաստվեն թագավորի թևի տակ մտնելու:

Գևորգը խոր գլուխ տվեց և հեռացավ նրա մոտից: Քիչ ժամանակից հետո Բյուրականի ամբողջ պարիսպները դղրդացին փողի և թմբուկի ձայներից, և գնդերըպատրաստվեցան լսելու Մարտիրոս հոր հրամանը:

Երկու բաժին էին եղած գնդերը, որոնցից մի մասը հեծելազունդ էր, իսկ մյուսը՝ հետիոտն: Մոտ տասն հազար կտրիճ տղամարդիկ ինքնակամ ժողովվել էին իրենցթագավորին պաշտպանելու:

Երբ Մարտիրոս հայրը դուրս եկավ և կանգնեց բարձր պատվանդանի վրա, որտեղից երևում էր ամբողջ բանակը, բոլոր զինվորները իջեցրին նիզակները և հանելովգլխարկները, նայեցին դեպի Մարտիրոս հայրը:

Պատկառելի և հրաշալի դեմք ուներ նա:

Աստվածածին սուրբ լույսով էր պատած նրա առանց այն էլ սպիտակ ալեզարդ դեմքը: Հեզ, բայց ոգևորությամբ լի աչքերը հույս ու հավատ էին ներշնչումնայողներին և անսովոր ոգևորությամբ լցնում նրանց սիրտը:

Որդիա՛կք իմ, — կանչեց Մարտիրոս հայրը, և նրա ձայնը, այն անհողդողդ և ուժեղ ձայնը դողդողաց: Փոձկանքը կտրեց նրան և արտասուքներ երևացին նրա աչքերիմեջ, որոնք մարգարիտների նման գլորվեցան նրա ալեզարդ մորուքին:

Զորքը տեսավ Մարտիրոս հոր արտասուքները և մի տեսակ անորոշ, խուլ շշունջ անցավ նրանց մեջ, որը ցնցեց նրանց մարմինը:

— Սուրբը լաց է լինում, արտասվում է, տեսնո՞ւմ եք, աղամանդներ են գլորվում նրա աչքերից, — ասում էին նրանք միմյանց, և նրանց սիրտն էլ էր սկսում հուզվել, նրանք էլ պատրաստվում էին լալու:

— Որդյա՛կք իմ, — շարունակեց Մարտիրոս հայրը, — ինձ և ձեզ սեր է պետք և խաղաղություն, որ թողեց մեզ մեր տերը՝ նա, ով խաչվեցավ մեզ համար, բայց այդսերն ու խաղաղությունը խլում են մեզանից նույնիսկ նրանք, ովքեր պիտի պահպանեին այն: Դառն և սոսկալի է ներկա ժամանակը, երբ եղբայրը եղբոր դեմդարանամուտ է լինում: Սոսկալի չէ, երբ մի ազգ գործ է ունենում արտաքին թշնամիների հետ, լինեն դրանք թեև տասնապատիկ շատ, բայց սոսկալի է ունենալներքին թշնամիներ: Հայոց ազգի և եկեղեցու համար էլ այնքան վտանգավոր չեն արաբներն ու պարսիկները, որքան սոսկալի են այն դավաճան, ստոր իշխանները, որոնք իրենց հարազատ թագավորին դեմ են գնում: Արտաքին թշնամիները նման են այն տեսակ հիվանդության, որոնք գոյանում են մեր մարմնի կաշվի զանազանմասերում և որոնց մենք աչքով տեսնում ենք, ուստի և հոգ ենք տանում սպեղանի դնելու հենց այնտեղ, ուր գոյացած է խոցը: Բայց ներքին թշնամին, ներքինանտեսանելի հիվանդությանն է նման, որ չենք իմանում, թե ո՞ւր է նա կենտրոնացած և որտե՞ղ թաքնված, այնինչ նա կամաց-կամաց, աննկատելի կերպովքայքայում է մեր մարմինը և ապա, հասնելով մեր սրտին, ոչնչացնում է մեր գոյությունը և գերեզման իջեցնում մեզ...

Մենք ունենք երկու տեսակ թշնամի էլ: Արտաքին թշնամին մեր արյունից չէ, օտար է, բայց ներքին թշնամին մեր արյունից է և մարմնից: Ես ուղարկում եմ ձեզ կռվելուերկուսի դեմ էլ: Ես ուղարկում եմ ձեզ կոտորելու ձեր հարազատներին անգամ, եթե նրանք գնում են թագավորի դեմ և վրդովում ընդհանուր խաղաղությունը:

Աղոթենք առ ամենաբարձրյալը, որ նա ուժ և կարողություն տա հնազանդ լինելու Աշոտ Երկաթին և մինչև վերջին շունչը կռվելու նրա համար: Թող հուր և մոխիրդառնան մեր ներքին ու արտաքին թշնամիները, որպեսզի վերականգնվի խաղաղությունը: Կորչե՛ն դավաճանները և անիծյալ լինեն նրանք:

— Մա՛հ դավաճաններին, — կանչեցին տասն հազար բերաններ և, սրերը մերկացնելով, երդվեցին հնազանդ լինել Աշոտ Երկաթին:

Ապա բոլորը չոքեցին, և Մարտիրոս հայրը սկսեց պահպանիչը: Երբ վերջացրեց, Գևորգ իշխանը համբուրեց խաչը և նշան տվեց զորքին:

Բոլորը շարժվեցին դեպի Կաքավաբերդ, ուր կանգ էր առել Աշոտ Երկաթը: Մարտիրոս հայրը և Գևորգ իշխանը առաջնորդում էին նրանց:

Ի

Ամեն կողմից Հայաստանը քարուքանդ էր լինում:

Աբասն ու Գուրգենը տակնուվրա էին անում Այրարատյան երկիրը, Գագիկ Արծրունին յուր վասալ Անձևացյաց և Ռշտունյաց իշխաններով ծածուկ և հայտնի կերպովոտնատակ էին տալիս Հայաստանը և այդ բավական չլինելով՝ Գագիկ Արծրունին դաշն էր կռում արաբների հետ, ամիրապետից թագ ստանալու: Որոմն էր ցանումնաև Աշոտ սպարապետը և յուր ժանիքները Աշոտ Երկաթի վրա սրում, այնինչ անները՝ Սևադան ևս հետզհետե սառչում էր յուր փեսայից: Աշոտ Երկաթը այդպիսովշրջապատվում էր հզոր դավաճաններով և թշնամիներով, որոնք ամեն կերպ ուզում էին ոչնչացնել նրան:

Աշոտ Երկաթը, գլուխ անցնելով Մարտիրոս հոր կազմած գնդերին, իսկույն հարձակվում է Գուրգենի երկրի վրա և հրո ճարակի մատնում այն: Այդ ժամանակ նաՎասակ Սյունյաց իշխանին բանտարկում է Կայեան բերդում՝ գտնելով նրա մոտ դավաճանության թղթեր, գրված Աշոտ սպարապետից, Գուրգենից և Աբասից:

Վասակ Սյունի իշխանը լավ հարաբերության մեջ էր Գարդմանաց Սևադայի հետ: Վերջինս այդ պատրվակ առնելով յուր զորքերը առաջ է քաշում դեպի Աշոտ Երկաթիերկրները և բանակ է ձգում Սիսայեան գետի մոտ, բայց այդտեղ կռիվ տեղի չի ունենում և Աշոտ Երկաթը շտապում է Դվին, ուր այդ ժամանակ գլուխ էր բարձրացրելԱշոտ Բռնավորը:

Խորին թախիծը սրտում Աշոտ Երկաթը յուր գնդի առաջն ընկած շտապում էր դեպի Դվին: Վիշտն ու բարկությունը ճնշում էին նրա սիրտը: Նա զգում էր, որճակատագիրը անողոք կերպով հալածում է իրեն, բայց մինչև ե՞րբ:

— Անողո՛ք ճակատագիր, ապերա՛խտ բախտ, մինչև ե՞րբ պիտի խաղալիք դարձնես ինձ, մինչև ե՞րբ պիտի հալածես... Մի ապստամբություն ճնշում եմ, և դեռ արյանհետքերը սրիս վրա չչորացած, դու ստեղծում ես ուրիշ ապստամբություն, այդ էլ եմ ճնշում, մի նոր ապստամբություն է լսվում, և կարծես ինձ դատապարտել եսհավիտյան կռվել, հավիտյան պատերազմների մեջ անց կանցնեի, այնինչ ես հանգստություն եմ ուզում... Ապիրատ երկինք, խղճա՛ ինձ, դու զինեցիր իմ դեմհարազատ եղբորս էլ, բավականացիր դրանով և թող ինձ հանգիստ... — այդպես

մտածում էր Աշոտ Երկաթը՝ նստած յուր նժույգը: Կողքին, նույնպես ձի նստած, գնում էր Գևորգ իշխանը:

Սա էլ լուռ էր և, ըստ երևույթին, խորին մտքերի մեջ ընկած: Հեղինեի սիրուն պատկերը նրա առջևից չէր հեռանում, իսկ նրա խոսքերը ամուր մեխվել էին յուր մտքիմեջ: Նա մտածում էր Հեղինեի վրա:

— Մի՞թե նա չի սիրում ինձ, մի՞թե նա ինձ դիտմամբ դեպի կրակն է ուղարկում, որ ես կյանքս վայր դնեմ և նա այդպիսով ազատվի ինձանից... Բայց չէ՛, Հեղինենընդունակ չէ խաբեության, նա խոսք տվեց և կկատարի տված խոսքը, դեպի արյունը պիտի շտապել, դեպի կրակը, դավաճանների և անօրենների արյունով պիտիձեռք բերեմ Հեղինեիս: Այդ ծանր գնով է ծախում նա յուր սերը...

Ու Գևորգ իշխանը, երևակայելով իրեն կրակի և մոխրի մեջ, այնպիսի ուժգնությամբ մտրակեց, որ ձին հանկարծակի մի այնպիսի թռիչք արավ, որ քիչ մնաց վայրձգեր ձիավորին: Աշոտ Երկաթը զարմացավ այդ բանի վրա և առաջ քշելով ձին՝ մոտեցավ Գևորգ իշխանին, որը յուր ձիուն զսպելով հանցավորի նման իջեցրել էրգլուխը:

— Ի՞նչ պատահեց քեզ, — հարցրեց Աշոտ Երկաթը:

Գևորգ իշխանը իսկույն չկարողացավ պատասխանել, նա չէր ուզում իսկությունը հայտնել, բայց և չէր կարող խաբել նրան:

— Տե՛ր, ձին հանկարծ թռիչք արավ:

— Բայց ինչո՞ւ հանկարծ մտրակեցիր, նա հանգիստ էր գնում:

— Իմ կյանքը, տե՛ր թագավոր, հանգիստ ժամանակ էլ ինձ փոթորիկ է թվում և ես, մտքիս հետ ընկնելով, կարծում էի, թե կռվի մեջ եմ գտնվում:

— Հա՛, մեր կյանքը այնպես է, որ քնած ժամանակներս էլ պիտի արթուն լինենք և մեզ միշտ արյան մեջ կարծենք: Ո՞վ գիտե մի ժամից հետո ի՞նչ է լինելու...Փոթորկալից է մեր կյանքը, իշխա՛ն, խիստ փոթորկալից և ե՞րբ արդյոք պիտի խաղաղվի, այդ տերը միայն գիտե: — Նրանք երկուսն էլ լռեցին և ամեն մեկը կրկին յուրմտքերի մեջ ընկավ: Քիչ հետո նրանք պիտի հասնեին այնտեղ, ուր բանակված էր ապստամբների գունդը:

Բավական ժամանակ նրանք առաջ էին գնում, երբ հեռու անտառների մեջ մի քանի կրակներ երևեցան: Այդ կրակները թշնամյաց խարույկներն էին, որոնք երբեմնհանգչում, երբեմն բոցավառվում էին:

— Իշխա՛ն, թշնամին արդեն երևում է, ավելի առաջ գնալը վտանգավոր է. մենք պիտի այստեղ հանգստանանք մինչև մեր լրտեսներից տեղեկություն ստանալը,— ասաց Աշոտ Երկաթը և հրաման տվեց զորքին կանգ առնել ու հանգստանալ: Զորքը լուռ, առանց աղմուկի, կանգ առավ և տարածվեցավ կանաչ խոտի վրա:Բավական ժամանակ նրանք հանգստացան, ապա զորքը երկու մասի բաժանվեց. մի բաժնի գլուխն անցավ ինքն Աշոտ Երկաթը, իսկ մյուս բաժնի գլուխը՝ Գևորգիշխանը:

— Իշխա՛ն, քո գունդը լռությամբ առաջ տար մինչև լեռան աջակողմյան լանջը և երբ կհասնես այնտեղ՝ հնչեցնել տուր փողերը և սկսիր հարձակումը, իսկ մենք էլպատասխանելով ձեզ՝ կնեղենք թշնամու ձախ կողմը:

Գևորգ իշխանը խոր գլուխ տվեց և յուր գունդը լռությամբ առաջ տարավ, և երբ հասան նշանակված տեղը, խորին լռությունը դղրդացրեց փողերի սարսափեցուցիչձայները, որին արձագանք տվեցին Աշոտ Երկաթի գնդի փողերը: Աշոտ սպարապետը սարսափեց. նա այդպես շուտով չէր սպասում Աշոտ Երկաթին, թեև գիտեր, որնա կայծակի արագությամբ անցնում է մի տեղից մյուսը և յուր ծանր սրի զորությունը ցույց տալիս ամեն տեղ:

Մի քանի վայրկյան անցավ, և տիրեց խորին, ահավոր լռություն, և ապա լսվեցան Աշոտ սպարապետի բանակից փողի ձայներ և քիչ հետո սրերի, նիզակների ևզոռում-զոչյունների ձայներ: Կռիվն արդեն սկսվել էր անտառի մեջ: Թեև Աշոտ սպարապետի բանակի դիրքը շատ լավ էր, բայց Աշոտ Երկաթը ամենևին չէրվհատվում նրանց համառ դիմադրությունից, այլ մտնելով նրանց ամենախիտ շարքերի մեջ՝ ջարդ ու փշուր էր անում նրանց և ետ մղում, այնինչ մյուս կողմից Գևորգիշխանը մտնում էր ուղղակի թշնամու սիրտը և այնտեղ յուր ավերմունքը անելով քշում ետ:

Աշոտ սպարապետը դառնությամբ նկատեց, որ յուր զորքերը փախուստ են տալիս, որ ինքը հաղթվում է, և նա դառն կսկիծով կանչեց.

— Ա՛յս էլ չհաջողվեց, չար բախտը հալածում է ինձ և աստված Երկաթին է պահպանում : Օ՜հ, Երկաթի արյանը վաղուց եմ կարոտ, բայց նա ձեռքս չի ընկնում, մինչևե՞րբ...

— Իշխա՛ն, թշնամին մոտենում է, այլևս անհնար է դիմադրել, — ասաց Անձևացյաց իշխանը՝ մոտենալով Աշոտ սպարապետին:

— Ո՞ւր է թշնամին,— ասաց Աշոտ սպարապետը վրդովված ձայնով, առանց հասկանալու, թե ինչ է հարցնում:

— Մի՞թե չես տեսնում. ահա երկու կողմից մեզ վրա են գալիս, մի կողմից ինքը Աշոտ Երկաթը, իսկ մյուս կողմից Գևորգ իշխանը: Եթե մենք նրանց ձեռքն ընկնենք, վաղը արևի ծագելը չենք տեսնի:

— Ճիշտ է, պետք է նահանջել, իսկ ո՞ւր են իմ զորքերը, անիծվածները ամենքը ցրվեցան, ամենքը փախան:

— Փախչե՛նք, տե՛ր, ահա Աշոտ Երկաթը մեզ վրա է գալիս, — ասաց Անձևացյաց իշխանը, և երկուսն էլ իրենց ձիերի գլուխները ետ դարձնելով, կորան անտառիծառերի ետևը:

Աշոտ Երկաթը, որ հեռու չէր նրանցից, նկատեց նրանց փախուստը և կանչեց ետևից.

— Վախկո՛տ, անա՛րգ սպարապետ, ո՞ւր ես փախչում...

Հետզհետե Աշոտ սպարապետի գնդերը ցրիվ էին գալիս և փախուստ տալիս, մի քանի տեղ միայն դեռ կատաղի կերպով շարունակվում էր կռիվը, բայց նրանք էլշուտով վհատեցին, տեսնելով մեծի փախուստը և ցրիվ գալով անտառի մեջ, սկսեցին փախչել կռվի տեղից: Նրանց հալածում էր Գևորգ իշխանը մի խումբկտրիճներով, երբ նկատեց, որ երկու մարդ ամենայն արագությամբ վազում են մացառների միջով և ամեն կերպ աշխատում են թաքնվել: Նրանցից մեկի, դեմքըծանոթ երևաց, բացի դրանից, նա իշխանական զգեստներ ուներ հագին, որով ավելի հետաքրքրեց իշխանին, ուստի երկու զինակից ուղարկեց դրանց բռնելու, իսկինքը սկսեց հալածել մյուս փախստականներին:

Կատվի դյուրաշարժությամբ այդ երկու փախստականները մտան փշի մացառների մեջ և անհետացան այնտեղ: Դրանց հալածողները նկատեցին այդ նբարկությունից ատամները կրճտացրին: Փշի մացառները բռնում էին բավականին տարածություն, իսկ ձիերով ներս մտնել այդ փշի մեջ անհնար էր, այնինչ որսըփախուստ տվեց, նրանց ձեռքից ու նրանք ձեռնունայն ետ դարձան: Երկու փախստականները ներս մտնելով մացառի մեջ, փորսող տալով սկսեցին, առաջ քայլել:Փշերը պատառոտում էին նրանց շորերը և արյունլվա անում ձեռքերն ու

երեսը, իսկ հոգնածությունից և երկյուղից առաջացած քրտինքը ծորում էր նրանց երեսից:Դեմքերն արդեն այլանդակվել էին, աչքները լցվել էին արյունով, որ սարսափելի արտահայտություն էր տվել նրանց: Հոգնածությունից և ցավի կսկծից հազիվկարողանում էին շարժել իրենց ոտքերը, այնինչ սարսափը այն աստիճան էր ազդել, որ նրանք գերբնական ուժ էին գործ դնում և թեև դանդաղ, բայց կրկին շարժվումէին առաջ:

— Քոսա՛կ, կանգնիր, շունչս կտրվում է, մի վայրկյան հանգստանանք:

— Առա՛ջ, իշխա՛ն, առա՛ջ, ժամանակ չէ հանգստանալու, — պատասխանեց մեզ ծանոթ Քոսակը և, սոսկալի ճիգ թափելով, ձեռքերով ճղեց փշերի արմատները և տեղբանալով մի քանի քայլ առաջ գնաց:

— Խղճա՛ ինձ, Քոսա՛կ, մի՛ թողնիր ինձ միայնակ, թող գոնե մի վայրկյան շունչ առնեմ, — կրկին աղաղակեց Քոսակի ետևից սողացող մարդը, որ Ռշտունյաց իշխաններ:

Քոսակը մի վայրկյան կանգ առավ, Ռշտունյաց իշխանի աղիողորմ ձայնը թափանցեց յուր սիրտը, խղճաց նրան և ուզեց հանգստություն տալ, բայց այդ ժամանակվշի թփից դուրս թռավ մի թռչուն, որն աղմուկ հանելով՝ սարսռեցրեց նրան: Քոսակը կարծեց, թե թշնամին հետևում է իրենց այդ դժոխային ճանապարհով, ուստիկրկին ճիգ թափելով առաջ անցավ: Այդ ժամանակ Քոսակի ականջին դիպավ առվի խոխոջը, որը նրան ուրախություն պատճառեց և նա, առանց ուշք դարձնելու յուրետևից սողացող իշխանին, որ տեղն ու տեղը մնացել էր սառած, կանչեց.

— Իշխա՛ն, մենք ազատված ենք, դժոխքը վերջանում է այստեղ: — Բայց Ռշտունյաց իշխանը չլսեց էլ Քոսակի խոսքերը, այդ ժամանակ նա փշերի մեջ սեղմված, արյունաթաթավ, հողի մեջ կոլոլված խռխռացնում էր անորոշ խուլ բացականչություններ, որոնք ավելի մահամերձ մարդու ձայների էին նմանվում: Նրա երեսի վրաթռչկոտում էին զանազան զեղուններ և սողում զզվելի միջատներ, բայց նա ոչինչ չէր զգում, այլ կռվում էր մահվան հետ:

Մինչդեռ Քոսակը արդեն դուրս էր եկել փշերի միջից և մի բարձր ծառի տակ թեք ընկել: Նա ապահով էր, որ իրեն այստեղ ոչ ոք չէր հալածի, որովհետև մի կողմումփշերի դժոխքն էր, մյուս կողմում՝ ահռելի անդունդը, որի խորքում գոռում էր լեռնային մի վտակ:

Մի տեսակ կիսաթմրած դրության մեջ էր Քոսակը, նա ոչինչ չէր հասկանում, թե ու՞ր է ինքը և թե ի՞նչ է պատահել իրեն: Նա մինչև անգամ մոռացել էր Ռշտունյացիշխանի գոյությունը, որ մի քանի քայլ այն կողմ, փշերի մեջ, անօգնական խեղդվում էր, Քոսակ էր կանչում, նրան ոսկի, հարստություն խոստանում, բայց Քոսակընրան չէր լսում: Հոգնած, ուժասպառ Քոսակը խոր քուն էր մտել ծառի տակ և մոռացել ամեն ինչ:

Երբ նա զարթնեց, ձեռքերով սրբեց չորացած արյունը և մաքրեց աչքերը: Շփոթված աջ ու ձախ նայեց, խորին լռությունը տարածվել էր չորս կողմ և թռչուններըուրախ-ուրախ հնչեցնում էին իրենց երգը: Հենց նույն ծառի գլխին, որի ստվերի տակ պառկած էր ինքը, բլբուլը թառ էր արել և երգում էր յուր անուշ մեղեդին: Բայցբլբուլի երգը նրա քարացած սրտի վրա ազդեցություն չարավ, այլ մոտի անդնդի ահռելի տեսքը և յուր միայնակությունը սարսափով լցրին Քոսակի սիրտը: Նա հիշեցՌշտունյաց իշխանին և զարհուրեց: «Ի՞նչ եղավ նա, չէ՞ որ իմ ետևից էր գալիս, չլինի թե նրան բռնեցին», — մտածեց Քոսակը և փշերը սկսեց զգուշությամբ ետ քաշելև փնտրել իշխանին: Առաջին ջանքը ապարդյուն անցավ, բայց մի փոքր էլ առաջ գնալով՝ սարսափահար կանգ առավ, երբ նկատեց Ռշտունյաց իշխանիայլանդակված դեմքը... Քոսակի նման քար սիրտն անգամ վախեցավ և տհաճությամբ երեսը շուռ տալով՝ ուզում էր ետ գնալ, բայց մի փոքր ժամանակ կանգառնելով, բռնեց իշխանի մազերից և սկսեց քարշ տալ դեպի անդունդի եզրը: Ապա նա ետ արավ նրա սուրը, քրքրեց գրպանները և շպրտելով նրան անդունդը, կանչեց.

— Գնա՛, դժոխքի բաժին եղիր, ա՛յդ է դավաճանների վախճանը, ո՞վ գիտե, ես ավելի վատթար մահով մեռնեմ, բայց ես սոված եմ, հաց եմ ուզում և հացի համարմիայն հանձն եմ առել այդ ստոր պաշտոնը, իսկ դուք հանգիստ կյանք ունիք, բայց կրկին փառքի ետևից եք վազում, ահա ձեզ փառք, գնացեք, վայելեցեք: — Քոսակըցած նայեց և սառնասրտությամբ գլուխը շարժեց: Ռշտունյաց իշխանի գլուխը դիպել էր ժայռի սուր ծայրին և ուղեղը ցաքուցրիվ եղել, այնինչ ցածում, նրա մարմինըինչպես մի մսի գունդ, դեռ շարունակում էր գլորվել…

ԻԱ

Մի քանի գորշ ամպերի կույտեր սլանում էին երկնակամարի վրա և իրենց հետ միասին երկրիս վրա ցանում տխրության սերմեր... Հեղինեն կանգնած Կայեան բերդիսենյակներից մեկում, ուր առ ժամանակ տեղափոխված էր Աշոտ Երկաթի ընտանիքը, ինչպես մի արձան, լուռ դիտում էր ամպերի կուտակվելուն, և նրա

սիրտըքաղվում էր: Անթարթ աչքերը ամպերից չհեռացնելով, կարծես տեղեկություն էր ուզում նրանցից, մի լուր, մի համբավ, հույսի մի նշույլ էր խնդրում, բայցպատասխան չէր ստանում: Տխուր և հուսահատ էին այդ ամպերը, որոնք ավելի տխրեցնում, ավելի հուսահատեցնում էին նրան:

Նա իջեցրեց հայացքը դեպի յուր ոտքերի տակ, ուր ահռելի անդունդի մեջ, օձի նման գալարվելով, վազում էր Զորագետը և քերում բերդի ստորոտները: Խորինուշադրությամբ Հեղինեն լսում է գետի հառաչանքը և կիսատ թեքվելով դեպի ձորը՝ պատասխանի սպասում: Սոսկալով նա լսում է, որ Զորագետն էլ է լալիս, երկնքիպես նա էլ է հառաչում, և որ յուր սրտի նման ամենքն են տանջվում... Ի՞նչ կա արդյոք, մի՞թե իրեն նման որբ են բոլորը, անտեր, թշվառ, ծնողներից հեռացած, ի՞նչվիշտ է ստիպում դրանց հառաչելու... Եվ Հեղինեն դյութական զորությամբ ուզում է ցած թռչել, ընկղմվել այդ խոր, անհասկանալի զորությունն իմանալու և հարցնելու նրանց վիշտը, բայց ուժասպառ ընկնելով պատնեշին, կրծքից դուրս է թռչում միայն խեղդող հեկեկանքը, և նա սկսում է երեխայի նման արտասվել...

— Գևո՛րգ, ես քեզ սիրում եմ, հասի՛ր ինձ, սիրտս մաշվում է, հոգիս քաղվում: Ես միայնակ եմ այս հառաչող ու լացող տարերքի մեջ, միայնա՛կ, հասիր, Գևո՛րգ իշխան, հասիր, քո Հեղինեն քեզ է կանչում,— ասում էր նա և բազուկները տարածում դեպի ձորը՝ յուր սիրելույն գրկելու:

Բայց ձայն չկա: Գևորգը նրան չի պատասխանում, և Հեղինեի տարածված ձեռքերը թրջվում են անձրևի կաթիլներով. նա սոսկալով ետ քաշելով ձեռքերը՝ խեղդում էյուր մեջ հեկեկանքի ձայնը: Հիշում է յուր տեսակցությունը Գևորգ իշխանի հետ, երբ իշխանը տարածվելով յուր ոտքերի տակ, սեր էր պաղատում: Հիշում է այդպատկերը, և սառը դողը ցնցում է Հեղինեի մարմինը:

— Օ՜... ի՞նչ իրավունքով եմ կանչում, քանի որ ես նրան դեպի հուր ու մոխիր ուղարկեցի: Նա ինձանից հաց ուզեց, ես նրան քար տվի, ջուր ուզեց յուր մորմոքվածսիրտը հովացնելու, իսկ ես լեղի տվի... Ի՞նչ արի ես, ի՞նչ քարե սիրտ կար իմ մեջ, որ ես այդպես վարվեցի, իսկ հիմա կանչում եմ նրան... Բայց սրտիս մեջ անհայտզորությունը էլ չի թաքնվում, այն ժամանակ ես խեղդեցի իմ մեջ, իսկ այժմ նա ժայթքում է, էլ չի դիմանում: Ռոպե առ ռոպե հոգիս մաշվում է և չծաղկած կյանքսթառամում: Իշխա՛ն, հասի՜ր, հասիր քո Հեղիներն, ես սիրում եմ քեզ:

Կրկին ձայն չկար: Մեկը մյուսից դառն և սոսկալի մտքերը կրկին տանջում էին նրան և ավելի ու ավելի մաշում:

Բայց կիրքը, վրդովմունքը և հոգեկան այլայլմունքը հետզհետե դադարում էին և տեղի տալիս սառն դատողությանը:

— Իսկ եթե նա արհամարհի՞ ինձ, մոռանա՞... կամ սիրուցս ցնորված՝ յուր կյանքը վտանգների մեջ ձգի՞, այն ժամանակ ես ի՞նչ անեմ: Օ՜... սարսափելի է իմդրությունը: Ես ճանաչում եմ Գևորգ իշխանի հոգին, չէ՛, նա ինձ չի մոռանա, ինձ չի արհամարհի, բայց վախենում եմ նրա հանդուգն բնավորությունից, նա կմտնիկրակի մեջ, թշնամու խիտ շարքերը, և թշնամու նիզակն ու սուրը չեն խնայի ինձ համար թանկագին կյանքը: Գևո՛րգ իշխան, ետ դառ, ես ետ եմ վերցնում իմ խոսքերը, — կրկնեց Հեղինեն և հեկեկանքը կրկին սկսեց խեղդել նրան: Ապա նա վճռեց նամակով ետ կանչել իշխանին պատերազմի դաշտից, բայց կրկին կանգ առնելով յուրվճռի վրա, երկար, շատ երկար մտածեց և ժողովելով յուր բոլոր արիությունը՝ կանչեց.

— Է՛հ, ինչ լինում է թող լինի, թող խորտակվեմ ես, ոչնչանամ, նա պետք է հայրենիքին, և ես արգելք չպիտի լինեմ նրան...

Եվ Հեղինեն այնքան հափշտակվել էր յուր մտքերով, որ չնկատեց անգամ, թե ինչ խլրտում ընկավ այդ ժամանակ բերդի մեջ և թե ինչպես նրա երկաթե դռներըահագին շառաչյունով փակվեցան: Միայն այն ժամանակ նա գլուխը բարձրացրեց, երբ հեռու անտառի միջից լսվեցան պատերազմական փողերի ձայներ և ապաԿայեան բերդը, ուր գտնվում էր Աշոտ Երկաթի ընտանիքը և ուր բանտարկված էր Սյունաց Վասակ իշխանը, շրջապատվեց թշնամիներով:

Հեղինեն վեր թռավ և դեպի թագուհին վազեց: Թագուհին գունատ ու տխուր էր: Նրա աչքերում երևում էին արտասուքի կաթիլներ, որ Հեղինեի ներս գալով ուզեցծածկել, բայց չհաջողվեցավ:

— Թագուհի՛, ովքե՞ր են շրջապատել բերդը, — հարցրեց Հեղինեն՝ համբուրելով թագուհու ձեռքը:

Թագուհին արտասվալից աչքերը դեպի Հեղինեն դարձրեց և դողդոջուն ձայնով ասաց.

— Հայրս:

— Ինչպե՞ս հայրդ, մի՞թե ճշտվեցան լուրերը:

— Այո՛, Հեղինե, ժամանակս այդպես է, անները փեսայի դեմ է կռվում, բարեկամը՝ բարեկամի, իսկ արտաքին թշնամին հանգամանքից

օգտվելով՝ կամաց-կամաց ներսէ խուժում: Արաբներն արդեն ներս են մտել Այրարատյան երկիրը և սկսել են ավերել:

— Թող աստված լինի թագավորի պահապանը, — ասաց Հեղինեն:

— Ամե՛ն, — պատասխանեց թագուհին: Եվ այդ ժամանակ կրկին լսվեցավ փողերի ձայնը, որ երկուսին էլ ցնցեց:

Փոթորիկը մոտենում էր, և նրանք չոքեցին աղոթելու....

ԻԲ

Ալեկոծվում էր Հայաստանը...

Շանթալից փոթորիկները բարձրանում էին ամեն անկյունից: Մինչդեռ Աշոտ Երկաթը զբաղված էր Աշոտ սպարապետին ընկճելով, յուր աներոջ՝ Սևադայի գնդերըարդեն ավերում էին յուր երկրները: Ամեն կողմից կարծես փոթորիկները պատրաստվում էին թափվելու Աշոտ Երկաթի գլխին և նրան բոլորին խորտակելու:Նախարարների և իշխանների մեջ զանազան կուսակցություններ ու զազրելի եսասիրությունը սաստկացել էին այն աստիճանի, որ ամեն մարդ ուզում էր օգուտքաղել հանգամանքից և ինքնիշխան տեր դառնալ: Յուր հարազատ եղբայրը, աները, Աշոտ Սպարապետը, Գագիկ Արծրունին և Ափխազաց Գուրգեն իշխանըտակնուվրա էին անում յուր երկրները: Սևադան՝ Աահակ իշխանը, ինչպես մենք տեսանք, պաշարելով Կայեան բերդը, կարճ ժամանակից հետո առավ այն: Երբ նաներս մտավ այն դահլիճը, ուր գտնվում էին թագուհին՝ յուր աղջիկը և Հեղինեն, նա՝ Գարդմանաց հզոր իշխանը, շփոթված կանգ առավ և յուր արյունաներկ սուրըիջեցրեց ցած:

Այնտեղ՝ դահլիճի խորքում թագուհին և Հեղինեն չոքած աղոթում էին. նրանք չլսեցին մինչև անգամ, թե ինչպես ներս մտավ Սևադան և շանթահարի նման կանգառավ դռներում: Խորին կսկիծը մի վայրկյան կրծեց Սևադայի սիրտը, բայց շուտով զսպեց իրեն և հաստատ քայլերով մոտեցավ նրանց:

— Աղջի՛կս, — ասաց նա և ուզեց գրկել թագուհուն, բայց թագուհին նայեց նրան, մի ճիչ արձակեց և անշնչացած ցած ընկավ: Հեղինեն փաթաթվեց նրան և սկսեցուշքի բերել:

— Դու թո՛ղ նրան, — հրամայեց Անադան և համբուրեց թագուհու մարմարյա ճակատը. նրա աչքերում երևեցան արտասուքի կաթիլներ: Բայց շուտով զսպեց յուրհոգու վրդովմունքը և դառնալով դեպի յուր նիզակակիցները՝ հրամայեց.

— Սյունյաց Վասակ իշխանին ազատել բանտից, իսկ այս թռչնակին լավ պահպանել, մինչև որ հասցնենք Գագիկ Արծրունու ձեռքը, — ասաց նա՝ ցույց տալովՀեղինեին:

Հեղինեի մարմնով մի ցնցում անցավ և չոքելով արդեն ուշքի եկած թագուհու առաջ՝ կանչեց.

— Ո՛չ ինձ մի բաժանեք թագուհուց, կամ սպանեցեք այստեղ:

— Թողեք դրան ինձ հետ, ինչպես նա, նույնպես և ես քո գերին եմ, հա՛յր, արա ինչ անելու ես, — ասաց դողդոջուն ձայնով թագուհին և բռնեց Հեղինեի ձեռքը:

— Լա՛վ, այդ հետո կտեսնենք, — ասաց խրոխտ ձայնով Սևադան և դուրս գնաց:

Հափշտակելով Կայեան բերդը և միջի կանանց ու տղամարդկանց գերի քշելով, Սևադան մի ուրիշ բերդ է առնում և յուր անցած ճանապարհի վրա գտնված գյուղերնու շենները քարուքանդ անում, հրո ճարակ դարձնում: Անգթաբար նա կրակի է մատնում չհասունացած արտերը և ապա գնալով կանգ է առնում Տավրիշո լեռան ձորիվրա: Լուրը հասնում է Աշոտ Երկաթին, և նրա սիրտը լցվում է թախիծով: Կայծակի արագությամբ նա 300 մարդով թռչում է դեպի Տավրիշո լեռները և առանց ուշքդարձնելու Սևադայի ուժեղ գնդին՝ պատրաստվում է հարձակվելու նրա վրա:

Աշոտ Երկաթը բարկությունից մռմռում էր, կատաղության ամենասոսկալի բոցը կրծում էր նրա սիրտը, բայց նա դեռ զսպում էր իրեն: Մարտիրոս հայրը կանգնած էրմոտը և համոզում էր թագավորին՝ արյուն չթափել, եթե հնարավոր է:

Սևադան բանակ էր խփել մի քարաժայռի մոտ և յուր զորքերի վրա վստահացած՝ արհամարհում էր Աշոտ Երկաթին, երբ Մարտիրոս հայրը խաչը ձեռքին երևեցավնրա բանակում: Սևադան զարմացավ և միևնույն ժամանակ մի տեսակ սառը դող անցավ նրա մարմնով, երբ տեսավ յուր առաջ կանգնած Մարտիրոս հորը, որիմասին շատ բան էր լսել: Նա հավատում էր, թե այդ ալևոր ծերունին կարող է դյութել յուր ամբողջ գունդը, և այն ժամանակ, կռվի բախտը ուրիշ ելք կստանա: ԲայցՍևադան զսպեց իրեն և ուզեց իմանալ նրա գալու պատճառը:

— Ծերունի՛, ինչու՞ ես կռվի դաշտում, երբ քո տեղը վանքի խուցն է, ուր պիտի աղոթես քո հոգու փրկության համար: Ասա՛, ինչ ասելու ես, շտապի՛ր, իմ սուրը ծարավէ Աշոտ Երկաթի արյանը:

— Սահա՛կ իշխան, իջեցրու քո բարկությունը և հիշիր, որ վերը կա աստված, որն ամենքին ըստ արժանվույն է վարձատրում: Հիշիր, որ Աշոտ Երկաթը քո փեսան է:Զուր արյուն մի՛ թափեք: Ես իջեցրի Աշոտ Երկաթի բարկությունը, և նա խնդրեց հայտնել, թե «ի՞նչ չար բան կամ ի՞նչ վնաս եմ հասցրել քեզ, որ քեզանից այսպիսիծանր աղետներ եմ ստանում: Ինչու՞ դու մոռանում ես քո երդումը Ախայեան գյուղի մոտ և պատրաստվել ես թափելու իմ արյունը: Արդ, դարձի՛ր քո բարկությունից, վերադարձրու ինձ երկու բերդը և իմ ընտանիքը, որ հափշտակել ես, ու հեռացիր իմ երկրից: Եվ այն ժամանակ մեր մեջ խաղաղություն կտիրի, ու մենք կլինենքհարազատ հայր և որդի»17:

Սևադան մինչև վերջը լսեց նրան և ապա, դառնալով դեպի վանահայրը, ասաց.

— Դու կաց այստեղ և ես անձամբ նրան պատասխան կտամ: — Ապա նա հրամայեց յուր զորքին շարվել և պատրաստվել կռվի: Ութ հազարի չափ զորքը շարժվում էրառաջ, դեպի այն բլրակը, ուր կանգ էր առել Աշոտ Երկաթը յուր 300 հոգնած կտրիճներով: Աշոտ Երկաթի վրա սարսափ ձգելու համար Սևադայի հետևակ գնդերըշարվեցան մի կողմում և վահանները առաջ քաշելով պարիսպ կազմեցին: Հետևակի թիկունքին կանգնել էր հեծելագունդը, իսկ առաջապահ ձիավոր գունդը, վահանները առաջները քաշած ու մերկացրած սրերը ձեռքին, զինվորական վարժություններ էր անում Սևադայի առաջ և սարսափ ազդելու նպատակով ետ ու առաջէր շրջում: Արեգակի ճառագայթները պսպղում էին նրանց սաղավարտների, պղնձի ու պողպատի վրա և սարսափելի տեսարան ներկայացնում:

Նայում էր Աշոտ Երկաթը այդ ահարկու գնդին, և խորին թախիծը պատում էր նրա սիրտը: Նայեց նա յուր հոգնած կտրիճներին, ապա նրանց միջից 200-ը միայնընտրելով, բլրից ցած իջավ և ապա, յուր հայացքը վեր ուղղելով, կանչեց.

— Տե՛ր, եթե ես եմ սխալը և այս երդմանը ստողը՝ կտրիր իմ գլուխը այդ հանցանքի համար, իսկ եթե իշխանն է սուտ, պատժիր նրան և փրկիր ինձ տարապարտմահվանից, որ նա թափում է ինձ վրա:

Եվ ապա այդ երդման թուղթը, որ կապել էին փեսան ու անները Ախայեան գյուղի մոտ, ամրացնելով խաչանիշ դրոշակի վրա, հրամայեց յուր կտրիճներին առաջխաղալ: Մրրիկը այնպիսի ուժգնությամբ չէր հարձակվի, ինչպես Աշոտ Երկաթը

հարձակվեց Սևադայի գնդերի վրա, և այնտեղ մի ակնթարթում տարածեցզարհուրելի սարսափ: Սևադայի գնդերը ցաք ու ցրիվ եղան, շարքերը խանգարվեցան և մոլորված ոչխարների նման սկսեցին ցրվել հովտի, մացառների ու լեռներիմեջ: Բայց Աշոտ Երկաթի կտրիճները հասնում էին նրանց ամեն տեղ և սրախողխող անում:

Ութ հազարից բաղկացած գունդը ցաք ու ցրիվ եղավ և կոտորվեցավ, մնացին միայն ինքը Սևադան և յուր որդի Գրիգորը, որոնց բռնելով բերեցին Աշոտ Երկաթի մոտ, որը սոսկալի կատաղության մեջ հրամայեց կուրացնել նրանց:

Ապա կրկին ետ խլելով Կայեան և մյուս բերդը, ազատեց թագուհուն և Հեղինեին, իսկ Գարդմանաց երկիրը նվաճելով յուր իշխանության տակ, վերադարձավ յուրերկիրը, իսկ Մարտիրոս հայրը քաշվեց դեպի Բյուրականի վանքը:

ԻԳ

Արևն արդեն թեքվել էր դեպի մուտքը, նրա թեք ճառագայթները շեշտակի ընկել էին Քոսակի աչքերին, որը դեռ անուշ խռմփացնում էր ծառի տակ: Երբեմն-երբեմնմիայն նա անգիտակցորեն ձեռքը դեպի դեմքն էր տանում և դեմքից քշում ճանճերին ու մոծակներին, որոնք անխնա կերպով ծծում էին նրա երեսի չորացած արյունը և նրան անհանգստություն պատճառում: Հանկարծ նա շանթահարի նման վեր թռավ և ձեռքը դեպի սևացած վիզը տարավ: Այնտեղից բզզալով թռավ մի ինչ-որ ճանճ և երբ ձեռքին նայեց՝ այնտեղից արյան նշան տեսավ, որ տհաճություն պատճառեց Քոսակին:

— Անպիտան իշամեղուներն ինձ հանգստություն չեն տալիս, կարծես քիչ էր երեսս ճանկռտվել, սրանք էլ պակասն են լրացնում, — մռմռաց նա և սկսեց ճմլկոտվել նբերանը լայն բանալով օրոշտալ:

— Է՛ ... այս ինչքա՛ն եմ քնել, — շարունակեց նա, — արևն արդեն շուտով մայր կմտնի, այնինչ այս անտեր փորիս մեջ ոչինչ չկա, սովածությունը ինձ արդեն սկսում էտանջել:

— Այստեղ մնալն անհնար է, կարելի է քաղցածությունից մեռնել, և իմ դիակը վայրենի գազանները քարշ կտան, ինչպես գուցե քարշ են տվել իշխանի դիակը:

Եվ Քոսակը, հետաքրքրվելով Ռշտունյաց իշխանի դիակի վիճակով, վեր կացավ և դեպի ձորը նայեց: Ձորի մեջ, դիակի վրա, բազմաթիվ ագռավներ նկատեց, որոնքագահաբար գիշատում էին այն: Մի դիվական ժպիտ խաղաց Քոսակի

վայրենի դեմքին, և նա քար վերցնելով գլորեց դեպի ձորը: Այդ ժամանակ ագռավները իրենցկոնչյունով թողին դիակը և սկսեցին պտտվել օդում: Նրանք, ինչպես երևում է, շատ դժգոհ մնացին, որ խանգարեցին իրենց անուշ ընթրիքը:

Քոսակը մի առժամանակ նայեց ագռավներին, դիակին և հետո տհաճությամբ շուռ տվեց երեսը: Ապա կատվի դյուրաշարժությամբ բարձրացավ ծառի վրա և սկսեցշրջակայքը դիտել: Շուրջը կատարյալ անշարժություն էր տիրում: Թռչունները միայն վերջին երգն էին երգում և սլանում դեպի իրենց բները, այնինչ արևը սկսում էրթաքնվել հեռու լեռների քամակին: Իրեն բոլորովին ապահով կարծելով՝ Քոսակը ցած իջավ ծառից և այժմ սկսեց ճանապարհ որոնել, որ դուրս գա փշի այդ անտառից, մեծ դժվարությամբ մացառներից բռնելով և անդնդի վրա կախ ընկնելով, քայլ առ քայլ առաջ էր գնում: Մի փոքր անզգուշություն, մի աննշան անհաջողություն, և նաանդունդը կգլորվեր, բայց նա ոչ մի բանի ուշք չէր դարձնում և երբ դուրս եկավ այդ դժվար ճանապարհից ու հասավ ապահով տեղ, ազատ շունչ քաշեց:

— Վերջապե՜ս, — ասաց նա, — այժմ ես ազատ եմ և իմ ճանապարհին արգելք չկա, բայց թե ո՞ւր պիտի գնամ… Բայց նախքան ուր գնալս վճռելը, ես քաղցած ուծարավ եմ… Մի փոքր էլ առաջ գնամ, տեսնեմ աստված ի՞նչ է հաջողում:

Նա կրկին սկսեց առաջ գնալ, թեև նրա ոտքերը հազիվ էին շարժվում, երբ անձրևից գոյացած, լճացած ջուր տեսավ յուր առաջը և առանց ուշք դարձնելու ջրիպղտորությանը, ագահությամբ խմեց ջուրը և ապա սկսեց երեսը լվանալ: Այդ բանը նրան մի փոքր զովացրեց և այժմ սկսեց յուր անելիքի վրա մտածել:

— Է՛հ, հայերից օգուտ չկա, — ասում էր նա, — աստծո ձեռքը պահպանում է Աշոտ Երկաթին և զուր դավաճանները նրա դեմ որոգայթներ են լարում: Ամեն տեղ իմտերերը ջարդվում են և ես մինչև օրս մի կտոր հացի տեր չդարձա, չնայած իմ այսքան ջանքերին, բայց մինչև ե՞րբ... Չէ՜ պետք է ձեռք վերցնել դրանցից, ինձ ոչ ԳագիկԱրծրունին մի բանի տեր դարձրեց և ոչ Աշոտ սպարապետը, իսկ Ռշտունյաց իշխանը հո սատանաների բաժին եղավ: Աստված դրանցից ձեռք է քաշել, ես ուրիշ բանպիտի գտնեմ, թե չէ սոված կմեռնեմ... Ա՛յ, արաբներին ծառայություն անելը վատ չէ, նրանց մոտ մարդ կարելի է դառնալ, ի՞նչ անենք, թե նրանք ինձ կստիպենհավատս ուրանալ: Ինչի՞ս է պետք ինձ հավատը, նրանք որ քրիստոնյա չեն, ինչո՞վ են մեզանից պակաս, մի՞թե նրանց թուրը մեր թրից ավելի կտրուկ չէ: Չէ, վճռած է, ես պիտի ներկայանամ արաբաց գլխավորին և իմ արյունակիցների արյունով ապահովեմ ինձ և հետո մի անկյուն քաշվեմ: Աշխարհս այդպես է, որ կողմը կշռի թաթրծանը է, այն

կողմը պիտի հակվել: Այս բոպեին մեր բոլոր իշխանները, թագավորից սկսած, վախենում են արաբներից և իրենց ունեցած-չունեցած ոսկիները նրանց ենուղարկում: Ես ուրեմն ի՞նչ հիմարություն եմ անում, որ նրանց մոտ ծառայության չեմ մտնում, քանի որ գիտեմ, որ նրանք լավ վարձատրում են այն հայերին, որոնք-մոռանում են Քրիստոսին և Մահմեդին պաշտում...

Այդպես մտածելով Քոսակը առաջ էր գնում, առանց նկատելու, որ օրը մթնում էր և երկիրն ընկղմվում խավարի մեջ: Բայց նա լավ ծանոթ էր ճանապարհներին, գիտերերկրի յուրաքանչյուր ծակուծուկը, ուստի գիշերից ամենևին չէր վախենում: Երբ մի փոքր էլ առաջ անցավ և դուրս եկավ սիզավետ կանաչներից, նրա առջև բացվեցմի խաչաձև ճանապարհ: Ճանապարհներից մեկը տանում էր դեպի Դվին քաղաքը մյուսը՝ դեպի Նախճվան, ուր այդ ժամանակ նստած էր Յուսուֆի փոխանորդը՝ արաբաց Նըսր ոստիկանը: Մյուս ճանապարհները տանում էին դեպի Երազգավորս, Վասպուրական և այլն: Քոսակը կանգ առավ ճանապարհի մեջ և խոր մտածողմարդու նման, ձեռքը դեպի ճակատը տարավ: Նա տատանվում էր, թե ո՞ր ճանապարհով գնա:

— Դեպի Վասպուրակա՞ն, Վա՞ն, Գագիկ Արծրունու՞ մոտ... չարժե, նա էլ պոչը կամաց-կամաց հավաքել է, յուր աղջկա փախուստից հետո խելքը վրան չէ և, բացիդրանից, ի՞նչ պիտի ասեմ, որ գնամ: Նա ինձ արհամարհելուց հետո ոչ մի պարգևի չի արժանացնի: Դեպի Դվի՞ն գնամ, ո՞ւմ մոտ: Աշոտ Սպարապետը հազիվ յուրգլուխն առավ փախավ և ո՞վ գիտի, թե հենց հիմա նա Աշոտ Երկաթի ձեռքին չէ, և մոխիր չի դարձել Դվինը... Չէ՛, պետք է այս ճանապարհը ընտրել, դեպի Նախճվան, ուր նստած է Նըսրը, այնտեղ պետք է Մահմեդին երկրպագություն տալ և, որոշ ժամանակից հետո, հանգիստ ապրել... — ասաց Քոսակը և հաստատ քայլերով դեպիՆախճվան տանող ճանապարհը գնաց: Քիչ հետո նա կորավ խորին մթության մեջ…

ԻԴ

Դվինի ճակատամարտից հետո Գագիկ Արծրունու սրտի մեջ սկսել էր մի ինչ-որ որդ շարժվել, որ գիշեր-ցերեկ հանգստություն չէր տալիս: Գագիկը զգում էր, որ յուրհոգվո մեջ գտնվող որդը այժմ մեծացել, ահռելի կերպարանք էր ստացել, իսկ այդ որդի շարժմունքին՝ յուր մեջ գոյություն ունեցող խղճին այժմ դժվար էր լռեցնելը...Գիշեր էր: Լիալուսինը փռել էր յուր դյութող լույսը, և նրա ճառագայթները պար էին բռնել Վանա լճի կոհակների հետ, որոնք ծփծփում էին մանրիկ ալիքներով ուկորչում հեռու ջրերի մեջ: Բնության մեջ տարածված էր մի այնպիսի

խաղաղություն, որ մարդկային հոգին լցնում էր ցնորքներով և նրան տանում դյութական այնաշխարհը, ուր գոյություն չունեին աշխարհային մանր ու ցած գործերը: Այդ ժամանակ Գագիկ Արծրունին, հրապուրված բնության այդպիսի հրաշալիքներից, իր շքեղպալատից դուրս եկավ և յուր մտասույզ հայացքը անգիտակցորեն նախ ձգեց լճի լայնատարած կապտության վրա, ուր լուսնի ճառագայթներն էին խաղում և ապահեռու, դեպի աղոտ մթության մեջ կորչող լեռները: Նրա հոգին լցված էր վշտերով և անհասկանալի հույզը շփոթում էր նրա արագ բարձրացող կուրծքը: Նրա կրծքիտակ, ուղիղ սրտի մեջ, շանթեր էին ցցված, այնտեղ վերքերը թարախ ու ժահր էին արտադրում, դեղ ու դարման էին պետք, վշտին սփոփանք էր պետք, բայց ո՛չ այսկար և ո՛չ այն, ու Գագիկ Արծրունին տանջվում էր և կսկծում...

— Հեղինե՛, հասիր ինձ, սփոփիր և բժշկիր վերքս, — կանչեց հանկարծ Գագիկը մի այնպիսի խղճալի, հուսահատ ձայնով, որ կարծես նրա թոքերը կտոր-կտոր եղան նպատառվեցավ սիրտը: Նրա կանչի հնչյունները կորան անհուն լռության մեջ և կարծես սուզվելով լճի անդնդի մեջ՝ պատասխան չստացան:

— Աղջի՛կս… ես զղջում եմ իմ արարքները, հասի՛ր ինձ, — կրկնեց Գագիկը, և Վասպուրականի հպարտ արքայի աչքերում երևեցան արտասուքներ, որոնք միվայրկյան միայն ցոլացին լուսնի ճառագայթների տակ և ապա ընկան գետին: Լալիս էր Գագիկ Արծրունին, լալիս էր, և այդ արտասուքները հանդարտեցնում էին նրահոգու վրդովմունքը և խաղաղեցնում այն սոսկալի ցավերը, որ առաջացնում էր նրա սրտի որդը, այդ արդար բողոքը, խղճի խայթը:

— Արի՛, աղջի՛կս, արի՛, ի՞նչը փախցրեց քեզ քո հորական տնից, սե՞րը, թե հորդ ամոթալի արարքը: Եթե սե՞րը, ես կշաղկապեմ քեզ քո սիրած մարդու հետ, իսկ եթեհորդ ամոթալի արարքը, նա արդեն զղջում է յուր արարքը և զզվում է յուր անցյալից... Արի՛, Հեղինե՛, արի՛, հորդ բազուկները քեզ են կարոտում, նրա զղջացող սիրտըքեզ է կանչում, — ասում էր նա և կրկին հառաչում:

— Ես հաշտվում եմ խղճիս հետ, դարձի՛ր, Հեղինե՛, դարձի՛ ր և ուրախացրու ինձ քո խելոք խոսքերով: Առանց քեզ դառն կլինի փակել աչքերս, առանց քո ժպիտի սևկլինի կյանքս: Փառասիրությունիցս հեռանում եմ լոկ քո սիրո պատճառով: Միայն քեզ, Հեղինե՛, ուզում եմ տեսնել, գեթ մի անգամ էլ զգվել, համբուրել և ապա մեռնել:

Խելագարի նման յուր պղտոր հայացքը դարձրած դեպի աղոտ հեռավորությունը, Գագիկը մտքով թռել էր դեպի Հեղինեն և կարծես խոսում էր հետը: Ծնողականսիրտը քաշում էր յուր դստեր կարոտը, և այդ կարոտը շատ խոր ու

զգացված էր, այնքան խոր, որ Գագիկ Արծրունուն երևում էր նազելի դստեր սիրուն դեմքը, որը յուրթախիծով լի աչքերը դարձրել էր դեպի հայրը: Ա՛խ, ինչքան համեստ, սուրբ և անարատ էր յուր աղջկա հայացքը: Բայց ինչքա՛ն վշտահար արտահայտություն ուներնա: Տանջված, մաշված և դժգույն էր Հեղինեի դեմքը, այն չէր, ինչ որ առաջ, երբ կուսական անհոգ և անմեղ ժպիտը փայլում էր նրա կայտառ երեսին:

— Ի՞նչը վրդովեց քո անմեղ սիրտը, ո՞վ կորցրեց քո ծաղկափթիթ ժպիտը, խավարեցրեց ալ վարդ կտրած այտերդ: Ո՞ր անգութ ձեռքն է նկարել վշտի նշանները քոանմեղ ճակատին: Հեղինե՛, ամբողջ Վասպուրականը կծախեմ և քո ոտքերի տակ կդնեմ, որ դու դարձյալ ժպտաս այնպես, ինչպես առաջ, ոստոստաս անուշիկտատրակի նման և երջանիկ լինի՛ս... Իսկ դու ո՞ւր ես, ո՞ւր, հեռու ինձանից, չարանենգ բախտին խաղալիք, քեզ անհուն սիրով սիրող ծնողիցդ հեռու:

Գագիկը մտքերի մեջ այնքան խորասուզված էր, որ ոչ մի բան ո՛չ տեսնում, ո՛չ զգում էր. նա ամբողջովին ամփոփված էր յուր աղջկա հիշողություններով, որոնք սուրսլաքի նման ծակում էին նրա սիրտը: Նա չէր զգում մինչև անգամ, թե ինչպես կամաց-կամաց ցուրտը սաստկանում էր և սառը քամին շոյում նրա բորբոքված սիրտը:Վերջապես ցուրտը թափանցեց մինչև ոսկորները, և նա ցնցվեց, զգաց իրողությունը ու խոր մտքերի մեջ ընկղմված դարձավ պալատ: Մյուս օրն ևեթ նա նամակուղարկեց Հեղինեին և հայտնեց յուր սիրտը, յուր հոգին, այնուհետև Աղթամար կղզում սկսեց կառուցել մի շքեղ և հոյակապ եկեղեցի, հանուն Սրբո Խաչին (822 թ.), ուրինքը մոռացության տալով յուր վիշտը, անձամբ հսկում էր եկեղեցու շինությանը:

ԻԵ

Մի ձիավոր, պարզ գյուղական հագուստով, թռչում էր լայն ճանապարհով Վասպուրականից դեպի Այրարատյան երկիրը: Քափ ու քրտինքի մեջ կորել էր նրա ձին, բայց նա անխնա կրկին մտրակում էր ձիուն և շտապում առաջ: Արդեն երեկոյացել էր, և մութը սկսել էր պատել. ուստի նա աշխատում էր շուտ մի իջևանատեղհասնել, հանգստանալ և առավոտյան կրկին շարունակել ճանապարհը:

— Մի քի՛չ էլ առաջ, ի՛մ ձի, մի փո՛քր էլ եռանդ, և մենք կհանգստանանք, ապա վաղը երեկոյան տեղ կհասնենք, նամակը Հեղինեին կհանձնենք և կրկին դեպիՎասպուրական: Այդ ծառայության համար Գագիկ Արծրունին ինձ լավ կվարձատրի և այն ժամանակ ես քեզ նուշ ու չամիչ կուտեցնեմ, և դու կմոռանաս

քոհոգնածությունը,— ասում էր ճանապարհորդը, շոյում յուր ձիուն և ապա ձեռքը տանելով դեպի ծոցը, շոշափում էր նամակը, որ հավաստիանա նրա այնտեղ լինելը:

— Գիտե՞ս, իմ ձի՛, ի՞նչ ահագին վարձատրություն խոստացավ Գագիկ Արծրունին, եթե Հեղինեից ուրախ պատասխան բերեմ նրան... Դրանով ամբողջապեսկապահովվեմ, և իմ ընտանիքը կազատվի սովածությունից, էհ, վերջապես ես էլ եմ մի բանի տեր դառնում, մարդամեջ ընկնում, թե չէ օր չէ, որ ես քաշում եմ: Այս մերիշխաններն էլ հո ոտնատակ տվին խեղճ ժողովրդին, քամեցին նրա արյունը... Բայց մեր իշխանը՝ Գագիկ Արծրունին, շատ լավ մարդ է, հավատա, որ լավ մարդ է, խելոք, հեռատես, ի՞նչ անենք, որ առաջ մի փոքր գժություններ արավ և դրա համար էլ աստված պատժեց, աղջիկը նրանից փախավ, որի կարոտից հալումաշ էլինում, իսկ հիմա փոշմանել է և վանքեր է շինում յուր մեղքը քավելու: Է՛հ, աստված բարի տա նրան, — ասում է ճանապարհորդը յուր ձիու հետ խոսելով և նշտապեցնելով նրան:

Այդ ժամանակ արևը արդեն թաքնվել էր, ճանապարհին ոչ մի մարդ չէր երևում, այնինչ բնության մեջ թռչուններն ու բզեզները սկսել էին իրենց երեկոյանճռվողյունն ու աղմուկը: Արտույտն յուր երգն էր երգում նստած նորաբույս արտերի մեջ, դեղձանիկները սկսել էին իրենց դայլայլիկը իսկ ճպուռն ու բզեզները՝ իրենցչափավոր ծղրտոցը:

Ճանապարհորդը բավականին տեղ առաջ գնաց, արդեն մթնել էր, երբ ճանապարհի ծայրին մի հետիոտն մարդ նկատեց, որ գլուխը կախ ձգած գնում էր:Ճանապարհորդը ձին արագացրեց նրան հասնելու: Հետիոտն մարդը, ձիու դոփյունները լսելով, կանգ առավ: Երբ ձիավորը մոտեցավ, խորին ուշադրությամբ սկսեցզննել ճանապարհորդին:

— Բարև՛, բարեկա՛մ, — ասաց ձիավորը և կանգնեցրեց ձիուն:

— Բարև՛, — պատասխանեց անծանոթը:

— Որտեղի՞ց ես գալիս:

— Վասպուրականից, շտապում եմ գործով, ուզում եմ այս գիշեր հանգստանալ, որ վաղը կարողանամ տեղ հասնել և իմ տիրոջ հանձնարարությունը կատարել:

— Բայց ո՞վ է քո տերը:

— Ո՞վ է… մի՞թե չգիտես ո՞վ է Վասպուրականի տերն ու թագավորը՝ Գագիկ Արծրունին:

— Որտեղից իմանամ, ինքս մի ռամիկ մարդ, մեր իշխաններից ի՞նչ տեղեկություն ունենամ:

— Բայց մի՞թե դու հայ չես, որտեղացի՞ ես, որ չգիտես, թե ինչ է կատարվում Հայաստանում:

— Աստված վկա, ոչինչ չգիտեմ, ես էլ հեռու երկրից եմ գալիս և գնում եմ մշակության: Այսօր այնքան ման եմ եկել, որ հազիվ եմ ոտքերս շարժում: Լավ է որ այստեղմոտիկ գյուղ կա և այնտեղ կհանգստանամ:

— Այդ շատ լավ եղավ, ուրեմն միասին կհանգստանանք, — ասաց ձիավոր մարդը և իջնելով ձիուց, սանձը կուռը ձգեց, ու նրանք առաջ գնացին: Հեռու լեռանստորոտին երևում էր գյուղի ծուխը, կարճ ժամանակից հետո նրանք գյուղ կհասնեն:

— Ի՞նչ է անունդ, բարեկա՛մ, — հարցրեց ձիավորը:

— Քոսա՛կ, պատասխանեց մեզ ծանոթ Քոսակը և իսկույն ևեթ փոշմանեց, որ յուր իսկական անունը հայտնեց, բայց նկատելով, որ յուր ուղեկցից չճանաչվեց, սիրտառավ և սկսեց մանրամասն հարցուփորձ անել, թե նա ո՞ւր է գնում և ինչու՞: Ձիավորը չէր ուզում հայտնել իսկությունը և խոսքերը ծռմռում էր, բայց Քոսակը թափեցյուր բոլոր ճարտարությունը և հաջողվեցավ իմանալ:

— Նամակ ունիմ Գագիկ Արծրունուց, — վերջապես ասաց նա:

— Ո՞ւմ վրա, — հարցրեց հետաքրքրությամբ Քոսակը, և նրա աչքերը փայլեցին մի տեսակ հրեշային փայլով:

— Իր աղջկա՝ Հեղինեի վրա: Մեր իշխանը կանչում է Հեղինեին: Օ՛, եթե գա Հեղինեն, այն ժամանակ ես բախտավոր կլինեմ, նա ինձ առատ կվարձատրե, — ասացձիավորը և գոհունակությամբ սկսեց բեղերը սրել: Բայց Քոսակը այլևս ուշք չէր դարձնում նրա խոսքերին: Նա արդեն հասկացավ բանի էությունը, և հրեշավոր միտքըսկսեց ծնունդ առնել նրա գլխում:

— Գիտե՞ս, բարեկա՛մ, ինչքա՛ն բախտավոր կլինեմ, եթե Հեղինեն համաձայնի վերադառնալ, օ՛, ինձ նման բախտավոր ոչ ոք չի լինի, վերջապես կազատվեմանպիտան չքավորությունից:

— Իհարկե, իհարկե, գիտեմ կցկտուր բառերով պատասխանեց Քոսակը:

— Դու ի՞նչ գիտես, հը՞...— հանկարծ հարց առաջարկեց ձիավորը և շեշտակի նայեց Քոսակի աչքերին:

Քոսակը դողաց. նոր հասկացավ, որ յուր մտքի հետ ընկնելով կարող էր մատնել իրեն, ուստի ժողովելով յուր սառնասրտությունը, ասաց.

— Այն գիտեմ, որ դու բախտավոր կլինես, որ Գագիկ Արծրունին լավ կվարձատրի քեզ, եթե աղջիկը համաձայնի գալ:

— Իսկ եթե չհամաձայնի՞...

— Ինչպե՞ս չի համաձայնի, Հեղինեն անպատճառ կգա: Նրանք մտան գյուղ և մի թեթև ընթրելուց հետո Գագիկ Արծրունու մարդը ուզում էր քնել, բայց Քոսակը գինունզոռ էր տալիս և չէր թույլ տալիս քնելու: Նա խոսքը միշտ նամակի մասին էր գցում և աշխատում էր իմանալ, թե ո՞ւր է պահված այդ նամակը:

— Ո՞ւր է այդ նամակը, — հարցրեց Քոսակը, երբ տեսավ, որ գինին յուր բարեկամի գլուխն ընկավ:

— Ահա այստեղ, ծոցումս, չե՞ս հավատում:

— Ինչպես չեմ հավատում, բայց ես շատ հետաքրքրվում եմ իմանալ, թե ինչպես են գրում իշխանները:

— Դու կարդալ գիտե՞ս:

— Ո՛չ, ես կարդալ որտեղի՞ց կիմանամ:

— Հը՛մ, եթե գիտենայիր, կզարմանայիր, թե ինչ մարգարիտի նման է մեր իշխանի գիրը:

Քոսակը նորից լցրեց կավե ամանները գինով և երբ դատարկեցին, դարձավ դեպի ընկերը:

— Ցույց տուր տեսնենք, որ ես էլ իմանամ, թե աշխարհիս երեսին ես էլ եմ ապրում ու տեսել եմ իշխանների գիրը:

— Ահա, տե՛ս, — ասաց Քոսակի ընկերը և ծոցը երկար քրքրելով հանեց շորի մեջ փաթաթած մագաղաթի կտորը և մեկնեց դեպի նա:

Քոսակի աչքերից կայծեր թռան, նա ճանաչեց Գագիկ Արծրունու գիրը և ետ դարձնելով, ասաց.

— Ճիշտ որ մարգարտաշար է:

Քիչ հետո յուր ընկերը խոր քնի մեջ ընկղմվեց, այնինչ Քոսակը արթուն էր և երբ լսեց նրա խռխռոցը, զգուշությամբ նրա ծոցից հանեց Գագիկ Արծրունու նամակը նհեծնելով յուր ընկերոջ ձին, կես-գիշերին սլացավ առաջ...

Պարզ, անամպ երկնակամարի վրա զվարթությամբ բարձրանում էր արևը և յուր կենարար ճառագայթները սփռում չորս կողմ: Հուսահատ, աղքատացած և ոտնատակտված գյուղացին դեպի դաշտն էր շտապում, խանութպանը՝ դեպի խանութ, վաճառականը յուր առևտուրն էր սկսում, երբ հանկարծ մի չարագուշակ դեպք սառցրեցամենքին և մի տեսակ ահավոր դրության մեջ ձգեց նրանց: Օրվա կեսին, երբ ամեն մարդը տաքացած յուր գործն էր շտապում վերջացնելու, լույսը սկսեց հետզհետեանհետանալ և նրա տեղ տիրեց խորին, անթափանցելի խավարը: Աներևույթ զորությունը ծածկել էր արևի երեսը, և նրա փոխարեն երկնքի անհուն տարածությանվրա փայլփլում էին աստղերը և հուսո միայն թույլ նշան թողնում սարսափահար ամբոխի սրտում: Մութ խավարի մեջ հանկարծակի լսվեցան սիրտ պատռողհառաչանքներ և զարհուրելի հեծկլտանք: Ամբոխը չոքել էր, ձեռքերը տարածել դեպի վեր, դեպի անմահը և աղոթք էր անում: Ամբոխը աղոթում էր անկեղծ, անարատսրտով և խնդրում, որ տերը հեռացնե հայոց ազգից այն պատուհասը, ինչ որ գուշակում էր արևի խավարումը: Նա հավատում էր, որ երկինքը արևի խավարում ովգուժում է ազգին հասանելիք վիշտը և նա, առանց այդ էլ վշտի և տանջանքի մեջ լինելով, սարսափում էր նոր գալիք չարիքից:

Բայց աներևույթ զորությունը երկար չպահեց արևի երեսը և խավարը հետզհետե նահանջեց, և նրա տեղ կրկին բացվեցավ պայծառ լույսը, այնինչ ամբոխի սրտի մեջմնաց մի անորոշ, մթին կասկած գալիք չարիքի մասին:

Եվ ամբոխի կասկածը զուր չանցավ: Նախճվանում նստող արաբաց Ներսը ոստիկանը հեղեղի նման յուր գնդերը առաջ էր քշում դեպի Հայաստան և միանգամայնուզում էր կուլ տալ նրան և իսպառ ոչնչացնել առանց այն էլ քայքայված ազգը: Նա ուզում էր բռնել ազգի երկու պետերին՝ հոգևոր և մարմնավոր, ոչնչացնել դրանց նապա ամբողջ Հայաստանը յուր ձեռքը ձգել: Լքված և հուսահատված էին երկու պետերն էլ: Աշոտ Երկաթն արդեն հուսահատվել էր դավադրություններից նապստամբություններից, իսկ Հովհաննես կաթողիկոսը շվարել էր, թե որտեղ անցկացնի յուր կյանքի վերջին մնացորդը, որ արաբների ձեռքը չընկնի:

Աշոտ Երկաթը աներոջ դեմ այնպիսի փայլուն հաղթությունը դեռ նոր էր տարել, երբ լսում է, որ Շամշադիո ամրոցի վերակացու Վասակ Գնթունին ապստամբել է: Նայուր կտրիճներով կայծակի արագությամբ հասնում է այդտեղ, ջարդում նրանց, հնազանդեցնում գուգարներին և ուտիացիներին ու դառնում Կոտայք գավառը: Հենցայդ ժամանակ նորից ապստամբում է Ուտյաց վերակացու Ցլիկ Ամրամը՝ յուր ստորադրյալ իշխաններով: Աշոտ Երկաթը շտապում է Ուտիք, իջևանում Կուր գետիափին, անտառների մեջ, բայց տեսնելով, որ անտառներում կռվել անհնար է և ցանկանալով զորքին հանգստություն տալ, մտնում է մի անմարդաբնակ ամրոց, ուրշրջապատվում է Ամրամի զորքերով: Աշոտ Երկաթը այդպիսով յուր զորքով բանտարկվում է այդտեղ, ուր ո՛չ ջուր կար և ո՛չ պաշար: Չկար դուրս գալու անցք, բացինեղ կիրճից, որովհետև ամրոցի շուրջը անդունդներ էին՝ մացառախիտ անտառներով պատած: Նեղում են Աշոտ Երկաթի զորքին, որ դավաճանելով թագավորին՝ խոստանում է կապել Աշոտ Երկաթին և հանձնել թշնամուն: Աշոտ Երկաթը լսում է այդ և զարհուրում: Գիշերով, կայծակի արագությամբ ճեղքելով թշնամյաց բանակը, անցնում է և գնում Կաքավաբերդ, այստեղից էլ, հարյուր մարդ վերցրած՝ գնում Սևան կղզին: Այդ ժամանակ անտեր է մնում ամբողջ Հայաստանը, և Նըսր ոստիկանը, օգտվելով հանգամանքից, նախ ուզում է բռնել Հովհաննես կաթողիկոսին և ապա՝ Աշոտ Երկաթին:

Այդ միջոցին Հովհաննես կաթողիկոսը գտնվում էր Բյուրական ամրոցում, որ իրեն էր պատկանում և ուր շինել էր կուսակրոնների վանք և հոյակապ եկեղեցի՝ կոփածո քարերով: Նըսր ոստիկանի զնդերը արդեն մոտենում էին Բյուրականին: Հեղեղը արդեն ջարդում, ոչնչացնում էր անցած տեղերը և այժմ միանգամից ուզումէր լափել Բյուրականը և դրա հետ միասին՝ հայոց հոգևոր գլխին, երբ Հովհաննես կաթողիկոսը յուր ընծաներով շտապում է մեղմել Նըսրի բարկությունը, բայց նամիայն առ երես ընդունելով նրա ընծաները, քիչ ժամանակից հետո դրժում է յուր խոսքը և յուր խոսքերը կրկին առաջ քաշում դեպի Բյուրական ամրոցը: Հովհաննեսկաթողիկոսը լսում է այդ և շուտով փախուստ տալիս այդտեղից դեպի Բագարան, Աշոտ Բռնավորի մոտ:

ԻԷ

Գիշերը ցերեկ էր դառնում, ցերեկը՝ գիշեր և օրը վազում օրի ետևից, բայց Հեղինեի կյանքի մեջ ոչ մի փոփոխություն չէր լինում: Օրավուր նա հալվում էր, մաշվում ևնրա սիրուն աչքերի շուրջը կապույտ շրջանակներ կազմվում: Տաղտկալից էր նրա կյանքը: Մատաղ կյանքը թառամում էր դառն և սիրտ

խոցոտող մտքերով, և նաանհույս հայացքը չորս կողմն էր դարձնում, մի հույս էր փնտրում, բայց ոչ մի կողմից լուր չէր ստանում: Հեռու էր յուր հայրը, որի կարոտը օրավուր մաշում էր նրան, հեռու էր նաև Գևորգ իշխանը, որից ո՛չ մի լուր չուներ, թե ո՞ւր է նա և ի՞նչ է շինում: Եվ Հեղինեն, միայնակ փակվելով յուր սենյակում, մտքերի ծովն էր ընկնում, որոնքանխնա կրծում էին մատաղ սիրտը և գերեզմանին մոտեցնում: Մի օր էլ Հեղինեն փակված յուր սենյակում արտասուք էր թափում, երբ աղախինը ներս եկավ նհայտնեց, որ ինչ-որ մի մարդ ուզում է ներկայանալ իրեն:

Հեղինեն իսկույն սրբեց արտասուքները և, ուղղելով ցրված մազերը, հարցրեց.

— Ո՞վ է այդ մարդը:

— Չգիտեմ, իշխանուհի՛, նա սարսափելի դեմքով մարդ է և ուզում է քեզ հետ առանձին խոսել:

— Որտեղի՞ց է նա, չհարցրի՞ր:

— Վասպուրականից:

Հեղինեի սիրտը տրոփեց: Նա ձեռքը տարավ դեպի կուրծքը, կարծես այնտեղով անցավ ինչ-որ անհայտ մի բան:

— Կանչեցե՛ք նրան, — հարամայեց Հեղինեն վճռական ձայնով:

Աղախինը դուրս գնաց, և երբ ներս մտավ մարդը, Հեղինեն քարացած կանգ առավ և ապուշի նման սկսեց նայել: Նրա առջև կանգնած էր Քոսակը, որի դեմքը ծանոթ էրիրեն:

— Ի՞նչ բան ունես, — հարցրեց սառն կերպով Հեղինեն՝ մի փոքր լռությունից հետո:

— Իշխանուհի՛, մի բարի համբավ ունիմ հաղորդելու քեզ, հույս ունիմ, կվարձատրես ինձ ի տրիտուր այն նեղության, որ ես կրեցի ճանապարհին:

— Ասա՛, ի՞նչ ուրախ լուր, վաղուց է, որ իմ սիրտը ուրախ լուրեր չի ճաշակել:

— Իշխանուհի՛, ինձ ուղարկեց հայրդ, Վասպուրականի թագավորը, նա կարոտ է քո տեսությանը և ոոպե առ ոոպե սպասում է քեզ:

— Հա՞յրս... ինձ կա՞ոոտ է... Մի՞թե նա մոռացավ, որ ես զենքը ձեռքիս իրեն դեմ էի գնում: Մի՞թե ես չէի, որ փախուստ տվի նրանից, և նա կատաղի կռիվ մղեց

իմպատճառով և ամենուրեք սկսեց հալածել ինձ: Այժմ ի՞նչ է ուզում ինձանից... Եթե ուզում է վերջ դնել կյանքիս, նա առանց այն էլ մոտ է յուր օրհասին...

— Իշխանուհի՛, դու ինձ չհասկացար: Հայրդ ամեն բան մոռացել է և այժմ միայն քո կարոտն է քաշում: Քեզ ուզում է գրկել, համբուրել և ոչ թե կախաղան բարձրացնել:

Հեղինեն թափանցող հայացքով նայեց Քոսակին: Ըստ երևույթին չէր հավատում նրան: Քոսակը այդ հասկանում էր, բայց ուզում էր դեռ փորձել:

— Մի՞թե ինձ չես հավատում, իշխանուհի: Ինչո՞ւ դու ոտքի տակ ես տալիս քո հորը, որը բազուկները կարկառում է քեզ գրկելու և յուր երջանկությունը միայն քո մեջ էգտնում:

— Ո՛չ, ես չեմ հավատում, — սուր կերպով պատասխանեց Հեղինեն:

— Ահա՛ ապացույցը, — պատասխանեց Քոսակը և մեկնեց դեպի Հեղինեն մագաղաթի կտորը:

Հեղինեն շտապով առավ նամակը, նայեց գրին, և նրա սիրտը սկսեց դողդոդալ: Նա ճանաչեց հոր գիրը, որին կեղծել ոչ ոք չէր կարող, և նրա աչքերը մթնեցան:Սրտատրոփ սկսեց կարդալ նամակը, և աչքերը լցվեցան արտասուքներով: Նա մոռացավ Քոսակին, որը աչքը չէր հեռացնում նրանից և մտքով գնաց հեռու՝ դեպիՎասպուրական, ուր հայրը արցունքներ էր թափում յուր համար: «Թանկագի՛ն Հեղինե, — գրած էր նամակի մեջ, — երկինքը վկա եմ կանչում, որ առանց քեզ իմկյանքը մաշվում է և գերեզմանին մոտենում:

Հեղինե՛, հասիր քո հոր արցունքները ցամաքեցնելու. նրա սիրտը քեզ է կանչում, քո տեսությանն է կարոտում: Ձղջում եմ արարքներս և մեղա գալիս քո անարատանվան առաջ, միայն թե նամակս ստանալուն պես շտապես դեպի ինձ: Լսո՞ւմ ես... քո հայրը քեզ մոտ մեղա է գալիս: Դու քո թույլ տեղով հաղթեցիր ինձ: Հասիր, Հեղինե՛, հասիր, իմ տարածված բազուկները սպասում են քեզ գրկելու...»:

Հեղինեն վերջացրեց նամակի ընթերցումը, դարձյալ սկսեց կարդալ, դարձյալ վերջացրեց: Ամեն անգամ նա մոտեցնում էր նամակը շրթունքներին և համբույրներովծածկում այն: Խե՜ղճ. նա կարոտել էր հորը:

— Վերջապե՜ս, — ասաց նա և խոր հոգոց հանեց, — վերջապե՜ս, — կրկնեց նա, — իմ հայրը այլևս դավաճան չէ, նա թողեց այդ սև դրոշմը, ետ կանգնեցիխայտառակության ճանապարհից, բայց թե ինչո՞վ պիտի սրբի յուր

կատարած նախատինքի դրոշմը... Ո՛հ, եթե ամբողջ Վասպուրականը զոհի ազգին, դարձյալ չիազատվի... Բայց մի՞թե բավական չէ, երբ նա զղջում է յուր արարքները և ես ի՞նչ իրավունք ունեմ այժմ հակառակելու նրան և դառնացնելու նրա առանց այն էլ դառնօրերը... Օ՛, հայր, ես կարոտում եմ քեզ, ես ուզում եմ թռչել դեպի քեզ, գրկել քեզ, — ասաց Հեղինեն ինքն իրեն ու մոտենալով պատուհանին, թանձր վարագույրներըետ քաշեց և նայեց դուրս: Թարմ օդը շոյեց նրա բորբոքված դեմքը և զովացրեց նրան: Փայլուն, պսպղուն աչքերով Հեղինեն դեպի երկինք նայեց, ուր այդ ժամանակկախված էին մի քանի սպառնալից ամպեր, որոնք պղտորեցին նրա սիրտը, և նրա մտքով անցավ Գևորգ իշխանը:

— Իսկ Գևորգ իշխա՞նը, — ասաց ինքն իրեն, — ո՛հ, ես նրան էլ չեմ կարող թողնել և առանց նրա չեմ կարող մնալ: Ո՞ւր է նա արդյոք: Մոռացա՞վ ինձ, թե այժմ նրահոգին միայն շրջում է երկրի վրա և անիծում ինձ... Ո՛հ, իշխա՛ն, դուրս բեր ինձ այս անհայտությունից և հասիր ինձ: Հասիր, որ թռչենք դեպի Վասպուրական, ուր իմհայրը՝ Վասպուրականի գոռոզ թագավորը, կօրհնի մեր միությունը...

Այդ միջոցին, որ Քոսակը համբերությամբ նայում էր, տեսնելով, որ Հեղինեն մոռացավ իրեն, սկսեց դիտմամբ հազալ, որ յուր վրա դարձնի Հեղինեի ուշադրությունը:Այդ բանը հաջողվեց նրան: Հեղինեն արցունքոտ աչքերով դեպի Քոսակը նայեց և ասաց.

— Ա՛խ, ես քեզ բոլորովին մոռացա: Քո բերած լուրը այնքա՛ն անսպասելի էր, որ ինձ վրա խոր տպավորություն գործեց:

— Շատ ուրախ եմ, հույս ունիմ, որ զոհ մնացիր ինձանից:

— Առ քո վարձատրության համար, — ասաց Հեղինեն՝ մի քսակ տալով Քոսակին: — Գագիկ Արծրունին ավելի լավ կվարձատրի: Հայտնիր հորս, որ ես պատրաստ եմնրա կամքը կատարելու: — Քոսակը ագահությամբ առավ քսակը և համբուրեց աղջկա փեշերը:

— Բայց, իշխանուհի՛, շատ էլ մի՛ շտապիր, այժմ վտանգավոր է ճանապարհորդելը: Մի՞թե չգիտես, թե ինչ խառն ժամանակ է:

— Ի՞նչպես, — հարցրեց զարմացած Հեղինեն:

— Ապստամբները և արաբները ճանապարհներս բռնել են, ես հազիվ ազատվեցա նրանց ճանկերից: Ճանապարհին դիակներ էին փռված: Ես սարսափեցի, երբ տեսաԳևորգ իշխ...

— Ի՞նչ Գևորգ իշխանի, ասա՛, նա կենդանի՞ է, թե մեռած, — խեղդված ձայնով հարցրեց Հեղինեն և բռնեց յուր սիրտը:

— Նրա նեխված և այլանդակված դիակը քաշկռտում էին գազանները, — հարվածեց Քոսակը դիվական հրճվանքով: Բայց այդ միջոցին Հեղինեն մի ճիչ արձակեց կանշունչ գետնին փռվեցավ:

Քոսակը դուրս թռավ սենյակից և ինքն իրեն մտմտաց.

— Ա՛յս Գևորգ իշխանի վրեժը, որ ուզում էր ինձ փշերի մեջ բռնել: Այժմ ինձ հարկավոր է դեպի Ներսր ոստիկանը շտապել...

ԻԸ

Արագած լեռն ճակատը վեր պարզած, խորին մտմտունքի մեջ ընկղմված, նայում էր դեպի յուր ավագ եղբայրը՝ Մեծ Մասիսը և խոր հառաչում: Ճակատը դեռ ձյունովէր ծածկված. իսկ փեշերը, որ ընդարձակ կերպով փռել էր չորս կողմը, արդեն ծածկվել էին քնքուշ կանաչներով և երփներանգ ծաղիկներով: Յուր չորս կողմը սփռումէին Շիրակա և Փամբակա դաշտավայրերը, իսկ փեշերի վրայից վազում կարկաչահոս աղբյուրները և վճիտ ջրերի «Բյուր ակունքը»: Ուրախ էր շուրջը, ուրախ էրբնությունը, այնինչ ինքը՝ տխուր, հուսահատ: Մի մթին ամպ պատել էր նրա զվարթ դեմքը և կորցրել ուրախ ժպիտը:

Արագած լեռան հարավ-արևելյան փեշերին, մի թմբի գլխին, որի տակ քչքչալով վազում էր մի առատ առվակ, փայլում էին Բյուրական ամրոցի պարիսպները, որտեղից լսվում էր եկեղեցու կոչնակի մելամաղձոտ հնչյունները, որ տարածվելով չորս կողմ, գյուղականներին դեպի ժամ էին հրավիրում: Եկեղեցին լի էրաղոթողներով: Սրբազան պատկերների առաջ ծխում էին մոմերն ու խունկը, իսկ հոգևորականների քաղցր ու ներդաշնակ երգեցողությունը դյութում էր ժողովրդիսիրտը:

Այնտեղ էր Սահակ սրբազանը, այնտեղ էր և Մարտիրոս վանահայրը, որոնց դեմքի վրա թեև երևում էր մի տեսակ թախիծ, մի անորոշ երկյուղի արտահայտությունբայց նրանք ամեն կերպ աշխատում էին մեռցնել իրենց մեջ հոգեկան այդ բուռն վրդովմունքը:

Սկսվեց քաղցրանվագ «Տերողորմյան», և ամենքը չոքեցին, Մարտիրոս վանահայրը բարձրացրեց յուր զիլ, բայց դողդոջուն ձայնը և երբ արտասանեց.

Եկ, տե՛ր Հիսուս, ողորմյա՛ մեզ,
Ողորմության ժամ է արդեն,
Եկ, Բարեխնա՛մ, ա՛յց արա մեզ,
Այցելության ժամ է արդեն:

Նա փղձկաց, արտասուքները դուրս ցոլացին նրա աչքերից և նա այլևս չկարողացավ շարունակել խոսքերը:

Զգաց ժողովուրդն էլ այդ խոսքերի ազդեցությունը, սուր սլաքի նման ցցվեցան նրա սրտի մեջ, և նա էլ, ինչպես մի հոգի և մի մարմին, սկսեց լաց լինել, հեծկլտալայնպես, ինչպես լաց էր լինում «յուր սուրբը»: Ժամասածությունը նոր էր վերջացել, երբ Բյուրականի հորիզոնի վրա երևացին փոշու ամպեր, իսկ քիչ հետո՝ Նըսրոստիկանի արաբաց հրոսակները: Վայրենի աղաղակներով, դիվական հրճվանքով և թմբուկներ ածելով կանգ առան արաբները Բյուրականի պարիսպների տակ ապինդ օղակով շրջապատեցին այն: Մյուս օրն ևեթ նրանք դևերի նման հարձակվեցան Բյուրականի պարիսպների վրա, որ նրան մի ակնթարթում ոչնչացնեն և ջնջենաշխարհի երեսից: Սակայն փոքրաթիվ հայ զինվորների անձնվեր քաջությունը ետ մղեց նրանց պարիսպներից և թույլ չտվեց ներս խուժել ամրոց: Արաբներըզարմացան նրանց դիմադրությունից, սպառնալիքներ ու հայհոյանքներ ուղարկեցին դեպի ամրոցի կտրիճները, պահանջելով, որ նրանք անձնատուր լինեն: ԲայցԲյուրականի կտրիճները արհամարհանքով նայեցին արաբների սպառնալիքներին: Նրանց առաջ կանգնած էր իրենց սուրբը՝ Մարտիրոս հայրը՝ մի կողմն ունենալովՍահակ սրբազանին, որը յուր եպիսկոպոսական վեղարը մի կողմ ձգած, գլխին դրել էր փայլուն սաղավարտ, իսկ ինքը կորել էր զենք ու զրահի մեջ: Նրա դեմքից կորելէր յուր հանաքչի ժպիտը, և նա ահռելի կերպարանք էր առել: Հոգևորական անձինք, բացի աղոթելուց, զենք էին առել և միացել իրենց ժողովրդին նրանց հետապրելու և նրանց հետ մեռնելու:

Արաբները կատաղաբար նորից հարձակվեցան, սանդուղքներից ուզեցան դևերի նման վեր մագլցել պատերի վրա, բայց նրանք նորից ետ մղվեցան: Նրանքպարիսպների վրա տեսան ծերունի վանականին, որ խրախուսում էր հայ կտրիճներին և դրանով էլ չբավականանալով, պոկում էր ահագին ժայռի կտորներ ուշպրտում իրենց վրա: Ո՞վ էր այդ հոգևորականը, որ այդպես ազդել էր հայերի վրա և սարսափի մեջ ձգել արաբներին, որոնք ամեն անգամ հարձակվելիս ետ էինմղվում:

— Ո՜հ, ես նրան ոսկով կշրջապատեմ, ով այդ ծերունու գլուխը ինձ կբերի, — կանչում էր կատաղած Նըսրը և հնարքներ որոնում Բյուրականը ձեռք

ձգելու: Նակատաղած և վրդովված ման էր գալիս յուր վրանի մոտ, երբ նրա առջև հանկարծ կանգնեց մի մարդ: Նըսր ոստիկանը բարկացած սուրը պատյանից հանեց և ուզեցայդ հանդուգն մարդու գլուխը թռցնել, երբ սա չոքեց և ասաց.

— Թող ալլահը պահե մեծ ամիրապետին, ես ուզում եմ մի ծառայություն անել իմ տիրոջը:

— Ի՞նչ ծառայություն, գյավո՛ւր, մի՞թե դուք կարող եք ծառայություն անել ուղղափառներին:

— Թող Մարգարեն պահի իմ տիրոջը, բայց վաղը, մինչև արևի մուտքը, Բյուրականը մոխիր կդառնա և ծերունի վանականի գլուխը քո ոտքերի տակ կլինի:

Նըսր ոստիկանին դուր եկան այդ մարդու խոսքերը, և նա, սուրը պատյանի մեջ դնելով, ասաց.

— Ասա, գյավո՛ւր, ո՞վ է այդ վանականը և ինչպե՞ս կարող եմ առնել ամրոցը, այն ժամանակ դու առատապես կվարձատրվես ինձանից:

— Մի՞թե չի ճանաչում իմ տերը այդ վանականին, որ միանալով Աշոտ Երկաթի հետ, ամբողջ Հայաստանը տակնուվրա արավ և ուղղափառներին հալածեց: Դրան «սպիտակ դև» են ասում, իսկ հայ ժողովրդականք «սուրբ» են անվանում: Դա մի քանի խելառների «փիրն» է, անունը՝ Մարտիրոս, Բագրևանդի վանահայրը: Մի՞թեչես լսել:

— Հը՛մ, հիշում եմ, շատ եմ լսել դրա անունը: Լավ է ուրեմն, ձեռքիցս չի գնա:

— Իհարկե, տե՛ր, առյուծի ճանկից էլ չի ազատվի:

— Բայց դա որտեղի՞ց գիտես այդ բաները, և ինչպե՞ս մենք կարող ենք առնել բերդը:

— Տե՛ր, ես այս րոպեիս Բյուրականի մեջն էի, ամեն բան տեսա, ամեն բան լրտեսեցի և շտապեցի իմ տիրոջը տեղեկություն տալ:

— Լավ է, լավ, — ասաց, ինքնաբավական կերպով Նըսրը, — բայց ասա, գյավո՛ւր, ինչպե՞ս կարող ենք մտնել բերդը:

— Բերդի հյուսիսակողմը — մի գաղտնի անցք, կա, որը ազատ է պահապաններից, ես այդ անցքը պատրաստ եմ ցույց տալու քո զորքերին հենց այս գիշեր:

— Շա՛տ լավ, հենց այս գիշեր մենք հարձակումը կսկսենք: Եթե ուղիղ դուրս եկան խոսքերդ, դու արժանավոր վարձատրություն կստանաս:

— Թող ալլահը պահե քեզ, տե՛ր, որ չես մոռանում խեղճ մարդկանց, — կրկնեց Նըսրի խոսակիցը:

— Բայց ի՞նչ է քո անունը:

— Քոսա՛կ, քո ծառան:

— Լավ, Քոսա՛կ, այժմ դու հանգստացիր, երբ կանչեմ՝ իսկույն կգաս:

Քոսակը խոր գլուխ տվեց և գոհ սրտով հեռացավ:

Մատնիչը գոհ էր և մտածում էր ամենահեշտ միջոցով թշնամիներին բերդ մտցնելու, այնինչ այդ ժամանակ ամրոցի մեջ կին, երեխա, ծեր թե երիտասարդ լցվել էինեկեղեցու մեջ և արտասվաթոր աչքերով լսում էին Մարտիրոս հոր քարոզը: Մարտիրոս հայրը կանգնած բեմում խոսում էր անմահության վրա և բացատրումմահվան նշանակությունը: Կարծես նա զգում էր ինչ-որ մի չարագուշակ բան, կարծես նրա հոգին գուշակում էր, որ մատնիչը յուր գործը պիտի կատարի, ուստիշտապում էր վառ և կենդանի պահել հուսահատ ու թուլացած ժողովրդի մեջ հավատքի հոգին և ուժը:

— Այո՛, ես տեսնում եմ նրան, — ասում էր Մարտիրոս հայրը, — նա՛ է միայն հավիտենականը և անմահը, իսկ ամեն ինչ անցավոր է: Մի ակնթարթ, ժամանակի միկարճ գոյություն, երբ մենք ճաշակում ենք նրա բարիքները, ճանաչում նրա անմահ գործերը և ապա սլանում դեպի հավիտենականություն: Թող չվախեցնե ձեզարաբաց սուրը, նրանց սոսկալի տանջանքը և ամենքդ ի մի դարձած, պինդ պահեցեք ձեր կրոնը և արժանացեք նրա սուրբ նահատակությանը: Ես չեմ ասում վիզներդներկայացրեք անհավատների մերկացրած սրերին, որ նրանք կտրեն. ո՛չ, քավ լիցի: Թանկ ծախեցեք ձեր կյանքը և քանի որ շունչներդ բերաններումդ է՝ սուրըձեռքներիցդ չձգեք, կռվեցեք ձեր թշնամիների դեմ, որն ուզում է խախտել ձեր կրոնը: Վեհ է այն նահատակությունը, որ կատարվում է հայրենիքի և կրոնի համար:Հենց այս իսկ վայրկյանին դուք կռվում եք և՛ հավատի, և՛ հայրենիքի

համար: Կոտորվեցեք ամենքդ էլ, մինչև վերջին մանուկը և դրանով դուք կարժանանաքՔրիստոսի անմահ պսակին:

Մարտիրոս հայրը լռեց և չոքեց աղոթելու: Ինչպես մարմնացած աստվածություն, նա մի քանի վայրկյան անշարժ մնաց և ապա ցնցվեց, երիտասարդի նման վերթռավ տեղից և իջավ բեմից: Ժողովուրդը հեծկլտում էր և դառն արտասուքներ թափելով ընդունում ս. հաղորդությունը: Երբ մինչև վերջին մարդը ընդունեց ս. հաղորդությունը, կանայք և երեխաները մի կողմ քաշվեցան և մոտ 200-ի չափ զինված մարդիկ դեպի պարիսպները շտապեցին: Պարիսպներից դուրս հնչում էրարաբների դիվական քրքիջը և զենքերի շաչյունն ու շառաչյունը: Ըստ երևույթին նրանք պատրաստվում էին նորից հարձակվելու ամրոցի վրա: Երեկոյան դեմ էր, արևն արդեն թաքնվել էր, և հետզհետե մութն ընկնում էր, երբ կատաղի գնդերը գրոհ տվին դեպի պարիսպները և ճանճերի նման փաթաթվեցին ամրոցին, որոնքկարծես ուզում էին շփոթել բյուրականցիներին, այնինչ մի ուրիշ գունդ Քոսակի առաջնորդությամբ գաղտնի անցքով մտնում էր բերդը:

Հայ կտրիճները անտեղյակ այդ բանից, քաջերի նման կռվում էին և հույս ունեին նորից հալածելու, երբ ներսից մի չարագուշակ աղաղակ մի վայրկյան միայնսառեցրեց և սարսափ պատեց նրանց: Ամրոցի մեջ, այնտեղ, ուր գտնվում էր եկեղեցին, նրա ճիշտ առջևում, երևում էր մի սև գունդ, որը վայրենի աղաղակներովաշխատում էր կոտրել եկեղեցու դուռը, ուր ապավինել էին հայ կանայք, երեխաներ և անկար ծերունիներ: Հայերը զգացին իրենց անհուսալի և վտանգավորդրությունը, ու սառը քրտինքը պատեց նրանց: Սոսկալի մռնչյուն արձակելով՝ նրանք թողին պարիսպները, որտեղից արդեն բարձրանում էր թշնամին նկատաղությամբ ընկան ներսի թշնամիների վրա: Գիշերային խավարի մեջ սկսվեց ձեռնամերձ սոսկալի կռիվը, որ ներկայացնում էր մի ահագին մսյա գունդ, ուրորդերի նման վժվժում էին մարդիկ և իրար գրկած շունչները փչում, ընկնում իրենց ոտքի տակ տարածված դեռ տաք դիակների կույտի վրա և անհետանում, որովհետև նոր շարժուն կետեր բարձրանում էին դրա վրա և նորից իրար գրկում...

Զարհուրելի էր այդ կռիվը: Երեխաների և կանանց ճիչն ու աղաղակը, վիրավորների հառաչանքը և սրերի շաչյունները մինչև երկինք էին հասնում: Կռվողների ոչ միկողմը չէր ուզում տեղի տալ մյուսին, և նրանք մինը մյուսի ետևից կոտորվում, մորթվում էին: Բայց հայ զինվորների թիվն արդեն պակասել էր, այնինչ արաբներըքանի գնում ստվարանում էին: Միայն մի բուռն հայ կտրիճներ կռվում էին վերջին, օրհասական կռվով, երբ ամրոցի ամեն անկյունից կրակե հրեղեն լեզուներերևացին և լուսավորեցին սգապատ տեսարանը: Այդ իսկ միջոցին տապարի

հարվածներից ջարդ ու փշուր եղան եկեղեցու դռները, և կատաղի հոսանքը ներսխուժեց... Լսվեց այնտեղից սիրտ պատառող ձայներ, կանանց ու երեխաների մահամերձ խռխռոցը: Արաբներն այնտեղ կոտորում էին երեխաներին, կոտորումկանանց և կողոպտում տաճարը:

Հայ կտրիճները, որոնց հազիվ 40 հոգի էին մնացել, երբ տեսան անօրենների եկեղեցի ներս խուժելը, հանկարծ գրոհ տվին թշնամուն և դիմեցին դեպի տաճարը:Նրանց մեջ էին Մարտիրոս հայրը և Սահակ սրբազանը, որոնք մինչև սրունքները արյան մեջ թաթախված, արյունաներկ սրերը ձեռքներին առաջնորդում էինհայերին: Այդ միջոցին տաճարի բեմը բռնկվեցավ, և բոցերը ճարճատյունով սկսեցին ս. սեղանը լափել և լուսավորել կռվողներին, ուր խառնվել էին իրար հետ կին, երեխա, ծեր, արաբ թե հայ զինվորներ և սպանդանոցի նման մորթոտում էին իրար: Մի չեչոտ մարդ միայն, վառած ջահը բռնած, որ հենց նոր կրակ էր տվել բեմը, կանգ էր առել ս. սեղանի վրա և դիվական հայացքով նայում էր կռվողներին: Կարծես սովորական բան լիներ կատարվելիս նրա առջև, կարծես մարդիկ չլինեինկոտորվելիս, նա նայում էր սառն և անտարբեր հայացքով և երբ մինը մյուսի ետևից ընկնում էին հայ զինվորները, մի տեսակ ինքնաբավական ժպիտ էր փայլում նրահրեշավոր դեմքին: Հանկարծ նա ցնցվեց, և նրա դեմքը կապույտ գույն ստացավ, աչքերը կատաղեցին և յուր ջահը ճոճելով՝ զարհուրելի ձայնով ասաց.

— Է՛յ, ուղղափառնե՜ր, սպիտակ դևին մի՛ սպանեք, դրան կենդանի պետք է ներկայացնել Նրսր ոստիկանին:

Բայց սրա ձայնը խեղդվեցավ վայնասունի ու աղմուկի մեջ և ոչ ոք ուշադրություն չդարձրեց: Այդ իսկ միջոցին ընկավ Սահակ սրբազանը մի քանի տեղիցվիրավորված, իսկ երկու սրի հարված կտրատեցին Մարտիրոս հոր թևերը, բայց նա, հինգ թե վեց հոգով շրջապատված, դեռ կանգնած էր, երբ ջահը ձեռքին մարդը, որՔոսակն էր, ցած թռավ սեղանից ու առանց երկյուղի մղվեցավ կռվողների մեջ և որոտաձայն կանչեց.

— Հեռո՛ւ այստեղից: Անհավատների սրբի դատաստանը ինքը ամիրապետը պիտի անի:

Մարտիրոս հայրը նայեց դեպի դավաճանը և արհամարհական հայացք ձգելով՝ առաջ եկավ ու ասաց.

— Հուդա՛, արա, ինչ անելու ես...

Մարտիրոս հոր ուսերից առատապես բխում էր արյունը, և նա հազիվ էր ոտքի վրա կանգնած: Քոսակը ջահը մի կողմ շպրտեց և, դիվական քրքիջ արձակելով, գրկեցյուր անպաշտպան զոհին, որ ուշաթափ արդեն վայր էր ընկնում:

Այդ միջոցին երկու հարյուր հայ զինվորներից ո՛չ մեկը կենդանի չէր: Արաբները հանգիստ շունչ քաշեցին և դևերի նման սկսեցին կողոպտել տները, առևանգել հայկույսերին ու մորթել երեխաներին: Այդ ժամանակ Բյուրականը ներկայացնում էր Սոդոմը, ուր կրակն ու անօրենների կատաղությունը ամենազզվելի պատկեր էրներկայացնում...

ԻԹ

Թալանը վերջացել էր: Սև ծուխը ամպի նման ոլոր-մոլոր բարձրանում էր վեր և Բյուրական ամրոցում էլ քարը քարի վրա չէր մնացել: Արևը արդեն կանգնած էրզենիթում: Նըսր ոստիկանի բանակից լսվում էր ուրախ դիվական քրքիջ, հայհոյական և անամոթ երգեր: Բյուրականի և շրջակա հայ գյուղերի նորատի կույսերն ուկանայք համարյա մերկ, նրանց նախատինքի առարկաներն էին դարձել և միևնույն ժամանակ նրանց վայրենի կրքերին բավականություն տվողներ: Այնտեղ՝ բացերկնքի տակ, մի դիվական ճաշ էր կատարվում, ուր խորովածի, օշարակի և թմբուկի հետ միասին ամենաասոսկալի տեսարաններ էին տեղի ունենում: Մինչդեռբանակի միջից լսվում էր թմբուկի, վայրենի քրքիջի և երգի ձայներ, Նըսր ոստիկանը յուր շքեղ վրանի առաջ անցուդարձ էր անում և անտարբեր աչքով նայում էր յուրբանակի մեջ տեղի ունեցող անասնական տեսարաններին:

— Այդ քիչ է գյավուրների համար, — ասում էր նա, — դեռ շատ սարսափելի բաներ կտեսնեն ինձանից: Թող դեռ ճանկս ձգեմ Հովհաննես կաթողիկոսին և ԱշոտԵրկաթին, այն ժամանակ հեշտ է դրանց ոչնչացնելը:

Այդ միջոցին նրա աչքովն ընկավ Քոսակը, որ նրանից քիչ հեռու կանգնած, նայում էր արաբաց ոստիկանին, երևի նա եկել էր յուր վարձատրությունն ստանալու:

— Ա՛... գյավո՛ւր, դու եկել ես, շա՛տ լավ: Ես իսկույն քեզ արժանավոր վարձատրություն կտամ քո ծառայության համար: Բայց ո՞ւր է սպիտակ դևը, ես նախ նրանպիտի պատժեմ, արդյոք նա ուշքի եկա վ:

— Ո՛չ, տե՛ր, նա յուր հոգին արդեն փլեց, — պատասխանեց Քոսակը՝ գլուխ տալով:

— Ա՛ ... իսկ ի՞նչ արիր դիակը:

— Դաշտի մեջ ձգեցինք:

— Վայրենի գազաններին կերակո՞ւր:

— Այո՛, տեր, նա, ով քո ամենակար զորության դեմ է գնում, ավելի սոսկալի նախատինքի և պատժի է արժանի:

— Լա՛վ ուրեմն: Կեսօրից հետո մեր բանակը հանվում է այստեղից, ես չպետք է մոռանամ քեզ վարձատրել,— ասաց Նըսր ոստիկանը և ապա, դիմելով յուր մարդոց, ինչ-որ մի հրաման տվեց նրանց, որոնցից մեկը հեռացավ, իսկ մյուսները, մոտենալով Քոսակին, բռնեցին նրան և դեպի Նըսրը բերին:

Նըսրի օտարոտի վարմունքը սարսափ բերեց Քոսակին, նա դեռ շփոթված սպասում էր, թե ի՞նչ պիտի լինի:

Անցան մի քանի սարսափելի րոպեներ, և ահա հեռվից երևաց մի կատաղի ձի, որի վրա նստած էր այն արաբը, որ մի փոքր առաջ կանգնած էր Նըսրի մոտ: Ձիավորըկանգ առավ Նըսրի առջև և իսկույն ցած թռավ ձիուց:

— Տեսնո՞ւմ ես այս ձին, — ասաց Նըսրը դիմելով Քոսակին, — այս ձին քեզ եմ ընծայում, միայն ոչ թե դու պիտի սրան կառավարես, այլ դա՝ քեզ: Ես դրանից ավելիլավ վարձատրություն չեմ գտնում քեզ համար:

Քոսակը չհասկացավ նրան, բայց զգաց, որ ինչ-որ մի զարհուրելի բան է պատրաստում յուր համար:

Ձին թամբած չէր և անհամբերությամբ ոտքը գետին էր զարկում:

— Կատարեցե՛ք հրամանս, — ասաց Նըսրը դիմելով արաբներին: Արաբները իսկույն մի պինդ թոկ բերեցին և ձգեցին Քոսակի վիզը: Իսկ մյուս ծայրը կապեցին ձիուագիից:

— Տե՛ր, խղճա՛ ինձ... — մրմնջաց լեղապատառ Քոսակը, երբ հասկացավ իրողությունը:

— Ո՛չ, քո արժանավոր վարձատրությունը դա է: Եթե դու քո ազգին այդ ես անում, ուրիշին ի՞նչ կանես, — պատասխանեց Նըսրը և նշան տվեց:

Այդ միջոցին ձիու սանձը հանեցին և մի քանի սաստիկ մտրակներ տվին նրան: Ձին ցավից կսկծաց և ահագին թռիչք արավ՝ քարշ տալով յուր ետևից Քոսակին:

Բանակի ուրախությանը մի նոր բան ավելացավ: Նրանք տեսան, թե ինչպես Քոսակի գլուխը քարերին էր դիպչում և նրա ուղեղը ցաք ու ցրիվ գալիս...

Կեսօրից հետո Նըսրը հանեց յուր բանակը և դափ ու զուռնով ուղղվեց դեպի Նախճվան: Բավական ժամանակ նրանք առաջ էին գնում, և վայրենի քրքիջի, ուրախության ձայները մինչև երկինք էին հասնում: Նրանք ճանապարհին քշում էին ձիերը և նշան դնելով գերիների վրա, ցցում էին իրենց նիզակները նրանց սրտիմեջ և կտրելով գլուխները՝ ամրացնում նիզակների ծայրին և ձեռքներին պտտեցնելով վազում առաջ: Գերիների լացը, կականը և ողբը, միախառնվելով արաբներիքրքիջին, մի զարհուրելի երաժշտություն էին կազմում, որը սառցնում էր մարդուս արյունը: Երեկոն մոտենում էր: Նըսրի բանակը կանգ առավ մի առվակի մոտգիշերելու: Վառվեցան խարույկները, և ընթրիքի պատրաստություններ սկսան տեսնել, այնինչ գերիներին մի կողմ թողնելով, միայն մի քանի պահապանկանգնեցրին նրանց հսկելու, իսկ իրենք սկսեցին իրենց գազանական ընթրիքն անել:

Այդ իսկ միջոցին մի խումբ ձիավորներ զգուշությամբ մոտենում էին Նըսրի բանակին: Նրանք, ըստ երևույթին, վաղուց է որ հետևում էին բանակին, բայց հարմարժամանակ չէին գտնում իրենց նպատակին հասնելու:

— Տղե՛րք, — դարձավ խմբի գլխավորը յուր ձիավորներին, որոնք թվով մոտ երեսունհինգ էին, — այս բանակի հետ կռիվ սկսելով գլուխ դուրս չենք տանի, մենքպիտի միայն գերիներին ազատենք և խույս տանք: Ձեզանից մի մասը պիտի գերիներին տանի, իսկ ես մի քանի մարդկանցով նրանց ուշադրությունն ինձ վրակդարձնեմ, որ նրանք ձեզ հանգիստ թողնեն: Այժմ ամենից հարմար ժամանակն է:

— Մենք պատրաստ ենք, իշխա՛ն, — պատասխանեցին ձիավորները:

Այդ ժամանակ խմբի գլխավորը, որ Գևորգ իշխանն էր, նշան տվեց, և մի ակնթարթում հարձակվելով գերիների պահապանների վրա, բոլորին կոտորեցին նգերիներին սկսեցին տանել: Բանակում իրարանցում ընկավ: Գևորգ իշխանը փոքրիկ խմբով բանակի հակառակ կողմը թռավ և մեծ աղմուկ հանելով սկսեց շփոթելբանակին: Արաբները գերիներին թողած գրոհ տվին դեպի Գևորգ իշխանը, որը կամաց-կամաց սկսեց նահանջել, իսկ երբ տեսավ, որ բավական ժամանակ էվաստակել, հանկարծ անհայտացավ խավարի մեջ և շուտով միացավ մնացած

խմբին, ուր գտնվում էին և հայ գերիները: Նրանք առաջ գնացին դեպի Բյուրական, երբ արշալույսը նոր էր բացվում: Գևորգ իշխանը տխուր առաջ էր գնում, երբ մի աղոտ լույս նկատեց, որ իջնում էր երկնքից: Նա ձին շտապեցրեց դեպի լույսն իջնողտեղը և սարսափահար կանգ առնելով, մի վայրկյանից հետո ցած թռավ ձիուց, վերցրեց գլխարկը և չոքեց: Նրա առաջ տարածված էր Մարտիրոս հոր դիակը, առանցձեռքերի, որը լուսավորվել էր երկնքի լույսով: Հասան և գերությունից ազատվածները, որոնք տեսնելով իրենց «սրբի» դիակը, սկսեցին լալ և հեծկլտալ:

Գևորգ իշխանը համբուրեց Մարտիրոս հոր սառն ճակատը, որին հետևեցին և մյուսները, ապա նրա դիակը վերցնելով, տարան Բյուրականի տաճարը հողինհանձնեցին: Հողը իր գիրկն առավ սրբազանի դին, և հենց այդ ժամանակ արտույտները սկսան կրկչալ իրենց տխուր տաղերը, իսկ արշալույսը սփռեց երկրի վրա յուրկենարար ցոլմունքները...

Լ

Բյուրականի կոտորածից հետո Հեղինեն հանգստություն չուներ: Նա, ինչպես պահապան հրեշտակ, անցնում էր գյուղե-գյուղ, քաղաքե-քաղաք ու դեղ ու դարմանանում տնանկներին ու վիրավորներին: Նա յուր կյանքը սկզբից ի վեր նվիրել էր թշվառներին ու այդ պատճառով, գիշեր-ցերեկ աշխատելով սիրած ժողովրդի մեջ, նրանց վերքերն էր բուժում և այդպիսով մի փոքր հանգստություն տալիս յուր վշտաբեկ սրտին...

Երեկո էր:

Արևի վերջին ճառագայթներն ընկել էին լեռան լանջին փռված մի գյուղի վրա, որի գետնափոր տնակների առաջ, զանազան դիրքերով, ընկած էին հիվանդ ու խեղճթշվառներ, որոնք ծանր հառաչելով դիտում էին արևի մուտքը:

Հեղինեն նստած էր մի մեծ քարի վրա և յուր անթարթ աչքերով նույնպես դիտում էր արևի մուտքը, որը կամաց-կամաց ծածկվելով լեռան քամակին, յուր ետևիցթողնում էր մի սև ու մռայլ ստվեր... Սևով էր պատած և Հեղինեի սիրտը:

Դառն ու սրտամաշ մտքերը պաշարել էին նրան ու ձգել մտքերի ահեղ օվկիանը:

Նրանցից քիչ հեռու, կանաչ խոտի վրա կիսաթեք պառկած էր ծերունի Մաթոսը, որն անշարժ, ինչպես մարմնացած արձան, նայում էր Հեղինեին:

Հանկարծ նա շարժվեցավ, դողդոջուն ձեռքերով փայտին հենվեց ու դառնալով դեպի Հեղինեն, լալագին կանչեց.

— Ա՜խ, մի կաթիլ ջուր, ես այրվում եմ, պապակում:

Հեղինեն ցնցվեց: Ետ մղեց յուր մռայլ մտքերը, ծերունի Մաթոսին նայեց ու վեր թռչելով տեղից, մի գավաթ ջուր մեկնեց նրան:

— Ա՛ռ, Մաթո՛ս ապեր, այս աղբյուրի ջուրը կհագեցնե ծարավդ և կզովացնե քեզ:

— Ա՜խ, սրտիս հրդեհը ոչ մի աղբյուրի ջուր չի կարող հանգցնել, — պատասխանեց Մաթոսը՝ առնելով գավաթը: — Աղջի՜կս, ես պապակում, այրվում եմ: Դժոխքը յուրբոլոր զարհուրանքով սրտիս մեջ է նստած ու ինձ տանջում, չարչարում է, հոգիս էլ չի առնում, որ ազատվեմ անծայր տանջանքից:

— Հանգիստ մնա, Մաթո՛ս ապեր, ամեն ինչ կանցնի, աստված ողորմած է, — մխիթարելով ասաց Հեղինեն:

Մաթոսը ուղղվեց, նստեց ու դառնալով ասաց.

— Աստվա՛ծ... Այո՛, բայց մենք այդ աստծուն չտեսանք, տե՛ր, մեղա՛ քեզ: Նրա փեշերից բռնելով տանջանքների և արհավիրքների ծովը նետվեցինք, բայց նրա գութնու ողորմությունը չտեսանք: Տե՛ր, մեղա՛ քեզ: Արաբը յուր սուրը հանած, մեր աչքերի առաջ մեր աղջիկներին ու կանանց առևանգում է, մինչդեռ մեր հարազատիշխանները նրանց թև ու թիկունք են դառնում: Մենք տրորվում ենք, ոտնատակ լինում, ինչպես մի հասարակ մրջյուն և ո՛չ ոք, ո՛չ ոք յուր գթառատ ձեռքը չէ մեկնումմեզ պատուհասից ազատելու: Աստվա՛ծ, բայց ուր էր այդ աստվածը, երբ Բյուրականում դժոխքն էր տիրապետում: Ու՞ր էր նա, երբ այնտեղ՝ սպանդանոցի նման 200հոգի ընկան, երկու հարյո՛ւր նահատակ, ծեր թե երիտասարդ, կին թե մարդ, տղա թե աղջիկ, որոնք աստծո փեշից բռնած լալագին հայացքով օգնություն էինմրմնջում ու շունչները փչում... Ես, միայն ես ազատվեցի այնտեղից և իբրև այդ զարհուրելի սպանդանոցի կենդանի վկա, բողոքում եմ աստծո դեմ, բողոքում նրաանտարբեր, սառն, անգութ վերաբերմունքի համար, տե՛ր, մեղա՛ քեզ...

— Այդպես մի՛ ասի, Մաթո՛ս ապեր,— ընդհատեց Հեղինեն, — մի՛ բողոքիր աստծո դեմ: Նա յուր դատաստանը այսպես շուտ չէ անում: Նա համբերում է, բայց յուրաստվածային շանթով խորտակում անօրենին:

— Հա՜, վերջը... այն ժամանակ, երբ հազարավորներ կենդանի-կենդանի խորովվում են, անասելի տանջանքներով հոգիները փչում: Բայց ո՞ր մեղքի համար: Ասա, աղջի՛կս, ի՞նչ է արել ծծկեր մանուկը, որ անօրենի սրից զոհ է գնում: Ասա, ի՞նչ հանցանք են գործել կանայք, որոնց ստինքների պտուկներից շարաններ են շինում նիբրև հաղթական դափնի՝ իրենց վիզը ձգում: Օ՜... անասելի դժոխք էր ներկայացնում Բյուրականը սրի և կրակի մեջ, ուր ընկավ մեր սուրբը՝ Մարտիրոս հայրը, որբդիակների մեջ կանգնած, երկու ձեռքերն էլ կտրտված, հարյուր տեղից վիրավորված, դեռ աղոթք էր մրմնջում ու սիրած ժողովրդի համար երկնքից օգնությունհայցում... Սակայն երկինքը լուռ էր, անզգա, անգութ...

— Հայի ճակատագիրն է այդ, Մաթո՛ս ապեր, ի՞նչ կարող ենք անել:

— Ինչ կարող ենք անե՞լ... բայց ի՞նչ են անում մեր իշխանները, որոնք արաբի հետ միացած՝ մեզ ծեծում են, արյունաքամ անում, եղբայր եղբոր դեմ հարուցում ուիրենց սիրուն հայրենիքը սրի ու հրի ասպարեզ դարձնում: Մեր գութանն ու մաճը մնաց անտեր, դաշտերն ու արտերն ամայացան, լծկան եզն ու գոմեշը կոտորվեցան, ինչո՞ւ, որովհետև մեր իշխանները փոխանակ միանալու, իրենց սին փառքի համար օտարի առաջ ստրկանում են, քծնում, շողոքորթում և մեզ անտեր թողնում... Օ՜ ... եթե լիներ մեր մեջ համերաշխություն, սեր, գիտակցություն, մենք այս օրին չէինք հասնի...

— Այո՛, համաձայն եմ: Ա՛խ, հայի այդ սոսկալի եսը և փառամոլությունը իրեն տունն է քանդում, բայց դրանք էլի չեն խրատվում: Ի՞նչն է պատճառը, որ մերթագավորը Սևանա վանքն է քաշվել և վիշտը սրտի մեջ, դառն հեծկլտում է Հայաստանի վիճակին նայելով: Ա՛խ, եթե իշխանները և նախարարները միանային ուժողովվեին թագավորի շուրջը, այն ժամանակ Հայաստանի արշալույսը կբացվեր և դո՛ւ, խե՛ղճ ժողովուրդ, հանգիստ կապրեիր... Այդ ի՞նչ եմ ասում. Այդ արշալույսըչի բացվի, քանի որ հայրս է թագավորի դեմ գնում, իսկ ես, ինչպես մի ստվեր, դեգերում եմ հիվանդ ու մեռնող ամբոխի մեջ ու քավում հորս մեղքերը:

— Եվ թող աստված երկարացնե կյանքդ, աղջի՛կս, դու սփոփիչ հրեշտակ ես մեզ համար, երկնքից տրված մի պարգև, որ դառն ու հուսահատ բոպեներին քո քնքուշձայնով հուսո նշույլներ ես ներշնչում մեզ... բայց մի ծաղկով գարուն չի գա, աղջի՛կս, և մենք մեռնում ենք, օրեցօր գերեզմանին մոտենում:

— Ո՛չ, Մաթո՛ս ապեր, ժողովուրդը չի մեռնի, նա կապրի: Կապրի, որովհետև նրա կենսատու ուժը անսպառ է: Իշխանները կգան ու կերթան, բայց ամբոխը

կմնա:Կմնա ու կզարթնի մի անգամ: Այն ժամանակ խավարը կցրվի, մութը կանհետանա, և գեղածիծաղ արշալույսը կծագի ամեն կողմում:

— Օ՜... տա աստված այդպես լինի, — գլուխը օրորելով պատասխանեց Մաթոսը: — Բայց ահա սրտիս մեջ դժոխքը կրկին շարժվեց, և ես հիշեցի Աստղիկիս, հիշեցինրա նշանած Դավթին, որը վերջին շունչը փչելիս ինձ նայեց ու անհուն ժպիտը անցավ նրա դեմքով. կարծես հասկացնել ուզեց ինձ, թե հայրենիքի համար մեռնելըինչքա՜ն քաղցր, ինչքա՜ն վսեմ է... Դավի՜թ, իմ քաջ և աննման փեսա, դու գնացիր ու ինձ ծով արցունքի մեջ թողիր... Օ՜... ես էլ կգամ, ես էլ կգամ, — ասաց ծերունին, գլուխն իջեցրեց, լուռ կացավ, և արցունքի երկու կաթիլ գլորվեցին նրա ալեզարդ մորուքին:

Հեղինեն նայեց նրան ու սիրտը բռնեց: Ապա, հեռանալով նրանից, նորից նստեց լեռ քարի վրա ու ինքն իրեն մտմտաց.

— Քնե՛ց... մի քանի րոպե լռեց նրա սրտի դժոխքը, և ես այս բովանդակ երկրում մնացի միայնակ... Սուտ չէ ասում նա: Չորս կողմը
ավե՛ր, սրածությո՛ւն, կոտորա՛ծ:Ամեն կողմից լացի ձայն եմ լսում, որ սիրտս քրքրում, տրորում է ու ինձ զցում հուսահատության անդունդը: Ա՛խ, բարձրյա՛լ աստված, անողո՛ք երկինք, մինչև ե՞րբ հայի արցունքը քո գահի պատվանդանը պետք է ողողե, մինչև ե՞րբ հայի հեծկլտանքն ու հառաչանքը քո սրահի նվագածությունը պիտի կազմեն... Գթա, տե՛ր, այդազգին: Դու ներշնչիր իշխանների մեջ սեր ու միություն: Հանիր նրանց սրտից ատելության ու նախանձի որոմները և ի մի դարձրու բարբարոսներին հալածելու...

Հեղինեն էլ լռեց ու քիչ հետո դադարեց մտածելուց:

Պահ մի դառն մտքերը դադարեցին նրա սիրտը կրծելուց, ու նա ընկղմվեց քնի մեջ...

Հեղինեն քնած էր գլուխը լեռ քարին դրած, մինչդեռ արևը մայր էր մտել ու սկսվել էր լեռների ցուրտը, որ գողունի կերպով մտնում էր Հեղինեի տանջված ու հյուծվածմարմինը և կամաց-կամաց յուր ավերմունքը գործում...

ԼԱ

Առյուծը բանտարկված էր վանդակում...

Մի սեպացած ժայռ, որի վրա երևում էին մի քանի վանքեր, յուր սև կուրծքը դուրս էր ցցել կապույտ ջրերի միջից և գոռոզաբար նայում էր շուրջը: Պարզ, վճիտ ջրիկոհակներն էին վխտում նրա շուրջը, որոնք երբեմն մանրիկ, քնքուշ ալիքներով լիզում էին նրա ափերը, գորովագութ մոր նման շոյում փեշերը, համբուրում նրան նապա միմյանց ետևից ետ նահանջում: Իսկ երբեմն փրփրած ալիքները կատաղած վրա էին վազում դեպի այդ սեպացած ժայռը, որ հանդգնել էր իրենց տեղը խլել:Վիշապի նման գլուխները վեր բարձրացրած ալիքները ուժգնությամբ ծեփվում էին ժայռին, նրան խորտակելու նպատակով, ջարդվում, փշրվում և ապա իրենցոտքերի տակ անդունդներ բանալով՝ ամոթահար թաքնվում այնտեղ և կորչում անհայտության մեջ. բայց ետևից նոր ալիքներ էին գալիս, ավելի բարձր, ավելիզարհուրելի, որոնք դիպչելով ժայռերին, անհույս կերպով նույնպես ոչնչանում էին, մինչև որ դադար էին տալիս իրենց անհույս հարձակմանը և լռում: Այդ ժամանակլճի մակերևույթը պարզ հայելի էր ներկայացնում յուր խոր հատակով, ուր լուսնի դյութող ճառագայթների հետ պար էին բռնում ոսկե ձկները, փայլուն արծաթագույնձկնիկները, գեղարքունին ու կոդակը և ձկների իշխանը:

Այդ սեպացած ժայռի մեջ էր բանտարկված առյուծը՝ Աշոտ Երկաթը, որի հառաչանքից սարերը ձայն էին ածում և լճի ձկները սարսափից փախուստ տալիս:

Ուժասպառ ընկած էր նա յուր կտրիճներով, որոնց թիվը 70-ի էր հասնում և յուր մթագնած հայացքը դարձնում դեպի Սևանի ափերը: Նա խոր, շատ խոր հոգոց էքաշում՝ տեսնելով Հայաստանի ալեծուփ դրությունը, և նրա սիրտը լցվում է խորին կսկիծով: Հայաստանը քանդվում էր, ժողովուրդը տառապում, իսկ ինքն ի՞նչ էրանում... Ո՜հ, վեր կաց, Աշո՛տ Երկաթ, քաշիր երկաթե սուրդ, հուր ու մոխիր դարձրու թշնամիներիդ, որոնք ոչնչացնում են հայ ժողովրդին... Թո՛ղ անշարժությունդ, ի՞նչը արդյոք սուրդ ժանգոտեց և վհատեցվեց քո հոգին... Տե՛ս, արաբները կրկին գլուխ են բարձրացրել և հայերի ծուխն ուզում են կտրել, իսկ դու մի՞թե մոռացարհորդ ստվերին տված երդումը, թե՞ խորին հուսահատությունը վհատեցրեց քեզ... Հասի՛ր, Երկաթ, հասի՛ր, ժողովուրդը քեզ է սպասում, ազգը քեզ է կանչում...

Եվ Աշոտ Երկաթը ցնցվեցավ: Քաջի ցնցումից սարերը դողացին և Սևանա լճի կոհակները դուրս թռան իրենց տեղից և կատաղած իժի նման գլուխները ցցեցին: Հողմըշառաչեց, և սպառնալից ամպերը թռան անհուն երկնակամարի խորքից և որոտալով ու փայլփլելով կախվեցին Սևանա գլխին: Տարերքն էլ կատաղել էր քաջի դեմ ևնրա ցնցումի դեմ յուր սպառնալիքներն էր տալիս:

— Է՛, հե՛յ, — ձայն տվեց Երկաթը յուր քաջերին, — հողմն ու մրրիկը, ծովն ու ցամաքը մեր դեմ կռվի են գալիս, զարթնեցեք, նիզակներդ սուր սրեցեք, թրերիդ ժանգըսրբեցեք, կուրծքներդ պատնեշ շինեցեք և պահպանեցեք ձեր թագավորին: Չե՞ք տեսնում, ծովն ուզում է կուլ տալ ինձ, մրրիկը՝ երկինք բարձրացնել, իսկ փայլակը՝ կայծակնահար անել: Մեռած չէ ձեր թագավորը, դեռ առողջ են կռներս, անվնաս իմ պողպատե սարը: Հրեղեն է այս սուրը, որ մի ակնթարթում հազարավոր գլուխներկթռցնի և ծովին ու երկնքին կհրամայի…

— Ապրի՛ մեր թագավորը, ապրի՛ Աշոտ Երկաթը, — գոռում են յոթանասուն կտրիճները և նիզակներ ճոճում օդի մեջ:

— Տվե՛ք իմ սաղավարտը, զենք ու զրահը, հերիք է ինչքան հանգստացանք, — ասում է Աշոտ Երկաթը և աչքերը դեպի լճի ափը դարձնում:

Նա տեսնում է այնտեղ արաբների անհուն բազմություն, որոնք պինդ օղակով շրջապատել էին իրեն և դյութական քրքիջ էին արձակում՝ տեսնելով քաջին զենք ուզրահի մեջ կորած:

Մի տեսակ դառն, արհամարհական ժպիտ է արձակում Երկաթը և հրամայում տասը նավակ պատրաստել:

Տեսնում են արաբները և ժպտում բանտարկված առյուծի պատրաստության վրա:

Ժպտալիս երևում են նրանց սպիտակ ատամները, որոնք սարսուռ էին ազդում մարդուն:

— Խելացնո՛ր Աշոտ, ի՞նչ է ուզում նա անել, — ասում են հեգնորեն արաբները,— մի՞թե չի տեսնում ինչքա՛ն շատ ենք մենք, ինչքա՛ն ահավոր: Արաբիայի նԱֆրիկայի խորքերիցն ենք եկել մենք, որ դրա արյունը խմենք, իսկ դա ո՞ւր է ուզում թռչել…

Բայց երկյուղի ո՛չ մի նշան չի երևում Աշոտ Երկաթի սառն դեմքին, նրան չեն վախեցնում սև-սև դեմքերը, տափակ ճակատները, հաստ շրթունքները և թշնամիների «բյուր» թիվը: Աներկյուղ նստում է նա նավակի մեջ և նշան տալիս քաջերին, որոնք տեղավորվելով յոթնական մարդ յուրաքանչյուր նավակի մեջ, շարժում ենթիակները և դեպի թշնամին դիմում:

— Աշո՛տ Երկաթ, — գոռում են արաբները, — թող քո խելառ վարմունքը, զենքդ ցած դիր և արի չոքիր մեր Բըշր18 ոստիկանի առաջ, որ չխավարեցնի արևդ: Ե՛լ, գթություն խնդրիր ամիրապետից, մոռացիր պիղծ հավատդ և պաշտիր Մահմեդին:

Լսում է Աշոտ Երկաթը և կատաղությունից մռնչում: Նրա մռնչյունից ծովը ավելի է կատաղում, և հորձանքները ավելի ուժգին են զարկվում ժայռերին:

Տասը նավակը տասը տաշեղի նման կոհակները պար են ածում և սպառնում կուլ տալ անտակ ջրերում: Բայց անվախ են նավավարները, անվախ քաջի պես: Թռչումեն նավակներն առաջ, թռչում դեպի թշնամիները: Նրանք երբեմն բարձրանում են լեռ ալիքի գագաթը, երբեմն իջնում խոր անդունդներ, և նրանց գլխին թափվում ենբյուրավոր նետեր:

— Տղե՛րք, հառա՛ջ, հառա՛ջ — կանչում է Աշոտ Երկաթը և սուրը պատյանից հանում: Այդ ժամանակ նրանք մոտենում էին ափին, ուր թշնամին խիտ-խիտ կանգնածուզում էր կուլ տալ Աշոտ Երկաթին և յուր կտրիճներին:

Թռչում են նետերն անթիվ, անհամար: Ծովը կուլ է տալիս բյուրավոր նետեր, և Աշոտ Երկաթը անվնաս մոտենալով ափին, հանկարծակի այնպես գրոհ է տալիս, որթշնամին առ ժամանակ մնում է սառած, քարացած:

Պլպլում է Աշոտ Երկաթի սուրը և աջ ու ձախ մահ սփռում: Գոռոզ արաբը ալլահ է կանչում և մահվան մեջ տոչորվում: Սարսափը պատում է արաբաց ահռելիբանակին, և նրանք չեն իմանում դևեր են իրենց հետ կռվում, թե մարդիկ: Բայց մի՞թե մի բուռ մարդիկ կհանդգնեն ահռելի բանակի դեմ կռիվ մտնել: Չէ՛, դրանք դևերեն կամ դյութած մարդիկ և իրենց սուրը չի կտրում դրանց, — մտածում են արաբները և լեղապատառ փախուստի դիմում: Ցրվում է բանակը, և նրանք անհովիվոչխարների նման սկսում են զանազան կողմ վազել ու իրենց գլուխն ազատել, բայց ամեն տեղ հասնում են Աշոտ Երկաթի կտրիճները և նրանց ջարդուփշուր անում:

Բայց ո՞վ է ահա գեղեցիկ արաբական նժույգ նստած բանակից փախուստ տալիս և ամոթահար գլուխը ցած իջեցրած անխնա մտրակում ձիուն: Հասի՛ր, Աշոտ, հասի՛ր, դա գոռոզ Բըշր ոստիկանն է, որ քեզ սպառնալիքներ էր տալիս և ուզում էր քո արյունը խմել: Աշոտ Երկաթը նայում է նրան և մի հեգնական ժպիտ էարձակում:

— Թող գնա՛, էլ նա չի համարձակվի ոտք կոխել Հայաստան: Լավ դաս էր, որ ստացան արաբներն ինձանից,— ասում է նա և հրամայում դադար տալ հալածելուն:

Բայց Բըշրը էլ ետ չէր նայում, իսկ նրա ետևից վազում էին փախստական գնդերը:

Երկար ժամանակ նրանք առաջ էին գնում, երբ նրանց առաջ երևաց Քեղայոց ամրոցը, և կատաղած Բըշրը հրամայեց կանգ առնել այդտեղ և հուր ու մոխիր դարձնելայդ ամրոցը: Աշոտ Երկաթի վրեժը դրանից էր ուզում առնել, բարկության բոցը Քեղայոց ամրոցի վրա էր ուզում թափել, երբ հանկարծ մի խումբ ձիավորներ վրատվին արաբներին և պակասն էլ իրենք լրացրին:

— Տղե՛րք, ձեր սրերը կտրուկ արեք, մեկի տեղ հինգ գլուխ թռցրեք,— կանչեց խմբի գլխավորը՝ Գևորգ իշխանը և մղվեցավ արաբների մեջ:

Բըշրը սարսափեց: Նրա մարմնով սառը դող անցավ. Նա տեսավ, որ ալլահը յուր երեսը դարձրել է արաբներից, և ուզում է գլուխն առնել կորչել, բայց այդ միջոցիննրա ձին ծանր վիրավորվեց և մահամերձ վայր ընկավ: Կատաղությունից նա ատամները կրճտացրեց, վեր թռավ տեղից և խելագարի նման աջ ու ձախ նայեց:Անգիտակցորեն յուր կեռ սուրը մխեց իրեն մոտից անցնող արաբի սիրտը և ինքը հեծնելով նրա ձին, առանց գլխարկի, մազերը փշաքաղված, առաջ սլացավ և շուտովանհետացավ ձորերի մեջ…

Գևորգը ցնծում է յուր հաղթության վրա և շտապում դեպի Աշոտ երկաթը: Թագավորն ու իշխանը գրկախառնվում են և փառաբանում աստծուն:

Այդ հաղթությունը վերջնական էր: Արաբներն այլևս չեն համարձակվում ոտք դնել Հայաստան, դավաճանների ձայնն էլ չի լսվում և նրանք երկյուղից քաշվում ենանկյունները: Աշոտ Երկաթը ազատ շունչ է քաշում և սկսում է խնամել յուր երկիրը…

ԼԲ

Սևանա ճակատամարտից հետո Հայաստանի մի ծայրից մինչև մյուսը խաղաղություն սփռեցավ: Կոտորածները վերացան, և հայերն ազատ շունչ քաշեցին, իսկ ԱշոտԵրկաթը սկսեց դարմանել ժողովրդի վերքերը:

Այդ միջոցին Հովհաննես19 կաթողիկոսը գնում է Վասպուրական Գագիկ Արծրունու մոտ, ուր միայն մի տարի կենալով, վախճանվում է ծեր հասակում և

թաղվումայնտեղ: Բայց Աշոտ Երկաթը դեռ նոր էր սկսել հանգստանալ, երբ մի չարագուշակ ամպ մթնացրեց հայոց երկնքի հորիզոնը, Աշոտ Երկաթը մահիճ մտավ:

Ծանր հիվանդությունը բռնեց քաջին, որից նա հաղթական չկարողացավ դուրս գալ:

Երբ նա հավիտյան պիտի փակեր աչքերը, կանչեց յուր եղբորը՝ Աբասին, որը դեռ թշնամությամբ էր նայում իրեն և դողդոջուն ձայնով ասաց.

— Տո՛ւր, եղբայր, ձեռքդ և մոռանանք մեր անցածը: Ես մեռնում եմ և իմ գահը հանձնում եմ քեզ, խնամիր ժողովուրդը, պահպանիր նրան, որովհետև նա է կազմումազգի հիմքը: Փոթորիկն անցավ, և այժմ սկսվում է գեղածիծաղ արևը, օգտվիր նրանից, բայց հեռու կաց քսու և դավաճան իշխաններից: Սեր և խաղաղություն եմթողնում քեզ, պահպանիր հայրենիքդ և այն ժամանակ տերը կօրհնի քեզ... — ասաց Աշոտ Երկաթը, և նրա հոգին մարմնից բաժանվեց: Աբասը չոքեց, համբուրեցեղբոր սառը ճակատը և փակեց քաջի աչքերը:

Այլևս չկար Աշոտ Երկաթը, որը փոթորկալից կյանք վարեց 14 տարի և 6 ամիս:

ԼԳ

Գևորգ իշխանը, Քեղայոց ամրոցում Բըշր ոստիկանին ջարդելուց մի քանի ամիս հետո, շտապում էր դեպի յուր Հեղինեն:

Նա անխնա մտրակում էր ձիուն և առաջ սլանում: Նա արդեն կատարել էր Հեղինեին տված խոսքը և այժմ հաղթական կերպով գնում էր ստանալու թանկ գնով ձեռքբերած Հեղինեի ձեռքը:

— Երկրիս վրա խաղաղություն է տիրում, և այլևս չկան թշնամիներ, որոնց հալածեմ: Հեղինե՛, գալիս եմ քո ոտքերի տակն ընկնելու և քեզանից սեր խնդրելու:Դադարեց կռիվը, խորտակվեցան արաբները, և այժմ տեսնենք ո՞ւր կուղարկես ինձ... Օ՛, էլ ոչ մի վայրկյան չեմ կարող առանց քեզ մնալ, էլ դու ինձ չես կարողհեռացնել: Կատարեցի տված խոստմունքս և այժմ դու իմն ես և էլ ո՛չ ոք չի կարող խլել քեզ ինձանից, — ասում էր Գևորգ իշխանը և ավելի շտապեցնում ձիուն, բայցմի տեսակ անորոշ զգացմունք նրան հանգստություն չէր տալիս և շփոթեցնում էր նրա սիրտը: Նա վաղուց է, որ տեղեկություն չուներ Հեղինեից, թեև գիտեր, թեորտեղ է գտնվում նա:

— Իսկ եթե ինձ մոռացած լինի... Օ՜, այն ժամանակ սոսկալի կլինի իմ դրությունը... կամ թե Վասպուրական լինի գնացած... Հոգ չէ, եթե Վասպուրական գնացած լինի, ես կերթամ նրա համար մինչև աշխարհիս վերջը, բայց եթե մոռացած լինի ինձ կամ արհամարհելիս, ահա՛ սոսկալի բանը... Բայց չէ, ես ճանաչում եմ նրա հոգին, նասիրում է ինձ, սիրում անհուն, անարատ սիրով: Նա սպասում է ինձ, և ես պիտի թռչեմ դեպի նա, — ասաց Գևորգ իշխանը և առաջ սլացավ:

Բայց ի՞նչ դրության մեջ էր Հեղինեն: Մենք թողինք նրան ուշաթափ, երբ Քոսակը խաբեց նրան, հայտնելով, թե Գևորգ իշխանը սպանված է: Այն օրից Հեղինեն մահիճմտավ: Հետզհետե նրա դրությունը վատացավ, և նա կռվում էր մահվան հետ: Զառանցանքների մեջ միշտ հիշում էր Գևորգ իշխանին և նրան կանչում, իսկ նա չկարու չկար:

Այն օրը, երբ Գևորգ իշխանը քաղաք մտավ՝ Հեղինեն զառանցում էր և այլևս ոչ ոքի չէր ճանաչում: Նրա մոտ կանգնած էր Սահակ քահանան և լացակումած աչքերովնայում էր Հեղինեի բորբոքված դեմքին: Նա նոր էր տվել հիվանդին ս. հաղորդությունը և աղոթում էր Հեղինեի փրկության համար:

— Այս ո՞ւր եք տանում, — ասում էր Հեղինեն, — ես չեմ ուզում այդ ճանապարհով գնալ: Չե՞ք տեսնում ահագին ժայռի կտորները, իսկ նրանց գլխին՝ սև-սևարաբներ... հիմարնե՛ր, այդ էլ չեք հասկանում... Հ՜ը, ի՞նչ ես դեմքդ ծռել, տե՛ր հայր, դու ծիծաղո՞ւմ ես, բայց ինչո՞ւ է դեմքդ ծամածռվում... ու, տես, ինչպեսերկարացավ, իսկ հիմա տափակացավ... ճշմարիտ որ ծիծաղելի է... Դարձյալ սև ամպեր, անգութները հենց սրտիս վրա են պառկում և ճնշում ինձ... Գևո՛րգ իշխան, ո՞ւրես գնում, սպասի՛ր... ա՛յ դու անգութ, ինչպե՞ս չես խղճում ինձ, մի՞թե սիրտ չունես, որ ինձ միայնակ ես թողնում... Չե՞ս տեսնում, սենյակիս առաստաղը վերցնում են, պատերը հեռու քաշում, իսկ ցուրտը կամաց-կամաց մտնում է մարմինս...

Սահակ քահանան լալիս էր և հեղեղի նման արցունքներ թափում: Նա հասկանում էր, որ ո՛չ մի ուժ այլևս չի կարող մատաղ կյանքը փրկել, և խոր կսկիծը ցնցում էրնրան: Մի փոքրիկ, աննշան հույս ուներ նրա առողջանալու համար և այդ հույսը Գևորգ իշխանն էր: Ո՛հ, եթե նա գար, եթե թռչեր յուր Հեղինեի մոտ, այն ժամանակգուցե բժկվեր, բայց Հեղինեի կյանքի րոպեները համրված էին, մի քանի րոպեից հետո գուցե ուշ լիներ...

— Է՛հ, անգո՛ւթ են մարդիկ, ինձ չեն խղճում... մի՞թե դուք քար սիրտ ունեք, մի՞թե չեք հասկանում, որ ցուրտ է, ձյուն է գալիս, ես մրսում եմ, ձյունը

ուղղակի վրաս էթափվում, սենյակս առաստաղ չունի, իսկ դուք այստեղ կանգնած ծիծաղում եք... Անգութնե՛ր, — ասաց Հեղինեն և մեքենաբար սկսեց կոլոլվել վերմակի մեջ, ապահանկարծ նա դեն շպրտեց վերմակը, ուզեցավ վեր թռչել, բայց, ուժասպառ ընկնելով բարձին, ճչաց.

— Գևո՛րգ իշխան, ես քեզ սիրում եմ, հասի՛ր ինձ, ո՞ւր ես դու, — կանչեց նա և մի խոր հոգոց հանեց:

— Տե՛ր, դու փրկիր մատաղ կյանքը, — կանչեց Սահակ քահանան: Այդ իսկ ժամանակ աղախինը ներս մտավ և Սահակ քահանայի ականջին ինչ-որ մի բան փսփսաց:

Սահակ քահանայի աչքերը մի տեսակ ոգևորության փայլ ստացան, և նա, մոտենալով Հեղինեին, բռնեց նրա սառը ձեռքը և ասաց.

— Հեղինե՛, աղջի՛կս, կուզե՞ս տեսնել քո սիրած մարդուն:

— Հիմա՛ր, դու էլ բան ասացիր, կարծես ես չեմ տեսնում, որ ծովը ծփում է, և նավակով այլևս չի կարելի զբոսնել:

— Հեղինե՛, Գևորգ իշխանն է եկել, ուշքի արի, — կրկնեց Սահակ քահանան, և արտասուքները խեղդեցին նրան:

— Գևորգ իշխա՞նը... — շշնջաց Հեղինեն և ապուշի նման սկսեց նրա դեմքը դիտել, ապա նրա աչքերի մեջ մի տեսակ թախիծ անցավ, և նա հազիվ լսելի ձայնով ասաց.

— Սուտ եք ասում, ինձ խաբում եք, նա արդեն մեռած է...

Այդ ժամանակ Գևորգ իշխանը ներս մտավ և տեսնելով Հեղինեի գունատ ու մահվան դեղնությամբ պատած դեմքը, մի վայրկյան սառածի նման կանգ առավ և ապահանկարծակի գրկեց Հեղինեին ու սկսեց համբույրներով ծածկել նրա դեմքը:

— Հեղինե՛, լսի՛ր ինձ, — կանչեց նա խեղդված ձայնով:

Հեղինեն լսեց յուր սիրած մարդու ձայնը և ցնցվեցավ: Նա լայն բացած աչքերով նայեց իշխանին և ճանաչեց: Հրաշքը կատարվեցավ: Հիվանդության ճգնաժամնանցավ, և Հեղինեն փաթաթվեց իշխանին: Նրանց շրթունքները հպվեցին, և երկար, շատ երկար բաց չէին թողնում իրար...

Հեղինեն փրկված էր, կարճ ժամանակից հետո հիվանդությունն անցավ և սիրող սրտերն ապրեցին երջանիկ ու հանգիստ կյանքով:

Սահակ քահանան օրհնեց նրանց միությունը, իսկ Գագիկ Արծրունին համբուրեց յուր աղջկա և փեսայի ճակատները:

Ա

ԱՆԽԻՂՃ ՎԱՃԱՌՔ

Քնած էր Անի քաղաքը…

Նորահարսի նման սպիտակ, արծաթագույն մշուշով էր քողարկվել և ընկնելով երազների քաղցր գիրկը՝ սլացել էր վե՛ր, վեր դեպի երկինք ու ամենի աչքից թաքնվել:Ախուրյան գետն էր միայն, որ օձի նման գալարվելով քերում էր Անիի ստորոտները և յուր պղտոր, ուռճացած ալիքներով զարկվելով դուրս ցցված ժայռի կտորներին, փրփրում, կատաղում, ինքն իրեն շփոթվում էր և ապա, գլուխն առնելով, կորչում հեռո՛ւ…

Բայց ժամանակը անցնում էր առաջ, երբ մի բարակ զեփյուռ շշնջալով շոյեց Անիին և գորովագութ մոր նման վեր բարձրացնելով նրա քողը յուր անուշ, մեղմիկհամբույրը դրոշմեց Անիի հազար ու մի եկեղեցիների գմբեթներին ու ինքը, կարծես վախվխելով, փախավ հեռու, դեպի ազատն Մասիս… Այն ժամանակ սիրուն էրԱնին: Լուսնի ցուրտ ճառագայթները ընկան նրա աշտարակների բուրջերի, գմբեթների ու պալատների վրա ու նրան տվին դյութական մի սիրուն տեսք: Դյութականմի պատկեր էր ներկայացնում Հայոց թագավորության խնամակալ Վեստ Սարգսի պալատը, որի ստորոտում Ախուրյանը շառաչում էր, փոթորկվում, զարկվում, որպեսզի դուրս պոկի հրվանդանի այդ կտորը և հանդարտ ու ազատ հոսի առաջ: Բայց նրա ճիգը ի դերև էր անցնում: Ժայռը, որի վրա կառուցված էր այդ պալատը, խիստ ամուր և անսասան էր: Այդ իսկ ժամանակն էր, որ Վեստ Սարգիս իշխանը, վերջացնելով իր գիշերվա ընթրիքը, բարձրացրեք պատուհանի թանձր վարագույրը նդուրս նայեց: Նա նայեց իր ոտքերի տակ տարածված քաղաքին ու հուզվեց: Ի՞նչը հուզեց նրան՝ հայտնի չէր: Այդ պահին քաղաքում տիրում էր խոր լռություն. երբեմն միայն լսվում էր պահապանների ոտնաձայները, որոնք չափավոր, բայց դանդաղ քայլերով շրջում էին պարիսպների ու աշտարակների վրա ու հեռունդիտում: Այդ ժամանակ շինականն ու քաղաքացին, իշխանն ու ազնվականը իրենց անդորր քնի մեջ էին ընկղմված, և ոչինչ բան չէր հուզում նրանց սիրտն ու հոգին. իսկ խաշնարածի հոտերն ու ջոկերը

ագահությամբ պոկում էին կանաչ խոտը և երփներանգ ծաղիկները: Գամփռներն անգամ անուշ քնած էին, և նրանց քունն էլ չէրվրդովում ո՛չ հարամին և ո՛չ վայրենի գազանը: Գիշերվա այդ պահին ամեն ինչ խաղաղ էր ու անդորր և այդ խաղաղության իբրև կենդանի վկաներ Անիի 1001եկեղեցիների գմբեթներն էին, որոնք այնպես գեղեցիկ փայլում էին լուսնի արծաթագույն ճառագայթների տակ...

Վեստ Սարգիս իշխանը այնպես հրապուրվեցավ Անիի դյութիչ, կախարդական տեսարանով, որ նրա աչքերից կայծակներ թռան և լայն բանալով աչքերը կանչեց.

— Հրաշալի՜դ իմ Անի... ո՜հ, ե՞րբ արդյոք դու ինձ պիտի պատկանես, և ե՞րբ արդյոք իմ գլուխը պիտի պսակվի արքայական թագով... Ա՜խ, ես ոչինչ չեմ խնայի, ոչի՛նչ, միայն թե իղձերս կատարվին և գոռոզ Անին իմ հրամանով միայն շարժվի… Գա՜հը... բայց ո՞վ կարժանացնի ինձ այդ գահին ու թագին: Գագիկը՝ իսկական ժառանգը, կենդանի է, իսկ նրա պաշտպան Վահրամ Պահլավունի իշխանը՝ արթուն: Մի՞թե թույլ կտան ինձ այդ բանը գլուխ բերելու...

Վեստ Սարգիսը լռեց և ընկավ մտածմունքի մեջ:

Վրդովալից էր նրա մտածմունքը: Վրեժխնդրության և բարկության կայծակներ էին թռչում նրա աչքերից, իսկ նրա խրոխտ դեմքը երբեմն գունատվում էր, երբեմն՝ այլայլվում, իսկ երբեմն՝ դառն հուսահատվում... Ո՞ւմ դեմ էր նա բարկանում կամ ո՞ւմ հետ ժպտում, — հայտնի չէր. միայն թե այդ Ժամանակ նրա գլխով անցնումէին փոթորիկներ, ավելի զարհուրելի, քան օվկյանի ահեղ ալեկոծությունը, որոնք հառաչելով զարկվում էին իրար, փշրվում, ետ նահանջում ու տեղի տալիս անդորրխաղաղության:

Հանկարծ Վեստ Սարգիսը ցնցվեց և յուր լայն բացած աչքերը հառեց դեպի Անիի մի փողոցը, ուր մի սև կետ էր երևում: Այդ սև կետը շտապ դեպի յուր պալատն էրընթանում:

— Այս ի՞նչ բան է, — մռմռաց Վեստ Սարգիսը, — արդեն կես գիշեր է և փողոցում կրկին մարդ է երևում: Այստեղ անպատճառ մի բան կա:

Սև կետը, հետզհետե մոտենալով պալատին, կանգ առավ և շփոթված սկսեց աջ ու ձախ նայել:

Դռան մոտ կանգնած պահապանը նրա առաջը կտրեց ու խրոխտ ձայնով հարցրեց.

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում:

— Ցանկանում եմ իշխանին տեսնել, — պատասխանեց նա հազիվ լսելի ձայնով:

— Բայց այս մեջ գիշերի՞ն...

— Այո՛, խիստ կարևոր գործ ունիմ նրան հայտնելու:

— Սպասի՛ր ուրեմն, — ասաց պահապանը և երեք անգամ զարկեց դռան կոչնակը:

Վեստ Սարգիսը շատ զարմացավ այդ անակնկալ հյուրի համար և հրամայեց ընդունել նրան:

— Տեսնենք ի՞նչ է ուզում ինձանից անակնկալ այցելուն, — ասաց ու ներս մտնելով սկսեց անհամբերությամբ անց ու դարձ անել սենյակում:

Մի քանի րոպեից հետո ներս մտավ գիշերային այցելուն և շփոթված կանգ առավ դռների մոտ:

Վեստ Սարգիսը սուր, թափանցող հայացքը ձգեց նրա վրա ու զարմացավ:

Իր առջև կանգնած էր միջին հասակով մի մարդ քահանայական զգեստով:

Նրա դեմքը գունատ էր ու այլայլված. կարծես նա հենց նոր մի ոճիր էր գործել:

— Նստեցե՛ք, տեր-հայր, ինչպես երևում է դուք շատ հոգնած եք, — ասաց իշխանը:

Քահանան նստեց առաջարկած գահավորակին: Նա աշխատում էր հանգիստ երևալ, բայց սրտի բաբախյունը թույլ չէր տալիս: Նա դեռ լուռ էր և ոչ մի բառ չէրկարողանում արտասանել:

Վեստ Սարգիսը խոր զննում էր նրան և մտածում: Այցելուի դեմքը ծանոթ էր իրեն, նա տեսել էր այդ քահանային, բայց թե ո՞րտեղ՝ չէր կարողանում մտաբերել:

— Իշխա՛ն, — վերջապես ասաց քահանան և երկյուղով աջ ու ձախ նայեց, — ես մի կարևոր բան պիտի հաղորդեմ քեզ, սակայն այդ բանը խոր գաղտնիք պիտի մնաիմ և քո մեջ:

Վեստ Սարգսի աչքերը մի տեսակ փայլ ստացան, նրա հոգին գուշակում էր, որ այդ իսկ րոպեին նա պիտի մի զարհուրելի լուր լսի:

— Կարող ես վստահ լինել, տե՛ր հայր, — ասաց Վեստ Սարգիսը:

— Բայց մեզ ոչ ոք չի՞ լսի:

— Ո՛չ ոք: Զգուշության համար ես կփակեմ բոլոր դռները և կիջեցնեմ վարագույրները, — ասաց իշխանը և, վեր կենալով տեղից, փակեց դռները և իջեցրեց թանձրվարագույրները:

Նրանք մնացին միայնակ ճրագի աղուտ լուսավորության տակ: Իշխանը նստեց քահանայի կողքին և լուռ նրան էր նայում, իսկ քահանան դեռ լուռ դիտում էրսենյակի թանկագին զարդարանքները, որ հունական ճաշակով էր զարդարված:

— Խոսի՛ր, ես պատրաստ եմ քեզ լսելու, — ասաց խորհրդավոր ձայնով իշխանը:

— Իշխա՛ն, երդվիր Անիի 1001 եկեղեցիների վրա, որ այս բանը մեր մեջ գաղտնիք կմնա, — պատասխանեց քահանան:

— Երդվում եմ:

— Լսիր ուրեմն, — ասաց քահանան այնքան ցածր ձայնով, որ հազիվ լսվում էր: — Դու ինձ պետք է որ տեսած լինես և ճանաչես: Ես Կիրակոս քահանան եմ, կաթողիկոսի դռան հյուրընկալը:

— Ա՜... հիշում եմ, ես տեսել եմ քեզ:

— Չորս տարի է, ես հեռացած էի հայրենիքից և մի քանի ամիս է ինչ վերադարձել եմ:

— Բայց ո՞ւր էիր գնացել:

— Կոստանդնուպոլիս, Հռոմոց թագավորի մոտ:

— Հռոմոց թագավորի՞... բայց ի՞նչ էիր շինում այնտեղ, — հարցրեց Վեստ Սարգիսը զարմացած և իր աչքերը հառեց Կիրակոս քահանայի վրա:

— Ես գնացել էի բոլորովին մասնավոր գործով, երբ բախտը ինձ մի այնպիսի բանի հանդիպեցրեց, որ տակնուվրա պիտի անի իմ կյանքը, եթե դու չօգնես ինձ:

— Ասա, ես պատրաստ եմ օգնել քեզ, եթե կարողանամ:

— Օ՜, միայն քեզ ճանաչեցի այդ գործին հարմար, որովհետև քո մասին Հունաստանի մայրաքաղաքում լավ լուրեր են պտտվում:

— Ինչպե՞ս:

— Նրանք գովում են քեզ և իրենց մարդը համարում, իսկ ինձ էլ այդ տեսակ մի մարդ էր պետք:

— Ի՞նչպես, վերջապես ասա՛ և համբերությունից մի հանիր ինձ:

— Շտապել պետք չէ, իշխա՛ն, ես քեզ այս րոպեիս մի այնպիսի գաղտնիք պիտի հայտնեմ, որից դու կսարսափես:

— Զարմանալի մարդ ես, տերտե՛ր, ասա՛ վերջապես գաղտնիքը:

— Լսի՛ր, քեզ հայտնի է, որ մեր Հովհաննես-Սմբատ թագավորը Պետրոս կաթողիկոսի ձեռքով Անին յուր շրջակայքով իր մահվանից հետո հանձնում է հույներին:Հետևապես, նրա տված այդ թղթի զորությամբ Անին յուր շրջակայքով պատկանում է հույներին, բայց...

— Բայց... — շարունակեց Վեստ Սարգիսը, որ այրվում էր անհամբերությունից:

— Բայց հույները այդ չեն պահանջում, որովհետև Անին յուր շրջակայքով...

— Ի՞նչ...

— Ինձ է պատկանում, — ասաց Կիրակոս քահանան և շեշտակի նայեց ուղիղ իշխանի աչքերին:

— Ինչպե՞ս, — խուլ ձայնով հարցրեց Վեստ Սարգիսը և շանթահարի նման վեր թռավ տեղից և, աչքերը հառելով քահանայի երեսին, ուզում էր կարդալ նրա աչքերիմեջ, թե այդ քահանան հո չի խելագարվել:

— Հանդա՜ռտ, իշխա՛ն, հանդա՜ռտ, ես խելագարված չեմ:

— Պարզիր միտքդ, տե՛ր հայր, ես դեռ չեմ հասկանում, թե ինչպես է, որ Անին քոնն է:

— Շատ պարզ: Այն թուղթը, որով հանձնում էր Հովհաննես թագավորը Անին և յուր շրջակայքը հույներին… ինձ մոտ է:

— Ո՞ւր է, ո՞ւր է այդ թուղթը, ցույց տուր ինձ, — համարյա գոռաց Վեստ Սարգիսը և խելագարի նման վեր թռչելով տեղից նախ շուրջը նայեց, ապա ձեռքը տարավդեպի յուր սրի երախակալը: Նրա գլխում մի չար միտք ծնվեց՝ սպանել Կիրակոս քահանային և տիրանալ այդ թանկագին թղթին, բայց զսպեց իրեն, երբ նկատեց, որքահանայի փարաջայի տակ նույնպես մի սուր փայլեց:

— Հանդարտ, իշխա՛ն, մեր աղմուկը կարող են լսել և զուր կասկածի տակ ձգել:

Վեստ Սարգիսը զինաթափ եղավ և ավելի մեղմ հարցրեց.

— Պատմի՛ր, տե՛ր հայր, թե ինչպես այդ թուղթը քո ձեռքն ընկավ:

— Ես մայրաքաղաքումն էի, երբ Կոնստանդին թագավորը իր մահվան ժամանակ կանչեց ինձ յուր մոտ և տալով ինձ այդ թուղթը՝ ասաց. «Տա՛ր, հայ քահանա, այսթուղթը տուր քո թագավորին և ասա նրան իմ կողմից, թե ինչպես ամեն մահկանացու, ես էլ հավիտենականության շեմքի վրա եմ կանգնած և չեմ կամենում ուրիշիսեփականությունը հափշտակել, թող ուրեմն ետ առնե իր թագավորությունը և յուր որդոցը տա» (1029 թ.): Կոնստանդին թագավորը մեռավ, և ես այդ թուղթը ինձ մոտպահեցի մինչև այսօր: Այժմ քո խորհրդին եմ դիմում, թե ինչպես վարվեմ այդ թղթի հետ, որ կարող է մեծ ապահովություն տալ ինձ, ես կրկի՞ն այն վաճառեմ հունացնոր կայսեր վրա, թե հանձնեմ մեր թագավորին:

— Վաճառե՞լ… Անին վաճառե՞լ, — բացականչեց Վեստ Սարգիսը խորին մտմտանքով և ապա, մի վայրկյան լուռ մնալուց հետո, շարունակեց.

— Իսկ ո՞ւր է թուղթը, այժմ մո՞տդ է:

— Ո՛չ, նա պահված է ապահով տեղ:

Տիրեց լռություն: Երկուսն էլ մտածում էին, երկուսն էլ մտքով սլանում էին փառքի ու հարստության ետևից և այն՝ փարթամ Անիի փրկանքով, հայրենիքի վաճառքիգնով…

— Այո, ես համաձայն եմ, — վերջապես ասաց Վեստ Սարգիսը, — այդ բանը կնպաստե նպատակիս հասնելուն, և ես ու դու ապահով կլինենք:

— Ուրեմն դու էլ համաձա՞յն ես ինձ հետ, որ Անին վաճառվի մեր հանգստության ու փառքի համար, — հարցրեց վերստին Կիրակոս քահանան և նրա սրտից ծանրբեռն իջավ, երբ լսեց Վեստ Սարգսի դրական պատասխանը:

Կիրակոս քահանան գտել էր յուր համախոհին: Մենակ ծանր էր կատարել այդ վատթար վաճառքը:

— Համաձայն եմ, և վաղն ևեթ դու պիտի գնաս Կ. Պոլիս, հունաց նոր կայսեր՝ Միխայելի մոտ և հանձնես այդ թուղթը նրան: Նրանք մեծ փրկանք կտան այդ թղթին և

դրանով մեր ճանապարհը կհարթվի: Ես կտամ այդ մասին հարկավոր նամակներ:

— Ապրի՛ս, իշխան, ես չեմ սխալվել իմ ընտրության մեջ, — պատասխանեց Կիրակոս քահանան ոգևորությամբ:

Այնուհետև երկար խոսեցին երկու այդ անարժան մարդիկ՝ հոգևորական և աշխարհական և բաժանվեցին իրարից այն ժամանակ միայն, երբ Անին ուզում էր նորզարթնել յուր անուշ քնից:

Կիրակոս քահանան աննկատելի կերպով դուրս եկավ Վեստ Սարգսի պալատից և կորավ Անիի փողոցների մեջ…

Բ

ԽԵՆԹԸ

Անին զարթնում էր...

Բարձրադիր կաթողիկեները թոթափում էին իրենց գիշերային մթության քողը և հպարտությամբ վեր պարզելով իրենց ճակատը, սպասում էին ողջունելուառավոտվա անդրանիկ ճառագայթներին:

Հազար ու մի եկեղեցիներից արդեն դղրդում էր
առավոտվա «երրորդի» ձայնը, իսկ Անիի շրջականներից՝ ոչխարների մայունը, կովերի բառաչյունը, ձիերի խրխնջոցը ևհովիվների սրնգի ու երգի ձայները, որոնք միախառնվելով եկեղեցիների զանգերի ձայներին, մարդկային հոգին լցնում էին մի տեսակ կենդանությամբ, մի առանձինաշխուժությամբ, որից հետո ամեն մարդ լիառատ շրթունքով աղոթք էր մրմնջում և համբուրելով եկեղեցու դռները՝ գնում իր գործին: Փողոցները կամաց-կամացլցվում էին մարդկանցով: Կյանքը սկսում էր եռ գալ, իսկ եկեղեցիների մեջ սկսվում էր քաղցրանվագ «ալելուն»: Իշխանն ու զինվորը, ծերն ու երիտասարդը, կինն ուերեխան եկեղեցիներում ծնկաչոք աղոթում էին և գոհություն մատուցում տիրոջը, իսկ հետո սկսվում էր տնեցիների առօրյա

կյանքը, ծխնելույզներից բարձրանում էրծուխը, մատաղահաս աղջիկները կուժը ուսներին դեպի աղբյուրներն ու Ախուրյանն էին շտապում, դարբինը փչում էր յուր փուքսը և երկաթը շիկացնում, վաճառականը յուր առևտուրն էր սկսում, զինվորը՝ յուր զինվորական վարժությունը, իսկ մանրիկ երեխաները, փոքրիկ աղջիկներն ու տղաները լցվում էին իրենցդռների առաջ՝ փողոցներում ու սկսում իրենց մանկական զվարթ խաղերը:

Մի խումբ բոկոտն տղաներ խաղում էին փողոցի մեջ, երբ նրանցից մեկը, ուշադրությունը դեպի փողոցի ծայրը դարձնելով, կանչեց.

— Խե՛նթը, Խե՛նթը գալիս է:

Մանուկները մի վայրկյանում դադարեցրին իրենց ուրախ գոռում-գոչյունը և սլացան դեպի փողոցի ծայրը, ուր երևաց Խենթը մի խումբ մանուկներով շրջապատված:

Խենթը միջին հասակի մի մարդ էր՝ մազերը գզգզված, երկար մորուսը անկանոն թափթփված, շորերը պատառոտուն և բոկոտն: Նա ձեռքին մի երկար, ծուռումուռփայտ ուներ, վրա երբեմն-երբեմն հենվում էր ու կատաղությամբ, լի աչքերը դարձնում շուրջը, ուշադրությամբ դիտում ամեն անցորդի, կանգ առնում, խոսում ուխոսեցնում: Երեխաներից շատերը ծաղր էին անում նրան, քաշում էին նրա պատառոտված հանդերձներից, իսկ մի քանիսը լուռ հետևում էին նրան ներկյուղածությամբ նայում նրա օտարոտի շարժմունքներին: Իսկ հասակավոր մարդիկ, մանավանդ ստոր դասին պատկանողները թե՛ կին և թե՛ մարդ նրան «սրբիկապած» էին անվանում և ամեն հարգանքներ ցույց տալիս: Ո՞վ էր այդ Խենթը, ո՞րտեղացի էր, ո՞րտեղից էր գալիս առավոտները և կամ ո՞ւր էր գնում — ոչ ոքիհայտնի չէր: Բոլոր քաղաքացիք նրան ճանաչում էին Խենթ անվան տակ, որն առավոտները խիստ կանուխ հայտնվում էր Անիի փողոցներում և ուշ գիշերին՝ չքանում...

Ահա նա, ձեռքի փայտը ճոճելով, անցնում է առաջ դեպի Վեստ Սարգսի պալատը և տեղ-տեղ կանգնելով կանչում.

Ինձ մի հարցնեք՝ ով եմ ես,
Վա՛յ ինձ, վա՛յ ինձ,
Սիրուն ու շեն Անին եմ ես,
Վա՛յ ինձ, վա՛յ ինձ...

Կանայք ու հարսները դռների արանքներից նայում էին Խենթին, գլուխները շարժում և զանազան ենթադրություններ անում: Նրանք հավատում էին, որ սրբերն ենխոսեցնում Խենթին և թե Անիին մեծ չարիք կա գալու:

Շատ տեղ, ուր կանգ էր առնում Խենթը և յուր «վա՛յ ինձ, վա՛յ ինձ»-ն ասում, կանայք խաչակնքում էին երեսները և Խենթին հաց, պանիր, ձու և այլն առաջարկում. սակայն Խենթը նայում էր նրանց, գլուխը շարժում ու ճոճելով իր փայտը՝ առաջ գնում:

— Է՛յ, թողե՛ք ինձ, թողե՛ք, հե՛յ, հե՛յ, հե՛յ...

— Աղջի՛, Խաթուն, լսո՞ւմ ես Խենթին, նա էլի մի չարիք է գուշակում Անիի գլխին, ինչպես որ անցած գիշեր գուշակում էր մեր դրկից Մարոն, — դարձավ մի կին իրհարևանուհուն, որ մտամոլոր նայում էր Խենթի ետևից:

— Հա՛, Եղսո ջան, ճիշտ է, աշխարհի վերջը եկել է, ժամանակներս փչացել են, էլ ոչ մեծ կա, ոչ փոքր, աստծո բարկությունը շուտով պիտի իջնի Անիի գլխին, — պատասխանեց նա խոր հոգոց հանելով:

— Իհարկե՛ աստծո բարկությունը պիտի իջնի. Աստված ինչպե՞ս կարող է համբերել այն անզգամություններին, որ մեր ջահելները գործում են: Մի՞տքդ է անցյալօրվա դեպքը Մայր տաճարում, թե ինչ օյին հանեցին խեղճ հայր սուրբի գլխին: Նրանք հայր սուրբի կարճ հասակի վրա ծիծաղելու համար ահագին գրքակալ էին դրելնրա առաջ, որ խեղճը չկարողանա ավետարան կարդալ ու իրենք վրան խնդան: Հա, լավ խնդացին, նրա անեծքը զուր չի անցնի անեցիների գլխին:

— Թո՛ղ տե՛ր փրկե մեզ, — պատասխանեց Եղսոն և ներս գնաց:

Մինչդեռ երկու հարևանուհիները խոսում էին, Խենթը, Դարբնոցի փողոցից ծռվելով, մտավ Բուն փողոցը, և յուր փայտը շարժելով՝ կանգ առավ Արքունի պալատիմոտ, ուր ապրում էր այդ ժամանակ Վեստ Սարգիս իշխանը: Նայեց վերև, նայեց ցած ու կարծես հիացավ նրա նուրբ քանդակները և պատերին հագցրած դեղին ու սևքարերից կազմած զարդերը տեսնելով, բայց հանկարծ նրա գույնը նետվեցավ, աչքերը կատաղությամբ լցվեցին և համարյա խեղդվող ձայնով կանչեց.

Ինձ մի հարցնեք՝ ով եմ ես,
Վա՛յ ինձ, վա՛յ ինձ,
Սիրուն ու շեն Անին եմ ես...

ասաց, փայտը ամուր գետին խփեց, մի քանի հիմար ոստյուններ արավ և ապա դիմելով Վեստ Սարգիս իշխանի ծառաներին՝ գոռաց.

— Ի՞նչ եք կանգնել, Խենթին գինի՛ տվեք, գինի՛...

— Արի՛, Խենթ, արի գինի՛ տանք քեզ, — կանչեցին ծառաները:

— Հո՛, հո՛, հո՛, — ասաց Խենթը, փայտով ետ քշեց երեխաներին և անցնելով սյունազարդ սրահից՝ մտավ խոհանոց, ուր ծառաները անուշահամ կերակուրներ էինպատրաստում իշխանի համար: Խենթին գինի տվին, նա առնելով գավաթը դատարկեց, մի քանի ծամածռություններ արավ ու ծիծաղեցրեց ծառաներին:

— Խե՛նթ, գինի էլի կուզե՞ս, — հարցնում էին նրանք:

— Տո՛ւր, մի գավաթ էլ, — ասաց նա ու, նորից դատարկելով, սկսեց ավելի խենթություններ անել ու զվարճացնել ծառաներին:

Կարճ ժամանակ անցավ, և Խենթը հանկարծ ձեռքով գլխին խփեց, փայտը դեն շպրտեց և առանց մի խոսք ասելու պառկեց մի անկյունում: Քիչ հետո նրա խռմփոցը լսվեց:

Ծառաները ոչ մի ուշադրություն չդարձրին նրա վրա, նրանք ճանաչում էին Խենթին և այդ առաջին անգամը չէր, որ նա մի երկու գավաթ գինի խմելուց հետո քնումէր խոհանոցում: Նրանք արդեն մոռացան Խենթին և այժմ սկսեցին իրար հետ կատակել ու զրույց անել:

— Կարո՛, գիշերս ո՞վ էր, որ մեր իշխանի մոտ եկավ, — հարցրեց մի ծառա դռնապանին, որ հենց նոր մտավ յուր բաժին կերակուրը ստանալու:

— Չգիտեմ, մի ինչ-որ քահանա էր: Եվ, գիտե՞ս, լույսը բացվում էր, որ հեռացավ: Այդ գիշեր մեր իշխանը քուն չունեցավ:

— Ի՞նչ կար որ: Մի՞թե կարևոր գործ էր:

— Չգիտեմ: Ախոռապանին արդեն հրամայված է չորս ընտիր ձիեր պատրաստել այս գիշերվա համար: Կարծեմ որ այդ քահանային պիտի Հռոմոց երկիրը ուղեկցեն:

Խենթը, որ ամենևին քնած չէր, այլ դիտմամբ քնած էր Սևանում, մի տեսակ ցնցվեց, երբ այդ խոսքերը լսեց, բայց շուտով զսպեց իրեն, որ ծառաները գլխի չընկնեն ուանուշ քնած ձևացնելով յուր խռմփոցը շարունակեց:

— Զարմանալի՛ բան, մեր իշխանը հոռոմներին շատ է սիրում, միշտ նրանց հետ է գրագրություն անում:

— Հա՛, բայց աստված վերջը բարի անի, — ասաց դռնապանը և դուրս գնաց: Խոսակցությունն ընդհատվեց:

Խենթը մի քանի անգամ դարձավ կրակի վրա խորովվողի նման, ապա հանկարծ վեր թռավ տեղից, վայրենաբար չորս կողմը նայեց և կանչեց.

— Է՛յ, հե՛յ... ջո՛ւր տվեք ինձ, սիրտս այրվում է, ջո՛ւր... Նրան ջուր տվին. խմեց, փայտը կրկին ձեռքն առավ և, դուրս գալով խոհանոցից, կրկին կանչեց իր հին երգը:

Բայց այս անգամ նրա ձայնը դողում էր ու սրունքները ծալվում էին: Իսկ ուշադրությամբ նայողը կտեսներ, որ նրա աչքերից առատապես թափվում էր արտասուքը և, գլորվելով նրա զզգզված մորուսի վրայով, ընկնում գետին:

Խենթը լալիս էր…

Գ

ՓՈԹՈՐԿԻ ՄԻՋՈՎ

Բնության տարերքը կատաղել էր...

Սպառնալից ամպերը կծկվել էին նրա շրջակայքի գլխին ու ամեն ինչ կորցրել խորին, անթափանցելի խավարի մեջ:

Զարհուրելի փոթորիկ էր սկսվում Անիի գլխին, մրրիկը ամենայն կատաղությամբ փչում էր և բուռն ուժով հարձակվելով Անիի պարիսպների վրա՝ ուզում էր նրանցխորտակել, հիմնահատակ անել, բայց դիմադրության հանդիպելով՝ ետ էր նահանջում դեպի արձակ ու ազատ դաշտերն ու ձորերը և այնտեղ սկսում յուր հուսահատոռնոցը...

Անիի շրջակայքում քամին ոռնում էր ու լալիս, նա լաց լինելով կորչում էր հեռու և անհետանում լեռների մթին խորշերում: Բնության տարերքի այդ արհավիրքիժամանակ չորս ձիավոր, ոտից գլուխ զինված, մոտեցան Անիի Կարուց դռանը և կանգ առան: Այդ դուռը փակ էր և պահապանը չէր երևում:

— Անիծված պահապանը չէ երևում, ո՞վ պետք է մեզ համար դուռը բանա, — մռմռաց ձիավորներից մեկը:

— Հա, խնդիրն էլ հենց այդ է, թե չէ մեզ պետք չէր նրա թթված դեմքը տեսնել, — պատասխանեց մյուսը:

Նրանք առաջ անցան և սկսեցին դուռը ծեծել: Իսկույն հայտնվեց պահապանը և յուր երկար նիզակի վրա հենված կանչեց.

— Ո՞վ է այնտեղ:

— Բա՛ց դուռը, — կանչեց ձիավորներից մեկը և հանդուգն կերպով ձին առաջ քշեց:

— Սպասեցե՛ք, չի կարելի, նշանաբա՛նը ասացեք:

— Կեցցե՛ Գագիկը, — ասաց ձիավորը:

— Հա՛, այդպես է, անցե՛ք, բայց լավ օր չեք տեսնի այս փոթորկին, — ասաց պահապանը և դուռը բանալով բաց թողեց ձիավորներին Անիի պարիսպներից և քիչ հետո, շռնչյունով նորից փակելով, մռմռաց.

— Զարմանալի մարդիկ կան, որ այս տեսակ փոթորկի ժամանակ էլ հանգիստ չեն մնում և մտածում են ճանապարհ գնալ: Ի՞նչ է, միթե չէին կարող սպասել, որառավոտը բացվի:

Մինչդեռ պահապանը փակում էր դուռը և ինքն իրեն մռմռում, ձիավորները շտապով սլանում էին դեպի Կարին տանող ճանապարհը:

— Աստվա՛ծ վկա, լավ ժամանակ ընտրեցինք: Մեզ ոչ ոք չի նկատի, — ասաց ձիավորներից մեկը:

— Այո՛, լավ ժամանակ ընտրեցինք, բայց մրրիկի ձեռքից չենք ազատվելու, տեսնո՞ւմ ես, թե ինչպես է փչում, կարող է մեզ ձորը ձգել կամ ժայռից ցած գլորել, — պատասխանեց մյուսը:

— Չէ՛, քամին ոչինչ չի կարող անել, եթե դևերը մեզ չմոլորեցնեն,— սրախոսեց մյուսը:

— Դևերն այստեղ գործ չունեն, — մռմռաց մյուսը և վախեցած ձեռքը դեպի ծոցը տարավ, ուր շոշափեց մի թուղթ: Նա կարծես վախենում էր, որ դևերը հափշտակենայդ թանկագին թուղթը, որի բովանդակության հետ միայն ինքն էր ծանոթ:

Ձիավորները լռելյայն առաջ էին գնում: Մրրիկը հետզհետե կատաղում էր, և հեռվից արդեն լսելի էր լինում որոտման խուլ դղրդյունը, քիչ հետո պիտի սկսվեր հեղեղը:Եվ, հիրավի, գիշերային ճանապարհորդները դեռ մի քանի մղոն չէին հեռացել, երբ առաջին փայլակը, դողդողալով, մի վայրկյան միայն լուսավորեց շրջակայքը, ապա, հանգչելով, կրկին խորին խավարի մեջ ընկղմեց այն:

Այդ ժամանակ առաջ գնացող ձիավորը հանկարծ քաշեց ձիու սանձը և կանգնեցրեց երիվարը:

— Ի՞նչ կա, տե՛ր հայր, ինչու՞ ձին կանգնեցրիք, — հարցրին մյուս ձիավորները՝ շրջապատելով առաջ գնացող ձիավորին, որը մեզ ծանոթ Կիրակոս քահանան էր:

— Փայլակի լույսի տակ մի մարդ անցավ մեր ճանապարհի մի կողմից մյուսը և թաքնվեց խրամատի մեջ: Վախենում եմ, որ մեզ լրտեսողներ լինեն:

— Օ՜, այդ անկարելի է, իշխանից մենք հրաման ունենք, որ ամեն մի լրտեսի կամ մեզ արգելք եղողի սպանենք, — պատասխանեց մյուսը:

— Պետք է մի փոքր էլ սպասել և կրկին փայլակի լույսով դիտել շրջակայքը, ապա թե ոչ ծուղակի մեջ կընկնենք:

Փայլակը նորից շողաց, ավելի երկար ու ավելի ահարկու, բայց շուրջը ամայություն էր տիրում և ո՛չ մի շարժուն կետ չէր երևում: Կիրակոս քահանան լայն բացածաչքերով ուզում էր ամեն մի քար, ամեն մի թուփ խուզարկել, սակայն վայրկենական լույսով ոչինչ չէր կարողանում աներ:

— Չէ՛, տե՛ր հայր, ոչինչ չկա, ինչպես երևում է գազան կամ մի ուրիշ կենդանի է եղել, որ շտապով անցել է մեր ճանապարհից, թե չէ ո՞վ կհամարձակվի այս տեսակեղանակին դուրս գալ: Մի՞թե նրանք մտադիր են գազաններին կերակուր դառնալու:

— Այո՛, էլ ոչ ոք չի երևում, բայց ես սխալված չպիտի լինեմ, կարծեմ մի մարդ էր, որ անցավ,— մտախոհ ասաց Կիրակոս քահանան:

— Դաշտը ընդարձակ է, մենք կարող ենք շեղվել մեր ճանապարհից և փոխանակ ուղիղ ճանապարհով գնալու՝ դաշտի միջով գնալ և ապա կրկին ճանապարհ ընկնել:

— Չէ՛, այդ անկարելի է: Գիշերը մութն է և մենք կարող ենք ճանապարհը կորցնել կամ խրամատների հանդիպել:

— Վախեցող մարդը գիշերը տանից չպետք է դուրս գա,— ասաց մեկը և ձին քշեց: Նրան հետևեցին մյուսները: Մի քանի քայլ դեռ չէին արել, երբ հանկարծ, քարերիտակից, մի մարդ դուրս թռավ և կանգնեց ձիավորի առաջ:

— Անձնատո՛ւր եղեք, ապա թե ոչ ձեզ մահ է սպառնում, — գոռաց նա մի այնպիսի խրոխտ ձայնով, որ մեր ճանապարհորդների մարմնով սառը դող անցավ: Նրանքմիառժամանակ քարացածի նման անշարժ մնացին և ապա, երբ փայլակի լույսի տակ նկատեցին, որ իրենց շրջապատողը միայն մի հետիոտն մարդ է, խելքներըգլխները ժողովեցին և սրերը հանելով հարձակվեցին նրա վրա:

— Ի՞նչ, դուք կռվել եք ուզում, — կանչեց նույն ձայնը և յուր ձեռքի ահագին փայտով խփեց մի ձիավորի, որ տեղն ու տեղը շունչը փչելով, ցած գլորվեց ձիուց: Մյուսձիավորները նկատեցին իրենց ընկերոջ մահը և ավելի կատաղությամբ հարձակվեցան, սակայն իրենց թրերով ոչինչ վնաս չկարողացան տալ երկար փայտին, որ աջու ձախ հարվածներ էր հասցնում և մինը մյուսի ետևից կիսամեռ ցած գլորում: Այդ խառնակության ժամանակ ձիավորներից մեկը, շեղելով ճանապարհը, կորավթմբի ետևը, երբ դարան մտնող մարդը յուր փայտով մի այնպիսի հարված հասցրեց վերջին ձիավորին, որ նա չկարողացավ անգամ մի ձայն հանել և ինչպես միփայտ գլորվեցավ գետին: Դարան մտած մարդը փայտը դեռ աջ ու ձախ էր պտտեցնում ու ինքն իրեն ասում...

— Ո՞ւր եք, էլ չկա՞ք, էլ չկա՞ք...

Տեսնելով, որ մարդ չկա, որի հետ կարող էր կռվել, դարան մտած մարդը փայտը մի կողմ նետեց և մոտենալով կիսամեռ մարդուն, որի բերանից փրփուր ու արյուն էրդուրս գալիս գոռաց.

— Է՛յ, անիծի՛ց արմատ, ասա, ո՞ր սատանի քամին էր տանում ձեզ և ո՞ւր:

Ընկած մարդը մահամերձ խռխռոց էր հանում և մի քանի անկապ, կցկտուր խոսքեր արտասանում: Կարծես նա յուր լայն բացած աչքերով ուզում էր տեսնել, թե ո՞վ էիրեն հետ խոսողը: Եվ երբ փայլակի լույսի տակ նկատեց իրեն վրա թեքված մարդուն, սոսկալի մի ցնցյուն արավ, ճիգ արավ գլուխը բարձրացնելու, բայց նորիցգլուխը վայր ձգելով՝ կանչեց.

— Խե՛նթը...

— Հա՜, Խենթը, լա՜վ ճանաչեցիր: Ասա, ո՞ւր էիք գնում, թե չէ մաս-մաս կանեմ քեզ:

Բայց վիրավորը մի քանի անկապ խոսքեր էլ ասաց և հանկարծ մորթած հավի նման մի քանի ցնցյուն անելով, մնաց անշարժ: Նա արդեն մեռած էր: Մեր Խենթը, երբայդ նկատեց, թողեց նրան և մոտեցավ մյուսներին: Ճանապարհին երեք դիակ միայն տեսավ, որոնց շորերը և գրպանները քրքրելուց հետո, ուզեց չորրորդ ձիավորինխուզարկել, բայց նրա դիակը չգտավ: Խենթը սոսկաց:

— Ո՞ւր է չորրորդը: Նրանք չորսն էին, չորս ձի, չորս մարդ: Վա՜յ ինձ, նա փախավ, նա տարավ, — ասաց նա և երկու ձեռքով գլխին տվեց:

Այդ ժամանակ հենց յուր գլխին ամպը կարծես ճայթեց, լսվեց որոտման ահռելի դղրդյունը և խոշոր անձրև սկսեց թափվել Խենթի գլխին...

Խենթը պահ մի կանգ առավ, խոր ախ քաշեց և յուր փայտն առնելով անցավ առաջ ու կորավ խորին մթության մեջ:

Գ

ԿԻՐԱԿՈՍ ՔԱՀԱՆԱՆ

Բոսֆորի գեղատեսիլ ափերին 1044 թվականին ծաղկում ու բարգավաճում էր Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: Մի կողմից՝ Պոնտական (Սև ծով), իսկ մյուս կողմից՝ Միջերկրական ծովերի ափերից վաճառականական նավերը շտապում էին դեպի հունաց այդ քաղաքը և վաճառականության հետ միասինծաղկեցնում նաև այդ քաղաքի ճարտարապետությունը: Առավոտյան ժամը տասն էր: Կ. Պոլիսը խիստ մեծ շարժողության մեջ էր, կյանքը եռ էր գալիս և ամենդասակարգի մարդիկ մրջյունների նման անց ու դարձ էին անում զանազան փողոցներում: Բեռնակիրները նավահանգիստներում ցած էին բերում նավերիցզանազան ապրանքներ կամ դեպի նավերն էին կրում հակերի բեռները: Փոքրիկ նավակներով անցնում էին իշխաններն ու իշխանուհիները Բոսֆորի մի ափիցմյուսը, իսկ զինվորականները զարդարված զենք ու զրահով, փայլուն զգեստներով և նժույգների վրա արագապես սլանում էին Կ. Պոլսո փողոցներով: Այդ միջոցինՀունաց Միքայել կայսեր պալատն էլ դղրդում էր պալատականներով, իշխաններով ու զինվորականներով: Թեև մի խումբ պահապաններ հսկում էին պալատիմուտքը, սակայն ամեն դասակարգի մարդիկ անց ու դարձ էին անում պալատի շքեղ աստիճաններով՝ ներկայանալու Միքայել

կայսեր: Ընդհանուր դահլիճի մեջարդեն հավաքված էին շատ խնդրատուներ և պալատի սենեկապետը մեկ-մեկ հրավիրում էր նրանց կայսեր առանձնասենյակը, ուր ինքը կայսրը գահին բազմածընդունում էր այցելուին և լսում նրա խնդիրքը:

Դահլիճի այցելուների մեջ գտնվում էր նաև մի հայ քահանա, որ եկել էր ներկայանալու կայսեր՝ մի կարևոր գործի համար, որ դեռ գաղտնիք էր ամենքի համար, և այդէր պատճառը, որ դեռ նրա վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում:

Իբրև մի աննշան հայ և այն էլ քահանա, նա կարգից դուրս դեռ շատ պիտի սպասեր, մինչև որ արժանանար կայսեր տեսությանը, որովհետև ամենից առաջընդունվում էին պաշտոնական և զինվորական անձինք, որոնք մեծ հարգանք էին վայելում այդ ժամանակ թե՛ պալատում և թե՛ քաղաքում:

Միջին հասակի տեր մարդ էր այդ քահանան, ճաղատ և խորամանկ աչքերով, որոնք թաքնված էին նրա դուրս ընկած հոնքերի տակ: Մորուսը ցանցառ և շեկ, իսկդեմքի արտահայտությունը՝ խրոխտ և հանդուգն: Արդեն մի քանի ժամից ավելի էր, ինչ նա սպասում էր, բայց դեռ իրեն չէին հրավիրել: Երևում էր, որանհամբերությամբ սպասում էր այն րոպեին, երբ իրեն ներս կհրավիրեն և իր գործը կվերջացներ:

Ըստ երևույթին այդ «գործը» նրան մեծ անհանգստության մեջ էր գցել: Նա մինչև անգամ մի քանի անգամ մտածեց դուրս գնալ պալատից, թողնել իրմտադրությունը, բայց կրկին զսպում էր իրեն, սպասում էր հետևանքին, սպասում էր վերջացնել իր գործը, որից կախված էր իր ապահովությունն ու երջանկությունը:Այդպես էր նա կարծում, այդպես էր համոզված:

Վերջապես հերթը նրան հասավ, և նրան ներս հրավիրեցին: Առաջին անգամ նրա սիրտը դող ընկավ, բայց հետո ինքն իրեն հավաքեց և ներս մտավ կայսերառանձնասենյակը: Երկյուղածությամբ նա բարձրացրեց աչքերը և տեսավ, որ ինքը Հունաց հզոր կայսեր առաջն է գտնվում: Իսկույն ծունկ չոքեց և համբուրեցկայսեր զգեստների ծայրը:

Կայսրը խրոխտ էր և դեռ չէր արժանացնում յուր հայացքն ուղղելու դեպի մի ողորմելի քահանա:

Վերջապես նա խոսեց:

— Ո՞վ ես, ի՞նչ ես ցանկանում, — ասաց նա:

— Կիրակոս հայ քահանա կասեն ինձ, ամենահզո՛ր կայսր, — ասաց դողդոջուն ձայով քահանան և մեկնեց դեպի կայսրը թղթի մի փաթեթ:

Միքայել կայսրը կարդաց թուղթը և գունատվեց: Ուրախությա՞ն, թե բարկության վրդովմունք էր, որ անցավ կայսեր դեմքով, հայտնի չէր: Միայն թե թղթիընթերցումը խոր տպավորություն գործեց նրա վրա: Ըստ երևույթին նա այդպիսի բան չէր սպասում: Նոր միայն նա յուր զինվորականների հետ խոսում էրՀայաստանի մասին, ծրագրեր էր կազմում Հայաստանը ձեռք ձգելու և, հանկարծ, բախտի բերումով, նրա ձեռքն են տալիս հայոց Հովհաննես-Սմբատ թագավորի առիր նախորդն ուղղած կտակի թուղթը, որով նա Հայաստանը հույներին էր հանձնում:

— Ո՞վ տվեց քեզ այս թուղթը, — հարցրեց կայսրը:

— Ձեր նախորդ Կոնստանդին կայսրը, տե՛ր, նա մահվան անկողնում կանչեց ինձ և, տալով այդ թուղթը, հրամայեց ետ տալ Հայոց Հովհաննես-Սմբատ թագավորին, սակայն ես…

— Սակայն դու՞…

Ես պահեցի ինձ մոտ, որպեսզի հանձնեմ Ձերդ Մեծությանը:

Կայսրը լուռ, ապուշ կտրած աչքերով նայում էր դավաճանին ու կարծես մտքում ասում՝ «Հայրենիքիդ ստոր և ցած դավաճան»: Նա սոսկումով լսում էր Կիրակոսքահանայի խոսքերը և զարմանում, որ այդ ասողը հայ է և այն էլ հայ քահանա:

— Ի՞նչ ես ուզում սրա փոխարեն, — հարցրեց կայսրը մի փոքր լռությունից հետո:

— Ահա այս նամակի մեջ հիշված է ամեն ինչ, — պատասխանեց Կիրակոս քահանան և հանձնեց կայսրին մի ուրիշ գրություն: Կայսրը կարդաց և՛ այդ նամակըգոհունակության ժպիտը փայլեց նրա դեմքին: Այդ նամակն էլ հայ իշխան Վեստ Սարգսիցն էր, որ Հայաստանը հույներին էր խոստանում տալ, միայն թեվարձատրեն իրեն: Նա ամեն պատրաստակամություն էր հայտնում օգնել Հայաստանը հույների ձեռքը տալու:

— Ասա՛, խնդրիր ինձանից, ինչ որ ցանկանում ես, ես կկատարեմ քո խնդիրքը, ես տեսնում եմ, որ դու հավատարիմ ծառա ես ինձ, — ասաց կայսրը ժպիտը երեսին:

— Ես Ձերդ Մեծության առողջությունն եմ ցանկանում և խնդրում եմ վարձատրել ինձ, որպեսզի ապահով անցկացնեմ կյանքիս վերջին մնացորդը, — ասաց Կիրակոսքահանան խոր գլուխ տալով:

Միքայել կայսրը ցավակցաբար գլուխը շարժեց: Նա զգաց, որ անպիտան քահանան յուր ապահովության համար ծախում է յուր հայրենիքի ազատությունը, ուստիդառնալով դեպի պալատականները ասաց.

— Ամենալավ պատիվներ տվեք այս քահանային և մեծ քանակությամբ ոսկով վարձատրեցեք: Սա մեծ ծառայություն է անում մեզ, — ապա, դառնալով Կիրակոսքահանային, ավելացրեց.

— Հայտնեցեք իմ համակրանքը հայոց թագավորության խնամակալ իշխան Վեստ Սարգսին և ասացեք, որ նա էլ կվարձատրվի ինձանից և շուտով իմ զորավարներիցմեկին կուղարկեմ Հայաստանը գրավելու, այն ժամանակ, ես վստահ եմ, որ հայերը ազատ շունչ կքաշեն զանազան բախտախնդիր իշխանների բռնություններից նբարբարոսների հարձակումից:

Կիրակոս քահանան խոր գլուխ տվեց, կրկին համբուրեց կայսեր զգեստի փեշի ծայրը և գոհ սրտով դուրս գնաց:

Ամեն ինչ կատարվել էր…

Ե

ԾԵՐՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ

1040 թվականին վախճանվեց Հովհաննես-Սմբատ Հայոց թագավորը, և Հայաստանը երերուն դրության մեջ ընկավ: Վերջին օրհասը մոտ էր, և Բագրատունյացշառավիղը պիտի հանգչեր ընդմիշտ: Այդ էր թուլամորթ թագավորի կտակ, այդ էր նրա թողած հիշատակը: Նա, մեռնելով, ժառանգ չթողեց: Ո՛չ, թողեց, բայց ոչկենդանի, խոսուն արարած, որը կարողանար լվանալ յուր խայտառակ թուլամորթությունը, այլ մի թուղթ, մի կտակ, որով իր նախնիներից սրբագործված երկիրը յուրմահից հետո հանձնում էր հույներին: Շատ թանկ ծախեց իրեն, հազարավորների և տասնյակ հազարավորների արյունով ու տանջանքով ապահովեցրեց յուր վերջինօրերը և, ազգի ազատությունը կորցնելով, գերեզման իջավ:

Սև՛ հիշատակ: Ճիշտ այդ ժամանակն էր, և դեռ թուլամորթ թագավորի հոգին պտտվում էր Անիի վրա, երբ հայ իշխաններից մեկը՝ Վահրամ Պահլավունին, սև

սուգիմեջ էր մտել: Նա սուգ էր պահում ոչ թե թագավորի համար, այլ ազգի, Անիի 1001 եկեղեցիների համար: Նա զգում էր, որ նրանք պիտի կործանվեն, որ Հայաստանը պիտի կործանվի յուր իսկ ազգից և օտարներին ոտնակոխ լինելով պիտի տանջվի, չարչարվի և անեծք միայն պիտի կարդա յուր թագավորին:

Վահրամ Պահլավունուն հայտնի էր թագավորի կտակի գոյությունը, և այդ բանը խիստ հուզում ու կսկծեցնում էր նրա սիրտը: Երեք օր էր նա դուրս չէր եկել, ոչ ոքիերես չէր ուզում տեսնել, ոչ ոքի չէր ուզում ընդունել, այլ փակված յուր սենյակում ընկել էր մտածության ծոցը և մի ելք էր փնտրում՝ Հայաստանը այդ անելանելիդրությունից ազատելու, բայց ոչ մի բանի վրա չէր կարողանում կանգ առնել: Մտքերն ահարկու կերպով պաշարում էին նրան և տակնուվրա անում նրա սիրտը:Երբեմն-երբեմն նրա մտքերը վիթխարի գազանների նման գլուխները վեր էին բարձրացնում և հուզում էին նրա սիրտը, ճնշում, տակնուվրա անում նրան, կարծեսպիտի ցամաքեր նրա արյունը երակների մեջ կամ ցնդեր ուղեղը: Այդ ժամանակ մի վայրենի մռնչյուն միայն դուրս էր թռչում նրա բերանից և նրա աչքերից բոց ուկրակ ցայտում: Վա՜յ այն թշնամուն, ով այդ ժամանակ նրա առաջ դուրս գար, նա պատրաստ էր նրա արյունը անգամ խմելու: Իսկ երբեմն մտքերը նրան գուրգուրումէին, փայփայում և իրենց թևերի վրա տանում նրան ո՞վ գիտե ուր: Այդ ժամանակ միայն նրա աչքերի մեջ երևում էին արտասուքի վճիտ կաթիլներ, որոնք գլորվելովնրա ալեզարդ մորուքի վրայից, ընկնում էին ցած: Ի՞նչ արցունքներ էին դրանք, ուրախությա՞ն, թե տրտմության, վշտի՞, թե բերկրանքի — հայտնի չէր, միայն թե այդժամանակ նրա սրտից դուրս էր թռչում մի այնպիսի հառաչանք, որ խորին կսկծի արտահայտություն էր նշանակում: Եվ այդ հառաչանքները միայն քիչ թե շատամոքում էին ծերունի հայրենասերի սիրտը...

Հենց այդ տեսակ դրության մեջ էր ծերունի Վահրամը, երբ յուր սենյակի դուռը բացելով շեմքի վրա երևաց նրա աղջիկը, որ տասնվեց տարին տեսած մի գեղանիօրիորդ էր: Ծերունին շփոթվեցավ: Նա ուզեց յուր արցունքները, յուր վիշտը թաքցնել աղջկանից, բայց ուշ էր:

— Հա՛յր, դու լալի՞ս ես, — կանչեց օրիորդը և փաթաթվեց հոր վզով:

— Գոհա՜ր, սիրելի՛ աղջիկս, ինչու՞ եկար վրդովելու քո հոր խաղաղությունը, — պատասխանեց Վահրամը և համբուրեց աղջկա ձյունափայլ ճակատը:

— Ա՜խ, հայր, դու արտասվում ես, առանց հարցնելու, թե ինչպե՞ս է բաբախում սիրտս և ինչպես շփոթվում հոգիս, երբ ես քո արցունքներն եմ տեսնում: Մի՞թե դու քոԳոհարին չես ճանաչում, որ թաքցնում ես ինձանից քո վիշտը, քո

տրտմությունը: Ասա՛ ինձ, հայր, ի՞նչ փոթորիկ է սպասում հայրենիքին, ի՞նչ վտանգ է սպառնումՀայաստանին, որ քեզ ստիպում են լալու և արտասվելու:

— Չէ՛, Գոհարիկ, քո զգայուն սիրտը չի դիմանա այն հարվածին, որ պատրաստվում է հայրենիքին: Ես գիտեմ, որ դու հորդ պես սիրում ես հայրենիքդ, ուստի ևվախենում եմ քեզ հայտնելու այն գույժը, որ պտտվում է մեր Անիի գլխին:

— Ի՞նչ է, հայրի՛կ, դու ինձ սարսափեցնում ես:

— Այո՛, աղջիկս, սարսափելի է, խի՛ստ սարսափելի:

— Ի՞նչ, մի՞թե կրկին ապստամբություն կամ մի որևէ իշխանի ստորություն ես լսել:

— Ո՛չ, ո՛չ, հորդ երակների մեջ վախկոտի արյուն չի վազում, որ երկյուղ կրե մի որևէ իշխանի դավաճանությունից, բայց այժմ դրանից սոսկալի բան է սպառնում մեզ:

— Հա՛, հասկանում եմ, կրկին Վեստ Սարգսի խարդախությունները կլինեն քեզ վրդոված:

— Անին ձեռքներիցս գնում է, աղջի՛կս, թագավորը, ո՛հ, այն թուլամորթ թագավորը յուր կտակով Անին հանձնում է հույներին յուր մահից հետո, այժմ մենք թագավորչունենք, գլուխ չունենք: Անիի գահը թափուր է և այդ գահի համար ո՞վ գիտե ինչեր է ծրագրում մեր խնամակալը՝ իշխան Վեստ Սարգիսը:

— Ի՞նչ պիտի ծրագրի, մի՞թե դու և մեր իշխանները թույլ կտաք, որ Վեստ Սարգիսը ոտնատակ անի օրինավոր ժառանգի իրավունքը: Չէ՞ որ Գագիկը կենդանի է:

— Այո՛, կենդանի է, բայց ո՞ւր է պահված նա: Անմեղ գառը ի՞նչ պիտի անի գայլի ճանկերում: Վեստ Սարգսի երեսից փախել են պատանի Գագիկը և մեր հայրենասերիշխանները, իսկ մի քանի իշխաններ Վեստ Սարգսի ձեռքում կույր գործիք են դարձել: Հայաստանը ներկայումս գտնվում է այդ խաբեբա իշխանների ձեռքին, որը թևառած հույներից, կարծես ձգտում է գահը ձեռք բերել, թեկուզ քանդվի Հայաստանը: Ահա թե ինչն է սարսափեցնում ինձ...

— Հա՛յր, մի՞թե քնած են բոլոր իշխաններն էլ, մի՞թե չի գտնվում նրանց մեջ պարտաճանաչը, հայրենիքի վշտին ամոքողը, որ թույլ են տալիս Վեստ Սարգսին յուրնանելու…

— Չէ՛, դեռ ամեն բան վերջացած չէ: Դեռ մեռած չէ Վահրամը, որ թույլ տա Վեստ Սարգսին գահը հափշտակելու, սակայն ես վախենում եմ, որ Վեստ Սարգիսը հույներիօգնությամբ մեծ վնաս պատճառի հայերին: Չէ՞ որ ըստ Հովհաննես-Սմբատ թագավորի կտակի այժմ Անին հույներին է պատկանում: Մի՞թե նրանք այս համեղպատառը ձեռքներից բաց կթողնեն, առանց առիթից օգտվելու:

— Անիծվե՛ն դավաճանները, անիծվի՛ Վեստ Սարգիսը, որ Հայաստանը արյան ասպարեզ պիտի շինի, — կանչեց Գոհարը և նրա աչքերում արցունքներ երևացին:

— Մի՛ վրդովվիր, Գոհարի՛կ, ես գիտեմ, որ դու սիրում ես հայրենիքդ, որ դու կյանքդ էլ չես խնայի սիրուն Անիի համար, ուր մնաց, որ դու մտածեիր քո Հարպիկիհամար: Չէ՞ որ, եթե քո նշանած Հարպիկն ընկնի պատերազմի մեջ, այդ քո անվան համար փառք է:

— Ո՛չ թե նա, այլ ե՛ս, ե՛ս եթե ընկնեմ Անիի փլատակների տակ՝ մեծ երանություն է ինձ համար: Ես սիրում եմ այն տղամարդին, որը յուր հայրենիքի համար կուրծքըդեմ կտա պաշտպանելու և ոչ թե անարգ զինվորի նման փախուստ կտա կռվի դաշտից: Հարպիկին ես ճանաչում եմ, նա վախկոտներից չէ, և վա՛յ նրան, ով նրա սրիբերանն ընկնի:

— Այո՛, Գոհարիկ, այո՛, իմ հույսն էլ Հաբելի որդոց վրա է: Ես գիտեմ, որ նրանք, բոլորն էլ, չորս եղբայրն էլ, որոնց թվում քո Հարպիկը, քաջ և հայրենասեր տղաներ են:Նրանք փախուստ չեն տա կռվի դաշտից, եթե իրենց կյանքն էլ դնելու լինեն. իսկ Հարպիկը՝ այդ ազնիվ, հայրենասեր տղան, արժանի փեսացու է քեզ:

— Այո՛, նրանք արժանի են քո գովասանքին, հայրի՛կ, և կտեսնես, որ քո աղջիկն էլ ետ չի մնա նրանցից, — պատասխանեց Գոհարիկը, և նրա աչքերը փայլեցին միտեսակ ոգևորությամբ:

Վահրամը հուզվեց: Նա գրկեց աղջկան, մի համբույր դրոշմեց նրա ճակատին, սակայն Վահրամ իշխանի սիրտը հանգիստ չէր: Նա զգում էր, որ մի ինչ-որ չարագուշակբան պտտվում է Անիի գլխին:

Զ

ՊԱՅՏԻՑ-ՍՈՒՐ

Տաղտկալի աշունն էր սկսվել...

Թռել էին ծիծեռնակները, դաշտերն ու լեռները գունատվել, երկինքը գորշ գույն ստացել, որի վրա միշտ սողում էին անվերջ վիատեցուցիչ ամպեր... Բնությունըմեռնում էր… Մեռնում օրեցօր՝ գարնանը կրկին արթնանալու, կրկին զվարթանալու հույսով, այնինչ մարդկանց սրտերին պատում էր մի տեսակ թախիծ, մի տեսակկսկիծ, որ անջնջելի կերպով դրոշմում էր այնտեղ մի խոր ակոս... Մարդիկ զգում էին, որ ձմեռն էլ գլորվում է հավիտենականության գիրկը, որ նրանք մի տարով էլմոտենում են դեպի անդառնալի կորուստը...

Աշնանային ցուրտ քամին փչում էր Անիի դաշտավայրում և մաղում անձրևի կաթիլներ: Անի քաղաքի մեջ այդ միջոցին դադարել էր շարժումը, դադարել էինմանուկների ճչյունը, փողոցների աղմուկն ու ժխորը: Ամեն տեղ լուռ էր և խաղաղ, չորս կողմ արդեն տիրում էր խավարը, տեղ-տեղ առկայծում էին լույսի թույլցոլմունքներ:

Այդ միջոցին Անիի պարիսպներից դուրս, մի առանձնացած փոքրիկ խուղում վառ կերպով առկայծում էր կանթեղի լույսը: Գետնափոր էր այդ խուղը, որի առաջ ընկածէին փայտեր և մի քանի պայտելու գործիքներ: Այդ խուղը, որի մեջ բնակվում էր դարբին Ղևոնդը և յուր աղջիկ Լուսիկը, գտնվում էր Անի քաղաքը տանողճանապարհի վրա, ուր, արևի ծագելուց մինչև մուտքը դարբին Ղևոնդը պայտում էր անցորդ եզների և ձիերի ոտքերը, իսկ այնուհետև, մինչև խոր գիշեր, նա պայտերէր կռում և ապա խոնջացած մարմնով քուն մտնում: Մինչդեռ նրա աղջիկը հոգում էր տան պիտույքները: Մի քանի տարի էր, ինչ վախճանվել էր դարբին Ղևոնդիկինը, և տան բոլոր հոգսերը ծանրացել էին Լուսիկի վրա: Նա էր լվանում կտավիքը, կտրում, կարկատում հանդերձները, կթում իրենց ունեցած միակ կովը և յուղ ուպանիր պատրաստում:

Հանգիստ ու խաղաղ էր անցնում ծերունի դարբնի կյանքը և նա միշտ, գործը վերջացնելուց հետո, դիմում էր իր սիրուն աղջկան ու ասում.

— Լուսի՛կ ջան, բեր տեսնենք ի՞նչ ես պատրաստել հորդ համար:

Իսկ Լուսիկը ժպիտը երեսին, վառվռուն աչքերով շտապով փռում էր թախտի վրա կապույտ սփռոցը, շարում այնտեղ բոքոնն ու լավաշը ու թանե տաք ապուրը և ապաերկուսն էլ նստելով կողք-կողքի, ուտում էին աստծո տված կերակուրը և ապա, ճրագը հանգցնելով, քնի հրեշտակը տարածում էր իր հովանի թևերը մինչև կենարարլույսի առաջին ցոլմունքները:

Սակայն այս գիշեր այդպես չէր դարբին Ղևոնդի խուղը: Դարբին Ղևոնդի դեմքը մռայլ էր և խիստ: Նա շտապ-շտապ երկաթը կրակն էր կոխում, շիկացնում և ապաայն զնդանի վրա դնելով, մուրճով ծեծում էր, կրկին հանում ու դարձյալ ծեծում: Եվ զարմանալի բան: Մուրճի տակ երկաթը փոխանակ պայտի ձև ստանալու, երկարու տափակ ձև էր ստանում, որ ամենևին պայտի նմանություն չուներ: Այս գիշեր կարծես ինքն էլ չէր հասկանում, թե ինչ է շինում: Նկատելի էր միայն, որ նա խիստվրդովված, խիստ հուզված էր, և մտքերը կրծում էին նրա սիրտն ու հոգին:

Գործը վերջացնելու սովորական ժամն արդեն անցել էր, բայց դարբին Ղևոնդը տեղից չէր շարժվում. նա հնոցը ավելի էր շիկացնում և կարծես ամենևինմտադրություն չուներ գործը ընդհատելու, այսինչ Լուսիկը ընթրիքը պատրաստել էր և հոր վեր կենալուն էր սպասում: Մի քանի անգամ նա մոտեցավ հորը նզարմացավ նրա օտարոտի դեմքի արտահայտությունից: Յուր հոր դեմքը առաջվա նման հեզ և բարի չէր, այժմ խրոխտ և սպառնալից էր: Ի՞նչ բան էր արդյոքվրդովել յուր հորը, ո՞վ էր արդյոք բարկացրել նրան՝ չգիտեր, բայց այս անգամ, երբ նկատեց, որ հայրը փոխանակ պայտի, ուրիշ բան է շինում, սարսափեց:

— Հայրի՛կ, սիրելի՛ հայրիկ, — կանչեց Լուսիկը սրտատրոփ:

Դարբինը չլսեց աղջկա ձայնը, նա ուժգնությամբ մուրճը զարկում էր սալին և շիկացած երկաթը փափկացնում:

— Հայրի՛կ, մի՞թե ինձ չես լսում, — ասաց Լուսիկը և քաշեց նրա փեշը:

Դարբինը դադարեցրեց մուրճ զարկելը, դեմքը շուռ տվեց դեպի աղջիկը և մի քանի վայրկյան լուռ, անմիտ աչքերով Լուսիկին նայեց: Կարծես նա այդ վայրկյանին չէրճանաչում յուր աղջկան, կարծես յուր սիրելի աղջիկը չլիներ առաջը կանգնած:

— Հայրի՛կ, ի՞նչ է պատահել քեզ, — սարսափած կանչեց Լուսիկը:

Դարբին Ղևոնդը ցնցվեց, նա կարծես ետ մղեց իրենից մռայլ մտքերը, և նրա դեմքը մի վայրկյանում կրկին ստացավ իր սովորական արտահայտությունը: Նրա դեմքըայժմ հեզ էր ու բարի, և այդ հեզ ու բարի դեմքին փայլեց երանության մի ժպիտ:

— Ի՞նչ է, Լուսի՛կ, իմ աննմա՛ն աղջիկ, — պատասխանեց դարբինը:

— Դու հիվանդ չե՞ս, հայրի՛կ:

— Օ՛, ո՛չ, աղջիկս, ես հիվանդ չեմ, թող տերը պահե ինձ հիվանդությունից:

— Այդ ի՞նչ ես շինում, հայրի՛կ, դու ինձ վախեցնում ես:

— Հը՛մ, ինչ եմ շինում, մի՞թե չես տեսնում, իմ աննմա՛ն Լուսիկ, թե ինչ եմ շինում: Ի՞նչ էր շինում հայրդ մինչև հիմա:

— Պայտեր: Բայց դրանք պայտեր չեն, հայրի՛կ:

— Այո՛, պայտեր չեն, աղջի՛կս, սրեր են, սրեր: Պայտերը սրերի փոխվեցան: Այժմ հայրդ էլ պայտեր չէ շինում չորքոտանիների ոտքերը պայտելու, այլ սրեր է շինումթշնամիների սիրտը մխելու, — ասաց դառն ժպիտով դարբին Ղևոնդը և վերջին շիկացած երկաթն էլ տափակացնելով շպրտեց մի կողմ և, մուրճը ցած դնելով, ասաց.

— Այսօր բավական է, այժմ պետք է ընթրիք անել և հանգստանալ:

— Դու ինձ սարսափեցնում ես, հայրի՛կ, այդ ի՞նչ սրեր են և ինչու՞ համար:

— Ամեն բան կիմանաս, դուստրս, համբերություն ունեցիր, միայն ցավում եմ, որ մեր այսօրվա հյուրը չեկավ: Ես հարկավոր լուրեր ունեի նրան հաղորդելու:

— Ո՞վ չեկավ, հայրի՛կ:

— Գոհարիկը: Մի՞թե չգիտես, որ նա միշտ այցելում է:

— Երևի այս գիշեր անձրևը արգելք եղավ նրա գալուն: Լուսիկը էլ ոչինչ չհարցրեց: Նրանք սեղան նստեցին և սկսեցին վայելել ընթրիքը: Անձրևը կրկին մաղում էր, նաշնանային քամին յուր նվագը ածում: Հենց այդ ժամանակ դրսից ոտնաձայներ լսվեցին և ապա քիչ հետո՝ հետևյալ խոսքերը.

Ինձ մի՛ հարցնեք՝ ո՞վ եմ ես,
Սիրուն ու շեն Անին եմ ես:

— Խե՛նթն է, — կանչեցին հայր ու դուստր և աչքերը դեպի դուռը ձգեցին:

Հիրավի, մի քանի վայրկյանից հետո, խուղի դռներում երևաց մեզ ծանոթ Խենթի աժդահա կերպարանքը յուր մեծ փայտը ձեռքին:

— Ողջո՛ւյն բարեկամներիս, — ասաց նա, փայտը մի կողմ դրեց և մոտեցավ նրանց: — Ինչպես երևում է, լավ ժամանակ հասա և արժանի կլինեմ Լուսիկի քնքուշմատներով պատրաստած անուշ ապուրը ուտելու:

— Համեցե՛ք, համեցե՛ք, մեր գլխի վրա տեղ ունես, — ասաց դարբինը ուրախացած, տեղ տալով նրան:

Խենթը նստեց, փայտյա գդալով մի քանի ումպ ապուր խպշտեց և ապա, ետ նստելով, ասաց.

— Ո՛ւֆ, օրհնվես դու, Լուսի՛կ, սիրտս հովացավ:

— Քո սիրտը շատ շուտ է հովանում, Խե՛նթ, իսկ իմը՝ օ՜... Քո տված լուրը ինձ այրում, խորովում է, — պատասխանեց Ղևոնդը:

— Է՜հ, վարպետ, այդ տեսակ փոթորիկներ շատ են եկել ու գնացել, այդ էլ կանցնի: Բայց ափսոս, որ այն մեկին բաց թողի և նա տարավ յուր հետ սև Մարդու թուղթը: (Այսպես էր անվանում Խենթը Վեստ Սարգսին):

— Հա՛, տարավ, բայց ո՞վ գիտե՝ ինչ թուղթ էր:

— Սատանան նրա հետ, մեր Վահրամ իշխանը մեռած չէ, որ Վեստ Սարգիսը կարողանա մի բան անել: Բայց ցավում եմ, որ Գոհարի սիրտը կվրդովվի:

— Այսօր նա պիտի գար, չեկավ: Դու հայտնեցի՞ր նրան եղելությունը, Խե՛նթ, — հարցրեց դարբինը:

— Չէ, դեռ չեմ հայտնել: Վաղը, անշուշտ, ես ամեն բան կհայտնեմ:

— Իսկ ի՞նչ են ասում նրա որդեգիրները:

— Օ՜... նրանք օրհնում են Գոհարի կյանքը: Թող այդ տեսակ օրիորդների թիվը բյուրապատիկ դառնա: Հարյուրավոր որբեր և աղքատներ օգտվում են նրաբարիքներից:

— Այդ մենք գիտենք, Խե՛նթ, բայց տեսնենք ի՞նչ կասի օրիորդը Վեստ Սարգսի վարմունքի մասին: Տեսնենք նա կրկին յուր բարությամբ ուշադրություն չի՞ դարձնի, թե նշանակություն տալով կզգուշանա: Չէ՞ որ Վեստ Սարգիսը գործում է ուղղակի Վահրամի, յուր հոր դեմ:

— Այդ թողնենք, վարպե՛տ, Խենթը խիստ հոգնած է, այսօր հարյուր տուն է շրջել և բաժանել օրիորդի տված դրամները: Նա քնել է ուզում, — ասաց Խենթը և վերկացավ տեղից:

Լուսիկը սփռոցը ժողովեց, իսկ Խենթը, մի երգ մռմռալով, սկսեց քայլել խրճիթի մեջ, երբ նկատեց հնոցի մոտ թափված սրերը:

— Այս ի՞նչ ես շինում, վարպե՛տ, — ասաց նա՝ դիմելով Ղևոնդին:

— Չե՞ս տեսնամ՝ սրեր:

— Իսկ պայտե՞րը:

— Պայտերը էլ ձեռք չեն տալիս: Այժմ սրեր են պետք մեր Վահրամին պաշտպանելու:

— Հա՛... հա՛... հա՛... Ապրի՛ս, վարպետ, երևում է, որ փորձված մարդ ես: Վաղօրոք սրեր ես պատրաստում թշնամիների կուրծքը մխելու:

Անցավ կարճ ժամանակ, և խորին լռությունը տիրեց այդտեղ:

Է

ՍԵՎ ՄԱՐԴԸ

Երկու ձիավոր, Անի քաղաքից դուրս գալով, բռնեցին դեպի Սուրմառուի բերդը տանող ճանապարհը և դանդաղությամբ առաջ էին գնում: Ձիավորներից մեկը Հայոցթագավորության խնամակալն էր՝ գոռոզ իշխան Վեստ Սարգիսը, իսկ մյուսը՝ նրա հավատարիմ ծառա Եղոն:

Մռայլ էր իշխանի դեմքը, մռայլ էր ծառայի դեմքը: Ու՞ր էին նրանք գնում և ինչո՞ւ երկուսն էլ տխուր էին՝ հայտնի չէր: Սակայն երկուսի դեմքից էլ նկատելի էր, որնրանց հոգին հուզվում է, որ նրանք վրդովված են, անհանգիստ և ինչ-որ բան տանջում էր երկուսին էլ: Չէր խոսում տերը, չէր խոսում ծառան: Նրանցից ամեն մեկըյուր մտքի հետ ընկած առաջ էր գնում, մինչև որ հասան մեզ ծանոթ դարբին Ղևոնդի խուղի առաջ և կանգնեցրին ձիերը: Դարբին Ղևոնդը նստած էր յուր զնդանիառաջ և մի ինչ-որ երկաթի կտոր դրած սալին մրճում էր: Նա չէր նկատել, թե ինչպես երկու ձիավոր կանգնել էին առաջը և իրեն էին նայում:

— Եղո՛, ցած իջիր, պետք է ձիուս ոտքը պայտել, թե չէ նա ինչ-որ սկսում է կաղալ:

Եղոն ցած թռավ և, բռնելով Վեստ Սարգսի ձիու սանձը, օգնեց իշխանին իջնելու:

Դարբին Ղևոնդը դեռ ապշած նայում էր իշխանին, երբ Եղոն գոռաց նրա վրա.

— Է՛յ, տխմա՛ր, ի՞նչ ես ապուշի նման նայում, իշխա՛նն է, պետք է նրա ձին պայտել:

Դարբինը ակամայից գլուխ իջեցրեց իշխանին և ապա նստելու տեղ ցույց տալով նրան, ինքը գործի անցավ:

«Հը՛մ, լավ բանի համար չեք լինի գնալիս, — մտածեց Ղևոնդը, — ես ձեր ձիերը այնպես պայտեմ, որ կես ճանապարհին մնաք»:

Նա վերջացրեց գործը և ապա, դառնալով իշխանին, ասաց.

— Պատրաստ է, տե՛ր:

— Լա՞վ պայտեցիր, վարպե՛տ:

— Հրաշալի, տե՛ր, ամբողջ տարին բավական է, — ասաց դառն ժպիտով Ղևոնդը:

— Ապրի՛ս, վարպետ, — ասաց իշխանը և հեծնելով ձին, մի ոսկի շպրտեց վարպետին: Բայց Ղևոնդը, շտապով բարձրացնելով դրամը, դիմեց իշխանին՝ ասելով.

— Տե՛ր, ես այս ոսկին չեմ կարող ընդունել:

— Ինչու՞, վարպե՛տ, ինչու՞ չես կարող ընդունել, — զարմացած հարցրեց իշխանը՝ ձիու սանձը քաշելով:

— Այս ոսկին, տե՛ր, այս ոսկին…

— Ի՞նչ այդ ոսկին:

— Մեր մեծ իշխանից դրամ չենք վերցնում, — ասաց Ղևոնդը և երեսը շուռ տվեց:

— Լա՛վ, — ասաց Վեստ Սարգիսը և մտրակեց ձիուն:

Նրանք առաջ գնացին, այնինչ Ղևոնդը երկար ժամանակ նայում էր նրանց ետևից և ինքն իրեն մռմռում.

— Որովհետև քո ոսկու մեջ թույն կա, իշխա՛ն, թո՛ւյն, օձի թույնից էլ զորավոր:

Ղևոնդը կրկին գործի անցավ, այնինչ իշխանն ու ծառան սլանում էին առաջ: Երբ նրանք բավական առաջ գնացին, երբ նրանք շրջապատվեցին լուռ դաշտերով, այնժամանակ Վեստ Սարգիսը դանդաղեցրեց ձիու ընթացքը և մոտ կանչեց ծառային:

— Եղո՛, — ասաց նա, — մոտ արի, մեր անելիքի մասին խոսենք: Գիտեմ, դու հավատարիմ ես ինձ, ուստի ես քեզանից գաղտնիք չեմ պահում: Այս բնության ծոցումմենք ազատ ենք և ոչ ոք չի կարողանա լրտեսել մեզ:

— Հրամայիր, տե՛ր, ես պատրաստ եմ լսելու: Եղոն, իշխա՛ն, քո ստրուկն է և կյանքը պատրաստ է քեզ համար զոհելու:

— Գիտեմ: Բայց, լսիր, ինձ մանրամասն մեկ էլ պատմիր, թե որտեղ է թաքնված պատանի Գագիկը, կամ ավելի լավ է ասել, որտե՞ղ են թաքցրել նրան:

— Նա անապատի վանքումն է ապաստանած, տե՛ր, ես և Մարկոսը լավ լրտեսեցինք նրա տեղը: Վահրամյանք ամեն կերպ աշխատում են գաղտնի պահել և նրահետքը ծածկել, սակայն նրանք չգիտեն, որ ասեղ չի թաքնվի իմ աչքերից:

— Ապրիս, Եղո՛, բայց, ասա ինձ, ի՞նչ կյանք է վարում նա վանքում, մի՞թե վանականների նման նա էլ աղոթքի է ապավինած:

Եղոն ժպտաց:

— Ո՛չ, տեր, վանականների մեջ նա ապրում է արքայի պես: Հագին ունի ընտիր արքայական զգեստ, և չնայած նրա 14-ամյա հասակին, զենք ու զրահի մեջ է կորած ներբեք չի բաժանվում այդ զենքերից:

— Ի՞նչպես: Մի՞թե նա հույս ունի արքայական գահը բարձրանալու, — ասաց Վեստ Սարգիսը դառն ժպիտով և նրա աչքերում երևացին վրեժխնդրության մոլիկայծակներ:

— Ինչպես երևում է, տե՛ր, նա այդ միտքն էլ ունի, որովհետև գիշեր-ցերեկ զինավարաժությամբ է զբաղվում:

— Կտեսնենք, Եղո՛, կտեսնենք, թե նա ինչպես կժառանգի այդ արքայական գահը: Միամի՛տ պատանի...

— Այդ պատանին մեղք չունի, իշխա՛ն, նրան դրդում են Վահրամյանք, որպեսզի նրան թագավորեցնելով իրենց գաղտնի նպատակներին

հասնեն: Նրանք չեն ուզումքեզ նման լավ խնամակալ ունենալ, որովհետև գիտեն, որ դու նրանց պակասությունը երեսներով կտաս և թույլ չես տա, որ ազգը կործանվի դրանցխարդախությամբ, — պատասխանեց Եղոն՝ շողոքորթելով իր տիրոջը, որին միշտ դուր էին գալիս այդ տեսակի խոսքերը:

— Բայց այդ ծերունի աղվեսը չի հասնի յուր նպատակին: Նա կտեսնի, թե ինչպես կջախջախվեն յուր նպատակները, երբ յուր փայփայած Գագիկը այլևս չի լինի: Այնժամանակ տեսնենք ո՞ւմ կառաջարկի թափուր մնացած արքայական գահի վրա:

Եղոն ապուշ կտրած նայեց յուր տիրոջ դեմքին: Այդ դեմքը զարհուրելի և դաժան էր, որից Եղոն անգամ սոսկաց: Դժոխքը արտացոլվում էր իշխանի աչքերում:

Նրանք մի փոքր լուռ առաջ անցան, երբ Վեստ Սարգիսը, դիմելով Եղոյին, խուլ գերեզմանային ձայնով ասաց.

— Եղո՛:

— Հրամայիր, տե՛ր:

— Պետք է մի ծանր գործ կատարես և հարթես իմ ճանապարհը: Պատանի Գագիկին պետք է ճանապարհից հանել: Նա արգելք է ինձ:

Եղոն հասկացավ տիրոջ միտքը և ցնցվեց:

— Ի՞նչպես, — հարցրեց նա՝ նորից տիրոջ դեմքին նայելով:

— Ի՞նչպես, այդ քո գիտենալու բանն է: Բայց թե պատանի Գագիկը այլևս գոյություն չպետք է ունենա այս աշխարհում: Նա պիտի մեռնի:

— Իշխա՛ն…

— Ո՛չ մի բառ, — ընդհատեց Վեստ Սարգիսը խրոխտ ձայնով, — նա պիտի մեռնի: Իսկ երբ կկատարես այդ, այն ժամանակ մեծամեծ պարգևների կարժանանաս:Ասա՛, համաձա՞յն ես:

Տիրեց մի վայրկյան լռություն: Տեր և ծառա իրար աչքերի էին նայում: Նրանք կարծես ուզում էին թափանցել իրար հոգու խորքը:

— Պատրաստ եմ կամքդ կատարելու, իշխա՛ն, — վերջապես ասաց Եղոն:

Մի վայրկյան, և Վեստ Սարգսի մռայլն անցավ դեմքից: Անհուն ուրախության ժպիտ փայլեց նրա դեմքին և, մոտեցնելով յուր ձին Եղոյին, գրկեց նրան, համբուրեց նպինդ սեղմելով՝ ասաց.

— Ապրե՛ս, Եղո՛, դու արժանի ես իմ վստահության: Մենք մանրամասնության մասին հետո կխոսենք:

Երկուսն էլ մտրակեցին ձիերին և առաջ անցան:

Երեկո էր, երբ հասան Սուրմառուի բերդը, ուր իշխան ու ծառա փակվեցին առանձնասենյակում:

Ը

ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Խրամ գետը կատաղել էր: Պղտոր ալիքներով քշում տանում էր քար ու փայտ և կատաղած գազանի նման փրփուրը բերանին վազում առաջ... Խրամ գետից մի փոքրվեր, Շամշուլդե բերդից ոչ հեռու, մի ժայռի գլխին փայլում էր ս. Անապատ վանքի կաթուղիկեն: Այդ վանքի մեջ լսվում էր սաղմոսերգության տխուր մեղեդին:Երեկոյան պահին էր: Արևը արդեն թեքվում էր դեպի յուր մուտքը, իսկ աշխարհային գծուծ գործերից հեռու փախած կրոնավորները իրենց երեկոյան աղոթքն էինմրմնջում: Քսանից ավելի կրոնավորներ, ծունկ չոքած սեղանի առաջ, աղոթում էին աստծուն և փառաբանում նրան…

Սրբոց պատկերների առաջ վառվում էին կանթեղներ և անուշահոտ խնկի ծխով խնկարկում նրանց: Մի տեսակ աստվածային, վեհանձն երկյուղած տպավորությունէր թողնում օտարի վրա այդ վայրկյանը, ս. Անապատի վանքը յուր աղոթող կրոնավորներով: Այն ամենը, ինչ աշխարհային է, մոռացվում էր այդտեղ և մի տեսակդյութական զորությամբ լցնում մարդու հոգին:

Այդ կրոնավորների հետ ահա ծունկ չոքած Աստվածամոր պատկերի առաջ, լուռ աղոթում էր և մի տասնչորսամյա պատանի, որը տարբերվում էր կրոնավորներիցյուր մատաղ հասակով և զգեստներով: Այդ պատանին կրոնավորների նման, սևազգեստ չէր, այլ փայլուն արքայական զգեստի հետ միասին զենք ու զրահի մեջ էրկորած: Այդ զենքերից նա աղոթելու ժամանակ անգամ չէր բաժանվում: Չնայած մատաղ հասակին, նրա բաց, ազդող հայացքի տակ կարծես թաքնված լիներ միխորին վիշտ, որը կարծես կրծում էր նրա սիրտը: Ի՞նչն էր արդյոք վշտացրել նրա մատաղ հոգին, ինչու՞ նրա սիրուն դեմքին դրոշմված էր վշտի

անողորմ կնիքը, քանի որ այդ հասակում աշխարհային հոգսերը գոյություն չպիտի ունենան և նա միշտ պիտի ժպտա, փայլի արևի պայծառ ճառագայթների պես: Կամ ինչո՞ւ նասևազգեստների մեջ է գտնվում, մի՞թե կյանքի դառն արկածները հենց կյանքի առաջին աստիճաններում ստիպել են նրան թողնել սիրուն կյանքը և խստակյացկրոնավորների հետ միասին հանդերձյալ աշխարհի մասին մտածել... Հայտնի չէր: Միայն երևում էր, որ բոլոր կրոնավորներն էլ երկյուղածությամբ և պատկառանքովէին վերաբերվում դեպի այդ պատանին:

Աղոթքը վերջացրին: Կրոնավորները քաշվեցին դեպի իրենց խուցը, այնինչ պատանին դուրս եկավ եկեղեցուց և կանգնելով պարիսպների վրա, մռայլ դեմքով ցածնայեց: Նրա ոտքերի տակ ս. Անապատի վանքից մի փոքր հեռու, գոռում էր Խրամը և փրփրալով վազում առաջ:

Պատանին նայում էր գետին, նայում էր նրա փրփրած, կատաղած ալիքներին և նրա մատաղ սիրտը հուզվում էր: Նա տեսնում էր, թե ինչպես գետը կատաղել էր նյուր կատաղությամբ զոհում էր ամեն ինչ և՛ թուփ, և՛ ծառ, և՛ քար: Առանց խնայելու նա ոչնչացնում էր յուր արգելքները, ճանապարհ հարթում և յուր ցանկացածճանապարհով գնում… այնինչ ինքը ի՞նչ էր անում...

— Օ՛... դառն է ինձ համար այս կյանքը. ես ազատ, լայն ասպարեզ եմ ցանկանում, ուր կարողանամ սրիս զորությունը փորձել, այնինչ ստիպված, ինչպես միկալանավոր, անց եմ կացնում օրերս այս սևազգեստների մեջ: Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով: Անօրեն Վեստ Սարգսի ձեռքից, որը ձեռքն առնելով թագավորության ղեկը, ուզում է ոչնչացնել Բագրատունյաց տոհմը և ինքը թագավորել... Չէ՛, Գագիկը, գահի իսկական ժառանգը դեռ կենդանի է, թեև փոքր է, բայց առյուծի սիրտ կա նրամեջ:

Գագիկը՝ թուլասիրտ Հովհաննես-Սմբատ թագավորի եղբոր որդին լռեց և հուզված սրտով կրկին նայեց Խրամի պղտոր ջրերին: Այդ ժամանակ նրա միտքն ընկավԱնին յուր գիժ Ախուրյան գետով, յուր հազար ու մի եկեղեցիներով, պալատներով ու շինություններով: Նա հիշեց յուր տունը, հիշեց հորը՝ Աշոտին և մորը, որոնքպալատի շքեղ սենյակներում գուրգուրում և շոյում էին իրան և ապա թագավոր անվանում... Իսկ հիմա ո՞ւր են յուր ծնողները — չկան: Նրանք հանգան, չքացաներկրիս երեսից, Հայաստանի գահը հանձնելով գայլերից մեկին, որը յուր փառասիրության համար պատրաստ է ամեն բան ոտնատակ անել, ամեն իրավունքոչնչացնել...

Գագիկը խորին մտքի մեջ ընկղմված դեռ մտածում էր: Յուր պատանի, բայց խելոք խելքով դատողություն էր անում, Հայաստանի ապագան գուշակում, այնինչ մութրհետզհետե տարածվում էր չորս կողմ, և ամեն ինչ ընկղմում խորին խավարի մեջ: Հանկարծ Գագիկը ցնցվեցավ և ակամայից յուր ուշադրությունը դեպի մի թուփըդարձրեց, որտեղ կարծես ինչ-որ բան շարժվեց, և ապա ամեն ինչ անշարժության մեջ մնաց: Գագիկը նորից նայեց դեպի այդ թուփը և սոսկաց: Նա նկատեց, որճյուղերի միջից փայլում էին երկու արյունալից աչքեր, որոնք ուղղված էին դեպի ինքը և հեռվից անգամ կամենում էին կլանել իրեն: Գագիկը ակամայից ձեռքը դեպիյուր սրի երախակալը տարավ, ապա շփեց ճակատը և շոյելով գանգուր մազերը, ինքն իրեն խոսեց.

— Այս ի՞նչ էր, մի՞թե երազի մեջ էի, թե հիրավի արյանս ծարավի մարդիկ պտտվում են շուրջս... բայց մի՞թե նրանք չգիտեն, որ Գագիկը քնած չէ:

Գագիկը նորից նայեց դեպի այն կողմը, բայց էլ ոչինչ չնկատեց: Չորս կողմը ամեն ինչ խաղաղ էր և լուռ, բացի Խրամ գետի որոտալուց էլ ոչինչ չէր լսվում:

Գագիկը շուռ եկավ և ուղղվեցավ դեպի յուր բնակարանը: Նա ժպտաց, երբ մի քանի քայլ առաջ տեսավ յուր հավատարիմ Լևոնին՝ Հարպիկ իշխանի երրորդ որդուն, որը ձեռքը սրի վրա դրած հսկում էր յուր տիրոջը:

— Լևոնի՛կ, գիտե՞ս ինչ տեսա, — ասաց նա՝ բռնելով նրա ձեռքը:

— Ի՞նչ, տե՛ր իմ:

— Ինձ թվաց, որ լրտեսում են այստեղ, որ գայլերը մեր հոտն առել են, վաղ թե ուշ պիտի մտնեն այստեղ և ով գիտե ինչեր անեն:

— Բայց, տե՛ր, մի՞թե նրանք չգիտեն, որ քեզ պահպանում է Հարպիկ իշխանի որդին, որ գիշերները մի աչքով քնում է, իսկ մյուսով հսկում յուր տիրոջը: Չէ՞ որՎահրամ իշխանը քեզ ինձ է հավատացել: Միամիտ մնա, տե՛ր, և հանգիստ քո բնակարանը մտիր, իսկ եթե տեսնես, որ նրանք մեր տեղը իմացել են, Հայաստանումտեղ շատ կգտնվի, մինչև որ փոթորիկը անցնի:

— Այդ այդպես է, Լևոնի՛կ, սակայն այս գիշեր պետք է զգույշ մնալ: Գագիկի աչքերը սուր են և նրան չեն խաբի: Թող թշնամին գա և մեզ պատրաստ գտնի:

— Համբերիր, տե՛ր, ես այս րոպեիս կթռչեմ խուզարկելու բոլոր թփերը և վա՛յ նրան, ով իմ սրի բերանն ընկնի:

— Ո՛չ, Լևոնի՛կ, ես հավատում եմ, որ դու քաջ ես, սակայն մենք մեր թշնամուն չպիտի ցույց տանք, որ մեզ հայտնի է նրա ներկայությունը: Հրամայիր՝ վանքի դռներըփակեն և ինքդ արթուն կաց, մինչև անգամ չարժե վանականների խաղաղությունը վրդովել և հայտնել մեր կասկածը:

Գագիկը մտավ յուր բնակարանը և ճրագի լուսավորության տակ երկար ժամանակ խոսում էր ծերունի վանականի հետ Հայաստանի երերուն դրության մասին, մինչևոր վանահայրը հեռացավ նրանից:

Գագիկը ո՛չ մի խոսք, ո՛չ մի բառ չասաց վանահորը յուր կասկածի մասին, այնինչ յուր սրտից չէր հեռանում այն աչքերի արտահայտությունը, որոնք ուղղված էինյուր վրա:

Գագիկը չէր վախենում մահից, ամենևին չէր էլ մտածում, թե կարող են իրեն սպանել, թե նա թշնամիներ շատ պիտի ունենա, քանի որ ինքը միակ ժառանգն էթափուր մնացած գահի, սակայն նա զզվում էր այն տեսակ մարդկանցից, որոնք գաղտագողի լրտեսում են իրեն: Նա երկար ժամանակ շրջում էր սենյակում, մինչև որքունը կամաց-կամաց հաղթեց նրան: Նա հանվեց, պառկեց փափուկ անկողնի մեջ և ապա, հառելով իր մեծ աչքերը դեպի առաստաղը, կրկին ուզեց քունը փախցնելիրանից, սակայն ֆիզիկական հանգստությունն իրենն էր ուզում: Մատաղ մարմնին հանգստություն էր պետք, երիտասարդ հոգուն՝ խաղաղություն:

Հետզհետե Գագիկի աչքերը ծանրացան և քնի հրեշտակը նրան յուր գիրկն առավ: Նա քնեց: Հանգիստ բարձրանում, ցածրանում էր նրա կուրծքը, այնինչ նրա մատաղդեմքին փայլում էր անհուն երանության ժպիտը: Ի՞նչ էր նա երազում այդ րոպեին — հայտնի չէր, սակայն նա ժպտում էր, մի ժպիտ, որը հատուկ է միայն պատանիհասակին:

Վաղուց արդեն խոր գիշերը տարածվել էր ամեն կողմ, սփռել էր խորին լռություն: Գագիկի հավատարիմ Լևոնիկն էլ զինված ու զրահավորված թիկն էր տվել Գագիկիննջարանի դռների առաջ, քարե պատվանդանին և արթուն հսկում էր տիրոջը: Նա չէր մոռացել Գագիկի խոսքերը. թե §Լևոնի՛կ, պետք է այս գիշեր արթուն մնալ, մեզլրտեսում են. թե չէ ո՞վ գիտե ինչ կարող է պատահել¦: Ծերունի Վահրամը Գագիկի պաշտպանությունը միայն իրեն հավատաց: Նա լավ է հիշում, թե ինչպես Վահրամիշխանը համբուրեց իրեն և ասաց. «Լևոնի՛կ, Գագիկին պահպանիր քո աչքի լույսի պես, գիշերը չորս աչքով դիտիր, ցերեկը՝ երկու և վա՛յ քեզ, եթե նրա մազինդիպչող լինի»: Այդ խոսքերը հիշեց Լևոնիկը և ապա միտքը թռավ, գնաց դեպի իր հայրենի երկիրը, լեռնոտ Պաղին գավառը, ուր լեռների ծերպերում բարձրանում

ենիրենց հայրենի բերդերը, ուր անմատչելի ծերպերում և ձորերում վազում էր ինքը որսի ետևից և նիզակի մի հարվածով գլորում որսը, և ապա ուրախ-ուրախվերադառնում ամրոց ու հպարտությամբ ցույց տալիս հորը: Նա հիշում էր, թե ինչպես հայրը՝ ծերունի Հաբելը, ախորժակով ուտում էր որսի միսը և միշտ գովում իրենու ասում. «Ապրի՛ս, Լևոնի՛կ, դու էլ քաջ ես ինչպես և մյուս եղբայրներդ. բոլորդ էլ արժանի եք իմ որդիքս կոչվելու»: «Վա՜հ, մի՞թե ես քնում եմ», — հանկարծ ասացԼևոնիկը և ցնցվեց: Հիրավի սա նկատեց, որ յուր աչքերը ծանրացել են, որ քունը տանում է, որ նա չի կարողանում արթուն պահել իրեն:

— Չէ՛, ո՛չ մի ժամանակ ես ինձ թույլ չեմ տա քնելու: Այս ի՞նչ հիմարություն է, չէ՞ որ ես խոսք եմ տվել արթուն մնալ, այս ի՞նչ փոքրոգություն է իմ կողմից, — ասացԼևոնիկը և դուրս գալով սկսեց աջ ու ձախ նայել, ականջ դնել, թե չի լսվում արդյոք քայլերի ձայն, կամ չկա՞ արդյոք կասկածելի մի բան: Բայց Լևոնիկը կասկածելիոչինչ չնկատեց: Նրա ուշադրությունից վրիպեց միայն այն, որ նա վանքի պատերի տակ չնկատեց երկու մարդկային մարմին, որոնք արյունածարավ աչքերով իրենէին նայում:

— Չէ՛, Գագիկը սխալվել է, կասկածավոր ոչինչ չի երևում, — ասաց Լևոնիկը և կրկին ներս մտնելով թիկն տվեց Գագիկի ննջարանի առաջ:

Անցավ մի փոքր ժամանակ: Լևոնիկի մտքի մեջ կրկին հանդես եկավ յուր հոր ամրոցը, հայրենի խնջույքը և ուրախությունը: Ա՛խ, ինչպես նա կցանկանար թռչելայնտեղ, ինչպես նա ուզում էր գոնե մի վայրկյան լինել այնտեղ և քաշել յուր եղբոր որդու՝ չարաճճի Պողոսի ականջները, որ միշտ կանգնում էր յուր առաջ և նետրձեռքին կանչում. «Հորեղբա՛յր, ի՞նչ կընծայեիր ինձ, եթե նետով ահա այս նշանին խփեմ»: Մի համբույր, — պատասխանում էի նրան… Եվ հիրավի, այդ չարաճճինխփում էր նշանին և յուր վարդագույն այտերը դեմ անելով ասում. «Դե, հորեղբա՛յր, նշանին խփեցի, համբուրիր, միայն ինձ համար մի սուր գնիր, ես էլ եմ ուզումմեջքիս սուր կրել, ինչպես պապս և դու կրում եք»: Եվ Լևոնիկը, փայփայվելով այդ մտքով, չէր զգում, որ թեև յուր աչքերը բաց են, բայց նրա միտքը հետզհետե քնում է, հետզհետե կորցնում զգաստությունը և կոպերը կամաց-կամաց ծանրանում:

— Ա՛խ, Եսթե՛րս... Եսթե՛րս... Ինչքա՛ն ժամանակ է նրան չեմ տեսել, — մտածեց դարձյալ Լևոնիկը և չնկատեց, թե ինչպես այդ ժամանակ աչքերը փակվեցին և միվայրկյանում ամեն ինչ թռավ մտքից: Նրա ուղեղը դադարեց գործելուց և հանգիստ անվրդով նինջ պատեց նրան...

Լևոնիկի ականջները չլսեցին անգամ, թե ինչպես դրսից լսվեց զգուշավոր քայլերի ձայներ, թե ինչպես դուռը բացվեց և մի մարդ սուրը հանած կանգնեց յուր գլխին:

Մարդասպանը կանգնած էր նրա գլխին և օրորում էր սուրը: Նա մտածում էր, սպանի՞, թե ոչ: Այդ չէր յուր նպատակը: Լևոնիկի կյանքը նրան պետք չէր: Նրանհարկավոր էր ավելի թանկագին կյանք: Նա պիտի վերջ դներ Գագիկ իշխանի կյանքին, որ ստանար Վեստ Սարգսից՝ թանկ գնով ձեռք բերած ոսկիները: Եվմարդասպանը վճռեց առաջ սրան սպանել, հետո՝ մյուսին: Սա արգելք էր նրա նպատակին: Եվ մարդասպանը սուրը բարձրացրեց և ուզեց մխել Լևոնիկի կուրծքը, երբմի անորոշ խուլ շշունջ լսեց դրսից: Մարդասպանը կանգ առավ և դեպի դուռը նայեց, ուր դանդաղ, զգուշավոր քայլերով ինչ-որ մեկը մոտենում էր:

Այդ միջոցին Լևոնիկը աչքերը բաց արավ և տեսավ մարդասպանին՝ մերկ սուրը ձեռքին: Մի վայրկյան և Լևոնիկը վեր թռավ տեղից ու սկսվեց կռիվը երկուսի մեջ:

— Է, հե՛յ, լավ ժամանակ գտար Լևոնիկին սպանելու,— գոռաց նա, — անձնատուր եղիր, թե չէ մաս-մաս կկտրատեմ:

Մարդասպանը յուր հարվածով վիրավորեց Լևոնիկի ուսը: Լևոնիկը ցավից կսկծաց, բայց ավելի կատաղեց, երբ տեսավ, որ դուռը բացվելով մի ուրիշ չարագործ էլներս մտավ և հարձակվեց յուր վրա:

— Ա՛... անիծվածնե՛ր, դուք երկո՞ւսն եք, թե էլի կաք: Մի՞թե դուք չգիտեք, որ Լևոնիկին տասն էլ հերիք չէ:

Կռիվը երկար չտևեց: Չարագործներից մեկը շուտով վայր ընկավ, իսկ մյուսը տեսնելով այդ, խույս տվեց և անհետացավ:

Այդ միջոցին պատանի Գագիկը վեր կացավ և, տեսնելով վիրավոր չարագործին, գլուխը շարժեց, չարագործը հեծում էր մահու տագնապի մեջ:

Աղմուկն ընկավ վանքի մեջ, և շուտով ամեն կողմ ճրագներ վառվեցան: Նրանք ամեն կողմ փնտրեցին մյուս չարագործին բռնելու, սակայն նրա հետքն էլ չգտան:Ո՞րտեղից էին այդ մարդասպանները ներս եկել, և ո՞րտեղից փախուստ տվեց նրանցից մեկը. այդ անհայտ մնաց: Սակայն, երբ նայեցին վիրավորվածի դեմքին, սոսկացին, դա վանքի ծառաներից մեկն էր՝ Մարկոսը:

— Դավաճա՛ն, այդ ո՞ւմ էիր ուզում սպանել, — կանչեց վանահայրը բարկությունից դողացող շրթունքներով:

— Ների՛ր... վանահա՛յր, ես մեղք չունեմ... Եզոն... — խոսքը կիսատ մնաց վիրավորի բերանում, և նա շունչը փչեց:

— Նա կաշառված էր Եղոյից, բայց թե ո՞վ է այդ Եղոն, ահա՛ գաղտնիքը, — ասաց Լևոնիկը և սառնասրտությամբ յուր վերքը բացեց կապելու...

Թ

ՀՈՒՍԱՀԱՏ ՍԻՐՏԸ

Լուսիկի մատաղ կյանքը ծաղկում էր և ուրախ թռչնիկի նման թրթռում: Դեռափթիթ վարդի նման նա օր ավուր բացվում էր ու գեղեցկանում: Գարնանային արևիանդրանիկ ճառագայթները սփռվել էին աշխարհի վրա, երբ Լուսիկն արդեն ոտքի վրա էր: Նա նոր էր յուր կովը կթել և դեպի դաշտ թողել իսկ ինքը բոկոտն մտել յուրփոքրիկ պարտեզը, ուր նարգիզն ու շուշանը, ռեհանն ու սուսամբարը բուրում էին անուշահոտությամբ: Նա նայում էր ամեն մի մարգ, ամեն մի ծաղիկ առանձինհոտոտում և ապա ջրում յուր ծաղիկները… Լուսիկը սիրում էր այդ փոքրիկ պարտեզը, որ յուր ձեռատունկն էր և ուր ազատ ժամերը անց էր կացնում ծաղիկների ևվարդերի հետ զրույց անելով: Այդ վարդերի թփերի վրա ամեն առավոտ նստում էր բլբուլը և յուր սիրուն երգը երգում: Բլբուլը երգում էր... Նրա ձայնը խիստ դուրալի, խիստ քնքուշ էր, որ շարժում էր Լուսիկի սրտի ամենանուրբ թելերը և նրան լացացնելու չափ հուզում... Ո՜հ, բլբուլը սեր էր երգում, սեր մատաղ կյանքին, սեր նորբացվող վարդի կոկոնին: Լուսիկի սիրտն էլ կարոտ էր այդ սիրույն, կարոտ յուր գիժ Ստեփանիկի սիրուն դեմքին, բայց ահա ամիսները գլորվում էին իրար ետևից, սակայն նա չկար ու չկար... Ա՜խ... թռի՛ր, բլբո՛ւլ, թռի՛ր, հեռացիր իմ ձեռատունկ վարդերից, քո երգը քաղցր է, քան մեղրը և թունալից, քան օձի թույնը: Դու և՛ կրակ եսթափում սրտիս մեջ ու այրում նրան, և՛ թույն ես թափում, սպանում ինձ, և մեղեդիներ երգում, որոնք քաղցր են, քան նույն ինքն երջանկությունը... Ա՜խ, քո երգերիցխաբված մոռանում եմ ամեն ինչ և նրա գրկում կարծում. բայց սուտ է ամեն ինչ, դատարկ ցնորք, սնոտի երազ, Ստեփանիկը ինձ խաբեց և նա էլ չի վերադառնա...

Այսպես մտածում էր Լուսիկը և ամեն օր բլբուլի երգը լսելուց հետո ջրում պարտեզը, ծաղիկներից մի փունջ կազմում և յուր խուղը զարդարում, ապա, դիմելով հորը, շարունակ հարցնում.

— Հայրի՛կ, Հարպիկ իշխանից լուր չունե՞ս, երբ պիտի գա Ստեփանիկը:

— Ի՞նչ է, աղջի՛կս, ինչու՞ թառամում են այտերդ և խավարում աչքերդ: Չէ՞ որ գիժ Ստափանիկը խոսք տվեց վերադառնալու... ինչու՞ դու համբերություն չունես...

— Ա՛խ, հայրի՛կ, օրերն անցնում են, բայց ո՛չ Հարպիկ իշխանն է երևում և ո՛չ Ստեփանիկը, իսկ ես մաշվում եմ...

— Համբերությունը լավ բան է, Լուսի՛կ, չէ՞ որ ես ինքս օրհնեցի երկուսիդ նշանադրությունը և ինքը՝ Հարպիկ իշխանը խոստացավ խաչդ բռնելու: Մի՞թե Հարպիկիշխանը կդրժի յուր խոսքը, մի՞թե կմոռանա յուր տված խոստմունքը: Չէ՛, նա ուր որ է կերևա, որովհետև նրա սիրտն էլ կապված է մեր Գոհարիկի հետ… Բայց այսի՞նչ եմ տեսնում: Լուսի՛կ, նայիր ճանապարհի ուղղությամբ, կարծես փոշու ամպեր են բարձրանում, — խոսքը հանկարծ փոխեց դարբին Ղևոնդը և, ձեռքը ճակատինդնելով, ուշադրությամբ սկսեց դեպի փոշու ամպը նայել:

— Այո՛, հայրիկ, կարծես մի խումբ ձիավորներ են գալիս, — պատասխանեց Լուսիկը, և նրա սիրտը կարծես կանգ առավ ուրախությունից: Նա այդ կողմից Հարպիկիշխանին ու յուր գիժ Ստեփանիկին էր սպասում:

— Անպատճառ Հարպիկ իշխանն է, — ասաց Ղևոնդը:

— Չեմ կարծում, հայրի՛կ, Հարպիկ իշխանը չի սիրում մի խումբ ձիավորներով շրջել: Չե՞ս տեսնում, հայրի՛կ, ինչպես փայլում են զենքերը արևի ճառագայթների տակ, ով որ է՝ նշանավոր իշխաններից մեկն է լինելու — ասաց հուսահատ ձայնով Լուսիկը:

— Հա՛, հասկանում եմ, մեր թագավորության խնամակալ Վեստ Սարգիսը կլինի: Օ՛, եթե նա է, մենք շուտով պիտի հեռանանք դռներից: Ես չեմ ցանկանում նրա երեսըտեսնել:

Մինչդեռ հայր ու աղջիկ խոսում էին, ձիավոր խումբը մոտեցավ նրանց և սրարշավ անցավ նրանց առջևից դեպի Անի քաղաքը: Հայր և աղջիկ զարմացած դեռ նայումէին նրանց ետևից: Այդ խումբը բաղկացած էր մոտ հարյուր ձիավորից և մի քանի իշխաններից, որոնց առջևից գնում էր մի հույն իշխան:

— Պատգամավոր հոռոմներից... Այս ի՞նչ բան է, — ասաց Ղևոնդը:

— Այո, հույն իշխան էր առաջին ձիավորը, բայց ի՞նչ բան ունի մեր երկրում:

— Անշուշտ մի նոր վիշտ, մի նոր տառապանք է բերում հայերիս համար, թե չէ հոռոմոց թագավորը օգուտի համար մեզ մոտ պատգամավոր չի ուղարկի: Երևի միփորացավ ունի:

— Բայց տեսա՞ր, հայրի՛կ, ինչ գոռոզ կերպարանք ուներ, նա այնպես էր իրեն պահում, կարծես մեր Հայաստանի տերը լիներ: Չէ որ մեր թագավորներն էլ այդպեսգոռոզ կերպարանք չունեն, ինչպես այդ հույն իշխանը:

— Է՜հ, աղջի՛կս, հիմա դրանց գոռոզանալու ժամանակն է, քանի որ մենք թագավոր չունենք. ա՛յ, երբ Գագիկ իշխանը թագավոր օծվի, այն ժամանակ դրանք չենհամարձակվի այդպես գոռոզ դիրք բռնել:

— Իսկ ո՞ւր է Գագիկը, հայրի՛կ, ինչու՞ նրան չեն օծում թագավոր:

— Նա դեռ փոքր է, աղջի՛կս, հազիվ 15 տարեկան և անպիտան Վեստ Սարգսի ձեռքից ծածկված: Ա՛յ, թող մի փոքր նրա թևերը ամրանան, այն ժամանակ նա ցույցկտա Վեստ Սարգսին, թե ինքը ինչ տեսակ կորյուն է:

— Լա՛վ, ինչու՞ Վեստ Սարգիսը թշնամություն է անում Գագիկին:

— Ինչո՞ւ. նրա՛ համար, որ գահն ինքը ժառանգի և ո՛չ թե Գագիկը: Հարցրու Խենթին, տես ինչեր կպատմի Վեստ Սարգսի կյանքից: Նա յուր փառասիրության համարամեն ինչ կզոհի և ես կարծում եմ, որ այս հույն իշխանին էլ նա է հրավիրել, ո՞վ գիտե ինչ սատանություններ նյութելու համար:

— Իսկ Հարպիկ իշխանը ո՞ւմ կողմն է, մի՞թե նա կպաշտպանի Վեստ Սարգսին, եթե հարկը ստիպի:

— Եթե հարկը ստիպի... Եթե հարկը ստիպի, նա Վեստ Սարգսի արյունը կխմի, ինչպես և Վահրամը, բայց ինչ անես, որ Վեստ Սարգիսը ներկայիս ուժեղ է նթագավորության ամբողջ գանձը յուր ձեռքումն է: Այդ է պատճառը, որ Վահրամյանք հեռվից մռմռում են, բայց դեռ ոչինչ չեն կարողանում անել նրան:

— Աստված վերջը բարի անե, հայրի՛կ, լավ չէ, որ մեր իշխանները փոխանակ իրար ձեռք-ձեռքի տալու, իրար դեմ են գնում:

— Հը՜ մ… հենց այդ է, որ մեր տունը քանդում է, է՜… այդ անմիաբանությունը որ չլիներ, հո մեր ազգի նման ուժեղ և զորավոր ազգ մեկն էլ չէր լինի: Բայց ինչ անես, որ արտաքին թշնամին հենց այդ բանից է բռնում և մեր աչքը հանում, թե չէ ինչպես կհամարձակվեր հույնը կամ արաբը մեր աշխարհն ավերել ու ոտնատակ տալ:

— Բայց Վեստ Սարգիսը ի՞նչ կօգտվի, հայրի՛կ, յուր անմիաբանությունից:

— Այդ արդեն մեր բանը չէ: Կօգտվի, թե չի օգտվի, չգիտեմ, բայց որ Հայաստանը տակնուվրա կլինի, այդ լավ գիտեմ: Է՛յ, աղջի՛կս, կմեծանաս, դեռ շատ բանկիմանաս: Այժմ գնա, քո ապուրը պատրաստիր, ով գիտե, գուցե հենց հիմա երևա քո Ստեփանիկը և յուր գժությունները բանեցնե ու քեզանից շուտով ապուր ուզե: Չէ՞որ նա սիրում է քո եփած ապուրը:

Լուսիկը խոր ախ քաշեց ու հեռացավ, այնինչ դարբին Ղևոնդը սկսեց մտազբաղ խուղի առաջ շրջել: Թե ի՞նչ էր մտածում, հայտնի չէր, երևում էր միայն, որ նրա սրտիմեջ ինչ-որ մի ներքին կռիվ կար, ինչ-որ մի անհայտ որդ բույն էր դրել նրա մեջ և անողորմաբար կրծում էր նրա սիրտը և տակնուվրա անում նրա հոգուխաղաղությունը…

Ժ

ՓԱՐԵՑԵՔ ԽԱՉԻՆ, ՎՏԱՆԳԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է

Եվ հանկարծ բոթաբեր գույժը ցնցեց Հայաստանը մի ծայրից մյուսը…

Հույները պահանջում են Հայաստանը: Նրանք տեր են մի թղթի, որով թուլամորթ թագավորը՝ Հովհաննես-Սմբատը, յուր կնիքով և ստորագրությամբ վավերացնելով, յուր մահից հետո Հայաստանը կտակում է հույներին… Հեշտ է ասել՝ կտակում է… Բայց չէ՞ որ դա մի տուն, այգի, ամայի երկիր չէր, որ այդպես հեշտ անցներ մեկիձեռքից մյուսը: Չէ՞ որ Հայաստանը մեռած չէր և չպիտի մեռներ Հովհաննես թագավորից հետո… Նա ապրում էր ազատ, ինքնագլուխ և պիտի ապրեր:

Հայաստանը ստրկական կյանքի սովոր չէր և յուր ազատությունը այդպես հեշտ, մի թղթի զորությամբ չէր տա հույներին: Եվ չտվեց էլ:

Հույն պատգամավորը պահանջում էր.

— Ձեր թագավորի տված թղթի զորությամբ մերն է Անին և շրջայքը, տվեք մեզ և այն ժամանակ դուք մեծապես կվարձատրվեք ու կարժանանաք մեծազոր կայսերողորմությանը:

— Չէ՛, մենք մեր ձեռքով մեր տունը չենք քանդի, չենք ուզում ո՛չ ձեր ոսկիները, ո՛չ ձեր այստեղ գալը, հեռացեք մեզանից և մենք խաղաղ կապրենք ձեզ հետ, — ասացին մի քանի իշխաններ, իսկ մի քանի իշխաններ էլ գլուխները կախեցին ու մտածեցին.

— Ի՞նչ շահ, եթե Գագիկը թագավոր լինի, ավելի լավ է մեծազոր կայսեր ծառայությունն ընդունել, նա մեզ առատ կվարձատրի:

Հույն պատգամավորը և՛ ճարտար էր, և՛ խորամանկ: Նա ցույց տվեց նրանց փայլուն ոսկիներ, և հայ իշխաններից շատերը հրապուրված դրանից հրաժարվեցինիրենց համոզմունքից: Վրա հասավ և Վեստ Սարգիսը, որ ծածուկ գրգռում էր տալ Անին հույներին: Սակայն մեռած չէր Վահրամ իշխանը: Նա բեկյալ սրտովիշխաններին ժողովի հրավիրեց և հույն պատգամավորի անիրագործելի պահանջը բացատրեց:

— Բարեկամնե՛ր, — ասաց նա, — լավ կշռեցեք, ինչ որ անելու եք, որպեսզի ապագայում ամոթով չմնանք և մեր հետնորդները մեզ անեծքով չհիշեն: Գիտե՞ք, արդյոք, թե ի՞նչ է պահանջում մեզանից հույնը: Նա պահանջում է մեր ազգի կործանումը, մեր թագավորության քայքայումը: Նա ուզում է, որ մենք մեր ազատությունըծախենք անարգ գերության և ստրկության, որ մենք մեր սուրը վայր դնենք և վիզներս դեմ տանք մեր թշնամիներին, որ նա կտրի այն և բնաջինջ անի մեզ... Ասացե՛ք, համաձա՞յն եք:

— Ո՛չ, ո՛չ, — լսվեցին խուլ ձայներ այս ու այն կողմից:

— Եթե ոչ, ուրեմն թող հույն իշխանը մեր մոտից գնա խաղաղությամբ և հայտնի յուր կայսեր, որ նրա պահանջը անիրագործելի է, որ նա զուր մեր արյունն էպղտորում, որ ցնորք պիտի համարել մեզանից Անին առնելը, իսկ եթե նա համարձակվի կրկին ոտք դնել Հայաստան այդ պահանջներով, այն ժամանակ երդվեցեքայս խաչի վրա, որ մինչև արյան վերջին կաթիլը պիտի պահպանենք մեր հայրենիքը և մեր ազատությունը: Թող կայսրը իմանա, որ մենք կապավինենք մերպահապան, մեր զորավոր խաչին և զենքը ձեռքներիս կկռվենք մինչև մեր վերջին շունչը, և նա մեր դիակների կույտերի վրայով միայն կառնի Անին ու իրշրջակայքը... Ասացեք, իշխաննե՛ր, համաձա՞յն եք, — ասաց Վահրամ իշխանը, և նրա ձայնը դողդողաց, այնինչ աչքերից կայծակներ էին դուրս թռչում նսարսռեցնում ժողոված իշխանների մարմինները:

— Համաձայն ենք, Վահրա՛մ իշխան, մենք մինչև վերջին շունչը կկռվենք մեր հայրենիքի ազատության համար, — ասացին մի քանի իշխաններ:

— Իսկ ինչ կասես դու, մեծազոր խնամակալ Վեստ Սարգիս, — դարձավ Վահրամը և մի այնպիսի հայացք ձգեց նրա վրա, որ նա իսկապես պիտի

սարսռար: ՍակայնՎեստ Սարգսի մի մկանն անգամ չշարժվեց: Նա փորձված և խորամանկ էր: Այդպիսի դեպքերում նա գիտեր իրեն պահել:

— Ո՜հ, Վահրա՛մ իշխան, քո բերնով աստված ինքն է խոսում և ես էլ անեծք եմ թողնում այն իշխանի գլխին, որ յուր ձեռքով յուր տունը կքանդի և Անին յուր 1001եկեղեցիներով հույներին կհանձնի: Վատ և անարգ է այն հայը, ով կդավաճանի յուր հայրենիքին:

— Իսկ դու, վեհափա՛ռ տեր, ի՞նչ կասես մեր վճռին, — դարձավ Վահրամ իշխանը Պետրոս Գետադարձ կաթողիկոսին, որ ներկա լինելով ժողովին, լուռ լսում էրիշխանների խորհուրդը:

— Իշխաննե՛ր, այդ թուղթը, որի զորությամբ հույները պահանջում են Անին և յուր շրջակայքը իմ ներկայությամբ է գրված և ես մեղավորս ոչ մի կերպ չկարողացամեր հանգուցյալ թագավորին համոզել, որ դա ազգակործան մի թուղթ է: Նա գրեց այդ թուղթը և յուր կարճամյա հանգստությունը շատ թանկ գնեց: Բայց այժմ լավպիտի մտածեք, որ հույները այլևս ձեռք չեն վերցնի այդ պահանջից: Ուստի և եթե դուք ձեր մեջ զգում եք մի ուժ, եթե ձեր մեջ կլինի հույներին դիմադրելու անքակտելիմիաբանություն, այդ դեպքում ես համաձայն եմ ձեր վճռին և օրհնում եմ ձեր միաբանությունը: Իսկ եթե ձեր մեջ ընկնելու է երկպառակության չար որոմը, նոտնատակ է լինելու Հայաստանը, այդ դեպքում մնում է ինձ լռել և ձեր հանցանքը ձեր վզովը փաթաթել:

— Դավաճանը յուր արժանավոր պատիժը կստանա, վեհափա՛ռ տեր, և քանի Վահրամ իշխանը կենդանի է, հույնը Անիի տերը չի դառնա: Մեր գահը թեև թափուր է, բայց տեր ունի: Գագիկը նրա օրինավոր ժառանգն է և պիտի ժառանգի այդ գահը, — ասաց Վահրամը և հրամայեց հույն պատգամավորին ժողովի հրավիրել:

Անցավ մի փոքր ժամանակ և հույն իշխանը խորհրդարան մտավ ու մի տեսակ գոռոզ արհամարհական հայացք ձգելով չորս կողմը՝ հարցրեց.

— Ինչու՞ համար են ինձ կանչում հայ իշխանները:

Վահրամ իշխանի դեմքի գույնը թռավ, բարկության շանթեր անցան նրա դեմքի վրայով ու բարկությունից ատամները կրճտացրեց.

— Դուք մեզանից պահանջում եք Անին, այդպես չէ՞:

— Պահանջում ենք, որովհետև մերն է, մի՞թե կհանդգնեք դեմ կենալ մեծազոր կայսեր հրամանին:

— Հույները Անիին չեն տիրանա: Հայտնեցեք կայսերը, որ այդ ցնորքը հանի յուր մտքից, — պատասխանեց Վահրամը:

— Ինչպե՞ս... դուք անարգ իշխաններդ հանդգնում եք մեր կայսեր դե՞մ գնալ, — ասաց հույն իշխանը արհամարհական ժպիտ արձակելով դեպի Վահրամ իշխանը:

— Իշխա՛ն, լեզվիդ չափ դիր, ճանաչիր, թե դու որտեղ ես գտնվում, — պատասխանեց Վահրամ իշխանը մինչև ականջները կարմրելով:

— Ի՞նչ, ես պիտի վախենամ անարգ հայերի՞ց…

— Լռի՛ր, ապա թե ոչ շանսատակ կանեմ քեզ, — գոռաց Վահրամը և սուրը պատյանից հանելով ուզում էր հարձակվել իշխանի վրա, որը համարձակվում էր անարգլեզու բանեցնել դեպի հայերը, սակայն այդ միջոցին մեջ ընկավ Վեստ Սարգիսը և նրանց բաժանեց: Հույն իշխանը, որ երկյուղից թաքնվել էր Վեստ Սարգսի ետևը, այժմ սիրտ առած յուր սուրն էր մերկացրել և գոռում էր:

Բայց Վեստ Սարգիսը նրան դուրս տարավ և քիչ ժամանակից հետո ժողովն էլ փակվեցավ:

Հայաստանի դրությունը տագնապալից էր... Վտանգը մոտենում էր…

ԺԱ

ԼԵՌՆԵՐԻ ԱՎԱԶԱԿԸ

Հայաստանի Չորրորդ Հայք նահանգում, Տավրոս լեռներից դեպի հյուսիս, Պաղին կամ Բաղնատուն գավառում, անմատչելի լեռների գլխին բարձրանում էին մի քանիանմատչելի բերդեր, ուր իշխում էին Հաբել իշխանը և յուր որդիք՝ Հարպիկ, Դավիթ, Լևոն և Կոնստանդին: Շրջակա թշնամիներից ոչ մեկը չէր համարձակվումխանգարել այդ քաջերի անդորրությունը: Թաթարն ու հույնը խույս էին տալիս նրանց երեսից, լսելով նրանց արյունածարավ գործերը և դևեր համարելով նրանց, անուններից անգամ դողում: Վա՛յ նրան, ով կընկներ այդ չորս եղբայրների սրերի բերանը, էլ նրան ազատում չկար և սրի մի հարվածը վերջ էր դնում նրա կյանքին:

Մթին անտառներում և լեռների խոր ձորերում ու ծերպերում առատությամբ թաքնվում էին վայրի կենդանիները, որոնք չէին համարձակվում Հաբելի որդիների ահիցգլուխները դուրս բերել: Նրանք գիտեին, որ մահաբեր նետը վերջ պիտի դներ իրենց կյանքին: Թռչունները միայն ազատ երգում էին անտառների մեջ և իրենցճռվողյունով թնդացնում օդը: Նրանք ազատություն էին վայելում այդտեղ: Նրանք գիտեին, որ Հաբելի որդիք իրենց ձեռք չեն տա, և ուրիշներն էլ չեն համարձակվիխանգարելու իրենց հանգստությունը: Եվ հիրավի, Հաբելի որդիք որքան արյունածարավ էին, նույնքան՝ բարի և խղճով: Նրանք անխնա կոտորում էին վայրիգազաններին, բայց ձեռք չէին տալիս անմեղ թռչուններին: Այդպես էլ վարվում էին մարդկանց հետ: Հայ շինականներին հոգու չափ սիրում ու պաշտպանում էին, իսկհույներին և թաթարներին՝ ատելով ատում: Նրանք ծարավի էին դրանց արյան, բայց ավելի ծարավի այն հայ իշխանների արյանը, որոնք դավաճանում էին իրենցազգին: Եվ այդ էր պատճառը, որ նրանց որքան սիրում էր գեղջուկը, նույնքան ատում էին հույները, թաթարները և հայ դավաճան իշխանները, որոնք դրանց «ավազակներ» էին հռչակել:

Եվ ահա այնտեղ, լեռների ծերպին բարձրանում են Արղնո ամրոցի հսկա պարիսպները, որի գլխին պտտվում էր բարձրաթռիչք արծիվը և յուր սրատես աչքերով որսփնտրում:

Հաբել իշխանը կանգնած է աշտարակներից մեկի վրա և գոհ սրտով հեռուն է դիտում, այնինչ յուր երեք որդիք Հարպիկը, Դավիթը և Կոնստանդինը խորինակնածությամբ կանգնած իրենց հորից մի փոքր հեռու, լուռ նրա հրամանին են սպասում: Բավական է մի փոքրիկ նշան, մի ակնարկ, որ երեքն էլ որդիականակնածությամբ իրենց ցած գլորեն աշտարակի բարձրությունից: Հաբելը նայում է բավականությամբ դեպի ոտքերի տակ տարածված ծերպերը, ուր խոխոջալովվազում են լեռնային առվակները և իբրև մի սպիտակ ժապավեն ոլորվում լեռների չորս կողմը: Հաբելը գոհունակությամբ շփում է յուր ալեզարդ մորուսը և ապաակամայից հայացքը վեր բարձրացնում, ուր դեռ պտտվում էր արծիվը: Հանկարծ նրա դեմքը ցնցվում է, և նրա խրոխտ դեմքի վրա անցնում ժպիտի նման մի բան, ապա, դառնալով դեպի յուր որդիք, ասում է.

— Որդի՛ք, մոտ եկեք:

Երեքն էլ մի ակնթարթում մոտ են վազում և ձեռքները կրծքին, խորին անկնածությամբ գլուխ տալիս հորը:

— Նայեցեք վեր, տեսնո՞ւմ եք այն արծվին, որ մեր գլխին է պտտվում, նա որս է փնտրում: Հաբելի որդոց ներկայությամբ նա ուզում է հափշտակություն անել, բայց չէոր նրան այդ իրավունքը չի տրված:

— Այո՛, հայրի՛կ, նա չի համարձակվի, — պատասխանում է Հարպիկը՝ մեծ որդին և կրկին գլուխ տալիս:

— Հը՛մ, բայց նա մեզ չի ճանաչում, մեր իրավունքները ուզում է ոտնատակ անել և թռցնել մեզանից մի որս:

— Նա կպատժվի, հա՛յր, եթե իրավունք կտաս, — խոսեց կրկին Հարպիկը:

— Այո, պետք է պատժել, պետք է սովորեցնել, թե ո՞վ է ապրում այս աշտարակում, — ասաց Հաբելը և հեգնական կերպով դիմելով բոլորին՝ ավելացրեց.

— Բայց ո՞վ արդյոք ձեզանից մի նետի հարվածով ցած կգլորի նրան իր բարձրությունից:

— Ես, հայրի՛կ, — ասաց Հարպիկը՝ աչքով չափելով արծվի հեռավորությունը:

— Եվ ես, — պատասխանեց միջնակը:

— Եվ ես, — ետ չմնաց փոքրիկը և նրա սիրտը թունդ առավ, թե արդյոք կբախտավորեցնի՞ հայրը՝ այդ գործը իրեն հանձնելով:

— Ինչպես տեսնում եմ, բոլորդ էլ պատրաստ եք և եթե Լևոնիկս էլ այստեղ լիներ, նա էլ ետ չէր մնա, բայց նա լավ գործի է: Դե, Կոնստանդի՛ն, սկսիր, այդ պատիվըքեզ եմ տալիս, որպես ամենափոքրի: Ես տեսնում եմ, որ աչքերդ անհամբերությունից փայլում են, — ասաց Հաբելը:

Կոնստանդինն էլ սպասեցնել չտվեց: Նա վերցրեց նետը, դրեց աղեղի մեջ և մի վայրկյան դիտեց արծվի պտույտի ձևը: Հայր և որդիք հետաքրքրությամբ նայում էին, թե արդյոք չի՞ վրիպի նա նշանից: Արծիվը բավական բարձր էր:

Հանկարծ Կոնստանդինը հաստատուն ձեռքերով քաշեց լարը, նշան դրեց և բաց թողեց նետը: Նետը սլացավ վեր և մի քանի վայրկյանից հետո հայր և որդիք տեսան, որ թռչունների թագավորը տատանվեց, երերաց և ուժգնությամբ ցած սլացավ: Մի քանի վայրկյան էլ և նա ընկավ Հաբելի ոտքերի տակ...

Հաբելը տեսավ, որ արծվի կրծքին մխված է Կոնստանդինի արձակած նետը և նրա կրծքից բխում է արյուն:

— Ապրե՛ս, զավա՛կս, դու արժանի ես իմ որդին կոչվելու, — ասաց հայրը:

Կոնստանդինը մոտեցավ հորը, ծունկ չոքեց և համբուրեց հոր ձեռքը, իսկ հայրը՝ նրա ճակատը:

Տիրեց մի փոքր լռություն: Հաբելը կարծես առժամանակ մոռացավ արծվին, և նրա դեմքի վրայով մի մթին ամպ անցավ: Երևում էր, որ մի ինչ-որ բանանհանգստացնում էր նրան, որ մի ինչ-որ բան հուզում էր նրա սիրտը:

— Հարպի՛կ, բավական ժամանակ է մենք տեղեկության չունենք Շիրակից. այդ բանը շատ է անհանգստացնում ինձ. արդյոք ի՞նչ է պատահել այնտեղ, — ասացՀաբելը՝ դիմելով որդուն, սակայն առանց երեսը դեպի նա դարձնելու:

— Այո, հայրի՛կ, մի քանի ամիս է, ինչ ես վերադարձել եմ և դրանից հետո դեռ լուր չունենք, թեև Վահրամ իշխանը խոստացավ շուտ-շուտ տեղեկություն տալ մեզ:

— Երևում է, որ այնտեղ կարևոր բաներ են պատահել, և Վահրամ իշխանը միջոց չունի մեզ տեղեկացնելու: Բայց դու չե՞ս կարոտում Գոհարիդ, — դարձավ Հաբելը նշեշտակի նայեց ավագ որդու աչքերին:

Հարպիկը ամոթխածությունից մինչև ականջները կարմրեց:

— Ա՛... տեսնում եմ, որ սրտիդ լարերից խոսեցի, բայց համբերություն ունեցիր և ամեն բան լավ կերթա:

— Շտապելու բան չկա, հայրի՛կ, դեռ կարևոր գործեր կան:

— Ի՞նչ գործեր, — զարմացած հարցրեց հայրը:

— Հույները կրկին հանգիստ չեն մնում, նրանք նորերս ձեր կալվածքների վրա հարձակում գործեցին:

— Ի՞նչպես... հետո՞...

— Հետո նրանք ստացան իրենց արժանի հատուցումը:

— Հը՛մ... ինչ Հովհաննես թագավորը վախճանվել է, դրանք երես են առել, պետք է դրանց դաս տալ, ինչպես երևում է նախկին դասերից չեն խրատվել:

— Այո, հայրի՛կ, եթե նայենք լուրերին, հույները մտադրվում են հարձակվել նաև մեր բերդերի վրա և, ինչպես ասում են, այդ բանին օգնում է հայ իշխաններից մեկը:

— Ո՞վ:

— Թլպաղտո բերդի իշխան Թորոսիկը:

— Թորոսի՞կը... և ի՞նչ է ուզում դա. մի՞թե ցանկանում է, որ մեր բերդերը հույներին տանք և նրանք մեզանից առնելով իրեն հրամցնեն:

— Նա հիմարացել է, հայրի՛կ, և ուզում է վասակներին, մեհրուժաններին դասակից լինել: Նրանց դափնիները Թորոսիկին հանգստություն չեն տալիս:

— Իսկ նրա որդին՝ Ստեփանիկը, չէ՞ որ նա մեզ մոտ պատանդ է:

— Որդին հոր արյունից չէ, Ստեփանիկը ամենահայրենասեր երիտասարդներից մեկն է և ատում է հորը:

— Ատո՞ւմ է... Այդպես էլ պետք է, բայց հարկավոր է զգույշ մնալ: Ո՞վ գիտե, ինչ կարող է պատահել:

— Ես երաշխավոր եմ Ստեփանիկի համար, հա՛յր, նա չի ուզում մինչև անգամ յուր հոր երեսը տեսնել, նրան դավաճան է անվանում:

— Լավ, բայց ահա ինչ-որ մեկը մեր ամրոցն է բարձրանում:

Հրամայեց բանալ դռները և ընդունել:

Կրկին լռություն տիրեց: Հաբելի որդիներից մեկը իսկույն հեռացավ և կարճ ժամանակից հետո դարձավ մի հաղթանդամ մարդու ուղեկցությամբ: Անծանոթ մարդըդեռ հեռվից նկատելով Հաբել իշխանին կանչեց.

— Ինձ մի հարցնեք՝ ով եմ ես...

— Խենթն է, — ասաց Հաբելը և ժպտաց:

Խենթը մոտեցավ Հաբել իշխանին, ձեռքերը կրծքին դրեց և խոր գլուխ տվեց:

— Բարև՛, Խե՛նթ, բարև՛. հը՛, կրկին խե՞նթ ես, թե խելոքացել ես:

— Տեղ կա՝ խենթ, տեղ կա՝ խելոք, իսկ տեղ կա՝ ո՛չ խելոք, ո՛չ խենթ... բայց ստացեք Վահրամ իշխանի նամակը:

Հաբել իշխանը կարդում էր նամակը, և դեմքը հետզհետե գունատվում էր: Բարկության ալիքները անցնում էին նրա դեմքի վրայով, և աչքերը կատաղության շանթերէին արձակում:

Հարպիկ իշխանը նայում էր հոր դեմքին, և նրա սիրտը փուլ էր գալիս: Նա զգում էր, որ օտարոտի անցքեր են պատահել Հայաստանում: Արդյոք Գոհարիկի հետ ոչինչչի՞ պատահել:

Հաբել իշխանը վերջացրեց կարդալը, և, դառնալով որդուն, ասաց.

— Հարպի՛կ, որդիս, դու պետք է իսկույն ևեթ սլանաս Անի: Գործերը խիստ ծանրանում են, հույներն ուզում են Հայաստանի տերը դառնալ, իսկ Վեստ Սարգիսիշխանը՝ Հայոց թագավորության խնամակալը, գաղտնի օգնում է նրանց, հուսալով, որ նրանք Հայաստանի թագը կդնեն նրա գլխին: Բայց վա՜յ դավաճաններին...

— Իսկ դո՛ւ, Դավի՛թ, — դարձավ Հաբելը մյուս որդուն, — ամրացրու մեր բերդերը և գնդերդ պատրաստ պահիր հարկավոր դեպքում օգնության գնալու Վահրամիշխանին: Հայաստանի սիրտը Անին է, եթե Անին խլվի մեզանից, ամեն ինչ կվերջանա: Սիրտը դադարելուց հետո մարդը չի կարող գոյություն ունենալ: Լավ տեղիցեն բռնել անպիտան հույները:

Հաբել իշխանը, վեր կացավ և, դառնալով Խենթին, ասաց.

— Լավ լուրեր չես բերել, Խե՛նթ, հետևիր ինձ, պետք է այդ մասին մանրամասն խոսել:

Նրանք հեռացան աշտարակից, իսկ փոքր Ժամանակից հետո երկու ձիավոր դուրս գալով Արղնո ամրոցից, ձիերի գլուխները դարձրին դեպի Անիի ճանապարհը նսլացան առաջ:

Ձիավորներից մեկը Հարպիկ իշխանն էր, իսկ մյուսը Ստեփանիկը՝ դավաճան Թորոսիկ իշխանի որդին:

ԺԲ

ԴԱՎԱՃԱՆԸ ՀՐՃՎՈՒՄ Է

Վեստ Սարգիս իշխանը մտազբաղ նստած էր յուր սենյակում: Նա թիկն էր տվել թանկագին օթոցին և աչքերը մի կետի հառած մտածում էր: Ծանր էր

դավաճանիդրությունը... Նրա սև սրտի մեջ խիղճը երբեմն-երբեմն թույլ կերպով շանթում էր, բայց անհետ, առանց նշան թողնելու կորչում, չքանում: Նրա հոգու մեջ բույն էր դրելսև փառամոլությունը, որը խեղդում, ոչնչացնում էր ամեն լավ զգացմունքի նշան: Բայց դավաճանի սիրտն էլ մարդու սիրտ է, այնտեղ էլ գոյություն ունենարտասուքն ու ուրախությունը, խիղճն ու անխղճությունը: Նա էլ երբեմն լալիս է, երբ տեսնում է անմեղ զոհի տանջանքն ու չարչարանքը և նրա հետ տանջվում ուուրախանում: Վիշտը նրա սիրտն էլ է կրծում և դառն մտածությունները նրա արյունն էլ են սառցնում երակների մեջ...

Վեստ Սարգիսը այդ իսկ րոպեին յուր անելիքի, յուր դերի մասին էր մտածում: Նրա գլխում մտքերն ահարկու կռիվ էին մղում, իսկ կամքը ծփում էր այդ մտքերի մեջ:Նա դեռ չարագործության առաջին աստիճանի վրա էր կանգնած: Դեռ մի քայլ էր արել, մի փոքրիկ քայլ դեպի դավաճանությունը, դեպի վատությունը և այդտեղկանգ առնելով տեսնում էր երկու ճանապարհն էլ: Նա զգում էր, որ դեռ հնարավորություն կա ետ դառնալու, դեռ կարելի է մյուս ճանապարհով գնալ, այնինչ, եթե միքայլ էլ դներ, արդեն ուշ կլիներ: Նա տեսնում էր, որ մի ճանապարհը տանում է դեպի համեստ, բայց պատվավոր կյանքը, այնինչ մյուս ճանապարհը՝ դեպի փառքը, թագավորական գահը: Բայց… բայց առաջին ճանապարհին փռված էին երփներանգ ծաղիկներ, իսկ երկրորդ ճանապարհին՝ դիակների կույտեր, որոնց կոխկրտելովնա պիտի հասներ այն գահին, որ փայլում էր հեռվում... Ո՞րն է լավ: Գնալ դեպի ծաղկազարդ ճանապարհը և հանգիստ, պատվով վերջ դնել յուր մարմնավոր կյանքին, թե՞ կոխկրտել արյունաթաթախ դիակներ, լսել վիրավորների դառն, աղեկտուր հառաչանքները և արյունոտ զոհերի գնով բազմել փայլուն գահին... Ահա թե ինչն էրտանջում այդ րոպեին Վեստ Սարգսին և շփոթում նրա միտքն ու հոգին…

Եվ երկար ժամանակ բուռն կերպով ընդհարվում էին այդ մտքերը այնպես, ինչպես օվկիանի ահեղ ալիքները ծփում են, դիպչում իրար, ոչնչանում և կրկին ժանտ օձինման գլուխները վեր բարձրացնում...

— Ո՛չ, մի քայլ առաջ եմ գնացել և ետ դառնալ անհնարին է: Հիմարություն կլինի, որ ետ դառնամ: Հայաստանի գահը ինձ պիտի պատկանի կամ ոչ ոքի: Եսդիակներից ինձ համար պատվանդան պիտի շինեմ և հասնեմ այդ գահին: Եվ իմ անհողդողդ կամքը չի ընկճվի երբեք, եթե տեսնեմ, որ ամբողջ Հայաստանը մոխրի նավերակների կույտ է դարձել: Վեստ Սարգիսը թույլ չի տա, որ խելացնոր պատանին ժառանգի գահը, իսկ ինքը դառնա նրա ստորադրյալը: Ես պիտի գնամ առաջ, պիտի հասնեմ նպատակներիս դանդաղ, բայց հաստատուն քայլերով: Արտաքուստ՝ գահին

պաշտպան, իսկ ներքուստ՝ գահը ժառանգող: Ահա իմ ծրագիրը, ահա իմնպատակը: Եվ վա՛յ նրանց, ովքեր իմ ճանապարհին կկանգնեն: Նրանց փրկություն չկա: Շուտով կանհետանան իմ ճանապարհից Գագիկը և Վահրամը, և այնժամանակ, երբ կհասնեմ ցանկացած նպատակիս, վա՛յ այն իշխաններին, որոնք պաշտպանում էին Վահրամին ու Գագիկին:

Վեստ Սարգիսը վեր կացավ և սկսեց շրջել սենյակում: Այդ ժամանակ սենյակի դռան վարագույրը ետ քաշվեց և մի գլուխ երևաց, որը հետաքրքրությամբ ՎեստՍարգսին էր նայում, սակայն վերջինս յուր մտքերի հետ ընկած չէր նկատում նրան:

Իշխա՛ն, — ասաց այդ մարդը և ներս մտավ:

Վեստ Սարգիսը կանգ առավ ու նայեց նրան: Մի րոպեում նրա կնճիռները բարձրացան և նա իրեն հանգիստ դեմք տվեց:

— Եղո՛, բարի ես եկել, նստիր տեսնենք՝ ի՞նչ նոր լուր ես, բերել:

Լրտեսը և իշխանը նստեցին:

— Վահրամ իշխանը մեծ պատրաստության մեջ է, տե՛ր. կարծես հոտ է քաշել, որ դու ձգտում ես գահը ժառանգել:

— Ի՞նչպես:

— Վահրամ իշխանը, մի քանի իշխանների և Պետրոս կաթողիկոսի հետ խորհրդակցելով, ուզում է Գագիկին Անի բերել և թագավոր օծել:

— Այդ անմիտ տղայի՞ն…

— Նրանք այդ անում են, որ գահը թափուր չհամարվի և ոչ ոք աչք չունենա այդ գահի վրա:

— Իսկ ո՞ւր է այժմ Գագիկը:

— Հայտնի չէ: Մեր սպանության անհաջող փորձից հետո նրան ս. Անապատի վանքից հեռացրել են, բայց թե ո՞ւր հայտնի չէ: Նրանք այժմ խիստ զգույշ են և ամեն

միջոց ձեռք են առել գաղտնի պահելու Գագիկ Բագրատունուն:

— Հը՛մ… Այդ երեխային թագավոր են ուզում օծել… Բայց Վահրամը այդ չի կարող անել: Ես կխանգարեմ նրան, մինչև հունական զորքերը վրա կհասնեն: Չէ՞

որՎահրամը անպատվեց հունաց պատգամավորին: Մի՞թե կայսրը հանգիստ կթողնի Անին և չի պատժի Վահրամին:

— Այո, իշխա՛ն, եթե հունաց զորքերը շուտ հասնեն, Վահրամն իր նպատակին չի հասնի: Նա, որպես գահի պաշտպան, նախ պիտի հույների դեմ կռիվ մղի, նրանցհեռացնի, ապա նոր մտածի Գագիկին թագավոր օծելու մասին:

— Բայց ո՞վքեր են Վահրամին համամիտները:

— Շատ իշխաններ, որոնց թիվը մոտ երեսունի է հասնում:

— Հա՛, հասկանում եմ, բոլորն էլ յուր ազգականներն են:

— Չէ՛, իշխա՛ն կան և ո՛չ ազգականներ, մինչև անգամ հեռու Տավրոսի լեռներից էլ համամիտներ կան Վահրամին:

— Ո՞վքեր:

— Պաղին գավառի իշխանը՝ Հաբելը յուր որդիների հետք:

— Այդ ավազակնե՞րը:

— Այո՛, որոնք պատրաստ են իրենց կյանքը դնելու գահը պաշտպանելու համար:

— Լավ, դրանց դատաստանը հույներին կտամ: Նրանք գիտեն, թե ինչպես պետք է պատժել ավազակներին, շուտով նրանց ամրոցները մոխրակույտեր կդառնան:

— Այդպես էլ պետք է, մենք մեր ձեռքով ոչինչ չպիտի անենք, պետք է զգույշ լինենք, որպեսզի չիմանան, որ քո մատը խառն է այդ գործում: Վահրամ իշխանը շրջապատել է իրեն լրտեսներով:

— Ո՞վքեր են այդ լրտեսները, — արհամարհանքով հարցրեց Վեստ Սարգիսը:

— Շատերը, մինչև անգամ օրիորդներ...

— Ի՞նչ օրիորդներ:

— Հիշո՞ւմ ես, իշխա՛ն, որ մենք ձիերով գնում էինք Գագիկին մյուս աշխարհ ուղարկելու և ճանապարհին, Անիի դռներից մի փոքր հեռու, կանգ առանք դարբնոցիառաջ: Հիշո՞ւմ ես, երբ քո ձին պայտեց ծերունի դարբինը, քեզանից փող չէր

ուզում վերցնել և բացի դրանից, մի քանի քայլ չարած քո ձիու պայտը վայր ընկավ: Ահաայդ խուղը իսկապես մի լրտեսարան է, որը հսկում է, թե ո՞վ է գնում-գալիս Անի և իսկույն տեղեկացնում Վահրամ իշխանին: Այդ ծերունի դարբինը մի աղջիկ ունի, որը գաղտնի հարաբերության մեջ է Վահրամի դստեր՝ Գոհարիկի հետ:

— Հասա՞ծ աղջիկ է:

— Հասած և սիրուն:

— Հը՛մ, դա պետք կգա հույն իշխանին նվիրելու համար: Պետք է կրակ տալ դրա խուղը և օրիորդին մեր բանտերից մեկը փոխադրել՝ մինչև որ կերևան հույնիշխանները:

— Բայց պետք է շտապել, տե՛ր:

— Այո, պետք է շտապել և այդ գործը դու պիտի կատարես: Վերցրու հինգ ձիավոր և զգույշ մոտեցիր խուղին. նախ օրիորդին կապեցեք և ապա կրակ տվեք խուղը:

— Իսկ հո՞րը:

— Հորը դանակի մի հարվածով սատկեցրեք: Թող նա իմանա, որ Վահրամն այնքան անզոր է, որ իրեն չի կարողանում օգնել:

Եղոն վեր կացավ:

— Բայց, Եղո՛, զգույշ կաց, գործը շինելու տեղ, չքանդես: Գագիկին չկարողացար սպանել, գոնե տեղը իմացիր: Դե՛հ, գնա, հույս ունեմ, որ առանց աղմուկի շուտովօրիորդին կտեղափոխես մեր ներքին նկուղներից մեկը:

— Վստահ եղիր, տե՛ր, — ասաց Եղոն և շուտով անհետացավ այնպես, ինչպես հայտնվել էր:

ԺԳ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Անիի և յուր շրջակայքի վրա խորին խավար էր տիրում: Ամեն տեղ հանգցրած էին ճրագները, ամեն տեղ դադարել էր շարժումը: Քաղցր նիրհը պատել էր ամենքին ննրանց տարել երազական այն աշխարհը, ուր տիրապետում են և՛ սարսափներ, և՛ անուշ երջանկություն... Քնած չէր միայն Լուսիկը, որը ճրագի աղոտլուսավորության

տակ նստած, ձեռքը դրել էր ծնոտին և յուր սև-սև մեծ աչքերով նայում էր դուրս, դեպի խավարը, ուր տիրում էր խաղաղություն: Բայց խաղաղ չէրնրա հոգին: Մատաղ սիրտը կարծեք մոտալուտ փոթորիկներ էր գուշակում և խռովում նրա հոգին: Հայրը՝ դարբին Ղևոնդը վաղուց քնած էր, այնինչ ինքը քնել չէրկարողանում: Երազի նման աչքի առջևից անցնում էին յուր մանկության ուրախ պատկերները, երբ նա անհոգ թռչունի նման վազվզում էր կանաչապատ դաշտերով, ծաղիկներից փնջեր կազմելով տալիս էր մորը և կամ պսակներով զարդարում իրենց սիրելի կովի գլուխը... Անցան այդ երջանիկ օրերը, երազի նման չքացան, և ինքըհասունանալով ճաշակեց կյանքի համը: Ա՛խ, այդ համը շատ դառն էր և վշտալից, խոր կսկիծներ են պատճառում յուր մատաղ կյանքին և ընկղմում իրենմտածմունքի ծովը... Բայց ինչու՞, ի՞նչ պատճառով, երբ նա փոքր էր, չգիտեր վշտանալ, ցավել ու տրտմել... Մի՞թե վարդը բացվում է միայն տրտմելու և ցավելուհամար, մի՞թե կուսական սիրտը, հասունանալով, միայն պիտի տրտմի և ցավի, և խորին վիշտը կեղեքի նրան...

— Ո՛հ, ինչո՞ւ չեմ կարողանում քնել, ուզում եմ քնել, բայց քունը փախչում է աչքերիցս, ուզում եմ մոռանալ աշխարհը, և՛ վիշտ, և՛ տրտմություն, սակայն դրանք նորուժով են վրդովում սիրտս... — Ասում էր Լուսիկը, և նրա սիրուն աչքերը հեղում էին արտասուքի առատ կաթիլներ:

Լուսիկը լալիս էր, ո՞վ գիտե ինչու: Յուր գիժ Ստեփանիկի՞ն էր կարոտել, թե մորն էր հիշում — հայտնի չէր, միայն խիստ տրտում, խիստ հուզված էր երևում, զգում էր, որ յուր սիրտը այս գիշեր խիստ արագ էր բաբախում:

— Ո՛հ, աստվա՛ծ իմ, ի՞նչ պիտի պատահի ինձ, — ասաց ինքն իրեն Լուսիկը և բռնեց սիրտը, որ կարծես փախչելիս լիներ յուր նեղ կապանքներից:

Անգիտակցաբար նա յուր ուշադրությունը մի կետի վրա դարձրեց և սարսռեցավ: Կարծես սիրտը կանգ առավ: Նա իրենց խուղից մի քանի քայլ հեռու ստվերներնկատեց, որոնք լուռ խորհրդակցում էին իրար հետ: Լուսիկը պարզ լսեց, թե ինչպես նրանցից մեկը ասում էր մյուսին:

— Զգո՛ւյշ կացեք, օրիորդին վնաս չհասցնեք, նա պետք է ողջ հասնի մեր իշխանին:

Լուսիկը տեղն ու տեղը սառած մնաց: Մի վայրկյան երկյուղը պաշարեց նրան և քիչ մնաց խելքը կորցներ, ապա մի ոստյուն գործեց դեպի հոր անկողինը և հրելովնրան կանչեց.

— Հայրի՛կ, հայրի՛կ, վե՛ր կաց, վտանգը մոտ է մեզ... Քնաթաթախ վեր թռավ դարբին Ղևոնդը և դեռ շփոթված կանգնած էր սենյակի մեջ, երբ դուռը ահագինճարճատյունով ջարդուփշուր եղավ և մի քանի մարդ ներս մտան: Ճրագը հանգավ, և մթության մեջ սկսվեց կռիվը:

Բայց անզեն, քնաթաթախ դարբինը ոչնչով չկարողացավ դիմադրել չորս թե հինգ մարդու, որոնք սրի մի քանի հարվածով վայր գլորեցին նրան: Դարբինն ընկավարյունի մեջ շաղախվելով և սկսեց փորսող տալով անգիտակցաբար դուրս սողալ, այնինչ ավազակները հարձակվել էին Լուսիկի վրա և ուզում էին կապկապել նրան, որն ամբողջ ուժով դեռ կռվում էր ավազակների հետ: Նա կծում էր ատամներով, չանկռոտում նրանց երեսները և աքացի տալիս: Բայց ուժը իրանն արավ:Չարագործները Լուսիկի բերանը թաշկինակ դրին, որ ձայն չհանի, ապա, պինդ պարաններով կապկպելով նրա ձեռքն ու ոտքը, դուրս տարան նրան սենյակից:

Լուսիկն արդեն ուշաթափվել էր: Նրա վերջին խոսքը Ստեփանիկի անունն էր, որ ակամայից դուրս թռավ նրա սրտի խորքերից, իսկ թե այնուհետև ի՞նչ պատահեց՝ ոչինչ չիմացավ: Նա չտեսավ մինչև անգամ, թե ինչպես չարագործները իրեն խրճիթից հեռացնելով, դրին կանաչ խոտի վրա, իսկ մի քանիսը ետ դառնալով կրակտվին յուր տունն ու օջախը, ուր անցրել էր յուր մանկության քաղցր օրերը: Ապա, երբ բոլորակ դաշտի վրա իրենց տունը կրակե փունջ կազմելով լուսավորեցշրջակայքը, այդ ժամանակ միայն Լուսիկին դրին ձիու վրա և ուր որ շտապով հեռացան:

Իսկ երբ բացեց յուր աչքերը, նա տեսավ, որ ինքը գտնվում է մի կամարակապ սենյակում, ուր չեն թափանցում մինչև անգամ արևի ճառագայթները:

ԺԴ

ՀՈՒՆԱՑ ԲԱՆԱԿՈՒՄ

Եվ հանկարծ Հայաստանի արևմտյան կողմից երևացին հունական լեգիոնները և ճանապարհին պատահած գյուղերն ու շենքերն սկսեցին մոխրի ու ավերակներիկույտեր դարձնել…

Անի քաղաքը ցնցվեց: Նա զգում էր, որ այդ լեգիոնները իր վրա են գալիս, որ մի հարվածով երկրի երեսից ջնջեն իրեն և այդպիսով պատժեն այն հանդուգն հայերին, որոնք համարձակվում են մեծազոր կայսեր դեսպանին անպատվությամբ ետ դարձնել: Եվ գոռոզ հույները անողորմաբար կոտորում էին

հայերին, ոչնչացնումպատահած շենն ու գյուղը և առաջանում դեպի Հայաստանի սիրտը, դեպի գոռոզ Անին, որն արհամարհում էր նրանց:

Հույները վստահ էին իրենց հաղթության վրա, որովհետև գիտեին, որ Հայաստանը տեր չունի, գլուխ չունի, որի թևերի տակ ժողովվելով կարողանար դիմադրելիրենց: Ո՞վ կհանդգներ իրենց առաջ դուրս գալ, քանի որ գահը թափուր է, իսկ տերության խնամակալ Վեստ Սարգիսը՝ իրենց ձեռքին կույր գործիք:

Եվ երբ դավաճանը լսեց հունաց լեգիոնների Հայաստանի սահմանները մուտք գործելը, նրա սիրտը թունդ առավ և փառասիրության կրակը բորբոքվեց հոգում: Նազգում էր, որ յուր իղձերը կատարվում են, որ յուր ծրագրերը հետզհետե իրականանում են և մոտ է այն ժամը, երբ արքայական թագը կդնի յուր գլխին և կբազմիԲագրատունյաց գահին:

Այն ժամանակ վա՛յ յուր հակառակորդներին...

Եվ Վեստ Սարգիսը, տնեցիների աչքին թոզ փչելով, հայտնեց նրանց, թե Անիից գնում է յուր կալվածքները և իբր անտեղյակ է հույների Հայաստան մտնելուն, հեծավյուր նժույգը և սլացավ Անիից դուրս:

Եվ երբ դուրս թռավ Անիի դռներից, նրա դեմքի գծագրությունը փոխվեց, ուրախության ու ցնծության ալիքներ անցան նրա երեսի վրայով և ուժգին մտրակելով ձիուն, երեսը շուռ տվեց դեպի Հայաստանի արևմտյան սահմանները, ուր արդեն ծխում էին հայ գյուղերը:

Նրա ոտքերի տակ կարծես հող չլիներ, կարծես օդի մեջ էր նա սլանում, նրա սիրտը ճաքում էր անհամբերությունից, աշխատում էր որքան կարելի է շուտ հասնելհունաց բանակը:

— Թռիր, իմ ձի՛, իմ անուշիկ նժո՛ւյգ, այժմ դու ինձ Անիից դուրս ես բերում որպես մի սոսկ իշխանի, շուտով ներս կբերես իբրև թագավորի, իբրև բովանդակՀայաստանի միահեծան տիրոջը, — ասում էր Վեստ Սարգիսը և ավելի շտապեցնում ձիուն:

Անցավ մի քանի օր: Ցերեկը գիշեր էր դառնում, իսկ գիշերը՝ ցերեկ, սակայն Վեստ Սարգսի համար հանգստություն չկար: Նա դեռ սլանում էր առաջ, երբ մի երեկո, հեռու հորիզոնի վրա կրակե բոցեր նկատեց, որոնք երբեմն բոցավառվում էին, երբեմն՝ հանգչում:

Վեստ Սարգսի դեմքը պատեց անիմանալի մտահոգություն և նա քաշեց ձիու սանձը, առանց աչքը հեռացնելու այդ բոցերից: Նա կարծես զգաց, որ այդ բոցերի մեջկատարում են մարդկային բարբարոսություններից ամենասոսկալի պատկերներ, նա կարծես իմացավ, որ այնտեղ այրում են հայկական գյուղեր ու կրակինմատնելով հայոց կովերն ու ոչխարները, անդ ու անդաստանը, անխնա կոտորում են յուր իսկ հայրենակիցներին ու ազգականներին...

Վեստ Սարգիսը տխրեց: Նրա սրտի մեջ անցավ մի տեսակ անբացատրելի հույզ, որն առժամանակ հեղաշրջեց նրա մտքերը, նրա հոգու բոլոր տրամադրությունները:

— Այդ ի՞նչ կրակներ են, — դարձավ նա իրենից միշտ անբաժան Եղոյին, որը նույնպես հետաքրքրությամբ նայում էր կրակներին:

— Տե՛ր, այնտեղ հունաց բանակն է տեղավորված, — պատասխանեց Եղոն՝ շեղվելով ուղիղ պատասխանից:

Վեստ Սարգիսն ավելի մռայլվեց: Նա ուզում էր լսել, որ այդ կրակներն ուրիշ բան են գուշակում և ոչ թե հրդեհ, ավերածություն, այնինչ Եղոն այդ մասին ոչինչ չասաց, թեև գիտեր նրանց նշանակությունը: «Մի՞թե Եղոն էլ է սարսափում այդ բոցերին նայելիս», մտածեց Վեստ Սարգիսը և կրկին դիմեց նրան.

— Եղո՛, ես քեզ հարցնում եմ՝ այդ ի՞նչ կրակներ են, որ լուսավորում են խավար շրջակայքը:

— Հունաց բանակի խարույկներն են, տե՛ր, որի վրա նրանք տաքացնում են իրենց սառած մարմինները, — պատասխանեց Եղոն՝ մի տեսակ զարհուրելի ժպիտարձակելով:

Վեստ Սարգիսը նայեց նրան և սարսռեց: Յուր զինակցի դեմքը զարհուրելի էր:

Նրանք լուռ կրկին առաջ անցան: Բոցերը հետզհետե պարզվում էին և նրանց մեջ նկատվում շարժումներ:

— Իշխա՛ն, մի փոքր էլ որ առաջ գնանք, կերևա հունաց բանակը: Չե՞ս տեսնում, ահա, բլրի ստորոտում արդեն երևում են հունաց տաղավարները: — Ասաց Եղոն նմատով ցույց տվեց մոտակա բլրի ստորոտը:

Վեստ Սարգիսը ոչինչ չպատասխանեց, և նրանք կրկին առաջ էին գնում, երբ հենց իրենց ոտքերի տակ ստվերների նման բաներ նկատեցին, որոնք, ճանապարհից աջու ձախ շեղվելով, շտապով թաքնվում էին թփերի ու մացառների մեջ:

Նրանցից մի քանիսը մինչև անգամ խելագարների նման առաջ վազելով, չնկատեցին ձիավորներին և ուղղակի ձիերի ոտքերի տակ ընկնելով՝ կանգնեցրին ՎեստՍարգսի ձիուն:

— Ո՞վ ես,— կանչեց իշխանը յուր ձիու ոտքերի տակ թավալվող հառաչող կնոջը, որն ամուր գրկել էր յուր ծծկեր երեխային: Հուսահատված կինը, երբ նկատեցիշխանական զգեստը և լսեց հայ լեզուն, ուրախությունից փաթաթվեց ձիու ոտքերին և հառաչելով կանչեց.

— Տե՛ր, ազատեցեք մեզ, խղճացեք, մեզ կոտորում են…

— Ո՞վ է կոտորում, — հարցրեց խեղդված ձայնով Վեստ Սարգիսը:

— Հույները, տե՛ր, նրանք կրակ տվին մեր գյուղը և անխնա կոտորում են մեզ:

— Իշխա՛ն, թողեք դրանց և մենք շտապենք առաջ, չե՞ս տեսնում, ահա մի խումբ հունաց զորքերից դեպի մեզ է գալիս, — ասաց Եղոն և ցույց տվեց իրենց մոտեցողզինվորների փոքրիկ խումբը:

Վեստ Սարգիսը ցնցվեց, թափ տվեց ձիու սանձը և յուր ձիու ոտքերի տակ կոխկրտելով հառաչող կնոջը՝ սլացավ առաջ: Նա լսեց, թե ինչպես կինը սուր, սիրտկտրատող ձայնով ծղրտաց ու մորմոքվող ձայնով կանչեց.

— Անիծյալ լինես դու, սպանեցիր իմ ծծկեր մանկանը…

«Անիծյալ լինես», մռմռում էր ինքն իրեն Վեստ Սարգիսը և սլանում առաջ, մինչդեռ այդ խոսքերը անջնջելի կերպով դրոշմվում էր նրա հոգու մեջ:

Վեստ Սարգիսը և Եղոն մի փոքր էլ առաջ գնացին, երբ հույների զինված խումբը կանգնեցրեց նրանց:

— Ո՞վ եք դուք և ո՞ւր եք գնում, — հարցրեց խմբապետը՝ սուրը մերկացնելով և կտրելով իշխանի առաջը:

— Ձենքդ ցա՛ծ դիր, մենք թշնամիներ չենք, այլ բարեկամներ, — ասաց խրոխտ ձայնով Վեստ Սարգիսը, արյունը բորբոքվեց նրա երակներում: Նա զգում

էր, որբախտը յուր հետ կատակներ է անում և հասարակ զինվորն անգամ յուր դեմ զենք է բարձրացնում:

— Ուրեմն ձեզ կտանենք մեր բանակը, և այնուհետև ինքը հրամանատարը գիտե, թե ինչպես կվարվի ձեզ հետ, — պատասխանեց խմբապետը:

— Ո՞րտեղ է ձեր հրամանատարի վրանը, ցույց տվեք ինձ, — ասաց իշխանը:

— Այս րոպեիս մենք ձեզ կտանենք, — ասաց խմբապետը և, յուր խմբով շրջապատելով իշխանին և յուր զինակցին որպես գերիների, մտավ հունաց բանակը:

Վեստ Սարգիսը, երբ աջ ու ձախ նայեց, տեսավ, որ ամբողջ հունաց բանակը խինդ ու ուրախության մեջ է: Հունաց բանակում սկսվել էր կերուխումը, հայշինականների արյուն քրտինքի ավարով…

ԺԵ

ԼԵՌՆԵՐԻ ԱՎԱԶԱԿԸ ԳԱԼԻՍ Է

Երկու ձիավոր Կարին քաղաքից նոր դուրս եկան և ձիերի գլուխները դարձնելով դեպի Շիրակ, դանդաղությամբ առաջ էին գնում: Տխուր և մռայլ էին նրանք: Ո՛չ միժպիտ, ո՛չ մի ուրախության նշան չէր երևում նրանց դեմքերին և բնության շքեղությունն անգամ չէր ազդում նրանց վրա, այնինչ Հայաստանի սիրուն բնությունը ժպտում էր ու հրճվում:

Լեռներն ու դաշտերը ծածկված էին գույնզգույն ծաղիկներով, և կանաչ թավշապատ բուսականությունը շլացնում էր մարդու աչքը:

Ձորերի միջով և ժայռերի վրայով թռչում էին սառնորակ աղբյուրների ջրերը, գահավիժում էին ցած ու բյուրավոր կաթիլներ գոյացնում և ադամանդների նմանպսպղալով արևի ճառագայթների տակ, ուրախ կարկաչով վազում էին առաջ: Բլբուլը ձայնակցում էր նրանց խոխոջին, իսկ արտույտը, սլանալով վեր, այնտեղիցմրցում էր նրանց հետ, հնչեցնելով յուր զիլ ու մետաղյա մեղեդին…

Բայց այդ բոլորը ճանապարհորդների սրտին ոչ մի հետք չէր թողնում, ոչ մի տպավորություն չէր գործում: Քար էին կտրվել կարծես նրանց սրտերը և մռայլությանհաստ քողով պատել նրանց հոգիները:

Նրանք երկուսն էլ զինված ու զրահավորված էին, հաղթանդամ էին ու լայնաթիկունք:

Երկար ժամանակ լուռ առաջ էին գնում, երբ նրանցից մեկը ընդհատեց լռությունը.

— Ստեփանի՛կ, տեսնո՞ւմ ես արդյոք, թե ինչեր է կատարվում մեր շուրջը:

— Այո՛, իշխան, տեսնում եմ: Զգում եմ, որ Հայաստանը նորից ավերմունքների ասպարեզ է դառնում, — պատասխանեց Ստեփանիկը Հաբելի որդի Հարպիկին:

— Բայց ի՞նչ են ուզում հույները մեզանից, ինչու՞ նրանք մեզ հանգիստ չեն թողնում:

— Հը՛մ, ի՞նչ են ուզում... Հայաստանի գահը ոչնչացնել:

— Հետո՞, դրանով ի՞նչ կօգտվեն: Չէ՞ որ Հայաստանը Հունաստանի համար մի պատնեշ է կազմում և բարբարոսների ամեն մի հարված առաջ հայերն են իրենցուսերի վրա կրում, այնինչ, եթե Հայաստանը չլինի, այդ հարվածները իրենք պետք է կրեն:

— Այդքան հեռուն հույները չեն մտածում, իշխա՛ն, նրանք փառասեր մարդիկ են և ցանկանում են միայն, որ իրենց տերության սահմանները ձգվի մինչև աշխարհի

վերջը:

— Շատ բան կարող են ցանկանալ, Ստեփանի՛կ, բայց տվողն ո՞վ է: Հայաստանը մեռած չէ, որ հույները նրան հեշտ գրավեն: Եթե ծանոթ չեն լեռների ավազակին, կծանոթանան և համը կտեսնեն:

— Բայց մինչև ծանոթանալը նրանք ավերում են Հայաստանը և հետզհետե նրա սրտին մոտենում:

— Թո՛ղ մոտենան... բայց ահա ինչ-որ խումբ է երևում: Ստեփանի՛կ, ես կարծում եմ, որ դրանք բարեկամներ չեն, այլ թշնամիներ, և վա՛յ նոցա, եթե հիրավիհունական գնդերից լինեն, — ասաց Հարպիկը և վահանը առաջ քաշելով կռվի պատրաստվեց:

Ստեփանիկն այն կողմ նայեց և հիրավի նկատեց մոտ քսան-քսանհինգ զինված մարդ, որոնք ուղղակի դեպի իրենց են գալիս:

— Լավ ես անում, Հարպի՛կ իշխան, դրանք հունական լեգիոններից են երևում, պետք է կոտորել դրանց, բայց...

— Ի՞նչ բայց, մի՞թե վախենում ես նրանց շատությունից:

— Չէ՛, Հարպիկ իշխան, Ստեփանիկը վախկոտներից չէ, բայց պետք է իմանալ, որ նրանց ետևից մեծ գունդ կլինի և մեր ուժերից վեր կլինի նրանց դիմադրել:

— Լեռների ավազակը հետոյի միասին չի մտածում, պատսպարվի՛ր, նրանք մոտենում են, — ասաց Հարպիկը և սուրը պատյանից հանելով մղվեց հունաց խմբի մեջ:

Նրան հետևեց և Ստեփանիկը:

Հունաց խումբը մի վայրկյան սառածի նման կանգ առավ: Նա երազ էր համարում և չէր կարողանում բացատրել, թե ինչպես կպատահի, որ երկու մարդ հանդգնեն միխմբի վրա հարձակվելու. սակայն, երբ նկատեց, որ դա երազ չէ, այլ իրականություն, երբ նկատեց, որ իրենցից մի քանիսը դիաթավալ ընկան, այն ժամանակ նրանքսրերը հանած շրջապատեցին մեր քաջերին:

— Անիծյալնե՛ր, ու՞մ դեմ եք սուրը բարձրացնում, մի՞թե չեք ճանաչում լեռների ավազակին, — ասաց Հարպիկը և յուր սուրը վրա բերելով ճղեց երկուսի գլուխը նապա հարձակվեց մյուսների վրա: Նույն հունձն էր անում նաև Ստեփանիկը, և հույները մեկը մյուսի ետևից արյունաթաթախ վայր էին գլորվում ձիերից, երբ նրանցիցմեկը ձիու երեսը շուռ տվեց և փախավ: Նրան հետևեցին և մյուս ողջ մնացածները:

Հարպիկը քա՛հ-քա՛հ ծիծաղեց և ետևներից կնչեց.

— Վախկո՛տ շներ, ու՞ր եք փախչում, մի՞թե այդքանդ երկու մարդու ուժ էլ չունեք:

— Հը՛մ, իշխա՛ն, լավ որս էր, մեր համն առան, ամեն մեկիս բաժինը վեց-վեց ընկավ: Ափսո՛ս, շատ ափսոս, որ մնացածները փախան, — ասաց Ստեփանիկը նարյունոտ սուրը սրբելով ընկած հույնի շորերի վրա, պատյանը դրեց և նրանք կրկին լուռ սկսեցին առաջ գնալ, թողնելով դիակները գիշակեր ագռավներին կերակուր:

Մութն ընկավ և նրանք ճանապարհին մի իջևան հասան, ուր ձիերից ցած իջնելով, ընթրիքի նստան: Այսօր բավականին գործ էին շինել և բավականին երկարճանապարհ կտրել, Հարպիկն ու Ատեփանիկը մեծ կարիք ունեին հանգստության:

— Բեր, Ատեփանի՛կ, տեսնենք ի՞նչ ունես, հարկավոր է շուտ ստամոքսներիս բավականություն տալ, հանգստանալ, — ասաց Հարպիկը:

— Իշխա՛ն, այս իջևանատանը ոչինչ չգտա ուտելու, միայն մի գառ են խորովում և շուտով կբերեն: Անիծված հույները ամեն բան սպառել են:

— Է՛, հոգ չէ, քչով բավականանանք, գինի ու գառ կա, այսօր դա էլ բավական է, — ասաց Հարպիկը և քիչ հետո ամբողջ գառը առաջները դնելով սկսեցին անուշ-անուշուտել և գավաթներով գինին խմել: Կարճ ժամանակ անցավ և նրանց առաջ դրված գինին և գառը անհետացավ: Երբ վերջացրին իրենց ընթրիքը, Հարպիկ իշխանըթիկն տվեց, և սկսեցին երկու բարեկամ զրույց անել: Իջևանատունը հետզհետե լցվում էր հյուրերով, որոնց խոսակցությունը հույների մասին էր, որոնք վերջին օրերըհեղեղել էին այդ կողմերը:

— Հույները սաստիկ կատաղած են հայերի վրա, — ասում էր մի հաստափոր մարդ, որ հենց նոր էր ներս մտել իջևանատուն և սփրտնած դեմքով պատմում էր իրենխոսակից մի ուրիշ հայի:

— Ինչու՞, ի՞նչ է պատահել, — հարցրեց մյուսը:

— Նրանց առաջապահները, թվով քսան, քսանհինգ հոգի, որոնք այսօր հենց այստեղից վերադառնալիս են եղել դեպի գլխավոր բանակը, ճանապարհին պատահումեն երկու մարդու, որոնք հարձակվելով դրանց վրա, կոտորում են տասներկու մարդու, իսկ մյուսներին փախուստի են մատնում, և ահա այդ պատճառով նրանքսպառնում են բոլոր հայերին սրի անց կացնել:

— Մի՞թե ճիշտ է, որ երկու մարդ կարող են այդքան մարդ կոտորել:

— Ես ինքս տեսա սպանվածների դիակները, բարեկա՛մ, չհավատալ անկարելի է, — ասաց հաստափոր մարդը:

— Եվ ո՞վքեր են եղել այդ քաջ մարդիկ, — հարցրեց մյուսը:

— Անունները հայտնի չեն, բայց ասում են, որ լեռների ավազակներ են եղել:

— Հա՛, հասկանում եմ, Հաբել իշխանի որդիք կլինեն, ես լսել եմ նրանց մասին, — մեջ ընկավ իջևանատերը:

— Բայց գիտեք, բարեկա՛մ, հունաց բանակը հենց այս գիշեր կարող է այստեղ երևալ, և վա՛յ քեզ, եթե պատրաստություն չես ունենա նրանց հյուրասիրելու:

— Տերը մի՛ արասցե, որ նրանք կրկին այս կողմերը երևան, ես ի՞նչ ունեմ, որ ինչ պատիվ տամ, — ասաց իջևանատերը և վախվխելով ետ քաշվեց:

Հարպիկն ու Ստեփանիկը լուռ լսում էին հյուրերի խոսակցությունը և քմծիծաղ տալիս: Երևում էր, որ հյուրերից ոչ ոք չէր ճանաչում իրենց և ոչ ոք էլ չէրհետաքրքրվում իրենցով: Երբ այդ խոսակցությունները վերջացան, Հարպիկն ու Ստեփանիկը մեկնվեցին թախտին և իրենց թիկնոցը վրաները ձգելով՝ անուշ քունմտան:

Կարճ Ժամանակ էին քնել, երբ իջևանատանը խիստ մեծ իրարանցում ընկավ: Գոռում-գոչյունը, հայհոյանքը և ձիերի դոփյունները խառնվեցին իրար:

Երբ Հարպիկն ու Ստեփանիկը աղմուկից իրենց գլուխները վեր բարձրացրին, դահլիճը, ուր իրենք անուշ քուն էին մտել, հույներով լիքը գտան: Նրանցից մեկը բռնելէր իջևանատիրոջ օձիքից և շարունակ թափահարելով՝ գոռում էր.

— Անիծվա՛ծ հայ, այս րոպեիս մեզ համար ընթրիք պատրաստիր, թե չէ գլուխդ կթռչի:

Իջևանատերը երկյուղից գլուխը կորցրել էր և դողդոջուն ձայնով կանչում էր.

— Ողորմացե՛ք, տյա՛րք ես ամեն ինչ կպատրաստեմ:

— Դե, գնա իսկույն պատրաստիր, — ասաց հույն իշխանը և նրա վզին հրելով՝ թողեց նրան:

Իջևանատերը մի րոպեում անհետացավ, այնինչ հույները գավերով գինին առաջները քաշելով, սկսեցին ագահությամբ խմել և հայհոյական երգեր երգեր: Նրանքմինչև անգամ չնկատեցին Հարպիկին և Ստեփանիկին, որոնք թիկն տված դեռ լսում էին և սպասում, թե ինչ պիտի լինի վերջը:

Նրանք տեղից շարժվելու մտադրություն անգամ չունեին, թեև հասկանում էին, որ եթե ճանաչեն, որ լեռների ավազակներն իրենք են, այն ժամանակ նրանցփրկություն չկար:

Զոյա՛, քաշիր գինին գլուխդ և խմիր, քեֆ անելու տեղեր են, այստեղ որքան կարելի է պետք է քեֆ անել, թե՛ գինին է ձրի և թե՛ սիրուն օրիորդները: Չէ՞ որ մերհրամանատարը իրավունք է տվել սրտներս ուզածները գործադրել հայերի վրա,- ասում էր մի հույն իշխան մյուսին:

— Հա, դրա մասին խոսք չունեմ, մենք ավելի լավ ավար կունենանք, երբ Անի քաղաքը հասնենք, բայց թե մինչև այնտեղ հասնելը, ես վառվում եմ վրեժխնդրությանկրակով: Այսօրվա անպատվությունը, որ հասցրին ինձ երկու ավազակները, մոռանալ չեմ կարող: Թե նրանք մի անգամ էլ ճանկս ընկնեն, էլ նրանց ազատում չկա, — պատասխանեց մյուսը և գինու ամբողջ գավաթը գլուխը քաշեց:

Հարպիկը և Ստեփանիկը իրար երես նայեցին: Նրանց աչքերը վառվեցին կատաղությամբ և հանկարծ ոտքի կանգնելով, սրերը մերկացրին:

— Ո՞վ էր, որ լեռների ավազակին ուզում էր կրկին պատահել, ես այստեղ եմ, անօրե՛ն հույնի գլուխ:

Հույները երկյուղից կարկամեցին. նրանցի մի քանիսը միայն սրերը մերկացրին, սակայն, գլուխները գինուց այնքան տաքացել էին, որ պղտոր աչքերով չէին էլնկատում, թե ինչպես Հարպիկի և Ստեփանիկի սրերը իրենց հունձն էին անում և դանդաղությամբ դեպի դուռը գնում:

Հույներն ուշքի եկան այն ժամանակ, երբ նկատեցին, որ իջևանատանը էլ չկան լեռների ավազակները, այլ նրանք այդտեղ էլ մի քանիսին կոտորելով՝ անհետացելէին…

ԺԶ

ՎԻՐԱՎՈՐՎԱԾԸ

Դարբին Ղևոնդը մի քանի տեղից վիրավորված, փորսող տալով սողում էր առաջ, դեպի ու՞ր՝ ինքն էլ չէր հասկանում: Նա չգիտեր, թե իրեն հետ ի՞նչ է պատահել, կամի՞նչ է կատարվում, զգում էր միայն, որ աչքերը հետզհետե մթնում են, գիտակցությունը խավարում և ինչ-որ մի խոր կսկիծ ցնցում է մարմինը: Նա ձեռքը տանում էրդեպի վիրավորված տեղերը և երբ զգում էր թացություն, ինքն իրեն զարմանում էր, թե ո՞րտեղից է այդքան ջուր, և ինչու՞ յուր ձեռքերը թաց են լինում… Խեղճը չէրհասկանում, որ ինքը յուր սեփական արյան մեջ է լողում…

Նա արդեն հասել էր յուր նազելի աղջկա՝ Լուսիկի ձեռատունկ պարտեզը, ուր, վարդի մի թփի տակ, դադար առնելով, դարբինը մի խոր հառաչանք արձակեց և ցավիցկուչ եկավ: Այստեղ նա զգաց, որ այլևս չի կարողանում առաջ գնալ, ու ցավը սոսկալի կերպով նեղացնում է իրեն: Համարյա թե անզգա դարբինը ցավի կսկծից սկսեցիոողը ճանկռոտել և վարդի ճյուղերը կոտրատել. այդ այն վարդի թուփն էր, որից Լուսիկը ամեն առավոտ անուշահոտ փունջ էր կազմում և զարդարում

սենյակը, իսկայժմ հենց նույն թփի տակ կիսամեռ ընկած էր դարբին Ղևոնդը և անօգնական-անտեր, ամենքից մոռացված մեռնում էր: Կտրվում էր նրա կյանքի թելը: Ո՞ւր էԼուսիկը, ո՞ւր է յուր սիրած, փայփայած աղջիկը, մի՞թե մոռացավ հորը...

— Ո՛հ, մի կաթիլ ջուր, ես պապակում եմ, — կանչեց նա և ցավից կծկվելով շուռ եկավ և մեջքը դեպի գետին անելով յուր խավարած աչքերը դարձրեց դեպի անհուներկնակամարը, ուր ջինջ եթերում այնպես սիրուն փայլփլում էին աստղերը:

Եվ դարբին Ղեոնդը նայում էր երկնքին, նայում յուր պաղ, անթարթ, սարսափով լցված աչքերով և դիտում աստղերը: Նա ճիգ էր թափում իմանալ, թե այդ ի՞նչճրագներ են և ինչու՞ այդքան շատ, ո՞վ է վառել այդքան ճրագներ, ինչու՞, ինչի՞ն է պետք, չէ՞ որ յուր խրճիթի մեջ միայն մի ճրագ է վառվում, որն աղոտ կերպովլուսավորում էր շուրջը... այնինչ ճրագները և՛ շատ են, և՛ խիստ լուսավոր, որոնց լույսը խտղտեցնում է յուր աչքերը... Դարբին Ղեոնդը ճիգ է անում փակել աչքերը, չնայել այդքան բազմաթիվ ճրագներին, սակայն բոլորը զուր է անցնում, նա զգում է, որ յուր աչքերը չեն փակվում, այնինչ ճրագները ավելի ու ավելի պայծառ ենփայլում...

Հանկարծ դարբնի տանջված դեմքին մի ժպիտ է երևում, մի ժպիտ, որ առժամանակ մոռացնել է տալիս ամեն ինչ, և նրա հոգին ցնծում է: Այդ ժամանակ նա միտն էբերում յուր Լուսիկին և բազմաթիվ ճրագներ վառելու պատճառն իմանում: «Հըմ, — մտածում է նա, — Լուսիկիս հարսանիքն է, այժմ ես հասկանում եմ, թե ինչուԼուսիկը այսքան ճրագներ է վառել»:

— Է՛յ, Լուսիկ, սիրելի՜ աղջիկս, չե՞ս տեսնում, ձեռքերս մրոտ են, երեսս՝ կեղտոտ, ջուր բեր, որ մաքրվեմ, զարդարվեմ և սկսեմ իմ պարը, իմ յայլին... չէ՞ որ իմ միակուրախությունը դու ես, իմ աչքերի լույս, իմ ազիզ աղջիկ... բայց փեսան ինչու՞ է ուշանում, ինչու՞ չի գալիս... Է՛հ, կրկին նա յուր զժությունները միտքն է բերել... բայցայս ի՞նչ է, հանգան ճրագները, սրտիս վրա էլ ծանրանում է մի ծանր բեռ, աչքերս մթնում են, աղջի՜կս: Լուսի՛կ, Լուսի՛կ, ո՞ւր գնացիր, ինչո՞ւ ինձ միայնակ թողիր, մի՞թե ինձ չես խղճում... խղճա՜, ո՛հ, խղճա՜, կրծքիս ծանր բեռը վերցրու և վառիր ճրագները:

Խավարեց դարբնի միտքը և ամեն ինչ անհետացավ նրա աչքերից: Նրա աչքերը թեև բաց էին, բայց ոչինչ չէին տեսնում, նրանք կորցրել էին իրենց տեսողությանկարողությունը: Նա մինչև անգամ չլսեց ձիերի դոփյունները, որոնք լսելի էին լինում Անիի կողմից: Դարբին Ղևոնդը չզգաց մինչև անգամ, թե ինչպես մի խումբձիավորներ կանգ առան հենց յուր գլխի մոտ և զգուշությամբ բարձրացրին նրան:

Այդ խմբի մեջ կար մի դեռահաս օրիորդ, որ շատ անգամ յուր հետ զրույց էր արել, շատ անգամ իրեն մխիթարել, Գոհարիկն էր այդ օրիորդը, Վահրամի դուստրը, որնԱնիից նկատելով հրդեհի ցոլմունքները, շտապել էր օգնության հասնել: Արտասվալից աչքերով Գոհարիկը ծունկ էր չոքել դարբնի առաջ և յուր ձեռքերով լվանալովնրա վերքերը, աշխատում էր դադարեցնել արյունահեղությունը: Դարբինը չէր տեսնում և չէր զգում: Օ՛, եթե նա տեսներ, թե ո՞վ է իր մոտ գտնվում, խորինակնածությամբ ոտքի կկանգներ և կասեր.

— Բարի ես եկել, իշխանուհի՜, տունը քոնն է, հրամայիր ինչ որ ուզում ես: — Սակայն, այժմ լուռ էին նրա շրթունքները, անշարժ նրա դեմքի մկանները: Մեռելայինգունատությունը արդեն պատել էր նրա տանջալից դեմքը:

— Հայրի՜կ, հայրի՜կ, ձայն տուր, քո իշխանուհին է կանչում, — ասում էր Գոհարիկը և աչքերից հոսեցնում արտասուքի առատ աղբյուրներ:

— Ջո՛ւր, մի՜ կաթիլ ջուր, — կանչեց հանկարծ դարբինը և ցավից սկսեց կրկին հողը ճանկռտել:

Գոհարիկը ջուր տվեց նրան և նրա մեջ հույսը կենդանացավ: Նա զգաց, որ պետք է փրկվի դարբինը, որի վերքերը թեև ծանր, բայց մահացու չէին: Դարբին Ղեոնդըմիայն արյունաքամ էր եղել:

Վերքերը կապելուց հետո Գոհարիկը հրամայեց զգուշությամբ տեղափոխել նրան մոտակա հովվի խրճիթը, ապա, դիմելով իրեն հետ եկող մարդկանց, հարցրեց.

— Չգտա՞ք օրիորդին:

— Ո՛չ, իշխանուհի՜, նրա հետքն էլ չկա:

— Լուսիկիս գտեք, թե չէ ես կցնորվեմ, — ասաց Գոհարիկը սրտակտուր ձայնով:

— Իշխանուհի՜, մենք ամեն տեղ ման եկանք, ո՜չ մի տեղ չգտանք նրան՝ ո՜չ մեռած, ո՜չ կենդանի:

— Մոխրի և փլատակների տակ տեսեք, գուցե նա այրվում է:

— Մենք ամբողջ տունը շուռ տվինք, ոչ մի տեղ չի երևում:

— Ա՛խ, ուրեմն չարագործները, սպանելով հորը, հափշտակել են աղջկան, — ասաց խելակորույս Գոհարիկը և հայացքը շուռ տալով, աղեկտուր ձայնով կանչեց.

— Լուսի՛կ, Լուսի՛կ, ու՞ր ես դու, ձայն տուր, քո քույրիկն է քեզ կանչում:

Բայց Լուսիկը չկար: Գոհարիկի հարցին գերանները պատասխանեցին իրենց ճարճատյունով:

— Մի քանի հոգի հետևեցեք չարագործներին, գուցե ետ դարձնեք Լուսիկին, — հրամայեց Գոհարիկը, հուսահատությամբ կոտրատելով յուր ձեռքերը:

Չիավորները թռան զանազան կողմեր՝ Գոհարիկին թողնելով վիրավորվածի մոտ: Այդ ժամանակ հորիզոնից յուր գլուխը հանեց մաշված և դժգույն լուսինը և թույլլույսով լուսավորեց սգապատ տեսարանը...

ԺԷ

ՍՐՏԱՃՄԼԻԿ ՊԱՏԿԵՐ

Ստեփանիկի սիրտը թունդ առավ, երբ մոտեցավ Անիի տափարակի վերջին բլրին: Երիտասարդական արյունը սկսեց բորբոքվել նրա երակների մեջ և աչքերը լցվեցինանհամբերության կրակով: Նա զգում էր, որ այդ բլուրը անցնելուց հետո պիտի երևա դարբին Ղևոնդի խուղը և յուր նազելու ձեռատունկ անդաստանը: Սակայն նույնոգևորությունը չէր տիրում նրա ընկերակցի դեմքին: Հարպիկը մռայլ էր ու տխուր: Նրա սիրտը չէր թնդում, չէր տրոփում Ստեփանիկի սրտի նման, թեև ինքն էլ պիտիտեսներ յուր սիրելի Գոհարիկին: Հարպիկն, ընդհակառակը, ցուրտ էր և սառն, նրա դեմքին երևում էին մի տեսակ ցնցումներ, որոնք կարծես վրեժխնդրության ուկատաղության ցոլմունքներ լինեին: Այդ միջոցին նա չէր մտածում Գոհարիկի մասին, չէր փափագում տեսնել նրա լուսաթաթախ դեմքը, խոսել նրա հետ, այլ այդ իսկրոպեին նրա գլխում բոլորովին հակառակ մտքեր էին անցնում, որոնք ստիպում էին նրան այլայլվելու: Այդ միջոցին Հարպիկի գլխում արյան և կոտորածիտեսարաններ էին անցնում, ուր ինքը վրեժխնդրության ծարավի՝ մղվում էր թշնամիների մեջ և կոտորում նրանց: Նա կոտորում էր անխնա, առանց հոգնելուկոտորում էր, իսկ թշնամիները մեկը մյուսի ետևից սունկի պես նորից բուսնում էին և ոտնատակ տալիս յուր հայրենիքը:

— Ա՛խ, ի՞նչ են ուզում նրանք խեղճ Հայաստանից, ինչու՞ հանգիստ չեն թողնում: Մի՞թե աստծո առաջ հայն այն տեսակ հանցանք է գործել, որ նա նրանդատապարտել է հավիտյան տանջվել, հավիտյան ոտնատակ լինել... Ո՛հ... աստված, ինչու՞ հայերին ջարդում են և նրանց շենն ու քաղաքը մոխրի կույտերդարձնում: Մի՞թե բավական չէր պարսիկների, արաբների, թաթարների և

հազար ու մի ազգերի արշավանքները, որ այժմ հույնն էլ է ոտքի տակ տալիս մեզ: Ի՞նչ էուզում նա մեզանից — մեր հայրենիքը, մեր պապերի արյան քրտինքով պահած ու մեզ հասցրած ազատությունը,.. Հը՛մ, քավ լիցի, այդ երբեք չի ստանա հույնը, եթեամբողջ յուր լեգիոնները Հայաստան ուղարկի: Հայաստանում դեռ ապրում են մարդիկ, որոնք իրենց հայրենիքի համար կկռվեն մինչև իրենց արյան վերջին կաթիլը ևվա՛յ հույներին, որոնք լեռների ավազակների սրի բերանը կընկնեն, — ասաց Հարպիկը, ոտքերով խթեց ձիու կողերին և սուրը պատյանից հանեց: Նրա ձին մի թռիչքարավ և սլացավ առաջ: Ստեփանիկը, որ նույնպես մտածության մեջ էր ընկած, երբ տեսավ Հարպիկի սուր հանելը, ինքն էլ հանեց սուրը և սլացավ Հարպիկի ետևից:Նա կարծեց, թե վտանգ է սպառնում իրենց:

Բայց այդ ժամանակ նրանց առջև բացվել էր տափարակը, Անիի հրաշալի տափարակը, որի մեջ, նազելի հարսի նման, նստած էր Անին յուր հազար ու միեկեղեցիներով, աշտարակներով, բրջերով և հաստ ու պինդ պարիսպներով:

Երկու երիտասարդի սրտերը թունդ առան և նրանք, կանգնեցնելով ձիերը, գլխարկները վերցրին, երեսները խաշ քաշեցին և պահ մի սկսեցին լուռ աղոթք մրմնջալ:

Անիի հրաշալի տեսարանը ցնցեց երկուսի սիրտն էլ:

Հիրավի բան կար ցնցվելու: Անին այդ ժամանակ հրաշալի էր: Արևի վերջին կարմրածիրանագույն ճառագայթները ընկել էին նրա վրա և աննման տեսք տվել նրան:Եվ երկու երիտասարդներին թվում էր, թե նրանք գտնվում են դյութական աշխարհում, ուր աներևույթ զորությունը նրանց առաջ էր դրել մի հրաշալի, աննմանքաղաք, որի աշտարակները, անթիվ եկեղեցիների գմբեթները, պալատներն ու դիտարանները շրջապատվել էին բոցերով և իրենց աչքի առաջ հուրհուրատին էինտալիս:

Եվ ձիավորները մտածում էին. «Մի՞թե սա իրականություն է, մի՞թե սա ցնորք չէ... Մի՞թե, տե՛ր, կգտնվի այսքան փարթամ, շեն և հրաշալի քաղաք, ինչպիսին Անինէ... Որի՞ ձեռակերտն է դա, հողեղենի ձեռքերո՞վ է շինված, թե երկնային մի ուժ է այդ աշտարակների և եկեղեցիների գմբեթները բարձրացրել...»:

Բայց ցնորք չէր դա, նրանք Անիի, Բագրատունյանց թագավորության աթոռանիստ քաղաքի առաջ էին կանգնած:

— Եվ հույներն այս քաղաքը ուզում են իրենց ձե՞ռքը զցել, — մռմռաց Հարպիկը և ձին մտրակեց:

— Բայց սպասիր, Հարպի՛կ իշխան, խուղը, խուղը չի երևում, մի՞թե աչքերս խաբում են, թե՞ ես չեմ տեսնում, — ասաց Ստեփանիկը՝ աչքերը հառելով:

— Ի՞նչ խուղ,— հարցրեց Հարպիկը մեքենաբար:

— Դարբին Ղևոնդի խուղը չկա, իմ Լուսիկը...

— Ա՛... իրավ որ, այնտեղ միայն մոխրի կույտ եմ տեսնում. արդյոք ի՞նչ է պատահել նրանց:

Նրանք մոտեցան և կանգնեցան դարբին Ղևոնդի խրճիթի առաջ:

Այնտեղ, ուր առաջ դարբինը յուր զնդանի առաջ կանգնած ծեծում էր երկաթը, ամեն ինչ քարուքանդ էր արված, իսկ այն խրճիթը, պարտեզը, ուր Լուսիկը ուրախթռչնիկի նման ոստոստում էր, այժմ մոխրի և ավերակի կույտ էին ներկայացնում:

— Այս ի՞նչ եմ տեսնում, մի՞թե սրան էի սպասում, — ասաց հուսակտուր ձայնով Ստեփանիկը, և նրա աչքերում հուսահատության արցունքներ երևացին:

— Մի՛ հուսահատվիր, Ստեփանի՛կ, մենք ամեն բան կիմանանք և կգտնենք Լուսիկին: Ոչինչ իմացած չպետք է հուսահատվել,— պատասխանեց Հարպիկը, և նրանքձիերի երեսը շուռ տալով՝ դեպի Անի սլացան:

Քիչ հետո նրանք անցան Անիի դռներով, մտան քաղաք:

ԺԸ

ԴԱՎԱՃԱՆԸ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է

Վեստ Սարգիսը և Եղոն, հունաց բանակը մտնելով, մեծ շուքով ընդունվեցին հունաց հրամանատարից: Նա այդ ժամանակ զբաղված էր կեր ու խումով, երբհայտնեցին, որ հայոց իշխան Վեստ Սարգիսը ցանկանում է ներկայանալ իրեն: Հրամանատարը ուրախությունից վեր թռավ ճոխ սեղանից և դեպի վրանի մուտքըդիմեց, ուր նկատելով Վեստ Սարգսին, ձեռք մեկնեց և ներս հրավիրեց: Գինու շոգիներով լիքն էր հրամանատարի գլուխը և յուր ներքին ցնծությունը չկարողացավթաքցնել Վեստ Սարգսին տեսնելով: Նա գիտեր, որ այդ հայ իշխանը դյուրություններ պիտի տա Հայաստանի մեջ ավելի ավերմունքներ, ավելի

կոտորածներ ասելու:Նա հասկանում էր Վեստ Սարգսի տենչանքը, ուստի ամեն կերպ աշխատում էր շոյել նրա ինքնասիրությունը:

— Բարո՛վ, հազար բարին ես եկել, իշխա՜ն, մենք քեզ Վաղուց էինք սպասում, — ասաց հրամանատարը կեղծ ժպիտով՝ նստեցնելով իրեն մոտ:

— Հա՜, ես գիտեմ, որ ուշացա, բայց վնաս չկա, մեղքերս կքավենք, — պատասխանեց Վեստ Սարգիսը:

— Հոգ չէ, իշխա՜ն, լավ ժամանակ հասար, այժմ մենք քեֆ կանենք, իսկ վաղը մեր անելիքի մասին կմտածենք: Է՛յ, երգիչներ, երգեցեք ուրախ երգեր, իսկ դուքինչեցրեք ձեր փողերը և զարկեցեք թմբուկները, թող ամենքն իմանան, որ մեր մեծազոր կայսրը պատվել գիտի այն հայ իշխանին, որ հնազանդ է նրան, — ասացհրամանատարը և ձեռքով նշան արեց:

Այդ միջոցին փողերը հնչեցին և տավիղները սկսեցին ածել, իսկ երգիչները սկսեցին երգել, որպեսզի ուրախացնեն նոր հյուր եկած հայ իշխանին:

Սկսվեց քեֆը: Հունաց իսկական զեխ քեֆը, գինու գոլորշիներն արդեն ազդում էին սեղանակիցներին, ազդում էր և Վեստ Սարգսի ուղեղին: Նա զգում էր, որ գլուխըհետզհետե շշմում է, մտքերը պղտորվում են, իսկ գիտակցությունը նոսրանում: Նա պղտոր աչքերով առաջ էր նայում, բաժակ բաժակի ետևից դատարկում, երբհանկարծ նկատեց, որ մի խումբ կիսամերկ աղջիկներ ներս մտան և սկսեցին պարել: Վեստ Սարգիսը քիչ մնաց խելքը կորցներ: Նա կարծում էր, թե ինքը այդ բոպեիներկրի վրա չի ապրում, այլ՝ երկնքի, ուր անմարմին ոգիները շրջան կազմած պարում են մի այնպիսի եղանակով, այնպիսի նազով ու կոտրատվելով, որամենապաղարյուն մարդկանց սրտերն էլ կհալեցնեին:

— Ինչպե՞ս ես հավանում իմ հուրիներին, — հարցրեց հույն հրամանատարը, երբ Վեստ Աարգսի աչքերի մեջ նկատեց մի առանձին ոգևորության փայլ:

— Հրաշալի՛ է, իշխա՜ն, հրաշալի՛, — պատասխանեց Վեստ Սարգիսը՝ աչքը չհեռացնելով հուրիներից:

— Սա հունական պար է, այս պարը շատ են սիրում մեր իշխանները, և հունաց մայրաքաղաքում առանց այս պարի ոչ մի զվարճություն չի կարող լինել:

— Հրաշալի՛ է, աննմա՛ն է, իշխա՜ն, — կրկնեց Վեստ Սարգիսը խելքը կորցրածի նման:

Նույն քեֆն անում էին նաև զինվորները: Նրանք էլ հետևելով իրենց հրամանատարի օրինակին, ցերեկով կողոպտում, թալանում էին հայոց գյուղերն ու քաղաքները, գիշերով՝ մատնվում զեխ ու անառակ կյանքի: Եվ հունաց բանակը յուր ցոփ կյանքով նման չէր ամենևին օրինակելի բանակի, ուր տիրապետում է զինվորականկարգ ու կանոնը, այլ ավելի նման էր մի բանակի, որը մտածում էր միայն խրախճանալ և ուրախանալ:

Այդ դեպքերից հետո հունաց բանակը, հանվելով յուր տեղից, առաջ շարժվեց դեպի Հայաստանի ներսը՝ նպատակ ունենալով հասնել Անի: Այդ բանակինառաջնորդում էր Վեստ Սարգիսը և ամեն քայլափոխում ցույց տալիս ճանապարհը, հայտնում, թե ով է դեմ գնում և ով է համամիտ իրեն:

Եվ նրանք առաջ էին գնում քանդելով, ավերելով ու կոտորելով, այնինչ Վեստ Սարգսի սիրտը, քանի մոտենում էին Անիին, թունդ էր առնում: Նա մոխրի նավերակների կույտեր էր թողնում յուր ետևը և շտապում Անի, որ դափնյա պսակների արժանանա:

Հենց այդ ժամանակ էր, երբ հունաց հրամանատարին լուր բերին, թե յուր առաջապահ խումբը վերադառնալու ժամանակ ջարդ է կրել ինչ-որ երկու ավազակներից:

Գոռոզ հույնը վրդովվեց, և բարկությամբ լցվեցին նրա մանր, բայց խորամանկ աչքերը, ապա, դառնալով Վեստ Սարգսին, ասաց.

— Իշխա՜ն, ո՞վքեր են այդ հանդուգն մարդիկ, որ համարձակվում են հարձակվել իմ առաջապահ խմբի վրա, մի՞թե դրանք չգիտեն, թե ինչպես կպատժեմ իրենց:

— Դա լեռների ավազակներն են անշուշտ, իշխա՜ն, որոնք անհանգիստ են անում շրջակայքը: Պետք է պատժել այդ հանդուգններին:

— Ո՞վքեր են այդ լեռների ավազակները:

— Պաղին գավառի իշխան Հաբելի որդիք, տե՜ր, նրանք վաղուց է, որ հանգիստ չեն մնում իրենց տեղը:

— Ավազակներ և հարձակում գործեն բանակի՞ վրա, այդ ի՞նչ խաղ է, Վե՛ստ Սարգիս, որ անում են, մի՞թե կարծում են, թե դրանով մեզ ետ կդարձնեն… հա՛, հա՛, հա՛, — հեգնորեն խնդաց հրամանատարը:

— Եվ դրանցով է ահա շրջապատված Վահրամ իշխանը, որ ցանկանում է Հայաստանի գահը հաստատուն պահել և ընդդիմանալ կայսեր, — ասաց Վեստ Սարգիսը:

— Լավ, եթե այդպես է, մենք առաջ նրա կողմնակից ավազակների երկրները մոխիր կդարձնենք և ապա իրեն կհասնենք:

— Այդպես էլ պետք է, տե՛ր, իմացեք, որ առաջին ավազակը և Վահրամի կողմնակիցը Հաբել իշխանն է, պետք է ոտնատակ տալ նրա երկիրը:

— Մենք մոտ ենք Պաղին գավառին, ուրեմն պետք է շտապ ոչնչացնել նրա երկիրը, քանի նա պատրաստություն չի տեսել:

— Այո, պետք է շտապել, բայց միևնույն ժամանակ պետք է զգույշ մնալ: Հաբելը խորամանկ աղվես է և նա մեր հոտը վաղուց է առել ու դարան մտել:

— Է՛հ, բան ասացիր, իշխա՛ն, դարան մտնել… չեմ հասկանում, ի՞նչ նշանակություն ունի մի խումբ ավազակների դարան մտնելը: Եվ դու կտեսնես, թե ինչպես այդավազակները կարճ ժամանակից հետո ոտքերս կլիզեն և թողություն կխնդրեն, բայց, իսկապես ասած, այժմ այդ մանր բաներով զբաղվելու ժամանակը չէ, պետք էշտապել Անի, — ասաց մեծամիտ հույնը ինքն իրեն գովելով և հրամայեց բանակին շարժվել:

Հունաց բանակը դեռ առաջին իջևանատեղիս նոր էր հասել, երբ Վեստ Սարգիսը և հույն հրամանատարը հեռվում, ճանապարհի վրա, փոշու ամպ նկատեցին: Երևումէր, որ մի խումբ դեպի իրենց բանակն է սլանում, բայց թե ո՞վքեր են դրանք, թշնամի՞, թե բարեկամ, անհայտ էր:

— Թմբուկ զարկիր և հրամայիր պատրաստ լինել դիմադրելու, — ասաց հույն հրամանատարը և զենքի կոչեց զինվորներին: Բայց նրանց զարմանքը մեծ եղավ, երբիրենց առաջ մի փոքրիկ խումբ նկատեցին, որոնց առաջնորդը հեռվից կանչում էր:

— Է՛յ կայսեր քաջ զինվորներ, ցած դրեք զենքներդ, ձեր թշնամին չենք, այլ բարեկամը:

Հունաց բանակը միամտվեց և ներս թողեց այդ փոքրիկ խմբին, որի առաջնորդը շուտով ներկայացավ հույն հրամանատարին:

— Ո՞վքեր եք դուք և ի՞նչ եք կամենում, — ասաց գոռոզությամբ հույն հրամանատարը առանց նայելու յուր առաջ կանգնած իշխանին:

— Տե՛ր, մենք մեծազոր կայսեր հլու հպատակներն ենք և եկել ենք հայտնելու մեր հպատակության զգացմունքները նրա քաջ հրամանատարին:

Հույն հրամանատարի դեմքը ցնցվեց ուրախությունից:

— Ի՞նչ է քո անունը, իշխա՛ն, — ասաց նա ավելի քաղցր ձայնով:

— Թլպաղտո բերդի իշխան Թորոսիկ, քո ծառան, — պատասխանեց հայ իշխանը խոնարհ գլուխ տալով:

— Ուրեմն բարի, դու կվարձատրվես մեր կայսրից:

— Ես միշտ նրա ստրուկն եմ, տե՛ր, և այժմ էլ պատրաստ եմ գործով ցույց տալու:

— Ապրիս, Թորոսի՛կ իշխան, բայց ասա, ի՞նչ է անում այդ ավազակը՝ Պաղինի տերը:

— Տե՛ր, նա յուր գնդերը պատրաստել է և դարան մտել, նա չի ճանաչում կայսեր իրավունքը:

— Մենք շուտով կհասկացնենք նրան, թե ու՞մ հետ գործ ունի, իշխա՛ն, հոգ մի անեք, շուտով նրա դիակը շներին պիտի տամ, — ասաց հույն հրամանատարը:

— Այո, պետք է, պետք է նրանց դիակները շներին տալ, բայց դրանով սիրտս չի հովանա: Եթե ձեռքս ընկնի այն ծեր աղվեսը, ես նրա արյունը կխմեմ:

Հույն հրամանատարը ցնծում էր ներքուստ ուրախությունից:

— Ինչու՞, մի՞թե նա քեզ այդքան ցավեցրել է, — հարցրեց Վեստ Սարգիսը, որ մինչ այդ լուռ լսում էր նրանց խոսակցությունը:

— Այո, իշխա՛ն, նա խլել է մինչև անգամ որդուս և զինել իմ դեմ: Որդուն հոր դեմ զինե՞լ… մի՞թե այդ տանելի է, մի՞թե այդ դառն հարվածը կարող է մոռանալԹորոսիկ իշխանը:

— Համբերությո՛ւն, իշխա՜ն, ամեն բան լավ կերթա, և մենք շուտով Պաղինը մոխիր կդարձնենք, — ասաց հույն հրամանատարը և հրամայեց պատիվներ տալԹորոսիկ իշխանին:

Վեստ Սարգիսն էլ ցնծում էր յուր սրտում, նա իրեն դաշնակից գտավ, և մի դավաճանը երկուսի փոխվեց…

Թշվա՛ռ Հայաստան...

ԺԹ

ԽԵՆԹԸ ԼԱԼԻՍ Է

Խենթը, յուր վրա դրված պարտավորությունը կատարելով, Հաբելի մոտից վերադառնում էր Անի: Այժմ նա բոլորովին փոխվել էր և ամենևին խենթի նմանությունչուներ: Նա նստած էր յուր կարմիր ձին և զինված ու զրահ հագած արագ արշավում էր: Նրա դեմքն այդ միջոցին խիստ մտախոհ էր և տխուր: Երևում էր, որ ծանր, սրտամաշ մտքերը կեղեքում ու ալեկոծում էին նրա սիրտը: Հայաստանի վերջին դեպքերը խիստ վրդովել էին նրա սիրտը և նա զգում էր, որ Հովհաննես թագավորիմահից հետո, Հայաստանի գլխին ինչ-որ մի չարագուշակ բան է պտտվում, որը սարսռեցնում էր նրա մարմինը: Այդ բանն զգում էր թե՛ ինքը և թե՛ նրա տերը՝ Վահրամ իշխանը:

Այո, նա լավ հիշում էր այն օրը, երբ Վահրամ իշխանը, մոտենալով իրեն, շեշտակի նայեց յուր վշտալից ու թախծալից աչքերով և դառնագին սրտով ասաց.

— Ներսե՛ս, ի՛մ Ներսես, սիրու՞մ ես ինձ:

Ես զարմացա և նրա դեմքը դիտեցի, կարծես հենց այս բոպեիս լիներ: Իմ տիրոջ դեմքը մռայլ էր ու գունատ, իսկ աչքերը՝ արտասուքով լի: Ես հուզվեցի, ընկա Վահրամիշիանի ոտքերը և ասացի.

— Ի՞նչ ես հրամայում, տե՛ր, քեզ որ չսիրեմ՝ ո՞ւմ պիտի սիրեմ, քո տան մեջ եմ ծնվել և սնվել:

Նա կրկին հարցրեց.

— Ներսե՛ս, ի՛մ Ներսես, սիրու՞մ ես ինձ:

Ես կրկին նայեցի նրա երեսին, տեսա, որ նա կատակ չի անում, որ նա ինքն է հարցնում, այնպես, ինչպես Հիսուսը հարցնում էր յուր աշակերտին. «Սիմովն Հովնանու, սիրու՞մ ես ինձ»: Աստված իմ, մտածեցի ես, մի՞թե իմ տերը անհավատարմության մի բան է տեսել իմ մեջ, որ ուզում է փորձել ինձ, մի՞թե չգիտե, որ ես յուր դռանհավատարիմ շունն եմ և պատրաստ եմ իմ արյան վերջին կաթիլը թափել նրա համար:

Նա դարձյալ կմկմաց.

— Ներսե՛ս, ի՛մ Ներսես, սիրու՞մ ես ինձ:

Ես վրդովված ընկա նրա ոտքերը և, արտասունքներովս լվանալով նրա ոտքերը, ասացի.

— Տե՛ր, մի՞թե չգիտես, որ ես քո հավատարիմ շունն եմ:

— Ուրեմն, եթե այդպես է, վեր կաց և լսիր ինձ, — ասաց նա և մոտը նստեցնելով ավելացրեց.

— Այսուհետև քո անունը Ներսես չի լինելու, այլ Խենթ, հասկանու՞մ ես, Ներսեսը մեռավ և Խենթը ծնվեց:

Ես սոսկացի. քրտնքի խոշոր կաթիլները դուրս ցոլացին ճակատիցս և սարսափով նրա դեմքը դիտեցի՝ «Ի՞նչ է ասում իշխանը, մի՞թե նա խելքը կորցրել է»:

— Մի՛ զարմանա, Ներսե՛ս, այսուհետև քեզ Խենթ կանվանենք և դու էլ Ներսես չես կոչվի: Եթե սիրում ես տիրոջդ, եթե սիրում ես հայրենիքդ, այդպես պիտիանվանվես:

Ես հասկացա նրա միտքը և առանց երկար մտածելու պատասխանեցի.

— Համաձայն եմ, իշխա՛ն, հրամայիր, թե ի՞նչ պիտի անեմ:

— Լսիր ինձ, քեզ հայտնի է, որ իմ ծառաներից մեկը մեռել է: Ես կհայտարարեմ, որ Ներսեսն է մեռել և նա այլևս չկա աշխարհիս երեսին, իսկ դու փոխելով քոհանդերձները, դեմքիդ արտահայտությունը, խենթություններ պիտի անես Անիի փողոցներում և ապա գազանի կերպով ամեն ինչ տեղեկացնես ինձ: Կարճ ասած, դուԽենթ անվան տակ իմ լրտեսը պիտի լինես: Հայաստանի գլխին փոթորիկ է պտտվում և Հայոց խնամակալը՝ իշխան Վեստ Սարգիսը ձգտում է Հայաստանի

գահըհափշտակել և դու գլխավորապես պիտի լրտեսես նրա ամեն մի քայլը, թե նա ի՞նչ է անում, ո՞վ է գալիս նրա մոտ, ո՞վ գնում:

Ես խոստացա Վահրամ իշխանին և այն օրից Անիի փողոցներում հռչակվեցի ինչպես Խենթ: Ամենքը ինձ Խենթ են ճանաչում, ամենքը բացի դարբին Ղևոնդից նեՀուսիկից, որոնք ճանաչում են, թե ո՞վ եմ ես և ինչու՞ խենթ: Բայց մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս տաղտկալի վիճակը, մինչև ե՞րբ իմ իշխանը՝ ծերուկ Վահրամըպիտի տանջվի դառն մտքերով: Օրավուր դրությունը ծանրանում է, և այժմ հույներն են գլուխ բարձրացրել: Տե՛ր, դու փրկիր մեր Անին, մեր Գագիկ Բագրատունուն, որը դեռ մատաղ հասակում փոթորիկների է հանդիպում:

Եվ Խենթը երեսը խաչ քաշելով, խթեց ձիու կողերը և առաջ գնաց: Մի ամբողջ շաբաթ էր, ինչ նա ճանապարհին էր և հոգնածությունը խիստ նկատելի էր նրա վրա: Նաշտապեցնում էր յուր ձիուն, որ շուտով հասնի դարբնի խրճիթը և Հուսիկի պատրաստած ապուրը ուտի, սակայն նա որքա՛ն զարմացավ, երբ այդ խրճիթը քարուքանդգտավ: Ի՞նչ էր արդյոք պատահել նրանց, ու՞ր էր դարբին Ղևոնդը, նրա աղջիկը՝ Հուսիկը:

Եվ Խենթը կանգնած այդ խրճիթի առաջ ապուշ աչքերով նայում էր քարուքանդ խրճիթին և յուր աչքերին չէր հավատում:

Խենթը զգում էր, որ յուր հետ ինչ-որ մի բան է կատարվում, որ իր սիրտը բաբախում է արագ-արագ, որ աչքերը մթնում են և գլուխը սկսվում է պտտվել:

— Հուսի՛կ, աղջիկս, ու՞ր ես, — կանչեց Խենթը մի այնպիսի աղիողորմ ձայնով, որ քարերն էլ կարտասվեին:

— Հուսի՛կ, Հուսի՛կ, ձայն տուր, Խենթն է, մի՞թե ապուրը չես պատրաստել, — կանչեց դարձյալ Խենթը և զգաց, որ կսկծից իսկապես ինքը խենթանում է:

Կանգ առավ Խենթը, շատ կանգ առավ և հանկարծ, իջնելով ձիուց, խելագարի նման ամայի պատերը գրկեց և արտասուքները սկսեցին հեղեղել նրա ցամաքածաչքերից:

Խենթը լալիս էր…

Եվ հիրավի բան ուներ արտասվելու: Նա այնպես չէր սիրում յուր Հուսիկին, որ այդպիսի գույժը չցնցեր նրա ուղեղը: Յուր ընտանիքը կորցնելուց հետո հոգու բոլորզորությամբ սիրում էր Հուսիկին՝ յուր եղբոր աղջկան…

Դարբին Ղևոնդը Խենթի հարազատ եղբայրն էր:

Իսկ այժմ ո՛չ Ղևոնդը կար և ո՛չ եղբոր աղջիկը: Աշխարհիս երեսին միայն դրանց մոտ էր բանում յուր սիրտը, հայտնում յուր վիշտն ու ուրախությունները... Իսկ այժմու՞ր են դրանք:

Հանկարծ Խենթը ցնցվեց, նրա խենթությունը միտքն ընկավ ու զոռաց.

Է՛յ, է՛յ ինձ մի՛ հարցնեք՝ ո՞վ եմ ես...
Վա՛յ ինձ, վա՛յ ինձ...

— Կգտնեմ քեզ, Լուսիկ, եթե մեռած չես, կգտնեմ, և վա՛յ նրան, ով քո սիրուն պարտեզը ոտնատակ տվեց,— ասաց հենթը և կրկին ձի նստելով Անի մտավ:

Բ ՄԱՍՆ

Ա

ԴԱՎԱՃԱՆԻ ՈՐԴԻՆ

Հույն պատգամավորին ժողովից վռնդելուց հետո Վահրամ Պահլավունին հանգստություն չուներ: Նա զգում էր, որ Հայաստանի գլխին կուտակվում են սպառնալիցամպեր և թե այդ ամպերը առանց սոսկալի հետք թողնելու չեն անցնի Հայաստանից: Բայց թե ի՞նչ կլինի Հայաստանի ապագան, ինչո՞վ կվերջանա այդ բոլորը — ահա դրանք սարսափեցնում էին ծերունի Վահրամին և ցավեցնում նրա հայրենասեր սիրտը:

— Ո՛հ, մի՞թե Հայաստանը յուր ազատությունը պիտի կորցնի, մի՞թե չարանենգ մարդիկ պիտի հասնեն իրենց նպատակներին և ջախջախեն Հայաստանի գահը, մի՞թե ես իմ աչքով պիտի տեսնեմ Բագրատունյաց գահի անկումը... Բայց մի՞թե իմ սիրտը կտանի այդ հարվածը, — ասում էր ծերունին, և խոր կսկիծը ցնցում էրնրան:

— Ո՛չ, ես իմ ծերունի կուրծքը պատնեշ կշինեմ և կպաշտպանեմ հայրենիքս, այն ժամանակ թող թշնամիները կոխկռտեն դիակս և այնպես մեր ազատությունը խլեն:Թող գոնե մեր հետնորդները անեծքով չհիշեն իմ անունը, թե Վահրամ Պահլավունին ձեռքերը ծալած չէր նստած, երբ թշնամիները ուզեցան խլել հայրենիքիազատությունը:

Վահրամ Պահլավունին այդպես խոր մտքերի մեջ էր ընկղմված, երբ ներս եկավ նրա սպասավորներից մեկը և հայտնեց Հարպիկ իշխանի

գալուստը: Վահրամիկնճիռները բացվեցին, հրամայեց ներս հրավիրել նրան: Երբ ներս եկավ իշխանը, Վահրամը նայեց նրա հաղթանդամ կազմվածքին և մի տեսակ գոհունակությանժպիտ անցավ նրա դեմքի վրայով, կարծես նրա մտքով անցավ «Հայաստանը չի՛ մեռնի, ո՛չ, չի՛ մեռնի, քանի այսպիսի զավակներ ունի». ապա, դառնալովՀարպիկին, ասաց.

— Բարի ես եկել, Հարպի՛կ իշխան, դու քաջի պես ես սլացել:

— Այո՛, իշխան, պետք էր շտապել. քո նամակը ստանալուն պես, անկարելի էր մի րոպե էլ ուշանալ, թեև անիծված հույները ճանապարհին մի քիչ զբաղեցրին, — պատասխանեց Հարպիկը՝ առանց համարձակվելու նստել:

— Նստի՛ր, իշխան, և պատմիր, թե ի՞նչպես հույները քեզ զբաղեցրին: Հույս ունեմ, որ նրանք քեզ խնջույքի չէին հրավիրի:

— Օ՛… ո՛չ, լեռների ավազակին նրանք խնջույքի չէին հրավիրի, այդ կողմից միամիտ մնա, բայց թե նրանց մի խմբին փոքրիկ դաս տվի և ծանոթացրի լեռներիավազակի հետ: Նրանք լսել էին գուցե անունս, բայց ինձ հետ անձամբ ծանոթ չէին, — ասաց Հարպիկը և պատմեց առաջապահ խմբի ջարդը:

— Ապրիս, Հարպի՛կ, այդպես էլ պետք էր, բայց թողնենք այդ, դու լավ ժամանակ հասար, շուտով իշխանները կժողովվեն և մենք մեր անելիքի մասին կխորհենք, — ասաց Վահրամը և ապա երկար իրար հետ խոսելով Հայաստանի ներկա տագնապալի դրության մասին, միջոցներ էին որոնում առաջն առնելու, երբ մեկը մյուսիետևից ժողովվեցան մոտ երեսուն իշխան և խորհրդի նստան: Բոլոր իշխաններն էլ Վահրամին լավ ծանոթ և ազգականներ էին: Այդ ժողովին ներկայացավ նՍտեփանիկը, որը առանց համարձակվելու առաջ գնալ, դահլիճի մի անկյունում կանգ էր առել և ձեռքը յուր սրի դաստակին դրած լուռ լսում էր ժողովականներին:

— Ո՞վ է այդ պատանին, — դարձավ հանկարծ Վահրամը, երբ աչքը նրան ձգեց:

Իշխանները բոլորն էլ Ստեփանիկին նայեցին, որն ամոթից կաս-կարմիր էր կտրել և ոչինչ չէր պատասխանում:

— Տե՛ր, դա ինձ հետ է եկել, Թլպաղտո ամրոցի Թորոսիկ իշխանի որդին է, — ասաց Հարպիկ իշխանը:

— Ո՞ր Թորոսիկի, այն որ հույների հետ հարաբերություն ունի և յուր ազգը ծախու՞մ է, — հարցրեց իշխաններից մեկը՝ ոտքի կանգնելով.

— Ներեցեք, իշխաննե՛ր, դուք իրավունք ունիք զարմանալու, որ ես՝ դավաճան Թորոսիկ իշխանի որդին, ձեր ժողովում ներկա եմ լինում, բայց մեղքը իմս չէ, այլՀարպիկ իշխանինը, որն ինձ այս ժողովին ներկայացրեց: Ես գիտեի, որ իմ ներկայությունը ձեր սրտերը պիտի վրդովի, պատճառը՝ գայլը գառան հետ չի ընկերանա, այդպես էլ դավաճանը հայրենիքի պաշտպանների հետ չի կարող մնալ. նրանք միմյանց պիտի ոչնչացնեն, որովհետև նրանց հայացքները բոլորովին տարբեր ենիրարից: Սակայն խոսք կխնդրեմ ձեզանից, տյա՛ր քք, և կհարցնեմ, թե ի՞նչ մեղավոր է որդին, երբ հայրը դավաճան է, ստոր է և խաբեբա, մի՞թե ես մեղք ունեմ, որ իմհայրը դավաճան է: Միայն ձեզ հայտնում եմ, որ հորս ամոթալի արատը ես պիտի քավեմ, ես պիտի ջնջեմ մեր տոհմի անունից այն սև բիծը, որ դնում է հայրս և պիտիջնջեմ սուրը ձեռքիս մինչև իմ արյան վերջին կաթիլը, պաշտպանելով հայրենիքս: Իսկ եթե դեմ առ դեմ հայրս դուրս գա, այն ժամանակ, երդվում եմ այս սրովս և իմպատանի պատվովս, որ այս իսկ սուրը պիտի մխեմ հորս կուրծքը և դուրս թափեմ նրա լերթ ու թոքը, այն ժամանակ թող ասեն, թե Թլպաղտո բերդի իշխան Թորոսիկըդավաճան էր, բայց նրա որդի Ստեփանիկը ջնջեց այդ արատը, որովհետև դուրս թափեց յուր հոր այն անարգ սիրտը, որի մեջ ամրացած էին դավաճանության անարգարյունը: Կրկին երդվում եմ սրիս վրա, երդվում Անիի 1001 եկեղեցիների վրա, որ այդ այդպես էլ պետք է լինի, — ասաց Ստեփանիկը, և նրա ձայնը դողդողաց, բարկությունից աչքերից կայծակներ թռան և դեմքը բոցավառվեց:

Իշխանները լուռ լսում էին նրան և երբ վերջացրեց ու դուրս հանեց յուր սրտի կրակը, յուր մաղձը դեպի հայրը, այն ժամանակ Վահրամ իշխանը, դառնալով նրան, ասաց.

— Ապրի՛ ս, Ստեփանի՛կ իշխան, հայրենիքի առաջ ծնող և որդի չկա և նա, ով ծնողին վեր է դասում, քան հայրենիքը, դավաճան է,— ապա, դառնալով իշխաններին,

ավելացրեց.

— Իշխաննե՛ր, ձեզ հայտնի է Հայաստանի տագնապալից դրությունը, ձեզ արդեն հայտնի պիտի լինի, որ մեր այստեղ ժողովվելու պատճառը հայրենիքիպաշտպանությունն է: Բագրատունյաց գահը թափուր է, իսկ խնամակալը անհետացած: Նա հեռացել է, ո՞վ գիտե, ինչ նպատակներով, բայց ձեզ արդեն հայտնի է, որՎեստ Սարգիսը ծուռ աչքով է նայում ամեն բանին և այդ գահը ինքն է ուզում հափշտակել: Մենք չպետք է թույլ տանք նրան այդ անիրավություններն անելու և գահըօրինական ժառանգին պիտի հանձնենք, իսկ այդ օրինական ժառանգը պատանի Բագրատունի Գագիկն է:

— Կեցցե՛ Գագիկ թագավորը, — գոռացին մի քանիսը:

— Բայց, սպասեցեք, իշխաննե՛ր, — ընդհատեց մեկը, — նախքան գահը պաշտպանելը, մենք պիտի հեռացնենք մեր երկրի սահմաններից վտանգը, հույներն արդենոտնատակ են տալիս Հայաստանի արևմտյան սահմանները:

— Այո՛, այդ այդպես է, այդ հոգսը մենք կհանձնենք Հարպիկ իշխանին: Նա մի քանի գնդերով կպաշտպանի երկիրը հույներից, մինչև, որ մենք Գագիկին Անի կբերենքև թագավոր օծել կտանք:

— Այդ շատ դժվար խնդիր է, Վահրա՛մ իշխան: Գագիկը դեռ պատանի է, իսկ Վեստ Սարգիսը՝ նրա հակառակորդը և, բացի դրանից, նրա ձեռքումն է տերության թե՛ զանձը և թե՛ բերդերից շատերը: Եվ ես երկյուղ եմ կրում, թե միգուցե իշխաններից շատերը նրա կողմը պահեն:

— Եվ այդ շատ հավանական է, իշխա՛ն, բայց մեր ջանքն էլ այն պիտի լինի, որ գահը թափուր չթողնենք, որ Վեստ Սարգիսը աչքը հեռացնի այդ գահից: Չէ որ նրաձգտումն էլ հենց այն է, որ Գագիկին արգելք դառնա թագավոր օծվելու: Նա մի ստոր փորձ էլ արավ պատանու կյանքի դեմ, բայց անհաջող: Տերը փրկեց Գագիկին ևնա էլ կօգնի նրան ժառանգելու յուր գահը, — ավելացրեց Վահրամը:

— Լա՛վ, թող այդպես լինի: Մենք նախ աշխատենք հեռացնել հույներին և հարմար ժամանակ Գագիկին Անի բերել տանք թագավոր օծելու, որպեսզի փշրվեն ՎեստՍարգսի հույսերը, — համաձայնվեցին իշխանները և ցրվեցին, որոշելով, որ ամեն մեկը յուր գնդերը պատրաստի և մինչև վերջին շունչը կռվի հույների դեմ և ոչ միդեպքում Անին չհանձնեն նրանց:

Այդ որոշումը կայացնելուց մի քանի օր հետո Հարպիկը և Ստեփանիկը մի գնդի գլուխ անցած արդեն պատրաստ էին Անիից դուրս գալու և դեպի Հայաստանիարևմտյան սահմաններն արշավելու:

Բ

ԼՈՒՍԻԿԸ ԲԱՆՏՈՒՄ

Խենթը Անի մտնելուց հետո արդեն տեսնվել էր դարբին Ղևոնդի հետ, որը թեև վիրավոր, բայց ամեն վտանգից ազատ ծառայում էր մահճին: Բայց Խենթը նրանից ոչմի տեղեկություն չկարողացավ ստանալ, թե ո՞վ էր հարձակվողը և թե ի՞նչ եղավ

Լուսիկը: Խենթի համար պարզ էր, որ Լուսիկը հափշտակված է, բայց թե ո՞վ էրհափշտակել և ինչու՞, այդ նրա համար դեռ մութն էր:

Խոր մտքերի մեջ ընկղմված նա անցնում էր Անիի փողոցներով, երբ պատահեց Ստեփանիկը և նրա թևից քաշելով ասաց.

— Խե՜նթ, Լուսիկիս գտիր, ու՞ր է նա…

— Հը՛մ, Ստեփանի՜կ իշխան, այդ դու՞ ես, — ասաց Խենթը և կարեկցաբար դիտեց նրա դեմքը:

— Ես եմ, Խե՜նթ, բայց ես կխելագարվեմ, եթե Լուսիկիս չգտնես: Ա՛խ, ես այդ օրին չէի սպասում:

— Գնա՜, — ասաց Խենթը հրամայողաբար:

— Ու՞ր գնամ, Խենթ:

— Գնա՜, — կրկնեց Խենթը:

— Իսկ Լուսի՞կս:

— Գնա՜:

— Հա՜, հասկանում եմ քեզ, Խե՜նթ, և վստահում: Ես անում եմ, որովհետև հայրենիքս ինձ կանչում է:

— Գնա և վստահ եղիր Խենթի վրա: Նա կգտնի Լուսիկին, — ասաց Խենթը և յուր երկար փայտը շարժելով առաջ գնաց առանց ուշք դարձնելու Ստեփանիկին, որը դեռսառած նրա ետևից էր նայում:

— Իսկական խենթ է, ո՞վ կասի, թե սա դիտմամբ է խենթ ձևանում: Վստահ եմ, որ կգտնի Լուսիկիս,— ասաց Ստեփանիկը և շուտով անհետացավ: Քիչ հետո նա միգնդի գլուխ անցած Հարպիկի հետ միասին դուրս եկավ Անիից, այնինչ Խենթը յուր փայտը օրորելով, զզզված մազերով և յուր վայերն ասելով անցնում էր Անիի միփողոցից մյուսը և ամեն տեղ կանգ առնելով աջ ու ձախ նայում, լսում էր մարդկանց խոսակցությունները և կրկին առաջ գնում: Եթե նայողը լավ ուշադրությունդարձներ, կտեսներ, որ Խենթի աչքերից երբեմն արտասունքներ են գլորվում և կորչում նրա մորուքի մեջ:

— Չէ, չկա Լուսիկը, Անիում ոչ մի տեղ չէ երևում, ով գիտե այժմ որտե՞ղ է հեծեծում և յուր Խենթին ձայն տալիս: Իսկ Խենթը ուժ չունի նրան ազատելու... բայց չէ, եսկրկին պետք է սև մարդու պոչից բռնեմ, սիրտս գուշակում է, որ այդ նրա գործն է և Լուսիկը ահա այս պատերի մեջն է: Ո՛հ, եթե հնար ունենայի քարուքանդ անել այսպատերը, այն ժամանակ Լուսիկիս կգտնեի, — ասաց նա և կատաղության հայացք գցեց դեպի Վեստ Սարգսի պալատը:

Նա առաջ գնաց և մտավ Վեստ Սարգսի պալատը:

— Է՛յ, հե՛յ, գիտեք՝ ով եմ ես կանչեց նա օրորվելով:

— Օհո՛, Խե՜նթ, այս ու՞ր էիր, — ասացին ծառաները և շրջապատեցին Խենթին: Նրանք այսօր կարծես տրամադիր էին շատ ուրախանալու:

— Աստծու մոտ, — ասաց Խենթը:

— Աստծու մո՞տ, հետո ի՞նչ տեսար:

— Մեռելնե՛ր, մեռելնե՛ր, մեռելնե՛ր…

— Հա՛, հա՛, հա՛, — հռհռացին ծառաները:

— Հետո մեռելների մոտ ի՞նչ էիր շինում:

— Վա՛հ, ես էլ մեռած էի,— ասաց Խենթը և սկսեց պարել, զանազան ծամածռություններ անել, որ խելագարեցնելու չափ ծիծաղ էր պատճառում ծառաներին: Հետոնա սկսեց վազ տալ գավթի զանազան կողմը և բախելով մի դուռ կանչեց.

— Այստեղ ո՞վ է ապրում:

— Ես, Խե՜նթ, ի՞նչ ես ուզում:

— Իսկ այստե՞ղ:

— Իշխանը:

— Իսկ գետնի՞ տակ, մութ բանտու՞մ:

— Մի սիրուն աղջիկ, — ասաց հանկարծ ծառաներից մեկը:

Խենթի գույնը թռավ: Նա զգաց, որ աչքերը մթնում են՝ սրունքները դողդողում:

— Է՛յ, հիմարնե՛ր, ինչ եմ անում աղջիկ, ինձ գինի՛ տվեք, գինի՛, ահա հենց այստեղ, այս պատի տակ, — ասաց նա և ծալապատիկ անշարժ նստեց: Ծառաները քիչ-քիչհեռացան նրանից, երբ տեսան, որ Խենթը այլևս չի ծիծաղեցնում իրենց, այլ գլուխը պատին հենած ուզում է ննջել:

Անցավ մի փոքր ժամանակ: Խենթը տեղից չէր շարժվում. ինչպես մի արձան անշարժ էր, անձայն: Նրա դեմքի ոչ մի մկանը չէր շարժվում, աչքերը բաց, անթարթ, իսկդիրքն՝ անփոփոխ: Տեսնողը կասեր, թե Խենթի մեջ այդ միջոցին հոգի, շունչ չկա: Հիրավի, այդ միջոցին նրա հոգին այդտեղ չէր, կարծես բաժանվելով մարմնից թռելգնացել էր նա ով գիտե ուր, դեպի որ աշխարհը... Այո, Խենթը այդ միջոցին թմրած էր, քարացած, բայց եթե սրատես աչքեր լինեին և կարողանային թափանցել մինչևնրա սրտի խորքը, կտեսնեին, որ նրա սրտի ամենամութ խորշերում, նրա հոգին կաշկանդված տանջվում է ու հեծծում... Սոսկալի է նրա հոգու տանջանքը: Հեշտ էասել հոգու տանջանք, դա մարմնական տանջանք չէ, երբ մենք ցավ ու կսկիծ ենք զգում ու գոռում, ախ ու վախ քաշում, արտասվում և թեթևացնում մեր ցավը: Իսկհոգեկան տանջանքի ցավն ու կսկիծը այդպես չէ, նա արտասուք չունի, որ գոռա, աղաղակի, այլ լուռ ու անձայն կրծում է մեր սիրտը, շամփրում սրտի ամենաքնքուշտեղերը, ցամաքեցնում արտասուքները աչքերի մեջ և գեհենը վառում հոգու մեջ... Եվ Խենթն էլ այդ իսկ վայրկյանին տանջվում էր հոգեպես: Դառն մտքերըվիթխարի գազանների նման իրար հետ կռիվ էին մտել, իրար արյուն էին ծծում, և սոսկալի մռնչյունով խորտակվում, ոչնչանում, նրանց տեղ նոր մտքեր էինբարձրանում օվկիանի ալիքներից էլ բարձր, գրկվում իրար հետ, փրփրում և խորտակվում... Եվ Խենթի գլխի մեջ այդ իսկ րոպեին լսվում էին և՛ որոտմունքի գոռձայներ, և՛ գազանների կատաղի մռնչյուն, և՛ թնդյուն, և՛ սուլոց, և՛ ահեղ դժոխային ձայներ… Այդ ժամանակ մարդուս մարմինը թեկուզ կտոր-կտոր արա, ասեղներով ծակծակիր, հավատացած եղիր, որ նրանից չես լսի հառաչանքի ո՛չ մի ձայն, ցավի ո՛չ մի կսկիծ, դեմքի մկանունքի և ո՛չ մի շարժում…

Եվ Խենթն էլ երկար ժամանակ չէր զգում այն աքացիները, որ շարունակ հասցնում էր նրա մոտը կանգնած մի մարդ:

— Է՛յ, Խե՛նթ, չե՞ս զգում, վեր կաց, այստեղ մնալ չի կարելի, — ասում էր այդ մարդը՝ շարունակ աքացի տալով նրան: Բայց Խենթը չէր զգում, չէր իմանում:

— Մեռա՞ր, ի՞նչ է, — ասաց մարդը նորից և նրա թևից այնպիսի ուժգնությամբ քաշեց, որ Խենթը շփոթված ոտքի կանգնեց և ապուշի նման նայեց այդ զինված և իրմոտ կանգնած մարդուն:

— Հը՛, կորի՛ր այստեղից, սա խենթերու տեղը չէ, թե որ իշխանը քեզ այստեղ տեսնի, ինձ էլ արևի երես ցույց չի տա:

— Ինչու՞, ի՞նչ է պատահել, — ասաց Խենթը լուրջ կերպով, դուրս գալով խենթության դերից:

— Ինչու՞… Բայց մի՞թե ես պարտավոր եմ հաշիվ տալ:

— Ի՞նչ կա, որ ես էլ իմանամ:

— Գնա՛, — ասաց մարդը հրամայողաբար:

Խենթը զգաց, որ հեռու գնալ չի կարելի: Նա փայտը օրորեց, մի քանի խենթական ոստյուններ արեց և հենց ուզում էր ետ դառնալ, երբ մի սուր ծղրտոց, լսեց և Խենթինսարսափահար տեղն ու տեղը մեխեց:

Խենթը մի վայրկյան քարացած մնաց: Կսկիծը նորից ցնցեց նրա ուղեղը և սառեցրեց արյունը: Այդ ձայնը, ծղրտոցը ծանոթ էր Խենթին, դա կարծես Լուսիկի ձայնըլիներ, որ տեսնելով Խենթին, սոսկալի ծղրտոց էր արձակել և ո՞վ գիտե ուշագնաց եղել: Բայց թե ու՞ր էր Լուսիկը և որտեղի՞ց լսվեց նրա ծղրտոցը, այդ չկարողացավիմանալ Խենթը և դեռ քարացածի նման կանգ էր առել, երբ պահապան զինվորը հրեց նրան և, դիմելով ծառաներին, ասաց.

— Է՛յ, տարեք Խենթին այստեղից, թե չէ նիզակիս համը կտեսնի:

Ծառաները մոտ վազեցին և, համարյա շալակելով Խենթին, դուրս տարան այդ տեղից, ուր մնաց նրա սիրտն ու հոգին…

Գ

ՀՈՒՆԱՑ ԶԱՐԴԸ

Հունաց բանակը հետզհետե մոտենում էր Անիին՝ յուր ետևից թողնելով ավերի և մոխրի կույտեր: Այդ բանակի հետ էր Վեստ Սարգիսը, որ խորհուրդներ էր տալիս, հայերի թույլ կողմերը նշում, որպեսզի հույներն ավելի հեշտ տիրեն Հայաստանին, հեշտ ձեռք ձգեն Անի քաղաքը: Նա տվեց յուր խորհուրդները և ասաց, որ եթեՎահրամյանք Անիի դռները փակեն, ինքը խոստանում է գաղտնի աջակցել հույներին: Եվ ապա որպեսզի յուր սև գործերը ոչ ոք չտեսնի, որպեսզի յուր անամոթդավաճանությունը հայերը չիմանան, թողեց բանակը և հեռացավ ուր որ:

Հունաց հրամանատարը մեծ պատվով նրան ճանապարհ ձգեց, սակայն երբ անհետացավ Վեստ Սարգիսը, հեգնական ժպիտ արձակեց նրա ետևից և ասաց.

— Հայի խե՛լք, յուր ազգը մատնելով ուզում է իշխանություն ձեռք ձգել, բայց չի հասկանում թշվառականը, որ յուր համար էլ է հոր փորում:

Եվ հունաց բանակը, կանգ առնելով մի կանաչապատ դաշտավայրում, սկսեց յուր հանգստության վրա մտածել, որպեսզի մյուս օրը մեծ հանդեսով մուտք գործիՇիրակի դաշտավայրը, ուր գտնվում էր և հռչակավոր Անին:

Շուտով մութը պատեց, և աջ ու ձախ սկսեցին խարույկներ վառվել, որոնք հետզհետե սկսում էին բազմանալ և մի տեսակ կենդանություն տալ ամայի դաշտավայրին:Իշխաններն սկսեցին իրենց քեֆը, իսկ զինվորներից ոմանք կերակուր էին պատրաստում, ոմանք էլ, թիկն տալով խարույկների մոտ, տաքանում էին և քաղցր զրույցանում մինչև որ իրենց ընթրիքը պատրաստվեր: Փչում էր սառը, հյուսիսային քամին, որը սարսռեցնում էր զինվորների մարմինները: Թեև եղանակը գարուն էր, բայցՀայաստանի ցուրտ քամին գիշերները անպակաս էր այն կողմերում: Երկինքը պարզ էր ու անամպ, և այդ անհուն մուգ-կապույտի մեջ լողում էին անթիվ աստղեր ևինչպես ադամանդներ փայլփլում: Լուսին չկար, նրա վերջին չքման ժամանակն էր, ուստի և աստղերը երևում էին երկնակամարի վրա իրենց ամբողջ պերճությամբ, իրենց ամբողջ շքեղությամբ, այնինչ Հայաստանի զով ու սառն քամին ով գիտե որտեղից գալով, սուլելով անցնում էր հունաց բանակի միջով՝ հանգցնում նրանցխարույկները և կորչում հեռու՛-հեռո՛ւ...

Ընթրիքը վերջացավ: Զինվորներից շատերը, հոգնածությունից նեղացած, քաշվեցին իրենց վրանները, փաթաթվեցին իրենց լայնածավալ վերարկուների մեջ, նշուտով լսվեց նրանց անուշ խռմփոցը, այնինչ մի քանիսը դեռ շարունակում էին իրենց զրույցը: Միայն պահապանները արթուն հսկում էին բանակի շուրջը և, իրենցչափավոր քայլվածքը երբեմն դադարեցնելով, խմբվում էին երկուսը կամ երեքը միասին և սկսում իրար հետ զրույց անել, որպեսզի մոտեցող քունը կարողանայինիրենցից փախցնել:

Ահա բանակի մի կողմում երկու պահապան կանգ են առել և խոսում են:

— Ցուրտ է, ցուրտ, — ասում է նրանցից մեկը, որի բեղերը նոր էին ծլել նրա արևակեզ դեմքին:

— Հա՛, ճիշտ է, փչում է հյուսիսային սառը քամին, այնինչ, եթե քամին դադարեր, տաք կլիներ:

— Բայց քամին դադարելու ամենևին միտք չունի, իսկ ես սառչում եմ:

— Պետք է դիմանալ, մինչև լույս մեզ իրավունք չկա շարժվելու:

— Ս՛ս… մեր հրամանատարը շրջում է, նա աչք է անցնում բանակը, պետք է ամեն մի պահապան յուր տեղում կանգնի, — ասաց երիտասարդ հույնը և, նիզակը ձեռքնառնելով, սկսեք նշանակված տեղում անց ու դարձ անել:

Քիչ հետո, հիրավի, հույն հրամանատարը, մի քանի իշխաններով շրջապատված, բանակն էր դիտում և պահապաններին ստուգում: Նա մոտեցավ երիտասարդ հույնպահապանին էլ, որ զինվորական պատիվ տվեց իրեն: Եվ հրամանատարը տեսնելով, որ ամեն ինչ կարգին է, որ պահապանները լուրջ կերպով հսկում են բանակը, միամիտ յուր վրանը մտավ: Բանակի մեջ հետզհետե տիրեց խոր լռություն և խարույկներն էլ կամաց-կամաց սկսեցին հանգչել, չքանալ, և բանակը ընկղմվեցխավարի մեջ:

Շարժումը դադարեց, և մեռելությունը տիրեց ամեն տեղ: Աստղերի թույլ լուսավորության տակ երևում էին միայն պահապանների սև ուրվագծերը, որոնք ինչպեսգիշերային վհուկներ՝ դանդաղ, բայց չափավոր քայլերով շրջում էին մի տեղից մյուսը: Երիտասարդ հույն պահապանը, որ նույնպես շրջում էր, հանկարծ կանգնեց նլայն բաց արած աչքերով նայեց իր առջև: Բայց այնտեղ ոչինչ չկար, մութ էր ու խավար: Նա լույս ժամանակից հիշում էր, որ իրենից քիչ առաջ տարածվում էր միփոքրիկ ձոր, որի միջով վազում էր փոքրիկ առվակը, իսկ այժմ այնքան մութ էր, որ այդ առվակը, այդ ձորը չէր երևում, թեև պարզ լսվում էր առվակի խոխոջը:

— Ո՛հ, ինչ հիմար բան է գիշերը պահապան լինել անծանոթ տեղ, օտար երկրում, ուր չես իմանում, թե ինչ կա, ինչ չկա: Հիմա ես ի՞նչ անեմ, որ այստեղից, հանկարծմի գունդ դուրս գա և վրա տա մեր բանակին… Դոքա առաջ ինձ կսպանեն, իմ մատաղ կյանքը կխավարեցնեն՝ առանց հնար ունենալու ընկերներիս ձայն տալու. բայցես ի՞նչով եմ մեղավոր, մի՞թե մեղք չեմ, — ասում էր պահապանը ինքն իրեն և միևնույն ժամանակ զգում, որ քունը ամեն կերպ հաղթահարում է իրեն: — Է՛հ, գոնեշուտ լուսանար, ես իմ հերթից պրծնեի, վաղը անուշ քնեի… Բայց այս ի՞նչ բան է, — ասաց նա և աչքերը սկսեց տրորել: Նրա աչքին երևաց, որ ինչ-որ մի սև կետերբեմն բարձրանում է ձորի միջից, երբեմն անհետանում: — Զարմանք բան, այժմ ոչինչ չկա, մի՞թե ես խաբվում եմ… այս կողմերը գազաններ էլ շատ

կլինեն, ի՞նչկլինի, եթե մի խումբ գայլեր հանկարծ վրաս թափվեն... Օ՛... սարսափելի է գայլերի ատամների տակ. անպիտանները մի վայրկյանում ինձ կուլ կտան, ոսկորներսանգամ չեն թողնի… բայց քունս սաստիկ տանում է, ի՞նչ կլինի, եթե այս կանաչ խոտի վրա պառկեմ և քիչ, շատ քիչ քնեմ, գոնե մի րոպե, ո՞վ կտեսնի ինձ, կամ ի՞նչվտանգ կարող է սպառնալ բանակին՝ ոչի՛նչ: Ես հավատացած եմ, որ ոչինչ. հայերը չեն համարձակվի մեր բանակի վրա արշավել, — ասաց զինվորը և կիսաթեքընկավ գետնին՝ գլուխը դնելով ձեռքերի վրա:

— Այս անպիտան քամին էլ հոգիս հանեց. ես դողում եմ ամբողջ մարմնովս, ու՛ֆ, — ասաց դարձյալ պահապանը, կոլոլվեց վերարկուի մեջ, նրա աչքերը ծածկվեցան, և անուշ նիրհը պատեց նրան: Չնկատեց էլ, թե ինչպես ձորի միջից մի գլուխ երևաց, որն աջ ու ձախ նայելուց հետո, փորսող տալով առաջ եկավ դեպի պահապանզինվորը: Այդ մարդը մերկ սուր ուներ ձեռքին՝ պատրաստ յուր հակառակորդի կուրծքը մխելու:

Փորսող տալով նա մի փոքր առաջ եկավ և կանգ առավ, կարծես շունչը ետ բերելու և դիտելու, թե ոչ ոք հո չի տեսնում իրեն: Երբ համոզվեց, որ ամեն ինչ շուրջըխաղաղ է, որ պահապանները բոլորն էլ քնած են, կրկին առաջ սողաց և վայրենի աչքերով դեպի քնած պահապանը նայեց, ապա նա կզեց և սուրը պատրաստեց միոստյուն անելու դեպի յուր զոհը, բայց հենց այդ միջոցին պահապան զինվորը շարժվեց և բաց արավ աչքերը: Նա իրենից մի քայլ այն կողմ երկու փայլուն աչքերտեսավ, որոնք ուղղված էին իրեն, կարծես ուզում էին կլանել իրեն: §Ի՞նչ է այդ, մի՞թե աչքերս խաբում են ինձ», — մտածեց զինվորը և մի վայրկյան փակելովաչքերը՝ նորից բաց արավ և սարսափեց… Նա տեսավ հենց յուր առջև չոքած մի մարդ, որի ձեռքի սուրը մի ակնթարթ միայն փայլեց, ապա զգաց սուր ցավ, որիցիմացավ, որ սուրը մխվեցավ յուր կոկորդի մեջ:

Երիտասարդ պահապան զինվորը մահվան մի քանի ցնցումներ արավ և մնաց անշարժ, այնինչ ձորից դուրս եկող մարդը կրկին փորսող տալով ետ-ետ գնաց և կորավմթության մեջ...

Անցավ շատ կարճ ժամանակ. այն կողմից, որտեղից առաջ երևացավ փորսող տվող մարդը, այժմ խումբ-խումբ մարդիկ երևացին, որոնք, մի փոքր կանգ առնելով, զգուշությամբ դիմեցին դեպի բանակը:

— Ստեփանի՛կ, քո գունդը աջ կողմից տար, իսկ ես կաշխատեմ նրանց փախուստը արգելել, — ասաց մի մարդ, որ ձեռքին ահագին սուր էր ճոճում:

— Լավ, Հարպի՛կ իշխան, միամիտ մնա, հույներին լավ դաս կտանք, նրանց պահապանները բոլորն էլ մորթված են և մեր ճանապարհը հարթված է, մինչև նրանքզարթնեն, մենք նրանց գլուխները կկտրենք, — ասաց Ստեփանիկը և յուր գունդը դեպի աջ տարավ:

Սկսվեց կոտորածը լուռ, առանց աղմուկի, երբ հանկարծ, կեսգիշերին, հունաց բանակից բարձրացավ վայնասունի, ճիչ ու գոռոցի ձայներ: Քնած զինվորները ոտքիկանգնեցան. նրանցից ո՛րը զենք առավ, ո՛րը ուզեցավ փախուստ տալ, բայց հայ կտրիճների սուրը ամեն տեղ հասնում էր նրանց և յուր հունձը անում:

Կոտորածը դեռ շարունակվում էր, երբ բացվեցավ արշալույսը և լուսավորեց պատերազմի դաշտը: Սոսկալի էր այդ դաշտը: Մի խումբ կտրիճ հայերից կոտորվել էրհունաց բանակի մեծ մասը, իսկ մնացածը լեղապատառ փախուստ էր տալիս, ո՛րը ձիով, ո՛րը ոտքով:

Այդ ժամանակն էր, որ Հարպիկ իշխանը յուր արյունալի սուրը ձեռքին պտրում էր մեկին և գտավ նրան: Հարպիկ իշխանը տեսավ, որ հույն հրամանատարը հույնգնդի առաջ ընկած քաջությամբ կռվում է և ուզում է ճանապարհ բանալ Ստեփանիկի կտրիճների միջից:

— Անիծյա՛լ հույն, մի՞թե չես ճանաչում լեռների ավազակին, — գոռաց նա և մղվեցավ կռվողների մեջ:

Հույն հրամանատարը նայեց նրան և սոսկաց: Նա ուզեց ետ դարձնել յուր ձիու գլուխը և փախուստ տալ, բայց ուշ էր: Հարպիկի սուրը կես արեց նրա գլուխը, և նաարյունաթաթախ ցած գլորվեց:

Երբ հույները նկատեցին իրենց հրամանատարի ընկնելը, շտապեցին փախուստ տալ կռվի դաշտից: Եվ Հարպիկ իշխանը արգելք չեղավ նրանց: Նա տեսավ, որհունաց այդ բանակը բոլորովին ջախջախվեցավ և թե նա այլևս պետք էլ չի կարող գալ:

— Այդ ջարդը լավ դաս էր հույներին, թող հունաց կայսրը նոր բանակ կազմի և Հայաստան ուղարկի, — ասաց Հարպիկը յուր արյունոտ սուրը սրբելով...

Դ

ԴԱՎԱՃԱՆԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Հունաց բանակի ջարդվելու լուրը Անի հասավ և ցնծությամբ լցրեց հայերի սիրտը: Ամբոխն սկսեց ջերմեռանդ աղոթքներ առաքել առ Ամենաբարձրյալը, որ նահովանի կացավ Հայաստանին և չձգեց հույների ձեռքը, այնինչ իշխաններն էլ մյուս կողմից ցնծության խրախճանք կազմեցին և տոնեցին հայոց գնդի այդ մեծհաղթությունը: Այդ ժամանակն էր, որ Վեստ Սարգիսն էլ մուտք գործեց Անի և երբ տեսավ անեցվոց ուրախությունները, երբ լսեց նրանց զվարթ հաղթական երգերը, մռայլվեցավ, հուզվեց նրա սիրտը և խռովեց հոգին:

«Ի՞նչ է արդյոք պատահել, — մտածում էր նա, — ինչու՞ անեցիք այդպես ուրախ են և հաղթական երգեր են երգում. մի՞թե դրանց հայտնի չէ, որ հունաց բանակի քաջլեգեոնները ուր որ են կերևան և մոխրի ու կրակի կույտեր կդարձնեն Անին…

Խելացնորներ, ի՞նչ են ուրախանում, ի՞նչ են երգում, չէ՞ որ Վեստ Սարգիսը սպասում էր, որ տեսնի անեցիներին մռայլ, հուսահատ... Այս ի՞նչ է պատահել», — մտածում էր Վեստ Սարգիսը և մռայլված առաջ գնում դեպի յուր պալատը:

Վեստ Սարգիսը դեռ չգիտեր Հունաց բանակի ջարդը:

— Եղո՛, ի՞նչ է պատահել անեցիներին, ինչու՞ նրանք ուրախ են, — դարձավ Վեստ Սարգիսը մռայլ դեմքով իրենից անբաժան Եղոյին: Եղոն ոչինչ չպատասխանեց:Նա էլ մռայլ էր, նա էլ հուսահատ. երևում էր, որ դժվարանում էր յուր տիրոջը ուղիղ պատասխան տալ. չէ՞ որ դրանով կվշտացներ յուր տիրոջը:

— Եղո՛, մի՞թե ճիշտ է, որ անեցիք ուրախ են, թե այդպես է թվում միայն ինձ, — հարցրեց նա դարձյալ:

— Այո, տե՛ր, չեք սխալվում, — պատասխանեց Եղոն:

— Բայց ինչու՞, ի՞նչ է պատահել:

— Մի ցավալի բան, տե՛ր:

— Ի՞նչ… մի՞թե Գագիկը…

— Ո՛չ, տե՛ր, ո՛չ, Գագիկը չի համարձակվի Անի մտնել,— ընդհատեց Եղոն շշնջալով:

Վեստ Սարգիսը մի փոքր հանգստացավ:

— Ուրեմն ի՞նչ է պատահել, խելագարվել են, ի՞նչ է, ինչո՞ւ են նրանք ուրախանում, երբ մի քանի օրից հետո պիտի կոտորվեն հունաց բանակի ձեռքով: Մի՞թե այդչեն հասկանում:

— Հը՛մ, դա անցավ, — ասաց Եղոն՝ մի հեգնական ժպիտ արձակելով:

— Ի՞նչպես թե անցավ:

— Այնպես անցավ, որ հունաց բանակի հետքն էլ չի մնացել, մինչդեռ մենք ոլորուն ճանապարհներով ժամանակ էինք վատնում և սպասում հունաց բանակին, որ Անիհասնի, անեցիք քնած չեն եղել: Հարպիկ իշխանը Վահրամյանց գնդերի գլուխ անցած մեծ ջարդ էր տվել նրանց հենց այնտեղ, ուր մենք թողինք նրանց:

— Բայց մի՞թե այդ ճշմարիտ է, Եղո՛, մի՞թե ահեղ հունաց բանակը մի ավազակից ջարդվեց:

— Կատարելապես ճշմարիտ: Ես այդ բոլորը ստուգեցի հենց որ Անիի դռներին հասանք:

— Եվ այդ հաղթության վրա՞ են ուրախանում անեցիք, — հարցրեց Վեստ Սարգիսը գունատ դեմքով:

— Հե՛նց դրա վրա:

— Լավ, այդ առաջինը ջարդվեց, բայց տասն ուրիշ բանակներ կգան, քնած չէ Վեստ Սարգիսը, — պատասխանեց նա սրտի կսկիծից գունատված դեմքով և ձին առաջքշեց: Երբ նա հասավ ս. Լուսավորչյա մայր եկեղեցու մոտ, ուր խմբված էին իշխաններ, հոգևորականներ և ժողովուրդ, մի րոպեում նրա դեմքի մռայլը անհետացավ ևմի այնպիսի գոհունակության և ուրախության արտացոլումն ստացավ, որ ժողովուրդը նայելով նրա դեմքին՝ փսփսաց իրար մեջ.

— Ահա խնամակալը եկավ, տեսեք ինչքա՛ն նա ուրախ է:

— Կեղծ է նրա ժպիտը, — ասաց կանգնածներից մեկը:

— Ո՛չ, կեղծ չի կարող լինել, նայեցե՛ք, — ասաց նրա խոսակիցը և մատով ցույց տվեց դեպի Վեստ Սարգիսը:

Ամենքը դեպի Հայաստանի գահի խնամակալը նայեցին: Վեստ Սարգիսը ձիուց ցած էր իջել և համբուրելով եկեղեցու դռները, ուրախության առատ արտասուքներ էրթափում և բարձր, լսելի ձայնով ասում.

— Ո՛հ, ամենակա՛լ տեր, դու չկորցրիր որբացած հայերին և նրա թափուր գահը պահպանեցիր: Տե՛ր, ընդունիր իմ զոհունակության անարժան աղոթքը և հաստատպահիր Բագրատունյաց գահը մինչև հավիտյան:

Ապա նա դառնալով իշխաններին, հոգևորականությանը, սեղմում էր նրանց ձեռքերը և Հուդայի համբույրներ տալիս:

— Կեցե՛ք և իմ անկեղծ ուրախությունը ձեր ուրախությանը: Վեստ Սարգիսը հոգով ուրախ է հայերի քաջության և հաղթության համար: Թող խորտակվեն հույները, թող կորչեն մեր թշնամիները, — ասում էր նա և աչքերից թափում ուրախության արցունքներ:

— Տեսնու՞մ ես, բարեկա՛մ, ինչքա՛ն նա ուրախանում է, — ասաց ժողովրդի միջից առաջին բարձրահասակ մարդը:

— Տեսնում եմ, տեսնում: Ես նկատում եմ, որ Վեստ Սարգիսը ուրախությունից արտասվում է,— պատասխանեց խոսակիցը մտամոլոր:

Բայց չէ՞ որ ասում էին, թե Վեստ Սարգիսը դավաճան է:

— Հա՛, ասում են:

— Բայց մի՞թե դավաճանը այդպես կուրախանա հունաց բանակի ջարդվելուց կամ մի՞թե նա այդպիսի խոսքեր կասի…: Դու լսեցի՞ր՝ նա ինչ ասաց:

— Լսեցի, բարեկա՛մ:

— Ուրեմն նա դավաճան չէ, ինչպես ասում են:

— Չգիտեմ, — պատասխանեց խոսակիցը, — գուցե նա դավաճան չէ և զուր մեղադրում են:

— Չէ, ես հավատում եմ, որ մեր թագավորության խնամակալը բարի մարդ է, շատ բարի և դավաճան չէ, — ասաց առաջին խոսակիցը:

— Ո՞վ գիտե, բարեկա՛մ, մեր խելքը հեռու չի կտրում, ո՞վ գիտե՝ ի՞նչ կա նրա սրտի մեջ թաքնված, իսկ դա մեզ այդպես է ցույց տալիս, — ասաց երկրորդ մարդը նշուտով խառնվեցավ ամբոխի մեջ:

Այդ ժամանակ իշխաններն արդեն ցրվել էին և Վեստ Սարգիսն էլ հեռացել դեպի յուր պալատը:

Բայց ամբոխը դեռ խումբ-խումբ կանգնած խոսակցում էր, երբ հանկարծ փողոցի ծայրում մի մարդ երևաց, որ գրավեց բոլորի ուշադրությունը:

— Խե՛նթը, Խե՛նթը գալիս է, — կանչեցին մի քանի ձայներ:

Հիրավի Խենթն էր, որ երևաց փողոցի ծայրին յուր անբաժան երկար փայտը ձեռքին: Նա մոտեցավ ամբոխին և աչքերը վայրենաբար աջ ու ձախ պտտեց: Ամբոխըտեղ բացեց և շրջապատեց Խենթին: Ամբոխը տրամադիր էր այսօր ուրախանալու և լսելու Խենթին:

— Հե՛յ, հե՛յ, ճանապարհ տվեք, ինձ ճանապարհ տվեք, — կանչեց նա և բարձրանալով մի քարի վրա, նայեց շուրջը և ապա խիստ սրտակտոր ձայնով ասաց.

— Ինձ մի հարցնեք՝ ո՞վ եմ ես,

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ…

Սիրուն ու շեն Անին եմ ես,

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ...

— Խե՛նթ, ինչո՞ւ ես վայ կանչում, չէ՞ որ այսօր ուրախանալու օր է: Չե՞ս տեսնում՝ ամենքը ուրախ են, որովհետև հույներին ջարդել են հայերը, — ասաց ամբոխից միծեր մարդ:

— Սուտ է այդ բոլորը, ամենքը ուրախ չեն, — պատասխանեց Խենթը:

— Ամենքը ուրախ են, Խե՛նթ, թե՛ իշխան, թե՛ ռամիկ. միայն դու ես, որ կրկին վայ ես կանչում, — պատասխանեց նույն մարդը:

— Ես պիտի կանչեմ վա՛յ, մինչև որ նա կա և ապրում է:

— Ո՞վ, Խե՛նթ, ո՞վ կա և ապրում է, — հետաքրքրությամբ հարցրեցին զանազան կողմերից:

— Նա, նա, ով լալիս է և ուրախանում, ով ժպտում է և տրտմում, ով աղոթում է և անիծում:

— Ի՞նչ ես ասում, Խե՛նթ, մենք ոչինչ չենք հասկանում: Ասա՛, ո՞վ է այդ մարդը, որ ուրախության ժամանակ տրտմում է, իսկ տրտմության ժամանակ ուրախանում, — պատասխանեց նույն ծերունին և հետաքրքրությամբ Խենթին նայեց:

— Վա՛հ, մի՞թե դուք աչքեր չունեք, որ տեսնեք, ականջ չունեք, որ լսեք: Օձը թույն է պատրաստում և յուր քաղցր խոսքերով ձեզ քնեցնում:

— Ո՞վ է այդ մարդը, Խե՛նթ, մի՞թե Վեստ Սարգիսն է, որ այսօր լիասիրտ արտասվում էր և գոհունակության մաղթանքներ ուղղում հայոց հաղթության համար:

Խենթի աչքերում ուրախության կայծակներ շողացին: Նա հասել էր յուր նպատակին և ամբոխը արդեն գլխի էր ընկնում:

— Սուտ է, նա դավաճան չէ, — լսվեց հանկարծ մի ձայն ամբոխի միջից: Ամենքը այն կողմ նայեցին և տեսան մի բարձրահասակ մարդ, որ յուր փոքրիկ աչքերը դեպիԽենթն էր դարձրել և ուշադրությամբ լսում էր նրան:

— Դու ի՞նչ գիտես, որ սուտ է, — պատասխանեց ծերունին:

— Սուտ է: Եթե դավաճանը եկեղեցու դուռը համբուրի, իսկույն գետինը կպատռվի և նրան կուլ կտա:

— Երեխա՞ ես, բարեկա՛մ, աստված յուր դատաստանը այդպես շուտ չի անում, դեռ ժամանակ է տալիս նրան ապաշխարելու, — պատասխանեց մեկը:

— Բայց ես չեմ հավատում, որ Վեստ Սարգիսը վատ մարդ է:

— Այո՛, ես էլ չեմ հավատում, ոչինչ չեմ տեսել, բայց շատ բան լսել եմ: Ասում են, որ նա մինչև անգամ ուզում է թագավոր դառնալ և այդ պատճառով ուզեցել է ԳագիկԲագրատունուն սպանել տա:

— Ո՛չ, այդ անկարելի է: Ով կհամարձակվի նրա մի մազին դիպչել: Մենք կխորտակենք Վեստ Սարգսի պալատը և իրեն էլ կտոր-կտոր կանենք:

Ամբոխի միջից վիճաբանությունը հետզհետե տաք կերպարանք էր ստանում: Խենթը կայծը գցել էր և կոթնած յուր փայտին լուռ կացել. նա տեսնում էր, թե ինչպեսայդ կայծը հետզհետե բորբոքվում ու աճում էր:

— Մարդի՛կ, դատարկ-դատարկ խոսել պետք չէ, — ասաց նույն ծերունին, — մենք ավելի լավ կանենք, որ շուտով Գագիկին թագավոր օծել տանք:

— Բայց նա փոքր է:

— Ի՞նչ անենք, որ փոքր է. բայց նա քաջ է և խելոք:

— Ու՞մ դիմենք, տղե՛րք:

— Վահրամ իշխանին, մեր անգին Վահրամ իշխանին խնդրենք: Նա սիրում է մեզ և մեր խնդիրը ոտքի տակ չի ձգի:

— Կեցցե՛ Գագիկ թագավորը, ապրի՛ Վահրամ իշխանը, — գոռաց ամբոխը, և նրա ձայնին արձագանք տվին Անիի շքեղ պալատներն ու շինությունները:

— Գնա՛նք, գնա՛նք Վահրամ իշխանի մոտ, — կանչեց ամբոխից մի ձայն, — պետք չէ ուշացնել երկաթը տաք-տաք կծեծեն:

— Գնա՛նք, գնա՛նք, — կանչեց ամբոխը և շարժվեց դեպի Վահրամ Պահլավունու պալատը, ճանապարհին շարունակ գոռալով.

— Կեցցե՛ Գագիկ թագավորը, ապրի՛ Վահրամ իշխանը...

Ամբոխին առաջնորդում էր Խենթը:

Ե

ՍԵՎ ՁԵՌՔԸ

Վեստ Սարգիսը լսում էր ամբոխի գոռ ձայնը և նրա սիրտը կսկծում էր: Ամեն անգամ, երբ ամբոխը «կեցցե՛ Գագիկ, ապրի՛ Վահրամ» խոսքերն էր ասում, նրամարմինը փշաքաղվում էր և արյունը սառչում երակների մեջ: Բայց լուռ նայում էր այդ ամբոխին, և կատաղի վրեժխնդրության ալիքներն անցնում էին նրա մռայլդեմքի վրայով: Սա նայում էր ամբոխին, նայում և սեղմված բռունցքով սպառնում նրան:

— Դու, ցնորամի՛տ ամբոխ, մոռացած մի ուժեղ առյուծ, լամուկին քեզ համար թագավոր ես հռչակում և սողում ծեր աղվեսի ոտքերի տակ, բայց կգա ժամանակ, երբդու նույն կեցցեները ինձ համար կկանչես և կսողաս ոտքերիս տակ ինչպես մի թույլ, անզոր մրջյուն... Բայց լավ իմացիր, որ այն ժամանակ քեզ փրկություն չի լինի, եՎեստ Սարգիսը, Հայաստանի օծյալ թագավորը միայն անիծյալ տնեցիների ոսկորների վրա պիտի թագավորի, միայն այն ժամանակ հոգիս կհանգստանա եկմոռանա այն վերքերը, որ այժմ հասցնում ես ինձ... Այն ժամանակ, երբ տեսնեմ, որ այդ ամբոխը սողալով գալիս է ինձ մոտ և ոտքերս ընկնում, դրան ոտքերիս տակտրորելով միայն կառնեմ վրեժխնդրության ծարավս... Օ՛, կգա այն ժամը, երբ կկոխկրտեմ այդ գարշելի ամբոխի արնաթաթախ դիակները և իմ թագավորությանգահը նրա ոսկորների վրա կկանգնեմ: Վնաս չկա, հունաց մի բանակը չարգվեցավ, բայց Հունաստանը չկործանվեց: Այնտեղ շատ

լեգեոններ կան և այդ լեգեոններըգունդ-գունդ Հայաստանի վրա կարշավեն, իսկ եթե դրանք էլ չեն օգնի, թաթարաց գնդերը կգրգռեմ և գործ կդնեմ իմ խորամանկության ու խաբեության բոլորինարները մինչև որ ինձ հաջողվի Հայաստանի գահը բարձրանալ, կամ կործանել նրան… Միայն երկու ճանապարհ եմ ընտրել. կամ պիտի կործանվի Հայաստանը նամայի անապատ դառնա, կամ ես պիտի ժառանգեմ այդ գահը: Իսկ նպատակիս հասնելու համար չեմ խնայի ո՛չ մի միջոց, ո՛չ հարազատիս արցունքը, ո՛չհայրենիքիս սերը և ո՛չ աստծուն: Թույն և մահ պիտի սփռեմ Հայաստանի մի ծայրից մյուսը և ավերակների ու մոխրի կույտեր պիտի դարձնեմ շեն քաղաքներն ուգյուղերը... Ահա թե ինչ է ցանկանում Վեստ Սարգիսը:

Եվ Վեստ Սարգիսը սկսեց պղտոր հայացքով նայել ամբոխին, որ ծովի ալիքների նման ալեկոծվում էր և հառաջանում դեպի Վահրամ Պահլավունու շքեղ պալատը:

Նա տեսավ մինչև անգամ, թե ինչպես դուրս եկավ ամբոխի առաջ ծերունի Վահրամը և ինչ-որ բան ասաց ամբոխին. իսկ ամբոխը ինչպես մի մարմին կրկին հնչեցրեցյուր գոռ ձայնը և շուտով ցրվեցավ Անիի փողոցներում:

— Ի՞նչ ասաց ծեր աղվեսը, երևի խոստացավ նրանց, թե շուտով Հայաստանի թափուր գահի վրա կբարձրանա մանուկ Գագիկը... հա՛, հա՛, հա՛, խելացնո՛ր Վահրամ, մի՞թե չգիտես, որ Հայաստանի գահը այժմ թափուր չէ, այլ գտնվում է «Սև Մարդու» երկաթե ճիրանների մեջ, որի ձեռքից ո՛չ ոք, ո՛չ Գագիկ, ո՛չ Վահրամ և ո՛չաստված չեն կարող խլել...

Վեստ Սարգսի խոսքերն ընդհատվեցան, նա ետ նայեց ու տեսավ յուր սիրելի Եղոյին, որը քրտնած, շունչը հազիվ ետ բերելով, ասաց.

— Իշխա՛ն, մեր գործը հետզհետե դեպի վատն է գնում:

— Ի՞նչ կա, Եղո՛ , ի՞նչ է պատահել, — հարցրեց Վեստ Սարգիսը, իբր թե ոչինչ տեղեկություն չուներ:

— Տե՛ր, ամբոխը Գագիկին կեցցե է կանչում և, դիմելով Վահրամ իշխանին, խնդրում է շուտով Գագիկին Անի բերել և բազմեցնել թագավորության գահին:

— Հետո՞, ի՞նչ պատասխանեց Վահրամ իշխանը:

— Նա խոստացավ շատ շուտով այդ բանը գլուխ բերել, հասկացնելով, թե ինքն էլ նույն կարծիքին է, որովհետև Հայաստանը տանջվում է «Սև Մարդու» երկաթեճիրանների մեջ:

— Ինչպե՞ս, նա համարձակվեց հայտնի կերպով իմ դեմ խոսել:

— Այո, տե՛ր, Սև Մարդ ասելով քեզ էր ակնարկում և ամբոխն էլ կարծես համամիտ էր նրան: Մի կայծ, փոքրիկ մի կայծ էր պետք, որ ամբոխը բորբոքվեր քո դեմ:Միայն այդ ժամանակ նա, յուր տրտունջը հայտնելով, բավականացավ և ցրվեց, բայց երկյուղ կա, որ մյուս անգամ այդպես թեթև չի անցնի:

— Այդ ամբոխը չի համարձակվի շշունջ հանել, իսկ եթե հանդգնի, ես կխեղդեմ նրան իմ ճիրանների մեջ: Բայց այդ թողնենք, Եղո՛, ասա ինձ, ու՞ր են թաքցրելԳագիկին: Պետք է մինչև հույների Անի մտնելը նրան ուղարկել յուր պապերի մոտ: Սուրը չհաջողեց, այժմ կարելի է թույն գործածել:

— Առայժմ ինձ անհայտ է, տե՛ր, սատանան միայն գիտե, թե ուր են նրան թաքցրել, — ասաց Եղոն:

— Լավ, մենք շուտով կգտնենք: Լուսիկի բերանից ամեն ինչ կարելի է իմանալ, հետևիր ինձ, — ասաց նա և Եղոյի հետ միասին գնաց յուր պալատի ներքնատներիցմեկը, ուր խոնավ, մութ պատերի մեջ փակված էր Լուսիկը:

Նա պառկած էր հարդի վրա լուռ, անձայն, որ կարծես կենդանության նշույլ չունենար վրան:

Եղոն լուսավորում էր ջահով նրա գունատ, մեռելային դեմքը:

— Նա կարծես քնած է, — ասաց Եղոն՝ մոտեցնելով ջահը Լուսիկի դժգույն դեմքին:

— Եթե քնած է, պետք է զարթեցնել, — ասաց խրոխտ ձայնով Վեստ Սարգիսը:

— Է՛յ, օրիո՛րդ, վեր կաց, իշխանը քեզ հետ ուզում է խոսել, — ասաց Եղոն հրելով օրիորդին:

Լուսիկը սարսափահար վեր թռավ յուր հարդե անկողնից և վայրենաբար շուրջը նայեց: Խեղճը երկար արթուն մնալուց հետո նոր էր քուն մտել, նոր էր փակել հոգնածարտասվալից աչքերը և ընկղմվել երազների մեջ: Տանջալից և սոսկալի էին այդ երազները, երբ զարթեցրեց նրան Եղոն:

— Ա՛հ, հա՛յր, մի՞թե դու ես, բայց ինչու՞ քո վրայից կաթկաթում է արյունը, այդ ի՞նչ է, ես սարսափում եմ, — ասաց Լուսիկը՝ սարսափահար դիտելով Վեստ Սարգսիդեմքը:

— Խելքի արի, օրիո՛րդ, հայրդ չէ քո առաջ կանգնած, այլ իշխան Վեստ Սարգիսը: Հայրդ վաղուց ոգիների աշխարհն է գնացել: Զառանցանքներով մի՛ ապրի, այլ լսիր, թե ի՞նչ են հարցնում քեզ և ուղիղ պատասխանիր:

Լուսիկը նայեց խոսակցին, նայեց և հիշեց դառն իրողությունը: Նա զգաց, որ ինքը բանտարկված է, միայնակ, անօգնական, անտեր յուր բանտի մեջ, ուր տանջում ենդահիճները: Բայց նա իրեն չկորցրեց. թափահարեց իրանից թուլասրտության հոգին և խրոխտ կերպարանք առնելով հարցրեց.

— Ի՞նչ է պահանջում ինձանից Հայաստանի գահի խնամակալը:

Վեստ Սարգսի դեմքը ավելի խոժոռվեց: Նա զգաց, որ օրիորդը հեգնում է իրեն, որ նա ծիծաղում է խնամակալ բառի վրա:

— Այս րոպեիս կիմանաս, թե Հայաստանի գահի խնամակալը քեզանից ի՞նչ է ուզում իմանալ: Ասա, խելա՛ռ աղջիկ, թե դու և քո հայրը ի՞նչ հարաբերության մեջ էիքիրար հետ և ի՞նչ էիք նյութում իմ դեմ:

— Միայն այդքա՞ն, իշխա՛ն, էլ ուրիշ ոչինչ չե՞ս պահանջում, — ասաց Լուսիկը և մի այնպիսի արհամարհական հայացք ձգեց Վեստ Սարգսի վրա, որ վերջինիսհամբերությունը հատնում էր:

— Բացի դրանից, — շարունակեց Վեստ Սարգիսը, — դու ինձ պիտի հայտնես, թե որտե՞ղ է թաքնված Գագիկ Բագրատունին՝ Հայաստանի գահի ժառանգը: Եթե դուայդ երկու հարցիս ճիշտ պատասխան տաս, այս խոնավ բանտից կազատվես և առ ժամանակ ապահով տեղ տեղափոխվելուց հետո ազատություն կստանաս:

— Իշխա՛ն, զուր նեղություն ես կրել այդ բանի համար ինձ այցելելու, զուր ես աշխատում քո սև հոգին ներշնչել իմ մեջ և կեղտոտել իմ մաքուր հոգին: Ինձազատություն ես խոստանում, որ ես հայրենիքիս ազատությունը քո ձեռքը մատնեմ, որ ես գաղտնիքները քեզ հայտնեմ և օրինական թագավորի բախտը քո անգութճիրանների մեջ ձգեմ, սակայն իմացիր, որ իմ հոգին սև չէ, ինչպես քոնը: Կտանջվեմ, կչարչարվեմ, բայց հայրենիքս չեմ մատնի, չեմ դավաճանի, ինչպես դու…

— Լռի՛ր, անզգա՜մ աղջիկ, թե չէ քեզ կսովորեցնեմ, թե ում հետ գործ ունես:

— Գիտեմ այդ, իշխա՜ն:

— Ի՞նչ գիտես:

— Որ մի ստոր դավաճանի հետ գործ ունեմ, որը զուրկ է և՛ գութից, և՛ խղճից...

— Ես քո լեզուն կկտրեմ, — ասաց Վեստ Սարգիսը գունատված և սուրը պատյանից հանեց: Այդ ժամանակ Եղոն մեջ մտավ:

— Իշխա՜ն, ինձ բաշխիր սրա կյանքը, և թույլ տուր ինձ խոստովանեցնել սրան: Ես գիտեմ սրա լեզուն:

Վեստ Սարգիսը սուրը պատյանը դրեց և դուրս գնաց Եղոյի հետ: Լուսիկը մնաց միայնակ:

Զ

ՔԱՄՈՒ ՀԱՌԱՉԱՆՔԸ

Մինչ այս, մինչ այն վրա հասավ Հայաստանի ցուրտ և սարսռալից ձմեռը:

Դաշտերն ու ձորերը ամայացան և շարժումը դադարեց: Ճչեցին ցուրտ քամիները և ամայի դաշտերի ու ձորերի վրա սկսեցին իրենց վայրենի պարը պարել ուտաղտկալից մեղեդին երգել...

Անին և յուր շրջակայքն էլ հագան ձմռան վերարկուն ու ծածկվեցան թանձր ձյունով: Կարծես թե մեռած էր բնությունը, կարծես թե Անիի վրա իշխելիս լիներ միայնսառը քամին և ձմռան մեռելությունը, որն անարգել բախում էր հարստի ու աղքատի, ռամիկի ու իշխանի դուռը, ինչ-որ բան փսփսում դռների արանքներից և ապա, խելագարի նման դուրս թռչելով, կորչում, հեռանում Անիից և անհետանում ո՞վ գիտե ուր, ո՞վ գիտե որ լեռան կամ ձորի ծոցում... Ինչու՞, ի՞նչ էր տեսնում նա դռներըարանքից, որ այդպես հուզվում, այդպես ալեկոծվում էր: Մի՞թե նրան դուր չէին գալիս այն տեսարանները, ուր կյանքը եռում էր և ուր մայրը յուր բալիկին նանիկ էրասում. ծերունի պապը յուր նախնյաց քաջագործությունը պատմում շուրջը ժողոված կարմրերես հարսներին, սիրուն կույսերին և լայնաթիկունք պատանիներին, որոնց դեմքերը փայլում էին ներքին ոգևորությունից և ցանկանում, որ անվերջ, անծայր շարունակվի պապի պատմածները, որ նրանք միշտ լսեն նախնյացքաջագործությունները և որոնց հետ իրենք էլ լան և ուրախանան... Եվ

քամին նայում էր ամեն տուն, ականջ դնում և շտապ հեռանում: Դարձյալ գալիս էր, դարձյալհեռանում: Նա տեսնում էր ամեն բան, իմանում ամեն գաղտնիք, լսում էր ամեն խոսակցություն, շշունջ, ծիծաղ ու խնդություն, հառաչանք ու հեծկլտանք և, ապա, ինքն էլ մի հառաչանք, մի ճիչ, մի շվվոց արձակելով, անհետանում...

Եվ քամին, այդ ազատ դաշտերի ազատ որդին զարմանում էր ու մտածում. §Ինչո՞ւ մի տեղ լալիս են, մյուս տեղ՝ ուրախանում, մի տանը հրճվում են, մյուս տանը՝ ախու վուշ անում: Եվ ինչու՞ տնեցիների մեծ մասի դեմքերին չի երևում ժպիտի և ոչ մի նշան, այլ մի տեսակ վհատություն է պատել նրանց սիրտը: Ինչու՞, ի՞նչ էրպատահել, մի՞թե նրանք վհատ են և տխուր ձմռան ներկայությունից: Բայց մի՞թե նրանք չգիտեն, որ շուտով կանցնի այդ տաղտկալից ձմեռը և կբացվի սիրուն ուզվարթ գարունը...»: Բայց չէ, նրանց վհատեցնում և տխրեցնում է մի ուրիշ բան. կարծես մի սև թաթ ճնշում է բոլոր տնեցիների սրտերը և զցում նրանցհուսահատության մեջ: Նրանք կարծես զգում են, որ ինչ-որ բան է կատարվում Անիի գլխին, որ ինչ-որ բան է պատրաստվում նրա համար և թե այդ պատրաստողը, չարիքի այդ ստեղծողը ձեռք է ձգել բոլորին էլ և յուր անգութ ճիրաններով խեղդում, շնչասպառ է անում նրանց՝ չթողնելով անգամ մի փոքր ազատ շնչելու... «Անարդար է, տե՛ր, քո սուրբ դատաստանը», կարծես մրմնջում էր քամին ամեն անգամ և ուժգին հառաչելով մի քանի պտույտ անում և անհետանում...

Բայց անեցիք քամու հառաչանքից ավելի հուսաբեկված, ավելի սաստիկ էին զգում Սև Մարդու ահռելի շնչառությունը և դողում, իսկ այդ Սև Մարդը շատ զորավոր, շատ ուժեղ էր, և ոչ ոք չէր համարձակվում դեմ կենալ նրան, հակառակվել:

Դա հայոց թագավորության գահի խնամակալ Վեստ Սարգիսն էր:

Եվ Վեստ Սարգիսը քնած չէր:

Նա տենդագին եռանդով գործում էր ձմեռը և փորում գահի շուրջը: Նա վախենում էր, գոռում, որ այդ գահը կխլեն իրենից, չեն տա իրեն, ուստի և խոր խրամատներ էրփորում, իբր թե գահը տանող ճանապարհն էր պաշտպանում, առանց կասկածելու, որ այդ գահը կարող է խորտակվել և իրեն էլ ոչնչացնել նրա փլատակների տակ...

Եվ խելացնորի նման գիշեր-ցերեկ փորում էր, փորում ու չար օձի խինդը պատում էր նրա մռայլ դեմքը: Նա արդեն այդ գահը իրենն էր համարում և երևակայում, որինքը արդեն բազմել է Բագրատունյաց գահին, և փայլուն թագը զարդարում է յուր դավաճան գլուխը...

Սնոտի՛ երազ...

Փառասիրության տենչը կուրացրել էր նրան: Ո՛չ մի բան նրա աչքին չէր գալիս: Ո՛չ մի ազնիվ զգացմունք չէր շարժվում խնամակալի սրտում: Նա ուզում էր մոխիր նավերակ դարձնել Հայաստանը, սուր և մահ սփռել չորս կողմը և վայնասունի ու հառաչանքի միջից անցնելով՝ բազմել գահին…

Այդ էր Սև Մարդու՝ դավաճան Վեստ Սարգսի փափագը, նրա սրտի ցանկությունը, նրա ամբողջ էությունը...

Եվ նա իր ցանկությանը հասնելու համար անում էր ամեն բան, դավաճանում էր յուր ազգին, հայրենիքին...

— Ինչո՞ւ...

— Փառքի, սնոտի անցողական փառքի համար:

— Իսկ անտո՞ւնը, պատի՞վը...

Դավաճանը այդ չէր հարցնում: Այդ հարցերը ետ էին մղվել դավաճանի գիտակցության մեջ, և փառքից կուրացած, նա ուզում էր միայն մի օր, մի ժամ, գոնե մի րոպեբազմել գահին, որ աշխարհը տեսնի, թե Վեստ Սարգիսը տարավ հաղթանակը, թե նա թագավոր է հայոց... Եվ նա գիշեր-ցերեկ մտածում էր յուր նպատակին հասնելումասին, իսկ դրան հասնելու համար պետք էր ջարդեր, խորտակեր, ոչնչացներ յուր արգելքները, գահի օրինական ժառանգներին և նրանց պաշտպաններին: Եվ նառչնչացնում էր ու անխնա ջարդում: Թույն և սուր կար յուր ձեռքին, և այդ թույն ու սրով ոչնչացնում էր հակառակորդներին:

Հունական առաջին բանակը ջարդվելուց հետո Վեստ Սարգիսը հանգստություն չուներ: Նա, ինչպես տերության խնամակալ, բոլոր գանձերը ձեռքն առավ, բերդերըամրացրեց և աղավնու տեսքով, բայց օձի բնավորությամբ սկսեց հայ իշխանների սիրտը պղտորել, նրանց յուր թակարդը ձգել և զինել Գագիկի ու Վահրամ իշխանիդեմ: Իշխաններից շատերը, ոմանք կուրացած Վեստ Սարգսի ոսկիներից, ոմանք էլ վախենալով նրա ուժից, միացան նրան և որոշեցին կամ տապալել գահը, կամբազմեցնել այնտեղ Վեստ Սարգսին: Եվ Վեստ Սարգիսը օրավուր զորանում էր, այնինչ հակառակ կուսակցությունը՝ Վահրամյանք, որոնք գահի օրինականիրավունքներն էին պաշտպանում, հետզհետե թուլանում էին և միայնակ մնում:

Վահրամյանք տեսնում էին այդ բոլորը, զգում Վեստ Սարգսի մեքենայությունները և պատրաստվում կյանքները վայր դնելու գահը դավաճանների ձեռքը չձգելուհամար:

Ամբոխը դեռ լուռ էր: Նա տեսնում էր, բայց դեռ լուռ էր: Այդ լռությունը նման էր ծովի այն խաղաղությանը, երբ նա պատրաստվում է ահեղ փոթորկի… Բայց թե երբնա պիտի հուզվի, երբ պիտի փրփրի, այդ տերը գիտե... Վեստ Սարգիսը տեսնում էր այդ բոլորը և հեգնորեն ժպտում: Թեև Հայաստանի ուժը և գանձը յուր ձեռքին էր, բայց նա դեռ վստահ չէր այդ ուժի և գահի վրա: Նրան օտարի ուժ էլ էր պետք, և ահա նա նորից ոտքի կանգնեցրեց հունաց ուժը: Գիշեր-ցերեկ գրություններ էրուղարկում հունաց կայսեր և գրգռում հույներին նորից արշավեղու, նորից ոտնատակ անելու Հայաստանը՝ խոստանալով, որ ինքն էլ կաջակցի հույներին Անիմտնելու:

Եվ հույները ուրախացած գնդեր էին պատրաստում ու բանակներ կազմում, որ գարնանը վերջին հարվածը հասցնեն Հայաստանին, իսկ Վեստ Սարգիսըպատրաստվում էր հարթելու նրանց ճանապարհը...

Եվ սև ժպիտ երևաց դավաճանի դեմքին, երբ նրան լուր բերին, թե հունաց ահեղ լեգեոնները գարնանը կմտնեն Հայաստան գրավելու Անին յուր շրջակայքով…

Է

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

Ձմեռն էլ անցավ: Եկավ գեղածիծաղ գարունը: Ձյունը հալվեց, դաղարեց բուքն ու բորանը, և դաշտերը զուգվեցան երփներանգ ծաղիկներով: Արտույտը յուր երգըսկսեց հնչեցնել, բլբուլը յուր տաղերը ասել, իսկ հոտն ու խաշինքը՝ մայել ու բառաչել: Ուրախ էր բնությունը, սակայն ուրախ չէր Հայաստանը: Վեստ Սարգսիդրդմամբ Հայաստանի արևմտյան կողմից հունական գնդերը արդեն ներս էին մտել և ավերում ու մոխիր էին դարձնում ամեն ինչ և հետզհետե մոտենում էին Անիին, այնինչ արևելյան կողմից թաթարներն էին իրենց սրերն ու նիզակները սրում: Նրանք էլ անտեր պատառ էին գտել և հարմար ժամանակ էին համարում հարձակվելՀայաստանի վրա, իսկ մյուս կողմից հույների դրդմամբ Աղվանից Դավիթ Անհող թագավորն էր ոտնատակ տալիս Հայաստանի հյուսիսային սահմանները:

Հայաստանը տագնապի մեջ էր: Բայց, չնայած դրան, ծերունի Վահրամ իշխանը քնած չէր: Նա արթուն հսկում էր թե վտանգը ո՞ր կողմից է և, իսկույն գնդերկազմելով, հարձակվում էր թշնամիների վրա:

Երբ առաջին անգամ հույները ջադվեցան, Վահրամը հասկանում էր, որ դրանով չի վերջանա, որ դա կռվի առաջին քայլն է, որ վերջը ավելի սարսափելի կլինի, ուստիև պատրաստություն էր տեսնում: Եվ նա չսխալվեցավ: Նա տեսավ, որ հունաց բանակը այս անգամ ավելի զորավոր էր, որոնք ողողելով Դերջան, Մանանաղ և Պաղինգավառները, պատրաստվում էին անցնելու Բասյան գավառը, իսկ այնտեղից՝ Շիրակ:

Հարպիկ իշխանը և Ստեփանիկը, ձմեռը Անիում մնալով, գարնան դեմ, լսելով, որ հունաց բանակը ողողում է Պաղինն ու յուր հայրական ամրոցները, պաշարելովսպառնում է ոչնչացնել, Վահրամ իշխանից պատվեր ընդունելով՝ մի փոքրիկ գնդի գլուխ անցան և սլացան դեպի Պաղին, ուր թշնամին արդեն ոտնատակ էր տալիսհայրենի երկիրը:

Ճիշտ այն ժամանակ, երբ Հարպիկը և Ստեփանիկը դուրս եկան Անիից, Հաբել իշխանը՝ Հարպիկի հայրը, յուր բերդի աշտարակներից մեկի գլուխը բարձրացածհորիզոնն էր դիտում: Նրա մոտ այս անգամ կանգնած էին միայն երկու որդիները՝ Դավիթը, որի բեղերը նոր էին ծլել, և Կոնստանդինը, որի աչքերը փայլփլում էինվրիժառությամբ: Հաբելը այս անգամ խիստ տխուր էր ու մռայլ: Չորս որդուց միայն երկուսն էին մնացել մոտը, իսկ մյուսների մասին դեռ տեղեկություն չուներ, թեռ՞ւր են նրանք և ի՞նչ են անում: Նա երկար ժամանակ դիտեց հորիզոնը, այն ճանապարհը, որտեղից պետք է երևար Հարպիկը, բայց նա չկար ու չկար: Ճանապարհինոչ ոք չէր երևում:

— Դավի՛թ, եղբայրդ ուշացավ, մի լուր էլ չուղարկեց, որ իմանայինք, թե ինչ դրության մեջ են հայոց գործերը, — դարձավ Հաբելը յուր որդուն:

— Դաժան ձմռանը անկարելի է լուր ուղարկել, հա՛յր, բայց Հարպիկը ուր որ է կերևա, ճանապարհները բացվել են:

— Հա, ես հավատում եմ, որ կերևա, չի ընկնի թշնամու ձեռքը, սակայն ինձ անհանգստացնում է, թե ի՞նչ եղավ Վեստ Սարգսի դավադրությունը: Չէ՞ որ Թլպաղտոբերդի իշխան Թորոսիկն էլ միացավ նրան և նրանք աշխատում են ոչնչացնել մեր բերդերը:

— Այո, հա՛յր, դեռ մի քանի օր առաջ Թորոսիկը յուր գնդով նորից դուրս եկավ Թլպաղտո բերդից:

— Եվ ո՞ւր գնաց:

— Ասում են, որ հունաց բանակին միանալու: Նրանք կրկին երևացել են և սկսել իրենց ավերմունքը:

— Հը՛մ, անիծյա՛լ դավաճան, — ասաց դառնությամբ Հաբելը և քիչ լռելուց հետո ավելացրեց.

— Դավի՛թ, բերդերը ամրացնել տուր և մարդոցը կարգի բեր: Թորոսիկ իշխանը յուր առաջին հարվածը մեզ կհասցնի, իսկ մենք այնքան մարդ չունենք նրանցդիմադրելու համար: Այո՛, եթե մեր ուղարկած գունդը Հարպիկի հետ միասին ետ դառնար, այն ժամանակ երկյուղալի ոչինչ չկար թեկուզ հունական բանակն էլ հետըբերեր:

— Բայց, հայրի՛կ, նայեցեք, հորիզոնի վրա փոշու ամպեր են երևում, — ասաց Դավիթը և մատով ցույց տվեց դեպի հորիզոնը, ուր հիրավի փոշու ամպեր ու փայլունկետեր էին երևում:

— Գալիս են, որդի՛ս, վերջապես Հաբելը գործ կունենա, — ասաց հեգնորեն Հաբելը և անթարթ դեպի այն կետը նայեց, ուր փոշու միջից երևում էր ձիավոր զորք, որիզենքերը փայլում էին արևի ճառագայթների տակ:

— Մի՞թե Հարպիկը գալիս է, — ասաց փոքր
որդին՝ Կոնստանդինը, երկյուղածությամբ մոտենալով հորը:

— Ո՛չ, զավակս, հունաց բանակն է գալիս մեր դեմ կռվելու: Մենք պետք է կռվենք թե՛ դավաճանի և թե՛ հունաց զորքերի դեմ:

— Գուշակությունը կատարվում է: Թորոսիկը առաջին հարվածը մեզ է ուզում հասցնել: — Ապա, դառնալով միջնակ որդուն, ասաց.

— Տուր, որդի՛ս, զենք ու զրահս և հրամայիր փողը հնչեցնել, թող իմանան, որ Հաբելի մեջ վախկոտի արյուն չի հոսում, ինչքան էլ ահավոր գունդ գա նրա դեմ:

— Հայրի՛կ, ինձ էլ տար կռվելու, ես էլ եմ ուզում թշնամիների մի քանի գլուխ թռցնել:

— Չէ, որդի՛ս, դու դեռ անփորձ ես և պատանի:

— Հայրի՛կ, մի՞թե ես չէի, որ արծվին ցած գլորեցի:

— Ապրե՛ս, գիտեմ, որ քաջ ես, իրավունք եմ տալիս աշտարակից նրանց նշան դնելու, իսկ ցած գնալ թույլ չեմ տա, — ասաց Հաբելը և
հեռացավ: ԱյնինչԿոնստանդինը դժգոհ էր հորից, դեռ նայում էր հունաց բանակին, որ հետզհետե մոտենում էր բերդին:

Այդ ժամանակ լսվեց փողերի ձայն թե՛ բերդի ներսից և թե՛ դրսից և սարսռեցրեց Կոնստանդինի մարմինը: Նա առանց հորը հարցնելու տուն վազեց, յուր զենք ուզրահը կապեց: Կարճ ժամանակ անցավ, և հունաց զորքը շրջապատեց Հաբելի ամրոցը, բանակը դրեց և ասպատակ սփռեց դեպի շրջակա հայ գյուղերը:

Վրա հասավ գիշերը, և Հաբելը նկատեց, թե ինչպես շրջակա հորիզոնը լուսավորվեց կրակե փնջերով ու լուսավորեց խավար շրջակայքը: Հաբելի սիրտը կսկծաց, տեսնելով թե ինչպես ավերվում են յուր գյուղերը, իսկ այն կողմը, ուր գտնվում էր Թորոսիկ իշխանի Թլպաղտո ամրոցը, խավար էր ու հանգիստ: Երևում էր, որհույները առաջնորդվում էին Թորոսիկ իշխանով և նրա գյուղերին ձեռք չէին տալիս:

— Օ՛, ստո՛ր դավաճան, դու ոչնչացնում ես հայ գյուղերը լոկ միայն ինձ վիրավորելու համար, բայց հասկացիր, որ շուտով կստանաս արժանավոր հատուցումը, — ասաց Հաբելը և բարկությունից ատամները կրճտացրեց:

Նրա շուրջը քիչ-քիչ զինված մարդիկ էին հավաքվում, երևում էր, որ Հաբել իշխանը մտադիր էր գիշերային մի հարձակում գործելու, օգտվելով, որ հույները հոգնած, չեն կարող այն դիմադրությունը տալ, ինչ որ հանգստանալուց հետո:

Երբ մութ խավարը պատեց, և ամեն ինչ լռեց չորս կողմը, Հաբել իշխանը մի քանի լրտեսներ ուղարկեց դեպի նրանց բանակը, իսկ ինքը անհամբերությամբ սկսեցշրջել աշտարակի վրա: Անցավ բավական երկար ժամանակ, երբ լրտեսները երևացին և մոտեցան Հաբելին:

— Հը՞, ինչպե՞ս գտաք, — հարցրեց:

— Տե՛ր, երևում է, որ հույները քնած չեն և Թորոսիկ իշխանը իրանց լավ դաս է տվել: Ամեն մի գաղտնի անցք բռնված է հունական ուժեղ պահապաններով և կարծեսնրանք ինչ-որ նոր բան են մտածում մեզ համար, — ասացին լրտեսները՝ խոր գլուխ իջեցնելով:

— Վնաս չկա, թեև մենք ծուղակի մեջ ենք բռնված, բայց Թորոսիկ իշխանը թող լավ իմանա, որ Հաբելը հաղթվող չէ և երկար կդիմադրե թե՛ իրեն, և թե՛ հույներին:

— Բայց, տե՛ր, մեր ամրոցի հյուսիսային կողմի գաղտնի անցքը դեռ ազատ է պահապաններից, թեև այն կողմը խիստ երկյուղալի ճանապարհներ են և գիշերովանցնել անկարելի է:

— Ի՞նչ է, մի՞թե իմ քաջերը վախենում են գահավեժ լինել դեպի անդունդը,— հարցրեց Հաբելը և նրա դեմքը փայլեց ուրախությունից: Նա մի փոքրիկ կետ էր գտել, որտեղից կարող էր գիշերով դուրս գալ և հարձակվել հունաց բանակի վրա:

— Ոչ, տե՛ր, մի՞թե չգիտես, որ Հաբելի քաջերը մարդիկ չեն, այլ դևեր: Նրանք գիշերն էլ ժայռերի ու անդունդների վրայով կանցնեն և կհասնեն թշնամուն:

— Լավ, ուրեմն մենք հենց այդ ճանապարհով դուրս կերթանք և մի փոքր պտույտ կանենք հունաց բանակում, — ասաց Հաբելը և նշան արավ հիսուն հոգուցբաղկացած զինված խմբին հետևել իրեն:

Խումբը լռիկ-մնջիկ հետևեց նրան և կանգ առավ այն պարսպի առաջ, որի տակ տարածվում էր ահռելի անդունդը: Հաբելը փոքր անցքով փորսող տալով առաջ անցավև կատվի դյուրաշարժությամբ մագլցելով մի ժայռից մյուսը, անցավ նաև մացառների ու թփերի միջով և կանգ առավ բերդի պարսպի տակ, ուր հետզհետեժողովվեցան և մնացած զինվորները: Երբ բոլորն իջան, Հաբելը աչքի անցուց զինվորներին և «ապրիք, տղե՛րք» ասելով նշան արավ, նրանք լուռ առաջ անցան:

Հունաց բանակում տիրում էր խորին լռություն, իսկ պահապանները անվրդով շրջում էին աջ ու ձախ: Նրանք վստահ իրենց զորության վրա, չէին էլ մտածում, թեՀաբելը խենթություն կանի իրանց վրա հարձակվելու: Բայց Հաբելը յուր խելքն ուներ. նա առանց աղմուկի մոտեցավ բանակին, հանկարծ գրոհ տվեց և այնպիսիիրարանցում ձգեց նրանց մեջ, որ հունաց ամբողջ բանակը դղրդաց և սարսափից չգիտեր ինչ աներ: Նա կարծում էր, թե մի մեծ բանակ է հարձակվել յուր վրա, չհասկանալով, որ միայն մի բուռ քաջեր են իրենց կոտորում: Մինչ այս, մինչ այն հունաց քնած բանակը ոտքի կանգնեց և ուզեց դիմադրել թշնամուն, սակայն այլևայուր առաջ թշնամի չտեսավ: Թշնամին, բավական ավերմունք գործելով բանակի մեջ, անհետացել էր այնպես, ինչպես և հայտնվել:

Առավոտը լուսացավ, և հույները փչեցին իրենց փողերը: Նրանք գունդ-գունդ մոտենում էին բերդին, որ մի ակնթարթում խորտակեն պարիսպները և պատժենՀաբելին: Սակայն Հաբելը և յուր քաջերը կանգնած էին աշտարակների վրա և միայն հեգնական ժպիտ էին արձակում թշնամիների վրա: Նրանք գիտեին, որ իրենցբերդը անառիկ է, որ թշնամիները իրենց գործիքներով անգամ ոչինչ չեն կարող անել, դրա համար էլ արհամարհանքով էին պատասխանում հույներիսպառնալիքներին ու հայհոյանքներին: Բայց հույները հանկարծ գրոհ տվին և հարձակվեցան պատերի վրա: Նրանք երկար ճանկերով բռնում Էին պատերից նսանդուղքներ դնում վեր բարձրանալու, սակայն Հաբելի զորքերը նրանց գլխին թափում Էին նետերի տարափ և ահագին քարի կտորներ, որ գլորվելով ցած, ջախջախում էին բարձրացողների գլուխը և ցած գլորում նրանց:

Հայերը կռվում էին քաջությամբ, այնինչ հույները մեկը մյուսի ետևից կոտորվում և ցած էին գլորվում: Երբ նրանք տեսան, որ բերդն առնելու հնար չկա, ատամներըկրճտացնելով ետ նահանջեցին, որպեսզի նորից, նոր ուժերով հարձակվեն բերդի վրա: Եվ այս փորձերը նրանք մի քանի անգամ արին, բայց՝ անհաջող, մինչև որոգնության հասավ Թորոսիկ հայ իշխանը յուր խորհրդով:

Արդեն մի ամբողջ շաբաթ էր, ինչ պաշարված էր բերդը, բայց նա դեռ անվնաս կանգնած ժայռի գլխին ժպտում էր հունաց անզորության վրա, երբ Թորոսիկ իշխանը, որ լավ ծանոթ էր բերդի բոլոր անկյուններին, մի սոսկալի ծրագիր կազմեց: Նա ցույց տվեց հույներին բերդի գաղտնի անցքը, որ անտես էր թողնված Հաբելի կողմից:

Թորոսիկը յուր հայկական խմբով պիտի մուտք գործեր այն ճանապարհից, որտեղից ել ու մուտ էր անում Հաբելի զորքը հարձակման ժամանակ, իսկ հունականգունդը պիտի նեղեր մյուս կողմից: Այսպիսով, երբ Հաբելը յուր ամբողջ ուժը կկենտրոնացներ հունաց կողմը, ինքը աննկատելի կերպով գաղտնի անցքից պիտի ներսմտներ բերդը և սկսեր կոտորածը:

Այսպես էլ արին: Հենց որ մութը, պատեց, Թորոսիկ իշխանը յուր գնդով դարան մտավ այդ գաղտնի անցքի մոտ, որ բոլորովին պահպանված չէր, վստահ այն բանից, թե թշնամին չգիտե այդ ճանապարհը և չի համարձակվի այդ ահռելի ճանապարհով մուտք գործելու: Հունաց բանակը հանկարծ գրոհ տվավ և ճանճերի նմանփաթաթվեցավ ամրոցի վրա: Հաբելը չէր սպասում այդ հարձակմանը, բայց քաջությամբ ետ մղեց նրանց պատերից: Հույները նոր հարձակում արին: Եվ

ամենանգամ, երբ մի գունդ ետ էր մղվում, մի նոր գունդ էր գալիս ու նորից հարձակվում: Հաբելը նկատեց, որ այս անգամ կռիվը խիստ տաք կերպարանք է ստանում և հույները թեև ջարդվում են, բայց համառ կերպով նորից են հարձակվում:

— Ի՞նչ պիտի լինի սրա վերջը, — մտածում էր Հաբելը և սոսկալով նկատում, որ յուր քաջերը թեև դևերի նման են կռվում, բայց հետզհետե ուժից ընկնում են:

— Քաջ կացեք, ընկերնե՛ր, մի՛ վհատիք, — կանչում էր նա և մի աշտարակից մյուսը թռչում:

Բայց հանկարծ նա սոսկալով նկատեց, որ բերդի ներսից էլ թշնամյաց մի գունդ է երևում, որոնք մերկացրած սրերով դեպի յուր քաջերն են սլանում:

— Էհէ՛… — մռմռաց Հաբելը, և նրա սիրտը ցավից կսկծաց. ապա կատաղության կայծեր թռան նրա աչքերից, երբ տեսավ, որ այժմ ամեն բան յուր ձեռքից գնաց, որնա այլևս ուժ չունի դիմադրելու թշնամուն, բայց վճռեց կենդանի չընկնել թշնամու ձեռքը:

— Թողե՛ք պարիսպները, ի՛մ քաջեր, և խմբվեցեք շուրջս, — ձայն տվեց Հաբելը և սուրը մերկացնելով մղվեց թշնամիների մեջ: Սկսվեց կատաղի կռիվը: Այդ միջոցիներկու դռներն էլ ճռնչալով բացվեցան, և ներս խուժեց հունաց զորքը և մի բուռ քաջերին, մեջտեղ գցելով, սկսեց կոտորել: Բայց Հաբելը և յուր փոքրաթիվ գունդըգազանի նման էին կռվում: Նրանք մեկը մյուսի ետևից կոտորվում էր, երբ ամբողջ բերդը և շրջակայքը լուսավորվում էին հրեղեն բոցով: Հույները արդեն բերդը միքանի տեղից կրակ էին տվել, երբ Հաբել իշխանը կռվողների մեջ նկատեց Թորոսիկ իշխանին: Կատաղության փրփուրը բերանին, թողնելով յուր խումբը, միայնակառաջ մղվեցավ դեպի Թորոսիկ իշխանը և գոռաց նրա վրա.

— Թորոսի՛կ իշխան, թեև դու դավաճանությամբ հասար նպատակիդ, բայց պիտի մեռնես:

Թորոսիկ իշխանը նայեց նրա կատաղի հայացքին և մի քանի քայլ ետ-ետ գնաց: Այդ միջոցին էր, որ Հաբելը շրջապատվեց թշնամիներով, մի քանի սրի հարվածստացավ և ինքն էլ վերջին անգամ, յուր ահագին սուրը վրա բերելով, ջախջախեց մի հույնի գլուխ և ցած գլորվեց: Հաբելը քաջի պես փչեց յուր շունչը…

Թորոսիկ իշխանը տեսավ այդ և դեմքին մի դիվական ժպիտ փայլեց: Նա մոտ վազեց և քաջի դիակի վրա ոտքը դնելով մխեց յուր սուրը նրա կուրծքը և դառնագինվրեժխնդրությամբ ասաց.

— Սատկիր, ավազա՛կ, այժմ ես կարող եմ հանգիստ ապրել...

Թորոսիկ իշխանի բերանում խոսքը սառած մնաց և նա, աջ ու ձախ նայելով, տեսավ, որ հունաց և յուր զորքերը սարսափահար փախչում են, այնինչ բերդի մի բուռքաջերը հալածում են նրանց:

— Ի՞նչ պատահեց, մի՞թե մերոնք վախենում են այդ մի բուռ մարդկանցից, բայց մի՞թե նրանց իշխանի դիակը չէ նրանց ոտքերի տակ… -Ու Թորոսիկ իշխանը, կասկածելով, նորից նայեց յուր ոտքերի տակ փռված դիակին ու նրա կասկածը բոլորովին փարատվեց:

— Չէ, Հաբելի դիակն է, — մռմռաց նա և ապա, դառնալով դեպի յուր զինվորներից մեկը, հարցրեց.

— Է՛յ, ի՞նչ եք խելագարի նման փախչում, ի՞նչ պատահեց:

— Տե՛ր, նայեցեք, նոր թշնամին մեզ է մոտենում, փախե՛ք այստեղից:

— Ո՞վ է այդ նոր թշնամին...

— Հարպիկը, լեռների ավազակը…

Թորոսիկ իշխանը նայեց այն կողմ և երկյուղից մնաց սառած:

Նա տեսավ, թե ինչպես մի գունդ, կոտորելով հունաց և յուր զորքերին, մոտենում էր իրեն:

— Զարկեցեք, մի՛ վախենաք: Ահա Հաբելի դիակն ընկած է այստեղ, Հարպիկինն էլ կընկնի, — ասաց Թորոսիկը խրախուսելով յուրայիններին և կատաղությամբհարձակվեց նոր թշնամիների վրա:

Բայց Թորոսիկը սարսափեց, երբ տեսավ, որ յուր մարդիկ հետզհետե կոտորվում են, որ ինքն արդեն շրջապատված է թշնամիներով: Կատաղած առյուծի նման նասուրը վրա բերեց և ջախջախեց իրեն մոտեցող զինվորներից մեկի գլուխը: Զինվորն ընկավ և արյան հեղեղով ողողեց Թորոսիկի ոտքերը: Հարազատի արյունըկարծես բողոքում էր Թորոսիկի անիրավության դեմ, սակայն, երբ նա նորից

բարձրացրեց սուրը, նրա ձեռքը չիջավ, այլ սոսկալի գունատությունը պատեց նրադեմքին և սարսռալից դողը ցնցեց մարմինը:

Նրա առաջ, նույնպես սուրը բարձրացրած, կանգնած էր յուր հարազատ որդին՝ Ստեփանիկը:

— Որդի՛ս, ի՞նչ ես անում,— մռնչաց Թորոսիկը:

— Դավաճա՛ն, պատրաստվիր մեռնելու, — կանչեց Ստեփանիկը՝ սուրը ճոճելով:

— Որդին հոր դե՞մ:

— Դավաճանը չի կարող իմ հայրը կոչվել, պատրաստվիր մեռնելու, — կրկնեց Ստեփանիկը, և հոր ու որդու սրերը զարկվեցին իրար և կայծակներ հանեցին:

Նրանք կռվում էին մի քանի վայրկյան բուռն, ահավոր կռվով, մինչև որ երիտասարդ ուժը գերակշռեց և Ստեփանիկի սուրը մխվեցավ դավաճանի կուրծքը:

Թորոսիկ իշխանը գետին գլորվեց և մարող աչքերով, հազիվ լսելի ձայնով շշնջաց.

— Այդ ի՞նչ արիր, որդի՛ս, դու սպանեցիր հորդ...

— Արժանի էիր, — ասաց Ստեփանիկը և, կոխկրտելով հոր դիակը, առաջ անցավ…

Ը

ԱՆԻԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Մինչդեռ Հարպիկը քշում էր հունաց զորքերին Պաղինի շրջակայքից, Վահրամյանք էլ մեծ ջարդ տվին հունաց գլխավոր բանակին և քշեցին Հայաստանիսահմաններից: Սակայն հույները այդ անհաջողությունից չվհատվեցին: Նրանք նոր բանակ կազմեցին, կրկին մտան հայոց երկրի սահմանները, բայց կրկինջարդվեցին: Վերջապես մի մեծ բանակ էլ կազմելով, բաղկացած 100.000 մարդուց, նրանք չորրորդ անգամ մտան Հայաստան և անցած ճանապարհները մոխրի ուավերակի կույտեր դարձնելով՝ պաշարեցին Անի քաղաքը:

Անեցիք ցնցվեցան: Խուլ դղրդյուն ընկավ ամբոխի մեջ, որ քանի գնաց սաստկացավ: Նրանք թագավորության խնամակալին էին պտրում, իսկ նա չկար Անիում այնժամանակ, երբ քաղաքը վտանգի մեջ էր, երբ Անին շրջապատված էր ահեղ բանակով և պատրաստություններ էր տեսնում այդ հրաշալի քաղաքը կործանելու...

Ո՞ւր էր Սև Մարդը, ի՞նչու էր նա հեռացել... հայտնի չէր ամբոխին: Բայց թե այդ ամբոխը զգում էր Սև Մարդու արարմունքի վատությունը և լուռ քրթմնջում. Անիիբարձր աշտարակների և ամուր երկկարգ պարիսպների վրա արդեն շրջում էին հայ պահապանները և լուռ դիտում թշնամու բանակը: Նրանք տեսնում էին նրանցբազմությունը, լսում նրանց սպառնալիքն ու հայհոյանքը և տխրությամբ գլուխները շարժում... Ի՞նչ պիտի անեն մի բուռ զինվորները ահեղ բանակի դեմ, որոնքբաբանները շարելով պարիսպների առաջ, սպառնում էին քարուքանդ անել Անիի հաստ պարիսպները: Լուռ էին պահապանները, լուռ էր ամբոխը, բայց այդլռության մեջ ամբարվում էր մի այնպիսի կրակ, որ մի փոքրիկ կայծի էր սպասում, որ բռնկի, բորբոքվի և յուր առաջ մոխիր դարձնի ամեն ինչ... Ահա Անիիփողոցներով մի ծերունի մարդ է անցնում գրկին սեղմած մի ինչ-որ կապոց: Նա գնում է տխուր և մռայլ դեմքով, որի վրա զգացվում է հոգեկան և ֆիզիկականտանջանքի խոր դրոշմը: Նա անցավ մի քանի ծուռ փողոցներ, մոտեցավ Անիի մայր եկեղեցուն և կանգ առավ այնտեղ, ուր կանգնած էին մի խումբ մարդիկ: Նրանցիցմեկը, ճանաչելով եկողին, դարձավ նրան ու ասաց.

— Այդ ի՞նչ է գրկիդ, վարպե՛տ Ղևոնդ:

Եկողը, որ մեզ ծանոթ դարբին Ղևոնդն էր, ապուշի նման իրեն դիմողին նայեց:

— Ի՞նչու ես ինձ այդպես նայում, վարպե՛տ, մի՞թե չես ճանաչում, — հարցրեց խոսակիցը և զարմացած նրան նայեց: Նա տեսավ, որ դարբնի հետ ինչ-որ բան էկատարվում, որ նրա աչքերը դուրս են թափված և մազերը փշաքաղված:

— Ո՛վ ժողովուրդ, ո՛վ բարեկամներ, խղճացե՛ք ինձ, աղջկանս գտեք, — ասաց դարբինը, և արտասուքը հեղեղվեց նրա աչքերից: Ամբոխը լուռ էր և մտահույզ: Նահասկանում էր ծերունի հոր վիշտը, զգում էր նրա կսկիծը և ինքն էլ հուզվում:

— Լուսիկի՛ս, Լուսիկի՛ս գտեք, մի՞թե դուք խիղճ չունեք, մի՞թե դուք գութ չունեք: Սիրտս այրվում է, լերդ ու թոքս դուրս թափվում, ջիգյարս խորովում...

— Աստված մխիթարե քեզ, վարպե՛տ Ղևոնդ, Լուսիկը կենդանի է և շուտով կգտնվի, — ասաց ամբոխից մի մարդ մխիթարելով նրան: Նրանք արդեն գիտեին ծերունիՂևոնդի վիշտը:

— Չէ, չէ, նա տանջվում է, մեռնում է: Նոր բացվող վարդի պես թառամում է, մեռնում և չորանում: Ա՛խ, այս ի՞նչ վիշտ է, տե՛ր, այս ի՞նչ տանջանք է... Ես այրվում եմ, տանջվում եմ, իսկ նա չկա ու չկա...

— Աստված փարատե վիշտդ, ծերո՛ւկ, — ասաց դարձյալ նույն մարդը և փեշով աչքի արտասուքը սրբեց: Այդ միջոցին երևաց Խենթը և յուր փայտը օրորելով առաջեկավ, ուր կիտվում էր ամբոխը: Ամբոխը նրա համար ճանապարհ բացեց, և դարբին Ղևոնդին ու Խենթին շրջապատեց: Խենթը նայեց վարպետ Ղևոնդին, նայեց ուհանկարծ դեղնեց, սփրթնեց: Նա յուր եղբորը այդ դրության մեջ չէր տեսել: Մի՞թե կսկիծը ցնցել է նրա ուղեղը:

— Վարպե՛տ Ղևոնդ, ի՞նչ ես անում, այդ ի՞նչ է գրկիդ մեջ:

— Սրե՛ր, սրե՛ր, իմ շինած սրեր, իմ ձեռքով կոփած սրեր, որ թշնամիների կուրծքը մխենք, ահա առեք, — ասաց նա ու վայր ձգեց իր բեռը, որ հիրավի յուր շինած սրերնէին:

— Ի՞նչ ես անում, վարպե՛տ:

— Ի՞նչ եմ անում, մի՞թե չգիտես, ահա ես պարում եմ, Լուսիկիս հարսանիքն է, դուք էլ պարեցեք, — ասաց դարբինը և սկսեց խելագարի ցնցումներ անել:

Ամբոխը սառած, ապշած կանգնած էր Ղևոնդի շուրջը: Նա այդ րոպեին մոռացել էր յուր վիշտը, հոգսը և միայն տանջվում էր վարպետ Ղևոնդի վշտով:

— Վա՛յ ինձ, վարպե՛տ, վա՛յ իմ աչքերիս, մի՛, մի՛ անիր այդպես, ես կգտնեմ Լուսիկիդ, անպատճառ կգտնեմ, — կանչեց Խենթը՝ գլխին տալով:

— Ո՛չ, ո՛չ, նրան տանջեց, նրան սպանեց Վեստ Սարգիսը, նա էլ չի ազատվի սև ձեռքից, նա էլ չի փրկվի…

— Ո՞վ, ո՞վ է սպանել Լուսիկին, — լսվեցան ամբոխի միջից մի քանի ձայներ:

— Վեստ Սարգիսը՝ խնամակալը, — պատասխանեցին մյուսները:

— Հա՛, խնամակալը... պետք է որ այդ այդպես էլ լինի: Նա անեցիներին էլ թողել է այս նեղ դրության մեջ և ինքը կորել, — ասաց մի ձայն:

— Տեր չունենք, տիրական չունենք, բարեկա՛մ, — ասաց մի ուրիշը:

— Ի՞նչպես չունենք, իսկ Վահրամ իշխա՞նը...

— Հա, ապրի Վահրամ իշխանը, էլի նրան պիտի դիմենք, էլի նրան պիտի խնդրենք, որ մեզ անտեր չթողնի:

— Իրավ, մինչև ե՞րբ պիտի այդպես պաշարված մնանք: Գնանք մեր Վահրամի ոտքերն ընկնենք, ասենք, որ մեր կյանքը յուր ոտքերի տակ է, թող մեզ առաջնորդիդեպի պատերազմը և մենք ցույց կտանք հույներին, որ հայի մեջ չէ մեռած քաջության հոգին:

Այդպես շատ հարց ու պատասխաններ եղան ամբոխի մեջ, շատ երկար վիճաբանություններ տեղի ունեցան, բայց ոչ մի վճռի վրա կանգ չառան, ոչ մի բանչձեռնարկեցին, երբ հանկարծ Խենթը, որ մինչ այդ լուռ էր, կանչեց.

— Բարեկամնե՛ր, էլ ի՞նչու եք սպասում: Չե՞ք տեսնում, որ մեր խնամակալը մեզ անտեր է թողել, որ նա հեռանում է հենց այն ժամանակ, երբ թշնամին մեզշրջապատում է: Էլ ի՞նչ ենք սպասում, մեր Վահրամը այստեղ է, նա չի թողնի մեզ անտեր, անտիրական, նա մեզ համար կյանքն էլ չի խնայի, բայց ինչ կարող է անելմիայնակ, պետք է նրան ուժ տանք, իսկ այդ ուժը մենք ենք:

— Խենթը լավ է ասում, Խենթը, գնանք Վահրամ իշխանի մոտ, նա մեզ կփրկի, նա մեզ կազատի, — գոչեցին մի քանի ձայներ:

— Գնա՛նք, գնա՛նք, — կանչեց ամբոխը և սկսեց շարժվել, ալեկոծվել:

Խենթը առաջ ընկավ և առաջնորդեց նրանց դեպի Վահրամ իշխանի պալատը, այնինչ վարպետ Ղևոնդը դեռ շարունակում էր յուր վայրենի պարը և տխուր ձայնովԼուսիկին կանչում...

Թ

ԵՂՈՆ ԵՎ ԼՈՒՍԻԿԸ

Մինչդեռ Անին պաշարված էր հունաց զորքերով, այդ միջոցին Սուրմառու բերդաքաղաքի մեջ, մթին ու խոնավ բանտում տանջվում էր Լուսիկը, ուր, իբրև ապահովտեղ, տեղափոխված էր նա Վեստ Սարգսի հրամանով: Լուսիկը օր օրի վրա մաշվում էր և գերեզմանին մոտենում, այնինչ դուրսը պայծառ ու հրաշալի օր էր նբնությունը յուր հրաշալիքներն էր թափում: Այնտեղ, ազատ օդի մեջ, ճռվողում էին

թռչունները, շարժվում էր կյանքը, իսկ Լուսիկը շրջապատված խոնավ պատերով, զրկված էր նաև աստծո պարգևած արևի լույսից: Ախ, ինչքա՛ն չար են մարդիկ, ինչքա՛ն անգութ են, որ զրկում են նրան աստծո տված բարիքները վայելելուց:

Եվ Լուսիկը մտքերի ծովն ընկած, տխուր ու տրտում նայում է դեպի յուր նեղ բանտի միակ փոքրիկ լուսանցքը և խոր ախ քաշում: Նա հիշում է յուր սիրուն պարտեզը, այն երջանիկ ժամերը, երբ ինքը վարդի թփերից քաղում էր նոր բացվող անուշահոտ վարդեր և լսում բլբուլի երգերը, որը սեր էր երգում և յուր կուսական սիրտը թրթռացնում: Ախ, ո՞ւր ես, բլբուլ, ո՞ւր ես, սոխակ, եկ, թռիր դեպի Լուսիկի բանտի պատուհանը և այնտեղից կրկին հնչեցրու քո երգը, քո անուշ դայլայլիկը: Լուսիկնայժմ կարոտ է քո երգին, կարոտ է լսելու քո սիրո երգերը, որ վերարտադրի յուր սրտի մեջ յուր սիրուն Ստեփանիկին, յուր ծերունի հորը...

Բայց ամեն ինչ լուռ է և հուսահատ:

Չի լսվում բլբուլի ձայնը, չի հնչում նրա անուշ երգը, այնինչ Լուսիկի սիրտը քաղվում է և հոգին մաշվում: Աղբյուրի նման արտասուքները դուրս են թափվում նրաաչքերից և թրջում առանց այն էլ թաց ու խոնավ գետինը:

— Ստեփանի՛կ, հասիր ինձ, օգնիր, մի՞թե ինձ մոռացար, — ասում էր Լուսիկը և խոր հառաչում:

— Ձայն տուր, Ստեփանի՛կ, որ լսեմ քո անուշ ձայնը և ապա մեռնեմ, — հառաչեց Լուսիկը, և նրա սիրտը կարծես կտոր-կտոր եղավ:

Նա չնկատեց մինչև անգամ, թե ինչպես բանտի դուռը կամաց բացվեցավ և ներս մտավ Եղոն, որի աչքերը վայրենի կատաղությամբ լցվեցան, երբ լսեց նրա վերջինխոսքերը:

— Ստեփանի՛կ, հասիր ինձ, — դարձյալ կրկնեց խեղճ աղջիկը ու հեկեկանքը խեղդեց նրան:

Հանկարծ մի տեսակ սարսուռ անցավ Լուսիկի ամբողջ մարմնով և նա սարսափահար ցնցվեցավ. նրա ականջին մի խուլ քրքիջ դիպավ, որ կարծես գեհենից լիներդուրս գալիս, ի՞նչ էր այդ, երա՞զ, թե իրողություն: Մի՞թե գեհենի դևերն անգամ ծաղրում են Լուսիկին և սարսռեցնում նրան: Բայց ո՛չ: Լուսիկը ետ նայեց նքարացածի նման արձանացավ: Նա տեսավ յուր առջև կանգնած Եղոյին, որ դիվական քրքիջ արձակելով, վայրենի աչքերը հառել էր յուր վրա:

— Հա՛, հա՛, հա՛, խելա՛ռ աղջիկ, այդ ո՞ւմ անունն ես տալիս, մի՞թե չգիտես, որ դու Ստեփանիկին չես կարող պատկանել, — ասաց Եղոն մոտենալով Լուսիկին:

Լուսիկը ոչինչ չպատասխանեց, դեռ ապուշի նման նայում էր նրան:

— Լսիր, խելա՛ռ աղջիկ, — շարունակեց Եղոն, — ուզում եմ քեզ մի քանի առաջարկություններ անել, եթե համաձայնվես, փրկված ես:

— Հեռացիր ինձանից, — ասաց Լուսիկը խուլ ձայնով և կրկին սարսռեց: Նա տանել չէր կարող Եղոյի ներկայությունը:

— Չէ, Լուսի՛կ, լսիր ինձ, եթե ուզում ես ազատվել այս նեղ ու խոնավ բանտից: Չէ՞ որ սա քո տեղը չէ:

Լուսիկը լուռ նայում էր Եղոյին:

— Անին արդեն պաշարված է հունաց զորքերով, ուր գտնվում է քո Ստեփանիկը: Մի քանի օր կամ մի քանի շաբաթ չի անցնի, և Անին մոխրի կույտ կդառնա, և այդմոխրի մեջ կթաղվի քո Ստեփանիկը, հետևապես...

— Լռիր, անամո՛թ ստախոս, — գոռաց Լուսիկը՝ ընդհատելով Եղոյի խոսքերը: Եղոն կարծես չլսեց նրան և կրկին շարունակեց.

— Հետևապես դու պիտի մոռանաս Ստեփանիկին և պատկանես նրան, ով քո կյանքն է ազատում և քո ազատության մասին մտածում: Առաջուց հայտնում եմ, որ դունշանակված ես որպես ընծա հունաց հրամանատարին, սակայն քեզ սիրող մարդը այդ բանը պիտի խանգարե և քեզ ազատություն պիտի տա: Ասա, համաձա՞յն եսլսել նրա խորհուրդները, — ասաց Եղոն, և նրա աչքերը փայլեցին ոգևորության կրակով:

— Եվ ո՞վ է այդ մարդը, որ իմ ազատության մասին է մտածում, — ասաց սառն կերպով Լուսիկը:

— Ո՞վ է. մի՞թե չգիտես, որ հարցնում ես: Այդ մարդը, որ ցանկանում է քեզ ազատել… դու ճանաչում ես նրան:

— Ո՞վ է վերջապես, ասա նրա անունը, — ասաց Լուսիկը և սիրտը բռնեց: Նա այդ խոսքերից վատ բան էր գուշակում:

— Ես եմ, Լուսի՛կ: Ես ցանկանում եմ ազատել քեզ, — պատասխանեց Եղոն:

— Դո՞ւ:

— Այո, ես: Ես սիրում եմ քեզ, Լուսի՛կ, դու լավ աղջիկ ես...

— Ո՛հ, աստված իմ, խնայիր ինձ, — ասաց Լուսիկը և արտասուքները կրկին դուրս վիժեցին նրա աչքերից:

— Սիրիր ինձ, և մենք երջանիկ կլինենք, — շարունակեց Եղոն և ուզեց բռնել Լուսիկի ձեռքը, սակայն Լուսիկը ձեռքով հրեց իրեն մոտեցող Եղոյին և խելագարի նմանկանչեց.

— Կորի՛ր, կորի՛ր ինձանից:

— Բայց լսիր ինձ, Լուսի՛կ, իմացիր, որ ես քեզ սիրում եմ, իսկ այդ սերս ատելության մի՛ փոխիր: Վա՛յ քեզ, եթե ատելության փոխվեց սերս, — ասաց Եղոն կանգառնելով Լուսիկից մի քանի քայլ հեռու:

— Հեռացի՛ր, կորիր կամ սպանիր ինձ: Ախ, ո՞ւր է մահը, ի՞նչու նա չի գալիս, որ ինձ այս հրեշից ազատի:

— Կրկնում եմ, խելա՛ռ աղջիկ, լավ մտածիր անելիքդ, թե չէ սարսափելի կլինի վախճանդ: Հիշիր, որ ես ազատեցի քեզ իշխանի վրեժխնդրությունից: Եթե ես չլինեի, այժմ դու կույր և համր կլինեիր:

— Գեհենի՛ որդի, սպանիր ինձ, եթե ցանկանում ես, բայց չկրկնես քո խելառ առաջարկությունը:

— Լավ, տեսնենք, — ասաց Եղոն և, մի քայլ դեպի դուռը գնալով, կրկին կանգ առավ: — Լուսի՛կ, վերջին անգամ դիմում եմ քեզ, խնայիր քո մատաղ կյանքը:

— Մա՛հ, մա՛հ եմ ցանկանում, — ասաց Լուսիկը և ձեռքերով ծածկեց դեմքը:

— Լավ, միայն իմացիր, որ դու չես ստանա քո ցանկացած մահը, այլ կապրես, սակայն այդ կյանքդ կլինի մի սոսկալի տանջանք: Եղոն գիտե յուր հակառակորդիհամար տանջանքներ ստեղծել, — ասաց Եղոն և դուրս գնաց բանտից:

Լուսիկը մնաց միայնակ և ծունկ չոքելով՝ յուր աղաչավոր ձեռքերը բարձրացրեց դեպի բարձրյալը:

Լուսիկն աղոթում էր. աղոթքը միայն թեթևացնում էր նրա սրտի վիշտը, հոգու այլայլությունը...

Ժ

ԿՌԻՎԸ

Հայաստանը վտանգի մեջ էր:

Հույները ամուր օղակով շղթայել էին Անին և բաբաններ կանգնեցրել պարիսպների մոտ, որպեսզի խորտակեն դրանք և ապա, ներս խուժելով, ավերեն և կոտորածսփռեն Անիի մեջ: Եվ հույները վստահ իրենց հաղթության վրա, սպառնալիքներ էին ուղարկում անեցիներին և ծաղրում ու ծիծաղում էին այն մի բուռ հայերի վրա, որոնք հանդգնում էին պահպանել իրենց քաղաքը: Բայց հայ պահապանները լուռ էին և մտահույզ: Նրանք հույների սպառնալիքներին չէին պատասխանում, նրանցծաղրին ուշադրություն չէին դարձնում, սակայն իրենց սրտի մեջ բորբոքվում էր մի այնպիսի կատաղության բոց, որ կրակ էր տալիս նրանց սիրտն ու հոգին: Եվնրանցից ամեն մեկը մտմտում էր յուր մտքի մեջ՝ «Կռվել, մեռնել և ապա միայն քաղաքը հանձնել հույներին. թող նրանք մեր դիակները կոխկրտելով միայն անցնեն»:Եվ այդ մտքերով տոգորված նրանք հրամանի էին սպասում, որ ամեն մեկն ընդունի նահատակության պսակը և հայրենիքի սիրո համար յուր կյանքը զոհի: Եվ այդհրամանը չուշացավ, հեռվից արդեն երևաց ծերունի Վահրամ իշխանը շրջապատված հայրենիքին հավատարիմ իշխաններով: Ծերունի Վահրամը մռայլ էր ուգունատ: Նա, չկարողանալով անեցիների խնդիրքը մերժել, անցավ զորքի գլուխը և ստիպվեցավ նրանց դեպի պատերազմ առաջնորդել: Ծանրպատասխանատվություն... Եվ ծերունի Վահրամը զգում էր այդ պատասխանատվության ծանրությունը յուր վրա: Նա հասկանում էր, որ այդ կռիվը պիտիճակատագրական լինի Անիի համար և դրանից միայն կախված պիտի լինի նրա ազատությունը, իսկ ինքը մի բուռ քաջերով ի՞նչպես համարձակվի վճռականպատերազմ տալ: Յուր 30.000 զինվորներով, ինչպե՞ս դիմադրել հունաց 100.000 զինվորներին...

Բայց դառնության բաժակը լցվել էր, և հայրենիքը վտանգի մեջ էր:

Երկար պետք չէր մտածել, կա՛մ փրկություն, կա՛մ մահ: Եվ ծերունի Վահրամը գնում էր մեռնելու յուր հայրենիքի փրկության համար: Եվ Վահրամ իշխանը գնաց, շրջեց բոլոր պահակակետերը, բոլոր աշտարակները, հրամաններ տվեց և կարգադրություններ արավ: Ուր որ անցնում էր, հոգի ու սիրտ էր ներշնչում նրանց մեջ, ևնրանք ոգևորվում էին ծերունի Վահրամի վեհ պատկերը տեսնելով:

— Իշխա՛ն, պարիսպների մոտ բաբաններ են բարձրացնում և սպառնում պատերը քանդելու, — ասաց իշխաններից մեկը՝ դառնալով Վահրամին:

Վահրամը նայեց այն կողմ և հիրավի նկատեց, որ հույները մեծ գործի մեջ են և աշխատում են մի ահագին բաբան կանգնեցնել, որի ուժին չպիտի դիմանար Անիիպարիսպը:

— Մենք կայրենք դրանց բաբանները, — պատասխանեց Վահրամ իշխանը:

— Բայց ինչպե՞ս, իշխա՜ն, ո՞վ կհամարձակվի մտնել հունաց բանակը և այրել այդ բաբանը: Չե՞ք տեսնում, որ նրանք բաբանների առաջ հակերով բամբակներ ենդարսել, որպեսզի մեր ձգած քարերը ոչինչ վնաս չտան նրանց:

— Մենք կայրենք նրանց բաբանները, — կրկնեց Վահրամ իշխանը վճռական ձայնով, որի դեմ ոչինչ չկարողացավ ասել նրա հետ խոսող իշխանը:

— Բայց մինչև այրելը դեռ մի վճռական կռիվ պիտի տանք, — շարունակեց Վահրամը՝ աչքը հունաց բանակից չհեռացնելով:

— Ե՞րբ, իշխա՜ն, ե՞րբ պիտի այդ ճակատագրական կռիվը տեղի ունենա, մենք անհամբեր սպասում ենք այդ ժամին, — ասաց խոսակիցը:

— Հենց այս գիշեր, երբ կեսգիշեր լինի: Ես իսկույն կհրամայեմ, որ այդ միջոցին բոլորը պատրաստ լինեն հարձակում գործելու հունաց բանակի վրա, — ասացՎահրամը և իջավ աշտարակից:

Գիշերը վրա հասավ, հույների բանակի խարույկները վառվեցան և այնտեղ լսվեցան նրանց խինդի և ուրախության աղաղակները: Իսկ անեցիք լուռ, անձայնպատրաստվում էին գունդ-գունդ դուրս գալու Անիից: Նրանք միայն վերջին հրամանին էին սպասում, այնինչ այդ հրամանը ուշանում էր, դեռ Վահրամ իշխանը չէրերևում, դեռ իրենց հրամանատարը չկար: Ո՞ւր էր նա արդյոք և ինչի՞ էր սպասում, ոչ ոքի հայտնի չէր, միայն եթե սրատես աչքեր լինեին, եթե ուշադրությունդարձնող լիներ, կտեսներ, որ ծերունի Վահրամը այդ միջոցին ս. Լուսավորիչ եկեղեցու բեմի առաջ ծունկ էր չոքել և բազկատարած աղոթում էր առ Ամենաբարձրյալը:Նա, ինչպես արձան, լուռ էր և անշարժ: Բայց այդ լռության ու անշարժության մեջ նրա վեհ հոգին տանջվում էր, այրվում և յուր միակ հույսը Բարձրյալի վրա դրած, աղոթում էր ու ասում.

— Տե՜ր, անցրու ինձանից այս դառն բաժակը, տե՜ր, պատասխանատվությունը ծանր է թե՜ քո և թե՜ ազգի առաջ: Դու հոգի ու սիրտ ներշնչիր մի բուռ քաջերիս նհալածիր թշնամիներին...

Եվ այդ աղոթքը թեթևացնում էր 86-ամյա ծերունի Վահրամի սիրտը, և նրա փառահեղ դեմքը՝ լուսավորված կանթեղի թույլ լույսով, հետզհետե բորբոքվում էրաստվածային կրակով:

Հանկարծ նա, կարծես մի ինչ-որ բանից թեթևացած, երիտասարդի նման վեր թռավ տեղից, համբուրեց ս. խաչելությունը և ապա աննկատելի կերպով դուրս եկավեկեղեցուց: Նա դիմեց դեպի բանակ, որ կազմ ու պատրաստ վաղուց սպասում էր իրեն:

Հենց այդ միջոցին մի մարդ կարծես գետնիցը բուսավ նրա առջև և խոր գլուխ տալով՝ ասաց.

— Իշխա՛ն, ես այստեղ եմ:

— Խե՛նթ, վաղուց քեզ սպասում էի, բայց կարծում էի, թե հույները արդեն կաշիդ քերթել են, — ասաց իշխանը ուրախացած:

— Ո՛չ, իշխա՛ն, նրանք ինձ էին ուզում հիմարացնել, բայց ես նրանց հիմարացրի ու ամեն բան լավ տեսա:

— Ի՞նչ կա, Խե՛նթ: Ասա, կարո՞ղ ենք մեր մի բուռ քաջերով դիմադրել նրանց ահեղ բանակին, — հարցրեց իշխանը մտազբաղ:

— Տե՛ր, եթե նրանք արբած չլինեին ինքնավստահությամբ, դժվար էր, բայց նրանք արբած են սնոտի ուրախությամբ, Անին յուր հարուստ ավարով իրենցն ենհամարում, ուստի անհոգ իրենց բավականությամբ են զբաղված, — պատասխանեց Խենթը:

Ծերունի Վահրամի մռայլը պարզվեցավ: Այդ տեղեկությունները յուր ծրագրին խիստ հարմար էին գալիս:

— Իսկ ե՞րբ է նրանց վրա արշավելու հարմար ժամանակը:

— Հենց հիմա, եթե ցանկանաք: Այժմ նրանք քաղցր երազների մեջ են:

— Լավ, ապրիս, Խե՛նթ, քո խենթությունները զուր չեն անցնում, — ասաց Վահրամ իշխանը և հեռանալով նրանից, հրաման տվեց գնդերին բանալ Անիի դռները նարշավել դուրս:

Հայոց զորքը, որ բաղկացած էր 30.000 հոգուց, առաջ անցավ ծերունի Վահրամի առաջնորդությամբ, և քիչ հետո սկսվեց սոսկալի կռիվը: Կռիվ մահու և կյանքի: Կռիվհայրենիքի ազատության:

Հույները, վստահ իրենց թվի վրա (100.000), նույնպես հարձակվեցան հայերի վրա, և երկուստեք սկսվեց կոտորածը: Բայց հայերը կռվուում էին հուսահատ, նրանքգիտեին, որ իրենց ետև էլ նահանջի ճանապարհ չկա, որ իրենք կամ պիտի հաղթեն հույներին, կամ մեռնեն, հակառակ դեպքում պիտի տեսնեն Անիի ավերվելը նիրենց որդոց ու կանանց ճիչն ու վայնասունը:

Այդ աչքի առաջ ունենալով, հայերը ոգևորված նաև ծերունի Վահրամի խրախուսանքներից, այնպես գրոհ տվին հունաց բանակի վրա, որ հույները առժամանակմնացին սառած, կարկամած: Նրանք հայերից և այն էլ մի բուռ հայերից այդպիսի քաջություն չէին սպասում: Հայերը անխնա կոտորում էին, երբ հանկարծ հունացշարքերը խանգարվեցան և նրանց զորքը սկսեց տատանվել, շարժվել և, նկատելով յուրայինների սոսկալի կոտորածը, սարսափահար սկսեց ետ նահանջել և, մեջքըցույց տալով, դեպի փախուստ աճապարել:

— Օրհնյա՛լ է աստված, հաղթությունը մերն է, — կանչեց ծերունի Վահրամը:

— Կեցցե Վահրամը, կեցցե՛ Գագիկը, հաղթությո՛ւն, — կանչում էին ոգևորված հայերը և հալածում փախչողներին: Արյունը արդեն հոսում էր աղբյուրի պես և Անիիտափարակի վրա միայն հույներից արդեն ընկած էին մոտ 20.000 հոգի, երբ հայերը դադարեցրին հալածանքը և սկսեցին գոհաբանական մաղթանքներ վեր առաքելառ Ամենաբարձրյալը իրենց փայլուն հաղթության համար:

Հունաց գոռոզ ու ահեղ բանակը այլևս չկար Անիի պարիսպների տակ և հայերի հաղթությունը կատարյալ էր...

ԺԱ

ԴԻԱԿՆԵՐԻ ՄԻՋՈՎ

Անիի պայծառ առավոտը լուսացավ և լուսավորեց դիակների դաշտը: Սոսկալի էր այդ դաշտը: Անթիվ ու անհամար դիակներ և մարդկային վիրավոր մարմիններփռված էին այդտեղ, ուր անողորմ մահը կարծես դյութական զորությամբ, մի վայրկյանում, կարճացրել էր նրանց կյանքը...

Սոսկալի էր տեսնել ընկածների դեմքի արտահայտությունը և սառած աչքերի մեջ դեռ մնացած զարհուրանքի տպավորությունը: Այդ աչքերը, այդարտահայտությունը սոսկալի ու զարհուրելի էին և փշաքաղում էին տեսնողին:

Բայց անշարժ չէին բոլոր ընկածները: Նրանց մեջ շատերը շարժվում էին, քարշ գալիս մի տեղից մյուսը, բարձրանում մի դիակից մյուսը և իրենց ձեռքերովճանկռոտում հողը և սրտակտուր հառաչանքներ արձակում: Դրանք մահամերձ վիրավորներ էին, որոնք չկարողանալով պատերազմի դաշտից հեռանալ, մնացել էինդիակների կույտերի մեջ և զարհուրելի տանջանքներ կրելով՝ սպասում էին իրենց վերջին րոպեներին. իսկ այդ վերջին րոպեները կարծես հավիտենականությունլինեին, նրանք կարծես դիտմամբ ուշանում էին ավելի տանջելու, ավելի չարչարելու թշնամիներին... Եվ այդ վիրավորները, չդիմանալով սոսկալի տանջանքներին, վերջին ճիգն էին թափում, մի քանի քայլ քարշ գալիս, թաթախվում արյան գբերի մեջ և ապա սոսկալի հառաչանքներ արձակելով մի քանի ցնցումներ անում ու մնումանշարժ...

Անիի երփներանգ ծաղիկներով ծածկված դաշտը այդ միջոցին արյան դաշտի էր փոխվել և դիակների կույտերով ծածկվել: Լսվում էին մեռնողների մահամերձհառաչանքները և ագռավների երամների կռնչյունները, որ երամներով պտտվում էին դիակների կույտերի վերևում: Արեգակն էր միայն, որ կրկին հանգիստ, կրկինպայծառ փայլում էր այդ սգապատ տեսարանների վրա:

Հենց այդ միջոցին էր, որ Անիից դուրս եկավ մի մարդ և դիմեց դեպի պատերազմի դաշտը: Նա գնում էր լուռ ու անձայն և խորին մտածմունքի մեջ ընկղմված: Նրաաչքերը ընկած էին խոր ակնակապիճների մեջ, այտի ոսկորները դուրս էին ցցված, գլխի ճերմակ մազերը՝ զզզզված: Նա նմանվում էր կմախքի և եթե նրա փայլունաչքերը չլինեին, տեսնողը նրան կենդանի արարած չէր համարի, այլ ոսկորներից կազմված մի զանգված, որ պատած էր մորթով: Բայց նրա աչքերը վայրենի կերպովփայլում էին և աջ ու ձախ շրջում: Երևվում էր, որ նրա հոգին այդ րոպեին տանջվում էր, խիստ տանջվում, իսկ սիրտը՝ մաշվում:

Ահա նա հասավ պատերազմի դաշտ, ուր փռված էին դիակները, և ոտքը դրեց մի փռված դիակի կրծքին ու լուռ նրա սարսափահար դեմքը դիտեց: Այդ դեմքը սառն էրու ցուրտ, այնպես սառն, ինչպես այն ծերունի մարդու դեմքը, որ նայում էր այդ դիակին և ոչ մի տպավորություն չէր թողնում նրա հոգում, կարծես յուր ոտքի տակտարածված չլիներ մարդկային մի դիակ, որը մի պահ առաջ յուր նման շարժվում

էր, խոսում, ծիծաղում, իսկ այժմ անշունչ առարկայի նման ընկած է դաշտի մեջ կյուր կրծքին ծերուկներն անգամ անխնա ոտք են դնում և արհամարհում իրեն... Սա ինչ բախտի խաղալիք է, բնության սա ի՞նչ ծաղր է, որ դեռ երեկ նա կենդանի էր, իսկ այսօր՝ մեռած...

Բայց ծերունին ապուշ-ապուշ դեռ նայում էր դիակին և ցուցամատն էլ դեպի յուր ճակատը տանելով, կարծես ինչ-որ բան էր ուզում մտաբերել, բայց չէր կարողանում:Կարծես նա ճիգ էր թափում ազատվել իրեն պաշարող մտքերից և գտնել տանջող միտքը, սակայն չէր հաջողում:

Հանկարծ ծերունին ժպտաց, երևացնելով յուր դեղնած և սևացած ատամները: Այդ ժպիտը խիստ տարօրինակ էր և ահաբեկ:

— Հը՛մ... հը՛մ... լավ է, այդպես էլ պետք էր: Եվ ես էլ պետք է կոխկրտեմ այս դիակները ու այնպես անցնեմ, — ասաց ծերուկը և ոտքը դնելով մյուս դիակի կրծքին՝ անցավ առաջ:

Հետզհետե դիակները շատանում էին և ծերունին, կոխկրտելով ամեն մի դիակ, առաջ էր գնում և ինքն իրեն ասում.

— Այս մերը չէ, պետք է սրանց ոտնատակ տալ, պետք է սրանց կոխկրտել:

Հանկարծ ծերունին կանգ առավ և դեպի ագռավների երամը նայեց, որ իջավ մի կույտի վրա:

Ծերուկը նախ չէր հասկանում, թե ի՞նչ է կատարվում այնտեղ, ապա, հանկարծ, կարծես գլխի ընկավ և նրա աչքերը դուրս թափվեցան ակնակապիճներից, բարկացած նա մի քար վերցրեց և շպրտելով դեպի ագռավները՝ գոռաց.

— Է՛յ, չի կարելի, սպասեցեք, մերոնց պետք է ջոկել: Մի՞թե չգիտեք, որ այստեղ հայ էլ կա, հույն էլ: Հույնը եկել էր մեզ ջարդելու, բայց մենք նրանց ջարդեցինք: Խի՛, խի՛, խի՛, — արձակեց ծերուկը մի վայրենի քրքիջ, երբ ագռավների թռիչքը տեսավ, ապա սկսեց դիակները կոխկրտելով մի պար պարել ու կանչել.

— Ամենքդ ուրախացեք, Լուսիկիս հարսանիքն է սա… Երգեցեք, պարեցեք, չե՞ք լսում... — ասում էր նա և հետզհետե յուր խելագար ոստյուններն արագացնում:

Թշվառ ծերուկը Լուսիկի հայրն էր, դարբին Ղևոնդը, որ չգիտեմ ինչու պատերազմի դաշտն էր իջել և կոխկրտում էր դիակները...

Հենց այդ ժամանակ հեռվից երևացին երկու ձիավոր, որոնք շտապ առաջ էին գալիս դեպի դարբին Ղևոնդը: Ղարբին Ղևոնդը դեռ յուր պարն էր պարում, երբ նկատեցայդ ձիավորներին և թափանցող հայացք գցելով նրանց վրա՝ սառածի նման կանգ առավ և սկսեց սարսափահար ցնցվել: Կարծես այդ ձիավորների մեջ նկատում էրմի զարհուրելի բան, որ սառցնում էր նրա արյունը և ստիպում դողացնելու:

Անթարթ, ապուշ կտրած աչքերով նայում էր խելագար Ղևոնդը ձիավորներին և դողում. այնինչ ձիավորները արագ-արագ մոտենում էին նրան: Մի քանի քայլ էլ նայդ ձիավորները մոտեցան նրան և այն է ուզում էին առաջ գնալ, երբ դարբին Ղևոնդը սոսկալի մռնչյուն արձակեց ու կանչեց.

— Ա՛….

Ձիավորները լսեցին այդ մռնչյունը և մեխվածի նման կանգ առան: Նրանք նայեցին դարբին Ղևոնդին և զարհուրեցան: Սառը դողը ցնցեց երկուսի մարմինն էլ նքրտինքի խոշոր կաթիլները դուրս ցոլացին նրանց ճակատին:

Անցան մի քանի զարհուրելի վայրկյաններ, և հանկարծ ձիավորները խելքի գալով՝ ուզեցին առաջ սլանալ, բայց այդ միջոցին խելագար Ղևոնդը մի ոստյուն արավ նբռնելով առաջինի ձիու սանձը՝ կանչեց.

— Ողջո՛ւյն քեզ, արյա՛ն թագավոր:

Ապա խելագարի մի քրքիջ արձակեց, որ ցնցեց ձիավորի մարմինը: Ձիավորը աշխատեց խույս տալ դրանից, բայց դարբինը ամուր բռնել էր սանձը և քարարձանինման առաջը տնկվել:

Այդ ժամանակ երկրորդ ձիավորը առաջ անցավ և ասաց.

— Իշխա՛ն, մի՞թե չեք ճանաչում, սա դարբին Ղևոնդն է, որը ինչպե՞ս է, որ կենդանի է մնացել, չգիտեմ: Պետք է սպանել սրան:

— Հա՛, պետք է սպանել, — կրկնեց իշխանը և սուրը պատյանից հանեց:

— Ողջո՛ւյն քեզ, դիակների թագավոր, — կանչեց դարձյալ խուլ ձայնով դարբին Ղևոնդը և սառն աչքերով նայեց ձիավորի աչքերին, որ ինքը Վեստ Սարգիսն էր:

— Մեռի՛ր, անամոթ, — ասաց Վեստ Սարգիսը և սուրը ուղղակի դարբին Ղևոնդի կուրծքը մխեց, — իմացիր, որ արյան թագավորը արյուն է սիրում:

Դարբին Ղևոնդի աչքերում կարծես փայլակներ թռան: Նա չնկատեց մինչև անգամ, թե ինչպես սուրը մխվեցավ յուր կուրծքը և թե ինչպես սեփական արյունը սկսեցսրի վրայից վազել: Նա այդ ժամանակ չէր զգում ո՛չ ցավ, ո՛չ կսկիծ, չնկատեց մինչև անգամ, թե ինչպես ինքը բաց թողեց ձիու սանձը և գետին գլորվելով՝ գերեզմանային ձայնով գոռաց.

— Անիծյա՛լ լինես, արյա՛ն թագավոր...

Բայց ձիավորները չլսեցին նրա վերջին խոսքերը և սրարշավ դեպի Անի գնացին:

Վեստ Սարգիսը կրկին գնում էր յուր ուրախությունները միացնելու անեցիների ուրախությանը, նրանց տարած մեծ հաղթության վրա:

Բայց անեցիք էլ չէին խաբվի…

ԺԲ

ԳԱԳԻԿ Բ. ԹԱԳԱՎՈՐԸ

Պատանի Գագիկը յուր կյանքի դեմ անհաջող փորձ կատարվելուց հետո է՛լ հանգստություն չուներ: Գիշեր-ցերեկ նա մղվում էր առաջ, ուզում էր զենքը ձեռքն առնել նհայտնի կերպով, կանգնել յուր թշնամիների առաջ, դեմ առ դեմ, սակայն ծերունի Վահրամը թույլ չէր տալիս: Նա դեռ վաղ, շատ վաղ էր համարում պատանու կյանքըփոթորիկների մեջ գցել, առանց գիտենալու, թե ինչ սիրտ, ինչ հոգի կա թաքնված մատաղ հասակի մեջ: Բայց պատանի Գագիկը օր ավուր աճում էր ու զարգանում:Նրա երակների մեջ եռում էր երիտասարդական արյունը և սրտի մեջ բորբոքվում պատանեկան անհամբերությունը: Գագիկը կրակ ու մոխիր էր ուզում, որ ցույց տաաշխարհին, թե ինքը վախկոտներից չէ, թե յուր երակներում հոսում է յուր անվախ պապերի արյունը...

Եվ այդ օրը շուտով հասավ:

Երկու ձիգ տարիներ էին անցել այն օրից, երբ նա թողեց Անապատի վանքը, ուր յուր կյանքի դեմ փորձ էին արել և այդ ժամանակից, Վեստ Սարգիսի երեսիցփախուստ տալով, գտնվում էր Վայոց ձորի Հիրհեր ամրոցում: Այդտեղ էր նա, երբ լուրեր էր ստանում հունաց դեպի Անի արշավելու մասին և սիրտը քաղվում էր:

Հույներն իրենց վերջին ջարդն էին կրել Անիի պարիսպների տակ: Մի պայծառ օր, երբ Գագիկը յուր Հայրենիքի մասին մտածելով, լուռ հեռուն էր դիտում, մի խումբզինյալ մարդիկ շտապաքայլ դեպի յուր բերդն էին գալիս: Ո՞վքեր էին նրանք, թշնամի՞, թե բարեկամ. նա դեռ չգիտեր և կասկածանքով հեռուն էր նայում. այդ խումբըմոտեցավ, և պատանի Գագիկի սիրտը թունդ առավ, երբ խմբի մեջ նկատեց ծերունի Վահրամին ու մի քանի ուրիշ իշխանների, որոնց վաղուց ճանաչում էր: Ի՞նչ էրնշանակում նրանց գալուստը, մտածում էր պատանի, 17 տարեկան Գագիկը և տարակուսանքով նրանց նայում:

Բայց խումբը արդեն մոտեցել էր բերդին և շուտով ներս կմտներ:

— Լևոնի՛կ, նայիր, Վահրամ իշխանը ինքն է անձամբ մեզ մոտ գալիս: Ի՞նչ է նշանակում այդ, երևի մի կարևոր բան է պատահել Անիի գլխին, — ասաց Գագիկը՝ դառնալով մոտը կանգնած Լևոնիկին:

— Այո, տե՛ր, անշուշտ մի կարևոր բան կա: Իշխանների մեջ ես տեսնում եմ նրան և եղբորս՝ Հարպիկին և Ստեփանիկին, — պատասխանեց Լևոնիկը՝ անթարթաչքերով նայելով խմբին:

— Գնա, Լևոնի՛կ, հրամայիր ամրոցի դռները բանալ և ընդունիր մեր իշխաններին, ինչպես հարկն է:

Լևոնիկը գլուխ տվեց և հեռացավ: Քիչ ժամանակից հետո խումբը ամրոց մտավ: Գագիկը ներս մտավ բերդի ընդունարան և այնտեղ սրտատրոփ սպասում էրիշխաններին: Երբ նրանք ներս մտան, բոլորն էլ ծունկ չոքեցին պատանի Գագիկի առաջ և կանչեցին.

— Ողջո՛ւյն քեզ, հայո՛ց թագավոր:

Գագիկի աչքերը փայլատակեցին և մի տեսակ շառագունումն անցավ նրա դեմքին, որը գեղեցկացրեց ու մի տեսակ վեհ արտահայտություն տվեց նրան:

Գագիկը շփոթմունքից թե հուզմունքից մի վայրկյան լուռ կացավ, ապա, մոտենալով Վահրամ իշխանին, ոտքի կանգնեցրեց, համբուրեց նրան և դիմելովիշխաններին՝ ասաց.

— Ոտքի՛ կանգնեցեք, իմ իշխաններ և պատմեցեք իմ սիրած Հայրենիքի դրությունը: Ի՞նչ դրության մեջ է արդյոք Անին:

— Թագավո՛ր, Անին րոպե առ րոպե սպասում է քեզ: Բագրատունյաց թափուր գահը քեզ է սպասում, որպեսզի նենգ մարդիկ այլևս աչք չունենան այդ գահին, որը ըստօրինի քեզ է պատկանում: Ահա այս սրերը քո ոտքի տակ ենք դնում ու երդվում՝ հավատարիմ լինել քեզ և մեր կյանքը զոհել քո Հայրենիքի փրկության համար, — ասաց Վահրամը և սուրը մերկացնելով խոնարհեցրեց Գագիկի ոտքերի տակ: Սույնն արին և մյուս իշխանները և ապա միաբերան ասացին.

— Երդվո՛ւմ ենք:

— Ես հավատում եմ ձեզ և ընդունում ձեր առաջարկությունը: Թող աստված ինձ ուժ ու կարողություն տա տանելու այդ ծանր լուծը, որպեսզի ամոթապարտ չմնամթե՛ աստծո և թե՛ Հայրենիքիս առաջ:

— Եվ թող աստված պահե քո կյանքը, թագավո՛ր, Հայաստանը այս վայրկյանին խիստ երերուն դրության մեջ է, և կարող է կործանվել մեր պապերից ավանդածգահը:

Հույնը և ներքին թշնամին աշխատում են քարուքանդ անել այդ գահը և ավերել Անին: Հույնը այնքան սարսափելի չէ, որքան ներքին թշնամին, որ անտեսանելի ցեցինման աշխատում է գահի հիմքերը փչացնել: Ազգը Հովհաննես-Սմբատ թագավորի մահից հետո անգլուխ էր մնացել և հուսահատ տատանվում էր:

Այժմ նա, էլ չի ուզում Բագրատունյաց գահը թափուր տեսնել և խնդրում է քեզ, որ բազմես այս գահին: Ժողովրդի հետ միաբանված մենք՝ իշխաններս, Պետրոսկաթողիկոսի հետ միաբանված, համոզվեցինք, որ ժողովրդի պահանջը արդարացի է, անհետաձգելի: Ուստի Անիի հազար ու մի եկեղեցիները քեզ սպասում են, որտեսնեն քո ճակատը զարդարված թագավորական թագով և ուսերիդ ձգված արքայական ծիրանին: Այ՛դ է ահա ժողովրդի և մեր խնդիրը, — ասաց Վահրամ իշխանը:

— Թող լինի ազգի կամքը, — պատասխանեց Գագիկը:

Այդ դեպքից հետո մի քանի շաբաթ անցավ, և Գագիկը յուր շքախմբով Անի մտավ և Անիի ս. Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր կերպով թագավոր օծվեց ՊետրոսԳետադարձ կաթողիկոսից Գագիկ Բ. կոչումով (1042 թվին): Ժողովուրդը ցնծում էր ուրախությունից, բայց չէր ցնծում Վեստ Սարգսի սիրտը: Նա զգաց, որհաղթությունը տարան Վահրամյանք, որ յուր ձեռքից փախչում է ցանկացած գահը և յուր սրտի մեջ սկսեց ավելի թույներ պատրաստել, մի օր էլ, հանկարծ, թագավորական բոլոր գանձերը հափշտակելով, մտավ Անիի

միջնաբերդը և փակվեցավ այնտեղ, սպասելով թե ահա ուր որ է Գագիկը կհարձակվի յուր վրա, և այդժամանակ կսկսվի իշխանների մեջ ներքին գժտությունը: Բայց Վեստ Սարգիսը սխալվում էր յուր հաշիվներում:

Այդ գործողությունից մի քանի օր անց, երբ Վեստ Սարգիսը մտքերի մեջ ընկղմված անց ու դարձ էր անում Անիի միջնաբերդի սենյակներից մեկում, հանկարծ դռներիվարագույրները ետ քաշվեցին և այնտեղ երևաց պատանի Գագիկը: Երբ Վեստ Սարգիսը տեսավ նրան՝ սարսափեց, դողաց և սառը դողը ցնցեց նրա մարմինը:Պատանի Գագիկը՝ հայոց թագավորը, միայնակ էր յուր առաջ կանգնած, առանց ուղեկցի, առանց զորքի: Այդ ի՞նչ էր նշանակում: Չէ՞ որ ինքը րոպե առ րոպեսպասում էր, որ ահա Գագիկը յուր գնդով գրոհ կտա միջնաբերդի վրա և կսկսի յուր դեմ պատերազմը: Մի՞թե այս երազ էր, մի՞թե այս ցնորք էր...

— Ողջո՛ւյն հայոց իշխանին, — ասաց Գագիկը և մի այնպիսի հայացք գցեց Վեստ Սարգսի վրա, որ վերջինիս աչքերը մթնեցան և գլուխը սկսեց պտտվել: Նա զգում էր, որ ինքը հաղթվում է պատանու վեհ հայացքից, որ յուր անհողդողդ կամքը ընկճվում է Գագիկ Բ. հայոց թագավորից: Մի քանի րոպե Վեստ Սարգիսը չէր կարողանումաչքերը վեր բարձրացնել և հանցավորի նման լուռ կանգնած էր Գագիկի առաջ:

Նրա դեմքը երբեմն գունատվում և երբեմն կարմրում էր: Հանկարծ նա ինքն իրեն ժողովեց և նայեց Գագիկին...

Աստված իմ, ի՞նչ հրաշալի դեմք, ի՛նչ վեհ նայվածք ուներ հայոց թագավորը, որի առաջ ընկճվեց Վեստ Սարգիսը և հանկարծ, ընկնելով Գագիկի ոտքերի տակ, կանչեց.

— Թագավո՛ր, ներիր ինձ, ես մեղավոր չեմ, ես իմ ամբողջ էությամբ նվիրված եմ թե՛ քեզ և թե՛ հայրենիքիս:

Գագիկը մի վայրկյան նայեց յուր ոտքերի տակ թավալվող իշխանին, որ արտասվալից աչքերով թողություն էր խնդրում իրենից և ապա, բարձրացնելով ՎեստՍարգսին, ասաց.

— Վեր կաց, իշխա՛ն, ես ներում եմ քեզ և հավատում, որ դու քո թագավորին և քո Հայրենիքին չես դավաճանի:

— Թող երկնքի բարկությունը գլխիս թափվի, եթե դավաճանեմ քեզ և հայրենիքիս, — ասաց Վեստ Սարգիսը և տերության գանձերը հանձնեց

Գազիկին, իսկ ինքը, հեռանալով Անիից, գնաց յուր սեփական Սուրմառուի բերդաքաղաքը:

ԺԳ

ԽԵՆԹԸ ԱԶԱՏՈՒՄ Է ԼՈՒՍԻԿԻՆ

Անիի պարիսպների տակ հայերի փառավոր հաղթությունից հետո, Խենթը յուր երկար փայտը ձեռքն առած մտահույզ անցնում էր Անիի փողոցներով, երբ մեկը թևիցքաշեց: Խենթը ետ նայեց և ապուշի նման աչքերը հառեց նրան:

— Հը, ի՞նչ ես իսկական խենթի նման նայում, մի՞թե ինձ չես ճանաչում, — ասաց այդ մարդը:

— Ա՛խ, ներիր, ես մտքերի մեջ ընկղմված չճանաչեցի քեզ, բայց, ասա, ի՞նչ ես ուզում ինձնից, ի՞նչ հրաման է ուղարկել Գոհարիկը:

— Դու իսկույն պիտի տեսնես Գոհարիկին: Նա կարևոր լուրեր ունի քեզ հաղորդելու, միայն պիտի աշխատես, ամեն զգուշություն պիտի ձեռք առնես, որ քեզ այնտեղոչ ոք չնկատի:

— Լավ, դու գնա, — ասաց Խենթը:

Երբ խոսակիցը հեռացավ, Խենթը շուրջը նայեց և փողոցի ամայությունը տեսնելով, շտապ քայլերով առաջ անցավ դեպի Վահրամի պալատը: Այդտեղ նա կանգ առավն զարմացած դեպի իշխանի պալատի դուռը նայեց, ուր մեկ-մեկ ներս էին մտնում իշխանները: Երևում էր, որ Վահրամ իշխանը այդ երեկո խորհուրդ ուներ, բայց թեի՞նչ խորհուրդ և ի՞նչի համար, այդ հայտնի չէր Խենթին և նրա բոլորովին հոգն էլ չէր իմանալու:

— Իմ իշխանը կրկին խորհուրդ ունի, ո՞վ գիտե էլ ինչ չարություններ է արել Վեստ Սարգիսը: Սակայն այդ իշխանի գործն է, իսկ իմ գործն է միայն Լուսիկիս գտնել, որը չկա ու չկա: Ա՛խ, եթե ես իմանայի նրա տեղը, այն ժամանակ նրան հեշտ էր ազատելը: Անիրավ Վեստ Սարգիսը շատ շուտ իմացավ, որ ես նրա տեղը գտել եմ և իրպալատի ներքնատնից հեռացրեց նրան ով գիտե ո՞ւր… Բայց անցնենք առաջ, տեսնենք ի՞նչ է ասում Գոհարիկը, — մտածեց Խենթը և շրջելով Վահրամի պալատիգլխավոր մուտքի ետևը՝ գաղտնի դռնով ներս մտավ պալատ, որի սենյակներից մեկում գլուխը ձեռքերի մեջ դրած, մտահույզ նստած էր Գոհարիկը:

Երբ Գոհարիկը տեսավ Խենթին, ուրախացած դիմեց նրան.

— Ներսե՛ս, իմ Ներսե՛ս, վերջապես եկար դու:

— Ես միշտ պատրաստ եմ կյանքս զոհելու քեզ համար, իշխանուհի՜, հրամայիր:

— Ես գիտեմ, Ներսե՛ս, թե ինչ դժվարություններ դու հանձն ես առել, բայց մեր կորուստը դեռ չգտնվեց:

— Ա՛խ, իշխանուհի՜, գիշեր-ցերեկ Լուսիկի վրա եմ մտածում, բայց նրա հետքն անգամ չեմ գտնում… Օ՛, եթե իմանայի, թե նա ո՞ւր է...

— Ինձ հայտնի է, սիրելի՜ Ներսես, և հենց դրա համար էլ շտապով կանչեցի քեզ: Դու պիտի շտապես ազատել նրան:

— Մի՞թե այդ ճշմարիտ է և դու գիտես նրա տեղը, մի՞թե նա կենդանի է, — ասաց Խենթը, և նրա աչքերից ուրախության կայծեր թռան:

— Այո՛, նա կենդանի է, բայց մաշվում է խոնավ ու ցուրտ բանտի մեջ: Դու պիտի հասնես շուտով և ամեն հնար գործ դնես նրան ազատելու:

— Ո՞ւր է նա, իշխանուհի՜, ես իսկույն կթռչեմ այնտեղ: Ա՛խ, եթե նրա հայրը կենդանի լիներ և գոնե մի անգամ տեսներ յուր Լուսիկին:

— Ո՞ւմ հայրը, — հարցրեց Գոհարիկը սարսափահար:

— Լուսիկի հայրը, իշխանուհի՜, դարբին Ղևոնդը էլ չկա:

— Ի՞նչպես թե չկա, ի՞նչ պատահեց նրան:

— Քեզ արդեն հայտնի էր, որ նա վշտին չկարողանալով դիմանալ՝ խելագարվել էր: Այնուհետև միշտ Լուսիկին ձայն տալով շրջում էր փողոցներում և երբ տեղիունեցավ հունաց ջարդը, նրան Անիից դուրս, դիակների մեջ սպանված գտանք, բայց թե ո՞վ էր նրան սպանել, հայտնի չէ,— ասաց Խենթը՝ արտասուքը սրբելով:

— Խե՛ղճ ծերուկ, — պատասխանեց Գոհարիկը հուզված:

— Բայց թողնենք այդ, օրիո՜րդ, ցավելով ոչինչ չենք օգնի, հայտնիր թե որտե՞ղ է Լուսիկը:

— Լուսիկը գտնվում է Սուրմառուի բերդում, Վեստ Սարգսի բանտերից մեկում:

— Ինչպե՞ս, այժմ նրան Սուրմառու են տարել, իբրև ապահով տեղ, հա՛... բայց դա էժան չի նստի Վեստ Սարգսին:

— Բայց լսիր, Ներսե՛ս, քեզ հայտնի է, որ այժմ Վեստ Սարգիսը Անիումն է: Որպեսզի մենակ չչարչարվես Լուսիկին ազատելու համար, ես դրա ճարն էլ եմ մտածել:

— Ի՞նչպես, իշխանուհի՛, — հարցրեց Խենթը և ապուշ-ապուշ օրիորդին նայեց: Այդ բոլորը Խենթը երազ էր կարծում:

Նա չէր հավատում, որ Լուսիկը կենդանի է, և եթե կենդանի է, այդպես հեշտությամբ չի կարելի նրան ազատել Սև Մարդու իշխանությունից, ինչպես օրիորդն ասում է:Չէ՞ որ Սև Մարդը երկաթե ճիրաններ ունի...

— Դու պիտի գնաս Սուրմառու և ներկայանաս այնտեղի իշխանին, որպես Վեստ Սարգսից ուղարկված մարդ:

— Բայց նրանք ինձ չեն հավատա:

— Կհավատան: Ահա, տեսնո՞ւմ ես այս նամակը, լավ նայիր, սա կնքված է Վեստ Սարգսի կնիքով և երբ ներկայացնես, նրանք քեզ կհավատան, ներս կթողնեն ու, բացի դրանից, պահանջդ կկատարեն. այս նամակի մեջ գրված է, որ Լուսիկին անմիջապես քեզ հանձնեն:

— Իսկ ո՞րտեղից ձեռք ձգեցիր Սև Մարդու կնիքը, — հետաքրքրվեց Խենթը, որ ուրախությունից քիչ էր մնացել խելքը թռցներ:

— Այս կնիքը կեղծ է, բայց այնքա՛ն նման, որ իսկականից չի ջոկվի:

— Տուր ինձ, դու կատարյալ հրեշտակ ես և թող տերը պահպանե քեզ, — ասաց Խենթը և առնելով նամակը՝ ծոցը դրեց:

— Բայց զգույշ, շատ զգույշ պիտի լինես, Ներսե՛ս, և խենթության նշան անգամ չպիտի ցույց տաս: Դու ամեն կերպ պիտի խուսափես, որ քեզ չմատնես, թե չէ դու էլ, Լուսիկն էլ կորած եք հավիտյան:

— Այդ իմ գործն է, իշխանուհի՛,— ասաց Խենթը և վեր կացավ:

— Չմոռանաս, որ Լուսիկին ազատելուն պես սենյակս բերես, նա այստեղ կմնա մինչև Ստեփանիկի գալը:

— Այո՛, Խենթը այդ խոստանում է, նա կտեսնի յուր եղբոր աղջկա հարսանիքը, — ասաց Խենթը և խոր գլուխ տալով դուրս գնաց սենյակից:

— Աստված տա այդպես լինի, — ասաց Գոհարիկը և նրա աչքերը լցվեցին արտասուքներով:

Խե՛ղճ Գոհարիկ. նրա սիրտն էլ էր տրոփում, նրա հոգին էլ էր սպասում Հարպիկին, սակայն չարաբաստիկ հանգամանքները հեռացնում էին սրտերը և արգելք լինումնրանց միացմանը...

Խենթը, Գոհարիկի սենյակից դուրս գալով, շտապ քայլերով հեռացավ: Մութը նոր էր իջնում, երբ նա յուր շորն ու կերպարանքը փոխած, նժույգ նստած, գնում էրդեպի Սուրմառուի բերդաքաղաքը: Նա անհամբերությամբ մտրակում էր ձիուն, թեև խեղճ կենդանին սլանում էր որքան ուժ ուներ, իսկ Խենթը դեռ կարծում էր, որձին շատ կամաց է գնում: Երբ Խենթը բավականին հեռացավ Անիից, հանկարծ ձիու ընթացքը դանդաղեցրեց և սկսեց յուր անելիքի մասին մտածել: Ամեն բանի, ամենմիջոցի ճարն ուներ, հնարքը գիտեր, միայն մի բան նրան երկյուղ էր ազդում ու սարսափեցնում և այդ բանը Լուսիկին տեսնելու րոպեն էր, երբ Լուսիկը իրենճանաչելուն պես ճիչ կարձակի և կփաթաթվի յուր վզով, այդ ժամանակ ամեն ինչ կպարզվի և անշուշտ կասկածի տակ կընկնի թե՛ ինքը և թե՛ յուր բերած նամակը...Ինչպե՞ս անի, ինչպե՞ս հասկացնի Լուսիկին, որ նա զգույշ մնա, ձայն-ծպտուն չհանի, երբ իրեն տեսնի... Ահա այդ բաները վրդովում էին Խենթին և հուզում նրամտքերը:

— Է՛հ, ինչ լինում է թող լինի, տերը ինձ օգնական կլինի, — ասաց Խենթը և առաջ գնաց: Եվ երբ մի քանի օրից հետո մտավ Սուրմառուի բերդաքաղաքը, նրա սիրտըթունդ առավ, բայց իրեն զսպեց և ներկայանալով բերդաքաղաքի իշխանին՝ նամակը հանձնեց նրան:

Սուրմառուի բերդաքաղաքը պատկանում էր Վեստ Սարգսին, ուր նա նեղ ժամանակները ապաստան էր գտնում: Այստեղ նա յուր նման մի ժանտ, անպիտան մարդուտեղակալ էր կարգել, այնպես, որ երբ Խենթը նամակը նրան հանձնեց, նա մի խոր, թափանցող հայացք գցեց Խենթի վրա և ապա առավ նամակը:

Խենթը յուր դեմքի և ոչ մի մկանունքը չշարժեց, այլ անհոգ կերպով դիտում էր Սուրմառուի բերդի իշխանին:

Երբ իշխանը կարդաց նամակը, դարձավ դեպի Խենթը և ասաց.

— Դու ե՞րբ ես ուզում վերադառնալ:

— Վաղը, լույսը բացվելուն պես, — պատասխանեց Խենթը:

— Լավ, ես կհանձնեմ քեզ Լուսիկին, բայց զարմանում եմ, թե ինչո՞ւ իշխանը Եղոյի փոխարեն քեզ է ուղարկել:

— Եղոյին ուղարկեց հունաց հրամանատարի մոտ խիստ կարևոր գործի համար, — ասաց Խենթը առանց կարմրելու:

— Հա, երևի շատ կարևոր գործ է եղել, թե չէ նա կգար Լուսիկի համար: Գիտե՞ս՝ Եղոն Լուսիկի սիրուց զժված է և գիշեր-ցերեկ քուն չունի և մինչև հիմա Լուսիկի հետ միբան կպատահեր, եթե Եղոն չլիներ:

— Եվ Վեստ Սարգիսն էլ Լուսիկին Եղոյի համար է Անի բերել տալիս, որպեսզի վերադառնալուն պես պսակի նրա հետ, թե չէ Եղոն հանձնառու չէր լինում հունացհրամանատարի մոտ գնալու:

— Հա, երևի այդպիսի բան է եղել: Բայց արի դու հանգստացիր, — ասաց իշխանը և Խենթին ներս տարավ:

Խենթը կերավ, խմեց, կշտացավ, բայց գործը դեռ չէր վերջացրել. նա մի ամբողջ գիշեր ուներ մինչև Լուսիկին տեսնելը և այդ գիշերը զուր չպիտի անցկացներ, պետքէր իմաց տալ Լուսիկին, որ նա զգույշ մնա իրեն տեսնելու ժամանակ, և այդ բանն էլ շուտ գլուխ բերեց: Խենթը շուտով իմացավ նրա տեղը և կես-գիշերին զգույշմոտեցավ նրա պատուհանին: Լուսիկը նրա ձայնը լսելուն պես սարսռեց, դողդողաց. նա չէր հավատում, թե Խենթն է, բայց Խենթը ամեն բան զգուշացրեց և հայտնելով յուր գալու պատճառը՝ հանգիստ սրտով յուր սենյակը քաշվեց ու սպասեց լուսանալուն:

Դեռ արևի ճառագայթները նոր էին տարածվել երկրի վրա, երբ նա ոտքի կանգնեց և սկսեց պատրաստություններ տեսնել ճանապարհվելու: Այդ ժամանակ երևացՍուրմառուի բերդի իշխանը և առաջնորդեց Խենթին դեպի Լուսիկի խուցը: Երբ բացվեց խցիկի դուռը, Խենթը յուր սիրտը բռնեց, որ կարծես հարյուրավոր տեղիցխոցվեց. յուր առաջ կարծես Լուսիկը չլիներ կանգնած, այլ նրա ուրվականը: Ինչ օրն էր գցել սև ձեռքը խեղճ Լուսիկին:

— Օրիո՛րդ, մեծ իշխանի հրամանով քեզ Անի պետք է տանեմ, համաձա՞յն ես ինձ հետ գալու, — ասաց Խենթը դողդոջուն ձայնով:

Իշխանը Խենթի երեսին նայեց. նրա սրտի մեջ կասկած մտավ՝ նկատելով Խենթի ձայնի դողդողալը: Բայց այդ միջոցին խոսեց Լուսիկը և համարյա փարատեցիշխանի կասկածը:

— Տարեք ինձ, ուր կամենում եք, եթե այդ Վեստ Սարգիս իշխանն է հրամայել, — պատասխանեց Լուսիկը առանց Խենթին նայելու:

— Այո՛, մեծ իշխանը քո վիճակը պետք է բարվոքի և այսուհետև դու լավ կապրես:

— Շնորհակալ եմ, ես այսուհետև կլսեմ նրան և նրա խորհրդի համաձայն կպահեմ ինձ, — պատասխանեց Լուսիկը:

Այնուհետև նրանք դուրս եկան խցից և երբ պատրաստ էին ձի նստելու ու ճանապարհ ընկնելու, Սուրմառուի բերդի իշխանը դիմեց Խենթին և, սուր հայացք գցելովնրա վրա, հարցրեց.

— Դու առաջուց ճանաչում էիր Լուսիկին:

— Ո՛չ, իշխան: Ես առաջին անգամն եմ տեսնում սրան:

Ինչպես երևում էր, իշխանի կասկածը դեռ չեր փարատվել, և վա՛յ երկուսին էլ, եթե կամ Լուսիկը, կամ Խենթը մի անզգույշ խոսք կամ քայլ անեին:

Բայց Խենթը շուտով մնաս բարև ասաց Սուրմառուի բերդի իշխանին և Լուսիկի հետ առաջ ընթացավ: Երբ բավականին հեռացան, Խենթը գրկեց յուր եղբոր աղջկան ներկար ժամանակ բաց չէր թողնում գրկից: Երկուսի աչքերն էլ լրցվեցին և միայն այդ արցունքներն էին ամոքում երկուսի վիշտը:

Այնուհետև Խենթը Լուսիկին ապահով Անի տարավ և հանձնեց Գոհարիկի պաշտպանությանը:

ԺԴ

ՉԱՐ ՀՈԳԻՆ

Դավաճանի հույսերը փշրվում էին, նպատակը խորտակվում: Դառնացած սրտով նա շրջում էր Սուրմառուի բերդաքաղաքի մեջ, յուր պալատում և սոսկալի մտքերըկրծում էին նրա սիրտը: Վեստ Սարգսի գոռոզ սիրտը չէր հաշտվում այն պարտությանը, որ կրեց ինքը: Ինչպե՞ս կարող էր տանել այդ ստոր պարտությունը: Չէ

որ նաարդեն իրեն պսակյալ թագավոր էր համարում, իսկ Գագիկին՝ յուր ձեռքին իբրև մի խաղալիք, մի մրջյուն, որին յուր մատների մեջ կարող էր ճզմել, ջարդել, տրորել...

— Ո՛հ, դառն է իմ դրությունը, — կանչեց Վեստ Սարգիսը և երեսը ծածկեց ձեռքերով, — դառն է, բայց այդ դառնությանը պիտի վերջ դրվի, պիտի մի սահման դրվի, կամ պիտի փչանա, կորչի, ջնջվի աշխարհիս երեսից Վեստ Սարգիսը, կամ այդ վերջը պիտի քաղցրանա Վեստ Սարգսի համար: Ինչպե՞ս թողնել, որ իմ երկաթե կամքըխորտակվի, իմ նպատակները օդում ցնդեն: Օ՛, ինչքա՛ն անքուն գիշերներ եմ անցկացրել այդ նպատակներիս համար, ինչքա՛ն տանջանքներ կրել, և այդ ամենըզո՛ւր, բոլորովին զո՛ւր պիտի անցնեն: Բայց չէ՞ որ քանի միտքս եմ բերում այդ անհանգիստ գիշերները, քանի հիշում եմ կրածս տանջանքները, մարմինս սարսռում էև մազերս՝ փշաքաղվում...

Թողնեմ ցնորքները... կանգ առնեմ իմ արյունով լի ճանապարհի վրա... հետո՞... ի՞նչ կդառնամ ես — մի անպետք արարած, մի չնչին մարդ, որին ամենքը պիտիարհամարհեն, որից ամենքը պիտի երես դարձնեն և թքեն վրան: Չէ՞ որ այդ ժամանակ իմ եղկելի զոհերը լեզուները կբարձրացնեն և հանդուգն կերպով կծաղրեն այնմարդուն, որի ձեռքից նույնիսկ Հովհանես-Սմբատ թագավորն էր դողում… Ո՛չ, ո՛չ, այդ դրության մեջ ես չեմ կարող ապրել, ահա սա վերջ կդնի կյանքիս և...

Եվ Վեստ Սարգիսը մոլեգնաբար վեր թռավ տեղից, սուրը պատյանից հանելով ուզեց մխել յուր կուրծքը, բայց այդ միջոցին նրա ձեռքը կանգ առավ և աչքերըփայլատակեցին մի այնպիսի զարհուրելի կրակով, որ տեսնողը ակամայից քար կկտրեր:

Վեստ Սարգիսը սուրը իջեցրեց, կրկին նստեց փափուկ գահավորակին և կանչեց.

— Չէ՛, հիմարություն է իմ արածը, այս սրով և թույնով դեռ շատերին պետք է երանելիների աշխարհն ուղարկել և ես դեռ պիտի գնամ դարձյալ իմ ընտրածճանապարհով:

«Զղջում» խոսքը գոյություն չունի Վեստ Սարգսի համար: Նրա սիրտը սառն է և անհողդողդ. ուստի, դու, չա՛ր ոգի, զորացրու ինձ, թափիր երակներիս մեջ դժոխքիսասանեցուցիչ կրակը, մի՛՛ թողնիր ինձ հուսահատվելու, այլ բազմացրու քո սև հոգու զոհերը, միայն թե արժանացրու ինձ նպատակներիս

իրագործմանը: Եկ, չա՛րոգի, Վեստ Սարգիսը դաշինք է կապում քեզ հետ, ծախում յուր հոգին, միայն թե գահը ինձ տաս...

Այդպես ասաց Վեստ Սարգիսը և հիրավի, կարծես թե չար ոգին բուռն ուժով ցնցեց նրան, և նա նոր ուժ ստացավ: Դաժան ու սև մտքերը մեկը մյուսի ետևիցպաշարեցին նրա հոգին, և նա, Վեստ Սարգիսը, այդ դիվական մտքերը յուր ուղեղում ամրապնդելով, ժպտում էր, երևացնելով յուր սևացած ատամները: Այդ միջոցինխինդն ու ուրախությունը պատել էին Վեստ Սարգսին, և նրա դեմքին այլևս չէր երևում մի րոպե առաջ եղած հուսահատությունը, երբ նա սուրը ձեռքինպատրաստվում էր անձնասպանություն գործել:

— Դեպի գո՛րծ, դեպի գո՛րծ,— կանչեց Վեստ Սարգիսը և ուրախացած նստեց սեղանի մոտ և սկսեց զանազան թղթեր գրել:

Երբ վերջացրեց յուր գրությունները, հոգնած թիկն ընկավ գահավորակին և մի քանի րոպե այդ գրության մեջ մնալուց հետո վեր թռավ տեղից և մոտենալովլուսամուտներից մեկին՝ բարձրացրեց ծանր վարագույրը և դուրս նայեց:

Մութը արդեն անցել էր, և արշալույսի կենարար լույսը տարածվել. սկսվում էր մի սիրուն, Հայաստանի պայծառ առավոտներից մեկը, երբ հեռու, արևելյան հորիզոնիերկնակամարը ծածկվել էր ծիրանագույն շերտերով, ուր արևի ճառագայթները գնդակների նման լույսի փնջեր էին արձակում և մի քանի կույտ ամպերի հետխաղում, այդ ամպերը երբեմն կարմրում էին, երբեմն ծիրանի հագնում, իսկ երբեմն կրակի նման շիկանում: Հրաշալի էր այդ երկինքը, հրաշալի էր բնությունը, կանաչապատ լեռներն ու ձորերը: Այդ միջոցին էր, որ բարձրաթռիչ արծիվը օդի մեջ էր սավառնում, ճնճղուկը տանիքի վրա ճռվողում, ծիծեռնակը յուր երգը երգում, իսկ սոխակը վարդի թփին նստած դայլայլում... Բայց բնության այդ հրաշալիքը ոչ մի ազդեցություն չունեցավ Վեստ Սարգսի մռայլ հոգու վրա: Նրա դեմքը ամպոտէր ու գունատ: Նա կարծես բնության հրաշափառության վրա զարմացած կրկին ցած թողեց վարագույրը և սկսեց անց ու դարձ անել սենյակի մի ծայրից մյուսը:Երկար նա շրջում էր առանց դադար առնելու, երբ հանկարծ կանգ առավ և կանչեց յուր ծառաներին: Երկու ծառա նրա հրամանը լսելուն պես ներս եկան նքարացածի նման կանգ առան դռների մոտ:

— Կանչեցեք այստեղ Եղոյին, — հրամայեց Վեստ Սարգիսը:

Ծառաները հեռացան և քիչ հետո ներս մտավ Եղոն և լուռ կանգնեց դռների մոտ: Եղոյի դեմքը նույնպես մռայլ էր ու գունատ: Կարծես նա էլ յուր տիրոջ նման մի քանիանքուն գիշերներ էր լուսացրել:

— Եղո՛, ի՞նչ է պատահել քեզ, դու գունատ ես և դժգույն:

— Ոչինչ, տե՛ր, — պատասխանեց Եղոն:

— Բայց դու տխուր ես, հուսահատ:

— Այդ կանցնի, տե՛ր, Լուսիկին կորցնելուց հետո ես հիրավի տանջվում եմ:

— Շուտով դու կստանաս քո Լուսիկին, Եղո՛, մի՛ վհատիր:

— Ինչպե՞ս, տե՛ր, — պատասխանեց Եղոն, և նրա աչքերից ուրախության կայծեր թռան:

— Դու դեռ չես հասկանա թե ինչպես, սակայն վստահ եղիր: Երկար ժամանակ չի անցնի և Հայաստանի գահին Գագիկի փոխարեն քո տերը կլինի բազմած: Այժմ լսիր, ինչ եմ ասում: Եղո՛, դու գիտես, որ միայն քեզ վրա եմ վստահում: Ահա այս նամակները վստահելի ձեռքով պիտի ուղարկես մեկը հունաց հրամանատարին, որ նահանձնե Կոստանդին Մոնամախոս կայսեր, իսկ մյուսը՝ Դվինի Աբուսվար էմիրին: Երկու նամակն էլ շատ կարևոր են և հետևանքն էլ խիստ ծանր կլիկի Գագիկի ուՎահրամյանների համար. թող Հայաստանը մնա երկու սրի մեջ, և այն ժամանակ տեսնենք Գագիկը ի՞նչ պիտի անի: Իսկ եթե այդ դրությունից էլ դուրս գա Գագիկը, այն ժամանակ ուրիշ միջոցներ կգտնենք նրան պատժելու:

— Տե՛ր, ո՞րն է ամենից կարևոր նամակը, հունա՞ցը, թե էմիրինը: Դուք գիտեք, որ դրանցից մեկը արևմուտք է գտնվում, իսկ մյուսը՝ արևելք:

— Նախ՝ հունացը, այդ ավելի կարևոր է:

Եղոն գլուխ տվեց և հեռացավ, Իսկ դավաճանը ուժասպառ անկողին մտավ ու քնեց՝ հրամայելով ոչ-ոքի չընդունել: Նա, ըստ երևույթին, վախենում էր լույսից. գիշերըյուր չար խորհրդի վրա էր մտածում, իսկ ցերեկը ուզում էր յուր խոնջացած մարմնին հանգստություն տալ. սակայն հեռու էր նրանից այդ ցանկալիհանգստությունը...

ԺԵ

ՑԱՆՑԻ ՄԵՋ

Մինչդեռ օձը դարաններ էր լարում Գագիկ թագավորի ու Անիի դեմ, անեցիք միամիտ նստած հրճվում էին իրենց պատանի թագավորի վրա և նրա անունով երդվում:Նրանք տեսնում էին, որ իրենց թագավորը, թեև պատանի, բայց քաջ է, խելոք և համարձակ: Նրանք զգում էին, որ այդ պատանի թագավորի ձեռքի տակ կարողանումեն ազատ շունչ քաշել, որովհետև Գագիկ Բ-ի երակներում հոսում էր յուր քաջ նախահայրերի արյունը և նա չէր թույլ տալիս ո՛չ հույներին և ո՛չ ուրիշ թշնամիներիհարձակվելու Հայաստանի վրա ու ավերելու այն: Բայց ժողովուրդը շատ միամիտ էր դատում: Նա առժամանակ մոռացել էր Վեստ Սարգսին, նրա երկաթյաճիրանները, մոռացել էր, թե հույնի հարձակմունքը և թե Վեստ Սարգսից կրած նեղությունները: Այդպես է ժողովուրդը, վտանգն անցնելուն պես անձնատուր է լինումանհոգության և զբաղվում յուր առօրյա հոգսերով, առանց ապագայի մասին մտածելու, առանց յուր գլխին գալիք չարիքի մասին հոգալու: Սակայն այդպես չէինմտածում ծերունի Վահրամը և յուր միաբան իշխանները: Նրանք տեսնում էին Վեստ Սարգսի չարանենգ դիտավորությունները և գուշակում ազգին հասանելիքվտանգը, սակայն նրանց լսող չկար: Պատանի Գագիկը որքան քաջ, համարձակ և խելոք էր, այնքան էլ անփորձ, իսկ այդ անփորձության հետ ինքնավստահ: Ամենանգամ, երբ ծերունի Վահրամը զգուշացնում էր Վեստ Սարգսից, պատանի Գագիկը ուսերն էր թոթափում և ինքնավստահությամբ ասում. «Ո՛չ, Վեստ Սարգսից ես չեմվախենում»:

Բայց Վահրամ իշխանը դեռ չէր հուսահատվում, դեռ հույս ուներ, որ այսպես թե այնպես ազդեցություն կունենա Գագիկի վրա և այդ հույսով կխորտակի ՎեստՍարգսի բոլոր որոգայթները: Սակայն մինչև այդ, հունական զորքերը, դրդված Վեստ Սարգսից, կրկին մոտեցան Անիին, իսկ մյուս կողմից Դվինի Աբուսվար էմիրն էլյուր գնդերը շարժեց Անիի վրա, և այդպիսով Գագիկ թագավորը մնաց երկու սրի մեջ: Ի՞նչ պիտի աներ յուր մի բուռ քաջերով երկու ահեղ բանակին: Նա մնացել էրշվարած: Բայց շուտով այդ կրիտիկական դրությունից էլ դուրս եկավ: Գագիկը շտապեց Դվին Աբուսվար էմիրին ընծաներ ուղարկել և հաշտություն խնդրելԱբուսվարը զիջեց Գագիկի խնդրին և յուր գնդերը կրկին ետ քաշեց: Այդ ժամանակ Գագիկը յուր բոլոր ուժով հարձակվեց հունաց գնդերի վրա, որոնք Ասիդ և Նիկողոսզորապետերի հրամանատարությամբ արդեն պաշարել էին Անին, և մի այնպիսի ջարդ տվեց, որ նրանք սարսափահար փախուստ տվին Անիի պարիսպների տակից ևերկու տարի շարունակ դադարեցին Անիի մասին մտածել:

Այնուհետև, երբ Գագիկը հաստատապես իմացավ, որ այդ բոլորը Վեստ Սարգսի գործն է, որ նա կրկին չի դադարում յուր դեմ

գործելուց, բորբոքվեց, վառվեց, բռնկվեցու մի քանի մարդով անսպասելի կերպով ներս մտավ Սուրմառուի բերդաքաղաքը՝ Վեստ Սարգսի մոտ և գոռաց.

— Իշխա՜ն, մինչև ե՞րբ դու պիտի այդ վատ և զազրելի ճանապարհով գնաս:

Վեստ Սարգիսը կրկին նեղն ընկավ, նա զգաց, որ հաղթվում է, որ չի կարողանում դիմադրել, հակառակել նրան, ուստի ավելի լավ համարեց դիմել խորամանկությանն ներումն խնդրել պատանի թագավորից, ծունկ չոքեց նրա առաջ և արտասվաթոր աչքերով ասաց.

— Թագավո՜ր, ես արդար եմ...

— Ո՜չ, այլևս ինձ չես կարող խաբել, — պատասխանեց Գագիկը:

— Ներիր ինձ, տե՜ր, — ասաց Վեստ Սարգիսը մի այնպիսի սոսկալի ձայնով, որ ներկա եղողների մարմնով մի տեսակ սարսուռ անցավ:

Գագիկը նայեց նրան, նայեց յուր ոտքերի տակ սողացող իշխանին և խղճահարվեց, արդեն պատրաստվում էր ներել, երբ յուր և Վեստ Սարգսի հայացքներն իրարհանդիպեցան:

Գագիկը սարսռաց: Վեստ Սարգսի աչքերի մեջ մի այնպիսի կրակ կար, որ պատանու մարմինը ցնցեց, և նրա հոգու մեջ գտնված խիղճը մի րոպեում ցնդեց. հիրավիայդ վայրկյանին Վեստ Սարգսի աչքերում փայլում էր ատելության մի այնպիսի մոլի կրակ, որ կարծես գեհենի միջից լիներ արտավիժելիս... Վեստ Սարգիսնարտաքուստ իրան ձևացնում էր խղճալի, ողորմելի մի արարած, որ յուր հզորի ոտքերն ընկած, աղերսագին թողություն էր խնդրում, իսկ ներքուստ, նրա հոգու մեջ, ատելության մի այնպիսի կրակ էր բորբոքվում, որ եթե հնար ունենար, կխմեր պատանի Գագիկի արյունը...

— Ներիր ինձ, թագավո՜ր, ես մեղավոր չեմ, — կանչեց նա դարձյալ և նրա աչքերից կրկին ցայտեցին արտասուքի առատ աղբյուրներ, ի՞նչ արտասուքներ էին դրանք, թողությա՞ն, թե կատաղի վրեժխնդրության, այդ ոչ ոք չիմացավ, միայն թե Գագիկը այս անգամ չխաբվեցավ և հրամայեց բռնել Վեստ Սարգսին ու տանել Անիբանտարկելու, ապա, նրա ձեռքից առնելով բոլոր բերդերը, դարձավ Անի:

Բայց Վեստ Սարգիսը Անիում երկար բանտարկված չմնաց, կրկին սկսեց յուր ճարպիկ լեզուն բանեցնել, հասկացավ, որ գինու զորությամբ Գագիկին ընկճել

չէրհաջողվում, ուստի հարկ համարեց մի ուրիշ ճար գտնել, այդ ճարն էլ գտավ, որ սոսկալի ազդեցություն ունեցավ թե՛ Գագիկի և թե՛ Հայաստանի վիճակի վրա:

Վեստ Սարգիսը նախ մտածեց բանտարկությունից ազատվել, որը և շուտով հաջողվեց: Գագիկը ընկճվեց նրա ճարտար լեզվից և նրան բանտարկությունից ազատեց:Եվ դրանով էլ չբավականանալով՝ նա Վեստ Սարգսին մեծ պատիվների հասցրեց:

Վեստ Սարգիսը հրճվեց: Նա նոր հասկացավ յուր ուժը, այն ուժը, որը կայանում էր ո՛չ թե զենքի, այլ լեզվի մեջ: Նա կարճ միջոցում Գագիկին յուր ձեռքն առավ, ցույցտվեց, որ ինքը թագավորի բարեկամն է, և Գագիկի խորհրդականը դարձավ:

Գագիկը յուր անփորձությամբ ընկավ նրա ճիրանների մեջ և անզգալի կերպով բռնվեց նրա պատրաստած ցանցի մեջ:

Գառը գազանի ճիրանների մեջ ընկավ, և այդ գազանը կամաց-կամաց ծծում էր յուր զոհի արյունը:

Ի՞նչ պիտի լիներ վերջը…

ԺԶ

ԴԱՎԱՃԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Պատանի Գագիկը մտահույզ էր. բուռն մտքերը սև օձի նման կրծում էին նրա սիրտը և պղտորում նրա անարատ արյունը: Նա դեռ չէր ճանաչում կյանքը, չգիտեր, որկյանքը լի է դառնություններով, որ մարդիկ շաղախվում են քսությամբ և խաբեությամբ: Նա տեղեկություն չուներ, որ կան մարդիկ, որոնց շրթունքները օրհնում են, իսկ սրտերը՝ անիծում. Արտաքուստ՝ ժպտում, ներքուստ՝ տխրում, երեսանց՝ համակրում, իսկ տակից՝ դարաններ լարում... ի՞նչ կկարծեր, թե նրանք, որոնք յուրոտքերի տակ ընկած փառաբանում են իրեն և երկար կյանք մաղթում, տակից դարաններ կլարեն յուր դեմ... Չէ՛, Գագիկ Բագրատունին այդ համոզմունքը չուներ յուրիշխանների վրա. նա հասկանում էր, որ ամենքը սխալմունքներ ունեն, բայց զուրկ չեն խղճից, որն ի վերուստ տված է ամեն մի մարդու:

Բայց Գագիկը այս անգամ մտահույզ էր, խիստ մտահույզ. որքան նա կամենում էր ետ մղել իրանից դառն մտքերը, այնքան նրանք ավելի ու ավելի էին

պաշարումնրան և մռայլեցնում նրա հոգին: Բայց ինչո՞ւ, ի՞նչու մռայլվում է նրա հոգին, ի՞նչու նրա սիրտը ուզում է լալ, արտասվել, քանի որ պետք է նա ժպտա, ուրախանա:Մի՞թե Հայաստանի գահ բարձրացավ նրա համար, որ մատաղ կյանքը խավարեցնի և տանջանքով վերջ դնի յուր դեռափթիթ կյանքին... Հա, վերջ դնի. նա պատրաստէ վերջ դնել յուր կյանքին, պատրաստ է զոհել այդ կյանքը հայրենիքի սիրույն, եթե միայն իմանա, որ յուր այդ զոհողությամբ կփրկվի հայրենիքը, սակայն յուրսիրտը, հոգին այդ վայրկյանին այդ չէր գուշակում:

Նրա սիրտը այդ վայրկյանին զգում էր մի ինչ-որ չարագուշակ, մի ինչ-որ սոսկալի բան: Նա կարծես զգում էր, որ յուր նախնյաց գահը, որի վրա բազմել է ինքը, պիտիոչնչանա, պիտի անհետ կորչի, ջնջվի աշխարհի երեսից և ինքը չպիտի կարողանա դրա առաջն առնել... վա՛յ իրենց, վա՛յ Գագիկին... Եվ Գագիկը սոսկում էր, զարհուրում և չգիտեր ինչպես դուրս գար այդ ծանր դրությունից:

Այդ մտատանջության մեջն էր, երբ հայտնեցին Վեստ Սարգսի գալը: Գագիկը հրամայեց ընդունել: Երբ Վեստ Սարգիսը ներս մտավ, ուղղակի Գագիկի աչքերին նայեցև երբ նրա դժգույն, մեռելային դեմքը տեսավ. յուր աչքերում մի ինչ-որ դիվական հուր փայլեց: Բայց Գագիկը չնկատեց այդ հուրը և նրան հրամայեց նստել:

— Դու մռայլ ես, թագավո՛ր, թող աստված պահպանե քեզ, ի՞նչ է պատահել արդյոք:

— Այո, իշխա՛ն, հունաց կայսրը ինձ հրավիրում է Կ.Պոլիս և այդ հրավերը ինձ շատ հուզում է և ես չգիտեմ ընդունե՞մ, թե ոչ:

Վեստ Սարգիսը մի փոքր լուռ կացավ, ոչինչ չպատասխանեց, նա արդեն վաղուց գիտեր, թե ինչն է նրա հոգին վրդովում, ինչն է շփոթում նրան, ուստի և չուզեցիսկույն պատասխանել:

— Դու լուռ ես, իշխա՛ն, և ոչինչ չե՞ս ուզում պատասխանել, մի՞թե հնարավորություն չկա այդ հրավերը մերժելու, — դարձյալ հարցրեց Գագիկը:

— Ինչո՞ւ մերժել այդ հրավերը, տե՛ր, — վերջապես պատասխանեց Վեստ Սարգիսը:

— Ինչո՞ւ… ինչո՞ւ, ես էլ չգիտեմ ինչո՞ւ մերժեմ, քանի որ Հռոմա կայսեր հրավերը խիստ սիրալիր հրավեր է, որից ես երկյուղ
չունեմ: Բայց, իշխա՛ն, խոստովանումեմ քեզ, այստեղ, սրտիս մեջ, մի ինչ-որ որդ է մտել և ինձ հակառակն է պնդում, և ես վախենում եմ, վախենում, որ...

— Որ ի՞նչ,— ընդհատեց Վեստ Սարգիսը՝ մի տեսակ հայացք գցելով Գագիկի վրա: Գագիկը սարսռաց, բայց թե պատասխանեց.

— Որ ես ծուղակի մեջ ընկնեմ, իշխա՛ն, — ասաց նա հուսահատ:

Վեստ Սարգսի դեմքով մի դառն, հեգնական ժպիտ անցավ:

Նա ծիծաղում էր յուր թագավորի զգացմունքի վրա:

— Ի՞նչ, դու ծիծաղում ես իմ զգացման վրա, դու հեգնո՞ւմ ես ինձ, — ասաց Գագիկը հուսակտուր:

— Քա՛վ լիցի, թագավո՛ր, որ ես հեգնեմ քո զգացմունքը, բայց իմացիր, որ այդ զգացմունքները սնոտի, դատարկ բաներ են և դու չպիտի ուշադրություն դարձնեսդրանց:

— Բայց ի՞նչպես, ի՞նչպես վարվեմ:

— Ինչպե՞ս վարվես... Բայց դու սիրո՞ւմ ես հայրենիքդ,— հանկարծ հարցրեց Վեստ Սարգիսը և շեշտակի նայեց Գագիկին: Գագիկը դողաց. նա չէր դիմանում ՎեստՍարգսի հայացքին, որ մինչև ոսկորներն էր ցնցում:

— Այդ ի՞նչ հարց է, իշխա՛ն, մի՞թե չգիտես, որ կյանքս անգամ չեմ խնայի հայրենիքիս սիրույն:

— Ես էլ եմ այդպես կարծում, որ սիրում ես քո հայրենիքը: Եվ ահա այդ հայրենիքի սիրո համար դու պիտի ընդունես հրավերը և գնաս Կ. Պոլիս: Մի՞թե չգիտես, տե՛ր, որ եթե չընդունես կայսեր հրավերը, հույները իրենց արհամարհված կզգան և այն ժամանակ ոչինչ չեն խնայի կործանելու մեր հայրենիքը, իսկ մենք ի՞նչ ուժ ունենքնրանց ահեղ զորությանը դիմադրելու... Չէ, թագավո՛ր, քո Կ. Պոլիս գնալով ոչինչ վտանգ չի առաջանա ո՛չ քեզ և ո՛չ քո գահին, իսկ չգնալով մեծամեծ փոթորիկներիտեղիք կտաս:

— Բայց, իշխա՛ն, ծերունի Վահրամը դեմ է դրան:

— Ծերունի Վահրամը... հը՛մ, բայց նա ծերության հետ խելքն էլ է կորցրել, տե՛ր, նա հեռուն չի կարողանում նայել: Դու, տե՛ր, չպիտի լսես դրանց, հակառակ դեպքումթող մեղքն ընկնի իմ վզին:

— Բայց, իշխա ն, ո՞ւմ հանձնեմ գահս, Անիի բանալիները...

— Մի՞թե ինձ չես հավատում, թագավո՛ր, մի՞թե չգիտես, որ Վեստ Սարգիսը յուր վերջին կաթիլը կզոհի յուր թագավորի համար: Դու հանգիստ գնա և վերադարձին քոգահը կստանաս անխափան, իսկ բանալիները հանձնիր մեր վեհափառին՝ Պետրոս կաթողիկոսին:

— Բայց սի՛րտս, հոգի՛ս, իշխա՛ն...

— Դատարկ բան, սնոտի զգացմունք, թագավո՛ր:

— Ուրեմն խորհուրդ ես տալիս գնա՞լ, — հարցրեց Գագիկը:

— Այո՛, անպատճա՛ռ պիտի գնաս:

— Երդվո՞ւմ ես, որ մինչև իմ վերադարձը անխախտ պահես իմ գահը:

— Երդվում եմ, տե՛ր թագավոր, սրովս, երդվում եմ աստուծով, որ այդ գահին ոչ ոք չի համարձակվի մերձենալ:

— Ես համաձայն եմ, — ասաց խուլ ձայնով Գագիկը, և նրա սիրտը կարծես փուլ եկավ. այնինչ Վեստ Սարգսի աչքերից ուրախության կայծակներ թռան:

— Ես համաձայն եմ,— կրկնեց Գագիկը,— միայն հայտնիր կաթողիկոսին և իշխաններին, որ երդվեն ինձ ս. տաճարում և Քրիստոսի արյունով կնքեն այդ երդումը, որդուք ինձ հավատարիմ կմնաք և մինչև ձեր արյան վերջին կաթիլը կթափեք ու ինձ չեք դավաճանի: Այնուհետև ես միայն կհանձնեմ ձեզ Անիի բանալիները և իմ գահը:Այժմ գնա հայտնիր իշխաններին իմ վճիռը և թող հանդիսավոր երդումի պատրաստվեն, — ասաց Գագիկը և երեսը շուռ տվեց: Նրա աչքերը արդեն լցված էինարտասուքով:

— Ամեն բան կպատրաստվի հրամանիդ համաձայն, — ասաց Վեստ Սարգիսը և դուրս գնաց:

Վեստ Սարգսի սիրտը ցնծում էր և հոգին հրճվում: Նա տարավ հաղթանակը:

ԺԷ

ԵՐԴՈՒՄ

— Թագավորը գալի՛ս է, թագավո՛րը, — շշնջաց ամբոխը և աչքը դեպի պալատը դարձրեց:

Զորքը, որ շարված էր պալատից դեպի մայր եկեղեցին տանող ճանապարհի երկու կողմում, նույնպես ցնցվեց և հայացքը դեպի պալատը դարձրեց:

Արդարև պալատի դռներում երևաց Գագիկ Բ. հայոց թագավորը՝ ծիրանի քողը ձգված ուսերին, շրջապատված մեծ ու փոքր իշխաններով:

Գագիկի երևալուն պես թմբուկը զարկեցին և զորքը պատվի նշան արավ իջեցնելով նիզակները, իսկ ամբոխը, որ լցված էր ճանապարհի երկու կողմում, կանչեց.

— Կեցցե՛ Գագիկը, ապրի՛ մեր թագավորը...

Գագիկը առաջ անցավ՝ յուր աջ ու ձախ կողմն ունենալով Վահրամ և Վեստ Սարգիս իշխաններին:

Նա տխուր էր ու մռայլ: Նրա դժգույն, բայց արքայական վեհ դեմքը կրում էր հուսահատության սոսկալի դրոշմ, որ նայողի վրա թողնում էր խորին կսկիծ: Ի՞նչ էրպատահել, ինչո՞ւ Գագիկը այդպես տխուր, այդպես վհատ էր: Այդ ամենքը գիտեին, այդ ամեն մարդ զգում էր:

Գագիկը մայր եկեղեցի էր իջնում աղոթելու վերջին անգամ, ուր յուր իշխանները հավատարմության երդում պիտի տային և մյուս օրը ինքը պիտի մեկներ Կ. Պոլիս:

— Ողջո՛ւյն հայոց թագավորին, ապրի՛ Գագիկը, — նորից գոռաց ամբոխը և խոր գլուխ իջեցրեց:

Գագիկը մտազբաղ ժողովրդին նայեց, ու նրա սիրտը հուզվեց, կսկծաց: Ինչե՞ր արդյոք չանցան նրա մտքով այդ իսկ րոպեին:

Մայր եկեղեցում սկսված էր պատարագը և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը զգեստավորված: Երբ թագավորը ներս մտավ, կաթողիկոսը առաջ եկավ նրանընդունելու: Գագիկը խաչը համբուրեց և կանգնեց արքայական գահույքի տակ և ամբողջ պատարագի ընթացքում լուռ աղոթում էր:

Ամբողջ եկեղեցին լի էր մեծ ու փոքր իշխաններով և իշխանազնուհիներով, իսկ դուրսը խռնվում էր ժողովուրդն ու զորքը:

Խորհրդավոր լռություն էր տիրում եկեղեցում և բացի երգեցողության մեղմ ու քաղցր ձայնից, ոչ մի շշուկ չէր խանգարում լռությունը: Քաղցրանվագ ալելուն էրհնչում Անվո մայր եկեղեցում և խնկի ու կնդրուկի անուշաբույր հոտը տարածվում:

Ամենքը, ինչպես մի մարմնացած արձան, լուռ էին և անշարժ:

Մեկ կողմը կանգնած էին կաթողիկոսը, Վեստ Սարգիսը և յուր համախոհ իշխանները, իսկ ձախակողմը, արքայական գահի առաջ գլխիկոր նստած էր ծերունիՎահրամ իշխանը՝ նույնպես յուր կուսակից իշխաններով: Կարծես եկեղեցում իսկ, սուրբ պատարագի ժամանակ, երբ աշխարհային ամեն գծուծ գործ պիտիմոռացվի, հայ իշխանները երկու բանակի էին բաժանվել և իրար վրա լռելյայն մոլի հայացքներ էին ուղղում:

Բայց ահա պատարագը ավարտվում է: Պատարագիչ Խաչիկ եպիսկոպոսը բարձրաձայն կանչում է «կեցո՛, տէ՛ր, զժողովուրդս քո և օրհնեա...», և վարագույրըծածկում է սրբության սեղանը, որ անխիղճ տիրանենգներն ու անօրեն դավաճանները չտեսնեն ճշմարտության համար զոհված աստուծո գառին: Նոցա զոհը այլգառն է, որ անմռունչ կանգնած է յուր պարանոցը մերկացնելով կտրողի առաջ:

Բայց ահա վեհափառը բարձրանում է բեմ և վարագույրի առաջ դրած գահի մոտ կանգնելով՝ սկսում է յուր պերճաբան քարոզը: Նա նզովք, անեծք է թափումհայրենիքի դավաճանի գլխին և պատմում թուլասիրտ Հովհաննես-Սմբատ արքայի տված թղթի մասին, հունաց արշավանքները Անիի վրա և ապա գովաբանում էներկա հոռոմոց կայսեր բարեպաշտությունը, որ չցանկանալով օգտվել այդ կտակից, վեհանձնաբար Գագիկ թագավորին յուր մոտ է հրավիրում մեծամեծ պատիվներտալու նրան և խաղաղության դաշն կռելու, սակայն մեր թագավորը երկմտում է այդ հրավերն ընդունելու, որ կազմում է մեր աշխարհի միակ փրկությունը, — ավելացրեց կաթողիկոսը մի ինչ-որ պայմանական հայացք գցելով դեպի Վեստ Սարգիս իշխանը:

— Մեր թագավորը այն է մտածում, որ յուր գնալով կկորցնե ամենը, ինչ որ թանկ է հայրենիքի համար: Այն ձեռքը, որ կտակ գրեց և տվեց հույներին, այնհոգևորականը, չիք Կիրակոսը, որ կաթողիկոսի տան հյուրընկալն էր, վաճառեց Անին յուր շրջակայքով և տվեց հույներին, նրա տեսակները շատ ավելի վատ գործերիեն ընդունակ, — ավելացրեց ծերունի Վահրամը՝ հնչեցնելով յուր ուժեղ ձայնը:

— Լսո՞ւմ եք, իշխաննե՛ր, որ մեր քահանայապետին դավաճան է հայտարարում այդ զառամյալ ծերուկը, — շշնջաց Վեստ Սարգիսը:

— Դավաճանը նա է, ով որ մեր սրբազնասուրբ հոգևոր տիրոջը անբաստանում է, — լսվեցան ձայներ այն դասից, ուր կանգնած էր Վեստ Սարգիսը:

Գագիկի գեղեցիկ դեմքը շառագունեց: Նա զգաց, որ ահա ուր որ է իշխանների մեջ պիտի մի ներքին պառակտում ընկնի, ուստի, ձեռքի շարժումով լռեցնելովիշխաններին, ասաց.

— Թող իմանան իմ իշխանները, որ նոցա երջանկությունն է միայն իմ բաղձանքը: Ամենքին հայտնի է, որ ես ոչինչից վախեցողը չեմ: Հունաց լեգիոնները ջարդվեցանինձանից և խայտառակությամբ ետ փախան: Ես միայն կասկածում եմ, որ եթե գնամ Կ. Պոլիս, կայսեր մոտ, մայրաքաղաքս պահպանող չի լինի: Կաթողիկոսը կրկինխոսեց.

— Մի՛ կասկածիր, տե՛ր արքա, երկնքում թող հայր աստվածը վկա լինի, իսկ երկրիս վրա ահա կենդանարար Քրիստոսը, որ այժմ պատարագում է այդ սուրբ սեղանիվրա, որ քեզ ոչ ոք դավաճանող չկա: Ես կհրամայեմ պատարագիչ եպիսկոպոսին թող յուր գրիչը թաթախե զինվող գառի անապական արյան սուրբ բաժակի մեջ և գրե սաստիկ երդման գիր, որ ես իբրև գլուխ հոգևորականության և Վեստ Սարգիսն ու մյուս նախարարները իբրև ներկայացուցիչ քաղաքի բոլոր դասակարգի, երդվում ենք այդ սուրբ անմահ պատարագով, մեր փրկչի խաչով, նորա ավետարանով, որ ինչպես նա, մեր տեր Հիսուս Քրիստոսը բարձրացավ խաչափայտի վրա և անարգ մահով մեռավ և թաղվեցավ մեզ փրկելու համար, այնպես էլ մենք քրիստոսանման պետք է նահատակվենք Անի քաղաքը պահպանելու ու փրկելութշնամիների ձեռքից և մեր արյունը թափելով՝ հանձնել այն յուր օրինավոր տիրոջը: Եվ այդ թուղթը ես կպահեմ ինձ մոտ:

— Տե՛ր արքա, աղաչում ենք, հաճեցեք ընդունել մեր սրբազնագույն հոգևոր տիրոջ խորհուրդը, որ պատրաստ է Քրիստոսի պես բարձրանալ Գողգոթա՝ հայմայրաքաղաքի փրկության համար, — աղաղակեցին Վեստ Սարգսյանք:

— Կեղծ են այդ բոլորը, տե՛ր արքա, և մի որոգայթ, աղաչում եմ չլսել դրանց, — կանչեց դարձյալ Պահլավունին:

— Թող լռե անաստված խռովարարը,— գոռացին մի քանի ձայներ:

Բայց այդ ժամանակ առաջ է գալիս թագավորը, լռեցնում ամենքին և հուսահատ ձայնով ասում.

— Բավական է: Առաջ եկ, Լուսավորչի աթոռին նստող աստվածապաշտ Հայրապետ: Ահա, միայն քո երդումին հավատալով, քեզ եմ տալիս քաղաքի բանալիները նքեզ հանձնում իմ գահի պաշտպանությունը... Գրեցեք երդման թուղթը, — ասաց Գագիկը և արտասուքով լի աչքերով չոքեց փրկիչի խաչելության առաջ նբազկատարած ձեռքերով օգնություն հայցեց բարձրյալից:

Իջավ պատարագիչ եպիսկոպոսը ս. բաժակը ձեռքին: Գրվեցավ երդման թուղթը Քրիստոսի արյունով, և ամեն մի իշխան խաչի ու ավետարանի վրա, երդվելովհավատարիմ մնալու, ստորագրեց յուր անունը երդման թղթի վրա՝ գրիչը թաթախելով ս. Բաժակի՝ Հիսուսի արյան մեջ:

Գագիկը դուրս գնաց եկեղեցուց: Ժողովուրդը կրկին ցնծագին գոռում էր.

— Ապրի՛ թագավորը, կեցցե՛ Գագիկ արքան:

Սակայն Գագիկը հուզված էր ու մռայլ: Նա էլ ժողովրդին չէր նայում, կարծես վախենում էր նրանից...

ԺԸ

ԳԱԳԻԿ ԹԱԳԱՎՈՐԸ ԱՔՍՈՐԱՆՔՈՒՄ

Միամիտ որսն ընկավ թակարդի մեջ:

Գագիկը Կ. Պոլիս հասավ և միայն մի քանի օր շքեղ ընդունելություն գտավ կայսեր կողմից, և ապա, երբ առաջարկվեց հանձնել Անին, իսկ ինքը մերժեց, նա աքսորվեցՄարմարյա ծովի կղզիներից մեկը:

Գագիկը աքսորանքումն է, հեռու հայրենիքից, հեռու յուր սիրելի նախարարներից: Նրա գլխին օտար երկինք է փայլում, իսկ շուրջը ծովի ահեղ ալիքներն են վխտում, որոնք կատաղաբար մոնչալով ծիծաղում են Գագիկի հուսահատության վրա և հեգնում նրան...

Գագիկը մտամոլոր շրջում է ավազոտ ափերին ու հուզված հեռուն դիտում: Նա նայում է հեռուն, դեպի մթին հորիզոնը, ուր սևին են տալիս Ասիայի ժայռոտ ափերը, ունրա սիրտը քաղվում է, հոգին խռովվում և ամբողջ մարմինը՝ ցնցվում: Հուսահատության սոսկալի բոցերով լցվում են նրա աչքերը և նա

կարծես թե ուզում է թռչել, անցնել իրեն արգելք եղող ալիքների միջով և մի վայրկյանում սլանալ այնտեղ, ուր յուր սիրտն է ձգտում, բայց զգալով յուր թուլությունը բնության դեմ, հուսահատությամբ կոտրատում է յուր մատները և հառաչելով կանչում.

— Ո՛հ, հայրենյաց սուրբ շիրիմներ, մանկությանս օրրան հայրենիք, իմ սիրուն Անի, ո՞ւր եք դուք, ձեր թագավորը տանջվում է այստեղ, ձեր կարոտը քաշում, ձեր ջրին, ձեր հողին կարոտում: Ա՛խ, ինչո՞ւ ես թևեր չունեմ ձեզ մոտ թռչելու, իմ կարոտն առնելու և ապա շունչս փչելու...

Բայց չէ, սպասեցեք, Գագիկը չպետք է մեռնի, չպետք է շունչը փչե ձեր թագավորը մինչև որ յուր վրեժը չառնի դավաճաններից: Ձեր թագավորը ընկավ ծուղակի մեջ, խաբվեցավ ինչպես միամիտ գառը, բայց էլ չի խաբվի:

Օ՛, ստո՛ր իշխաններ, ատելի Հայրապետ և դու, Մեհրուժանի և Վասակի օրինավոր ժառանգ Վեստ Սարգիս, քո թունալից լեզվով դավաճանեցիր թագավորիդ, դավաճանեցիր հայրենիքիդ և թող անիծյալ լինես հավիտյան: Թող քո ոսկորները հանգիստ չմնան գերեզմանիդ մեջ, և այն սուրբ հողը, որին դու դավաճանեցիր, թողդուրս շպրտի քո ոսկորները, յուր գիրկը չընդունի անարժան որդու ժահրալից ոսկորները... Ո՛հ, աստված, կատարիր իմ այդ խնդիրը, — ասաց Գագիկը և չոքեց: Նրաերեսը վառվում էր, աչքերը փայլատակում, հոգին հուզվում... հանկարծ նա վեր թռավ տեղից մի քանի քայլ առաջ գնաց և կանչեց.

— Ժողովվեցե՛ք, իմ նախարարնե՛ր, հավատարիմ իշխաններ և քաջ զինվորներ, հայրենիքը վտանգի մեջ է և ձեզ է սպասում: Հասեք, օգնեցեք, թե չէ ստրկությանշղթաները ամուր կկապեն նրան և դուք կտնքաք դարերով նրա ծանր լծի տակ: Է՛յ, ո՞վ կա այդտեղ, տվեք սուրս, հնչեցրեք պատերազմական փողերը և շարժվեցեքառաջ, ձեր թագավորն է ձեզ առաջնորդում, թող կորչե՛ն թշնամիները, — ասաց Գագիկը և ինքն իրեն պատերազմի դաշտում կարծելով՝ ուզում էր առաջ գնալ, բայցտեսնելով, որ յուր սուրը մեջքից չէ կախված, հուսահատական մի ճիչ արձակեց և կանչեց.

— Լևոնի՛կ, Լևոնի՛կ:

Լևոնիկը, որ միշտ անբաժան էր Գագիկից, հետևել էր յուր թագավորին աքսորանքումն էլ և այն ժամանակ, երբ Գագիկը «Լևոնիկ» էր կանչում, նա խրճիթի առաջնստած, գլուխը ձեռքերի մեջ դրած, խոր մտածմունքի մեջ էր ընկղմված: Նա շատ անգամ էր տեսել թագավորին մտքերի մեջ ընկղմված և չէր ուզեցել խանգարել

նրամտքերը, այս անգամ էլ նա թողել էր թագավորին մտքերի ծովն ընկղմվել առանց աչքից թողնելու նրան, բայց երբ լսեց յուր անունը, երբ իմացավ, որ թագավորը իրենէ կանչում, մի ակնթարթում վեր թռավ և մի քանի քայլ անելով հասավ թագավորին:

— Ի՞նչ է, տե՛ր արքա, — ասաց Լևոնիկը:

— Լևոնի՛կ, Լևոնի՛կ, — ասում էր Գագիկը՝ բարկությունից դողալով:

— Ի՞նչ է, տե՛ր, ես այստեղ եմ:

— Ո՞ւր է իմ սուրը, սո՛ւրը...

Լևոնիկը պահ մի ոչինչ չպատասխանեց, բայց նրա սիրտը այնպես կսկծաց, որ նրա աչքերում երկու զույգ արցունքներ երևացին և ընկան ավազին:

— Սուրս, Լևոնի՛կ, — կանչեց Գագիկը կրկին մի այնպիսի հառաչանքով, որ կարծես սրտի խորքերից էր դուրս գալիս:

— Չկա, թագավո՛ր...

— Ի՞նչպես... թագավորը առանց սրի՞: Բայց ո՞ւր են նախարարներս, իշխաններս, իմ քաջ զինվորները…

— Չկան, տե՛ր...

— Իսկ որտե՞ղ ենք մենք: Այս ի՞նչ ջրեր են, որ մեզ շրջապատել են, այս ի՞նչ երկինք է, որ մեզ ծածկում է, օդը, ջուրը, հողը, որտե՞ղ ենք, Լևոնի՛կ, ասա, ո՞ւր ենք...

— Աքսորանքում, տե՛ր իմ, աքսորանքում:

— Հայոց թագավորը աքսորանքո՞ւմ... հա՛, հա՛, հա՛, — մի տեսակ քրքիջ արձակեց Գագիկը, որը նման էր այն տեսակ հուսահատական քրքիջի, երբ մարդը, գիտակցական աշխարհը թողնելով, մի քայլ է անում դեպի զառանցական աշխարհը: Վիշտը սոսկալի կերպով ճնշում էր Գագիկի սիրտը և դրանք՝ վշտի այդ անողորմհառաչանքներն էին, որ դուրս էին թռչում Գագիկի սրտից: Լևոնիկը վրա վազեց և գրկեց յուր թագավորին: Նա այս անգամ վախեցավ Գագիկի դեմքիարտահայտությունից: Գագիկը կարող էր խելքը թռցնել, բայց զուր էր Լևոնիկի երկյուղը: Գագիկը Լևոնիկի գրկին միայն խուլ հառաչանքներ էր արձակում, և այդհառաչանքները կամաց-կամաց թեթևացնում էին նրա սրտի կսկիծը, հոգվո խորին վրդովմունքը…

ԺԹ

ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Մինչդեռ Գագիկը Բոսֆորի ամայի կղզում, հայրենիքը հիշելով, սրտից թառանչներ էր արձակում, այդ միջոցին հայոց կաթողիկոսը և Վեստ Սարգիսը պարապ նստածչէին:

Գիշեր էր: Կաթողիկոսի մոտ ժողովված էին Վեստ Սարգիսը յուր համախոհ իշխաններով և մի քանի չիք Կիրակոսի նման հոգևորականներով: Ժողովին նախագահումէր ինքը սրբազնասուրբ Հայրապետը, որը նստած էր գահին և խորասուզվել էր մտքերի մեջ: Հանկարծ նա սթափվում է, բարձրանում նստած տեղից և հանում ծոցիցՔրիստոսի արյունով գրված երդման գիրը և հանդիսավոր կերպով ասում.

— Վսեմաշո՛ւք տյարք, ահա մեր երդման թուղթը: Բայց հարկավոր չէ, որ մենք մեր երդումը դրժենք: Այդ մահացու մեղք է, հոգույն սրբո հայհոյություն: Մենք ուխտելենք, պետք է մեր ուխտը սրբությամբ կատարենք, պետք է մեռնենք եկեղեցվո և ազգի շահերի համար, պետք է նահատակվենք և քաղաքը հանձնենք յուր օրինավորտիրոջը: Ամենքդ գիտեք, որ Գագիկը թագավոր չէ և ոչ էլ ամբողջ ազգի հաճությամբ է գահ բարձրացել, այլ ծածուկ, միայն Պահլավունիների ընտրությամբ, ուստի նա չէ թագավորանիստ Անի քաղաքի օրինավոր տերը:

— Այո՛, շատ ճիշտ է, վեհափառ տեր, — ասաց Վեստ Սարգիսը: — Այդ հո բերան չէ, այլ ճշմարիտ աստծո տաճար, որից միայն արդարություն է բխում:

— Արդեն ամբողջ ազգը միաձայն հավանությամբ քեզ էր հավատացել արքունի գանձը, տե՛ր իշխան, որ քեզ թագավորեցնեին, եթե Պահլավունիներըխորամանկությամբ մեջ չբերեին այդ կաթնակերին, — մի տեսակ հաճոյական ձևերով ասացին մի քանիսը նրա համախոհներից:

— Այսպես թե այնպես՝ վերջապես մենք մեր երդումը պիտի կատարենք: Կտակը մահից հետո հաստատուն է: Լուսահոգի Հովհաննես թագավորը Անին յուրշրջակայքով կտակել է ժառանգություն կայսեր, որ այժմ հանդիսանում է օրինավոր տերը: Բացի այդ, մեր ընդհանուր ազգի շահն էլ պահանջում է, որ Անինհանձնենք օրհնաբանյալ կայսրին, որով թե մենք պարտական չենք մնա աստծո ահեղ ատյանի առաջ մեր երդումը կատարելով և թե կապրենք խաղաղությամբարքայից արքայի հզոր հովանավորության ներքո:

Հետևաբար մեզ հարկավոր է այժմ այդ բանի համար մտածել, մի նոր երդման թուղթ գրել և Անվո բանալիների հետ միասին ուղարկել կայսեր:

Առաջարկությունն ընդունվեց: Գրվեցավ նոր երդման թուղթը և Անվո բանալիների հետ միասին ուղարկվեց հոռոմոց կայսեր: Անգութ և անիրավ մարդիկ, նրանքչմտածեցին, որ դրանով հիմնովին քայքայեցին Հայաստանի պետության հիմքերը և խլեցին այն անկախությունը, որ դարերից ի վեր պահպանում էին: Ի՜նչ փույթնրանց, թե Հայաստանի ինքնուրույնությունը պիտի խախտվեր, թե դարերից ի վեր սուրբ ավանդը պիտի խորտակվեր կամ մեր նախնյաց արյունով պահպանածերկիրը պիտի ուրիշները վայելեին: Բավական էր, որ տիրանենգ իշխանները մեծ պատիվների էին սպասում: Հայոց կաթողիկոսը, կուրացած փայլուն ոսկիներից, արժանավոր վարձատրություն էր ակնկալում, իսկ դավաճան Վեստ Սարգիսը Հայաստանի գահն էր երազում:

Հունաց կայսրը, երբ իշխանների երդման թուղթը և Անիի բանալիները տեսավ, ուրախացավ, հրճվեց ու կանչելով իրեն մոտ թշվառ Գագիկին, ցույց տվեց նրան Անիիքառասուն բանալիները ու հեգնորեն ասաց.

— Տես, Գագի՜կ, հայոց թագավոր, ահա քո իշխանները Անին ինձ են տալիս, իսկ դու ի՞նչ ես ասում:

Գագիկը մեկ գունատվեց, մեկ վառվեցավ կրակի պես. կայծակներ թռան նրա աչքերից, նրա սիրտը հուզվեց, խորին ցավից կսկծաց ու նա դառնացած կանչեց.

— Դատ արասցե աստված ընդ իս և ընդ դավաճանողքն իմ:

— Վերջացած է, Գագի՜կ, Անին այլևս քեզ չէ պատկանում, զուր մի մտածիր այդ քաղաքի վրա, որ արդեն հունաց մեծազոր կայսերն է պատկանում: Եվ ես, իբրևողորմած կայսր տալիս եմ քեզ Կապադովկիայի Պիզու քաղաքը: Ապրիր նրա մեջ հանգիստ և այլևս մի մտածիր Անիի վրա:

— Բայց մի՞թե դու իրավամբ կառնես այդ քաղաքը, մի՞թե դա արդարություն է, կա՜յսր:

— Վերջացած է, համաձայնիր և՜ դու, քանի որ քո իշխանները և կաթողիկոսը համաձայն են:

— Ո՜չ և ո՜չ: Բագրատունի Գագիկը երբեք չի տա յուր համաձայնությունը, իսկ եթե իմ իշխանները ինձ դավաճանեցին, թող իմ և հետնորդներիս արյունը լինի

նրանցվրա, — ասաց Գագիկը և հուսահատ դուրս եկավ հունաց կայսեր պալատից: Դուրս եկավ և այնուհետև էլ չտեսավ յուր սիրած հայրենիքը: Յուր իշխաններիցդավաճանած, հունաց զորությունից ընկճված նա ստիպվեցավ գնալ (1045 թ.) Պիզու քաղաք, իսկ Պարակաման ներքինին և հունաց զորավարը Հայաստանուղարկվեցան մի բանակով Անիին տիրանալու:

Պարակաման ներքինու դեպի Անի արշավելու լուրը Անի հասնելով արդեն դղրդացրել էր անեցիների սիրտը: Նրանք զգում էին, որ Անիի գլխին այժմ կուտակվում ենխիստ սպառնալից ամպեր, որոնց հետևանքը շատ ծանր պիտի լիներ իրենց համար: Թագավորը չկար, նա տնքում էր հեռու աքսորանքի մեջ, իսկ իրենք մնացել ենմոլորված: Բայց մեռած չէր ծերունի Վահրամը: Նրա սիրտն էլ թունդ առավ, երբ լսեց հունաց բանակի մոտենալը և աչքերը վրեժխնդրության բոցով լցվածպատրաստվեց դիմադրել նրանց և յուր կյանքը դնել Անիի պարիսպների տակ:

Խո՛ր, շատ խոր կսկծաց ծերունի Վահրամի սիրտը, երբ իմացավ Գագիկի աքսորվելը: Նա վաղուց գիտեր այդ, վաղուց նա զգուշացնում էր Գագիկին պատրաստվածդարաններից, բայց նա չլսեց իրեն, այլ տիրանենգ վեստ Սարգսի խոսքով վեր կացավ գնաց Կ. Պոլիս այլևս չվերադառնալու պայմանով:

Եվ նա էլ չի վերադառնա, այդ զգում էր Վահրամը, իսկ նրա չվերադառնալով կործանվում էր Հայաստանը, կործանվում սիրուն ու շեն Անին…

— Ո՛հ, տե՛ր, մի՛ թողնիր Հայաստանը կործանվելու, մի դառնացնի ծերությանս վերջին օրերը, որպեսզի ես գոնե չտեսնեմ Անիի կործանումը... Հայաստանը օրհասիմեջ է, տե՛ր փրկիր նրան, խորտակիր թշնամիներին և դավաճաններին, — ասաց Վահրամը և նրա աչքերում արտասուքներ երևացին, նա դառնապես լաց եղավ: Լացեղավ խորին կսկիծով, հիշելով, որ Հայաստանը կործանվում է յուր իսկ զավակների ձեռքով, որ Անին ոչնչանում է, նույն իսկ հայ իշխանների ձեռքով:

Օ՛հ... եթե դավաճան հայ իշխանները չլինեին, եթե մատնիչները մեզանից չլինեին, Անին չէր կործանվի... մեր թշնամիները հենց մեր միջից են, ահա սոսկալի բանը... — Վահրամի խոսքը կիսատ մնաց: Դրսից լսվեցան խառնիճաղանճ ձայներ: Վահրամը ետ քաշեց վարագույրը և դուրս նայեց: Դուրսը՝ մայր եկեղեցու շուրջը խռնվածէր ամբոխը, որը քանի գնում այնքան ավելի ու ավելի էր ստվարանում: Վահրամը հասկացավ քաղաքացվոց այդ խռնումը: Նա զգաց, որ քաղաքացիք էլ զգում ենիրենց անել դրությունը և Անիին մոտեցող վտանգը: Հենց այդ միջոցին էր, որ յուր սենյակի վարագույրները ետ քաշվեցան և այնտեղ երևաց Խենթը: Վահրամը ետնայեց:

— Իշխա՛ն, — ասաց Խենթը, — հունաց բանակը երևաց:

— Այդ սպասում էինք, Խենթ, և նրանք շուտով չեն տիրի Անիին: Դռները փակ են, իսկ զորքերը՝ կազմ ու պատրաստ: Բայց դու ինձ այն ասա, այս ի՞նչ իրարանցում էքաղաքացվոց մեջ, մի՞թե նրանք արդեն հուսահատվել են:

— Ո՛չ, իշխան, քաղաքացիք էլ զգալով մոտեցող վտանգը զենք են առել ու պատրաստվում են մեռնելու Անիի պարիսպների տակ: Նրանք խնդրում են առաջնորդելիրենց դեպի կռիվ:

— Ապրին քաղաքացիք, այդպես էլ պետք է: Ես կկարգադրեմ ինչ որ պետք է. մեր զորքերը քաղաքացոց հետ միասին լավ դաս կտան հույներին:

«Կեցցե՛ Գագիկը, կեցցե՛ Վահրամը», — լսվեցավ հանկարծ քաղաքացվոց գոռ ձայնը և դղրդացրեց Վահրամ իշխանի պալատի կամարները:

— Լսո՞ւմ ես, իշխա՛ն, քաղաքացիք կեցցե են կանչում և քեզ հրավիրում առաջնորդելու:

— Լավ, Խե՛նթ, միայն դու ինձ այն ասա, թե ի՞նչ են անում Վեստ Սարգսյանք, արդյոք ուրա՞խ են հունաց բանակի մոտենալովը:

— Խիստ ուրախ, տե՛ր, արտաքուստ ոչինչ չեն ասում, իսկ ներքուստ ուրախ են և կարծես հող են պատրաստում նրանց համար:

— Ինչպե՛ս... նրանք համարձակվո՞ւմ են:

— Այո, իշխա՛ն, ես նկատեցի, որ ինչ-որ մի խումբ պղտորում է քաղաքացվոց միտքը և տրամադրում Անին առանց կռվի հույներին հանձնելու:

— Այդ չի հաջողվի նրանց: Ես վաղն ևեթ ջարդ կտամ հույներին և կփախցնեմ Անիի պարիսպներից շատ հեռու:

— Պետք է շտապել, տե՛ր, թե չէ Վեստ Սարգսյանք խիստ զորացել են: Հունական ոսկիները շլացրել են շատ իշխանների աչքերը:

Վահրամը լռեց: Դառն կսկիծը կրկին կրծեց նրա սիրտը: Նա հասկանում էր, որ Խենթը ճիշտ է ասում, որ Հայաստանը զոհվում է հենց այդ դավաճան իշխաններից:

— Կանչիր այս երեկո բոլոր մեր իշխաններին, — ասաց Վահրամը մի փոքր լռելուց հետո, — այս երեկո մենք խորհուրդ կունենանք, իսկ դու կրկին

մտիրքաղաքացիների մեջ և պատրաստիր նրանց իրենց հայրենիքը պաշտպանելու: Դու ժողովրդի մարդ ես, ժողովրդի ցավին բալասան կարող է դնել միայն ժողովրդիմարդը, և այդ քո գործն է, գնա, տերը թող քեզ հետ լինի:

— Խենթը յուր գործը գիտի, տե՛ր, — ասաց Խենթը և գլուխ տալով Վահրամին՝ հեռացավ:

— Ապրես դու, Ներսե՛ս, — ասաց Վահրամը նրա ետևից:

Մինչ Վահրամը յուր զորքերն էր պատրաստում և քաղաքացիներից գնդեր կազմում, հունաց բանակը արդեն պաշարել էր Անին և սպառնում էր քարուքանդ անելքաղաքը, եթե հոժարակամ չեն հանձնի իրեն: Բայց նրանց սպառնալիքը ոչինչ ներգործություն չէր ունենում: Քաղաքացիք և Վահրամյանք իրենց հայրենիքըպաշտպանելու սիրով վառված հանկարծակի բանալով Անիի դռները մի զորեղ հարձակում արին հունաց բանակի վրա և նրան ջարդ ու փշուր անելով, նորիցփախցրին Անիի պարիսպներից: Հաղթությունը կատարյալ էր, և Պարակաման հույն զորավարը գլխիկոր ուզում էր ետ դառնալ դեպի Հունաստան, երբ հանկարծնկատեց, որ քաղաքացիք ինչ-որ իրարանցման մեջ են ընկել: Պարակամանը ետ նայեց և մատը կծեց: Նա վաղուց սպասում էր այդ նշանին:

Մինչդեռ քաղաքացիք և Վահրամյանք անձնազոհությամբ կռվում էին հունաց բանակի դեմ, այդ միջոցին Վեստ Սարգսյանք քնած չէին: Կռվի ամենատաք ժամանակմի խումբ քաղաքացիք սկսեցին գոռալ, թե կռիվը պետք է դադարեցնել, որովհետև Գագիկը հրաժարվել է թագավորությունից և թե նա այլևս չի վերադառնալու:

Քաղաքացիք շփոթված կանգ առան: Կռիվը դադարեց, իսկ Պարակամանը ետ կանչվեց Անիին տեր լինելու:

Այսպիսով մատնությունը յուր դերը կատարեց և հաղթեց, իսկ տարաբախտ Հայաստանը այդ ժամանակից հետո հունաց մի գավառ դարձավ:

Անին լցվեց հունական զորքերով, իսկ անեցիների և Վահրամյանների սրտերը լցվեցան խորին թախիծով: Նրանք զգացին, որ Անիի հետ միասին մեռավ ամբողջՀայաստանը և մեռավ մատնությամբ, դավաճանությամբ և այն էլ ում ձեռքով՝ յուր որդոց ձեռքով:

Սոսկալի՛ հիշատակ…

Ի

ԹՈՒՅՆ ԵՎ ՍՈՒՐ

Ամեն բան վերջացած էր:

Անին այլևս հայերին չէր պատկանում, այլ հույներին:

Հովհաննես-Սմբատ թագավորի կտակը կատարված էր: Թուլացած էին Վահրամյանք, և հրճվում էր Վեստ Սարգիսը յուր այդ հաղթության վրա: Վերջապես նա կարողէ ժառանգել այդ գահը: Հոգ չէ, թե միևնույն ժամանակ հունաց ստրուկը կլինի:

Անին գրավելուց հետո Վեստ Սարգիսը և Պարակաման զորավարը մի գիշեր խիստ մտերմական խոսակցության մեջ էին:

— Իշխա՛ն, — ասում էր Պարակաման զորավարը, — քո իղձերն արդեն կատարվում են և դու կստանաս կայսրից քեզ խոստացած Հայաստանի գահը, միայն թե դեռթշնամիներ շատ ունիս, պետք է ոչնչացնել նրանց:

— Այո՛, տե՛ր, թշնամիներ շատ ունեմ, խիստ շատ, — պատասխանեց Վեստ Սարգիսը:

— Եվ այդ թշնամիներդ հայ իշխաններն են, — ասաց Պարակամանը և մի խորամանկ հայացք գցեց Վեստ Սարգսի դեմքին, կարծես թե ուզում էր իմանալ նրա հոգուգաղտնիքը:

— Այո, հայ իշխանները, — կրկնեց Վեստ Սարգիսը մտամոլոր:

— Իսկ շա՞տ են այդ քո հակառակորդ իշխանները:

— Խիստ շատ, միայն Վահրամյանք՝ երեսունի չափ:

— Հը՛մ. դրանց վրա պիտի ավելացնել մի ուրիշ երեսուն, — կրկնեց խորամանկ ժպիտով Պարակամանը:

— Ինչո՞ւ:

— Որպեսզի գահդ ապահով լինի և հաղթությունդ՝ կատարյալ, — ասաց հեգնորեն Պարակամանը:

— Այդ կայսեր ողորմած կամքն է, — պատասխանեց Վեստ Սարգիսը առանց հասկանալու Պարակամանի հեգնական ձևը:

— Ուրեմն ինչպե՞ս վերացնենք այդ արգելքները, — ասաց Պարակամանը փոքր լռությունից հետո:

— Վերացնելը շատ հեշտ է, տե՛ր, միայն թե քո աջակցությունը լինի:

— Ինչպե՞ս:

— Երկու ճանապարհ կա դրանց ոչնչացնելու:

— Որո՞նք են այդ ճանապարհները:

— Թույնը և սուրը: Մի քանիսին՝ թույնը, իսկ մյուսներին սուրը պիտի ոչնչացնի, այդ է իմ կարծիքը, դրանով միայն կհանգստանա իմ սիրտը, — ասաց Վեստ Սարգիսըսառնորեն:

«Զզվելի մարդ», — ասաց իր մտքում Պարակաման հույն զորավարը՝ զարմանալով, որ յուր առաջ կանգնած է մի հայ իշխան, որ աշխատում է ոչնչացնելյուրայիններին:

Նա այդ տեսակ դավաճանի դեռ չէր պատահել, թեև յուր մտքում ուրախանում էր, որ գտել է մի մարդ, որը յուր մտքերի իրագործմանն է նպաստում: Չէ՞ որ հունացգլխավոր նպատակը հայերին լոկ հպատակության մեջ պահելը չէր, այլ ավելի նրանց ազգությունը ջնջելն ու հունաց մեջ ձուլելն էր: Իսկ Վեստ Սարգիսը հենց այդնպատակի իրագործմանն էր նպաստում, առանց հասկանալու, որ յուր երազած գահը չի ստանա հույներից:

— Լավ, համաձայն եմ, մի քանիսին՝ թույն, մյուսներին՝ սուր: Թույնով դո՛ւ պիտի ոչնչացնես, իսկ սրով՝ ես, — ասաց Պարակամանը:

Փոքր լռությունից հետո Պարակամանը նորից հարցրեց.

— Իսկ ունի՞ս դու մի մարդ, որ կարողանա այդ բանը գլուխ բերել առանց աղմուկի:

— Ունեմ, տե՛ր, ես ունեմ մի հավատարիմ մարդ, որ կարող է հարյուր իշխան թունավորել:

— Լավ, այդ քեզ եմ թողնում: Իսկ դու ինձ այն ասա, Վահրամ իշխանին և յուր որդի Գրիգոր Մագիստրոսին ո՞ր մահով պիտի սպանես, — հարցրեց Պարակամանը:

— Սրով, իշխա՛ն, դրանց անհարմար է թույնով սպանել: Բացի դրանից, ծեր աղվեսը շատ զգույշ է պահում իրեն:

— Լավ, դրանց ինձ թող: Ես դրանց կուղարկեմ կռվի դաշտ, և հենց այնտեղ կստանան իրենց մահը:

Պարակամանը հեռացավ: Վեստ Սարգիսը, միայնակ մնալով գլուխը ձեռքերի մեջ բռնեց և սկսեց անց ու դարձ անել յուր շքեղ պալատում, ապա հանկարծ կանգ առավն ծափ տվեց: Ծափի վրա երկու սպասավորներ վազեցին և լուռ կանգնեցին դռների մոտ:

— Կանչեցեք այստեղ Եղոյին, — ասաց Վեստ Սարգիսը առանց ծառաներին նայելու:

Ծառաները դուրս գնացին և կարճ ժամանակից հետո ներս մտավ Եղոն:

Վեստ Սարգիսը բռնեց նրա ձեռքերից և նստեցնելով գահավորակի վրա, նորից ետ դարձավ, զգուշությամբ փակեց դռները և իջեցնելով վարագույրները՝ կրկինմոտեցավ Եղոյին:

Եղոն մտազբաղ իշխանին էր նայում:

— Եղո՛, ես քեզ ծանր գործ պիտի հանձնեմ և հույս ունեմ գլուխ կբերես:

— Պատրաստ եմ, տե՛ր, — ասաց մռայլված Եղոն:

— Լավ, լսիր, Եղո՛, մեր գործերը հաջող են գնում, խիստ հաջող, շուտով Վահրամ իշխանն էլ չի լինի և դու էլ կստանաս քո Լուսիկին:

— Ինչպե՞ս, իշխա՛ն, մի՞թե այդ ճշմարիտ է:

— Ճշմարիտ է լույսի պես, բայց դու անգործ չպիտի նստես:

— Ես ի՞նչ պիտի անեմ:

— Դու պետք է մահ ցանես, հասկանո՞ւմ ես:

— Ինչպե՞ս...

— Շատ պարզ: Ինչ որ մենք սրով չկարողացանք, դու պիտի թույնով կատարես, իսկ մնացածներին մենք սրով կվերջացնենք:

— Ինչպե՞ս… ես պիտի թունավորեմ և ո՞ւմ:

— Մեր հակառակորդներին, հայ իշխաններին:

Եղոն մի քանի վայրկյան լուռ կացավ: Այդ վայրկյանին նրա դեմքը երբեմն գունատվում էր, երբեմն շառագունվում: Երևում էր, որ մի միտք տանջում էր, որ նա ինչ-որբան էր ուզում ասել Վեստ Սարգսին, սակայն չէր վստահում:

Վեստ Սարգիսը նկատեց նրա այլայլմունքը: Նա զգաց, որ Եղոն երերվում է, տատանվում: Նա հասկացավ, որ պետք է խրախուսել Եղոյին, ուստի, դառնալով նրան, ասաց.

— Անպիտան Վահրամյանք մեզ շատ տանջեցին, բայց վերջը ընկճվեցին: Չկա այլևս Գագիկը, իսկ Վահրամյանք, ինչպես դու տեսնում ես, այնքան թուլացել են, որհազիվ նկատելի է նրանց գոյությունը: Բայց որպեսզի դրանց գոյությունը իսպառ կտրվի, որպեսզի դրանց ծուխը իսպառ մարի աշխարհի երեսից, մի վերջին հարվածէլ պիտի հասցնել, իսկ այդ վերջին հարվածը լինելու է սուրը և թույնը: Մի տեղ սուր, մյուս տեղ՝ թույն: Հունաց Պարակաման զորավարը սրով պիտի կտրի դրանցիետքը, իսկ ես թույնով պիտի կարճացնեմ դրանց կյանքը: Թույնը և սուրը զորավոր միջոցներ են Վահրամյանների ծուխը մարելու համար: Վերջացնելով նրանց՝ վերացած կլինի վերջին արգելքը, և այն ժամանակ Վեստ Սարգիսը կդնի յուր գլխին Հայաստանի թագը… իսկ դու, Եղո՛, կստանաս Հայաստանի թագավորից առատվարձատրություն…

— Բայց, տե՛ր, մի՞թե բավական չեն այնքան զոհերը, որոնք մեր ձեռքով մահ ստացան: Նրանց հոգիները կհալածեն մեզ…

Վեստ Սարգիսը, Եղոյի խոսքերը լսելով, ցնցվեցավ: Մի վայրկյան նրա դեմքի վրա անցավ մահվան գունատությունը և վայրկյանաբար նրա մտքով անցան այնզոհերը, այն վատությունները, որոնք նա գործել էր: Քիչ մնաց նրա աչքերը մթնեին և գլուխը պտտվեր, բայց զսպեց իրեն, հավաքեց իր սառնասրտությունը ուդառնալով Եղոյին՝ ասաց.

— Խենթ ես, Եղո՛, խենթ, մի՞թե կարծում ես, թե մեռելները հարություն կառնեն և կհալածեն մեզ: Մի՞թե դու հավատում ես, թե բացի այս աշխարհից գոյություն ունինաև մի ուրիշ աշխարհ... Չէ, սուտ է բոլորը, մարդիկ մեռնելուց հետո ոչնչանում

են թե՛ մարմնով և թե՛ հոգով: Սուտ է, որ ասում են, թե մեռնելուց հետո մարդկանցհոգին գնում է ուրիշ աշխարհ, թե նրանք ներկայանում են աստծո ահեղ դատաստանին…

— Բայց իշխա՛ն, ես լսել եմ, որ մեռելները մինչև անգամ հարություն են առնում գիշերները և...

— Սուտ է, Եղո՛, բոլորը սուտ է, — ընդհատեց նրան իշխանը, գցելով Եղոյի վրա մի այնպիսի հայացք, որից նա սարսռեց ու իսկույն լռեց:

— Լսիր, շարունակեց Վեստ Սարգիսը,— ինչ որ քեզ պատվիրում եմ՝ ճշտությամբ պիտի կատարես: Վահրամ իշխանի ամենամտերիմ իշխաններից հինգին դու պիտիթունավորես և ուղարկես մյուս աշխարհ: Դրանով դու կհարթես թե՛ քո և թե՛ իմ ճանապարհը:

— Լսում եմ, իշխա՛ն,— պատասխանեց Եղոն սառն կերպով:

— Ամենից առաջ դու կթունավորես Մոկաց իշխան Ատոմին, հետո՝ Մանաճիհր իշխանին, ապա՝ Գնունուն և Մանազին, իսկ վերջը Թլպաղտո բերդի իշխան Թորոսիորդուն՝ Ստեփանիկին…

— Ստեփանիկի՞ն... Լուսիկի նշանածին ասաց Եղոն և ուրախությունից վեր թռավ:

— Այո, Ստեփանիկին, տեսնո՞ւմ ես, ես քեզ համար էլ եմ մտածում: Սպանելով Ստեփանիկին՝ քո ճանապարհը կհարթվի:

— Այո, իշխա՛ն, իմ ճանապարհը կհարթվի, բայց Վահրամ իշխանը կրկին արգելք կլինի:

— Դրա մասին մի՛ մտածի:

— Ինչպե՞ս:

— Դրա և Հարպիկի հոգսը Պարակաման իշխանն է հանձն առել:

— Ինչպե՞ս, իշխա՛ն:

— Նա դրանց այնպիսի կողմեր կուղարկի, որտեղից այլևս չեն վերադառնա: Սուրը դրանց կյանքը այնպես կկարճացնե, որ իրենք հայերն էլ չեն իմանա, թե ինչպես նորտեղ ընկան դոքա: Շուտով մեր հակառակորդ իշխանները

իրենց զորքերով կցրվեն երկրի զանազան կողմերը և կամ կոչնչանան պատերազմներում, կամ անհետկկորչեն: Իրանց մասին հոգս կքաշի ինքը՝ Պարակաման իշխանը:

— Ես պատրաստ եմ, իշխա՛ն, կատարելու քո հրամանը, միայն հայտնիր ինձ, թե ե՞րբ և որտե՞ղ պիտի կատարել, — ասաց Եղոն:

— Իմ ձեռքով պատրաստած թույնը կստանաս ինձնից: Այդ թույնը ներգործում է դանդաղ, բայց անվրեպ մահ է պատճառում ճաշակողին: Ասեմ քեզ: Մի քանի օրիցհետո Մանաճիհր իշխանի տանը հրավերք կկատարվի: Այդտեղ կլինեն Վահրամյան իշխաններից շատերը, ի միջի այլոց և այդ իշխանները: Դու պիտի թույնը թափեսհենց այդ իշխանների կերակրների մեջ առանց վրիպելու, առանց մեկի կերակուրը մյուսի հետ խառնելու: Հասկանո՞ւմ ես:

— Այո, իշխա՛ն, հասկանում եմ:

— Դե գնա, նշանակած օրը արի թույնը ստանալու, իսկ մնացածը քո գործն է:

Եղոն վեր կացավ և դուրս գնաց՝ մի քսակ ոսկի պարգև ստանալով:

Արյան փրկանքը առաջուց ստացավ, այնպես, ինչպես Հուդան երեսուն դահեկան ստացավ յուր տիրոջը Հիսուսին մատնելու...

ԻԱ

ՍՐՏԻ ԿՍԿԻԾՆԵՐ

Լուսիկը Խենթի ձեռքով ազատվելուց հետո գտնվում էր Վահրամի պալատում, նրա դուստր Գոհարիկի հետ միասին: Երկուսը միասին ապրելով՝ երջանիկ էինհամարում իրենց, իրար հետ խոսում, ծիծաղում էին, բայց այդ ծիծաղը, այդ ժպիտը դառն էր և կեղծ: Ինչ-որ անհայտ վիշտ, ինչ-որ անտեսանելի որդ կրծում էրերկուսի սիրտն էլ և թույլ չէր տալիս նրանցից ոչ մեկին լիասիրտ ժպտալ, ազատ ծիծաղել և ուրախանալ: Կարծես ինչ-որ ծանր, սև ճիվաղ նստել էր երկուսի սրտումնել և յուր անգութ ճնշումով ուզում էր թառամեցնել մատաղ կյանքերը: Եվ վարդի նորաբողբոջ կոկոնները կարծես թառամում էին, չորանում, ճլորում… Արդյոք ի՞նչնէր ճնշում մատաղ սրտերին... ի՞նչ պիտի պատահեր նրանց հետ, քանի որ նրանք ծլել էին ապրելու և աշխարհը վայելելու համար:

Ո՛հ, դառն է, խիստ դառն, երբ մատաղ սրտերից կսկիծներ են դուրս թռչում, երբ անուշահոտ վարդը դեռ չբացված սկսում է թառամել...

Բայց ի՞նչ վիշտ ունեին Գոհարիկն ու Լուսիկը: Մի՞թե նրանք վախենում էին, որ չեն արժանանա իրենց մուրազին: Ոչ. քանի որ Վահրամ իշխանը խոստանում էրնրանց շատ շուտով միացնելու իրենց սրտի սիրածների հետ: Հարպիկն ու Ստեփանիկը դեռ կենդանի էին և սրտատրոփ սպասում էին, որ ս. պսակի խորհուրդնընդմիշտ կապեր այդ սրտերին, բայց չարաբաստիկ հանգամանքները՝ Անիի գրավումը, Գագիկի հեռանալը Անիից և հույների մուտք գործելը արգելք էին լինում:Սակայն սպասելը վերջ ունի, Վահրամ իշխանը վճռել էր կարճ ժամանակում պսակել դրանց և ահա այդ առթիվ էլ այսօր Մանաճիհր իշխանի մոտ հացկերույթ էրպատրաստած, ուր ներկա էին նաև Հարպիկն ու Ստեփանիկը:

Եվ ահա մինչդեռ Հարպիկն ու Ստեփանիկը Մանաճիհրի մոտ ուրախանում էին, երկու օրիորդ էլ Վահրամի պալատից դուրս էին նայում ու դիտում էին հեռուն, Անիիկանաչապատ բլուրները, ուր բնությունը ուրախ ժպտում էր և ուր թռչունները ճռվողում էին իրենց քաղցրաձայն դայլայլիկները...

Սակայն երկու օրիորդներն էլ մռայլ էին ու գունատ, երկուսն էլ՝ լուռ և մտահույզ:

Հեռվում բնությունը սիրուն էր և սքանչելի:

— Լուսի՜կ, ի՛նչ հրաշալի է Անին, ի՛նչ սքանչելի է բնությունը, — լռությունն ընդհատեց Գոհարիկը: Բայց Լուսիկը կարծես չլսեց: Նա դեռ գտնվում էր մի տեսակապշության մեջ, երբ մարդու հոգին, թողնելով իրական աշխարհը, ցնորքների մեջ է ընկնում:

— Լուսի՜կ, մի՞թե չես լսում ինձ, — կրկնեց Գոհարիկը:

— Ի՞նչ է, քույրի՜կ, — պատասխանեց Լուսիկը՝ դեռ ապուշ կտրած աչքերով նայելով Գոհարիկին:

— Ես ասում եմ՝ հրաշալի է բնությունը, սքանչելի է Անին:

— Հա, Անին սքանչելի է, ի՛նչ հոգ, էլ մերը չէ, էլ մեզ համար չէ ժպտում բնությունը, էլ մեզ համար ապաստարան չէ սիրուն Անին, ա՜խ, սիրուն Անին... ամեն բանկորավ մեզ համար:

— Ինչպե՞ս, Լուսի՛կ, ինչպե՞ս ամեն բան կորավ, դու շատ շուտ ես հուսահատվում:

— Հուսահատվո՞ւմ... բայց, քույրի՛կ, մի՞թե պետք չէ հուսահատվել, երբ մարդուն յուր ծննդավայրից են քշում:

— Մեզ ոչ ոք չի կարող քշել, զուր մի՛ հուսահատվիր, — ասաց Գոհարիկը՝ ինքը յուր խոսքերին չհավատալով:

— Մի՛ աշխատիր ինձ խրախուսել, Գոհարի՛կ, քանի որ քո սրտի մեջ ավելի դառն վշտեր կան, քան իմ... մի՞թե մոռանում ես հորդ, ծերունի Վահրամին, թե ինչպես նաանքուն գիշերներ է անցնում և միշտ լալիս է, լալիս է և հառաչանքներ է արձակում... Ինչի՞ համար, եթե ոչ մեր սիրուն Անիի համար, որ նենգությամբ հափշտակեցինմեզանից հույները և այդ բավական չէ, այժմ Պարակաման զորավարը ինչեր չէ անում:

— Ի՞նչ է անում:

— Նա հայ իշխաններին ցրում է զանազան կողմեր և մեր քաղաքները հույն զորքերով լցնում:

— Ճիշտ է, Լուսի՛կ, ճիշտ է, ա՛խ, արդյոք ի՞նչ պիտի լինի սրա վերջը, — ասաց Գոհարիկը՝ հոգոց հանելով:

— Ի՞նչ պիտի լինի... Մի՞թե պարզ չէ: Անիի մահը Հայաստանի մահն է նշանակում, կմեռնի Անին՝ կմեռնի և Հայաստանը:

— Բայց մի՞թե այդ չեն տեսնում մեր իշխանները:

— Ո՞վ, Վեստ Սարգի՞սը... Անիծյա՛լ լինի նա, ինքն է, որ Հայաստանի կործանման ճանապարհն է հարթում:

— Տե՛ս, տե՛ս, Լուսի՛կ, ահա կարծես Վեստ Սարգիսն է անցնում, — ասաց Գոհարիկը ցույց տալով դեպի դուրս, ուր հիրավի անցնում էր Վեստ Սարգիսը մի քանիիշխանների հետ:

— Այո, նա ինքն է, բայց ինչպե՛ս մռայլ է նրա դեմքը, սարսափելի է դեմքի արտահայտությունը... ինքը դժոխքը կսարսափի դրա դեմքից և ես դողում եմ, — ասացԼուսիկը և հիրավի ցնցվեց:

Գոհարիկը բռնեց նրա ձեռքը և նստեցրեց գահավորակին: Հենց այդ միջոցին էր, որ նաժիշտը ներս մտավ ու հայտնեց, որ Ստեփանիկը ցանկանում է տեսնելօրիորդներին: Լուսիկի սիրտը տրոփեց: Նա ոտքի կանգնեց և ուղղվեցավ, իսկ Գոհարիկը, դիմելով նաժիշտին, հրամայեց ընդունել Ստեփանիկին:

Ստեփանիկը ներս մտավ, ողջունեց օրիորդներին ու համբուրեց նրանց ձեռքերը, ապա կանգ առավ առանց մի բառ արտասանելու: Նրա դեմքը այլայլված էր, աչքերըմի անսովոր կրակով լցված, արդյոք ի՞նչ էր նշանակում այդ: Օրիորդները երբեք նրան այդ դրության մեջ չէին տեսել:

Նրանք զարմացած իրար նայեցին:

— Նստեցեք, իշխա՛ն, — ասաց Գոհարիկը:

— Այո, պետք է նստել, հանգստանալ, ծնկներս դողում են և սիրտս... — ասաց Ստեփանիկը և նստելով գահավորակին լուռ կացավ, առանց խոսքը շարունակելու:

— Ի՞նչ է սիրտդ, իշխա՛ն, դու խրախճանքից ես գալիս, ինչպե՞ս անցրիր Մանաճիհր իշխանի մոտ, — ասաց Լուսիկը՝ դիմելով Ստեփանիկին և աչքը չհեռացնելովնրանից:

Նա զգում էր, որ Ստեփանիկի հետ ինչ-որ օտարոտի բան է կատարվում, բայց ի՞նչ — չէր կարողանում հասկանալ: Նրա դեմքի այլայլմունքը գինու շոգիներին էրվերագրում:

— Օ՛, օրիորդ, ուրախացանք, ուրախացանք, բայց սիրտս լաց է լինում: Մի՞թե կարող ենք մենք ուրախանալ ներկա հանգամանքներում: Մի՞թե Ստեփանիկի սիրտըկարող է ուրախանալ: Չէ՞ որ նա այժմ լալիս է, լալիս է՝ ո՞վ գիտե ինչի համար... ինձ անհասկանալի է, օրիո՛րդ, խրախճանքի հենց կեսից սիրտս հանկարծ տխրեց, արտասուքներն իրենք դուրս բխեցին աչքերիցս, և դառն կսկիծները անողորմ կերպով քաղեցին սիրտս, հոգիս կարծես ասելիս լիներ, թե ես պիտի մեռնեմ, թե եսայլևս չպիտի տեսնեմ իմ Լուսիկին ու շտապեցի վերջին անգամ նրան տեսնելու... ների՛ր ինձ, — ասաց Ստեփանիկը և ծունկ չոքելով օրիորդի առաջ, համբույրներովսկսեց թրջել նրա մեկնած ձեռքը:

— Ի՞նչ ես անում, իշխա՛ն, զգաստացիր, ամոթ է քեզ նման կորովի երիտասարդին մահվան վրա խոսելը:

Ստեփանիկը շառագունեց: Նա վեր թռավ տեղից և կրկին նստեց գահավորակին: Ապա լուռ գլուխը ձեռքերի մեջ առավ:

Օրիորդները շփոթված իրար էին նայում, երբ Ստեփանիկը բարձրացրեց գլուխը և ինքն էլ նայեց օրիորդներին:

Գոհարիկն ու Լուսիկը զարհուրելով նայեցին նրա երեսին:

Ստեփանիկի դեմքը մեռելի գույն էր ստացել, շրթունքները կապտել էին, իսկ աչքերը ակնակապիճներից դուրս թռել:

— Սիրտս կսկծում է, օրիո՛րդ, ես մեռնում եմ, մնա՛ս բարև, մի՞թե չես հասկանում՝ ի՞նչ է նշանակում սրտի կսկիծներ ունենալ... օ՛, նա սարսափելի է, զարհուրելի է... բայց Ստեփանիկը չի վախենում մահից... Լուսի՛կ, ո՞ւր ես...

Վերջին անգամ համբուրեմ... մնա՛ս բարև... ինձ մի՛ մոռանա, գերեզմանիս վրա վարդեր փռիր, խունկ ու մոմ վառի... որ անուշահոտ բուրմունք տարածվի շուրջս... ա՛խ...

Ստեփանիկը լռեց, նա վայր պիտի ընկներ, երբ վրա հասան օրիորդները և բռնեցին նրան: Այդ ժամանակ սենյակի մեջ լցվեցան ծառաներ, Գոհարիկի մայր Շուշանը ևվերջը ներս եկավ ծերունի Վահրամ իշխանը:

— Հա՛յր, օգնիր Ստեփանիկին,— ասաց Գոհարիկը դողդոջուն ձայնով:

Վահրամ իշխանը մոտեցավ Ստեփանիկին և սառած մնաց:

Նա ամեն բան հասկացավ: Ստեփանիկի բերանից փրփուր էր դուրս գալիս և աչքերը կատաղի էին:

— Հեռացեք այստեղից, — դարձավ նա օրիորդներին, իսկ ինքը ծառաների օգնությամբ պառկեցրեց Ստեփանիկին գահավորակի վրա:

— Ի՞նչ է, հա՛յր, մի՞թե նա մեռնում է, — ասաց Լուսիկը և ծունկ չոքեց Ստեփանիկի առաջ:

— Լուսի՛կ, Լուսի՛կ, հյուսիր ծաղկի պսակը, սիրուն պսակ անթառամ ծաղիկներից... օ՛, սրտիս կսկիծներ... ո՞ւր է սուրս... տվեք իմ սուրը ես մխեմ սիրտս... սարսափելիէ, — կանչեց Ստեփանիկը և ուզեց ձեռքերով պատառ-պատառ անել սիրտը, ուր հրդեհը անողորմաբար լափում էր ու սոսկալի տանջանքներ պատճառում:

— Հա՛յր, աղաչում եմ, հայտնիր ինձ, ի՞նչ է պատահել նրան, մի՞թե նա պիտի մեռնի, — ասաց Լուսիկը նորից, և արտասուքները հեղեղեցին նրա աչքերից:

— Արիացիր, աղջի՛կս, տար ճակատագրի և այս դառն հարվածը, Ստեփանիկ իշխանին այլևս ոչ մի ուժ չի կարող ետ դարձնեի նա թունավորված է ամենասոսկալիթույնով:

— Թո՛ւյն, թո՛ւյն, և նա պիտի մեռնի... Ահա և իմ թույնը, որ ես պահում էի դառն օրերի համար... Ես քեզ հետ եմ, իշխա՛ն, և քեզ հետ էլ պիտի գնամ մյուս աշխարհը, ուրվշտերը չեն կրծի սիրտս, — ասաց Լուսիկը և զգեստի քղանցքներից հանելով մի սրվակ՝ մի վայրկյանում դատարկեց նրա միջի հեղանյութը:

Վահրամը և ներկա եղողները վրա ընկան խլելու, բայց ուշ էր: Լուսիկը դատարկ սրվակը դեն շպրտեց ու գրկեց Ստեփանիկի արդեն սառչող դիակը:

— Թաղեցեք միասին, — հանկարծ լսվեց Լուսիկի սրտակտոր ձայնը և ամենքին հեծեծացրեց: Մի քանի վայրկյան էլ և թշվառ Վահրամ իշխանի առաջ երկու անշունչդիակներ էին տարածված...

Խեղճ ծերուկի աչքերում ցամաքել էին արտասուքները, և նա քար կտրած նայում էր դավաճանության անմեղ զոհերին...

ԻԲ

ԱՎԵՐՈՒՄ ԵՆ

Դավաճանի սիրտը դեռ չէր հագեցել: Նա դեռ ծարավի էր արյան: Հունաց աջ ձեռքը դառնալով՝ նա շատ հայ իշխանների մահվան պատճառ դարձավ: Շատերինթույնով սպանեց, շատերին՝ սրով: Նա յուր խոսքի տերն եղավ:

Սուրը և թույնը իրենց հունձն էին անում: Վեստ Սարգիսը իրենց դաշնակից Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հետ հրճվում էր և դափնիների սպասում, երբՀայաստանի սահմաններում երևացին սելջուկյան թուրքերը: Ներքին թշնամին՝ յուր որդին արդեն քանդել էր և շարունակում էր քանդել Հայաստանը, հարկավոր էրնաև մի ուրիշ արտաքին թշնամի, որ Հայաստանի ավերմունքը կատարյալ լիներ, և դա էլ երևաց:

Տուղրիլը վաղուց սպասում էր հարմար րոպեի և գտավ այդ րոպեն: Նա տեսավ, որ Հայաստանը անտեր է մնացել, որ հույները միայն ճնշում են

հայերին, հարստահարում խեղճ ժողովրդին առանց նրանց պաշտպանության հոգսը քաշելու, ուստի ինքն էլ ուզեց այդ համեղ պատառին մասնակից լինել:

Եվ նա յուր հրոսակները շարժեց դեպի անտեր Հայաստանը: Ավերվեց Արծն բազմամարդ ու ճոխ քաղաքը: Նրա բնակիչները, որոնք մոտ 150 000 էին, սրովկոտորվեցան և գերի տարվեցան, իսկ քաղաքի տեղը մոխրի կույտ միայն թողին: Ավերվեցին Արծկե, Սմբատաբերդ քաղաքները: Եվ հետևից միայն մոխրի կույտերթողնելով սելջուկյան հրոսակները մոտեցան Բաբերդին...

Հեծծում էր ժողովուրդը, տանջվում, կոտորվում, բայց դավաճանի սիրտը դեռ չէր հագեցել, նա յուրայինների արյանն էր կարոտ:

Վեստ Սարգիսը մտածեց հանգամանքից օգտվել: Նա իբր հայրենիքը պաշտպանելու համար յուր զորքերով միացավ Վահրամի, նրա որդի Գրիգոր Մագիստրոսի, Լիպարիտ վրաց թագավորի, Ահարոն Վանա վերակացուի և հունաց զորքերի հետ և ճակատեցավ Բաբերդի մոտ թշնամիներին դեմ առ դեմ:

Բայց Վեստ Սարգսի միտքը ուրիշ էր: Նա չէր եկել յուր հայրենիքը պաշտպանելու, նա չէր եկել Տուղրիլի դեմ կռվելու, այլ եկել էր Վահրամի, նրա որդու՝ ԳրիգորՄագիստրոսի կյանքի թելը կտրելու:

Եվ դավաճանի իղձը կատարվեցավ:

Կռվի ամենատաք ժամանակ, երբ որդին ու հայրը առյուծաբար կռվում էին սելջուկյան թուրքերի դեմ, դավաճանի սուրը մխվեց Գրիգոր Մագիստրոսի կուրծքը և տեղնու տեղը սպանեց նրան, իսկ ծերունի Վահրամը գերի ընկավ թուրքերի ձեռքը, որոնք անգթաբար տանջեցին նրան և նահատակելով դեն շպրտեցին նրա դիակը:

Սակայն ծերունու դիակը անթաղ չմնաց: Կես գիշերին մի մարդ պտրտում էր նրա դիակը և արտասուքն աչքերին մի դիակից մյուսն անցնում: Դա Խենթն էր, ծերունիհայրենասերի սիրելի Ներսեսը:

Երկար, շատ երկար Խենթը պտրտում էր իր տիրոջ դիակը և արդեն հուսահատված արցունքներ էր թափում, երբ երկնքից մի լույս շողաց ու լուսավորեց ծերունուդիակը: Խենթը դեպի լույսը դիմեց: Աստված ինքը ցույց էր տալիս դիակի տեղը: Նա առաջ գնաց և տեսավ նրան՝ Վահրամ իշխանին երկնքի անսպառ լույսովշրջապատված:

Խենթը ծունկ չոքեց և համբուրեց ծերունի Վահրամի սպիտակ ճակատը: Ա՛խ, կարծես նա քնած լիներ, կարծես նա դեռ կենդանի լիներ, սակայն մահաբեր սուրը մխված էր նրա կրծքի մեջ, և նա լուռ էր, նրա սիրտը էլ չէր բաբախում:

— Իշխա՜ն, քո Խենթն է, լսիր ինձ, — ասաց Խենթը և կրկին համբուրեց նրա ալեզարդ դեմքը:

Բայց իշխանը լուռ էր, նա չէր պատասխանում, իսկ երկնքի լույսը ավելի ու ավելի էր պայծառանում:

Խենթը շալակեց դիակը և տարավ հեռո՛ւ, հեռու:

Մի քանի օր էլ և ծերունի Վահրամի դիակը հողին հանձնվեցավ Մարմաշենում, ուր յոթ գիշեր շարունակ նրա գերեզմանի վրա իջնում էր երկնքի լույսը:

Այդպես են բացատրում պատմիչները, այդպես են նկարագրում հին-հին դարերի գրողները, նրանք, որոնք տեսել են Վահրամին, որոնք արժանացել են նրա սուրբդեմքը դիտելու…

Այժմ էլ կա այդ սուրբ գերեզմանը, դա մի կարմիր, սիրուն քար է, տապան է Մարմաշեն եկեղեցու մոտ, որի հյուսիսային երեսին մի համեստ խաչ է նկարած, իսկ վրանարձանագրած. «Աստ ամփոփին նշխարք Վահրամայ իշխանաց իշխանի Հայոց Մեծաց ի ցեղէ Պահլավունի, որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի ի Մարմաշենհայոց թվի ՆՇԴ» (1047 թ.):

ԻԳ

ՑԱՆԱԾԸ ՀՆԶՈՒՄ Է

Ահռելի էր բնությունը...

Երկինք ու երկիր խառնվել էին իրար, իսկ գեհենը կարծես բացել էր յուր մահաշունչ բերանը և կրակե շանթեր էր արձակում չորս կողմ: Ախուրյան գետը զգույշվշվշում էր, Ծաղկոցաձորը ծանր հեծեծում, այնինչ Անին յուր բրջերով և աշտարակներով, յուր պալատներով ու մոզաիկներով ծանր կերպով հեծեծում...

Մութը պատել էր չորս կողմը, և ոչ մի բան չէր երևում: Ամեն ինչ պատած էր անթափանցելի խավարով, միայն երբեմն փայլակների լույսից վայրկենաբարլուսավորվում էին Անիի աշտարակներն ու շրջակայքը և ապա կրկին

ընկղմվում խորին խավարի մեջ, լսվում էր որոտման ահռելի դղրդյունը: Կարծես գեհենի դներրըմիասին գոռալիս լինեին և կամ սանդարամետը կործանվելիս լիներ դեպի անհատակ անդունդը:

Կես գիշեր էր արդեն, երբ ահռելի որոտմունքից վեր թռավ իշխան Վեստ Սարգիսը յուր փափուկ անկողնից և վայրենաբար չորս կողմը նայեց:

Նա ոչինչ չէր հասկանում, թե ինչ է կատարվում յուր շուրջը, գիտակցությունը կարծես թե թռել էր նրանից ու տեղի տվել մի տեսակ անմիտ տենդային դրության:

Ահա մի քանի օր էր, որ նա կորցրել էր քունը և հանգստությունը: Նոր էր միայն նա աչքը խփել, երբ զարհուրելի որոտմունքը վեր թոցրեց նրան քնից:

Նա վեր թռավ և ապուշի նման կանթեղի աղոտ լույսով լուսավորված պատերին էր նայում, երբ դղրդաց երկրորդ որոտմունքը:

Վեստ Սարգիսը մեքենաբար երեսը խաչ քաշեց:

Եվ այդ առաջին անգամն էր, որ քսան տարվա ընթացքում նա երեսը խաչ էր քաշում: Արդյոք ի՞նչ էր պատահել նրա հետ: Հանկարծ նա անկողնից դուրս թռավ, գլուխը ձեռքերով ամուր բռնեց և սկսեց արագ-արագ շրջել ննջարանում: Նա այնպես ամուր էր բռնել գլուխը, կարծես այն կտրվելիս լիներ մարմնից և թռչելիս լիներհեռո՛ւ, հեռու...

Ճիշտ որ այդպես էր: Այդ վայրկյանին նրա ուղեղը բորբոքվում էր, մազերը՝ փշաքաղվում, իսկ աչքերը ակնակապիճներից դուրս թռչում, և նա զգում էր, թե յուրգլուխը հիրավի ուզում է անջատվել մարմնից և փախչել հեռո՛ւ, հեռու, ո՞վ գիտե, դեպի գեհենի բոցը կամ դեպի անհատակ անդունդը, իսկ ինքը ուժ էր գործ դնումայդ գլուխը յուր մարմնի վրա պահելու:

Վեստ Սարգիսը մեռնել չէր ուզում, ուզում էր դեռ ապրել:

— Օ՛, ո ւր է գահս... արքայական գահս, ինձ խաբեցին հույները, երեխայի նման խաղացրին և այժմ ծիծաղում են վրաս, ծաղրում ինձ… և ո՞ւմ — իշխան ՎեստՍարգսին, որից դողում էր ամբողջ Հայաստանը... Օ՛, սարսափելի է, զարհուրելի է խաբված լինել, ամեն հույս կորավ, ամեն նպատակ փշրվեց, խորտակվեց ինչպեսսնոտի երազ... Ի՞նչ շահեցի ես — Անիի կործանումը, Հայաստանի ավերմունքը և անթիվ զոհերի տանջանքը: Օ՛, ապերա՜խտ հույներ, տվեք ինձ իմ գահը, խոստացածգահը, թե չէ՝ երկինքը վկա եմ կանչում, կթափվի ձեր գլխին

բարկությանս բոցը: Ինչո՞ւ սելջուկյան թուրքերի երեսից, ինչպես վախկոտ շներ, փախուստ տվիք կթողիք ինձ միայնակ: Ինձ ի՞նչ եք պատասխանում... Տվեք ինձ խոստացած գահը, որ ես հարազատներիս արյունով գնեցի…
Արյո՛ւն... արյո՛ւն... Ո՛հ, սոսկալի է...

Որոտը մեկ էլ որոտաց ու դղրդյունով անցավ սենյակների միջից:

Վեստ Սարգիսը լարվեց: Մեխվածի նման կանգ առավ և դեպի յուր քնարանի մի անկյունը նայեց: Այնտեղ կարծես կանգ առավ որոտը և ինչ-որ քրթմնջյուններ հանեց:Վեստ Սարգիսը ուշադրությամբ այնտեղ նայեց և սարսափով ինչ-որ շարժուն առարկաներ նկատեց, որոնք ոչ կմախքներ էին և ոչ իսկական մարդիկ: Վեստ Սարգիսը շփեց ճակատը, աչքերն ավելի լայն բացեց, որ որոշի դրանց ինչ լինելը, և հանկարծ մազերը սկսեցին դիք-դիք կանգնել, ու մի քանի քայլ ետ-ետ գնալով զարհուրելիձայնով կանչեց.

— Է՛յ, հեռացեք ինձանից, զուր եք գերեզմանից դուրս եկել և ձեր լալկան աչքերը բարձրացրել ինձ վրա... — Բայց Վեստ Սարգիսը զարհուրանքով նկատում էր, որ այդշարժուն առարկաները հետզհետե ստվարանում են ու մոտենում իրեն: Ո՛ւֆ, ինչքա՛ն շատ են դրանք, և ինչքա՛ն զարհուրելի: Նրանք բոլորն էլ կրճտացնում ենատամները և մոլի հայացքներ գցում Վեստ Սարգսի վրա: Ո՛հ, սարսափելի է, սարսափելի: Եվ Վեստ Սարգիսը նկատում և ճանաչում է դրանց՝ այդ ուրվականներին...Այդտեղ են Մանաճիհր իշխանը, դարբին Ղևոնդը, որ յուր վայրենի աչքերով վրեժխնդրության բոցեր էր արձակում, ինչպես նաև Վահրամը, Գուրգեն իշխանը, կանայք, երեխաներ, ծերեր ու երիտասարդներ…
Ա՛խ, նրանք մի ամբողջ լեգիոն են և ի՞նչ են ուզում Վեստ Սարգսից:

— Ո՛չ, Հայաստանի գահը ինձ է պատկանում: Ես ձեր ոսկորների վրա եմ շինել այդ գահը և ոչ ոք չի կարող խլել ինձանից: — Գոռում է Վեստ Սարգիսը և ետ-ետ գնում:Նա կամաց-կամաց մոտենում է պատին և կպչում նրան: Նրա շնչառությունը ծանր է, աչքերը՝ կատաղի, իսկ դեմքը՝ զարհուրելի: Հենց այդ ժամանակ թվում է նրան, որպես թե ինքը Հովհաննես-Սմբատ թագավորը, որ միաժամանակ յուր ձեռքին խաղալիք էր դարձրել, արքայական զգեստներ հագած, ձեռքը մեկնում է յուր գլխիցերևակայական թագը խլելու:

Վեստ Սարգիսը ձեռքը դեպի գլուխն է տանում և ամուր բռնելով երևակայական թագը, հեգնորեն կանչում.

— Թուլասի՛րտ թագավոր, հեռո՛ւ ինձանից, հեռո՛ւ: Ինչո՞ւ դու նորից ես ձգտում այն բանին, որին արժանի չէիր: — Խոսքը կիսատ է մնում Վեստ Սարգսի բերանում:

Նա տեսնում է, թե ինչպես ամեն կողմից հարձակվում են յուր զոհերը և ուզում են խեղդել իրեն: Զարհուրած, նա աջ ու ձախ է նայում և պատից կախ սուրը տեսնելովթռչում այն կողմ, վերցնում և մերկացնելով՝ հարձակվում յուր զոհերի վրա: Այդ աղմուկից բացվում է Վեստ Սարգսի ննջարանի դուռը և ներս է մտնում մի մարդ ուզարհուրած կանգնում դռանը:

Վեստ Սարգիսը կայծակի արագությամբ հարձակվում է նրա վրա և սուրը մխելով նրա կուրծքը՝ կանչում:

— Երկրորդ անգամ մեռիր, անիծյա՛լ Հովհաննես-Սմբատ...

— Դու սպանեցիր ինձ, իշխա՛ն, անիծյալ լինիս հավիտյան, — կանչում է ընկած մարդը և վերջին շունչը փչում:

Վեստ Սարգիսը վայրկենաբար ցնցվում է, ճանաչում է այդ ձայնը: Ո՞ւմ սպանեց, Հովհաննես-Սմբատ թագավորի՞ն, թե մի ուրիշի:

Վեստ Սարգիսը նայում է յուր զոհին և սարսափում:

Նրա առաջ տարածված է յուր հավատարիմ ծառա Եղոյի արյունաթաթախ դիակը…

Երկինքը կրկին գոռաց և յուր որոտով կրկին դղրդացրեց Անիի շրջակայքը, իսկ Վեստ Սարգիսը դեռ խելագարի նման կանգնած էր Եղոյի դիակի մոտ:

ԻԴ

ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ծանր, արհավրալից տարիներ էին անցել:

1064 թվականն էր:

Մինչդեռ Հայաստանի բնությունը ուրախ ժպտում էր, մինչդեռ առուները ձմռան կապանքներից նոր ազատված ուրախ-ուրախ խոխոջում էին և կչկչալով երգում հին-հին դարերի վիշտն ու խինդը, ժպիտն ու արցունքը, այդ միջոցին Անին սև սուգ էր մտել և ողբում էր յուր դառն օրերը... Անին պաշարված էր:

Պաշարված էր նա Ալփասլանի վայրենի, գազանաբարո հրոսակներից, որոնց աչքերը արյունով լցված բոպե առ բոպե սպասում էին, որ ներս թափվեն քաղաք նմեծից մինչև փոքրը սրի անց կացնեն: Նրանք ծարավի էին արյան և փափագում էին տեսնել իրենց առաջ մոխիր ու հուր, այնինչ իրենց առաջ կանգուն էր դեռ Անինյուր 1001 եկեղեցիներով, բրջերով ու աշտարակներով, պալատներով ու հրաշակերտ շինվածքներով:

Դարերից ի վեր մարդկությունը արյուն քրտինք էր մտեք այդ ճոխ, հրաշակերտ շինությունները կանգնեցրել, և այժմ Ալփասլանը յուր վայրենի գնդերով կանգնած էրայդ հրաշալի քաղաքի առաջ և ցանկանում էր միայն մի քանի ժամում հայության այդ կենդանի վկաներին խորտակել, փշրել, ավերել և ջնջել աշխարհի երեսից...Ի՞նչ էր ուզում նա…

Ավերել, քանդել և կոտորել... Եվ Ալփասլանը հասկանում էր, որ գտել է ժամանակը, երբ մի հարվածով պիտի ոչնչացնի Հայաստանի երերուն ինքնուրույնությունը:

Նա գիտեր, որ Անիի վերջնական կործանմամբ պիտի կործանվի Հայաստանի հոգևարք անկախությունը, և այդ պատճառով հարվածն ուզում էր ուղղակիՀայաստանի սրտին հասցնել:

Անեցիք տխուր էին ու տրտում: Սև սուգ էին մտել նրանք, բայց և ամեն մի քաղաքացի վճռել էր մեռնել զենքը ձեռքին, յուր սիրուն Անիի հետ և նրա փլատակների տակգտնել յուր գերեզմանը:

Եվ նրանք իրենց խոսքը կատարեցին:

Անտեր էր այդ միջոցին Անին: Չկար առաջնորդ, չկար ղեկավար: Զառամյալ, քայքայված Վեստ Սարգիս իշխանն էր, որ յուր զորքերը բախտի կամքին թողնելով ինքըապաստանել էր միջնաբերդում: Քաղաքացիք էին, որ դեռ կռվում էին, դեռ դիմանում էին պաշարմանը:

Ալփասլանը, բավական երկար պաշարելով Անին, արդեն կամաց-կամաց յուր հույսը կտրում էր Անին վերցնելուց:

Ամեն անգամ, երբ Ալփասլանի հրոսակները գրոհ էին տալիս դեպի պարիսպները, քաղաքացիք մեծ արիությամբ ետ էին մղում նրանց և Ալփասլանի հրոսակների մեջմեծ կոտորած անում:

Հուսահատվում էր Ալփասլանը, հուսահատվում և կատաղությունից շրթունքները կրծոտում: Բայց նախանձելի չէր և անեցվոց վիճակը:

Դեռ Ալփասլանի պաշարումից առաջ հույները Անիից փախուստ էին տվել և քաղաքը թողել բախտի կամքին:

Իսկ քաղաքացիք մինչև ե՞րբ պիտի կարողանային պաշտպանվել, քանի որ չկային իրենց սիրելի թագավորը՝ Գագիկը, հայրենասեր Վահրամյանները, սիրելի ննվիրված ազնիվ նախարարներն ու իշխանները... Մինչդեռ պարիսպներին արդեն վաղուց զարկվում էին թշնամիներից արձակված բաբանների ահագին քարերը, զարկվում էին պատերին և տեղ-տեղ ճաքեցնում հսկա պարիսպները...

Հանկարծ սարսափելի լուրը ցնցեց անեցիներին:

Նրանք իմացան, որ Անիի պարիսպներից մեկը կործանվել է և այնտեղից ուզում է ներս խուժել թշնամին:

«Տե՛ր, փրկիր մեզ, մի՛ թողնի մեզ կորչելու», — կանչեցին քաղաքացիք և գրոհ տվին դեպի կործանված պարիսպը: Թշնամին չդիմացավ այդ բուռն հոսանքին, ուրհուսահատությունը և վրեժխնդրությունը իրար խառնված՝ հրաշքներ էր գործում:

Եվ Ալփասլանը ետ նահանջեց կործանված պարիսպի տակից: Նա հասկացավ, որ յուր բանը չէ Անին առնելը:

Փոքրիկ բերդապահ գունդը և քաղաքացիք փլված պարիսպի մոտի կռվից նոր էին վերադառնում, երբ քաղաքի փողոցներից մինում երևաց մեզ ծանոթ Խենթը:

Նրա աչքերը կատաղի էին, մազերը՝ ցրված, դեմքը՝ այլայլված և շորերը՝ պատառոտված: Նա ձեռքին մի մերկ սուր ուներ, որից կաթում էր արյունը:

Քաղաքացիներից մեկը, նկատելով նրան, հարցրեց.

— Հը՛, Խե՛նթ, ի՞նչ բանի ես:

— Ինչ բանի որ դուք եք, — պատասխանեց Խենթը լրջմտությամբ և սրի վրայից արյունը սրբելով, սուրը պատյանը դրեց:

— Շատ մարդ կոտորեցի՞ր, — հարցրեց նույնը:

— Շա՛տ, բայց մեկը պակաս:

— Ինչպե՞ս թե մեկը պակաս: Խե՜նթ, դու կրկին սկսեցիր քո խենթությունները:

— Խենթը յուր խենթությունը կանե, բայց ես մեկով պակաս սպանեցի: Շուտով ամեն բանի վերջ կլինի, բաժակը լցված է, համբերությունը՝ հատած:

— Ինչպե՞ս, Խե՜նթ, ես ոչինչ չեմ հասկանում, — ասաց խոսակիցը և Խենթին առանձնացնելով՝ հարցական կերպով նրա երեսին նայեց:

— Լույսի նման պարզ է, որ շուտով Անին կկործանվի, բայց Անիի կործանումով նա էլ կկործանվի, նա չի մնա:

— Ո՞վ, Խե՜նթ, ո՞վ չի մնա:

— Իշխանը, մատնիչ իշխանը:

— Վեստ Սարգի՞սը... բայց նա ինչո՞վ է մեղավոր:

— Հը՛մ… ինչո՞վ է մեղավոր... մի՞թե ձեզ հայտնի չէ, որ նա եղավ Անիի կործանման պատճառը: Մի՞թե չգիտեք, որ նա հանձնեց Անին հույներին, իսկ այժմ էլբանակցում է Ալփասլանի հետ, որ քաղաքը մատնությամբ նրան հանձնի, եթե թույլ տա իրեն Անիից կենդանի հեռանալ:

— Մի՞թե այդ ճշմարիտ է, Խե՜նթ, բայց դա սարսափելի է, մենք կկործանվենք:

— Ինքն էլ մեզ հետ,— պատասխանեց Խենթը և նրա աչքերից կայծակներ թռան:

— Ինչպե՞ս, դու մտադիր ես նրան սպանե՞լ:

— Անպատճառ: Նա այս բազկից կստանա յուր մահը, — ասաց Խենթը և մտամոլոր առաջ անցավ:

Խոսակիցը երկար նայեց նրա ետևից և ապա, գլուխն օրորելով, մրմնջաց.

— Արժանի է... Շան պես պիտի սատակի դավաճանը:

Այս խոսակցությունից անցել էր մի քանի օր: Մութ գիշեր էր, ոչինչ չէր երևում: Անիի շուրջը միայն առկայծում էին մի քանի լույսեր: Նիրհում էր Ալփասլանի բանակը: այնտեղ ո՜չ մի շարժում, ո՜չ մի շշունջ չկար: Միայն պահապանները լուռ հսկում էին բանակը, երբ մի տեսակ աղիողորմ ձայն հասավ նրանց ականջին:

Նրանք դեպի Անին նայեցին, ուր խավար էր տիրում և որտեղից լսվում էին հուսահատության աղաղակ, լացի ու կոծի ձայներ: Արդյոք ի՞նչ էր պատահել անեցիներիհետ: Ինչո՞ւ նրանք ողբում են ու լալիս, քանի որ իրենք, հուսահատված անեցիների համառ դիմադրությունից, վճռել էին թողնել Անին և հեռանալ այդտեղից:

Լուրը հասցրին Ալփասլանին: Նա լրտեսներ ուղարկեց եղելությունն իմանալու, որոնք լուր բերին, թե Անիի աշտարակների վրա այլևս պահապաններ չեն երևում և թեպահապան զորքը քաշվել է միջնաբերդը թողնելով քաղաքացվոց անպաշտպան դրության մեջ:

Ալփասլանը հենց այդ բանին էր սպասում: Շուտով նա հրաման տվեց յուր գնդերին պատրաստվելու և հարձակվելու անպաշտպան քաղաքի վրա:

Մի րոպեում փողերի ձայնը, զորականների գոռում-գոչյունը դղրդացրեց Անիի շրջակայքի լռությունը և անեցիների մարմնով սարսուռ տարածեց: Անեցիները լսեցինայդ գոռ ձայնը և լացի ու հեծկլտանքի ձայները ավելի ուժեղացրին: Լալիս էին երեխաներ, ծերեր ու պատանիներ և իրենց աղաչավոր ձեռքերը երկինք բարձրացնում:

Դժոխային, սիրտ կտրատող ձայներ էին տարածվում Անիի միջից, երբ Ալփասլանի հրոսակները ներս խուժեցին քաղաք և սկսեցին կոտորածը, արյունալի, զարհուրելի կոտորածը…

Կոտորում էին երեխաներին, ծերերին ու պատանիներին, իսկ շատերին ձգում էին ահռելի բարձրություններից դեպի Ախուրյանի սուր-սուր ժայռերը, ուր նրանցգլուխները դիպչելով քարերին՝ ցրվում էր ուղեղը և շուրջը արյունով ներկում: Հանկարծ Անիի զանազան անկյուններից սկսեցին կրակե լեզուներ երևալ, որոնքհետզհետե սաստկանալով սկսեցին լափել հրաշակերտ շինությունները և լուսավորել արյունալի տեսարանը: Գեհենի դևերի նման մերկ սրերը ձեռքներին, աչքներըարյունով լի, Ալփասլանի հրոսակներն անխնա ջարդում ու կոտորում էին անեցիներին, իսկ կրակը լափում էր շինությունները:

Չկար փրկություն, չկար ազատվելու հնար:

Խելագարների նման կանայք, երեխաներ, մեծ թե փոքր վազում էին Անիի փողոցներով, բայց ամեն տեղ իրենց մահն էին գտնում: Փողոցներում առվի պես վազում էրարյունը և ցած վազելով ներկում էր Ախուրյանի ջրերը: Արյուն էր կտրել Անին, դիակներով լցվել Ծաղկոցաձորը, իսկ գետը կարմրատակել: Ամեն կողմը

դիակներ, ամեն կողմ սուր ու կրակ: Հանկարծ Անիի միջնաբերդի դռները ջարդ ու փշուր եղան և այնտեղ սկսվեցավ սոսկալի կռիվը:

— Խնայեցե՛ք, — կանչում էին շատերը ծունկ չոքած իրենց դահիճների առաջ և գրկած անմեղ մանուկներին, սակայն դահիճները դուրս էին կորզում մայրերի ձեռքիցերեխաներին, պատերին էին զարկում նրանց և իրենց սրերն ու տեգերը կոխում մայրերի սիրտը...

Սոսկալի և զարհուրելի էր տեսարանը:

Բոցերը ճարճատում էին, աշտարակներն ու բրջերը կործանվում և իրենց փլատակների տակ թաղում հարյուրավոր մարդկանց:

Այդ կոտորածի ժամանակ էր, որ մի մարդ մերկ սուրը ձեռքին առաջ էր վազում: Նա չէր նայում ոչ յուր ոտքերի տակ հառաչող դիակներին, ոչ աշտարակների փլվելունև ոչ վայրենի աղաղակներին, այլ դիակից դիակ թռչելով անցնում էր դեպի միջնաբերդը, ուր կռիվը շատ տաք կերպարանք էր առել:

Այդ մարդը զարհուրելի էր: Մի քանի թուրքեր առաջ ընկան սպանելու դրան, սակայն իրենք արյունաթաթախ վայր գլորվեցան: Այդ մարդը առաջ անցավ և տեսավ միխումբ հայ զինվորներ, որոնք շրջապատել էին ինչ-որ իշխանի և ամեն կերպ աշխատում էին խույս տալ կռվի դաշտից:

Նա մոտեցավ այդ փոքրիկ խմբին և զարհուրելի կերպով գոռաց.

— Իշխա՜ն Վեստ Սարգիս, նայի՜ր ինձ…

Իշխանը նայեց նրան և սարսափեց: Նրա առաջ կանգնած էր Խենթը, որ յուր մոլի հայացքը ուղղելով՝ արագությամբ մոտենում էր իրեն:

— Վատ և անարգ մարդ, ո՞ւր ես փախչում… սրանք բոլորը քո զոհերն են, տես և կշտացիր, — ասաց Խենթը և մի թռիչք գործեց դեպի Վեստ Սարգիսը, որը քարացածինման դեռ կանգնած էր միևնույն տեղում:

Խենթի շարժումը նկատելով՝ երկու զինվոր առաջը կտրեցին, սակայն Խենթը այնպես օրորեց սուրը նրանց վրա, որ նրանք ետ-ետ գնացին, իսկ ինքը առաջ ցատկեց նյուր սուրը այնպիսի ուժգնությամբ մխեց Վեստ Սարգսի սիրտը, որ սրի ծայրը մեջքից երևեցավ: Վեստ Սարգիսն ընկավ և մահու տագնապի մեջ էր, երբ ամեն կողմիցերևեցան Ալփասլանի հրոսակները և շրջապատեցին Խենթին: Խենթը վայրենի կերպով մռնչաց, վեր թռավ Վեստ Սարգսի դիակից և կուրծքը բանալով կանչեց.

— Շունը սատկեց, այժմ կարող եք...

Խոսքը կիսատ մնաց Խենթի բերանում, երբ մի քանի տեգեր մխվեցան նրա կուրծքը, և նա վայր գլորվեց:

Այդ ժամանակ մոտակա աշտարակը փլվեց ահագին դղրդյունով և ամեն ինչ ծածկեց փոշու ու քարերի կույտի տակ:

Երկար ժամանակ էլ ոչինչ չէր երևում…

ԻԵ

ԴԱՐԵՐԻՑ ՀԵՏՈ

Ապառաժ և քարքարոտ տեղ...

Երկու կողմից ձոր, մինը ծաղիկներով զարդարված, բայց քարերի կույտերով լի, իսկ մյուսը՝ խոր, ահռելի, ուր հանդարտիկ սողում է գետը և քերում ժայռերիստորոտները: Ձորերի գլխին, վերևում, մի տափարակ հարթ տարածություն՝ ուր տեղ-տեղ հին-հին դամբարանների նման, սփռված են ավերակ պարիսպների ուվիթխարի շինությունների բեկորներ, որոնք սարսուռ են ազդում մարդու սրտին: Այդ ավերակ պարիսպների, բրջերի և աշտարակների մեջ տեղ-տեղ թափված ենավերակների կույտեր, իսկ տեղ-տեղ բուսել են կանաչ խոտ և տատասկ:

Լուսին է: Նա առատապես սփռում է յուր դժգույն ու սառը ճառագայթները և երևացնում կիսակործան ավերակները: Հանդարտիկ քամին հեռվից ղողանջում է, գալիսէ համբուրվում ավերակների հետ, քնքշաբար օրորում ավերակների մոտի խոտերն ու փշերը և ապա, հանկարծ, խելագարի նման ուժգին շառաչելով, մի զարհուրելիհառաչանք է հանում և կորչում հեռո՛ւ-հեռու...

Ինչի՞ց վախեցավ նա, ինչի՞ց սարսափեց — հայտնի չէ, միայն թե քամին ավերակների հետ գրկվելուց հետո հառաչեց ու փախավ: Նա դրանց այդպես չէր տեսել. նադրանց հետ այդպես չէր գրկվել: Նա տեսել էր դրանց շեն ու պայծառ, սիրուն ու կոկիկ, իսկ այժմ ինչի՞ն էր հանդիպում… Քամին գալիս է, քամին լալիս է ու գնում, ոչոք նրա հետ խոսող չկա, ոչ ոք պատասխան տվող չկա:

Այդտեղ խորին, սարսափեցնող լռություն է տիրում: Գերեզմանական անդորր լռության է նման դա, ուր վիթխարի բրջերի մեջ ոչ մի շշունջ չի լսվում, ոչ մի ձայն չէինչում: Ամեն ինչ մեռած է ու անշարժ, լուռ ու անխոս: Խոսում է միայն քամին և այն էլ հառաչում, իսկ ձորերի մեջ հոսող գետը լուռ հեծկլտում: Եվ քամու այդհառաչանքի

ու գետի հեծկլտանքի հետ միասին երբեմն-երբեմն լսվում է բուի չարագուշակ ձայնը, որ յուր վույվույոցով սարսռեցնում է ավերակներն անգամ...

Անցել են դարեր, և այդ պատկերը կա ու մնում է: Բայց առաջ այդպես չէր: Առաջ այդտեղ եռում էր կյանքը, բաբախում էին սրտեր, իսկ այժմ լուռ է և անշարժ:

Հանկարծ այդ ամայի և վայրենի տեղում, ավերակների վրա երևաց մարդկային մի արարած: Նա գլխին սաղավարտ ուներ, մեջքից՝ սուրը կախ: Գլխիկոր առաջ էրգալիս նա՝ կոխկրտելով ավերակների բեկորները և շտապ-շտապ ոտքը փոխում մի ավերակից մյուսը: Կարծես նրա ոտքերի տակ սառը ավերակների կույտերչլինեին, այլ շիկացած կրակներ կամ ահագին անդունդներ, որ նա այդպես աշխատում էր ոտքը շուտ հեռացնելու գետնից:

Ո՞վ էր այդ մարդը, ի՞նչ էր շինում մեջ գիշերին այդ ամայի ավերակների մեջ, ուր մարդկային արարածը ցերեկն անգամ չի համարձակվում ոտք դնելու. հայտնի չէր:

Միայն գիշերային այցելուի դեմքը դժգույն էր, խիստ դժգույն և նրա նիհար, թուխ դեմքին արտացոլվում էր տանջանքի ու հուսահատության խոր դրոշմներ…

Այդ մարդը, ինչպես երևում էր, տանջվում էր բուռն, ահավոր տանջանքով, և ծանր վիշտը կրծում էր նրա սիրտը:

Եվ դարերից ի վեր կարծես նա դատապարտված էր տանջվելու, չարչարվելու, մի րոպե, մի վայրկյան անգամ միջոց չունենալով հանգստացնելու յուր խոնջացածանդամները...

Զարհուրելի էր այդ մարդու տանջանքը: Ամեն տեղ, ուր ոտք էր կոխում, օձերը բարձրացնում էին գլուխները և հառելով իրենց ցուրտ, մագնիսական հայացքները, սարսափեցնում էին այդ մարդուն: Նա վազում էր առաջ, շտապում, բայց ամեն տեղ, ամեն անկյունում օձերը հալածում էին ու սարսռեցնում նրան:Հուսահատությունից նա ատամները կրճտացնում էր, կանգնում մի բեկորի վրա մի րոպե, մի վայրկյան միայն և սիրտ կտրատող ձայնով կանչում.

— Օ՛հ, սարսափելի՛ է... սարսափելի՛...

Բայց հենց որ նա այդ խոսքերն էր ասում, ավերակները կարծես տեղահան էին լինում, շարժվում, լեզու առնում և ամեն մի քարի, ամեն մի ավերակի տակից կանչում.

— Տանջվիր հավիտյան, ստո՛ր դավաճան, որ մեր կործանման պատճառ եղար:

Գիշերային այցելուն լսում է այդ խոսքերը և նրա մազերը փշաքաղվում են ու նա խելագարի նման առաջ է վազում...

Դեպի ո՞ւր, ինքն էլ չգիտե, սակայն որքան նա վազում է, այդ ավերակներից դուրս գալ չի կարողանում...

Այդ տենդային փախուստի ժամանակ հանկարծ նա կանգ է առնում և հեռուն դիտում:

Այնտեղ՝ կիսակործան տաճարի առաջ, այնտեղ, ուր օծվել էր պատանի Գագիկ հայոց թագավորը, երևում է մի ուրիշ մարդ, ծունկ չոքած մի կույտ մոխրի առաջ ետ էքանդում մոխիրը և մոխրի տակ մնացած վերջին կայծը շիկացնում: Ի՞նչ է անում նա և ինչո՞ւ կրակը ավելի է բորբոքեցնում, չէ որ առանց այն էլ ավերակներիքարերը տաք են և գիշերային այցելուի ոտքերն են այրում:

— Է՛յ, հեռացիր այստեղից, հեռացիր, — կանչում է գիշերային այցելուն և սուրը պատյանից հանում:

Նրա ձայնը դղրդում է ավերակների մեջ և թնդյուններ հանում:

Լսում է նրա ձայնը եկեղեցու մոտ ծունկ չոքած մարդը և ցնցվում: Նա նայում է դեպի ձայնը, և երկուսի հայացքները հանդիպում են իրար:

Զարհուրանքի, վրեժխնդրության մոլի կրակներ են ցայտում երկուսի աչքերից էլ:

— Խենթն է, — զարհուրելով կանչում է գիշերային այցելուն և նրա մարմինը ցնցվում է:

Հանկարծ ծունկ չոքած մարդը վեր է թռչում տեղից, ինքն էլ սուրը մերկացնում ու գոռում.

— Ա՛... Վե՛ստ Սարգիս, արյա՛ն թագավոր, ողջո՛ւյն քեզ, — ասում է Խենթը և վազում դեպի նա:

Երկուսի սրերն էլ մխվում են իրար, կոփվում, զարկվում և լուսնի թույլ ճառագայթների տակ կայծակներ հանում:

Նրանք կռվում են անվերջ և ոչ մեկը չի կարողանում հաղթել մյուսին: Երբեմն-երբեմն նրանք կանգ են առնում շունչները ետ բերելու, ապա գոռում զարհուրելիձայնով և կրկին իրար վրա վազում...

Ի՞նչ կլինի վերջը, ո՞վ պիտի հաղթական դուրս գա — հայտնի չէ, միայն թե նրանք կռվում են, կռվում են անվերջ, մինչև որ առավոտվա կենարար անդրանիկ լույսիհետ չքանում են երկուսն էլ: Բայց հենց որ գիշեր է լինում, հենց որ մութը պատում է գետինը, նրանք դարձյալ հանդիպում են իրար և շարունակում իրենց անվերջկռիվը... Դարեր են անցել, նրանք դեռ կռվում են անվերջ և ոչ մեկը նրանցից հաղթական չի դուրս եկել...

Ի՞նչ կլինի վերջը, այդ աստված միայն գիտե…

ԻԶ

ՎԵՐՋԱԲԱՆ

Ալփասլանի ձեռքով Անիի կործանումից հետո Հայաստանը կորցրեց յուր անկախությունը և ընկավ սելջուկյան թուրքերի տիրապետության ներքո: Հույները, որ կարճմիջոցում հայոց թագավորությանը կործանել էին և գրավել այն, շատ կարճ ժամանակ վայելեցին իրենց հաջողության պտուղը և տեղի տալով սելջուկյան թուրքերին, իրենք ևս տուժեցին, կորցնելով նախ արևմտյան նահանգները, իսկ վերջը և իրենց անկախությունը: Տարաբախտ Գագիկը, որ դավաճանության պատճառով կորցրելէր յուր թագավորությունը, երկար ժամանակ Կապադովկիայում թափառեց, որպեսզի մի հնար գտնի նորից ձեռք ձգել յուր թագավորությունը, սակայն ոչ մի բանչկարողանալով, հուսահատությունից տանջվում էր և ականատես լինում այն նախատինքներին, որ հույները թափում էին յուր հայրենակիցների գլխին: ԲայցԳագիկի համբերության բաժակը լցվեց և նա յուր վրեժը Կեսարիայի Մարկոս մետրոպոլիտից հանեց: Այս հայատյաց եկեղեցականը Գագիկին ավելի նախատելուհամար յուր շան անունը «Արմեն» էր դրել:

Գագիկը, երբ իմացավ այդ, գնաց այդ մետրոպոլիտի մոտ, կանչեց շանը և երկուսին էլ մի պարկի մեջ կապելով այնքան ծեծել տվեց շանը պարկի մեջ, մինչև որանասունը կատաղեցավ ու կծելով սպանեց տիրոջը:

Այդ լուրը հույների ականջն ընկավ և նրանցից երեք եղբայրներ՝ Մանտալյանք, դավաճանությամբ բռնելով Գագիկին, Կիզիստրիայի բերդի վրա կախեցին (1079):

Այդպիսի եղերական վախճան ունեցավ Բագրատունյաց վերջին թագավորը, որ զոհ էր գնացել խորամանկության:

Գագիկը ամուսնացած էր Սեբաստիայի Դավիթ թագավորի դստեր հետ և ուներ երկու որդի՝ Հովհաննես և Դավիթ անուններով: Սրանք էլ մեկը մյուսից հետոթունավորվելով մեռան և իրենց հետ թաղեցին Բագրատունյաց տոհմը:

Իսկ Անի քաղաքը, Ալփասլանի ձեռքով կործանվելուց հետո, դատարկվելով՝ մոտ 300 տարի խաղալիք դարձավ այլևայլ կուսակցությանց, որոնք հետզհետե առնումէին ու տալիս իրարու, մինչև որ ԺԴ դարում մի զորեղ երկրաշարժ վերջ դրեց նրա տանջալից կյանքին:

Այդ միջոցին, էլ կենդանի չէին նրանք, որոնք Հայաստանի կործանմանը նպաստեցին:

Նրանցից մեկը՝ Վեստ Սարգիսը, ինչպես հայտնի է, ստացավ յուր արժանավոր հատուցումը՝ գահի փոխարեն հոգեկան տանջանք, իսկ Կիրակոս քահանան, որոսկիները ստանալուց հետո անհետ կորավ, նրա անարժան մարմինը դեն շպրտեց հայրենի հողը յուր գրկից և գազանների կերակուր արավ:

Հարպիկն էլ, Հաբելի որդին, որ մինչև խոր ծերության հասնելը, ապրում էր մթին լեռներում, հայրենի Արղնո բերդում՝ յուր գրկին ունենալով Վահրամի դուստրԳոհարիկին:

Լեռների ավազակը արդեն որդիք ուներ, որոնք մեծանալով մթին լեռների վայրենի ծերպերում, կամաց-կամաց ուշքի էին գալիս, իրենց չարն ու բարին իմանում և իրենցծնողաց շնչով սնվում...

Այդ շնչի մեջ կար հայրենիքի սեր և վրեժխնդրության սոսկալի բոց. իսկ այդ բոցին ավելի փչում և սաստկացնում էր Հարպիկի եղբայրը՝ չարաբաստիկ անցքերիականատես վշտաբեկ Լևոնիկը...